



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

Hayots' parberakan mamulě

Garegin Lewonyan




ԱՐՄԱՆՈՒԹ Է ԱՆՃՈՎ-ՄԵՍՐՈՎՅԱՆ ՄՐՅԱՆԿԱՐԱՇԻՒԹԻՒՆ
1894 ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿԻՆ

Հ Ա Յ Ո Ց

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՍԿՋՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ
(1794—1894)

ընդարձակ ծանօթութիւններով.



«Ողջոյն Ձեզ, խմբագիրք Նայոց, որ ձգնիք անդադար յաշխատութիւնս և իբրև Կրօնաբանական մունեստիկ գրով և Թղթով վարէք զժողովուրդն ի յառաջադիմութիւն և քաղաքակրթութիւն՝ բանալով զմտոս նոցա ընդունել զլաւն և խորշիլ ի վատէն: Զգոյ՛ճ, զգոյ՛ճ ջանացէք միշտ եշխել, զի այս է Ձեր սեպուհ պարտիք . . . »

ՄԿՐՏԻՉ Ա. ԿԹ. Ա.Ճ. ՀԱՅՈՑ.



Գ Ր Ե Ց

ԳՐԵԳԻՆ ԶԻՒՆԻ ԼԵՒՈՆԵԱՆՑ.



1895

ԱԼԵԿՍԱՆԳՐԱԳԱԼ.

Типография

Абрама М. Малхасянца.



Տ.ՊԱՐԱՆ

ԱՐՄԱՆՈՎ Մ. ՄԱՐԿՈՍԵԱՆԻ.

Александрополь, Александровская, д. Теръ-Геворкова.

Z
6956
.A7
L49



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ե Ի

Ի ՊԱՏՐԻԱՐԻՔՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ Ս. ԵՐՈՒՍԱԸԼԵՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՅԱՐՈՒԹԻԻՆ

ԲԱՐՑԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ե Ի

Ի ՊԱՏՐԻԱՐԻՔՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՄԱՏԹԷՈՍ

ԲԱՐՑԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



00-18 84 110

Z
6956
.A7
L49



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ԳԱՅՐԻՈՐԶՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ Ս. ԵՐՈՒՍԱԶԷՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՅԱՐՈՒԹԻԻՆ

ԲԱՐՑԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ԳԱՅՐԻՈՐԶՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՄԱՏԹԷՈՍ

ԲԱՐՑԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՄԻՒ ԿՔ. 81. 90



ԳԻՏՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆՆԱԳԷՑ

ՊՐՈՓԵՍՍՈՐ ԱՐԵՒԵԼՆԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ

Ի ՏԷՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ՅՈՎԱԷՓԵԱՆ ԷՄԻՆԻ

ՅԱՐԳԵԼԻ ՅԻՂԱՏԱԿԻՆ

Խոնարհարար

ՆՈՒԷՐ

ՀԱՒԱԳԱԳՈՂԻՑ

Մեր սոյն աշխատութեան մի ձեռագիր օրինակ անցեալ տարի ուղարկեցինք Կոստանդնուպոլիս Հայոց Պատրիարքարան, ցանկանալով մասնակցել անցեալ (1894) Թուականի Արժանախշատակ Յովսէփ Իզմիրեանցի կտակի Սահակ-Մեսրոպեան մրցանակարաշխութեան:

Առաջ ենք բերում այստեղ Պատրիարքարանից մեզ ուղղած գրութեանց պատճէնները:

Պատրիարքարան Հայոց
Կոստանդնուպոլիս
Համար 1483.

28 Փետրուարի 1894.

Մեծապատիւ
Աղա Գարեգին Լեւոնեանց

յԱլէքսանդրապոլիս

Ի պատասխանի ամսոյս 1|13 Թուականաւ Ձեր ուղղած գրութեան՝ հարկ կը համարինք ծանուցանել, թէ Ձեր երկասիրութիւնն այս օրերս հասաւ առ մեզ և յանձնեցինք զայն Իզմիրեանց կտակին Գործադիր Յանձնաժողովոյ:

Մնամք աղօթարար՝
Պ. Կ. ԽՈՐԷՆ.

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ԿՈՅՈՑ
Կ. ՊՈԼԻՍ

16 Յուլիս 1894

ԳՈՐԾԱԴԻՐ ԳՐԱՅԻՆ ԵՆԿՆՈՒԹՅԱՆ
Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻ

Մեծարգոյ
Պարոն Գարեգին Զիւանի Լեւոնեանց
յԱլէքսանդրապոլիս.

Ձեր աշխատասիրած «ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ» անուն գիրքը զոր այս տարուոյ Սահակ-Մեսրոպեան մրցանակարաշխութեան ներկայացուցած էիք, ըստ վկայութեան պատ. քննչաց արժանի դատուեցաւ քսան (20) Օսմանեան ոսկի պարգևի, զոր ներկայեալ չէրով պիտի ընդունիք:

Յանձնաժողովը կը շնորհաւորէ Ձեր այս առաջին յաջողութիւնը եւ կը յուսայ որ այլ գրական աշխատութիւններ ևս արտադրելու քաջալերութիւն մը պիտի լինի Ձեզ:

Խնդրելով որ հաճիք մեզ իմացնել սոյն նամակի Ձեր ձեռքը հասնելն.

Մնամք յարգանօք Ձեզ՝
Ի դիմաց Գործադիր Յանձնաժողովոյ
ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ



Արեւադպիր
ՅՈՎՀ. Ք. ՄԿՐԵԱՆ.

Արեւադէր
Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ.

Յ Ա Ն Կ.

Յասարգրան	—	—	Ա.
		Թիւ էջ	
Ազատութիւն	—	160	528
Ազգասէր	—	16	67
Ազգարար	—	1	1
Ազգարար Բիւզանդ.	12	47	
Աղբիւր*)	—	130	424
Աշխատանք	—	117	384
Առողջապ. թերթ	123	397	
Ասիա	—	88	292
Ասպարէզ	—	163	538
Աստղիկ արեւելեան	38	157	
Աստղ	—	57	231
Աստղ Հայաստանի	26	102	
Արարատ (Տփիսիս)	28	106	
Արարատ* (Եջմ.)	89	293	
Արարատ (Կ. Պոլ.)	93	304	
Արարատ (Նիւ-Նոր.)	167	542	
Արաքս*	—	146	490
Արեւելք (Փարիզ)	39	158	
Արեւելք* (Կ. Պոլ.)	137	454	
Արեւելեան Դար	54	225	
Արեւելեան մամուլ*	104	325	
Արեգակ (Կ. Պոլ.)	121	393	
Արեգակ (Նիւ-Նոր.)	153	509	
Արեւմուտք	—	49	205
Արծուի Վասպուր.	36	139	
Արծուիկ Տարօնոյ	80	275	
Արձագանք*	—	124	400
Արմաւենի	—	82	278

Արմենիա*	—	—	140	469
Արշալ. Արարատեան	11	37		
Արտասուք	—	—	165	540
Արփի Արարատեան.	33	133		
Արօր	—	—	170	551
Աւետարեր*	—	—	15	62
Աւետարեր տղայոց*	106	346		
Ափեղցփեղ	—	—	165	246
Քաղմովէպ*	—	—	13	50
Բանասէր (Մաղ.)	23	94		
Բանասէր (Կ. Պոլ.)	29	111		
Բիւրակն*	—	—	122	394
Բուրաստան ս. ՍՀկ.	30	115		
Բուրաստան մանկ.	129	420		
Գարուն	—	—	85	286
Գարուն Հայաստ.	64	245		
Գիտական շարժում.	41	473		
Գործ	—	—	127	411
Գրակ. եւ իմս. շար.	126	410		
Գրացուցակ*	—	—	172	554
Դանուք	—	—	166	541
Դաստիարակ	—	—	107	348
Դիմակ	—	—	66	247
Դիտակ Բիւզանդեան	5	15		
Դիտակ	—	—	98	312
Դպրոց	—	—	108	352
Եկեղեցի Հայաստ.	149	501		
Եղանակ Բիւզանդեան	3	10		
Երեւակ	—	—	41	162
Երեւանի յայտար.	133	434		
Երկրագունտ (Ման.)	78	270		
Երկրագ. (Կ. Պոլ.)	101	322		

Երկրագ. (Կ. Պոլ.)	131	431
Եւրոպա (քղքկն.)	20	86
Եւրոպա (ընտան.)	47	201
Եփրատ	—	94 305
Ջեփիւռ Հայրեն.	72	254
Ջուարճախօս	—	40 160
Էրիզա	—	91 301
Ընտանի իմաստ.	34	136
Ընտանիք	—	132 433
Թանգարան	—	136 452
Թատրոն (Կ. Պոլիս)	110	359
Թատրոն (Տփիսիս)	173	567
Թութակ Հայկազ.	35	137
Թութակ Հայ. աշ.	56	229
Թռչնիկ (ամսօր.)	59	235
Թռչնիկ Պիգասեն.	73	255
Ժամանակ	—	75 258
ժողովրդ. գիտութ.	159	527
Խրաւունք	—	90 300
Հայտեր Դիոգն.	135	451
Լեզու	—	148 498
Լոյս	—	111 361
Լուսափայլ	—	81 277
Լրագիր	—	113 366
Լրոյ գիր. Օսմ. պետ.	8	26
Խիկար	—	138 461
Խօսնակ Հայ. եկեղ.	151	503
Շաղիկ (Ձմիւռ.)	62	239
Շաղիկ*	—	144 479
Շաղիկ մանկանց	156	521
Շանուց. շաբաթ.	171	553
Շիաճան	—	85 289

*) Աստղանիշ գրուած լրագրիները այժմ գոյութիւն ունին Տ. Գ. Լ.

Յ Ա Ն Կ

Ծիւն Աւարայրի	86	290	Մեղու Հայաստանի	44	177	Վարժարան—	—	128	414					
Կիթառ	—	61	237	Մետօրա	—	118	386	Տարազ*	—	161	529			
Կիլիկիա	—	58	232	Միութիւն	—	55	227	Տարեգրութիւն	—	2	7			
Կովկաս	—	17	74	Մշակ*	—	105	329	Տիեզերք	—	10	36			
Կուռնկ	—	50	207	Մօզա	—	102	323	Տնտես	—	143	477			
Կրթարան	—	150	502	Մուզիկ	—	103	324	Տօմար ընտան.	—	48	204			
Համբաւաբ. Ռուս.	63	241	Մուսայք Մասեաց	42	165	Փարիզ	—	52	222	Փարոս Հայաստանի.	116	378		
Հայաստան(Կ. Պոլ.)	19	82	Մուսայք Մասեաց	68	250	Փնջիկ	—	79	274	Փող առաւօտեան	100	320		
Հայաստան (Լոնդ.)	154	519	Մուրճ*	—	155	515	Փորձ	—	114	367	Փունջ*	—	51	215
Հայելի	—	6	20	Յայտար. գիր լրոյ	21	90	Քնար Հայկական.	60	236	Քննասէր	—	147	496	
Հայկական աշխարհ	77	262	Յաւերժահարս	—	67	248	Պճանասփռեան	—	25	100	Օսմանեան երաժշտ.	70	252	
Հայրենասէր (Ձմիւռ.)	14	58	Յիշատակարան	—	4	13	Օրագիր	—	95	306	Հայատառ-Տաճկաբարբառ լր- րագիրներ	—	—	557
Հայրենասէր (Նիկ.)	27	103	Յոյս	—	96	39	Լրագիրներ, որոնց միայն յայտարարութիւններն են լոյս տեսել	—	—	—	560			
Հայրենիք*	—	99	314	Նեղոս	—	157	523	Անկանոն պարբերական հր- րատարակութիւններ	—	—	—	—		
Հայք*	—	168	545	Նոյեան աղանի	—	32	127	Օտար լեզուներով լրագիրներ, որոնք հրատարակուում են Հայոց կեանքի և գրականու- թեան վերաբերեալ	—	—	—	569		
Հանդէս*	—	152	504	Նոր Դար (Կ. Պոլ.)	109	358	Լրացումն	—	—	—	—	—		
Հանդէս ամսօրեայ*	145	484	Նոր-Դար*	—	134	438	Վերջին խօսք	—	—	—	—	—		
Հիւսիս	—	767	252	Նորագիր	—	112	366	Տպագրական, վրիպաներ	570					
Հիւսիսափայլ	—	45	187	Նորահայր (Կալ.)	7	25								
Հնչակ*	—	164	540	Նտեմարան (Ձմիւռ.)	9	29								
Հորիզոն	—	97	311	Ուսումնասէր	—	24	97							
Չայն ընկերասիր.	71	253	Պատկեր*	—	162	536								
Ճաշակ ոսկ. դպր.	142	474	Պսակ	—	119	390								
Ճուաբաղ	—	46	196	Սէր	—	53	253							
Մամուլ	—	92	302	Սիօն	—	83	280							
Մանկավարժանոց.	139	465	Սուրհանդ. Կոստ.	18	80									
Մանկավարժ. գրադ.	169	547	Սուրհանդ. Բիւզ.	22	92									
Մանկավարժ. թեր.	115	374	Սուրհանդակ	—	158	526								
Մատենադ. ժողով.	125	408	Վաճառական	—	84	285								
Մասեաց աղանի	37	130	Վայելք	—	120	392								
Մասիս*	—	31	118	Վարդ	—	69	151							
Մեղու	—	43	168	Վարդ Կեսարիոյ	—	74	257							



ՅԱՌԱՋԱԲԱՆ

„ . . . Ինչպէ՛ս ազնիւ, ինչպէ՛ս վսեմ, ինչպէ՛ս զօրեղ է մամուլը եւ մեծ նրա բարի եւ օգտաւէտ ներգործութիւնն ըստ ամենայնի մարդկանց, հասարակութեան վրայ, երբ նա իւր կոչման բարձրութեան վրայ է կանգնած, երբ նրան ղեկավարում են կոչուածները . . . եւ ինչքան ապականիչ, անբարոյսկանացնող քանդող եւ աւերող ներգործութիւն ունի նոյն մամուլը, երբ նա ապականուած ընկած է, երբ նրա մէջ տեղ են բռնում անկոչները գրչի դիրասանները . . . “

Ս. Ս.



պագրութեան գիւտից դեռ շատ առաջ է հիմնուել պարբերական մամուլի կամ լրագրութեան գործը: Հին Յունաստանում յայտնի չէ թէ լրագիրներ կային թէ ոչ, բայց հաստատ է որ Հռոմէական պետութեան ժամանակ գոյութիւն ունէին: Յուլիոս Կեսարըն առաջին հրատարակիչն է հանդիսանում. որովհետեւ 49-թուին (Ք. Յ.) հրամայեց այսպէս կոչուած *Acta Romana diurna* եւ *Acta senatus* կանոնաւորապէս խմբագրել եւ հրատարակել: Այս երկու օրգանները, որոնք Տիբերքոսի ժամանակ միացան, բովանդակում էին տեղեկութիւններ պե-

տական անցքերի մասին եւ օրական նորութիւններ:

Հռոմէացիներին յետոյ լրագրութեան գործի հիմը դրին Չինացիք, առաջին անգամ 366 թուականին, Պէկինում հրատարակելով «Նոր Լուրեր» անունով մի պարբերական հրատարակութիւն, որ մինչեւ այժմ շարունակուում է: Ոմանք Չինական լրագրութեան ծագումը հաշուում են ութներորդ դարից: Նորերումս Չինաստանի Կանտոն քաղաքի Ֆրանսիական հիւպատոս պ. Էնբո-Հիւառ (m. Jmbault-Huard), Փարիզի «Հասարակաց տնտեսական ընկերութեան» դահլիճում բազմաթիւ ունկնդիրների առաջ մի հետաքրքիր բանախօսութիւն է արել «Չինական լրագրի եւ լրագրութեան մասին», որի մանրամասն նկարագիրը տպուեց *Temp's* լրագրում: Պ. Էնբո-Հիւառի ասելով Չինաց ամենահին եւ ամենանշանաւոր լրագիրն է «Պէկինու Լրագիր» կոչուածը, որ մի տեսակ համարատու հրատարակութիւն է երկրի օրէքների, պաշտօնական տեղեկու-

թիւնների, պետական հրամանների եւ այլն: Եւրոպայի բոլոր կուլտուրական ազգերը իւրեանց են վերագրում առաջին թերթ հրատարակելու պատիւը:

Երրորդ տեղը բռնում է մեր այսօրուայ գեղարուեստի աշխարհը-Իտալիան 1563 թրուականին իւր „Notizies Scritte“ լրագրով, երբ տպագրութեան գիւտից 123 տարի անց էր կացել: Այն միջոցներում էր լոյս տեսաւ Հռոմի երկրում այս երկրորդ պարբերական թերթը, երբ մեր Արգար դրպիրը Վենետիկում հայ տպագրութեան փառաւոր հիմնարկութեամբ էր զբաղուած: Ոմանք ասում են, որ Իտալիայի առաջին լրագիրը գուրս է եկել 1636 թուականին Փլորէնցիայում:

Իտալիայից յետոյ գալիս է Փրանսիան, 1605 թուականին հրատարակելով իւր առաջին թերթը. իսկ ոմանք հաւատացնում են որ 1615-ին է սկսուել Փրանսիայում լրագրութեան գործը մի շաբաթաթերթով, տպարանատէր Էմմէլի ձեռքով որի շարունակութիւնն է ներկայիս „Frankfurter-journal“-ը: Ոմանք էլ, թէ Փրանսիայի առաջին թերթը „La gazete de France“-ն, է որ 1831 թուականին սկսեց հրատարակուել Փարիզում, իհարկէ անհիմն է:

Ջուիցերիայում 1609 թուականից արդէն սկսեց հրատարակուել Ստրասբուրգի թերթը, ինչպէս եւ 1610 թուականից Վիէնայում Աւստրիական լրագրութեան հիմը դրուեց: Ոմանք Աւստրիական լրագրութեան կանոնաւոր սկզբնաւորութիւնը վերագրում են 1700 թուականին:

Եօթներորդ տեղը բռնողը Գերմանիան է իւր առաջին օրագրով, որ սկսեց հրատարակուել 1612 կամ-15 թուականին:

Գերմանիայից ճիշտ տասն տարի յետոյ, 1622 թուականին, Անգլիան իւր մի պատկառելի լրագրով պարբերական մամուլի հիմը դրեց: „Britisch Presse“-ն է այդ օրագիրը որ եւ հրատարակուում է մինչեւ այսօր:

Իսպանիայի պարբերական մամուլի հաստատութիւնը վերագրուում է ոչ շուտ քան 1626 թուականը, որոնց մէջ նկարագրուած կան տասնեւհինգերորդ դարու նշանաւոր դէպքերը:

Շուէտական „Post och jurikes-Tidning“-ը դուրս է եկել 1644 թուականին, Մարիա-Խրիստինայի կառավարութեան օրով:

Այժմեանից տասն տարի յետոյ, այն է 1903 թուականին լրանում է ուս լրագրութեան գոյութեան 200-ամեակը: Առաջին ուսերէն պարբերական հրատարակութիւնը լոյս տեսաւ Մոսկուայում 1703 թուականին. թէեւ ըստ ոմանց 1705-ին:

Տասնեւերկուերորդ տեղը գրաւում են Հայերը: Հնդկաստանի Մադրաս քաղաքում հիմնուեց առաջին հայ օրագիրը «Ազգարար» սնունով: Ներկայ 1894 թուականին լրանում է հայ լրագրութեան 100-ամեայ գոյութեան տարելիցը:

Ինչպէս տեսանք տասնից աւելի ազգերից յետոյ կարողացել է մեր ազգը լրագրութեան սկիզբը դնել: Գովելի չը իննելով՝ պախարակելի էլ չեն մերոնք. քանի որ դեռ շատ ազգեր մեզանից յետ են մնացել լրագրութեան սկզբնաւորութեան գործից: Քաղաքական զանազան խառն դրութիւնը, գաղթականութիւնն ու այդպիսի ազգակործան դիպուածները չեն պակասել, ինչպէս յայտնի է մերոնց գլխից: Մանաւանդ որ մեզանից շուտ սկսող ազգերի լրագրութեան հիմը մեծ մասամբ դրուել է տիրող ձեռքերի ղեկավարութեամբ, մինչեւ անգամ կայսրրների. իսկ հայ լրագրութեան հիմը գնողը եղել է մի հատարակ քահանայ: Եւ ո՞վ գիտէ արդեօք, մեր հին, ճոխ գրականութեան ոսկի դարերում, մեր պետական իշխանութեան ժամանակ չենք ունեցել պաշտօնական հրատարակուող մի գրութիւն, ինչպէս Հռոմէացիք և Չինացիք: Պատմութիւնը մութն է այս կետում:

Ամերիկայում որ այսօր ծով է լրագրութիւնը, 1804 թուականին միայն սկսուեց

լրագրութեան գործը, անդրանիկ „Boston News“ անունով Բոստոնի թերթով:

Միացեալ-Նահանգներից լետոյ լիշենք ՅուՆաստանը, որի առաջին թերթն անցեալ կիսադարում, 1821 թուականին լոյս տեսաւ:

Տաճկաստանում էլ 1825 թուականին սկսուեց պարբերական մամուլը: Ինչպէս եւ Ռուսիայում 1828 թուականին, Սերբիայում 1841 թուականին եւ այլն:

Ուրեմն մեր լիշած ազգերի մէջ Հայն ընկնում է երկու երրորդից լետոյ, այսպէս՝

Հին Հռովմայեցւոց մէջ	49	թուակ.
Ջինաստան	366	"
Իտալիա	1563	"
Պրանսիա	1605	"
Ղուիցէրիա	1609	"
Աւստրիա	1610	"
Գերմանիա	1612	"
Անգղիա	1622	"
Իսպանիա	1626	"
Շուեդիա	1644	"
Ռուսիա	1703	"
Հայոց մէջ	1794	"
Ամերիկա	1804	"
ՅուՆաստան	1821	"
Տաճկաստան	1825	"
Ռուսիայի	1828	"
Սերբիա	1841	"

եւ այլն:

Սկսուելով մի աննշան կետից, լրագրութիւնն այսօր հասել է կատարեալ յառաջագիմութեան: Լուսաւորեալ երկիրներում լրագիր կարգալը ժողովրդին հացի չափ պահանջ է դարձած. մեզանում լրագիրներ կարգացողները, «գաղթի սեւ ու սպիտակից ճանաչողները» համարեա մի որոշ դասակարգ են կազմում:

1850-ական թուականներից, դարուս վերջի կիսի սկիզբներից, լրագրութեան մի նոր փառաւոր տարեշրջան է սկսուում: Գուտտենբերգի անմահ գործը հետզհետէ ընդարձակուելով, արագատիպ մեքենաների ըս-

տեղծումով աճեց ու զօրացաւ լրագրութեան գործը: Այդ ամենը նպաստելով Կեսարի սկսած գործին, պարբերական մամուլըն այսօր հասել է հսկայական մեծութեան, կամ լաւ է ասել՝ մօտ իւր գագաթնակետին:

Հինգ աշխարհներում հրատարակուող լրագիրների թիւը այժմ հասնում է յիսուն երեք հազարի (53,000) որոնք վաթսուն միլիոն (60,000,000) կիլոգրամի թուղթ են սպառում: Այս մեծ գումարի կէս մասը հրատարակուում է Անգլիերէն լեզուով. իսկ միւս կիսի շատը Միացեալ-Նահանգներում: Անգլիայում վեց հազարից (6,000) աւելի պարբերական հրատարակութիւններ կան: Գերմանիայում հինգ հազար, հինգ հարիւր (5,500): Պրանսիայում 5,000. Իտալիայում 1,400, Աւստրիայում 1,200: Իսպանիայում 850-ի չափ, որի երրորդ մասը քաղաքական է: Ռուսիոյ լրագիրները 800-ից չեն անցնում Պետերբուրգում 200, Մոսկուայում 75: Ռուսիոյ մէջ 17,000 օրինակից աւելի տրպուող լրագիր կայ: Յունական լրագիրների թիւը իւր համեմատութեամբ լէզէոն է. իւրաքանչիւր գիւղ մի-երկու թերթ ունի: Աթէնքում կայ միայն 54 պարբերական թերթ: Բելգիա եւ Հոլանդիա ունին 300-ական լրագիրներ: Շուեդիա եւ Նորվեգիա, Դանիա, Փորդուգալիա 100-ականի չեն հասնում: Ճապոնիա իւր 2,000-ի չափ լրագիրներով այսօր կարող է պարծենալ: Ճապոնական լրագիրները վարից-վեր են կարդացուում: Աֆրիկէի մէջ աղքատ է լրագրութիւնը. հազիւ 200-ի հասնի. որոնց 30-ը Եդիպտոսումն է: Պատկառելի թիւ է Միացեալ-Նահանգների լրագիրների թիւը, որ հասնում է 17,000-ի, սրանց մէջ 1,000-ից աւելի ամենօրեայ կան: Վերջինս այնքան պարբերական հրատարակութիւն ունի, ինչքան որ միասին ունին Անգլիա, Պրանսիա, Գերմանիա եւ համարեա թէ Ռուսիա:

Լրագրութեան գործն այնքան զարգացել է Եւրոպայում, որ մինչեւ անգամ կոյրերի եւ մուրացկանների համար էլ լրագիր-

ներ են հրատարակուում: Փարիզում ամեն օր լոյս է տեսնում եւ մուրացկաններին առաւօտները հաղորդում, թէ նոյն օրը քաղաքում որտեղ պիտի կատարուի մկրտութեան, հարսանեաց եւ յուզարկաւորութեան հանգէսներ, որ դիմելով այն տեղերը, գուցէ աւելի կարողանան փող ձեռք բերել:

1883 թուականից դարձեալ Փարիզում հիմնուեցին երկու ուրիշ լրագիրներ, որոնք հրատարակուում էին կոյրերի համար բաւականին օտարօտի անուններով՝ „Valentin Haüy“ եւ „Lionis Braille“: Յիշեալ լրագիրները որ պատկանում էին երկու Փրանսիացիների, առաջինը ապուում էր սովորական տառերով եւ հրատարակուում էր Փրանսիայի 40,000-ի չափ կոյրերի ուսուցիչներին, կամ հոգատարների համար: Իսկ վերջինը որ ապուում էր ուսուցիչ նշանագրերով, (relief), Լուի-Բրայլ կոյրի սիստեմով, նշանակուած է սոսկ կոյրերի համար: Առաջին մասը հաղորդում է իւր կոյր ընթերցողներին վերջին զանազան տեսակ մասնագիտական տեղեկութիւններ, խորհուրդներ, լուրեր, նորութիւններ եւ այլն: Իսկ Բ. մասը որ կրում է ռեալիստ-գիտական եւ երաժշտական խորագիրը, հաղորդում է կոյրերին ժամանակակից մատուր եւ արուեստական կեանքի բոլոր նորութիւնները: Այս երկու հրատարակութիւնների խմբագիր պ. Մօրիս Դըլ'ա Սիգրանն ինքն էլ կոյր է:

Եւրոպական երկիրներում թէ որքան ապահովուած ու հանգիստ են լրագրի ծախսը ծածկելու եւ մի մեծ գումար էլ շահուելու, ահա առաջ բերենք երկու օրինակ.— Փրանսիայում „Petit journal“ թերթը որ ամենատարածուածն է, մօտ մի միլիոն (1,000,000) օրինակ է ապուում: 1890 թուականի հաշուից երեւում է որ Petit journal-ը այդ տարուայ ընթացքում եկամուտ է ունեցել զուտ 5,144,494 ֆրանք:

Թողնենք Եւրոպան, մի օրինակ էլ առաջ բերենք Ամերիկայից:

Նիւ-Եօրքի „The World“ թերթը օրը 300,000 կամ երբեմն էլ կրկնապատիկ թրուով է ապուում: Այս հսկայ լրագիրը հասարակ օրերը 16, իսկ կիրակի օրերը մինչեւ 48 մեծադիր էջերից է բաղկանում: „World“-ի խմբագրական մասը կազմակերպուած է հետեւեալ կերպով.—

— Խմբագրապետ՝ Պեյլտցեր. 15 խմբագիրներ, 200 տեղական լրաբերներ, 500 թրղթակիցներ:

Տպագրութիւնը 12 արագատիպ մամուլով է կատարուում, 200-ից աւելի մեքենաներ կան կազմելու, կտրելու եւ այլն: 300-ից աւելի գրաշարներ են աշխատում տպարանում:

Ամերիկեան այս հռչակաւոր թերթի խմբագրատունը մի հսկայական աշտարակաձեւ շինութիւն է 24 յարկից. ներքին յարկերում տեղաւորուած են տպարանական, թղթի եւ այլ հարկաւոր գործիքները իւրեանց աշխատաւորներով: Միջին յարկերում աշխատում են շարունակ յիշեալ լրագրի աշխատակիցները, անդադար գրում, թարգմանում տպագրութեան նիւթեր: Իսկ առանձին խմբագրատունը տեղաւորած է ամենավերին գմբէթաձեւ սենեակում: Այսպիսի տեղեկութիւնները մեր մամուլի հետ համեմատելով՝ առասպելական են թւում մեզ. պարզ բան է որ մերոնք թուով սակաւ լինելով, չէին կարող այնպէս լինել, ինչպէս որ են մեծ մեծ ազգեր: Մանաւանդ որ Հայերը տպագրական դարերում գուրկ լինելով վարչական ինքնուրույնութիւնից եւ աւելի կրօնական ազգ լինելով, մեր այժմ ունեցած զրականութեան զարգացումն, ընդհանուր առմամբ, շատ լատ չէ: Հինգ (5) միլիոն հայերս այսօր ունինք հրատարակուող քսան (20) օրագիր. կը նշանակէ մի լրագիրը ընկնում է 50,000 հոգու վերայ: Ինչպէս յայտնի է մեր ամենատարածուած թերթերը այժմ ունին հազիւ 1,500 բաժանորդ. միջին թուով եթէ ամեն լրագրի 1,000 ստորագրուող հաշուենք, լրագիր ստացողների թիւը հայերիս մէջ հազիւ հասնի

20,000-ի, թող մի այդչափ էլ ձրի կարգացողներ լինին: Ուրեմն 5 միլիոն Հայերից լրագիրներ ամենեւին չեն կարողում 4,960,000, հոգի, անչափահասներով հանգերձ:

Օտար լրագիրները իւրաքանչիւր տարի մեծ մեծ գումարներ են վաստակում. իսկ մերոնք երջանիկ են համարում իւրեանց, երբ այնքան ստորագրուողներ ունենան, որ գէթ կարողանան ծախսերը ծածկել:

Ինչքան լաւ կը լինէր, եթէ մեր լրագիրներն էլ ունենային այնքան բաժանորդներ, որ կարողանային ապահով հրատարակուիլ: Հաստատ գեղեցիկ բան կը լինէր. որ մեր լրագիրներն էլ ունենային սեփական մի մի համեստ տպարան, աշխատակիցների կանոնաւոր վարձատրութիւն եւ այլն: Անկեղծ օգնութիւն է հարկաւոր նիւթական, թէ բարոյական որ մեր կարողութեան համեմատ կարելի դարձնենք հայ լրագրութեան գործը բարգաւաճման դրութեան հասցնել: Իսկ իւրաքանչիւր լրագիր իւր համակրողների թիւը ստուարացնելու համար, պէտքէ բարձր պահէ իւր դիրքը հասարակութեան առաջ, որ իւր ամեն մի խօսքը նորա աչքում յարգ, դին եւ կշիռ ունենայ: Հեռու մնայ անձնական կրքերից, թշնամանքներից, ջերմ պաշտպան եւ անփոփոխ մնայ իւր դաւանած սկզբունքներին: Հասարակութեան գէպի ինքն ունեցած համակրութիւնն աշխատի զարգացնել օր աւուր, որից միայն կախուած է իւր գոյութիւնը: Զը մտնէ աւուրեայ խախուտ ու անմիտ բանադրանքների տակ, որ լրագրի յարգը միայն կարող են նսեմացնել: Զանազան մանր հաշիւների, վէճերի հետեւելով գործիք չը դառնայ այս ու այն խմբակներին, այլ պահպանէ այն շահերը-որ ազգի, ընդհանուրի շահն է. քարոզէ այն վարդապետութիւնը, որին կոչուած է ինքը եւ սուրբ է ամենի համար: Մի խօսքով մեր հասարակութիւնը, որ տպագրած խօսքին հաւատում յարգում է, չը պէտքէ զանազան տեսակ ինգրիկաների զոհ գնալով, մամուլի մէջ հայհոյանք-

ներ շուայլէ:

Ճշմարիտ որ անուրանալի է մամուլի արած ծառայութիւնը ժողովրդի զարգացման, բարօրութեան եւ յառաջագիմութեան գործին: Առաքինութիւն, ինքնաճանաչութիւն, եռանդ, հաւատ, լոյս, սէր, գործունէութիւն, յառաջագիմութիւն լոյս . . . է քարոզում մամուլը: Ուսում, գեղարուեստ, քաղաքական դիտութիւն է սովորեցնում մամուլը մասնաւոր անհատներին: Ճշմարիտ թնչ էր ժողովրդի դրութիւնն առանց լրագրի, երբ այժմ ընթերցասէր մարդիկ անհամբեր ըստպասում են լրագրի համարներին:

Կեանքի մէջ չարն ու բարին, տգեղն ու գեղեցիկը, արժանաւորն ու անարժանն է ճանաչեցնել տալիս լրագիրը իւր ընթերցողներին:

Մեզ մնում է յաջողութիւն ցանկալ հայ լրագրութեան, խրախուսերով խմբագիրներին անվախ, աներկմիտ մնալ մտքի-պատերազմի դաշտում, ձեռքերում ամուր պահելով իւրեանց անձնապաշտպան ու ազգապաշտպան գէնքը՝ գրիչը:

Դժուար, փշոտ, բայց մխիթարական դործ: Նպաստել պարտական է իւրաքանչիւր հայ այդ սուրբ գործի յառաջագիմութեան յաջողութեան, որից միայն կախուած է մեր ապագայ բաղձանքների իրագործումը: Ուրեմն օգնել, ամեն կերպ տարածել ամբողի մէջ, սէր զարթնեցնել՝ դէպի մամուլը, կամ լրագրութիւնը:

Մեր կողմից մի խորհուրդ հայոց խմբագիր-հրատարակիչներին, լրագրութեան գործը մասամբ ապահովացնելու մասին: Երկու կենտրոններում-Կոստանդնուպոլսում եւ Տիփսուսում միատեղ կամ զատ-զատ հիմնել մի գանձարան, «Հայ լրագիրների ապահովութեան գանձարան» անուանով: Այս գանձարանը դրուի մի մասնաժողովի տրամադրութեան տակ, որը ընտրուի ներկայիս քսան խմբագիրների ցանկութեամբ, միասին հաւաքուելով կամ ձայներ ուղարկելով: Իւրաքանչիւր հայ լրագիր ստանայ տարեկան

առժամանակ 20 բաժանորդավճար, որի կիսին խմբագրութիւնը տասն (10) օրինակ իւր օրագրից ուղարկելու է զանազան ազգային հաստատութեանց, մասնաժողովի գեկուցմամբ: Դրանով թէ մեր լրագիրները կը շահուին առժամանակ մի համեստ նուէրով, եւ թէ լրագրութեան տարածմանը նըպաստած կը լինին:

— Մ ու տ ք գ ա ն ձ ա ռ ա ն ի —

ա. Տարեկան անդամներից 5 ըուբլիով.

Ծանօթ.—Տարեկան անդամների մէջ վիճակով ամեն տարի երկու հոգու ուղարկել հայոց բոլոր պարբերական հրատարակութիւնները. (դարձեալ լրագրութեան տարածուելուն մի թեթեւ օգուտ.) յուսալի է որ անգամներ շատ կը լինին:

բ. Զանազան ներկայացումներից, պարահանդէսներից, խնճոյքներից եւ այլն:

դ. Զանազան բարեգործների կտակներով, որոնք վերջին տարիներում ուրախութեամբ սրտի շատացել են:

դ. Փողի տոկոսից, որ ամեն տարի խմբագրութիւնների հասանելիքն ուղարկելով, մնացածը տրուելու է պետական բանկը:

ե. Արգիւնաւոր (բայց միանգամ միայն) աղբիւրներից մինն էլ կարելի է հաշուել այն եկամտով, որ ներկայ թուականի վերջերին Տիփսիսում կամ Կ. Պոլսում «Հայ լրագրութեան 100-ամեայ յոբելեանը» կատարելիս, բազմաթիւ տեղերից կը դան զանազան նուէրներ, դրամ եւ այլն:

Այսպէս ահա, «ապահովութեան գանձարանը» հիմնելով, մասամբ օգնած կը լինինք մեր լրագիրների գոյութեան խնդրին: Իսկ երբ Տիրոջ աջողութեամբ «ապահովութեան գանձարանի» աղբիւրները շատացան, այն միջոցին կարելի է տալ ամեն մի լրագրի տարեկան 100 անդամավճար, բոլորին էլ ուղարկելու լրագիրներից մի մի օրինակ: Աւելի միտիթարական կը լիսի, եթէ որպէս հիմ-

նադրամ «Հայ լրագիրների ապահովութեան գանձարան»-ին, մեր խմբագրութիւնները միայն առաջին անգամ նուիրէին մի մի համեստ դումար, գոնէ 100-ական ռ. որ կը լինի 2,000 ռ.

1794 թուականից մինչեւ ներկայ 1894 թիւը, 100 տարուայ ընթացքում, ունեցել ենք 172 պարբերական հրատարակութիւն. 17-ն էլ հայատառ-տաճկաբարբառ լրագիրներ, որոնք հրատարակուել են զանազան տեղերում: Հայ լրագիրներ հրատարակուել են հետեւեալ երկրներում. Տաճկաստան, Ռուսաստան, Հնգկաստան, Փրանսիա, Աւստրիա, Անգղիա, Ամերիկա, Իտալիա, Յունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Շուէդիա, Բելգիա որոնք ըստ առաւելութեան բաժանուում են հետեւեալ քաղաքների վերայ՝

Կոստանդնուպոլիս	77-ը
Տիփսիս	17-ը
Զմիւռնիա	16-ը
Մոսկուա	6-ը
Վենետիկ	5-ը
Նիու-Նորք	4-ը
Վիէննա	4-ը
Կալկաթա	3-ը
Երեւան	3-ը
Ս. Պետերբուրգ	3-ը
Փարիզ	3-ը
Եջմիածին	2-ը
Մադրաս	2-ը
Վան	2-ը
Եգիպտոսում	2-ը

Մնացածները հրատարակուած են մի մի հատ իւրաքանչիւր քաղաքում . 17-ը Մեզ այնպստ տեղերում 6-ը

Պարսկաստանում ոչ մի պարբերական հրատարակութիւն չենք ունեցել. ցանկալի էր օր առաջ տեսնել Շահի երկրում մի լուրջ օրագիր, մանաւանդ որ զգալի պահանջ կայ այնտեղ ազգային-կրօնական գործերում: Զերմ պաշտպան ազգային ու կրօնական խնդիրներին, հոգելոյս Ստեփաննոս եպիսկոպոս Միտիթարեան մտադիր էր մի

կրօնական-ազգային հանդէս հրատարակելու, բայց դժբախտապէս չը յաջողուեց:

Հայկական ոչ մի լրագիր չենք ունեցել նաեւ Գերմանիայում:

Մեր 172 պարբերական հրատարակութիւններից յայտնի են.—

- Ամենօրեայ (կամ շաբաթը 5 անգամ) 4-ը
- Երկօրեայ (շաբաթը 3 անգամ) . 5-ը
- Եռօրեայ (շաբաթը 2 „) . 3-ը
- Շաբաթաթերթ 32-ը
- Տասնօրեայ 2-ը
- Երկշաբաթաթերթ (կիսամսեայ) . 27-ը
- Ամսաթերթ (կամ ամսագիր). . 53-ը
- Երկամսեայ (2 ամիսը մի անգամ) . 1-ը
- Եռամսեայ (3 ամիսը մի անգամ) . 1-ը
- Կիսամսեայ (6 ամիսը մի անգամ) . 4-ը
- Միամեայ (տարեկան) 3-ը
- Անյայտ մնացել են 37-ը

Որոնցից ըստ բովանդակութեան բաժանուում են՝

Քաղաքական-գրական-հասարակական, ազգային, առեւտրական. (ընդհանուր ամսմբ) 58-ը

- Ուսումնական-Բանասիրական . 11-ը
- Զաւեշտական 9-ը
- Կրօնական-բարոյական 7-ը
- Մանկավարժական 7-ը
- Ընտանեկան 6-ը
- Մանկական 4-ը
- Առողջապահական-բժշկական . 3-ը
- Երաժշտական 3-ը
- Թատրոնական 3-ը
- Մօզաների 2-ը
- Իրաւաբանական 1-ը
- Խառն բովանդակութեամբ . 58-ը

Այստեղ իսկապէս պէտքէ նկատել որ «Երաժշտական», «Թատրոնական», «Զաւեշտական», «Իրաւաբանական» եւ «Մօզաներ» բովանդակութեամբ թերթերը բոլորն էլ հրատարակուել են Տաճկաստանում: «Մանկավարժական» հրատարակութիւնները բոլորը Ռուսաստանում:

Մեր այս երկը կամ պատմութիւնը, որ

մինչեւ այսօր իւր բովանդակութեամբ գրուածներից ընդարձակ եւ հարուստ է նիւթերով, բաժանել ենք տասնամեայ շրջանների, որով եւ յայտնի է լինում իւրաքանչիւր տասը տարուայ մէջ մեր լրագրութեան յառաջադիմութիւնը: Իսկ իւրաքանչիւր լրագիր բաժանուած է երեք մաս:

Ա. ԲԱԺԻՆ:—Արտաքին մաս.

Լրագրի անունը, որտեղ հրատարակուելը, որ թուից սկսուել եւ որ թուին վերջանալը, խմբագիրը, տպարանը, դիրքը, թուղթը, տիպը, լեզուն-ոճը, ուղղագրութիւնը, բովանդակութիւնը, հասցէն եւ այլն:

Բ. ԲԱԺԻՆ:—Ներքին մաս:

Լրագրի գործունէութիւնը, ուղղութիւնը, նպատակը, իւր ընթացքում զանազան դէպքերն ու փոփոխութիւնները եւ այլն:

Գ. ԲԱԺԻՆ:—Ծանօթութիւններ.

Ստար կարծիքներ այդ (ո եւ է) լրագրի մասին մեր աղբիւրներից քաղուած, մեր կողմից զանազան ծանօթութիւններ:

Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր .

ա. «ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ». օրագիր քաղաքական, բանասիրական եւ առեւտրական: Զմիւռնիա 1842, 1843, 1844, թուերը:

բ. «ԲԱԶՄԱՎԷՊ». օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական եւ բնական գիտելեաց: Աշխատասիրութիւն Միթրեան միաբանից, հատոր հինգերորդ 1847, Վենետիկ ի տպարանի սրբ. Ղազարու:

գ. «ԵԻՐՈՊԱ». լրագիր շաբաթական, 1850, թիւ 28: [Սորա մէջ Հ. Փ. Վ. Նամանեան «ազգային լրագիրներուն ու օրագիրներուն պատմութիւնը» վերնագրով մի յօդուածի մէջ 1812-1850 թ. լրագիրներու մասին մի փոքր նկատողութիւն է դրել]:

դ. НЫНѢШНІЕ АРМЯНЕ. Сочиненіе Г. Дюлоріе. Издавіе второе, исправленное и дополненное, подъ редакціею Е. Вердеревскаго, Тифлисъ въ типограф. канцел. намѣстн. кавказск. 1856.

[Այս գիրքը որ մի համառօտ աշխատու-

Թիւն է 108 փոքրագիր էջերից բաղկացած, պ. խմբագրողը մի քանի էջերում խօսում է Հայ լրագրութեան մասին, սկսելով «Բիւզանդեան Դիտակ»-ից, որ իբր թէ առաջին լրագիրն է եղել Հայոց մէջ: Աւելի ճշտութիւններ չէր կարելի սպասել:

Ե. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. սկսեալ 1772 ամէ Փրկչեան, մինչեւ ցամն 1860, աշխատանքից Աւետիս վարժապետ Պերպերեան: Կ. Պոլիս ի տպարանի Յովհաննու Միւհէնտիսեան, 1861: [Հեղինակը իւր պատմութեան վերջում «ժամանակագրութեան» մէջ յիշում է մի քանի Հայ լրագիրներ]:

զ. ԴԱՍԱԳԻՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ չորրորդ տպագր. Աշխատասիրեց Ստեփան Պ. Պողոս Փափազեանց. վաւերացեալ յազգային ուսումնական խորհրդոյ, Կենտրոնական վարչութեան. ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց յԵրուսաղէմ. 1870: [Վերջին էջերում յիշուած են մի-երկու Հայ լրագիրների անուններ]:

է. «ՄՇԱԿ». գրականական եւ քաղաքական լրագիր: 1872, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92.

ը. Յարոյ. ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ Ռուսաստանում եւ Կովկասի Հայոց մէջ, առաջին փորձ Համառօտ տեսութեան սկզբից մինչեւ մեր օրերը: («Обзоръ» ուսւ լրագրում տպուած յօդուածի Հայկական բընագիրը:) Թիֆլիս Մարտիրոսեանի տպարանում 1878: [Հեղինակը որքան ուզեցել է հեռու պահել իրան աչառութիւնից, բայց դժբախտաբար չէ յաջողուել]:

թ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ 'ի պէտս ուսման ազգային վարժարանաց Բ. նոր մատենագրութիւն. (Գարեգին վրդ. Զարբանալեան) Վենետիկ ի տպարանի Մըխիթարեանց 1878: [Հեղինակը խօսում է «Մեր դարը» վերնագրի տակ (էջ 470-506) Հայ պարբերական հրատարակութեանց մասին: Ոչ լրիւ, բայց բաւականին խելացի տեսութիւն:

ժ. Մինաս Գափամաճեան. ԴԱՍԱԳԻՐԻ

ՀԱՅ-ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ. Ի պէտս ազգային վարժարանաց. Հատոր բ. Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յովսէփայ Գաֆաֆեան. 1879-80: [Հեղինակը իւր դասագրքի վերջում տեղաւորել է «Ճուշակ Հայերէն լրագրաց եւ հանգիսից», յիշելով միայն իւրաքանչիւրի խմբագիրը, տեղը եւ որ թուականին լինելը. սակայն ոչ այնքան ճիշտ եւ լրիւ:

ժա. «ԱՐՁԱԳԱՆՔ». գրականական եւ քաղաքական շաբաթաթերթ. 1882. թ. № № 21-22. [Յօդուածագիրը մեր յարգելի հնագէտ պ. Աղէքսանդր Երիցեանն է, որ, «Հայ պարբերական հրատարակութիւններ» խորագրի տակ մի «պատմական տեսութիւն» է գրել ժամանակագրական կանոնաւոր կարգով: Հմտութեամբ կազմած, բայց ոչ լիակատար]:

ժբ. «ՆՈՐ-ԴԱՐ». քաղաքական եւ գրականական ամենօրեայ լրագիր. 1884, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93.:

ժգ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՍԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ Եղիշէ վարդապետ Դուրեանի Կոստանդնուպոլիս 1885. . . [Հեղինակը իւր պատմութեան մէջ ժթ. դարու Հայ մատենագրութեան վերայ խօսելով, յիշում է նշանաւոր Հայ լրագիրներից 20-ը. իբրեւ ընպատիչ եւ տարածիչ աշխարհիկ լեզուի կանոնաւորման եւ զարգացման]:

ժդ. „Magazin“ շաբաթաթ. Լայպցիգ. 1885. № 15. (ապրիլ 11.) Արտիւր Լայստ Միրօզ: [Այս շաբաթաթերթում «Կովկասի գրականութիւնը» վերնագրի տակ մի յօդուած տպուեց: Յօդուածագիրը խօսում է Հայոց եւ Վրաց մամուլի արդի դրութեան մասին]:

ժե. ՀԱՅՈՑ ՎԱՆՔՆԵՐԸ: Համառօտ տեսութիւն. Կ. Կոստանեանց. Մոսկով տՊՈՐՔ. Օ. Օ. Гербекъ 1886: [Հեղինակը Հայոց վանքերի նկարագրութիւնն անելով, հարկաւոր է համարել յիշել թէ որ վանքում ունեցել ենք հանգէս կամ լրագիր]:

ժզ. «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ». գրական. պատմութ. Հայ. լրագրութ. Ա.-Բ. շրջան. [Վիեննայի Միխիթարեան միաբանութեան անդամ-

ներից՝ Հ. Գրիգորիս վարդապետ Գալէմքեարեան, «Հանդէս Ամսօրեայի» 1887 թուից սկսեց գրել իւր յօդուածը, որ հասու կըտոր տպագրուում էր մինչեւ 1890 թիւը, եւ այլ եւս չը շարունակուեց: Գաղարեցնելով վերապատուելի հայրը իւր տեսութիւնը, պատմութիւնը թողել է 50-ական թուականների վերջերին: Մեր աղբիւրների մէջ հարուստ է իւր տեղեկութիւններով Հ. Գալէմքեարեանի տեսութիւնը (ոչ պատմութիւնը ինչպէս ինքը գրել է): Սակայն դարձեալ զուրկ չէ բազմաթիւ վրիպակներից:

ժԷ. ՅՈՒՅԱԿ ԳՐՈՅ Մխիթարեան տպարանին 1889. Վենետիկ Ս. Ղազար: [Վենետիկում հրատարակուած լրագիրների մասին մի-երկու տող]:

ժԸ. ՆԻԻԹԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. ա. Գրիգոր Արծրունու եւ նրա քսանը հինգ տարուայ գրական գործունէութեան առիթով (1865-1890) Աշխատասիր. Ա. Երեցեանց. Թիֆլիս. տպարան Արօր. 1890. [Պ. Երեցեան իւր այս գրքի Բ. գլխում էջ. էջ. 61, 62, 63, 68 խօսում է գլխաւորապէս Կովկասի կամ Ռուսաստանի հայ մամուլի անցեալի մասին]:

ժԹ. Bibliographie Arménienne ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Այբուբենական ցուցակ տպագրութեան գիւտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց. (Գարեգին վարդպ. Զարբանալեան). Վենետիկ. Մխիթարեան տպարան 1883. [Հ. Զարբանալեան իւր այս գրքի մէջ ի թիւս հայերէն զանազան հրատարակութեանց, յիշել է իւր ծանօթ մի քանի լրագիրներ:

Ի. ARMENISCHE BIBLIOTHEK Herausgegeben von Abgar Joannissian y. II. Litterarische Skizzen von Arthur Leist. Leipzig Verlag von W. Friedr. [80-ական թուականներին պ. Աբգար Յովհաննիսեանի եւ գերմանացի պ. Արտիւր Մ. Լայստի տնօրէնութեամբ Լայպցիգում գերմաներէն լեզուով հրատարակուում էր

Armenische Bibliothek—(Հայկական—Մատենադարան) որ մի շարք տետրակներով, լաւ ծանօթացրեց օտարներին հայ գրականութեան հետ, պարբերաբար հրատարակելով Ռաֆֆու, Ռ. Պատկանեանի, Պ. Պռօշեանի, Գ. Սունդուկեանի, Ղ. վ. Ալիշանի, Սայեաթ-Նովայի եւ այլոց գրուածներից:

Մատենադարանի բ. տետրակում պ. պ. հրատարակիչները հարկաւոր են համարել «Լրագրութեան գործը Հայոց մէջ» (Das armenische zeitungswesen) վերնագրով մի համառօտ տեսութիւն գետեղել:

Իա. Խ. Մայումեան ՄՏՔԻ ՄՇԱԿԸ Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան 25-ամեակի առիթով. Թիֆլիս տպար. Արօր 1890. [Հեղինակը գրքի դ. գլխում խօսելով «Հայոց մամուլի անցեալի մասին», ծանօթացնում է իւր ընթերցողներին գլխաւորապէս Ռուսահայոց մամուլից մի քանի տեղեկութիւններ: էջ էջ 32-36, 42-46.]

Իբ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ սկզբից մինչեւ մեր օրերը. գրեց Ստեփաննոս Պալասանեան. Թիֆլիս տպ. Յ. Մարտիրոսեան. 1890 [Հայ մատենագիր եւ ուսուցչապետ հանդուցեալ Ստեփաննոս Պալասանեան իւր ազգային պատմութեան Զ. Երջանում «Տպագրութիւնը եւ մամուլը Հայոց մէջ» գլխում (83-դ գլուխ, էջ 444-446.) խօսում է Ռուսահայոց պարբերական մի քանի հրատարակութիւնների մասին]:

Իգ. ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐ Յակոբ Պարոնեան Թիֆլիս 1891. տպարան Մ Շարադգէ. [Հեղինակը խմբագիր-ընթերի մասին գրելիս, յիշել է նորանց հրատարակութիւնները]:

Իդ. ՕՐԱՑՈՅՑ Ժողովրդական-պատկերազարդ 1893 թ. Գրիստոսի: Զ. տարի աշխատասիրութիւն Մակար Զմշկեանի. Թիֆլիս. տպարան Մ. Ռոտինեանցի: [Կազմողը օրացոյցի վերջում «Հայոց պարբերական մամուլը» վերնագրի տակ դասաւորել է 1893 թրուականին հրատարակուող հայ լրագիրների անունները]:

Իե. ՕՐԱՑՈՅՑ 1893 թ. Բ. (Ռոստով. Յ.

Տէր Աբրահամեան): [Օրացոյցի էջ 90-96 տեղաւորուած է 1893 թուին հրատարակուող հայ լրագիրների ցանկը]:

Իգ. Հայոց արգի մատենադրութիւնը. ա.-բ. տետր: Գէորգեան ձեմարանի ա. Լտարանի դասատուութեան համար զանազան աղբիւրներից քաղուածօրէն կազմեց նոյն տեղի հայկ. մատենագրութեան ուսուցիչ Փարսազան Տէր-Մովսիսեան. (ձեռագիր): [Դասատուութեան յարմար է կազմած, բայց շատ համառօտ. ամբողջ պատմութեան մէջ լիշուած է միայն 46 պարբ. հրատարակութեան անուն, այն էլ ոչ անաչառ: Տփիսիսի «Մշակ» թերթի մասին գրուած է երեք էջ, իսկ միւս լրագիրների մասին մինչեւ անգամ կէս տող]:

Իէ. Յիշատակարանից հանուած Զմիռնիայի հայ լրագրութեան մասին. գրեց իզմիլցի ձերմակեան. (ձեռագիր) արտագրեց Յ. Տ-Մ: [Զմիռնացի պ. ձերմակեան որ սովորութիւն ունի քաղաքում պատահած հետաքրքիր դէպքերն արձանագրելու իւր յիշատակարանի մէջ, չէ մոռացել գրելու եւ տեղակոն հայ լրագիրների մասին իւր կարծիքները. որ եւ մեր խնդրանօք արտագրեց պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանց]:

Բացի այս բոլոր հիմնական աղբիւրներից մենք օգտուել ենք նաեւ զանազան հատ ու կտոր գրուածներից, մեր ստացած մասնաւոր նամակներից, թղթերից եւ այլն:

Դառնանք այժմ մեր պատմութեանը:

Գ. Լ.



Հ Ա Յ Ո Ց Պ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

Ա.

1794-1800

(ՎԵՏԱՄԵՆԿ)

1 Լ Բ Ա Գ Ի Բ.

Հայ լրագրութան հիմը դրուեց Հնդկաստանում: Այս վեցամեայ շրջանում ունեցել ենք մի լրագիր: Նշանաւոր գործող այս բաժնում միակն է Յարութիւն քահանայ Տմաւոնեան:

1.

ԱԶԴԱՐԱՐ^{1.)}

(Ամսագիր)

Մ ա դ ր ա ս (Հնդկաստան) 1794—1796

Հրատարակուում էր ամսի վերջերին Խմբագիր-Տէր՝ Յարութիւն ք.*) Տմաւոնեան:

Ի տպարանի Տէր Յարութիւն քահանայի Տմաւոնեան Եիրազեցւոյ:

Գիրքը՝ (տետր.)

Քուղթը եւ տիպը՝

Բաժանորդագրիւնը՝ մի հոն

Լեզուն ոճը՝ } ,,... Սակայն որպէս միշտ տարաբախտապէս դէպ լինի Ուղղագրութ.՝ } ի միջի մերում ի պակասում:“

Ծրագիրը՝ «... Իմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաքաղ անցքն նոյն ամ-

սոյ ի զանազան կազմաց, քարտէզաց եւ գրոց. նաեւ բանք հարկաւորք եւ քաղցրալուրք եւ ի վերջումն տետրակիս զօրացոյց մի հետեւեալ ամսոյ պարունակեալ ի նմա զտօնս սրբոց եւ զաւուրս ծննդեան եւ լրման լուսնոյ եւ այլն. . . »



այոց մէջ պարբերական անդրանիկ հրատարակութիւնը «Ազդարար» ամսագիրն է, որ հրատարակուում էր Հրնդկաստանի Մադրաս քաղաքում, 1794

թուականի հոկտեմբեր ամսից, Յարութիւն քահանայ Տմաւոնեանի խմբագրութեամբ: Ուրախալի է որ Հայ լրագրութեան հիմնագիրը եղել է մի հասարակ քահանայ, որի անունը մեր մամուլի պատմութեան մէջ անջնջելի կը մնայ:

*) Աստ ոմանց արքեպիսկոպոս.

Պարսկաստանի Երրագ քաղաքից էր գաղթել Յարուսթին քահանան: Սա Մադրասում տեսնելով տեղացի ազգայնոց գրասիրութիւնը, աշխատեց մի տպարան հաստատել, ընթերցանութեան մի քանի գրքեր տպագրելու: Մադրասում առաջին հայ տպարանը որ պատկանում էր Նոր-Ջուղայեցի Յակովբ Եահմիրեանցին, արդէն վերջացել էր: Բարեյիշատակ քահանան անձամբ հոգաց տպարանի պիտոյքները. մի մամուլ շինեց, տառեր ձուլեց, եւ սրդէն սկսեց մի երկու գրքի տպագրութեան համար աշխատել, որոնք եւ յաջողուեցին:

Տէր հայրը տեսնելով տեղական Անգղիական լրագիրները, իւր մտքում ծնուեց հրատարակել մի հայ պարբերական տետրակ: Ամեն յարմարութիւն յաջողցնելով, շուտով իւր մտադրութիւնն իրագործեց հայր Մալանեան: Ամար ամսի 20-ին (օգոստ. 7-ին) մի յայտարարութիւն ցրուեց Մադրասում եւ շրջակայքում առ «Բարեպաշտ պարոնաց եւ մաքրակենցաղ տիկնանց Մադրասիս Հայոց», այսպիսի բովանդակութեամբ «... նկատելով եթէ զօժանդակութիւն տպարանին եւ եթէ բարեպէս յառաջիկեալն ուսումնասիրաց յարմար վար...» նուիրել առաջի ձերումդ ազգասիրութեան... այսինքն տպիցմամբ 'ի լոյս ածել զտետրակ մի ամենայնում վերջնոյ ամսոյ անուանեալ ոչ ուր ոչ յորմէ իմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաքաղ անցքն նոյն ամսոյ...» եւ այլն:

Երկու ամսից յետոյ, թիրայ ամսի 30-ին (հոկտ. 16.) շրջ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ 'ի Մադրաս», լոյս տեսաւ «Ազգարար»-ի առաջին տետրակը: Հնգկաստանի հայերը նոր ամսագրին դեռ կարճ ժամանակում 30-ի չափ բաժանորդներ տուին:

Հնգկաստանի չափ Թիւրքիայում էլ «Ազգարարը շատ համակրողներ չունեցաւ. ամբողջ Տաճկաստանում հազիւ 10 ստորագրողներ եղան: Իորա հակառակ Ռուսաստանում «Ազգարարը» հետաքրքրուողներ

շատ ունեցաւ: Յովսէփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ Արղութեան, Ստեփաննոս Գուլամիրեան աշխատակցում էին «Ազգարար»-ին եւ ամեն կերպ աշխատում էին անդրանիկ հայ հանդիսի յաջողութեան մասին: Բայց ցաւօք սրտի «Ազգարարի» աստղը հետզհետէ թեքուում էր: Հակառակ տէր-խմբագրի անդուլ ջանքերին, հակառակ հայ սակաւիկ գրագէտ հասարակութեան, «Ազգարարի» երկու տարին դեռ չը լրացած՝ դադարուեց: Ամսագրի մահուան հետ էլ, մի քանի շաբաթ անցած, 1796 թուականի փետրուարին, հայ առաջին խմբագրի մահը տեղի ունեցաւ:

Ժ Ա Ն Օ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե ր .

1.) «Ազգարար»-ի երկու տարուայ տետրակները միասին կազմած, մի օրինակ գտնուում է Կ. Պոլսում, արժ. Յովհաննէս քահանայ Մկրեանի մօտ:

Մեր աղբիւրները «Ազգարարի» մասին — ա. «... Հայ լրագրութեան արշալոյսն արեւելեան Հնդկաստանի Մադրաս քաղաքէն է «Ազգարար» գրարար թերթն 1794 յուլիս (') ամսոյն եւ իւրաքանչիւր ամսոյն վերջերը կը հրատարակուէր...»

«Հանդ. Ամսօր.» 1887, էջ 89 հ. Գ. Գ. բ. «... Ազգարար ամսօրեայ հրատարակութիւն ի Մադրաս Հնդկաց, ի ձեռն Տէր Յարութիւն քահանայ Մալանեան . . . ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու սրբ. կաթողիկոսի ամենայն Հայոց, ի Վաղարշապատ. եւ ի Թազաւորութեան օգոստափայլ Տեառն Երկրորդի Հերակլա արքայի թիֆլիս...»

Մասնէն, հայկակ. Չարբ. էջ 10.

գ. «Ահա այդ ժամանակն է, ինչ հայ եկեղեցւոյ հարազատ պաշտօնեայ Տէր Յարութիւն Մալանեանը, վէհ աւանդութիւններով հրապարակ է նետուում ու իւր ամսագիր «Ազգարարը» հիմնում...»

«Մանկավարժանոց» 1887 թիւ 1. Ս. Գ.

դ. «... ի վերջոյ ութեւտասաներորդ դարու սկսած է գտապարութիւն «Ազգարար» ի որպէս եւ այլոց մատենից, սակայն որպէս միշտ տարբարախտապէս դէպ լինի ի միջի մերում ի պակասաւորութենէ յարմար առնուլ գործոյն ընդ սկզբնաւորողին սոյն-

պէս եւ տպագրութիւն Մադրասոյ գողցես վախճան առնու ընդ բարեյիշատակ առնեալ ազգասիրի . . .

«Արամայիս» Թաղ. Աւետում. էջ 113.
ե. «Առաջին Հայ պարբերական Հրատարակութիւնը լոյս տեսաւ Հնգկաստանի Մադրաս քաղաքում 1794-96 թ. «Ազգաբար» անունով . . .»

«Դիւան Հայոց պատմութ.» Գ. ք. Աղան.
զ. «. . . Հայերէն պարբերական Հանդէս սկսելու սկզբնական պատիւը վերաբերում է ոչ թէ Վենետիկցոց, այլ հեռու Հնդկաստանի Հայերին: Կարկաթայում (*) 1795 (*) սկսուեց զբարար լեզուով Հայոց անդրանիկ Հանդէսը . . . եւ շարունակուեցաւ միայն երկու տարի: Մեզ չէ պատահած

տեսնել այս Հրատարակութիւնը . . .»

«Արձագանք» 1882 № 21: Ա. Երեց.
է. «. . . Համառօտ կեանք մը ունեցած են գրականական աշխարհի մէջ Հնդկային մեր ազգի հեռաւոր գաղթականութենէն Հրատարակուած . . . Ազգաբար լրագիր է Մադրաս . . . 1846 (**) նորէն սկսաւ Հրատարակուել ու կրկին խափանուեցաւ . . .»

«Պատ. Հայ. դպրութ.» ք. Ջարք. էջ 472.
ը. «. . . Առաջին Հայ լրագիրը որ դուրս է եկել, «Ազգաբարն» էր Կարկաթայի (*) Հայոց գաղթականութեան ձեռքով 1795 (*) թիւ: Բայց որովհետեւ թոյլ հիմունքների վերայ էր դրուած, միայն երկու տարի տեսց . . .»

«Հայկ. մատենադ.» Ա. Լ. ք. էջ 145.



Յրկրորդ շրջանում աւելացաւ 3 հայ պարբերական հրատարակութիւն կամ լրագիր: Այս տասնամեայ շրջանում լրագրութիւնն սկսուեց եւ Վենետիկում. գլխաւոր գործող հանդիսանում է Ղուկաս Վրդ. Ինճինճեան:

2.

ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ^{1.)}

Յիշատակարան քաղաքական, պատերազմական. որ է եկեղեցական եւ բանասիրական անցից եւ դիպուածոց աշխարհի

(Տարեթիւրթ) 2)

Վենետիկ (Իտալիա) 1800—1803
Հրատարակուում էր տարուայ վերջերին:

Խմբագիր՝ Հ. Ղուկաս վ. Ինճինճեան (3)
Տպագրութիւն Ս. Ղազարու:
Դիրքը՝ (գիրք) ութածալ փոքր գիրքով
384 էջ. 6X10 հարիւրամետր:

Թուղթը եւ տիպը՝ մաքուր, բաւարար-
բաժանորդագրիւնը՝ (4)

Լեզու, ոճը՝ } ... Իմնք հիմա ծծծին վրա,
երբոր նիստնր աղէկ մը աւրեց
Ուղղագրութ. } Յշնամոյն նաւերը, խապար:“

Ծրագիրը՝ Իւր նախընթաց տարուայ
պատերազմական, եկեղեցական, քաղաքական,
բանասիրական, վաճառական-
կան նշանաւոր անցքերը եւ այլն:



գրարար»՝ Հնդկաստանի հայ գաղութի անգրանիկ ամսագիրը չորս տարի էր որ դադարուած էր: Հայոց մէջ դեռ ոչ մի տեղ լրագիր չէր երեւում. միայն 1800 թու-

կանին Միխիթարեան կաթողիկ վարդապետների ձեռքով լոյս տեսաւ «Տարեգրութիւն» անունով գիրքը, որի մէջ ամիս-ամիս բաժանուած արձանագրուում էր նախընթաց տարուայ նշանաւոր անցքերը: «Տարեգրութիւնը» շարունակուեց երէք տարի: Վենետիկեան տարեգրի լեզուն ինչպէս նմուշից երեւում է բաւականին մատչելի էր թէ բարձր, թէ ուսմիկ ժողովրդի ընթերցանութեան: 1803 թուին այլ եւս լոյս չը տեսաւ «Տարեգրութիւնը»:

Թ Ա Ն Յ Ս Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

1) «Տարեգրութեան» մասին մեր աղբիւրները ա. ,, . . Տարեգրութիւն՝“ Եւր բովանդակութեան կողմանէ կը շրջէր ընդ բնաւ աշխարհ, եւ ամեն տէրութեանց գիտնական գիտերու եւ այլն տեղեկութիւն կուտար. կրնայ ըսուիլ որ լրագրութեան մանկութեան հասակին այս պատիւերը շատ շատ յառաջագիմութեան բողբոջներն ինքնին

կը ցուցնէր . . .“

„Հանգ. Ամսօր.“ 1887 թ. էջ 90 Հ. Գ. Գ.
բ. „Տարեգրութիւն. 1799 տարւոյն որ է յիշատակարան երեւելի անցից գիւղացի աշխարհէ ի սոյն ամի, կարգեալ ըստ իւրաքանչիւր աւուրց ամսոյ յորում դիպան, յաւելեալ ի նմա եւ ընդհանուր աշխարհագրական տեղեկութիւն յամի տեսուն 1800 ի Վենետիկ ի վանս օ. Ղազարու . . .“

„Մատենադէտ. Հայկակ.“ Զարբ. էջ 662
գ. „Հայերէն պարբերական գրուածոց մէջ առաջին (””) կրնան սեպուիլ ժամանակի կարգաւ „Տարեգրութիւն“ կոչուած տետրակներն, որք 1799—1802 տարիներուն մէջ հրատարակուած են ի Վենետիկ յաշխարհիկ լեզու . . .“

„Պատմութ. Գպր.“ բ. Զարբ. էջ 470.
գ. „ . . . Սկսեր է 1799-ին եւ տեւեր է մինչեւ 1802. խմբագիրն է Հ. Ղուկաս վ. Ինճինճեան. փոքր գիրքով . . . տարին մի անգամ կը հրատարակուէր . . . Յիշատակեալ համառօտիւ անունք եւ հասակ թագաւորաց, փոփոխութիւն եւ դաշնակցութիւն տէրութեանց, վիճակ գիտութեանց, գիւտք, արհեստք եւ վաճառականութիւն . . .“

Զեռագիր տեղեկութ. Հ. Ղ. վ. Ալիշան.
հ. „ . . . Վենետիկցիք աւելի յաջող պայմաններ ունենալով, օգուտ քաղեցին „Ազգաբարի“ գտած համակրութիւնից 1799 թ. սկսեցին աշխարհաբար լեզուով „Տարեգրութիւն“ անունով պարբերական հրատարակութիւնը . . . Նրեք տարի այս ձեւ շարունակուելուց յետոյ, „Տարեգրութիւնը“ դադարուեց կամ լաւ է ասել ձեւը եւ անունը փոխեց . . .“

„Արձագանք“ 1882 թ. № 21 Ա. Նր.
գ. „ . . . իսկապէս կը տեսնենք որ Միթարեաններն են սկիզբ դրել (””) հայ լրագրութեան. 1799 թ. հրատարակեցին „Տարեգրութիւն“ որ եւ սպուում էր գրաբար (””) լեզուով. տեւեց 17 (””) տարի. իսկապէս բառի բուն նշանակութեամբ լրագիր չէր. այլ նման էր հանդէսի, որովհետեւ տարին մի անգամ էր դուրս գալիս . . .“

„Հայկ. Մատեն.“ Ա. Լ. բ. էջ 145.

- 2.) Տարեթերթ միայն 3-ն ենք ունեցել.
- 3.) Տարեթերթի վերայ չէ գրուած խմբագրի անուն:
- 4.) Իսկապէս տարեկան մի տետրակի կամ գրքի համար դժուար թէ բաժանորդագին լինէր. այլ հատով ծախուած կը լինէր:

3.

ԵՂԱՆԱԿ

ԲԻԻԶԱՆԴԻԱՆ¹⁾

ԲԱԶՄԱՎԷՊ

Վենետիկ (Իտալիա) 1803—1820
Հրատարակուում էր տարին մի անգամ, յունուար ամսին:

Խմբագիր՝ Հ. Ղուկաս վ. Ինճինճեան.
Խապարանի Ս. Ղազարու.

Դիրքը՝ (գիրք) մօտ 300 էջ 32 in
Թուղթը եւ տիպը՝ բաւարար.

Բաժանորդագինը՝ (2.)

Լեզուն ոճը } „Բաղնիքի չափազանց յսնախումբիւնը նաև վնասակար
Ուղղագրութ. } ատեններ երթալը՝ իրենց.“
Մրագիրը՝

Ա. ՆՈՐ ՏԱՐԻ—Նոր գիտելիք, բարոյական խորհրդածութիւններ:

Բ. ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՕԳԵՐԵԻՈՒԹԱԿԱՆԱՑ Բժշկական եւ բնական այլ եւ այլ տեղեկութիւններ:

Գ. ԳՈՒՇԱԿՈՒԹԻՆ ՕԳԵՐԵԻՈՑԹ ՓՈՓՈՒԹԵԱՆՑ—Այս բաժնի մէջ գրուում էր իւրաքանչիւր ամսի օրն եւ բնութեան երեւոյթների դուշակութիւնները:

Դ. ԶԲՕՍԱՐԱՆ ՈՒՍՄԱՆՑ—Գիտնական հատուածներ:

Նաեւ քաղաքական անցքեր ու գէպքեր, ժամանակագրական կարգով: Բանասիրական, ուսումնական, արուեստագիտական եւ եկեղեցական, պատմական յօդուածներ, սովորութիւններ . . .



ղանակ Բիւզանդեան»
 Բողոքական տարեգր-
 ըր կարելի է հաշ-
 ուել «Տարեգրու-
 թեան» շարունա-
 կութիւնը. միայն
 փոխուած է ձեւը.
 անունը, խմբա-

գիրը, քաղաքը, տպարանը, ծրագիրը, որ
 եւ գլխաւորն է, միեւնոյն են: Երեւի դո-
 րա համար էլ մեր աղբիւրներից մի երկուսը
 ինչպէս եւ պ. Արտիւր Լայստ սխալուել է
 միացրել են:

1812 թուականին երբ Կ. Պոլսում հաս-
 տատուեց «Արշարունեաց ընկերութիւնը»,
 1815 թուականից «Նղանակ Բիւզանդեան»
 տպագրուում էր «արդեամբ եւ ծախիւք»
 լիշեալ ընկերութեան:

«Նղանակ Բիւզանդեան» 1813 թուակա-
 նից մի քանի փոփոխութիւններ կրեց թուղ-
 թըն ու տիպը աւելի գեղեցկացրեց եւ գրքի
 մէջ իւրաքանչիւր ամսի վերջերին տեղաւո-
 րում էր մի մի «այլաբանական» նկար: Լե-
 զուն էլ աւելի դիւրացել էր քան «Տարե-
 գրութիւնը». ինչպէս ահա պ. Երիցեանը մի
 նմուշ է բերել՝ «... Անցած տարուայ խօսե-
 լովս արդեօք արթընցնր մի. ուսման
 վերայ սէր ձգեցիր մի: Կամ որ գօւն
 չես կրնար ետեւէ իյնալ նէ, տղիգ վե-
 րայ հոգ տարի՛ր մի. անանկ ճամբայ
 զննեմ որ ես չի կրցայ կամ չեմ կրնար
 ստովորիլ նէ, տղաս սովրի մարդ ըլլա
 տէլի... (3)

Պ. Երիցեան «Նղանակ Բիւզանդեան»-ին
 նմանեցնում է ամեն տարի Եւրոպացուց
 մէջ երեւացող ալամանք-ներին, քան թէ
 որ եւ իցէ պարբերական հանդիսի:

Տարեգիր «Նղանակ»-ի խմբագիր Հ. Ին-

ճինճեան նստելով Բիւզանդեան երկրում—
 Կ. Պոլսում, գրում էր իւր նիւթերը եւ տպա-
 գրել տալիս Վենետիկում: Բազմավէպ էր
 իւր նիւթերով «Բիւզանդեան Եղանակը» ա-
 ռատ էր մանաւանդ պատմական, աշխարհա-
 գրական մասը:

Ամեն տարի մի-մի հատոր լոյս տեսնե-
 լով, «Նղանակ Բիւզանդեան» 1820-ին դա-
 դարուեց, որ եւ տեւեց 17 տարի:

Ծ Ա Ն Օ Ք Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

«Նղանակ Բիւզանդեանի» մասին մեր աղ-
 բիւրների կարծիքները—

ա. ,, . . . Իբրև որ այդ գրքոյնները Բազմավէպ
 էին նիւթերի կողմից եւ աւելի նման
 եւրոպացուց մէջ ամեն տարի երեւացող
 ալամանքներին քան թէ որ եւ իցէ պար-
 բերական հանդիսի“

„Արձագանք“ 1882. № 21. Ա. Եր.

բ. ,, . . . Նղանակ Բիւզանդեան դիրքոյն ու
 տպագրութեամբ ըստ ամենայնի նման
 „Տարեգրութեան“. 1803-ին սկսաւ հրա-
 տարակուել ամեն տարուց սկիզբն, աշխա-
 տարիութեամբ հ. Ինճինճեան անխոնջ
 գրասիրի“

„Հանդ. Ամսօր.“ 1887 էջ 90. հ. Գ. Գ.

գ. ,, . . . Սկսել է 1805 (՞)-ին, եւ անընդհատ
 հրատարակուել է մինչեւ 1820. խմբագիրն
 հ. Ղուկաս վ. Ինճինճեան . . . իւրաքան-
 չիւր ամօոց վրայ բաժանուած. երբեմն
 ճոխ բովանդակութեամբ եւ երբեմն սա-
 կաւ . . . նաեւ 1815 տարուոյն վերջը յա-
 ւելուած է իւրաքանչիւր ազգաց եւ պե-
 տութեանց գրօյները“

Ձեռագիր տեղեկութիւն հ. Ղ. վ. Ալեշ.

դ. ,, . . . Նղանակ Բիւզանդեան 1800 (՞)(1802)
 գուշակութիւն փոփոխութեանց օգերե-
 ւոյթ լուսնականաց, քառորդ է ի քառորդ
 փոփոխութիւնք եղանակաց, դրեց աստե-
 ղաց, երեց անցելոց շրջանաց“

„Հայկակ. մատենագիտ“ Չարբ. էջ 166.

ե. ,, . . . Ասոնց („Տարեգրութեանց“) ազգին
 մէջ գտած ընդունելութիւնը կը խրախու-
 սէ ,,Նղանակ Բիւզանդեան“ կոչուած
 տետրակներուն հրատարակութեան ձեռք
 գարկելու եւ որ անընդհատ կը շարու-
 նակուի գրեթէ քսան տարուան միջոց“

տարուէ տարի աւելի հետաքրքրական և ընդարձակ ճեղքութեամբ տեղեկութիւններ հաղորդելով ազգայնոց

„Պատմ. հայ. դպրութ.“ Զարբ. էջ 470
գ. „Ինչինչեան . . . Եղանակ Բիւզանդեան Բազմավէպ ամսագիր 1815, 16, 17, 18, 19, 20 ամսոց. 12 ծալ. 1819—20-ը 50 Փր. . . .“

„Յուցակ գրոց Մխիթ. տպ. 1889 էջ 16.

- 2. Բաժանորդագիրը կամ գինը տես՝ յօդուածիս գ. աղբիւրի վերջը:
- 3. Տես „Եղանակ Բիւզանդ.“ 1813 էջ 89.

4.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ¹⁾

Վ Ե Ն Ե Տ Ի Կ (Ի տալիս) 1807—180
Հ ր ա տ ա ր ա կ ու ու մ է ր
Ի մ բ ա գ ի ր
Ի տ պ ա ր ա ն ի Ս. Ղ ա գ ա ր ու . . .



ամանակակից քաղաքական դէպքերն ու այլ հետաքրքիր անցքերը որոնք արժանի էին գրի առնուելու, պէտք էր իսկապէս մի լիշատակարան գիրք՝ որտեղ արձանագրու-

ուէին յաջորդ սերնդի համար շատ պիտանի եւ հետաքրքրական նիւթեր: Այդպիսի մի պահանջի անհրաժեշտութիւնն զգացին Վե-

նետիկի հայ կաթօլիկ Մխիթարեանք 1807 թուից հրատարակելով «Յիշատակարան» անունով տետրակները: Թէ որչափ է տեւել «Յիշատակարանի» հրատարակութիւնը, մեզ յայտնի չէ. հաւանական է որ տեւած լինի 2—3 տարի:

Ի Ա Ն Ս Թ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ի

- 1.) „Յիշատակարանի“ մասին մեր աղբիւրները դրում են միայն—
ա. „ . . . 1807-ին Եւրոպայի մէջ տրուած պատերազմաց հետաքրքրական լուրերը հարկաւոր կընեն նաեւ ուրիշ համառօտ պարբերական երկասիրութեան մը հրատարակութեանը: Ասիկայ կը կոչուի „Յիշատակարան“ որուն միակնպատակն է(ր), ինչպէս խորագիրն ալ կըսէ, նոյն տարւոյն մէջ յԵւրոպա հանդիպած պատերազմաց ստորգ պատմութիւնն տարածել յարեւելս . . .“

„Պատմ հայ դպրութ.“ Զարբ. էջ 470.
բ. „ . . . Այն ժամանակուայ Եւրոպական քաղաքական անցքերը այնքան զբաւած էին ամբողջ աշխարհին ուշադրութիւնը, որ ժամանակակից լուրերի եւ դէպքերի հաղորդելը Հայոց համար եւս կարեւոր էր: Այս կարիքը լրացնելու մտքով Մխիթարեանք 1807 թուից սկսեցին հրատարակել Վենետիկում „Յիշատակարան“ անունով պարբերական տետրակներ . . .“

«Արձագանք» 1882, № 21. Ա. Եր.
գ. « . . . 1807 թուականին Վենետիկի Մխիթարեանք այդ հանդէսի (Տարեգրութեան) հետ միացրին եւ «Յիշատակարան . . .»
«Հայկակ. մատեն.» Ա. Լ. Բ. էջ 146.


- Պ. Լայստ „Յիշատակարանը“ առանձին հանդէս չի համարում, ասելով որ այս եղել է „Տարեգրութեան“ յաւելուած կամ վերջապէս միացրած: Պարոնը շփոթում է նրանից, որ „Տարեգրութեան“ խորագիրն է . . . լիշատակարան քաղաքական . . բանասիրական . .



Երբորդ շրջանում կամ երկրորդ տասնամեակում միայն մի յայտնի պարբերական ենք ունեցել, այն էլ Վենետիկում: Գործող՝ Հ. Մանուէլ վարդապետ Ջախջախեան:

5.

Դ Ի Տ Ա Կ ¹⁾
Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ե Ա Ն



Ի Ի Ն Դ Ի Ո Յ

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ր Զ Ա Ր Ո Ւ Ն Ե Ա Ց

(Կիսամսեայ)

Վ Ե Ն Ե Թ Ի Կ (Իտալիա) 1812—1817.
Հ ր ա տ ա ր ա կ ու ու մ է ր
Ա շ խ ա տ ա ս ի ր Ե ա լ ի Հ ա յ ր Մ ան ու է լ է Ջ ա խ ջ ա խ Ե ա ն, Մ խ ի թ ա ր Ե ա ն մ ի ա ք ա ն ի ց. 3)
Ի տ ա յ ա ր ա ն ի վ ա ն ս ս ր ք ո յ ն Ղ ա զ ա ր ու.
Դ ի ր ք ը՝ (տետր.) ք ա ու ա ծ ա լ թ Ե ր թ. 8 է ջ Ե ր կ ս ի ն Ե ա ն 17 X 24 Հ.-մետր.
Թ ու զ թ ը Ե ա տ ի պ ը ք ա ա ր ա ր.
Բ ա ժ ա ն ո Ր զ ա գ ի ն ը տ ա ր Ե կ ա ն 40 ղ ու ր ու շ. (4)

Լ Ե զ ու ն, ո ճ ը՝
Ու զ զ ա գ ր ու թ. { ,, . . . ի ն ծ ի փ ա ո ք կ ր ս ե պ ն մ ի մ ա ց ն ե ի Գ ու կ ի ն տ է ր ու մ Ե ա ն ղ, մ է կ ն ո ր Ե ղ ա ծ յ ա ղ թ ու մ թ ի ն:՝
Ծ ր ա գ ի ր ը՝

Պատմութիւն քաղաքական ու պատերազմական, բանասիրական եւ եկեղեցական դիպուածներու, բաժանուած ըստ կարգի ժամանակագրութեան: Ուսումնական ու

բանասիրական ճիւղերից գրաբար բարոյական ոտանաւորների աշխարհաբար թարգմանութիւններ: Արուեստական ու բնական յօդուածներ, վէպեր, առակներ եւ այլն:

Բովանդակութիւն 1813. Թիւ 26 (ապրիլ.)

Բրուսիա—Պեւլին-30 մարտի. Համառոտութիւն Պեւլինի կազէթային:

Ռոսթոք-23 մարտի.

Փրանսիա—Պրէմ-26 մարտի.

Մաարիտ 10 մարտի.

Թագաւորութիւն կրկին Սիկիլիոյ Նաբոլի-5 ապրիլի.

Հռոմ. 12 ապրիլի.

Խապարներ՝ որոնք Վենետիկ քաղքին մէջ կամ կլլան, կամ կը լսուին եւ կամ կը խօսուին երկայն ժամանակ ժողովրդին մէջ իբրեւ ճշմարիտ:



Պատանգնուպոլսում ինչպէս լիշեցինք նախընթաց էջերից մինում, 1812 թուականին կազմուեց մի Հայ ընկերութիւն ուսումնասէր անձերի մասնակցութեամբ. նպատակ ունենալով ազգի մէջ ընթերցանութիւն տարածել, Հրատարակելով զանազան

գրքեր ու լրագիրներ: «Արշարունեաց ընկերութիւն» էր կոչուում այդ ընկերութիւնը: Այդ ժամանակներում Վենետիկի Միլիթարեան հայրերից մի քանի ականաւոր անձինք բնակուում էին Կոստանդնուպոլսում եւ լուսաւորչական հայերի հետ լաւ յարաբերութեան մէջ էին. աւելի անկեղծ քան այժմ: Այնպէս որ Հայոց պատրիարք Ամենայ. Յովհաննէս արքեպիսկոպոս, պատրիարքարանում ժողովներ էր կազմում զանազան բարի մտքերի իրագործման համար, որտեղ ազատ մտնում էին կաթողիկ հայ վարդապետները:

«Արշարունեաց» ընկերութիւնը իւր հիմման առաջին տարուանից, — 1812 թ. օգոստ. 1-ից, իւր ծախսերով հրատարակում է «Ռիտակ Բիւզանդեան» պարբերական տետրակները Վենետիկում, որի խմբագրութեան եւ հոգսերի մասին յանձնառու էին Միլիթարեան հայ վարդապետները:

«Ռիտակի» լեզուն նախ աւելի ռամկական, աւելի ժողովրդական էր. յետոյ փոփոխուելով, աւելի գրականական դարձաւ: Գլխաւոր տեղը «Ռիտակի» նիւթերից առաջին տեղը բռնում էր քաղաքական բաժինը, թարգմանելով օտար լրագիրներից: Միայն Մ. Նապալիոնի տպագրական ճնշող օրէնքների տակ, չէին կարող ամեն ինչ ազատ տպագրել «Բիւզանդեան Ռիտակի» մէջ. մանաւանդ երբ նա խոտիւ արգելեց այն օտար լրագիրները իւր երկրում մուտք գործելը, որոնք իրան հակառակ էին գրում:

«Ռիտակ Բիւզանդեանի» մէջ յօդուածների տակ ինչպէս եւ ժամանակակից շատ լրագիրների եւ հանդէսների, ստորագրութիւններ չեն երեւում: Մեր ձեռքում եղած մի քանի տարուայ «Ռիտակների» ոչ մի յօդուածի տակ աշխատակցի կամ թարգմանչի ստորագրութեան չը պատահեցինք: Կը նշանակէ այդ ժամանակներում պարբերական հրատարակութիւններին կողմնակի անձնաւորութիւններ չէին աշխատակցում. այլ միայն խմբագիր կամ հրատարակիչը:

Թէպէտ «Ռիտակ Բիւզանդեանի» իւրաքանչիւր համարի վերջում գրուում էր—«Աս գործքս որ է պատմութիւն հիմիկուան ատենիս, տասնը հինգ օրը մէլ մը կը տպուի», բայց մեր ձեռքում եղած «Ռիտակի» համարները խիստ անկանոն էին լոյս տեսած: Այնպէս որ ըստ իւր գրութեան տարեկան պէտք է տար 24—25 տետրակ, այն ինչ 1815 թուականին տպագրուած է 71 տետրակ բայց զարմանալի չէ որ շատ է երեք անգամի չափ. որովհետեւ տետրակները շատ բարակ են կազմուած իւրաքանչիւրը փոքր քառածալ 8 էջ, երբեմն էլ 4 էջ միայն:

Դժբախտաբար «Արշարունեաց ընկերութիւն» որ «Ռիտակի» նիւթական միջոցների օժանդակն էր, երկար կեանք չը կարողացաւ ունենալ: Մեզ անայտ պատճառով ընկերութիւնը լուծուեց, 1816-ի վերջերին էլ դադարուեց «Ռիտակ Բիւզանդեան» հինգ տարի կեանք ունենալուց յետոյ:

Ժ Ա Ն Օ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Ռիտակ Բիւզանդեանի» 1813 թուականի համարներն ամբողջապէս կազմուած, մի օրինակ կան Ալէքսանդրապոլում դպիւր Սարգիս Միքայէլեանի մօտ:

«Ռիտակ Բիւզանդեանի» մասին մեր աղբիւրների կարծիքները—

- ա. «... Սկսեք է 1812 եւ հրատարակուել է մինչեւ 1816... 15 օր մի անգամ կը հրատարակուէր 16 էջ բովանդակութեամբ... Տիպը եւ թուղթը նոյն է եղանակին հետ, լեզուն նմանապէս աշխարհաբար...»
- Ձեռագիր տեղեկութ. հ. Ղ. վ. Աւիշ.
- բ. «... նոյն ընկերութեան (Արշարունեաց) առաջարկութեամբն եւ հանգանակելով 1812-ին սկսեց հրատարակուել «Ռիտակ Բիւզանդեանի» հնգետասանօրեայ թերթին եւ որ կը շարունակին ցամ 1817: «Ռիտակի» կրնայ առաջին կարգաւորեալ օրագիրը սեպուիլ ազգերնուս մէջ, եւ որ բաւական աշխատութիւն եւ արդիւնք ունեցած է իւր նպատակին հասնելու, որչափ որ կրնային ներել ժամանակին հան-

բամանքները եւ . . .

„Պատմ. Հայ. դպրութ.“ Զարբ. էջ 471.
Գ. „ . . . Վենետիկոյ Մխիթարեանց մեծ. Մի-
արանութիւն ի խնդրոյ եւ ձեռնտու-
թեամբ Արշարունեաց ուսումնասէր ընկե-
րութեան, 1812-ին . . . սկսաւ սոյն այս լը-
րագիրն հրատարակել . . . Աւաղ որ „Դի-
տակ Բիւզանդեան“ 1816-ին վերջերը մե-
զի անձանօթ պատճառաւ մը շուտով մէկ-
նեցաւ հինգ տարուան փոքր ի շատէ ար-
դունալից ասպարիզէն:

„Հանդ. Ամսօր.“ 1887 էջ. 119. Հ. Գ. Գ.
Գ. „ . . . Եթէ մինչեւ այսօր շարունակուում
լինէր այդ թերթը („Դիտ. Բիւզ.“) մենք
մի մեծ պարծենալու գործ կունենայինք.
. . . „Դիտակ Բիւզանդեանը“ միայն հինգ
տարի կեանք ունենալուց յետոյ հանգաւ.“

„Արձագանք“ 1882 № 21. Ա. Եր.
Ե. „1815(“) Արշակ(ը)ունեաց ընկերութիւնը
„Դիտակ Բիւզանդեան“ հնգետասանօ-
րեայ թերթը հիմնեց.“

„Նոր-Դար“ 1884. №-34. էջ 3. Սլաք.
Գ. „Դիտակ Բիւզանդեան“ պատմութիւն քա-
ղաքական եւ պատերազմական, բանասի-
րական ու եկեղեցական դիպուածներու որ
հիմնիկուան ատեններս կ'ըլլան աշխար-
քիս վրայ: Բաժնուած է ըստ կարգի ժա-
մանակագրութեան որ իբր տարեգրութիւն
մըն է տարուանս. 1812. Աշխատասիրեալ
ի 4. Գրիգոր վ. Խապարաճեան Կոստան-
դնուպոլսեցոյ որ'ի Մխիթարեան միարա-
նից. ի Վենետիկ. ի վանս ս. Ղազարու. . . .
„Մատեն. Հայկակ.“ Զարբ. էջ 157.

Է. „ . . . 1812 թուականին Կ. Պոլսում (")
դուրս եկաւ Դիտակ Բիւզանդեան“ որի
հրատարակութեան մասին հոգս էր քա-
ղում Արշարունեաց հայրենասիրական ըն-
կերութիւնը . . .

„Հայկակ. մատեն.“ Բ. Ա. 1. էջ 146.
Ը. „ . . . Դիտակ Բիւզանդեան քաղաքական, եւ
ուսումնական տարեգիր. 4 ծալ 1812-1816“

„Ցուցակ գրոց Մխիթ. տպ. Վենետ էջ 13.
Թ. „ . . . Հայ լրագրութեան սկիզբը (") դրին
Վենետիկի Միարանները, 1812 թուակա-
նին հիմնելով Կոստանդնուպոլսում (")
„Բիւզանդեան Դիտակ“ հանդէսը որը հրա-
տարակուում էր „Արշարունեաց“ անունով
ընկերութեան ջանքերով եւ միջոցներով“
„Այժմեան հայերը“ Դիւլոր. էջ 76.

Գ. Դիւլորի ոչ հայագիտութեան համար գըր-

ուել է գըրում „Արշարունեան էնդէրութիւն“

Գ. Դիւլորի ասելով առաջին հայ պարբերա-
կան հրատարակութիւնն եղել է „Դիտակ
Բիւզանդեանը“ Մխիթարեանների ձեռքով:

2. Այս շրջանակի մէջ, որ ամեն մի համար
„Դիտակ Բիւզանդեանի“ ճակատին՝ աջ
կողմը տպուում էր, ներքին կողմից երե-
ւում էր կամ (է) երկրազնտի մի մասը. որ-
տեղ գըրուած էր Հայաստան: Դորա վե-
րայ լուսաւոր ամպերի եւ խոռագայթների
միջից երեւում է մի թռչող հրեշտակ, որ մի
ձեռքով փող է փչում, միւս ձեռքով բըռ-
նած է կրակը որ իբր լոյս է տարածում:
Հրեշտակը մի ոտը դըրել է „Հայաստանի“
վերայ: Այդ փոքր (3 հ-մետր) նկարի չորս
կողմը կարդացուում է „սող աշխարհի“
տեսող զաշխարհի“

3. „Դիտակ Բիւզանդեան 1812 թուականին
խմբագրում էր „Հ. Գրիգոր վարդապետ
Խապարաճեան Կոստանդնուպոլսեցի Մխի-
թար. միարանը. 1813, 1814-ին „աշխա-
տասիրեալ ի 2. Մատթիւս վարդապետէ
Փիակիւլճեան ի Մխիթարեան միարանից.
Իսկ 1815, 1816-ին, ինչպէս վերը գըրել
ենք Հ. Ման. Զարթախեան:

4. Վենետիկի 1889 թ. ցուցակի մէջ յէ նշա-
նակուած „Դիտակ Բիւզանդեանի“ (քա-
ժանորդա)գիրը:

6.
Հ Ա Յ Ե Լ Ի ¹⁾

Գ ա լ կ ա թ ա (Հնդկաստան) 181-181



այելի» հայ պարբերա-
կանի մասին շատ
խնայողութեամբ
են թօսում մեր ազ-
բիւրները: Յա-
տուկ այս լրագրի
մասին մեր երկու
պատուիրած նա-

մակաները որ ուղարկել էինք Հնդկաստան, մնացին անպատասխան: Մատանում ենք միայն մեր աղբիւրներէջ «Հայելու» մասին գրուած կտորներն առաջ բերելով: Մեր կողմից նախապէս հարկաւոր ենք համարում ասել, որ «Հայելի» կոչուող օրագիրը մի աննշան պարբերական է եղել: Հրատարակուելիս է եղել Պալկաթայում 1810-ական թուականներին, եւ շատ շուտով դադարուել է:

Թ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Հայելու» մասին աղբիւրներ—
 ա. «... Համառօտ կեանք մը ունեցած են գրաւորական աշխարհի մէջ՝ Հնդկային

մեր ազգի հեռաւոր գաղթականութիւնէն հրատարակուած «Հայելի» եւ... լրագիրք առաջինն ի Պալկաթա. . .»

«Պատմ. հայ. դար.» Զարթ. էջ 472.

բ. «... Պատմութ. հայ. դարութ. կը յիշէ այս ժամանակներ Հնդկահայ գաղթականութիւնէ ի Պալկաթա հրատարակեալ լրագիր մը «Հայելի» անուն. . . Մենք բախտ չունեցանք այդ «Հայելին» դիտելու. ուրիշ կողմանէ ալ տեղեկութիւն մը չունինք. . .»

«Հանդէս Ամսօր.» 1887 էջ 150 հ. Գ. Գ.

գ. «... Պալկաթայում «Հայելի» հանդէսը որոյ տեղը, ժամանակը եւ միւս հանգամանքները մեզ յայտնի չեն. . .»

«Արձագանք» 1882. № 21 Ա. Եր.



Գ.

1820-1830

(ՏԱՆՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ)

ԱՅ ՄԻ ԼՐԱԳԻՐ

Հայոց մէջ լրագրութեան գործը հետզ-հետէ ընդարձակուելու տեղ, 1820-ական թուականներին աւելի եւս նուազեց, կամ

լաւ է ասել ընդհատուեց: Այս տասնամեայ շրջանում (1820—30) ոչ մի թերթ չենք ունեցել:



Ե.

1830-1840

(ՅԱՍՆԱՐԱՆ)

4 Լ Բ Ա Գ Ի Բ .

Նշանաւոր է այն դէպքը, որ այս տասնամեայ տարեշրջանում էր Քիւրքիայում սկսուեց հայ լրագրութեան գործը: Կոստանդնուպոլիսը որ հայ լրագրիչները որրանն է եղել, այս տասնամեակում առաջին հայ պարբերականի հիմը դրուեց: Լրագրութեան գործի մէջ այս շրջանում ճարտիկութեամբ գործում էին Ամերիկացի Միսիոնարները:

7.

Ծ Տ Ե Մ Ա Ր Ա Ն 1.)

Վ ա լ կ ա թ ա (Հնդկաստան) 183⁰—183⁰



երկայ դարու սկիզբներին Հնդկաստանում եւս ունեցել ենք մի հրատարակութիւն «Շտեմարան» անունով: Շատ ցանցաւ են Շտեմարանի մասին մեր ունեցած ստույգ տեղեկութիւնները: Աննշան կեանքով, աննշան էլ մնացել է Շտեմարանը մեր պատմութեան մէջ: Մեր աղբիւր-

ներից եւ ոչ մինը չէ լիշում այս «Շտեմարանի» մասին: Միայն Հ. Գալէմբարեան իւր «պատմութիւնից» գուրս մի ծանօթութեան մէջ լիշում է մի քանի խօսքեր որ հետեւեալն է—

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

- 1). Աղբիւրներ «Շտեմարան» թերթի—
 ա. Թաղիսթեանցի լիշած դագարեալ հայ լրագրաց նայելով «Շտեմարան» հնդկահայ թերթն «Բանասէրէ» ետքըն հրատարակած ըլլայ. սակայն Սինկափորի «Ուսումնասէր» լրագրէն կ'իմանանք որ . . . դարուս սկիզբն հրատարակուած է . . . «Հանդ. Ամսօր.» 1888 էջ 220.

8.

Լ Բ Ո Յ Գ Ի Բ 1.)

Մ Ե Ծ Ի Տ Ե Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Օ Ծ Մ Ա Ն Ե Ա Ն 2.)
(Շարաթաթերթ)

Կ ո ս ա ա ն գ ն ու պ ո լ ի ս (Տաճկ.) 1832-1833
Հ ռ ա տ ա ռ ա կ ու ու մ է ը (3)
Ի մ բ ա գ ի ը (4)
Ի տ ա յ ա ռ ա ն ի «Թագուիմ Վագայի» լրագրի-
Դ ի ը ք ը (տետր) Ցածալ թերթ 4 թուղթ 8 էջ.
Թ ու ղ թ ը եւ տ ի պ ը՝ միջակ
Բ ա ժ ա ն ո ղ ա գ ի ն ը տարեկան՝
Լ ե զ ու ն ո ճ ը՝ } « . . . Գօրոս ցալին հանդի-
Ու ղ ղ ա գ ը ու թ . } պողը մերկացնելով, նախ
խիստ ջնուցած կամ Թէ. . . »

Ծրագիրը՝ պաշտօնական յայտարարութիւններ, տեղեկութիւններ, կառավարչական նոր կարգադրութիւններ, արքունական պաշտօնեաների տեղափոխումներ, աճուրդ, առեւտրական լուրեր եւ այլն:



Ոստանդնուպոլսում որ Հայ լրագրութիւնը մեր ժամանակ հասել է մի բարձր աստիճանի, 30-ական թրուականների սկիզբներում նոր սկզբուէց Հայ պարբերական մամուլի գործը:

Աղէքսանդր Բլակ Կ. Պոլսում 1891 թուականին, որպէս Բ. Գրան մի պաշտօնական թերթ սկսեց հրատարակել „Moniteur Ottoman“ (Ազգարար Օսմանեան) Ֆրանսերէն լեզուով լրագիրը:

Հետեւեալ 1832-ին այդ լրագիրը գուրս եկաւ եւ տիրող պետութեան լեզուով—տաճկերէն, «Թագուիմ Վազայի» անունով: Խմբագրութեան կողմից որպէս «ի գիտութիւն տեղացի Հայ բազմաթիւ Հասարակութեան» որոշուեցաւ այդ լրագրի Հայերէն թարգմանութիւնն էլ լոյս հանել: 1832 թուականին «Թագուիմ Վազայի» լրագրի 12-դ համարից սկսուեց Հայերէն «Լրոյ Գիր» «Թագուիմ Վազայի» թերթը լոյս գալ:

Սուլթանի մայրաքաղաքի առաջին Հայ թերթի լեզուն, բաւականին դիւրամասջելի էր, աւելի ռամկական աշխարհաբար. միայն երբեմն պատահում էր որ լեզուի մէջ խառն գործ էր ածուում տաճկական բառեր:

Այժմեան համար խիստ հետաքրքիր է այն, որ «Լրոյ Գիրը» իւր նիւթերի պակաս

ժամանակ թողնուում էր սպիտակ եւ բաց էջերով: Չէին աշխատում անպատճառ լցնել նորա էջերը, երբ պատրաստի նիւթեր չըկային. այլ նա լոյս էր տեսնում կէս տպագրուած կէս անտիպ: (5)

Օսմանեան Մեծի Տէրութեան «Լրոյ Գիրը» որ իւր տեկանոն հրատարակութեամբ մի տարին էլ չը լրացրեց, չի կարող մեր մամուլի պատմութեան մէջ արժանաւոր տեղ բռնել. մանաւանդ որ իւր ազգին ոչ մի ծառայութիւն չ'արաւ: Մի թերթեւ չի շատակութիւն «Լրոյ Գիրը» վայելում է նորա համար միայն, որ Թիւրքայի առաջին Հայ պարբերական հրատարակութիւնն է:

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

Աղբիւրներ «Լրոյ Գրի» մասին:

ա. „... Կարճ եւ շատ կարճ եղաւ ասոր կեանքը. մէկ տարուան մէջ տեսաւ ծննդեան հետ մահն ալ: Ապրեցաւ խեղճութեամբ, բոլորովին կապեալ իւր բնագրին. Կտար տէրութեանց անցքերու եւ ազգային իրաց անձանութ. . .“

„Հանգ. Ամսօր“ 1887 էջ 50. հ. Գ. Գ.

բ. „... 1830-էն ետքը՝ Օսմանեան տէրութեան մայրաքաղաքին մէջ, սկսաւ պաշտօնական լրագիր մ' ալ հրատարակուել տաճկերէն լեզուով: Անոր հետեւողութեամբն ու երբեմն նաեւ թարգմանաբար՝ Հայ լրագիր մ' ալ երեւեցաւ նոյն քաղաքին մէջ...“

„Պատմ. գալուսթ.“ Բ. Չարբ. էջ. 472.

գ. „... Նոյն երեսնական թուականներին (1832). Կ. Պոլսոյ մէջ երբեմն երբեմն լոյս էր տեսնում տէրութեան ձեռքով հրատարակուող... այս թերթը եւս շուտով գազրեցաւ...“

„Արձագանք“ 1882 թ. № 21 Ա. Եր.

դ. „... Թագուիմի Վազայի“ (Լրոյ Թերթ) շարաթաթերթ, 1832-1833. Կ. Պոլիս լիզուն տաճկերէն՝ եւ նոյն տառերով (Գիտակ. Բիւզանդ.), 7-դ (՝) համարից պ. Խմբագիրը յարմար համարեց տալ թարգմանութիւն Հայերէն, բաց յաջողութիւն չը գտաւ...“

„Հայոց արդի մատեն.“ (ձեռագիր).

- 6. „... Լոյս Գիր 1838 (") Պոլե...“
„Դաս. Հայ-ազգ. պատմ.“ էջ 339.
- 2.) Պ. Սրբեցեան եւ Հ. Զարրանալեան գրում են
„Օսմանեան Պատուութեան.“
- 3.) Քէնե շաբաթաթերթ անունն էր կրում,
բայց անկանոն էր հրատարակուում—6,
10, 15, 20-օրը մի անգամ:
- 4.) Խժրագիր անձն չէր ճանաչուում որովհետեւ
թերթի վերայ չէր ստորագրուում խմբագրի անուն:
- 5.) Այդպիսի տարօրինակ լրագիրներ եղել են եւ
Գերմանական հին լրագիրների մէջ, որոնցից
մի քանի համարներ մինչեւ այսօր պահուում են
Հայտըրբերգի համալսարանի գրադարանում:

9.

ԾՏԷՄԱՐԱՆ ^{1.)}
ՊԻՏՆԻ ԴԻՏԵԼԵԱՅ
(Ամսագիր)

Զ միւռնիս (Տաճկաստ.) 1839—1854.
Հրատարակուում էր՝ ամսի վերջերին.
Խմբագրութեամբ՝ Ամերիկայի Միսիսիպի
նահանգի (2)
Ի տպարանի Ա. Պ. Չըրչըլի.
Դիրքը՝ (տետր.) ¹/₂ թերթ տպագրակ. 16
էջ—երկսիւնեան. 18X17 Հ.-մետր.
Քուղթը եւ տիպը՝ բաւարար.
Բաժանորդագրինը՝ 18 ղրշ. տարեկ.
Լեզուսն ոճը՝ { „...աս գէշ կիրքը վերցուր
իմ վրայես Տէր իմ. օգնէ ին-
Ուղղագրութ՝. { ծի քուկին հոգիովդ. ան.“

Ծրագիրը՝
ԿՐՕՆԱԿԱՆ—Քարոզներ, ճառեր, աղօթ-
ներ, խրատներ, խորհուրդներ...
ԲԱՐՈՅԱԿԱՆ—Զանազան յօդուածներ,
յորդորներ, առածներ եւ այլն:
ԳԻՏՆԱԿԱՆ—Բնագիտական, աշխարհա-
գրական յօդուածներ, տեղեկութիւն-
ներ եւ այլն:
Բովանդակութիւն (3) 1840. (թիւ 5).
Առիւծ (պատկերով)—Հրէա Բաբունի մը.

—Հաւատքն է.—Եւսէբիոս.—Խղճմտամբ.
—Դարձեալ Հայտարարացիների աւազակնե-
րուն վրայ.—Սոսկայի անձնասպանութիւն.—
Հնդկաստանի ճերմակ եւ կարմիր մըջիւն-
ներուն վրայ.—Յակոբոս Փերդուսոն.—Ծնո-
ղաց համար քանի մը գիտելիք.—Աբրահա-
մին հրեշտակներն ընդունելը. (պատկերով)
—Գերեզման.—Թալմուտ.—Մարտ ամսուն
վրայ.—Մեղքին ընծայած բերկրութիւննե-
րը.—Դեղ եւ դարման անհաւատութեան.
—Բնութեան լոյսը չի կրնար ցուցնել փր-
կութեան ճանբան.—Ծովային թռչուն որ-
սալու վտանգը.—Վագր (պատկեր).—Քարե-
րուն մէջ գտնուած կենդանիներուն վրայ.
—Ճշմարիտ Քրիստոնէութեան գաղտնիք.—
Աբրահամին մատուցած պատարագը (պատ.)
—Փախչելու ճամբան.—Զանազանութիւն
մարդկային դիմաց.—Հաւատք եւ գործք.
—Ապառնի ատենի վրայ.—Տանը մէջ գործ
ածելու երեք կարճ կանոն.—Ապրիլ ամսուն
վրայ.—



մերիկայի բողոքա-
կան քարոզիչները
ըստ իւրեանց սո-
վորութեան որ սի-
րում են պղտոր ջը-
րում ձուկ որսալ,
30-ական թուա-
կաններին Ամերի-
կայից թիւրքիա
լցուեցին եւ վրի-
տում էին ծովեզերեայ քաղաքներում:
Օգուտ քաղելով հայ ժողովրդի անշարժ գրութիւ-
նից, 1839-ին յունուարի սկզբից Զմիւռնիս-
յում սկսեցին հրատարակել «Շտեմարան»

դիպանի գիտելոյ անուանով մի ամսագիր: Ահա թէ ինչ խօսքերով է գիմաւորում պիտանի գիտելեաց «Մտեմարանը» Հայ Հասարակութեան—«Ասանկ գործեր հողագնտիս երեսի վրայ ամեն լուսաւոր ազգերն ու երկիրներին մէջ կայ հիմա . . . Ուրեմն ինչո՞ւ համար Հայոց ազգին քաջ, մշակեալ, հարուստ եւ զարգարուն լեզուն մինակ մընայ . . . մեր «Մտեմարանը» աշխարհաբար լեզուով պիտի ըլլայ: Գրաբար լեզուին գերազանց ճոխութեանը ու գեղեցկութեանը վրայ տգէտ չենք. բայց քանի որ ան ազնիւ լեզուն ազգին մեծ մասը չի հասկնար, . . . արժան գատեցանք որ մեր «Մտեմարանը» աւսկորէն ըլլայ. . . (4)»

Ինչ նորութիւններով կը կարողանային Հայ Հասարակութեան ուշքը գրաւել, Հայ տարրի հոգին ու միտքը որսալ, յափշտակել իւրեանց կեղծաւոր. քարոզներով, եթէ ոչ հրատարակելով մի պարբերական հայերէն հրատարակութիւն, որ եւ առաջինն էր Զմիւռնիայում:

Թունդ կրօնամոլութեան մոլորեցուցիչ սերմեր ցանել Հայ անարատ ու անմեղ սրտերում—այս էր «Մտեմարանի» նպատակը: Բայց բարեբախտաբար շատ երկար չը տեւեց այդպիսի ցածհոգի վարմունքներն ու գործունէութիւնը: Գուցէ գորանց ամարդի վարմունքներից դրդուած հետեւեալ տարուանից անկեղծ քրիստոնեայ Հայ Հանգուցեալ Ղուկաս Պալտազարեան իւր «Արշալոյս»-ով գրական ասպարէզ իջաւ, փայփայելով Հայ ժողովրդի սիրած սրբութիւններն ու եկեղեցին: Խիստ հակառակ կանգնեց «ուղղափառ եղբայրներ»-ի դաւանած սկզբունքների բերան «Մտեմարանին», անդադար հարուածելով նորանց ամէն մի անմարդավայել գործերը:

«Մտեմարանն» սկզբից մինչեւ 1843 թրուականը անընդահատ շարունակուեցաւ: 1843-ին Հանգստանալով, 1844-ի յուլիսի 1-ից Ե. տարին սկսուեց որ եւ շարունակուեցաւ մինչեւ 1846 յուլ. 1-ը:

«Մտեմարանի» ոչ պատուական խմբագրութիւնը ամսագրի վերջին համարում հարկաւոր է համարել, ի գիտութիւն իւր ընթերցողների, գրել հետեւեալ տողերը— «Առ այժմ պիտի դադրի ան պատճառաւ որ վերատեսուչս մօտերս Ամերիկա կ'երթայ որ մէկ տարի կենալու միտք ունի. . .»: Բարեբախտաբար մէկ տարին եղաւ ութը տարի: Ամսագրի Ե. տարին 1854 թուականին լոյս տեսաւ, բայց ոչ Իզմիրում այլ Կ. Պոլսում: Քաղաքի փոփոխման հետ «Մտեմարանի» դիրքըն ու անունն էլ փոխուեց, ծրագիրն աւելի ծայրայեղ կրօնական գառնալով—«Աւտոբէր»—Մտեմարան պիտանի գիտելեացն սկսեց իւր նոր գործունէութիւնը:

Գուցէ իզմիրցի «Աւետաբեր—Մտեմարան»-ն ու Կ. Պոլսի «Աւետաբերը» որպէս երկու «հարազատներ», ձեռք ձեռքի տուած նոր ուժերով սկսէին գործել տեղի բազմա-Հայ շրջաններում, եթէ Իզմիրում Պալտազարեան, Կ. Պոլսում Զամուրճեան պատուելին միասին չը պաշտպանէին հակառակ բողոքականութեան ուղղութիւնը: Զամուրճեան իւր «Հայաստան» թերթով այնչափ հարուածեց «Մտեմարանին», որ գեռ Կ. Պոլսում մի տարին չը լրացրած, 1854 թուականի վերջերին հանգեաւ ի. . . (5)

Չը նայելով որ «Մտեմարանի» իւր նիւթերի վերաբերութեամբ ու խմբագրական կազմակերպութեամբ մի ինքնուրոյնութիւն չէր կազմում, շարունակ նիւթեր արտատպելով ու թարգմանելով այլ լրագիրներից, չը նայելով որ «Մտեմարան» իւր ժամանակակից լրագիրներից հակակրօւած էր, չը նայելով որ ինչպէս բողոքական միւս պարբերականները այնպէս էլ «Մտեմարանը» նիւթական կողմից՝ որ Հայ լրագիրների ամենանշանաւոր հարցն է՝ ապահով էր շնորհիւ ամերիկեան եւ անգղիական ոսկիներով, որպէս Զմիւռնայի տառիչն Հայ պարբերական, որպէս Տաճկաստանում կանոնաւոր եւ պաշտօնագար անդրանիկ հանգէս, կարելի է մի առանձին ակնարկով խօսել քանի մի տող. .

Ամեն տարի պիտանի գիտելեաց «Մտեմարանը» տալիս էր 30-ի չափ մանրանկարներ, բնական գիտութեան վերաբերեալ պատկերներ, որոնց հետ եւ համառօտ հատուածներ բնագիտութիւնից:

«Մտեմարանը» բացի կրօնականը, իւր ընթերցողներին ծանօթացնում էր ուրիշ առարկաների հետ: Իւր ժամանակին մի կրօնական, բարոյական, գիտնական հանդէս էր բաւարար նիւթերով: Թէպէտ խմբագրութիւնը նպատակով էր զետեղում գիտնական-ու բարոյական յօդուածներ, իբր թէ միառեսակ կրօնական ընթերցողներին չը շանձրացնելու, թէպէտ նիւթերի մեծ մասը թարգմանութիւններ ու արտատպումներ էին: Ոմն Վաղ. Ս. Յովհաննիսեանի ստորագրութիւնը շարունակ երեւում էր «Մտեմարանի» էջերում:

«Մտեմարան» առաջին տարին տպագրւում էր Հոման Հալլոքի, յետոյ մինչեւ 1846 թուականը Գուլէլմիոս Կաթիթիթի տպարանը: Իսկ Կ. Պոլսում եղած միջոցին «Մտեմարանի» վերջին տարում, Չըրչիլի տպարանում:

Ժ Ա Ն Օ Թ Ա Ր Ի Թ Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Մտեմարանի» 1839, 40, 41 թուականների համարներից մի օրինակ կան Կարս քաղաքում պ. Սարգիս Բիւքիւճեանի մօտ: Աղբիւրներ «Մտեմարանի» մասին: ա. «... Մտեմարան որչափ եւ կը ջանար իւր ուղղութիւնն 'ի սկզբան ծածկել, (ինչո՞ւ... միթէ ինքն էլ էր հաւատացած որ իւր արած գործն ազնիւ գործ չէ) սակայն արդէն ա. տարւոյն մէջ գոյնն սկսաւ ցուցնել... եւ կաղ 'ի կաղ յսուաջ երթալով անուանափոխութեան ժամանակ արդէն բողոքականաց պաշտօնական լրագիրն եղած էր... իւր այս ուղղութեան պատճառաւ ազգին ընդհանրութեան առջեւ ընդունելութիւն չը գտաւ...»
- բ. «... Մտեմարանը 1887 էջ 151 հ. Գ. Գ. Մ. «... Սրանց թուում հարկաւոր է նաեւ աւելացնել անգլիացի բողոքական քարոզիչների ջանքերով եւ միջոցներով Չմիւռնիայում հրատարակուող «Մտեմարան պիտանի գիտելեաց» գրականական եւ կրօնական հանդէսը 1839-43 (?) թ...»
- գ. «... Այժմեան հայերը» Գիւլոք. էջ 82.
- դ. «... Къ этому изчисленію должно еще прибавить: Մտի(ե)մարան պիտանի գիտելեաց—Магазинъ полезныхъ знаній—литературное и религиозное обозрѣніе, издаваемое въ Смирнѣ стараніями и средствами английскихъ протестантскихъ миссій съ 1839 (до) 1843 (?)...»
- ե. «... Нынѣш. Армян.» Дюлоу. էջ 82.
- զ. «... Այդ ընդհանրութեան յետոյ Ամբերկեան բողոքականները հրատարակեցին Չմիւռնիայում մի ամսաթերթ «Մտեմարան պիտանի գիտելեաց», որը պատկերագրող էր, եւ պարունակում էր իսկապէս թանկագին նիւթեր, գիտութեան վերաբերեալ, Բայց որովհետեւ հրատարակիչները ջերմ կերպով յայտնում էին իւրեանց բողոքական ձգտումները, այդ պատճառով ամսաթերթը կորցրեց իւր բաժանորդներին եւ ստիպուեցաւ դադարելու...»
- է. «... Nach dieser Unterbrechung waren es amerikanische protestantische Missionäre, die in Smyrna die Herausgabe einer Monatsschrift unternahmen. Dieselbe hiess „Magazin für gemeinnützige Kenntnisse“, war illustriert und brachte auch wirklich viel Gediengenes und Wissenswerthes, aber da die Herausgeber allzu sehr ihre protestantischen Tendenzen zeigten, verlor das Blatt bald alle Leser und musste zu erscheinen aufhören...»
- զ. «... Հայ պարբերականաց մէջ. առաջին բանասիրական օրագիր... թէ նիւթերով եւ թէ լեզուով ընդհանրապէս ընտիր թերթ մը. եւ ընդունելութիւն կրնար գտնել յազգին, եթէ մերթ ընդ մերթ հրատարակած կրօնական հատուածներովը իրաւացի կասկած մը չ' տար թէ բողոքականութեան սկզբանց ծաւալ մանր գործի չըլլար: Չորս (') տարուան այս թերթերն 1842(°)-ին վերջերը խափանուելով «...»
- է. «... Պատմ. հայ. դպր.» բ. Ջարթ. էջ 472.
- զ. «... Մտեմարան բողոքական ամսաթերթ. Չմիւռնիա 1839—1854. խմբ. բողոքակ. Միսոնարներ էին. 54 թուին նա փոխուեց Կ. Պոլիս... երկրորդ տեղն է

- ա. «... Մտեմարանը 1839, 40, 41 թուականների համարներից մի օրինակ կան Կարս քաղաքում պ. Սարգիս Բիւքիւճեանի մօտ: Աղբիւրներ «Մտեմարանի» մասին: ա. «... Մտեմարան որչափ եւ կը ջանար իւր ուղղութիւնն 'ի սկզբան ծածկել, (ինչո՞ւ... միթէ ինքն էլ էր հաւատացած որ իւր արած գործն ազնիւ գործ չէ) սակայն արդէն ա. տարւոյն մէջ գոյնն սկսաւ ցուցնել... եւ կաղ 'ի կաղ յսուաջ երթալով անուանափոխութեան ժամանակ արդէն բողոքականաց պաշտօնական լրագիրն եղած էր... իւր այս ուղղութեան պատճառաւ ազգին ընդհանրութեան առջեւ ընդունելութիւն չը գտաւ...»
- բ. «... Մտեմարանը 1887 էջ 151 հ. Գ. Գ. Մ. «... Սրանց թուում հարկաւոր է նաեւ աւելացնել անգլիացի բողոքական քարոզիչների ջանքերով եւ միջոցներով Չմիւռնիայում հրատարակուող «Մտեմարան պիտանի գիտելեաց» գրականական եւ կրօնական հանդէսը 1839-43 (?) թ...»
- գ. «... Այժմեան հայերը» Գիւլոք. էջ 82.
- դ. «... Къ этому изчисленію должно еще прибавить: Մտի(ե)մարան պիտանի գիտելեաց—Магазинъ полезныхъ знаній—литературное и религиозное обозрѣніе, издаваемое въ Смирнѣ стараніями и средствами английскихъ протестантскихъ миссій съ 1839 (до) 1843 (?)...»
- ե. «... Нынѣш. Армян.» Дюлоу. էջ 82.
- զ. «... Այդ ընդհանրութեան յետոյ Ամբերկեան բողոքականները հրատարակեցին Չմիւռնիայում մի ամսաթերթ «Մտեմարան պիտանի գիտելեաց», որը պատկերագրող էր, եւ պարունակում էր իսկապէս թանկագին նիւթեր, գիտութեան վերաբերեալ, Բայց որովհետեւ հրատարակիչները ջերմ կերպով յայտնում էին իւրեանց բողոքական ձգտումները, այդ պատճառով ամսաթերթը կորցրեց իւր բաժանորդներին եւ ստիպուեցաւ դադարելու...»
- է. «... Nach dieser Unterbrechung waren es amerikanische protestantische Missionäre, die in Smyrna die Herausgabe einer Monatsschrift unternahmen. Dieselbe hiess „Magazin für gemeinnützige Kenntnisse“, war illustriert und brachte auch wirklich viel Gediengenes und Wissenswerthes, aber da die Herausgeber allzu sehr ihre protestantischen Tendenzen zeigten, verlor das Blatt bald alle Leser und musste zu erscheinen aufhören...»
- զ. «... Հայ պարբերականաց մէջ. առաջին բանասիրական օրագիր... թէ նիւթերով եւ թէ լեզուով ընդհանրապէս ընտիր թերթ մը. եւ ընդունելութիւն կրնար գտնել յազգին, եթէ մերթ ընդ մերթ հրատարակած կրօնական հատուածներովը իրաւացի կասկած մը չ' տար թէ բողոքականութեան սկզբանց ծաւալ մանր գործի չըլլար: Չորս (') տարուան այս թերթերն 1842(°)-ին վերջերը խափանուելով «...»
- է. «... Պատմ. հայ. դպր.» բ. Ջարթ. էջ 472.
- զ. «... Մտեմարան բողոքական ամսաթերթ. Չմիւռնիա 1839—1854. խմբ. բողոքակ. Միսոնարներ էին. 54 թուին նա փոխուեց Կ. Պոլիս... երկրորդ տեղն է

բունում բարոյականը. այն է կարճ առած-
ներ, յորդորներ դէպի առաքինութիւնը.
ունէր նաեւ գիտնական մաս—աշխարհա-
գրական եւ բնագիտական տեղեկութիւն-
ներ. . . .”

„Հայոց արդի մատեն.“ (ձեռ.)

գ. Օգուտ քաղելով ազգիս անտէրութիւնից,
Տաճկաստանի հողի մէջ նոր ոտք դրած
բողոքական քարոզիչները երեսնական
թուականների սկիզբներում զարմանալի
արագութեամբ եւ ճարպիկութեամբ բուն
դրին . . . Զմիւռնիայի մէջ եւ անմիջապէս
1839 թ. սկսեցին ամսօրեայ „Նտեմարան
պիտանի գիտելեաց“ պատկերազարդ
թերթը . . . Հայ հասարակութեան սառ-
նութիւնն (դէպի „Նտեմարանը“) օրէցօր
այնքան շատացաւ, որ չը նայելով Անգղի-
այից ստացած դրամական օգնութեանը,
„Նտեմարանը“ 1842 (՝) թ, դադարեց
ընդամենը չորս (՝) տարի միայն հրատա-
րակուելով . . .”

„Արձագանք“ 1882. № 21. Ա. Եր.

է. „Նտեմարան պիտանի գիտելեաց“ 1838
(՝) Զմիւռնիա“

Պատ. հայ-ազգ. պատմ. էջ 340.

- 2.) „Նտեմարան պիտանի գիտելեաց“ մեր ձեռ-
քում եղած տետրակների վերայ խմբագրի
ստորագրութիւն չի երեւում:
- 3.) „Նտեմարան“ իւրաքանչիւր տարուայ նիւ-
թերի ցուցակը տպում էր գեկտեմբերի
տետրակի վերջում:
- 4.) Տես. „Նտեմարան“ 1839. Թիւ 1.
- 5.) Կը նշանակէ „Նտեմարան“ 15 տարուայ
ընթացքում 1839-54 հրատարակուեցաւ
միայն 7 տարի:



10.

Տ Ի Ե Զ Ե Ր Ք ^{1.)}

Խանդէս գրասպասար



Եղեցիկ անուն է դրել
իւր հանգիսի անու-
նը մեզ անյայտ իրմ-
բագիրը: Դժբախ-
տաբար «Տիեզերքի»
միայն անունն է մը-
նացել մեր մամուլի
պատմութեան մէջ:

Մեր յայտնի հնագէտ պ. Աղէքսանդր
Երիցեանն է եղել միայն, որ «Տիեզերքի»
անունն լիջել է: Իսկ թէ ինչ աղբիւրներից
է վերցրել յարգելի պարոնը իւր այդ տեղե-
կութիւնը, մեզ անյայտ է:

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Հայոց պարբերական մամուլի մեր երեսունի
չափ աղբիւրները լուռ են „Տիեզերքի“ մա-
սին: Բայց որքան մինք կարծում ենք 30-ա-
կան թուականների գործ պէտք է լինի: Գ.
Երիցեան որ „Տիեզերքի“ հետ լիջել է իւր
մի քանի անյայտ լրագիրների անուններ,
գրել է եւ „ձեմարան գիտելեաց“ անու-
նով հանդէս: Վերջինս որքան մեզ յայտնի
է լրագիր չէ եղած այլ մի հաստոր գիրք
տպուած վեներտիկում 1818 թ.



Ռուսաստանը՝ կամ գլխավորապէս Կովկասը որ Թիբեթայից կամ սոսկ Կ. Պոլսից յետոյ առաջին տեղն է բռնում հայոց պարբերական մամուլի ճոխութեան նկատմամբ, այս տասնամեայ շրջանում է սկսել իւր գործունէութիւնը: Տաճկաստանն էլ աւելի կանոնաւորեց իւր հայ լրագրութիւնը, աւելի նորան որոշ գոյն տալով: Այս տասնամեակում լրագրութեան հայ առպարիզում նշանաւոր գործողներն էին՝ Մեսրոպ Թաղիաթեանց, Յովհաննէս Տէրոյեանց, Ղուկաս Պալտաղարեանց, Յակոբ Կարինեանց, Մեքայէլ Պատկանեանց, եւ նմանապէս բողոքական քարոզիչներն ու վեհնակի Միթթարեանք:

11.

Պատմական Գրականութիւն 1.)

Օ Ր Ա Գ Ի Բ 2.)

ՔԵՂԵՔԵՎԵՆ ԲՆՆԵՍԻՐԵՎԵՆ ԵՒ ԸՌԵՒՑԻՐԵՎԵՆ.

(Երկշաբաթաթերթ)

Զ մ ի ռ ն ի ա (Տաճկաստան) 1840—1886.
 Հրատարակուում էր՝ շաբաթ օրերը.
 Հրատարակիչ եւ տէր լրագրոյս՝
 Յարութիւն Սուաճեան (3)
 Ի տպարտնի «Արշալոյս Արարատեան» (4)
 Գիրքը՝ (թերթ) միածալ 4 էջ 3 սիւնեան 30X44. Հ.-մետր:

Թուղթը եւ ախլը՝ նախ բաւարար, յետոյ մաքուր:

Բ ա ժ ա ն ո Ր զ ա գ ի ն ը՝ տարեկ. 120 դրշ. (5)
 Լ ե զ ու ն, ո ճ ը՝ } ,, . . . Հանդիսաւոր ատենա-
 Ու ղ ղ ա գ Ր ու թ.՝ } րանութիւն մը պիտի ըլլայ
 Ծ Ր ա գ ի ը՝ } երկրորդ քննութիւնին

ՔԱՂԱՔԱԿԱՆ—Արտաքին լուրեր, քաղաքական զանազան յօդուածներ, լուրեր եւ այլ տեղեկութիւններ . . .

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — «Բանասիրականք» (գծի տակ) պատմութիւններ, վէպեր ուսումնական ու բարոյական հասուածներ, ճառեր տեղագրութիւն, օտանաւորներ, պատկերներ . . .

ԱՌԵՒՏԻՐԱԿԱՆ—(6) «Առեւտրական լուրեր» բազմազան տեղեկութիւններով լիակատար ծանօթութիւն, լուրեր, ապրանքների սակագին, վաճառականական այլ եւ այլ հարկաւորութիւններ եւ այլն:

Կար եւ ներֆին ԼՈՒՐԵՐ-ի բաժանմունք որի մէջ տպագրուում էր «Ազգային» լուրեր, տեղական եւ օտար հայաբնակ քաղաքներից նամակներ: ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ. Խառն լուրեր մեծ մասամբ թարգմանուած օտար թերթերից:

ԾԱՆՈՒՑՈՒՄ- Յայտարարութիւններ: Բովանդակութիւն (7) 1843. Թիւ 123. ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՐ—Բարձրագոյն Գուռը Սերբիայի վեճի վերաբերմամբ:—Օսմանեան ներքին գործքերու բարեկար-

գուժիւնները եւ ն. Վեհափառութեան հրովարտակը.— Ժանտախտ Պէրութում.— Աւտարիայի դեսպանի նոր յայտարարութիւնը Բարձրագոյն Դերան.— Ուլիէմ գորավարի Պարսկաստան երթալը.— Երէք հիւպատոսների նոր պաշտօնները.— Ղալաթիայի Սէրայի բժշկակ. ուսումնարանի քննութիւնները:

— Ժանտախտ Էրզրումում.— Ռէշիտ փաշայի առողջութիւնը.— Սալիէ Սուլթանի մահը.— Նորին Վեհափառութիւնը իւր ծառայողների հետ.— Յակովբ Չելչպի Տիւզեանի Փարիզ երթալը.— Եղիպտոս (Աղէքսադրիա): ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ.— Անգղիա, — Գաղղիա, — Փորթուկալ, — Պելճիկա, — Ռուսաստան:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ.— Անգղիական շնորհաբանութիւնը.— Լոնդոնի մատին.— Լուսնի ծնունդը.— Փռօկրէ օրագրի 18-ի դեկտ. պատմած տնցքը.— Ութ տարեկան տաղաբաշխական գասատու.— Անգղիայում Կոմսուհի Ժանֆասուլերի մահը, հանդերձների սեղմելու պատճառաւ.— Անգղիերէն մի լրագրի կարծիք Ձինաստանի առեւարական տեղեկութիւնների մասին: Մի նոր լուր:—

Աստիճանք բարեխառնութեան Զմիւռնիոյ դիտեալ ի միջօրէի եւ եղեալ ըստ բաժանման Ռոմիւրի:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.— Գաղղիա, Տաճկաստան.
ԾԱՆՈՒՑՈՒՄ:

Քարուս առաջի կիսի վերջի կիսին, որ գեռ կանոնաւոր եւ այժմեան մեր լրագրութեան պէս ոչ մի լրագիր չէր երեւում, Ղուկաս Պալտազարեան հանգուցեալ հայ Խմբագիր-Հրատարակախօս, 1840 թուականի

օգոստոսի 10-ից Զմիւռնիայում սկսեց հրատարակել «Արշալոյս Արարատեան» քաղաքական բանասիրական եւ առեւտրական թերթը, որ մեր այսօրուայ լրագիրներից տարբեր չէր իւր կազմութեամբ:

Արդէն 45 տարի անցել էր հայ լրագրութեան սկզբնաւորութիւնից: Ամեն մի լրագիր իւր արժանի յիշատակը թողնելով, դնացել անհետացել էր: Հայ լրագրութեան տսպարիզում մենակ գործում էին Զմիւռնիայում բողոքական քարոզիչները իւրեանց բերտն «Մտեմարանով», Խեշ հայ ժողովրդին շարժող հաւատը», փրկութեան «ուղիղ ճանապարհը» ցոյց տալու նպատակով, երբ յանկարծ Արարատեան աշխարհի ողջամիտ զուլակի մտքի ծնունդ «Արշալոյսը» ծագեց Տաճկական աշխարհի վերայ, Զմիւռնիայի հորիզոնից: Հրատարակախօսական փշոտ ասպարէզ իջաւ իւր անխոնջ գրչով Պալտազարեան, եւ սկսեց իւր ազնիւ ու ազգօգուտ գործը: Ահա խմբագիրը ինչ է գրում առաջին թերթում:— «Զուարճալի գրօսարտն մըն է լրագիրը, ուր տեղ աշխարհքի վրայ ամենօրուան պատահած երեւելի անցքերը կարգալով, շատ բանի տեղեկութիւն կունենայ մարդս... ասանկ հայրենասէր ոգիով քաջալերութիւն կուտային մեզի ձեռք գորնել եւ դուրս տանել աս հարկաւոր գործը... պիտի աշխատինք որ օրէօր հնարաւոր կատարելագործութիւնները տանք մեր ներքայ օրագրին...» (8)

«Արշալոյս Արարատեան» իւր կանոնաւոր եւ երկարակեաց հրատարակութեամբ, ինչպէս Զմիւռնիայի հայ լրագրութեան մէջ առաջինն է, այնպէս էլ մեր պատմութեան մէջ յարգելի տեղ է վայելում:

Պալտազարեան՝ ջերմ պաշտպան տղգային եկեղեցական խնդիրների, միշտ հարուածում էր այնպիսի մարդկանց ու մամուլին, որոնք հակառակ էին իւր, կամ ազգի մեծամտանութեան ուղղութեանը: «Արշալոյսըն» էր որ ժամանակակից պահանջներին անհրաժեշտ իւր սկզբունքը կապել էր «հայ-

բենտոնիութեան», «ուսումնասիրութեան», եւ «եղբայրասիրութեան» հետ:

Պալատազարեանի ոչ խմբագրական գործերը քննելը մեր ծրագրից դուրս է, որ սենք թէ բացի այն որ նա երկար տարիներ վարում էր «Արշալոյս Արարատեանի» Խմբագիր-Տնօրէնի դժուարին ղէկը, վարել է նաեւ ազգային հիմնարկութիւնների մէջ նշանաւոր պաշտօններ. ինչպէս մի ժամանակ Մեսրոպեան ազգային վարժարանի տեսուչ էր, կամ զանազան ընկերութիւնների նախագահ եւ այլն: Իւր պէս, թերթի դիրքն էլ բարձր պահելով, Պալատազարեան, համակրողների մի ստուար բազմութիւն ձեռք բերեց: Բաժանորդների թիւը հետզհետէ կրկնապատկուում էր ամեն կողմից Պարսկաստանից, Հնդկաստանից, Ռուսաստանից շատ աշխատակիցներ ու ստորագրողներ ունեցաւ: Հին թերթերից, մանաւանդ արտասահմանից որ յաճախ էր պատահում մեր կողմերում ստացողներ լինէին, «Արշալոյս Արարատեանի» 70-ական թուականներից դեռ յիշում եմ որ Ալէքսանդրապոլում երկու օրինակ ստացուում էր: Բարեյիշատակ Յովսէփ աւագ քահանայ Գոստանեան, Մատթ. աղա Գորոյեան (հանգուցեալ) մշտական բաժանորդներ էին «Արարատեան Արշալոյս»-ին: Այս օրինակը հաստատում է, որ «Արշալոյս» Հայոց մէջ՝ մանաւանդ բարձր շրջաններում, փառաւորապէս տարածուած էր:

«Արշալոյս Արարատեան» առաջին տարուանից սկսեց հրատարակուել սրպէս կիսամսեայ թերթ՝ երկու շաբաթը մի անգամ շաբաթ օրերը. յայտնելով թէ «աս օրագիրը առ այժմ տասնը հինգ օրը մէկ անգամ կը տպուի». Նոյն (1840) թուականի նոյեմբերի 1-ից արդէն «աս օրագիրը տասը օրը մէկ անգամ կը տպուի». Երկու համար միայն տասնօրեայ հրատարակուելով նոյեմբերի 20-ից արդէն «շաբաթը անգամ մը» կը տպուէր սրպէս շաբաթաթերթ: Համարեայ հինգ տարի տեւեց շաբաթաթերթ «Արշալոյսի» հրա-

տարակութիւնը: Օրստօրէ յաջողութեան՝ մի այլ փաստ, որ Պալատազարեանի թերթն ունեցաւ սեփական տպարան: (9) Բայց յաջողութեանը հօ միշտ հակառակ է անիրաւ ձախորդութիւնը: 1855 թուականի յունիսի 21-ին որ Ձմիւռնիա մի մեծ հրդէհ պատահեց, անխնայ կերպով կրակը լափեց «Արշալոյս Արարատեան» տպարանը իւր բոլոր պարագաներով: Շատ մեծ ցու պատճառեց «Արշալոյսի» համակրող սրտերին այդ դժբախտութիւնը: Բայց այդ տիրութիւնը երկար չը տեւեց. անյուսահատ խմբագիրը չը վհտակելով այդ մեծ դժբախտութիւնից, զանազան միջոցներով նորից մի համեստ տպարան բանալով, սկսեց իւր պիտանի գործը շարունակել. բայց թէ ոչ շաբաթաթերթ, այլ կիսամսեայ լրագիր՝ իւր ծննդեան կարգով. որպէս մնաց եւ մինչեւ վերջը:

Շատ չ'անցած վախճանուեց բազմամեայ հայ արդիւնաւէտ գործիչ, ծերունի Ղուկաս Պալատազարեան: «Արշալոյս Արարատեանը» չը գաղտըուեց, այլ հանգուցեալի ցանկութեան համեմատ նորից շարունակեց հրատարակուել: Այս շրջանում էլ խմբագրապետի պաշտօնը վարում էր դիտնական Յարութիւն Սուաճեանը, որ իւր պատկառելի նախորդի արժանաւոր յաջորդ կոչուելու բախտն ունեցաւ: Ազնիւ երիտասարդը ջերմ աշխոյժով պաշտպանում էր իւր մեծի գաղափարները, ուղիղ սկզբունքով մընալով մինչեւ վերջը: Մի խօսքով գիտէր իւր տնելիքը որի համար կոչուած էր ինքը, որը պահանջում էր իրանից հայ գրագետ ժողովուրդը: Բայց Տաճիկ Կառավարութեան հրամանով 1886-ին դադարուեց «Արշալոյսի» հրատարակութիւնը, խմբագիր Սուաճեան էլ բանտարկուեց «թելագրութեամբ հակառակորդաց» ասում է հ. Գալէմքեարեան: Անմեղ երիտասարդի արգարութիւնը «քիչ մը յետքը» ճանաչուելով, արձակուեց բաժնից. բայց «Արշալոյս» չը կարողացաւ այլ եւս հրատարակուել, որովհետեւ խմբագիրն հիւանդացաւ եւ շատ չանցած 1887 թ.

մարտի 1-ին կնքեց իւր երկրաւորը:

Կը նշանակէ «Արշալոյս» 1840-ին սկըսուելով, 1886-ին գաղարուեց յարգելի պատճառով, որ եւ տեւեց 47 տարի որ աչքի ընկնող թիւ է մեր մամուլի պատմութեան մէջ:

«Արշալոյս Արարատեան» թերթի գործունէութիւնը իւր երկու խմբագիրների օրով անմոռանալի եւ տնուրանալի պէտք է մնայ Հայ գրականութեան պատմութեան մէջ: «Արշալոյս Արարատեան» իւր ժամանակին այն արաւ, ինչ որ անուամ են կամ սւղում են անել մեր ժամանակից նշանաւոր լրագիրները: Այս թերթի ուղղութիւնը, սկըգրունքն այն էր որ՝ ճանաչել իւր մայրենի լեզուն, եկեղեցին, եւ այլ սրբութիւններ, գաւառներ լոյսը, բարի յառաջագիմութիւնը, սէր, ուսում գրականութիւն, եւ այլն: Հակառակ կանգնել այն վարդապետութեան, որ Հակառակ է ամբողջ ազգին, ինչպիսին է բողոքականութիւնը, Հակառակ կանգնել այն ազգամնաս նորաձեւութեանց, որոնցից բացի վնասը մի օգուտ չի կարելի սպասել: Վերջապէս «Արարատեան Արշալոյսն» էր որ իւր օրում միայն, Հայ լրագրութեան նիւթերի կազմութիւնը չափ ու ձեւի, կարգ ու կանոնի տակ դրեց: Բանասիրական ընդարձակ յօդուածները թերթի ներքեւի կիսում գծի տակ տեղաւորեց, որպէս որ այսօր անուամ են մեր լրագիրները: «Արշալոյսն» էր որ բացի Զմիւռնիայից ու Կ. Պոլսից, թղթակցութիւններ լուրեր էր տպագրում թիւրքիայի զանազան Հայաբնակ քաղաքներից, Հնդկաստանից, Պարսկաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Իտալիայից, Աւստրիայից, Փրանսիայից եւ այլն: Սորանցով «Արշալոյսը» կարողացաւ օտար երկիրների Հայ գաղթականութեանց սիրտն ու հոգին միացնել ազգային կենտրոնների հետ՝ Պատրիարքարանի մանաւանդ Մայր-Աթոռի հետ:

«Արարատեան Արշալոյս»-ին աշխատակցում էին՝ որ Հայ թերթերին կանոնաւոր աշխատակցելն «Արշալոյս»-ով սկսուեց, ժա-

մանակակից յայտնի Հայ գրագէտներից՝ Նուպար Կարապետեան, Խաչատուր Աղազարեան, Գ. Սուլթանեան, Յով. Յովհանեան, Մկրտ. Փափաղեան, Կար. Տէտէեան, Յովհ. Խուճաբեան, Ստեփան Ոսկանեան, Սարգ. Տէր-Գոսպարեան, Ս. Պալապանեան. Յով. Զամուրճեան, Գարեգին Փոփաղեան, Յով. Շահինեան. Յով. Ռշտունի եւ այլք:

ԺԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1.) «Արշալոյս Արարատեանի» 1840, 41, 42, 43, Թուականների Համարներից մի օրինակ միտօին կազմած կա, Ալէքսանդրապոլուս. Փրկէչ եկեղեցւոյ տղայոց գարոցի գրադարանում:

«Արշալոյս Արարատեան» եւ մեր աղբիւրները.—

ա. Որչափ որ ալ «Արշ. Արարատեան» ազգային կրօնական մէկ մասին գրոշին կը զինուէր, եւ անոր դատը կը պաշտպանէր կրօնական խնդրոց մէջ . . . յայսմ մասին բաւական հանդուրժողն էր եւ գիտէր լրագրական քաղաքավարութիւն եւ ընդհանրապէս անկողմնապահութեամբ ժամանակակից լրագրած ծնունդը կը ծանուցանէր ուրախութեամբ եւ մահ ցաւելով . . . «

«Հանգ. Ամսօր.» 1887. էջ 153.

բ. « . . . Խմբագիրը երկար ժամանակ գործը յաջողութեամբ յառաջ տարաւ մինչեւ որ մեռնելով թողեց (լրագիրը) Յարութիւն Սուաճեան Համարձակ եւ տաք բնաւորութեան տէր անձին, որը բաւականին յանգուզն կերսով շոշափում էր ժամանակակից հարցեր մինչեւ որ տէրութիւնը արգելեց (թերթը) . . . «

«Հայոց արդի մասնագր.» (ձեռ.)

գ. «Մեծ օգնութիւն ըրած ունի նաեւ 1841 (՝)-ին Թուրքաստանի մէջ անդրանիկ (՝) օրագիր երեւցած «Արշալոյս Արարատեանը», որուն հրատարակիչ եւ տէրն եղաւ Ղուկաս Պալտազարեան . . . «

«Դաս. ազգ. պատմ.» Ս. Փափաղ. էջ 313.

դ. « . . . Ղուկաս Պալտազարեանը 1840 թ. հիմնեց հանրածանօթ «Արշալոյս Արարատեան» լրագիրը, որ մինչեւ հիմա (1882) էլ շարունակուում է, հիմնադրի որդւոյ (՝)

ձեռքով . . . անաղին օրինակն է մեր ազգի մէջ որ հայրը իւր որդուն (՝) ժառանգութիւն է թողնում իւր ստեղծած լրագիրը եւ որդին (՝) շարունակում է այդ գործը, հաւատարիմ մնալով հօր (՝) ուղղութեան . . . անթիւ ու թանկագին նիւթեր են գետեղում «Արշալոյսի» էջերում, որ ազգիս նորագոյն պատմութեան համար շատ նշանաւոր են . . . »

«Արձագանք» 1882. № 21. Ա. Եր.

Ե. «Արշալոյս Արարատեան» օրագիր քաղաքական, բանասիրական ազգային (՝) եւ առեւտրական: Խմբագրութեամբ Ղ. Գ. Պալտազարեան: Զմիւռնիա. տպ. «Արշալ. Արարատ.» 1841 (՝)—1882 (՝):

«Հայկ. մատենագիտ.» Զարբ. էջ 71.

զ. « . . . Հայ քաղաքական լրագրաց մէջ եթէ ոչ առաջին իր հնութեամբ, այլ արդիւնաւոր բազմամեայ եւ անըզատ շարունակութեամբ բազմապատիկ նիւթական ու բարոյական դժուարութեանց մէջ ալ . . . »

«Պատմ. հայ. դար.» Զարբ. էջ 473.

է. «Դադարեալ «Արշալոյս» լրագրոյ խմբագիրն պ. Սուաճեան, չը կրնալով արդարանալ իւր ծանուցեալ դատին մէջ ՚ի Զմիւռնի, որոշեր է վերաքննութեան դեմել ի մայրաքաղաքս (Վ. Պ.) Կենրոնական վերաքննիչ ատենին . . . »

«Հայրենիք» («Նոր-դար») 1886. № 36)

ը. «Արշալոյս Արարատեան 1839 (՝) Զմիւռնիա Ղ. Պալտազարեան»

«Դասագ. հայ-ազգ. պատմ.» ք. էջ 338.

թ. « . . . Որը յարուցեց սաստիկ յարձակումներ Զմիւռնիայի «Արշալոյս Արարատեան» հանդէսի կողմից . . . եւ որը պատճառ դարձաւ հրատարակչի վերջնական հեռանալուն եւ Հոյաստանի անկման . . . »

«Այժմ. հայերը» Դիւլոր. էջ 78.

[« . . . возбуждившее сильныя нападенія со стороны смирнскаго журнала Арша-լոյս Արարատեան „Аршалуйсь Араратіанъ“ (Заря Арарата) и бывшее причиною окончательнаго удаленія издателя и паденія самаго Гаястана . . . »

«Нынѣш. Армян.» էջ. 78.

ժ. « . . . 1840 թուականից սկսուեց հայ լրագրութեան ընդհանուր զարգացումն եւ այդ տարում Ղուկաս Պալտազարեանի հիմնած Զմիւռնիայի «Արշալոյս Արարատեա-

նը» տեւում է մինչեւ այսօր (1886): Յիշեալ լրագիրը շատ համակրողներ է վաստակում շնորհիւ իւր փուած հարուստ տեղեկութիւններէ, ուր որ հայեր կան մինչեւ անգամ Հնդկաստանից . . . »

«Հայկ. Մատեն.» Ա. Լ. էջ 147.

[« . . . Mit dem Jahre 1840 beginnt für das armenische Zeitungswesen die Zeit der ununterbrochenen Entwicklung und der in diesem Jahre von Lukas Baltasarian in Smyrna gegründete „Arschalis Araratian“ (Die Morgenröte des Ararat) besteht noch heute. Derselbe fand bald unter allen Armeniern viel Anhang und erlangte durch seine zahlreichen Berichte aus allen von Armeniern bewohnten Gegenden, besonders aus Indien, . . . »

«Arm. Bibliot.» A. L. էջ. 147

2.) 1850 թուակ. օգոստ. 13-ից, տպագրուում էր «Արշալոյս Արարատեան» օրագիր Զմիւռնիոյ քաղաքական եւ այլն:

3.) «Արշալ. Արարատեանի» սկզբի տարիներում խմբագրի անուն չեք երեւում տպագրուած:

4.) Նախ մինչեւ 1844 թուականի մայիսի 20-ին, տպագրուում էր «ի տպարանի Ստեփաննոսի Պապոեան . . . »

5.) Բացի թերթի վերնագիրը կազմող «քաղաքական, բանասիրական եւ առեւտրական» բաժիններից, 1862-ին աւելացաւ եւ «Ազգային» բաժանմունք:

6.) Հայր Դաւէմբեարեան ըստ իւր սովորութեան «Արշալոյսի» էլ ազգային-գիտնական յոգուածների ցանկը արտատպել է իւր տեսութեան (պատմութեան) մէջ, «վասն զի այսպիսի կարեւոր տեղեկութիւնք կը կորսուին» ասելով:

7.) Տարեկան ստորագրութեան գինը՝ «120 դուռուչ է կանխիկ-փէշին» վճարողին:

8.) Տես «Արշալոյս Արարատեան» 1840. թիւ 1. էջ 1.

9.) 1844 թ. մայիսի 20-ից սկսեց տպագրուել սեփական տպարանում:

12.

ԱՋԴԱՐԱՐ ԲԻՒՋԱՆԴԵԱՆ ^{1.)}

Կ Ա Ջ Է Փ Ա

ՔՈՂՈՔՈՎԱՆ ԲՆՆՈՒՄՐՈՎԱՆ ԸԹԵՆՏՐՈՎԱՆ ԵՒ ՋՐՈՍՈՎԱՆ.

(Շարաթաթերթ)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1740-1741
Հրատարակուում էր

Կազմեց թատեր Խաչատուր Ռեկանեան
Տպարան Պօղոսի Արապեան Ապուլիսցոյ.
Գիրքը (թերթ) միածալ 2 թուղթ-4 էջ.
Թուղթը եւ տիպը՝ լաւագոյն

Բաժանորդագրինը՝ տարեկան 100 դրշ.

Լեզուներն ոճը } ,, ... չենք ուզեր որ սովորուածին է տէրի պարսպ տեղը գլխացատմին տանք. . .

Ծրագրերը՝

ՔԱՂԱՔԱԿԱՆ—Տեղեկութիւններ, յօդուածներ, լուրեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Գիտնական, բարոյական ու արուեստական յօդուածներ, նորութիւններ. . .

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ—Առեւտրական լուրեր ապրանքների. նաւերի երթեւեկութեան, այլ տեսակ առեւտրական հաշուեցոյցեր. . .

ՋՐՈՍԱԿԱՆ—Ջուարճալիքներ, զանազան մանր-մունր յօդուածներ. . .



ըշալոյս Արարատեան»
իւր հրատարակութեանմիտարինդեռ
չը լրացրած, վաստակեց հայ մամուլի
մէջ մի թշնամի, որ
նշան է իւր խիստ
ազգեցումութեան:

Դեռ տասն եւ մէկ ամիս անցած, այսինքն 1840 թուականի նոյեմբ. 30-ից Կ. Պոլսում սկսուեց «Ազգարար Բիւզանդեան» շաբաթաթերթի հրատարակութիւնը Խաչատուր Ռեկանեանի ձեռքով, որ նոր էր վերադարձել Ամերիկայից:

Ինչպէս յիշեցինք պ. Ռեկանեանի «Ազգարարը» հակառակ էր «Արշալոյս Արարատեան» համաերկրացի օրագրին: Ռեկանեանի գործունէութիւնը ծրագրուած էր աւելի ազատամիտ դժերով. ինչպէս եւ իւր նշանաբանը ցոյց է տալիս՝ «Ազգի մը լուսաւորութիւնը դիտութենէն եւ կրթութենէն յառաջ կուգայ»: Այս տողերի միտքը հօ ամեն մի անհատի յայտնի է որ ազգի լուսաւորութիւնն ու գիտութիւնը կրթութիւնից է կախուած: Այդ մի նորութիւն չէր. նորութիւնն այս էր «Ազգարարի» մէջ. լեզուն անմատչելի, ինչ էր դժուարամարս դարձուածներով ու բառերով. մանաւանդ Վեպեթա-կազէթատէրան ալիսի բառերը մարդու աչքէին ծակում: Ահա թէ ինչ է գրում խմբագիր Ռեկանեան «Ազգարարի» առաջին թերթում— «Սովորութեան նայելով, պէտք էր որ մենք ալ առջի կազէթանիս ըլլալուն՝ յառաջաբանութենով մը սկսէինք, այլ գրքերուն մէջը գտնուած յառաջաբանութիւններուն վիճակը տեսնելով. (որոնք քիչ մարդիկ կը կարգան) ու ալ նոյեմբ. 2-ին յայտարարութիւնը մը հրատարակելով. . . (2), և այլն: Ուրեմն նոյեմբերի սկզբին մի յայտարարութեամբ «Ազգարարը» ծանուց իւր շուտահաս գալուստը եւ ամսու վերջին կամ դեկտեմբերի սկզբից սկսուեց «Ազգարար Բիւզանդեանի» հրատարակութիւնը, շաբաթական մի մի թերթ: Բայց դեռ չորս թերթ էր լոյս տեսել, խմբագիրը վճռեց մի նշանաւոր բարեփոխութիւն անել իւր թերթին որ կարգացողներ կամ լաւ եւսասել հասկացողներ լինին: 5-դ համարից «Ազգարար Բիւզանդեան» սկսեց տպարգրուել տաճկերէն լեզուով, հայ տառերով: Երբ խմբագիրը տեսաւ որ այդպիսով էլ չէ կարողանում գոնէ մի քանի տասնեակ ստորա-

գրուողներ ճարել, յարմար գատեց 43-դ համարից թերթի անունն էլ փոխել «Ճերթաէի Հաւատիս»: Կը նշանակէ Բիւզանդեան «Ազգարարը» տեւեց ընդամենը մէկ տարի. 1840 թուականի նոյեմբերին սկսուելով, եւ 1841-ի վերջերին դադարուելով կամ կերպականափոխուելով:

Թ Ե Ն Ս Թ Ի Ր Ի Ր Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր աղբիւրները «Ազգարար» շափաթաթերթի մասին—

ա. «Ազգարար Բիւզանդեան-շաբաթաթերթ Կ. Պոլիս. 1840-41. խմբագ. Խաչատուր Ոսկանեան. այս թերթն ուզեց մրցել «Արշ. Արարատեանի» հետ, բայց չը կարողացաւ. Սկզբից հրատարակուում էր հայ, յետոյ լեզուն փոխեց տաճկերէնի. բայց անօգուտ . . . »

«Հայոց արդի մատենագր.» (ձեռագիր)

բ. «. . . 1840 . . . սկսաւ Խ. Ոսկանեան՝ որ Ամերիկա ուսած էր իւր կրթութիւն, աշխարհաբար հրատարակել . . . Հայերէն լեզուն փոխեց տաճկերէնի հետեւելով իւր բաժանորդաց մեծագոյն մասին խնդրանաց, որով նաեւ եւրոպացի եւ տաճիկ բաժանորդներ գտաւ . . . »

«Հանդ. Ամսօր.» 1888 էջ 58.

գ. «. . . Նոյն տարին Կ. Պոլսոյ մէջ քաղաքական լրագիր մ'ալ երեւեցաւ զոր կը հրատարակուէր Խ. Ոսկանեանի . . . »

«Պատմ. հայ. դպր.» Զարբ. էջ 475.

դ. «. . . այս պատճառաւ, քանի մը համար հայերէն տպուելուց յետոյ լրագիրը փոխեց լեզուն տաճկերէնի . . . »

«Արձագանք» 1882. № 21. Ա. Եր.

ե. «Ազգարար Բիւզանդեան» 1840 Խ. Ոսկանեան.

«Իստագ. հայ-ազգ. պատմ. էջ 337.

2.) Տես «Ազգ. Բիւզանդ.» 1840 թիւ 1.



Հ Ա Ն Դ Ի Ս Ե Ր Ը Ն

(Ամսաթերթ)

Վ Ե Ն Ե Տ Ի Կ (Իտալիա) 1843—1894.-եւա .
Հրատարակուում է ամսի սկիզբներին.
Ա շ խ ա տ ա ս Ի Ր Ո Լ Թ Ե ա մ ք Մ խ ի Թ ա Ր Ե ա ն
Մ ի ա Ր ա ն Ո Լ Թ Ե ա ն (2).

Ի տ ա յ ա Ր ա ն Ի Ս Ր Ե յ ն Ղ ա զ ա Ր Ո ւ .

Դ Ի Բ ք ք (տետր) մէկ ու կէս տպագրագ.
թերթ. 48 էջ (3) 17X26 հ.-մետր.

Թ ու Ղ թ ք եւ տ ի պ ք՝ մ ա ք ու ր, դ ու ր Ե կ ա ն .
Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն ք՝ տ ա Ր Ե կ 10 Փ ր ա ն կ :
Հ ա ս ց է ն՝ Վ Ե Ն Ե Տ Ի Կ (Իտալիա) Ս . Ղ ա զ ա Ր
Մ խ ի Թ ա Ր Ե ա ն ց Վ ա ն ք, Տ պ ա գ Ր ա կ ա ն տ Ե ս -
չ ու թ ի լ ն :

Կ ա մ—Venise (Italie) S'. Lazare. Direktion de
L' imprimerie Arménienne.

Ծրագիրը—(4)

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք — Ա շ խ ա Ր Հ ա գ Ր Ո Լ Թ Ի Ն
Հ ա յ կ ա կ ա ն եւ ա յ լ ո ց—Բ ն ա գ Ր Ո Լ Թ Ի Ն—Գ ա Ղ -
թ ա կ ա ն Ո Լ Թ Ի Ն—Ժ ո ղ ո վ Ր դ ա կ ա ն տ Ե ս ո Լ Թ Ի Ն
—Ճ ա ն ա պ ա Ր հ ո Ր դ ա կ ա ն ն կ ա տ ո ղ ո Լ Թ Ի Ն ն Ե Ր
—Ն շ մ ա Ր ք եւ ն շ խ ա Ր ք ի Հ ա յ ա ս տ ա ն ա շ -
խ ա Ր հ ի—Պ ա տ մ ո Լ Թ Ի Ն վ ա ճ ա ու ա կ ա ն Ո Լ Թ Ե ա ն
—Տ Ե ղ ա գ Ր Ո Լ Թ Ի Ն Հ ա յ ո ց մ Ե ծ ա ց— . . .

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ք — Ա զ գ ա յ ի ն ի շ շ ա տ ա կ ք . Յ ու շ ի կ ք
Հ ա յ Ր Ե ն Ե ա ց—Հ ա յ ա գ ի տ . Հ ա յ կ ա կ ա ն ա մ ի ս ն Ե -
ր ի մ ա ս ի ն—Ա զ գ ա յ ի ն վ ի պ ա ս ա ն Ո Լ Թ Ի Ն— . .

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք Բ Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ .—Լ Ե Ձ Ո Ի Ա .
Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ք —Հ ա յ պ ա տ մ ա գ ի Ր ք, Բ ու ս ա Ր ա -
ու Ո Լ Թ Ի Ն—Հ ա յ կ ա կ ա ն դ ա Ր Ո Լ Թ Ի Ն—Պ ա տ -
մ ո Լ Թ Ե ա ն ու ա ու մ ն ա ս ի Ր Ո Լ Թ Ի Ն—Ա շ խ ա Ր -
հ ի կ կ ա մ խ օ ս ու ա ծ լ Ե զ ու—Տ Ե ս ո Լ Թ Ի Ն ն ա խ -
ն Ե ա ց թ ա գ ա լ ո Ր Ո Լ Թ Ե ա ն ց վ Ե Ր ա յ—Հ ա յ լ Ե գ -
ու լ ի ու ս ու մ ն—Հ ա յ Ե Ր է ն գ Ր ա Ր ք—Հ ա յ կ ա -
կ ա ն տ ա ղ ա չ ա փ ու թ ի Ն ք—Հ ա յ ձ Ե ու ա գ Ր ա ց
վ Ե Ր ա յ տ Ե ղ Ե կ ու թ ի Ն ք—Հ ա յ ու ա մ կ ա կ ա ն
լ Ե զ ու ն— . . .

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ—Հին դարու նշանաւոր գործիչներ— . . .

ՏԱՂ—ՔԵՐԹՈՒԱՑՔ—ԹԱՏԵՐԳՈՒԹՈՒՆՔ— Ազգային բանաստեղծութիւնք— Ազգային եւ ռամկական երգեր— Հին քնարական բանաստեղծութիւնք— Տաղք— Ողբք— Քերթուածք ազգային երգչաց. . .

ՈՒՅՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՆՏԻՍ—ՆԵՐԲՈՂԵԱՆ ԵՒ ՃԱՌՔ— Ատենախօսութիւնք, Հանդէս Հարցաքննութեանց — Յորելեանք— Տօնախումբք— . . .

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ ԵՒ ԴԱՄԲԱՆԱԿԱՆՔ. Մահացող երեւելի արանց— Դամբանականք.— ԲԱՐՈՅԱԿԱՆ— Ազգային կրթութիւն— Ազգային դաստիարակութիւն— Մեր ներկայն. — . . ՍՈՎՈՐՈՅԹ ԱԶԳԱՅԻՆ— Հանդէս տօնից — Հանդէս հարսանեաց— Հանդէս օծման եկեղեցեաց— . . .

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ— Արձանագրութիւնք, ձեռագիրք, գրամագիտութիւն— Յիշատակարանք. ՎէՊՔ ԵՒ ԱՌԱԾՔ— Առածք— Հայախօս առածք— Մանրավէպք— Այլ եւ այլք:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ— Յայտարարութիւնք մասնաւոր: Նոր տպագրեալ գրքեր— . . .

ԲՈՎԱՆՈՒԹՅԱՆ 1893. Թիւ 4. (ապր.) — Կենսագիր եւ նկարագիր Եզնկայ վարդապետի կողբացուոյ (շարունակելի.)— Հ. Վարդան Սամուելեան:

— Հայկական բուսաբանութիւն (շարունակելի) (Հ. Ղեւոնդ Այիշան.)

— Հայ լեզուի ուսումն լԵՐՈՍՅԱՆ (շար.)

— Հայկական վերտառութիւն մի. ժբ. դարու. . .

— Հայք եւ դիւցաբանութիւն Հայոց (շար.)

— Զատիկ— Ծաղիկ եւ թռչնիկ (Բանաս.) Էմմ. Էֆ. Նսայեան.

— Իշխանաց կղզիք դ. (շարուն.)

— Հոլմէս Գիսաւորն

Գէլն ու չոպանը (ոտանաւոր) Սայեաթ-Նոպա.

— Լեւոն ժգ. սրբազ. Քահանայապետ եւ իւր եպիսկոպոսութեան լիսնամեայ յորելեանը (առանձին)

— Ցանկ.

Նայելի վերայ { Ծանուցումն.
Նոր հրատարակութիւնք.
Կրկին տպագրեալք.
Ընդ մամլով.



Երկայումս հրատարակուող Հայ պարբերական մամուլի մէջ ամենից երկարակեացն է « Բազմավէպը »: Կէս դարն անցել է արդէն. անցեալ 1892

թուականին էր, որ « Բազմավէպը » լրացրեց 50-ամեայ իւր փառաւոր տարելիցը:

Հայ գրականութեան պատմական, մատենագրական, կենսագրական, հնագիտական եւ աշխարհագրական ճիւղերում մեզ բազմաթիւ դրուածներ են տուել Վենետիկի Միթթարեան հայրերը: Այդպիսի ազգաշահ գործերով այսօր պարծենալու տեղիք ունի Վենետիկի միաբանութիւնը: Մարդ կատարեալ հոգեպէս ուրախանում է, երջանիկ է զգում իրան, երբ ձեռքն է առնում վերապատուելի հայրերի աշխատասիրութիւններից. մաքուր, շքեղ, հոյակապ որ անգին գանձեր են կարելի է ասել մեր գրականութեան մէջ, եւ հայ բանասէրի գրագարանի զարգ:

Ոչ թէ ուրանալ, այլ մեծ դժգոհութեամբ կարելի է խօսել Վենետիկի միաբանութեան գործերը: Յիսունից աւելի տարիների գործ « Բազմավէպ » հանդիսարանի էջերը լի են հայ գրողի համար բազմաթիւ հետաքրքիր տեղեկութիւններով: Շատ ափսոս որ պատուելի հայրերն այսօր կրօնական տեսակետից մեզանից ջոկնուած են եւ կապուած օտար դաւանութեան: Միթթար Աբրահամ հօր ծրար

գրներն այսօր բոլորովին խախտուած, եղծուած են: Ի՞նչն էր ստիպում մեր ազգակից հայրերին արգեօք թողնել Հայկական-Ղազարյան Առաքելական Սուրբ Եկեղեցին. թողնել, եւ կաթողիկոսեան պոչիցը բռնել: Ի՞նչն էր ստիպում Աստուածաշէն ս. Էջմիածինը թողնել, բոլորից սիրուած Մայր-Սթաբ թողնել, ու Հռոմի մետաղեայ արձանները պաշտել: Վերջապէս այսօրուայ լուսաւորչական գահի արժանաւոր եւ պաշտելի ժառանգին մոռանալ, Նորա սուրբ աջը համբուրելուց խոստովել ու երկրպագել օտար պապերին ու համբուրել նորա ոտները: Անշուշտ մի օր կը մտաբերեն իւրեանց նախնեաց սուրբ եկեղեցին ու դաւանութիւնը, եւ հետզհետէ իւրեանց մայրենի եկեղեցու գիրկը կը դառնան մեր հարազատ եղբայրները, ինչպէս արել են այդ, մի քանի ողջամիտ հայրեր: Բայց գաւանաքննութիւն, կամ այլ ինչ մեր նպատակից գուրս լինելով, մեր խօսքերը չենք կարող ընդարձակել: Այս չափը միայն ասելով որ Վենետիկի հալ միաբանութիւնը իւր հրատարակած գրքերի գները թանկ է նշանակում՝ որ մատչելի չէ մեր գրողներին, դառնանք «Բազմավէպը» . . .

Վենետիկում Միսիթարեան հարք քսան եւ երեք տարի էր որ դադարել էին պարբերական մամուլի գործունէութիւնից: «Բազմավէպի» պէս մի հանդիսի պահանջ զգալով, 1843 թուականի մայիսի 1-ից հրատարակել սկսեցին «Բազմավէպը» լրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելաց: Սկզբում «Բազմավէպը» կիսամսեայ հրատարակութիւն էր իւրաքանչիւր ամսի 1-ին եւ 15-ին հրատարակուելով. որպէս տեւեց տասն եւ հինգ տարի՝ այսինքն մինչեւ 1858 թուականը: Յետոյ տասն եւ հինգ տարի էլ, մինչեւ 1873 թ. հրատարակուում էր որպէս ամսաթերթ: 1873-ից «Բազմավէպը» սկսում է «նոր շար»: Նոր շրջան մտած, սկսում է հրատարակուել երեք ամիսը մի անգամ, որպէս եռամսեայ հրատարակութիւն որ տեւեց մինչեւ 1889: Տեսնելով որ տպագրութեան նիւթերն առատ են եւ ընթերցողները եռամսեայ հանդիսարանից շատ գոհ չեն նորա ուշ ուշ հրատարակուելու պատճառաւ, խմբագրական տեսչութիւնը, որոշեց յառաջիկայ 1890 թուականից «Բազմավէպը» մտցնել Հին դրութեան մէջ, այսինքն դարձեալ ամիսը մի անգամ, որպէս ամսագիր. եւ այդպէս բազմավէպը մնացել է մինչեւ այժմ: Ինչպէս լիջեցինք «Բազմավէպի» խորագիրը կազմում էր նախ «Օրագիր, բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելաց», յետոյ «Օրագիր, բարոյական, բանասիրական, տնտեսական, եւ բնական գիտելաց» 60-ական թուականներին սկսուեց «Գրական պատմական եւ լեզուաբանական հանգէս» իսկ «նոր շարն» սկսուելուց յետոյ գրուում է միայն «Բազմավէպ հանդիսարան» որպէս եւ շարունակուում է մինչեւ այսօր:

Վենետիկի այս ամսագրի անունը կնքել է «Բազմավէպ», հանգուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոս Ալուազեան, երբ զեռ Վենետիկի միաբան վարդապետ էր:

«Բազմավէպը» գործարար անունը չէ կրել երբեք, բայց պատահական մինչեւ այժմ էլ տալիս է զանազան նկարներ, պատկերներ, իւր յօդուածներին պատշաճաւոր: Գորա հակառակ մեզանում գործարար հանգէսներ կան, որ երբեմն առանց մի պատկերի են լոյս տեսնում:

«Բազմավէպի» ուղղագրութեան կամ սրբագրութեան վերայ առանձին խնամք է տարուում, այնպէս որ մի տարուայ մէջ 12 տետրակներում, 12 սխալ չի պատահում:

Ս. Ղազարու միաբանութեան նպատակն էր, նախնական թուականներին տպուող «Տարեգրութեան» եւ «Գիտակ Բիւզանդեանի» համեմատ, «Բազմավէպի» էլ լեզուն մատչելի դարձնել աւելի ռամիկ ու «տգէտ»

(5) դասակարգին. դորա համար էլ մի ընդհանուր ծրագրի տակ, «Եւրոպական յառաջաբանութիւնը ուսմունքն ու արուեստներ գիւտերն ու աշխարհագրական տեղեկու-

Թիւնները բնագիտութիւնները, դաստիարակութիւն, տնտեսագիտութիւն եւ երկրագործութիւն» (6) Կը մշակուէր խնամքով իւրաքանչիւրի վերայ բուականին բացազրութիւններ տալով: Իսկ «Բազմավէպ» Նոր-Շար» մանելով, Թողնելով «տգէտ» ու. ուսմիկ ժողովուրդը, «կը փափագի նոր ժամանակի լուսամիտ ուսումնաթերթից ոճոյն ալ հետեւիլ իւրք իւրք եւ իբրեւ լաւագոյն թանկարան կամ հանդիսարան մ'ընել հին եւ նոր գարեւոր գիտելեաց» (7) Այնուհետեւ «Բազմավէպ» կը սկսէ գիտնական ուսումնական եւ ալ յօդուածներ տպագրել եւրոպացի հեղինակութիւններից երբեմն թարգմանութիւններ, աւելի շատ ազգային գրականութեան վերաբերեալ, յաճախ գրաբար լեզուով:

«Բազմավէպն» առանձնացած կեանք է վարում ու հնագիտական աշխարհից շատ սակաւ է դուրս նայում, դէպի ժամանակակից հասարակական շոշափելի խնդիրները հարցերը եւ այլն: Աւելորդ չէր լինի եթէ «Բազմավէպի» յարգոյ խմբագրութիւնը մի սուանձին բաժանմունք յատկացնէր, մեր ժամանակին լոյս տեսնող հայկական դպրութեան վերաբերեալ գրուածների մասին մատենախօսական յօդուածներ գրելու: Այդ բանը նախատեսել է Վիէնայի «Հանդէս Ամսօրեան»:

«Բազմավէպի» աշխատակցել են եւ աշխատակցում են՝ Հ. Հ. Գաբր. վրդ. Այուլագովսքի, Օքս. Գուրգէնեան, Բ. Եւայեան, Ստեփ. Եազրճեան, Ման. Սոֆալեան, Ղեւոնդ Մ. Ալիշան, Եդ. Հիւրմիզեան, Համ. Թերճիմանեան, Պետ. Մինասեան, Միք. Չամչեան, Վարդան Սոմունճեան, Բ. Սարգիսեան. Խ. Սինանեան. (աշխարհականներից) Թ. Թէրզեան. Մ. Ազարեան. Կ. Ֆլամարեան, Էմմ. Եսայեան, Հուսի. Երիթաւ եւ այլք:

Անկեղծ համակրութեամբ յարաեւուութիւն եւ յաջողութիւն ենք մաղթում «Բազմավէպ» հանդիսարանին:

ԹՆՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մեր աղբիւրները «Բազմավէպի» մասին.—

ա. . . . Ի սկզբան երբ իւր (Բազմավէպ) նըմաններն շատ քիչ կային ազգին մէջ, գիտութիւններն պարզ եւ հասարակ ոճով ծանօթացուց ժողովրդեան ազգային յօդուածներով որոնցմէ թէեւ ոմանք այսօր նշանակութիւն չունին: Ազգին ինքնաճանաչութեան արթնանալուն ձեռնառու եղաւ. տուաւ նաեւ գիտնոց ազգային հնութեանց եւ գրականութեան վերայ բազմաթիւ յօդուածներ . . .

«Հանդ. Ամսօր.» 1888. էջ 62.

բ. « . . . Բազմավէպն իւր առանձին դրօշ մը կը ջանայ քիչ-շատ պահել, Նթէ երբէք Միթարեան միարանութիւնս օգտամտոյց եղած է հայ գրականութեան, որ գարեբէ ի վեր նիհրեալ եւ աղօտացեալ էր . . . »

«Բազմավէպ» 1883. պր. Ա. էջ 3.

գ. « . . . Վենետիկում Ս. Ղազարի Միթարեանները 1843 թուականից սկսած հրատարակում են երկամսեայ (՝) հանդէս «Բազմավէպ» վերնագրով, զանազան բովանդակութեամբ, ինչպէս այդ ցոյց է տալիս նորա վերնագիրը. «Բազմավէպ», յօդուածներ իւր իւր կազմում են բնական եւ տնտեսական գիտութիւնների. գրականութիւն ժողովրդական հնութիւնների. կենսագրութիւն նշանաւոր հայերի եւ այլն: Այդ բոլորը նկարագրուած են գեղեցիկ ոճով եւ զարդարուած պատկերներով: «Բազմավէպը» զբաղուած է եւ քաղաքականութեամբ. բայց նորան համարում է իւր ծրագրից դուրս եւ ընդունում է միայն այնպիսի նիւթեր, որոնք վերաբերում են հասարակական շահերին . . . »

«Այժմեան հայեր» Դիւլ. էջ 81.

[. . . Въ Венеціи Мехитаристы св. Лазаря издають съ 1843 года двухмѣсячное (?) обозрѣвіе, подъ названіемъ *Բազմավէպ* (՝) Пазмавебъ (Полиграфъ), журналъ разнообразнаго содержанія, какъ это означаетъ и самое названіе: предметъ статей его составляютъ науки естественныя и экономическія, литература, народныя древности, біографія знаменитыхъ Армянъ и т. п.; все это

изложено изящнымъ слогаомъ и украсено иллюстраціями. Иногда „Пазмавебъ“ занимается и политическою, но считаетъ ее внѣ своей программы и допускаетъ только то, что прямо относится къ народнымъ интересамъ . . . “]

„Нынѣш. Армян.“ Дюл. էջ 81.

դ. „Բազմավէպ օրագիր բնական բանասիրական եւ ազգային (‘) գիտելեաց. Աշխատասիրութեամբ Մխիթարեան միարանից. սկզբնաւորեալ է 1843. Վենետիկ է տպարանի սրբ. Ղազարու . . . “

„Մատեն. Հայկակ.“ Զարբ. էջ 80.

ե. 1845 (‘) Թուականից Վենետիկի Մխիթարեանք հրատարակում են „Բազմավէպը“ որ մինչեւ այժմս շարունակուում է . . . “

„Հայկ. Մատեն.“ Ա. Լայտ. էջ 148.

[Im Jahre 1845 (?) gründeten die Venediger Mechitaristen die Monatsschrift „Basmawep“ (der Polygraph), welche ebenfalls noch bis heute besteht . . .]

„Arm. Bibl.“ A. L. էջ 148.

զ. „ . . . Վենետիկոյ Մխիթարեանք 1843-ին բանասիրական ազգային եւ ուսումնական հանդիսի մը հրատարակութեան ձեռք զարկին. Այդ Թերթը կը կոչուի ‘Բազմավէպ’. Երեսուն տարի անընդհատ՝ եւ ազգին կողմանէ համակրական գովութեամբ ամսէ ամիս երկերկու ութածալ պատկերազարդ Թերթեր հրատարակելով, 1874 էն երեքամսեայ հանդիսի փոխուած է. եւ ինչուան հիմա (1878) նոյնպէս կը շարունակուի . . . “

„Պատմ. Հայ. դարութ.“ էջ 474.

է. „Երկար լուծիւնից յիտոյ վերջապէս 1843 Թուին սկսեցին Վենետիկի Մխիթարեանք ամենքին քաջ ծանօթ „Բազմավէպը“ որ եւ շարունակուում է մինչեւ այսօր . . . “

„Աքձագանք“ 1882. № 21. Ա. Եր.

ը „ . . . Թուին „Բազմավէպ“ անունով. Խրմբագրութիւնը Միարանութեան ձեռքին է. երկար ժամանակից է վէր միայն մի քանի փոփոխութիւններ է ենթարկուել . . . Այդ Թերթի (‘) վերայ միարանութիւնը բաւականին ուշք է դարձրել ձգտելով ժամանակի պահանջներէ համաձայն . . . Նորա նպատակն էր ծառայել Ժողովրդի տրգէտ դասին . . . “

„Հայոց արդի մատեն.“ Փ.Տ.Մ. (ձեռ.)

Թ. „Բազմավէպ 1843. Վեն. Մխիթ. Հարբ.“

„Իսա հայ-ազգ. պատմ. Մ. Գ. էջ 338.

Ժ. „Բազմավէպ, կիսամսեայ (‘) օրագիր ուսումն. բանասիր. քաղաքակ. եւ տնտես. գիտելեաց.“

„Յուցակ գր. Մխիթ. տպ.“ Վենետ 1891.

2.) Առհասարակ գրուում է „Միարանութեան“ ձեռքով: Զի յայտնուում Թէ զանազան ժամանակներում իսկապէս խմբագրութեան պաշտօնն ով է վարել:

3.) Նախ երկսիւնեան էին „Բազմավէպի“ էջերը:

4.) „Բազմավէպի“ տեսչութիւնն 1893 Թուին առանձին տետրակով տպագրեց իւր հանդիսարանի անցեալ 50 տարուայ (1843-1893) նիւթերի բովանդակութիւնը. ըստ դասակարգի եւ ցանկի, որ եւ շատ կը հարկաւորի մեր բանասիրաց:

5.) Տես „Բազմավէպ“ 1845. յառաջարան:

6.) Տես „Հանդէս Ամսօրեայ“ 1888. էջ 58.

7.) Տես „Բազմավէպ“ 1875. յառաջ.

14.

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Է Ր ^{1.)}

Օ Ր Ա Պ Ի Ր

ՔՈՂՈՂԱԳՐՈՆ ԲՆԵՍԻՐՈՎՈՆ ԵՒ ԱՐԻՏՐՈՎՈՆ.

(Կիսամսեայ)

Զմիւռնիա (Տաճկաստ.) 1843-1846.

Հրատարակուում էր շաբաթ օրերը. Խմբագիր՝ Խ. Յ. Մելիքսելումեանց 2.) Ի տպարանի Վրադաճոււն. ընկերութ.՝ Գիրքը՝ (Թերթ) միածալ 4 էջ-3 սիւնեան. 30 X 42 հ.-մետր:

Թուղթը եւ տիպը բաւարար.

Բաժանորդագիրն էր

Լեզուէն, ոճը՝ { „Ազգային հնուժիւն մը, եկեղեցւոյ անկան քարի Ուղղագրութ. } Զպպէլ թագուհի է ի . . . “

Ծրագիրը՝ (3.)

ՔԱՂԱՔԱԿԱՆ. — Լուրեր, տեղեկութիւններ, մանր յօդուածներ եւ այլն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Աշխարհագրական տեղե-

կութիւններ, մանրազէպ, ուսումնական այլ եւ այլ յօդուածներ, ազգային լուրեր եւ այլն:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ.— Առեւտրական զանազան լուրեր, ծանօթուիւններ . . .



միւլնիայում „Արշալոյս Արարատեան“ իւր յաջողութեամբ ու սիրտլիւ ընդունելութեամբ, ստեղծեց նոր լրագիրներ: 1843 թուականին մի խումբ ուսումնասէր անձինք քաղաքում հիմնեցին „Արագածունեաց ընկերութիւնը“, որի նպատակն էր գրականութեան հայասպարէզն ընդարձակել, գրքեր ու պարբերաթերթեր հրատարակելով:

Նոյն թուականի մայիսի 28-ից յիշեալ ընկերութեան անօրէնութեամբ սկսեց հրատարակուել „Հայրենասէր“ անունով մի շաբաթաթերթ, խմբագրութեամբ Խ. Յ. Մեղիքսելումեանցի:

Հազիւ կէս տարին լրացած, „Հայրենասէր“ շաբաթաթերթը դադարուեց զանազան թշնամանքների պատճառով (4): Հետեւեալ 1844 թ. ապրիլի 10-ից սկսեց շարունակուել: Զմիւլնիայի այն մեծ հրգէհը որ տեղի ունեցաւ 1855 թ. յունիսի 21-ին որ եւ յափեց „Հայրենասէրի“ սիրելի հայրենակից Արարատեան „Արշալոյսի“ տպարանը, անվնաս չթողեց եւ Մեղիքսելումեանցի շաբաթաթերթին: Բոլորովին մոխիր դարձաւ հայրենասէր „Հայրենասէր“ լրագրի տպարանը, խմբագրատունը եւ այլն: Բայց „Հայրենասէր“ օրինակ առնելով իւր մեծ ուսուցչից՝ „Արշալոյսից“, կարճ ժամանակում ամեն մի յարմարութիւն պատրաստելով նոյն

իսկ մի ամիս անցած սկսեց նորից հրատարակուել. յուլիսի 27-ին ծանուցանելով որ „Հայրենասէրը առ այժմ 15 օրն անգամ մը պիտի հրատարակուի“: Այսպէս կիսամսեայ թերթ մնաց «Արագածունեաց» թերթը մինչեւ իւր վախճանը, այսինքն գարձեալ մի տարի: „Արշալոյսի, չափ օժանդակողներ չունեցաւ „Հայրենասէր“: Նիւթական միջոցները թոյլ չը տուին նորան շարունակուելու եւ ստիպեցին դադարել 1846 թուականի մայիսի 10-ին:

„Հայրենասէր“ ինչպէս որ գիրքով էր նման „Արշալոյսին“ այնպէս էլ համամիտ էր եւ պաշտպան նորա գաւառած սկզբունքներին: Միայն չէզոք գիրք էր բռնում կառավարչական եւ թունդ կրօնական վէճերից: (5)

Թ Ը Ն Յ Ք Ա Ռ Թ Ի Ն Ն Ե Ր .

1. Աղբիւրներ «Հայրենասէրի».
 ա „... Այս ընկերութեան (Արագածունեաց) երախայրիքն հղաւ „Հայրենասէր“ աշխարհաբար շաբաթաթերթն... „Հայրենասէրի“ իւր ինքնուրոյն եւ մասնական արդիւնքը կրնանք թերեւս նկատել սա պարագայն՝ որ իբրեւ գործիք „Արագածունեաց ընկերութեան“. նոյն, ընկերութեան անդամոցն ուսումնական աշխատութեանց զբօզու հղած է...
 „Հանգ. Ամսօր.“ 1888 էջ 107.
 բ „... Արշալոյսոյ“ օրինակէն խրախուսուելով եւ օրուան վրայ ուսմանց սէրն ու եռանդը արծարծելով ՚ի Զմիւլնիա, ուրիշ լրագրի մ' ալ 1844 (") հրատարակութեան ծնունդ տուաւ եւ էր „Հայրենասէր“ կոչուածը որուն նպատակն բանասիրական էր: Բայց սակաւատեւ եղաւ, շարունակութեան համար քաջալերութեան տարբը պակսելով...
 „Պատմ. հայ. գալր.“ էջ 474.
 գ „... Հայրենասէր-հանդէս հիմնուած Զմիւլնիայում պ. Սելումեանցի (') տեւած երկու (') տարի...
 „Այժմ. հայերը“ էջ 82.
 ի „... (Հ) հայրենասէր. Гайренасеръ. „Армянскій (!) патриотъ—журналъ, основанный въ Смуриѣ-же г-мъ Селуміан-

пемъ, (?) существовавшій два (?) года..“

„Нынѣш. Армян.“ էջ 82.

բ. „Հայրենասէր“ շաբաթաթերթ Ձմեռանիս. . . . Հրատարակութեան նպաստեցին (‘) „Արագածունեաց ընկերութիւնը“: Նոքա (‘) բացին նոր տպարան իրենց ընկերութեան համար, նպատակ դնելով ժողովրդի մէջ գրքեր տարածելու. . . .“

„Հայոց արդի մատեն.“ (ձեռ.)

ե. „Հայրենասէր 1853 (‘‘) Ձմեռանիս Սէլվիեան (‘‘)“

„Դաս. հայ-ազգ. Պատմ.“ էջ 339.

զ. „ . . Յետագայ 1844 (‘) Թուին, դարձեալ Ձմեռանիսի մէջ Սէլվիեանցի (‘) խմբագրութեամբ ծնեց մի բանասիրական թերթ „Հայրենասէր“ անունով, բայց սակաւթիւ ստորագրողներ ունենալով դադարեց երկու տարուանից յետոյ. . .“

„Արձագանք“ 1882. № 21. Ա. եր.

է. „ . . . „Հայրենասէր“ . . . գեղեցիկ տպագրութիւն եւ լուրջ խորհրդածութիւններ ժամանակին համեմատ, մինչեւ միեւնոյն միջոցին „Բազմավէպ“ էն եւ „Արշալոյս“ էն գատ այլ թերթ չ'կար ազգին մէջ. . .“

„Յիշատակ“ էջ մերցի ձերմակեանի:

2.) Իաչատուր Մելիքսեղումեանց կովկասցի մի վառվառն երիտասարդ էր, որ մի հարկաւոր նպատակով գտնուում էր Քիւրքիայում:

3.) Հ. Գալէմբեար ըստ իւր սովորութեան իւր տեսութեան մէջ յառաջ է բերել եւ „Հայրենասէրի“ ուսումնական—գիտնական յօդուածների ցանկը:

4.) Իգմիրցի պ. ձերմակեանի ձեռագիր յիշատակարանում կարգում ենք որ „Հայրենասէր“ դադարուեց կառավարութեան հրամանով:

5.) 1843 Թուականի վերջերին „Հայրենասէրի“ առաջին տարին Խ. Մելիքսեղումեանց մի կրօնական թէ ազգային թերթեւ վէճի համար մի քիչ ընդհարում ունեցաւ „Արշալոյս Արարատեան“ օրագրի խմբագրապետ Ղուկաս Պալտազարեանի հետ: Բայց Մատթէոս սրբազան՝ (սպա Կաթողիկոս Սմեռայն Հայոց) իւր ազգու խօսքերով հաշտեցրեց երկու խմբագրերներին, որոնք եւ հաշտ ու սիրով մնացին այնուհետ:

15.

ԱՆԵՏԱՐԵՐ ^{1.)}

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔՆՂՂԱԳՐՈՒՆ. 2.)

Կոստանդնուպոլ. (Տաճկ.) 1845-(3)1894.-եւ

Հրատարակուում էր՝ շաբաթ օրերը. Խմբագիր՝ ձ. Ք. Կրին (4)

Փոխ-խմբագիր՝ Հ. Ս. Պարնըմ.

Ի տպարանի Ա. Յակոբ Պոյաճեան.

Դիրքը՝ (5) (տետր.) 4 թուղթ 8 էջ 3-սիւնեան 29X40. Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ բաւարար.

Բաժանորդագրինը՝ տարեկան 2 մէճիս.

Լեզուն, ոճը՝ } „Հուսկուրմն կ'առնու մտաց անընկճի եւ անյողոյղ ու Ուղղագրութ. } նակութիւն մը ձեւը եւ. . .“

Ծրագիրը՝

ԿՐՕՆԱԿԱՆ.—ձառեր, քարոզներ, բարոյական յօդուածներ, խրատներ եւ այլն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.—Թարգմանական, յօդուածներ, ուսումնական նորութիւններ, լուրեր եւ այլն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ.—Այլ եւ այլք, փշրանք, նամակներ, ընտանեկան յօդուածներ. . .

ՔԱՂԱՔԱԿԱՆ.—Հանդէս Գաղաքական Արտաքին լուրեր, վերջին լուրեր. . .

Արժէք գրամոց

Բովանդակութիւն 1886. Թիւ 31.

Դիպուած մը. Մրւ. Մուտքէ պատմուած.

Ինչո՞ւ համար կորսուեցան.

Հիւանդանոց զանց առնուած որոշմ.

Անգիտակ ազդեցութիւն.

Յառաջադիմութիւն 'ի Փիճի.

ձաքոնեան կեանք 'ի նաւակս.

Ամառնային վտանգներ.

Աբրիկեան լերանց Վեհապետ.

Ո՛հ վրացիք, Այլ եւ այլք, Փշրանք, նա-

մականեր.
 Հանդէս քաղաքական.
 Արժէք դրամոց.



տեմարան պիտանի գիտելեաց» Իզմիրում հրատարակուող բողոքական քարոզչաների թերթին օժանդակ եւ օգնող Հանդիսացաւ «Աւետարներ» անունով կիսամսեայ լրագիրը, 1845 թուականի սկզբից հրատարակուելով Կոստանդնուպոլսում նոյնպէս Ամերիկեան Միսիոնարների ձեռքով: Ծայրայեղ կրօնական էր սկզբում «Աւետարները»: չունէր ոչ «Ուսումնական» եւ ոչ էլ «Քաղաքական» բաժիններ: Որպէս վճարաւոր թերթի ճակատին դրուում էր Ղուկաս Աւետարանչից այս խօսքերը—

«Ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կուտամ»:

Եթէ Ամերիկացուց եւ Անգլիացուց ուկիները ջրի պէս չը վազէին «Աւետարների» խմբագրատուն, գուցէ նա վաղուցուանից դադարուած կը լինէր, բայց նիւթական կողմից խիստ ապահով, ցաւօք սրտի գեռ մինչեւ այժմ պահպանել է իւր գոյութիւնը:

Կեղծաւոր փարիսեցիները՝ «Աւետարների» տեսչութեան անդամները ոչ մի միջոց չէին խնայում իւրեանց թերթի տարածուելուն եւ գեղեցկացնելուն: Որպէս զի աւելի լաւ կարողանան հասնել իւրեանց «սուրբ» նրպատակին, «Աւետարների» խմբագրութիւնը յարմար է գտնում 1872 թուականի փետրուար ամսից հրատարակել գործաւ մի աւետարներ «Անկելիֆօրոս» անունով յու-

նարէն տառերով, տաճկերէն լեզուով. ինչպէս եւ 1873 թ. մի Աւետարներ տղայոց համար (7.) հայերէն տառերով եւ հայերէն լեզուով: «Աւետարներ» հրատարակուելու փորձեր եղան եւ հայ տառերով տաճկերէն լեզուով եւ այլն: Այդպիսով «Աւետարներ» լրագիրները մի շարք ամեն կերպ շուսյութեամբ, աժան, շատ անգամ էլ ձրի տարածուեց հայ ժողովրդի մէջ: Գուցէ թէ այդ անպատկաններին յաջողուէր փոքր Ասիայում մի գործ՝ ի կատար հանել, եթէ նոյն երկրում ազգի սրբութիւններին ու Եկեղեցուն պաշտպան կոնգրանձ չը լինէին հայ լուսաւորչական թերթերը՝ «Արշալոյսը», «Հայրենասէրը» եւ յետոյ «Հայաստանը»:

«Աւետարները» թէեւ կրում է իւր ճակատին բացի կրօնականից եւ «ուսումնական-ընտանեկան» բառերը, բայց շատ ցանցաւ տեղեկութիւններ կամ նիւթեր է տալիս դորանց համեմատ: Բայց թէ կրօնականը, մանաւանդ նախնական թուականներում, շատ լպիշ ու սանձարձակ էր: «Աւետարների» էջերը լի են անտակտ ու անշնորհք յօդուածներով: Քարոզները, խորհուրդները, իւրեանց տմարդի եւ անխելահաս կազմութեամբ, այսօր ծաղրի ու կատակի տեղ կարող են հարկաւորել: «Աւետարների» մի խորհուրդի հետ մեր ընթերցողներին ծանօթացնելու համար յառաջ ենք բերում հետեւեալը՝

ԹՅՆՄԻՆ ԻՆՉՊԵՍ ԶԻՆՈՐԸՓ ԸՆՆՈՒՄ Է.

«Կ'ըսուի թէ մարդ մը եթէ իր մարմնոյն վըրայ մեղը քսելու ըլլայ, մեղուն զանիկայ չ'խայթեր: Ուստի փեթակի հետ դործ ունենալով, կամ վայրի մեղուններու բոյն մը աւրել ուզելով, աս փոքր կենդանիներէն վտանգին մէջ եղողներն եթէ իրանց ձեռքին եւ երեսներուն մեղը քսեն, յիշեալ վրտանքէն եւ չարիքներէն պահպանուելու համար պրծած են: Մենք ալ եթէ բռնաւոր եւ չարակամ անձանց անարդանքէն, հալածանքէն եւ չարիքներէն պահպանուելու համար ամենէն աղէկ միջոցը հոգի-

նիս մեղրի մէջ թաթխելն է. այսինքն ամեն կերպով հեղութեամբ, քաղցրութեամբ, երկայնամուտութեամբ եւ համբերութեամբ վարուելն է. ասանկով ամենադառն թշնամոյն մեզ վնասելու համար ըրած բոլոր ջանքերն ի դերեւ պիտի ելնեն» (7).

Ահա այսպիսի խորհուրդներով է առաջնորդում «Աւետարեբը» իւր ընթերցողներին:

«Աւետարեբին կատաղի թշնամի էին ժամանակակից բոլոր հայ լրագիրները, մանաւանդ Չամուրճեանի «Հայաստանը», հայր Դիմաքսեանի «Լոյսը»:

Պէտք է ասել որ «Աւետարեբը» իւր աժանութեամբ վերջին տարիներս բաւականին տարածուել է հասարակութեան մէջ: Նորա ստացողների թիւը այսօր 2000-ից անցնում է: Առողջապահական եւ առեւտրական մասերն էլ աւելացան վերջին ժամանակներում «Աւետարեբի» 40-ամեակն անցնելուց յետոյ:

«Աւետարեբը» նախ տպագրուում էր Չըրչըլի տպարանում, յետոյ Արամեան տպարան. 1873 թ. յունիսի 15-ից (թիւ 3) ըսկսեց տպագրուել Յ. Պոյաճեան տպ. 1874 թ. յունուարի 7-ից դարձեալ Արամեան, յետոյ դարձեալ Պոյաճեան, որ եւ շարունակուում է մինչեւ այժմ:

«Աւետարեբի» էջերում վերջին տարիներում երբեմն երբեմն երեւում են պատկերներ ու նկարներ: Նախ մինչեւ 1861 թրուականը հրատարակուում էր որպէս կիսամսեայ. յետոյ ամսաթերթ երկու թուղթ, որ 3 տարի յետոյ քառածալ (8 էջ) դարձաւ: 1870 (8) թուականից սկսեց հրատարակուել շաբաթաթերթ, որ եւ տեւում է մինչեւ այսօր:

«Բազմավէպ»-ից յետոյ «Աւետարեբն» է այժմեան հայ երկարակեաց լրագիրը որ յառաջիկայ տարում կը լրացնէ իւր 50-ամեակը:

ԹՆՆՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1.) «Աւետարեբ» շաբաթաթերթի երեք թ. համարները (1872—73—74) միասին կազմուած մի օրինակ կան Ալէքսանդրապոլում «Շիրակ» գրապաճառանոցում:

«Աւետարեբը» եւ մեր աղբիւրները:

ա. «Աւետարեբի առաջին թիւը լոյս տեսաւ 1855(“”) յուն... Աւետարեբի ցայսօր վարած կեանքը նկատելով, պէտք է ըսել որ այս թերթը թէեւ հայերէն լեզուաւ է բայց ազգային չէ, Իրեն համար ազգին ոչ անցեալը եւ ոչ ներկայն հետաքրքրական է...»

«Հանդ. Ամսօր.» 1889. էջ.

բ. «... Կ. Պոլսում նորից բողոքականները դուրս եկան իրենց ամենօրեայ (“”) «Աւետարեբ» թերթով, որպէս զի լաւ կարողանան տարածել բողոքականութիւնը...»

«Հայկ. Մատեն. Ա. Լ էջ 148.

[... in Konstantinopel wieder die protestantischen Missionäre mit einem Tageblatte, dem „Awetaber“ oder Glücksboten auftraten, um unter der armenischen...»

„Arm. Bibliot.“ A. L. էջ 148.

գ. «... Բողոքական միսիոնարները... 1845 թուականին սկսեցին Պոլսում «Աւետարեբ»... լրագիրը. որ քանի մի փոփոխութիւն կրած է. 1855-ին վերանորոգուած մինչեւ այսօր էլ շարունակուում է... Այս թերթը ինչպէս յայտնի է պաշտպան է բողոքական քարոզիչների շահերին եւ դուրա այսքան տարուայ յարատեւութիւնը հիմնուած է ոչ թէ բաժանորդագրութեան օգնութեան վերայ, այլ միսիոնարական ընկերութեան զոհարելութեանց վերայ...»

«Արձագանք» 1882. № 21. Ա. Եր.

դ. «... Աւետարեբ (18)55—90 (“”) խմբ. բողոք. միսիոնարների. Նտեմարան պիտանի գիտելեացի» շարունակութիւն...»

«Հայոց արդի մատենագր.» (ձեռագ.)

ե. «Աւետարեբ. 1855 (”) Պոլիս. Միսիոնարք»

„Դասագ. հայ-ազգ. պատմ.“ էջ 338.

„Նտեմարանի“ մասին ոչ մի բան չեն գրել՝ հ. Զարբանալեան իւր «Մատենագրութեան» մէջ, եւ պ. Դիւլօրիէ Իսկ գրողներից միայն պ. Նրեցիան ճիշտ է յիշել «Աւետարեբի» սկզբնաւորութեան տարին. իսկ միւսները ինչպէս եւ հ. Գալէմքեարեան, տասը տարի սխալուում են որ շատ ներքին չէ:

- 2.) Այս տողերը չէր գրուում «Աւետարներ» սկզբի տարիներում:
- 3.) «Աւետարներ» հրատարակութեան սկիզբը գրուեց 1845 թուականին. բայց անցեալ 1893 թ. համարները վերայ գրուած լինելու տեղ 49-դ տարի, գրուած է 46-դ տարի: Դորա համար պէտք է կասկածել որ «Աւետարներ» 70-ական թուականներին մի երեք տարով դադարուած է:
- 4.) Նախ գրուում էր «Ամերիկացի Միսիոնարաց կողմէն՝ Խմբագիր Ս. Պլիս»:
- 5.) Նախ, մինչև 70-ական թուականները, (թերթ) միածալ 4 էջ երէք սինեան 28x32 հ.-մետր:
- 6.) Բաժանորդագինը աժան է նշանակուած. երկու մէճիտ. կամ 30 դուրուշ:
Ռուսական փողով մօտաւորապէս 3. ո.
Չրանսիական ,, ,, 7. ֆ.
- 7.) Ցես «Աւետարներ» 1872. թիւ 32. էջ 8.
- 8.) Հ. Գալէմբարեան գրել է «Աւետարներ» շարաթաթերթ դարձաւ 1877-ին, որ սխալուում է:

16.

Ա Ա Գ Ա Ս Ե Ր ²⁾.

ՕՐԱԳԻՐ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՔՈՂՈՎՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՎԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ.

(Երկշաբաթաթերթ)

Կալկաթա (Հնգկասաան) 1845—1852.
 Հրատարակուում էր՝
 Խմբագիր՝ Մ. Դ. Թաղիաթեանց.
 Տպարտան «Արարատեան ընկերութեան»
 Դիրքը՝ (թերթ) քառածալ 8 էջ...
 Թուղթը եւ տիպը՝ բաւարար
 Բաժանորդագինը՝ տարեկան 24 ——ֆի
 Լեզուէն ոճը { «... գնա Ազգասէր, մե-
 ուղղադրութ. խորոք քո եմէ միայն քո...»

Ծրագիրը՝
 ԳԱՂԱՔԱԿԱՆ—Քաղաքական եւ ազգային
 յօդուածներ, լուրեր, տեղեկութիւններ եւ
 ակն:
 ՏՆՏԵՍԱԿԱՆ—Յօդուածներ, գաղտնական վի-
 ճակագրութիւններ...
 ԲՆՈՎԱՆ—Յօդուածներ բնական գիտու-
 թեան վերաբերեալ...
 ԲԱՐՈՅԱԿԱՆ—Բարոյական գիտելեաց վե-
 րայ յօդուածներ, բանաստեղծութիւններ,
 զուարճալիք, բանասիրական հատ ու կտոր
 յօդուածներ եւ ակն:



նդկատանի հայ ազգա-
 ընկուութիւնը որ
 կարող է պարծենալ
 հայ լրագրութեան
 հիմը գնելով, պա-
 կաս պարծենալու չէ
 եւ «Ազգարտ» շա-
 բաթաթերթի հա-
 մար, որ մինչեւ իւր ժամանակին հրատարակ-
 ուած լրագիրների մէջ փայլում է:

Հանգուցեալ լայտնի բանաստեղծ եւ հրա-
 պարակախօս Մեսրոպ Պ. Թաղիաթեանց (2)
 որ մեր զրականութեան նոր պատմութեան
 մէջ պատկառելի տեղ է վայելում, 1845
 թուականին օգոստոսի 6-ից սկսեց հրա-
 տարակել Կալկաթայում «Ազգասէր» շաբա-
 թաթերթը, օժանդակութեամբ «Արարատե-
 ան ընկերութեան», որ նոյն թուականի
 սկզբից կազմուած էր Կալկաթայում, (3) կըր-
 թուած, հարուստ եւ ուսումնասէր անձերից:
 Սորանց նպատակն էր՝ «...տեղաբնակ հայոց
 ազգայնութեան պահպանման եւ ուսումնա-
 կան յուսաշողիմութեան ձեւնաու ըլլալ,
 դպրոցներ հաստատելով եւ գլխաւորաբար

օգտակար գրքեր հրատարակելով. . .»(4):

«Ազգարարի» նշանաբանն էր «Ուսուսման առնէ զմարդ երջանիկ».

«Ազգասէր» իւր բազմազան բովանդակութեամբ, պատուաւոր տեղ է բռնում մեր մամուլի պատմութեան մէջ. մանաւանդ գորուս առաջին կիսում որ անհամեմատ գրքուար էր քան այժմ լրագրութեան գործ շարունակելը, դարձեալ Հնդկաստանի 10—15,000-ի չափ հայ ազգայինների մէջ այնպիսի սէր եւ յարգանք վայելեց, որ իւր նախորդների մէջ առաջինն եղաւ:

«Ազգասէրի» լեզուն նախ պարզ աշխարհաբար էր: Լուստհոգի խմբագիրը երբ տեսաւ որ Հնդկահայ եղբայր այնքան գուրեկան չէ այդ, հետեւեալ տարին փոխեց գրաբարի եւ գնալով աւելի եւս «Ազգարարի» սէրն ու համակրտնքն աւելացաւ: Հանգուցեալ խմբագիրը բացի «Ազգասէրի» ազգասէր խմբագրութեան գործը կատարելուց, վարում էր Կալկաթայի Ս. Սանդիտեան նորահաստատ հայոց դպրոցի տեսչի պաշտօնը:

Հրատարակուում էր իւր համեստ շրջանի մէջ «Ազգասէր» շաբաթաթերթն ամեն կերպ պաշտպանելով ու գովելով տղային շահերը: Յաւալի է որ երկար չը տեւեց Թաղիաթեանցի շաբաթաթերթի հրատարակութիւնը. 1848 թուականի յունիսի 24-ի «Ազգարարի» համարը գուժեց «Արարատեան ընկերութեան» լուծումը: Ընկերութեան լուծումով դադարեց եւ «Ազգասէրի» հրատարակութիւնը:

Ոչ այնքան ընկերութեան քակտումը, որքան «Ազգասէրի» դադարումը մեծ ցաւ պատճառեց Հնդկաբնակ հայ գաղթականութեան. այնպէս որ ամեն տեղերից յորդորներ եւ ցաւակցական թղթեր տեղացին «Ազգասէրի» խմբագրութեան, .եւ դորանց հետ էլ մեր հայ եղբայրք առանց յապաղելու օգնութեան ձեռք կառկառելով հանդանակութեամբ մի տպարան գնեցին եւ նուիրեցին շնորհ. Թաղիաթեանցին:

«Ազգասէր» վերստին սկսեց հրատարակ-

ուել նոյն թուականի (1848) սեպտ. 16-ին՝ «ի տպարանի «Ազգասէրի Արարատեան»»: Զմիւռնիայի «Արշալոյս Արարատեան» իւր 324 թուովն հրաւեր կարգաց Թիւրքիայի հայերին, օգնել «Ազգասէրի» հրատարակութեան գործին: «Արշալոյսի» ձայնն ունեցաւ իւր օգտաբեր նշանակութիւնը. նուէրներ ուղարկուեցին «Ազգասէրին» Տաճկաստանից, Ռուսաստանից եւ Եւրոպայի մի քանի քաղաքներից:

Ի յիշատակ դադարեալ ընկերութեան, խմբագիր Թաղիաթեանց իւր հտնդիսի անունը փոխեց «Ազգասէր Արարատեան» Հանրագրութեան հիմնադիր, (տասն օրը մի անգամ հրատարակելով): Այս անգամ էլ որպէս նշանաբան գրուած էր «Ազգասէրի» ճակատին՝ «Մաքուր խղճմտանքն առնէ զմարդ երջանիկ»:

1849 թ. սեպտ. 15-ին «Ազգասէրը» դարձաւ երկշաբաթաթերթ. անուանուելով Հանրագրութեան հիմնադիր, «Աստուած եւ աշխատութիւն» գեղեցիկ նշանաբանով:

Կիսամսագիր «Ազգասէրը» մի երկու ասուրուց յետոյ նորից նիւթական պակասութիւն զգաց: 1851 թ. փետր. 15-ին, «Արարատեան Ազգասէրի» 54-դ համարի մէջ Թաղիաթեանց նկարագրեց իւր սուղ միջոցները գրամտականին վերաբերեալ, այսպէս վերջացնելով իւր խօսքերը՝ «... Գնա՛ Ազգասէր մեռիք, .. այլ երանի էր քեզ եթէ զմահ ծերունոյն Սիմէօնի մեռանէիք ասելով՝ անգ արձակեա զճառայս քո խաղաղութիւն» «Ո՞ր սիրտ չի խոցեր այս թախծալից հրաժեշտէն» գրում է հ. Գալէմբար:

Հայ ազգասէր անձինք կարգալով այս առգերը նորից կամեցան օգնել իւրեանց նուէրներով: Ուղարկեցին գրամտական հանգանակութիւններ, նուէրներ, որ եւ միջոց տուին «Ազգասէր Արարատեան»-ին հրատարակութեան:

Խմբագիր Թաղիաթեանց «Արշալոյս Արարատեանի» 1851 թ. 398-ի մէջ «Ազգասէր Արարատեան» այս երբորդ սեպտ վերնագրով հրատարակեց Հնդկաստանի զանազան քաղաքներից

ստացած նամակներն. որոնցից յիշատակութեան եւ ուշադրութեան արժանի է «Թուղթ Մարիամայ Յ. Յարութիւնեան եւ օրիորդ Քազուհայ Մանուկեան» Բաթավիայից, որոնք 400 ռուբլի (մօտ 400 ռ. կամ 1000 Ֆ.) ուղարկելով Քաղիաթեանցին 'ի միջի այլոց գրում են «... Եթէ Հնար իցէ այս ու դուզն գումարիւ ձեզ քաջալերել առնել, զի կրկին սկսանելով 'ի լոյս ածջիկ զԱզգասէր ձեր, մեք հոգւով ուրախ լիցուք, քանզի կարի ցաւ է մեզ ընդ կորուստ այսպիսի մի պատուական լրագրի յաղագս մեր 'ի Հնգիկս (՛) . . . »

Արդեօք մեր ժամանակում էլ կարո՞ղ է պատահել մի այսպիսի բան հայ կանանց կողմից:

Ազնիւ հայուհեաց ազնիւ գործը, խրախուսեց, քաջալերեց, բարեյիշատակ խմբագրին: Նա իւր ջանասէր հոգով նորից գործի գլուխ կանգնեց, նորից սկսեց ազգօգուտ գործը՝ «Ազգասէր Արարատեանի» հրատարակութիւնը, իւր սկզբի դիրքով եւ ծրագրով, բայց այս անգամ էլ հազիւ մի տարի կարողացաւ շարունակել:

1852 թ. սկիզբներին «Ազգասէրի» սեփական տպարանը փոխադրուեցաւ Կալկաթայից 30 մղոնի չափ հեռու գտնուող Զիչրա գիւղաքաղաքը:

«Այս օգափոխութիւնն ալ չօգնեց» գրում է Հանդ. Ամսօրեան, 1852 թ. յուլիսի 15-ին ի սպառ դադարուեցաւ նիւթական պակասութեան պատճառով: «Ասիկայ (նիւթական պակասութիւնը) հայ լրագրութեան հին սովորական համաճարակ եւ մահացու ախտն է» աւելացնում է Հ. Գ. Գ.

Այսպէս դադարուեցաւ «Ազգասէր Արարատեան» հանրապատում կիսամսագիր. Կալկաթայի հանդէսը 7—8 տարի հրատարակուելով:

Լրագրի կոչման համեմատ «Ազգասէրի» երեսին նշանաբանի տակ տպագրուում էր Արարատ մեծ եւ փոքր լեռները:

ԻՆՆՕԹՈՒԹՐԻՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Ազգասէր» հանդէսը.
 - ա. «... Ազգասէր» Հնդկահայոց ամենանշանաւոր թերթն էր, չունեցաւ իւր նմանն՝ ոչ յառաջ եւ ոչ յետոյ: Իւր անաչառութեամբն եւ տեղական լրոց առատութեամբն շատ սիրելի էր եղած իւր ընթերցողած... Հնդկահայոց պատմութեան նշխարհաց բաւական հարուստ թանգարան մը եւ հայ լրագրութեան պատմութեան մէջ բարի յիշատակ մը եւ պատուաւոր գիրք մը ժառանգութիւն թողելով...
 «Հանդ. Ամսօրեայ» 1888 էջ 106.
 - բ. «... Բայց Քաղիաթեանցի գրիչը շատ համակրական լինելով, ոմանց մէջ ցանկութիւն ծագեցաւ նիւթապէս օժանդակել «Ազգասէրի» վերականգնելուն: Երեւի թէ այդ օգնութիւնը մեծ չէր. որովհետեւ 1850 թուին Քաղիաթեանցը նորից սկսելով իւր լրագիրը, ստիպուած էր 1851 (՛) թրուին բոլորովին լռել...
 «Արձագանք» 1882. № 21. Ա. Նր.
 - գ. «1844 (՛) Կալկաթայի Մարդասիրական (՛) ընկերութիւնը (հիմնեց) Մեսրոպայ Քաղիաթեանցի «Ազգասէրը»:
 «Նոր-Գար» 1884. № 34. Սլաք.
 - դ. «... Խմբագիրն Մեսրոպայ Քաղիաթեանց՝ արժանաւոր երեւեցաւ ազգակցած վստահութիւնն ու իրեն յանձնած պաշտպան ու աշխոյժ եւ եւանդուն... գրչովն ու սրտով ամենուն ընդունելի բոլոր լրագիրը...
 «Պատմ. հայ. դպր.» էջ 475.
 - ե. «... Իւր («Ազգասէր») նիւթը քննելով կը տեսնենք որ քաղաքական մասին կատարելութեան... այն չափ միտ չի դնել. այլ աւելի կը ջանայ բարոյական, բանասիրական, տնտեսական ու զուարճալի հատուածներ հրատարակել եւ գլխաւորաբար իրեն պարտք կը սեպէ Հնդկաստանի Հայոց ազգային որոշումներն ու դպրոցական վիճակը ծանուցանել. հոն տեղացի Հայոց ազգային հոգին պահել ու վառել...
 «Ներուպա» 1850. թիւ 34.
 - զ. «Ազգասէր օրագիր ազգային եւ բանասիրական, հրատարակեալ 'ի Կալկաթա (1844 (՛)—47՛). խմբագրութեամբ Մեսրոպայ Քաղիաթեանց Ա. Վ. Սարկաւազի Ս. Լ. ջմիածնի...»

„Մատեն. Հայկ.“ Զարդ. էջ 9.

է. „... Երկու տարի յետոյ (1847) յայտնի բանաստեղծ... Կալկաթայում հրատարակում է „Ազգասէրը“...“

„Հայկ. մատեն.“ Ա. Լ. էջ 148.

[Zwei Jahre später begann der berühmte Dichter Taghetian in Kalkutta die Herausgabe des „Asgasser“]

„Arm. Bibl.“ II. A. L. էջ 148

Ը. „... Հնդկաստանի մէջ, Կալկաթայում դուրս եկաւ պատրիոտ ԱՅԿԱՍՏԵՐԷ, 1841 [Թուականից մինչև 1849(?)...“

„Այժմեան Հայերը“ Դիւօր. էջ 82.

[„... Въ Индіи, въ Калькутѣ, выхо- дитъ патріотъ Азгасеръ, (Патріотъ) съ 1845 по (до?) 1849(?)...“]

„Нынѣш. Арм.“ էջ 82.

Թ. „Ազգասէր Արարատեան“ 1845—49(?) Կալկաթա՝

„Իստ. Հայ-ազգ. պատմ.“ ք. էջ 337.

Ժ. „... Բացի սորանից(, Հայոց հերանոց“ - ք) Կալկաթայում „Արարատեան“ ընկե- րութեան ջանքով հի(մ)նուեցաւ „Մար- դասիրական ճեմարանը“ իւր տպարանով,

որի մէջ ներկայ դարու կէսերին տպուում էր „Ազգասէր“ (անունով) օրագիրը, Մես- րօր Թաղիաթեանցի խմբագրութեամբ...“

„Պատմ. Հայոց“ Ս. Պալաս. էջ 423.

Ժա. „... Այս թերթի գրողն էր Արշ. Արա- բատեան. [Թղթակիցներ ունէր այնտեղ ... Թերթի հրատարակութեան համար () կազմուեց մի ընկերութիւն „Արարատե- ան“ ծրագիրն ու նպատակը նման էր նախորդներին...“

„Հայոց արդի մատենագր.“ (ձեռագ.)


2.) Ս. Էջմիածնի Սարկաւազ Թաղիաթեանցի մա- սին լաւ ծանօթութիւն ունենալու համար պէտք է կարգաւ „Կենսագրութիւն Մեսրոպ- րայ Դաւթեան Թաղիաթեանց Երեւանցւոյ, հաւաքեց եւ խմբագրեց Տ. Յովհ. քահանայ Մկրտչեան. Թիֆլիս 1886. Յով. Մարտիրոս. տպարան“:

8.) Զբ շիթթել Կոստանդնուպոլսի „Արարատեան ընկերութեան“ հետ, որ հիմնուել է 1876 Թուականին.

4.) Տես՝ „Հանգէս Ամսօրեայ“ 1888. էջ 107.

5.) Տես՝ „Արշաւ. Արարատեան“ 1851. Թիւ 398.

Կ Ա Վ Կ Ա Ս 1.)



(Շարաթաթերթ)

Տ փ ի ի ս (Ռուսաստան) 1846—1858.

Հրատարակուում էր՝ շարաթ օրերը. Խմբագրութեամբ՝ Յ. Կարինեանի եւ Մ. Պատկանեանի. 2).

Ի տպարանի Ընծայելոյ յազնուական Գէորգայ Արծրունւոյ ներսխեան հո- գեւոր դպրոցի Հայոց 3).

Դ ի ի թ թ թ (Թերթ) միածալ (4 էջ) երկսիւն- եան 30X44 հ.-մետր.

Թ ու ղ թ ը եւ տ ի պ ը՝ միջակ.

Բ ա ժ ա ն ո Ր գ ա գ ի ն ը՝ տարեկան 7 մանէթ.

Լ ե գ ու ն ո ճ ը՝ } „... բայց ոչ, ծրի եղեւալս յաղթուծիւն. ի մէջ վիրաւո- Ու ղ ղ ա գ ը ու թ. } րաց, իւրով արեամբ...“

Ծրագիրը՝—

ՔԱՂԱՔԱԿԱՆ. — Պաշտօնական տեղեկու- թիւններ լուրեր, հրամաններ, յայտարարու- թիւններ, խառն քաղաքական լուրեր: Ներ- քին լուրեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Ոտանաւորներ, առականեր, անեկտօաներ, վէպիկներ...

Բովանդակութիւն (4) 1847. № 39.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԲ. — Թիֆլիս. — Տ. Տ. Ներսէս Ե.-ի Օծման Հանդէսը.— Օրինակ նամակի կը- նիտղ Վարանցովի առ Սրբազնակատար Կա- թողիկոսն: — Սաւաւրապոլ: — Վիճաբանու- թիւն 'ի վերայ սիրոյ.— Մովս. Զահրապեան: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՒ.— Անգղիա, Գաղղիա, Գեր- մանիա, Բելղիա, Բրուսիա, Իտալիա, Տաճ- կոստան:



Միշտ կէս դար էր անցել այն օրից երբ Հնդկաստանի առաջին հայ լրագիրն սկսեց հրատարակուել, Ռուսաստանում գեռ նոր բնակուեց մեր լրագրութեան գործը:

Իշխան Վորոնցովի Կովկասի կառավարչապետ նշանակուելով, երկիրը բարոյական վերափոխութիւն կրեց: Հազիւ թէ նա մուտք էր գործել Տփլիս, կամեցաւ հրատարակել մի շաբաթաթերթ ռուսերէն, հայերէն, վրացերէն եւ թիւրքերէն լեզուներով:

1846 թուականից սկսուեցաւ ռուսերէն «Кавказ» լրագիրը Կոստանդինովի խմբագրութեամբ: Նոյն թուականին սկսուեցաւ եւ հայերէն լեզուով «Կովկաս» շաբաթաթերթը, գարձեալ Կոստանդինովի պաշտօնական խմբագրութեամբ: Բայց որովհետեւ պատասխանատու խմբագիրը հայերէն չէր իմանում, խմբագրութեան եւ այլ հոգաժողութիւնը բաւականին ազատ վարում էին Կարնի գաղթական Յակովբ վարժապետ Կարինեանցը եւ Ներսիսեան հոգեւոր դպրանոցի ժամանակակից տեսուչ պ. Միքայէլ Պատկանեանը (յետոյ Կօլէժսկի սովեանիկ): Ս. Աւելորդ չէ յիշել այստեղ, որ իշխանը վրացերէն եւ թիւրքերէն լեզուներէ համար «Կովկաս» ին ընդունակ խմբագիրներ չը գտնելով, յիշեալ լրագիրը այդ լեզուներով լոյս չը տեսաւ:

Որպէս մի նորութիւն «Կովկասի» երեւոյթը, Տփլիսի ժամանակակից հայ գրողներէց հաւաքուեցին 'ի միասին, շաբաթաթերթի խմբագրութեան գործը յաջող հիմքերի վերայ դնելու: Խմբագրի եղբայրը՝ Գաբրիէլ քահանայ Պատկանեան, որը վեր-

ջը պատճառ եղաւ այդ լրագրի գաղարմտն, մեծ բաւականութեամբ աշխատակցում էր «Կովկաս»ին:

«Կովկասը» հրատարակուում էր գրաբար լեզուով, որի կարդացողները մի առանձին գասակարգ էին կազմում:

Իսկապէս «Կովկասը» այն արժանաւորութիւնը չունէր ինչ որ ունին մեր ժամանակակից թերթերը: Պաշտօնակտն չոր ու ցամաք լուրեր ու տեղեկութիւններ արտաարպած (թարգմանօրէն) իւր անուանակից ու պաշտօնակից «Кавказ»-ից: Մի համեստ գրնահատութիւն տալ կարելի է միայն «Կովկասի» բանասիրական բաժնում գծի ասկ սուլագրուող աշխարհաբար կամ գաւառական բարբառով յօդուածներին, որ բուականին հետաքրքրութիւն ունին: Կանոնաւորապէս, թղթակցութիւններ, նամակներ, «Կովկասը» բոլորովին չունէր: Լրագրի համարների առաջին էջերում որ խմբագիրները սովորաբար իւրեանց յայտարարութիւններն են տեղաւորում — գրում է պ. Յարոյ. — մեր «Կովկասը» մի ինչ որ պատկեր էր տեղաւորում որի նշանակութիւնը ես (պ. Յարոն) չեմ հասկանում (6) . . . եւ բոլորովին չէի նեղանայ, եթէ մէկը ասէր ինձ (պ. Յարոյին) ներքեցէք պարոն ձեր խելքի բանը չէ այդ:

1846 թ. յունուարի 12-ից հրատարակուելով, «Կովկասը» իւր գոյութիւնը պահեց մինչեւ 1847-ի վերջերին: 300-ի չափ բաժանորդները չը կարողացան ապահովել «Կովկասի» կեանքը: Նիւթական տեսակետը մի կողմ թողած՝ մի ուրիշ ոչ հաճելի գէպքից ստիպուած գաղարուեց Կովկասի հայ անգրանիկ օրագիր «Կովկասը». իսկ նորտ հասակակից ռուս «Кавказ»-ը մինչեւ այսօր շարունակուում է:

Թ Ե Ն Օ Թ Ի Թ Ի Ի Ն Ն Ե ր .

- 1.) «Կովկասի» մասին մեր աղբիւրները. ա. . . . Ռուս Կովկասեան երկիրներում, Տեփ-

խիստ արտաբերեց երկու հայկական պարբերական հրատարակութիւններ՝ «Վովկաս քաղաքական եւ գրականական բովանդակութեամբ 1846 թ. սկսած, որը պարունակում էր իւր մէջ թարգմանուած ուսուցիչ անուն լրագրի յօդուածները եւ գոյութիւն ունեցաւ միայն երկու տարի...»

„Այժմեան հայերը“ Դիւլոր. էջ 81.

[„... Въ русскихъ кавказскихъ владѣніяхъ Тифлисъ произвелъ два армянскихъ періодическихкихъ изданія: „Кавказъ“ — политическаго и литературнаго содержания, основанный въ 1846 г. заключившійся въ переводѣ на армянскій языкъ русскаго изданія того же имени и существовавшій только два года...“]

„Нынѣш. Арм.“ էջ 81.

Ք. „... Նախորդքն քո (,Մեղուի՛) անբախտ Կ ո Վ Կ ա ս եւ Ա ը ա ը ա տ կարճ կալան կեանս.

Մին երկու ամ, միւսն վեց ամիս, Ինչպէս մանուկ օրսպակաս...“

„Մեղու Հայաստ.“ 1858. № 3.

Պ. „... Վովկասեան գաւառաց Տփլիսի մայրաքաղաքին մէջ ալ 1846-ին քաղաքական լրագիր մը երեւեցաւ „Վովկաս“ անունով: Այս պարբերականին իրմէ առաջ երեւցածներէն էական տարբերութիւնը լեզուին վրայ էր: Հրատարակողք ընդհանրապէս աշխարհիկ (””) լեզուն ընտրած էին, ընթերցողաց մեծ մասին իմանալի եւ օգտակար ըլլալու նպատակաւ... Հմուտ գրիչ մը, ուսումնասէր եւ ուսումնական միտք եւ գիտութիւններ ու խորհրդածութիւններ այս լրագրին բանասիրական արժէքն էին... 1848 (՛) ին եւրոպական յեղափոխութիւնք՝ բանադատեցին զՌուսիս սպազրական օրինաց վրայ առաւելագոյն հսկողութիւն բանացնել, եւ այն պատճառաւ „Վովկաս“ լրագիրն ալ հրատարակութիւնն արգելուեցաւ...“

„Պատմ. հայ. դպր.“ Զարբ. էջ 475.

Պ. „... Իսկպէս Թիֆլիսի մէջ այս հայերէն լրագիրը սկսուելու միտքը երկրիս այն ժամանակուայ փոխարքայ Վօրոնցովին է պատկանում... Մեզ անյայտ պատճառներէց հայոց „Վովկասը“ միայն երկու տարի շարունակուեց...“

„Արձագանք“ 1882. № 21. Ա. Եր.

Պ. „... Ռուսահայոց մէջ առաջին հայ լրա-

գիրն եղաւ Վովկաս շաբաթաթերթը (գրաբար (՛) լեզուով) որ սկսաւ հրատարակուել Թիֆլիսում 1846-ին Տ. Գարբիէլ (՛) Պատկանեան քահանայի (՛) խմբագրութեամբ: Նրկու տարի տեւելուց յետոյ, Վովկասը դադարեցաւ...“

„Պատմ. Հայոց“ Ս. Պալասան. էջ 444.

Չ. „... Թիֆլիսի Վովկաս անուն հայերենասէր օրագիրը, երբեմն երբեմն հազորդելով մեզի մեր սիրելի հայերենացը փափաքելի լուրերը ինքն ալ մեզի առաւել սիրելի կ'ըլլայ իր պարզ գրաբար լեզուովը մէկ տեղ...“

„Հայաստան“ 1847. № 50—83.

է. „... Նթէ չեմ սխալուում, (սխալուում էք պ. Յարոյ) 1847 (՛)-ին էր, որ առաջին անգամ ուսահպատակ հայերի մէջ լոյս տեսաւ Թիֆլիսում առաջին հայ քաղաքական ու քանասիրական շաբաթաթերթը „Վովկաս“ անունով: Այս միանմանութիւն էր այն ժամանակուայ (որ այսօր հրատարակուում է) կիսապաշտօնական „Վովկաս“ ուս... լրագրի...“

„Հայոց մամուլը Ռուս.“ Յարոյ էջ 18.

ը. „... Առաջին հայ թերթը որ երեւեցաւ ուսահայերի մէջ, դա „Վովկաս“ շաբաթաթերթին էր որ 1847 (՛) թուին հրատարակուեց Թիֆլիսում, խմբագրութեամբ Կարինեանի եւ գլխաւոր աշխատակցութեամբ Մ. Պատկանեանի: Բաւական է ասել որ „Վովկասը“ հրատարակուում էր գրաբար լեզուով եւ այդ առդէն գաղափար կը տայ, որ շաբաթաթերթը միայն „ընտրեալների“ համար էր հրատարակուում: „Նա միայն երկու տարի ապրեց եւ 1848 (՛)-ին դադարեց...“

„Մտքի մշակը“ Խ. Մալ. էջ 27.

Թ. „... 1846 եւ 1847 թուերին հրատարակուեց Թիֆլիսում „Վովկաս“ անդրանիկ հայ շաբաթաթերթը եւ իրանից անկախ պատճառով դադարեց...“

„Նիւթեր հայ. պատմ. համար“ էջ 54.

Ժ. „... Վովկաս, քաղաքական, ազգային (՛) եւ բանասիրական շաբաթաթերթ: Հրատարակիչ Գ. (՛) Պատկանեան Թիֆլիս. ՚ի տպ. Վովկաս օրագրին, (՛) 1847 (՛)...“

„Մատեն. Հայկ.“ Զարբ. էջ 309.

Ժ ա. „... Լեզուն գրաբար էր որուն մէջ բաւական յաջող ձեռք ու վարժ գրիչ մը կերեւնար, նոր յարմարեցուցած բառերուն մեծ մասը լեզուազէտ մարդու մտադրութեամբ եւ ախորժակաւ շինուած կրնանք

Համարել . . . իր պատմական ոճը ծանր, հանդարտ ու չափաւոր կերեւար. . . Բանի ուսուհայ ժողովրդենէ ընթերցող չկար՝ այլ միայն ուսումնական դասերէ եւ աշխարհաբարն առ Ռուսահայս դեռ կը սպասէր Արտվեսաններու եւ Նազարեաններու գրաւորի ելլելու եւ գլխաւորաբար հրատարակական լեզու ըլլալու համար. . .

„Հանդէս Ամսօր“ 1888. էջ 187.

Ժ Բ. „ . . . 1846 թուականին Տփլիսում հրատարակուեց „Վովկաս“ լրագիրը. այդ լրագրի հրատարակութեան պատճառ դարձաւ Տփլիսի այն ժամանակուայ կառավարչապետ իշխ. Վորոնցովը, որ զերմ կերպով աշխատում էր տարածել Արուսական քաղաքակրթութիւնը իւրեան յանձնած երկրին եւ ահա այդ պատճառով նպաստում էր այդ լրագրին:

„Հայկ. մատենադար.“ էջ 149.

[„ . . . Im Jahre 1846 entstand auch in Tiflis eine armenische Zeitung und zwar der „Kawkas“ oder Kaukasus. Den Anlass dazu gab der damalige Statthalter Transkaukasiens, Fürst Woronzow, der es mit der Verbreitung europäischer Kultur in der von ihm verwalteten Provinz sehr ernst nahm und daher auch das Zeitungswesen unterstützte.]

„Arm. Bibliot.“ II. A. L. էջ 149.

- 2.) Իսկապէս պատասխանատու խմբագրապետ ճանաչուում էր պ. Կոստանդինով:
- 3.) Կարճ ժամանակից յետոյ փոխուեց սեփական տպարան:
- 4.) Լրագրի համարները սկզբում ինչպէս որ այժմեան լրագիրները, չէր տպուում բովանդակութիւնը:
- 5.) Թէեւ թերթի վերայ ոչ մի խմբագրի ստորագրութիւն չի երեւում:
- 6.) Այդ պատկերը ներկայացնում է մի մերկ թեւաւոր ծերունի սպիտակ մորուքով նստած ամպերի վերայ: Դորա դիմաց կանգնած է մի երեխայ նոյնպէս մերկ ու թեւաւոր: Հորեզոնի վերայ երեւում է համաստեղութիւնը. պատկերի տակի գրուած գրաբար ոտանաւորը բացազրում է նորա իմաստը:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒՍՈՑ 1.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1846-1846.

Հրատարակուում էր՝

Խմբագրութեամբ՝ Յովհաննէս Զամուրճեանի եւ Մկրտիչ Աղաթօնի: . . .



Լեւտաբերի» հրատարակութեան Հետեւեալ տարին Յովհաննէս վարժապետ Զամուրճեանց կամ Տէրոյեանցը, մասնակցութեամբ Աղաթօնեան Մկրտչի, սկսեց հրատարակել կիսապաշտօնական „Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ“ թերթը, որ հայոց պատրիարքարանի բերան (օրգան) կարելի էր հաշուել: Ժամանակակից արթուն սրբ. պատրիարքը, Ամենապատիւ Մատթէոս արքեպիսկոպոսը (յետոյ կաթողիկոս ամենայն հայոց) իւր գիրքով ու կոչումով բաւական էր գլուխ կանգնէր թերթի խմբագիրների գործունէութեանը. առաջնորդ լինելով այն ուղղութեանը որը սաստիկ հակառակ էր բողոքական քարոզչներին եւ նորանց «Աւետարեք» թերթին: Երկու ուսումնական եւ բարի քրիստոնեայ հայ խմբագիրներ՝ Տէրոյեանց եւ Աղաթօն, ձեռք ձեռքի տուած գործում էին, անձնուիրաբար, հաւատարիմ մնալով իւրեանց սեպուհ պարտականութեան:

«Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» լրագիրը կարողացաւ կանոնաւոր իւր ստեղծ-

ման օրինակով հրատարակուել միայն վեց ամիս: Սրբ. պատրիարքի խորհրդով որպէս զի գործն աւելի ընդարձակ ու ազատ լինի, թերթի դիրքը, ձեւը, խմբագրական ներքին կազմակերպութիւնը փոխուեց: Պատուելի Յովհաննէս վարժապետ Պրուսացի Տէր-Վարապետեան Չամուրճեան Տէրոյեանց, թերթի նոր փոփոխութիւնների համեմատ արժան համարեց «Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» անունն էլ այնուհետ նշանակել «Հ ա յ ա ս տ ա ն» որ առանց ժամանակ կորցնելու հետեւեալ յուլիսին սկսեց կանոնաւորապէս հրատարակել:

Ի Ա Ն Յ Ո Ւ Յ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Մեր աղբիւրներից մի քանիսը, ինչպէս եւ հայր Գալէմքեարեան, «Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» անունը չեն յիշել առանձին: Այլ մի քանի տող գրել են այս լրագրի մասին «Հայաստանի» մասին խօսելիս:
 - ա. «... Վերջապէս որոշեց հայոց պատրիարքարանն որ «Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» անուն լրագիր մը հրատարակուի, եւ յաջողեցաւ թոյլտուութիւն առնուլ...»
 - «Հանդ. Ամսօր.» 1888. էջ 18.
 - բ. «... Առջի բերան Սուրհանդակ Կ. Պոլսոյ անուամբ սկսաւ հրատարակուել: Զանազան գիպուածներ շատ կերպարանափոխութեան մտուցին թէ օրագրին ոճոյն եւ թէ խմբագրեաց մէջ: Բայց միշտ ազգին պատիւը պահելու խոհական եւ ըզըզաւոր ընթացք մը երեւցնելով...»
 - «Պատմ. հայ. դպր.» Զարբ. էջ 478.
 - գ. «... Նոյն միջոցին պատրիարքին շրջապատող երիտասարդ ուսումնականաց մէջ փայլում էր պատրիարքական թարգման Եւրոպայում կրթուած պ. Աղաթօնեանը: 1846 թուին «Սուրհանդակ Կ. Պոլսոյ» լրագիրն էր որ ջերմ պաշտպան հանդիսացաւ հայոց շահերին...»
 - «Արձագանք» 1882, № 21. Ա. Եր.
- Գուրեան Նդիշ վարդապետի «Պատմութիւն Հայ մատենագրութեան» համեմատ աշխատութեան

մէջ չէ յիշուած «Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» լրագիրը: Ինչպէս եւ հայր Գուրեան չէ յիշել մինչեւ այս թերթի միջոցին հրատարակուած հայ պարբերականներից շատերը: Գրուած է այս գրքում միայն մի քանիսը, որոնք «նպաստեցին աշխարհիկ լեզուի կանոնաւորման եւ զարգացման» հետզհետէ թօթափելով ի նմանէ իւր մուրացածոյ՝ ճապախ եւ օտարոտի բացադուլթիւններն ու բառերը:—Թուով 20-ի չափ: Սկսելով «Արշալոյս Արարատեանից» մինչեւ «Լոյս»—ով վերջացնում է իւր տեսութիւնը հայր Գուրեան:

19.

Հ Ա Յ Ա Ս Ա Ն ¹⁾

Ա Ր Ա Գ Ի Բ

ՔՈՂՈՔՈՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՆԵՍՊԱՐՈՎԱՆ ԵՒ ԱՌԵՏՐՈՎԱՆ.

(Շարաթաթերթ.)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ . (Տաճկ.) 1846-1852
 Հրատարակուում էր շարաթ օրերը.
 Հրատարակիչք լրագրի ս՝
 Յովհ. Պր. Տէր Կրպ. Չամուր.
 Մկրտիչ Աղաթօն.
 Ի տ պ ա Ր ա ն ի Յովհաննու Միւհէնտիսեան.
 Թ ու Ղ թ ը եւ տ ի պ ը՝ բաւարար.
 Բ ա ժ ա ն ո Ր զ ա գ ի ն ը՝ տարեկ. 100 դրշ,
 Լ ե գ ու ն ոճը } «Մեծարու պ. Միւհիւրիսին
 Ուղղագրութ. } վրայ ուրիշ հիւանդութիւն ալ
 Մրագիրը՝ } գարով քիչ մը՝ հարկ եղաւ...»
 ՔԱՂԱՔԱԿԱՆ—
 Ն եր ք ի ն Լ ու Ր ե Ր—Տեղական քաղաքական լուրեր, տեղեկութիւններ...
 Արտաքին լուրեր—Քաղաքական լուրեր, յօդուածներ ու զանազան տեղեկութիւններ արտասահմանեան գէպքերից. թարգմանութիւններ...
 ԱԶԳԱՅԻՆ—

Նամակներ, թղթակցութիւններ զանազան տեղերից, յօդուածներ, լուրեր, հայոց պատրիարքարանի նոր կարգադրութիւններ, մատենագրական քննական յօդուածներ, ազգային սովորոյթք պատմութիւններ, վէպիկներ, ոտանաւորներ եւ այլն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—(Պատմական)

Վիճակագրական, դրամագիտական, հնագիտական յօդուածներ, ձեռագիր յիշատակարանք. . . Աշխարհագրութիւն ճանապարհորդութիւններ, արձանագիրք:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ—

Նոր լուրեր առեւտրական գործին վերաբերեալ, ապրանքների սահագինը և. Պոլսում, Իզմիրում եւ այլ տեղերում: Վերջին տեղեկութիւններ ընթացիկ գննոց զանազան ապրանքների՝ ինչպէս տորօն, բամբակ, աֆիոն. . .

ՄԱՆՈՒԹՈՒՄՆ—Յայտարարութիւններ ամեն անսակ գործերի:

Բովանդակութիւն 1848. թիւ 30—83.

—Քաղաքական—

Ներքին լուրեր. Պոլիս 24 յունուար. Արտաքին լուրեր. Գաղղիա, Սպանիա, Իտալիա, Ամերիկա.

—Բանասիրական—Պօնաբարդ.

—Ազգային—Թիֆլիսի «Կովկաս» անուն հայրենասէր օրագիրը—Երեւանից—10 հոկտեմբ.

—Զանազան լուրեր—Բժշկական հնագիտութիւն, բնական երեւոյթ, արուեստական—կտրիչութիւն:

Ծանուցումն:

Սուրհանգակ Կոստանդնուպոլսոյ թերթը որի մի քանի համարները միայն լոյս տեսան, 1846 թուականի յուլիսի 1-ից փոխուեց «Հայաստան» շաբաթաթերթի, նոյն խմբագիրների տնօրէնութեամբ:

Ժամանակակից դրականութեան մէջ յայտնի լեզուագէտ Պատուելի Չամուրճեան վարժապետն իւր հետ օգնական ունենալով Աղաթօն Մկրտչին, միասին գործում էին:

Ազգային ժողովի արամադրութեան տակ «Հայաստանը» դարձաւ մի կիսապաշտօնական թերթ եւ շարունակ հարուածում էր բողոքական քարոզիչների «Աւետարեթին»: Առանձնապէս «Հայաստանը», «կրօնական» բաժին չունենալով, յարգելի խմբագրութիւնը հարկաւոր համարեց որպէս յաւելուած «Հայաստան» վեցամսեայ «կրօնական» բրօշուրները հրատարակել, որոնց մէջ ազատ դրուում էր կրօնական վէճեր, եւ այլն:

«Հայաստանի» ազգին արած ծառայութիւնը դնահատելի է կրօնական խնդիրների մէջ: Աշխատակցում էին իւր ժամանակին յայտնի հայ գրագէտներից շատերը՝ ինչպէս եւ Մ. Հիսարեան, Մուր. Ռուբինեան եւ այլք:

«Հայաստանի» լեզուն պարզ աշխարհաբար էր եւ ամենքին դիւրամբօնելի: Թերթի էջերում երբեմն երեւում էին գրաբարոտանաւորներ եւ հատ ու կտոր մանր յօդուածներ:

«Հայաստան» երեք տարու չափ՝ այսինքըն մինչեւ 1849 թուականը հրատարակուում էր խմբագրութեամբ Յով. Չամուրճեանի եւ Մկր. Աղաթօնի:

Մի թեթեւ վէճի պատճառով Պատուելի Տէրոյեանցը հրաժարուեց իւր պաշտօնից: Եւ «Ազգային Գերագոյն ժողովը. . . «Հայաստան» իւր պաշտպանութեան ներքեւ անելով. . . Հայաստան անկէ ետեւ ոչ Պօղոսին է եւ ոչ Ապօղոսինը, այլ ազգինը եւ ազգային Սնդուկին հաշուին համար պիտի հրատարակուի նոր տարւոյս սկիզբէն. . .»

Չամուրճեան հեռանալով «Հայաստանի» խմբագրութեան պաշտօնից, թերթի «Տնօրէն-Խմբագիր» ճանաչուում էր Մկրտիչ Աղաթօնեան. խօստանալով հեռու մնալ զանազան կուսակցութիւններից, աշխատում էր Հոյասի պայծառութեան եւ յաջողութեան մասին: Սակայն այսպիսի դիրքով չը կարողա-

ցաւ «Հայաստան» մինչեւ անգամ մի տարին լրացնել: Նոյն տարուայ գեկտ. 17-ին Աղաթօնեանը հրատարակեց պաշտօնից, եւ «Հայաստան» ստիպուած էր դադարել: Բայց Չամուրճեան 1850 թ. փետր. 6-ից գործի գլուխ կանգնած նորից սկսեց իւր թերթի հրատարակութիւնը: Նիւթական սուղ միջոցները թոյլ չը տուին «Հայաստան» ին յաւիտեան դադարումից ազատ մնալու: 1852 թ. յուլիսի 21-ին «Հայաստանի» համարը վերջինն եղաւ:

Թ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

Կոստանդնուպոլսի «Հայաստանը» եւ մեր ազգիւրները:

ա. . . . Հայաստանի լեզուն պարզ եւ անզարդ աշխարհաբար է(ր). ինչպէս սովոր էր ընդհանրապէս գրել Չամուրճեանց . . . Հայաստանն ալ մեր լրագրաց շարքին մէջ պատուաւոր տեղ մը կը գրուէ, թէ արտաքին եւ թէ ներքին արժանաւորութեան կողմանէ . . . «

„Հանդ. Ամսօրեայ“ 1888 էջ 187.

բ. „1846 թ. յուլիսի 1. Հայաստան անուն օրագիրն սկսաւ 'ի Կ. Պոլիս“

„Պատմ. Հայոց“ Պերպերեան էջ 546.

գ. „ . . . Ազգային ձեռնահաս իշխանութիւնը 1846-ին սահմանեց որ „Հայաստան“ անունով շարաթական լրագրի մը հրատարակութեան ձեռք գարնուի. եւ խմագիրք որոշուեցան երկու ուսումնական անձինք. . . Իր (Չամուրճեանի) բանիբուն հմտութեան ազգանուէր փութոյն եւ խաղաղասէջ ոգւոյն հաւաստիքն տուաւ այն երկար տարիներն. . . «

„Պատմ. Հայ. դպր.“ էջ 478.

դ. „ . . . Հայաստան 1846 Պր. Յ. Չամուրճեան“

„Գասագ. Հայ-ազգ. պատմ.“ էջ 339.


ե. „ . . . Այս թերթը հրատարակուեց պատերազմաբարանի ' . . . ութեամբ եւ իբր ճիշտ կրօնական (') օրգան ձգտում էր կուռել բողոքականութեան դէմ ուր արդէն հաստատուել էր Հռոմում եւ ունէր իւր ասանձին թերթը . . . «

„Հայոց արդի մատենադր. (ձեռագ.)

զ. „ . . . Որ ջերմ պաշտպան հանգիսացաւ

հայոց շահերին ընդդէմ բողոքականաց եւ ազգային վարչութեան համակրութիւնը գրաւելով պատրիարքարանի կիսապաշտօնական գործիքը դարձաւ. . . Այս անգամ պատուելին (Չամուրճ.) բողոքականաց դէմ պատերազմելով այն աստիճան յափշտակուեցաւ, որ սկսեց կաթոլիկութիւն քարոզել (") : Չմիւռնիայի „Արշալոյսը“ երեւան հանեց Չամուրճեանի կաթոլիկութիւնը (") եւ այնքան հարուածեց որ „Հայաստանը“ պարտաւորեցաւ դադարել 1850 (") վերջերին:

„Արձագանք“ 1882. № 21 Ա. Եր.



20.

Ե Ի Ր Ո Պ Ա ^{1.)}

ԼՐԱԳԻՐ ԵԱՐԱԹԱԿԱՆ

ՉՈՂՈՂԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

Վ ի է ն ն ա (Աւստրիա) 1847—1857.

Հրատարակուում էր՝ կիրակի օրերը. Ի մ բ ա գ Ր Ո Ւ Թ Ե ա մ բ՝ Միխիթարեան Միաբանութեան:

Միխիթարեան տպարան.

Գ ի ր ք ր (թերթ) միածալ մէկ թուղթ 4 էջ. Թ ու ղ թ ը եւ տիպը՝ մաքուր.

Բ ա ժ ա ն օրգագիւնը՝ տարեկան 10 Ֆիոր. Լ Ե զ ու ն ո ճ ը՝ } „ . . . Մէջը բանասէր մարդու մը մտածութեան արժանի Ուղղագրութ. } զանազան խօսքի կամ . . . «

Ծրագիրը՝ (2)

Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն .— Եւրոպայի տէրութեանց կարգերուն եւ սահմանադրութիւններուն, խորհրդարանաց մէջ եղած խնդիրներուն եւ աստենաբանութիւններուն, դեսպանական խօսակցութիւններուն եւ ուրիշ քաղաքական դէպքերուն վրայ կարելի եղածին չափ անբողջ ու խիտ տեսութիւն մը. . . »

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն .— Գիտական, ուսումնական, հնագիտական յօդուածներ, մատենախօսական-քննական, ճանապարհորդական, տեղադրական կենսագրական, պատմական

լեզուագիտական, արուեստագիտական, բանաստեղծական, սոցալիստ տեսութիւններ, ռամկական երգեր, տաղեր եւ այլն:



Իէննայի Միսիթարեան վարդապետներին բարի նախանշը դրոշմը, որ իւրեանք էլ լեռ չը մնան Վենետիկի միաբանութիւնից որ արդէն լրացրել էին «Բողոք»

մովէպի» հրատարակութեան քառամեայ տարեկիցը:

Վիէննայի միաբանութեան էլ նիւթական միջոցները ապահով էին. իսկ մի քաղաքական-ուսումնական հանդէս հրատարարակելն աւելորդ չէր: Միաբանութեան սեփական ապարանից «Ներոպա» շաբաթաթերթի առաջին համարը լոյս տեսաւ 1847-ին, ապրիլի 20-ին, «փորձի համար» բաժանորդագրութիւնից դուրս: Իսկ կանոնաւոր հրատարակութիւնը «Ներոպան» սկսեց նոյն թուականի յունիսի 17—29 (Ն.Տ.)-ին:

Գիտնական-ուսումնական հայերէն հանդէսների մէջ որ քիչ ենք ունեցել, «Ներոպան» իւր ժամանակին նշանաւոր էր՝ եւ անուամ էր այն, ինչ որ այժմ անուամ են Վենետիկի «Բազմավէպը» (ոչ քաղաքականը) եւ Վիէննայի «Հանդէսը»:

«Ներոպա» հանդիսի լոյս աշխարհ գալուն Վիէննայի Միսիթարեան հայրերը բարի նախանշի թելագրութիւնից զատ, իսկապէս պարտական են ժամանակակից յայտնի քաղաքագէտ վսեմ. Յակովբ Չելէպի Տիւզեանին, որ «Բազմավէպի» լոյս աշխարհ

գալու տարուանից՝ 1843-ից, յորդորում եւ ստիպում էր նորանց հրատարակել մի շաբաթաթերթ, որ բացի քաղաքականը ունենայ նաեւ «բանասիրական եւ ուսումնական մասը պահանջեալ կատարելութիւններով եւ աս ամեն բաներուն վրայ խօսի ծանրութեամբ, հանգարաութեամբ եւ կարելի եղածին չափ մաքուր ոճով (3) . . . »

«Ներոպա» շաբաթական լրագիրը իւր հրատարակութեամբ կանոնաւորապէս տեսնել մէկ տարի տեւեց, այսինքն մինչեւ 1858-թուականը, բազմաթիւ հետաքրքրական նիւթեր տալով իւր ընթերցողներին: 1857-ի վերջերին եթէ չասենք դադարեց «Ներոպա» քաղաքական եւ ուսումնական լրագիրը, պէտք է ասենք որ դիրքը, բովանդակութիւնը, նպատակը փոխեց, անունը միայն թողնելով 1858 թուականի սկզբից սկսեց հրատարակուել այլ ծրագրով (4):

Թ Ա Ն Օ Թ Ա Ռ Թ Ա Ն Ն Ե Ր .

1.) «Ներոպա» լրագրի մասին մեր աղբիւրներից շատերը՝ ինչպէս եւ հայր Գալէմքեարեանի տեսութեան մէջ, այս լրագրին վերաբերեալ մասը գրուած են ոչ առանձին առանձին, այլ միացրած երկու «Ներոպան»։ Թէեւ նպատակը, ծրագիրը փոփոխուելով, արդէն դառնում է այլ հրատարակութիւն. թէկուզ քաղաքը, խմբագրութիւնը, տպարանը անփոփոխ մնան: «Ներոպայի» մասին մեր աղբիւրները.

ա. «Ներոպա լրագիր շաբաթական քաղաքական եւ ուսումնական, աշխատասիրեալ է Միսիթ. Միաբանից, Վիէննա պաշտպան սուրբ Աստուածածնի վտնքը. 1847-1857.

«Մատենադ. հայկակ.» Չարք. էջ 187.

բ. «Որչափ ալ «Հայաստան» իր աշխոյժ գործունէութեամբն՝ լրագրական կարեւոր ծառայութիւն մը կը մատուցանէր, բայց բուն եւրոպական ոճով եւ հմտութեամբ գրուած լրագրի մը դեռ կարօտ կրնար սեպուիլ ապզը: Խոհական եւ հեռապես անձինք՝ Վիէննայի Միսիթարեան հարց ծանօթ աշխատասիրութեան կը սպասէին այնպիսի անձնանուիրութեան մը. . . »

«Հանդ. Ամսօրեայ» 1888. էջ 216.

Համեստութեան գեղեցիկ շրջանակից դուրս կը տեսնենք վերոյգրեալ տողերը, որոնք պատկանում են Գրիգ. վրդ. Գալէմբեարեանին, որ ինքը Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնից է եւ որ ներթափան ծով դրութեան մէջ, Սերոպայի մի մայրաքաղաքում մի ոչ հասարակական լրագիր շարաթաթերթ հրատարակելը «Խոհական ու հեռատես» Մխիթ. հայրերի կողմից «անձնանուէրութիւն» է ճանաչում: Հապա թիւ . . . նուիրութիւն է այն անձանց կողմից, որոնք կովկասում են հրատարակում սուգ միջոցներով իւրեանց լրագիրը, այն էլ ոչ շարաթաթերթ այլ օրաթերթ:

գ. «. . . Կ. Պոլսի կրթութեամբ դասակարգը յանձնում է Վիէննայի Մխիթարեաններին բաւականին խոշոր գումար, յանձնարարելով որ նորանք հրատարակեն ժամանակին յարմար մի հանդէս: Այդ հանդէսը կոչուում էր «Սերոպա», որ երկար հրատարակութիւնից յետոյ, 1858 թուականին եղաւ Մխիթարեանների սեփական հրատարակութիւնը. . . »

«Հայկակ. մատենադ.» Ա. Լ. էջ 150.
[. Konstantinopeler Armenier den Wiener Mechitaristen eine bedeutende Geldsumme mit dem Auftrage überwiesen, eine ganz den Zeitforderungen entsprechende Monatsschrift herauszugeben. Dieselbe trug den Namen „Europa“ und wurde 1858 nach mehrjährigem Bestehen in ein Familienblatt umgewandelt. . . .]

«Arm. Bibl.» II. A. L. էջ 150.
դ. «. . . Այսպիսի փափաքի մը յօժարափոյթ օժանդակեցին Մխիթարեանք ու 1847 տարուոյն սկսան շարաթափան Թերթ մը հրատարակել. . . Սերոպական արուեստից կատարելութիւն, լրոց ճոխութիւն, բանասիրական եւ ուսումնական հատուածոց գիտնական առատութիւն. . . »

«Պատմ. հայ. դպր.» էջ 479.
ե. «. . . պիտի յիշենք նաեւ Վիէննայի Մխիթարեանց ձեռքով 1847 թիւ սկսած «Սերոպա» անունով շարաթաթերթը, որ այն ժամանակը եղած բոլոր հայ Թերթերից ամենաբարձրին էր Թէ քաղաքական լուրերի առատութեամբ եւ Թէ ճիշտ բանասիրական մասով. . . »

«Արձագանք» 1882. № 21 Ա. Ե.

գ. «. . . Տպագրութիւն («Սերոպայի») ըստ ամենայն մասանց եւ գեղեցիկ յոյժ զարդարուն են, միանգամայն եւ վայելչական

գի յանթ առնուլ փորագրողին զզարգս եւրոպական վայելչագրութեան՝ անվթար պահեաց եւ զսեփական ձեւն միայն զոր բազումք յարգի փորագրողաց յաջաց կորուսանեն ի նմանակ դէպս. . . »

«Բանասէր» 1849. № 38.

է. «. . . Ըստ բարեմաղթութեան մերում տեսանեմք զայս պատուական լրագիր ծայրացեալ արդեան տեղեկութեամբք Սերոպա լի ազգային հնութեամբ օրպէս եւ բնականօք պերճ. . . »

«Ազգասէր» 1850 թ. № 45. (բ.)

ը. «Վիէննայի Մխիթարեան հարց «Սերոպա» շարաթափան հանդէսն (1847)—1858.»

«Պատմ. հայ. մատեն.» Եղ. վ. Գուր.

Թ. «. . . Անունից պէտք է եզրակացնել նպատակն ու բովանդակութիւնը: Կ. Պոլսում (հայերը) այդ ժամանակ բաւական բարձր պաշտօնական դիրքեր ունէին, նոցա համար շատ ցանկալի էր շարունակ տեղեկութիւններ ստանալ եւրոպական քաղաքականութիւնից եւ որ գլխաւորն է ճիշտ լինէին. . . »

«Հայոց արդի մատեն.» (ձեռ.)

ժ. «. . . Իսկ Սերոպայի 1850 թ. թիւ. 28-ն, որ նոյնպէս հնագոյն լրագրաց պատմութիւն մըն է, խաւարել չ'կարողացանք վասն զի «Սերոպայի» միայն քանի մ'օրինակ ունիմք ամբողջական եւ կազմուած. . . »

«Հանդ. Ամսօրէի» խմբագրութ. (նամկ.)

ժա. «Սերոպա լրագիր 1847 Վիէննա»

«Գաս. հայ-ազգ. պատմ.» էջ 338.

2.) «Սերոպայի» բոլոր տարիներու «ազգային» յօդուածների ցանկը տպագրուած է «Հանդէս Ամսօրեայի» մէջ.

3.) Տես՝ «Սերոպա» 1850 թ. № 37

4.) Տես՝ գրքիս մէջ լրագիր թիւ 47.

21.

ՅԱՅՏԱՐԱՐ ԳԻՐ ԼՐՈՑ^{1.)}

ՄԵՄԻ ՏԵՐԱԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ.

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1847-1847.
Հ ր տ տ ար ա կ ու ս լ մ է ր
Խ մ բ տ գ ի ր՝
Տ պ ա ր ա ն՝

Դիրքը՝ (Թերթ) միածալ. 4 էջ-երկտիւն-
եան: . . .



սմանեան կառավարու-
թեան կիսապաշտօնա-
կան «Թագվիմի Վագա-
յի» տաճկերէն լրագիրը
որ Կոստանդնուպոլի-
սում 40-ական թուա-
կանների վերջի կիսին
դեռ եւս գոյութիւն
ունէր եւ 30-ական թուականների սկիզբներին
«Լրոյ Դիր» անունով թարգմանուում էր եւ
տպագրուում Հայ լեզուով, 1847 թուական-
ին էլ որպէս շաբաթաթերթ պարբերաբար
լոյս էր տեսնում «Յայտարար» Դիր լրոյ կոչ-
ուող անունով: Մեծի տէրութեանն Օսմա-
նեան լրոյ գիրը իւր նախորդից երկարատեւ
չը կարողացաւ լինել. մի քանի համարներ
միայն հրատարակուելով նոյն թուականի
մէջ դադարուեց:

ԹՆՅՈՒԹՈՒԹՅՆՆԵՐ.

- 1.) «Յայտարարի» մասին մեր աղբիւրները
գրում են միայն՝
ա. «Յայտարար լրագիր (լրոյ գիր) 1847 թ.
Պոլիս»
 "Դաս. հայ-ազգ. պատմ." էջ 340.
- բ. " . . . 1847-ին Յայտարար լրագիր մեծի
Տէրութեանն օսմանեան, անուամբ դեռ
կը շարունակուէր. բայց թէ երբ դադարե-
ցաւ, մեր ունեցած անկատար ատաղձն չի
գուշակել:"
 "Հանդ. Ամսօր." 1889 էջ 58.
- գ. "1847 թուին այնտեղ (Կ. Պոլսում) ըս-
կուեց "Յայտարար" անունով մի լրա-
գիր. որ գրամական օգնութիւն չունենա-
լով (") շուտով դադարեց . . ."

„Արձազանք“ 1882. № 21 Ա. Ե.
գ. „Յայտարար գիր լրոյ“ 1841 (՞) նորից
լոյս տեսաւ . . . “
„Հայոց արդի մատեն.“ (ձեռագ.)
Մեր միւս աղբիւրները լուռ են այս մասին:

22.

**ՍՈՒՐՀԱՆԴԱԿ
Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ե Ա Ն ¹⁾**

ԼՐՈՒԿ ՏԵՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՐՆԵԱՆ ^{2.)}

(Շաբաթաթերթ)

Կոստանդնուպոլիս (Տաճկ.) 1847-1850
Հրատարակուում էր՝
Ի մբարգր.
Տպարան՝ Պօղոսի Արապեան Ապուլչեխցոյ:
Դիրքը (Թերթ) մեծագիր 4 էջ. երեքտիւն.
Թուղթը եւ տիպը՝ միջակ: . . .



Սուրհանգակ Բիւզանդեան
կոչուող շաբաթաթեր-
թը մի նորութիւն չէր,
այլ Մեծի Տէրութեանն
Օսմանեան պաշտօնական
«Թագվիմի Վագայի»
լրագրի նիւթերի հա-
յերէն թարգմանու-
թիւնները՝ որ նախ «Լրոյ Դիր» յետոյ «Յայ-
տարար» եւ վերջը «Սուրհանգակ» դարձաւ:
Բիւզանդեան «Սուրհանգակ»ում միշտ աը-
պագրուում էր քաղաքական հատ ու կտոր
տեղեկութիւններ, լուրեր, եւ այլն: Իւր վեր-
ջին օրերում «Սուրհանգակ Բիւզանդեան»
իւր էջերում տեղաւորում էր եւ Եւրոպա-

կան լրագիրներից թարգմանուած նիւթեր ուսումնական եւ տնտեսական բովանդակութեամբ: Սակայն մեր մամուլի պատմութեան մէջ որպէս ազգային հասարակական թերթ ճանաչուելու պատիւը չունեցաւ եւ համակրողներ ու խրախուսողներ չունենալով, քաջ եկաւ մինչեւ 1850 թուականը եւ այդ տարուայ մէջ դադարուեց:

ԹՈՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Սուրհանդակ Բիւզանդեան» եւ մեր աղբիւրները—
- ա. «Լրոյ գիրն» այլ եւ այլ կերպարանաց սակ մտնելէն ու ելլելէն ետեւ, 1846-ին վերստին հրատարակուեցաւ. . . Ժամանակակից ազգային լրագրաց համակրութենէն զուրկ՝ ապրեցաւ յանձնօթս մինչեւ 1850. «Հանդէս Ամսօր.» 1888. էջ 219.
 - բ. «Սուրհանդակ Բիւզանդեան» տաւ լրոյ լրագիրն է(բ) որ գ. անգամ 1847—1850 հրատարակուեց եւ վերջնականապէս դադարուեց. . . «Հայոց արդի մատենագր» (ձեռագ.)
 - գ. «. . . 1848 (՝)-ին քաղաքական նոր լրագրի մալ հրատարակութիւնն եղաւ 'ի Պոլիս եւ էր «Սուրհանդակ Բիւզանդեան» . . . Երկրորդ ու երրորդ անգամ մալ երեւեցաւ համառօտ միջոցներով . . . «Պատմ. հայ. դպր» էջ 480.
 - դ. «Սուրհանդակ (Բիւզանդեան) 1848» «Իաս. հայ-ազգ. պատմ.» էջ 340
 - ե. «. . . Այսպիսի վիճակ ունեցաւ նաեւ նոյն տարին սկսուած տէրութեան կիսապաշտօնական շարթաղիւրը «Սուրհանդակ Բիւզանդեան» անունով «Արձագանք» 1882 № 21. Ա. Ե.
- 2.) Հայր Զարրանալեան գրել է «Լրագիր Օսմանեան պետութեան»:

23.

ԲԱՆԱՍԷՐ^{1.)}

ՕՐԱԳԻՐ

ՔԵՂԵՔԵՂԵՆ ԲՆԵՒՅՑԵՂԵՆ ԵՒ ԸՌԵՒՅՐՈՒԿԵՆ

(Տասնօրեայ)

Մ ա դ ր ա ս (Հնդկաստան) 1848—1849.
 Հ ր ա տ ա ր ա կ ու ու մ էր՝ ամսի 10, 20, 30.
 (Տպարան) Ասիատիկ Վիճագրատուն.
 Խ մ բ ա գ ի Ր՝ Ս. Պ. Յովհաննէս.
 Գ ի Ր ք Ր՝ (Թերթ) միածալ⁴ էջ-երկուսնեան.
 Թ ու Ղ թ Ր եւ տ ի պ Ր՝ բաւարար.
 Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն Ր՝
 Լ ե զ ու ն ո ճ Ր } «Ըստ այնմ եթէ համոզիք
 Ու Ղ ղ ա գ Ր ու թ . } մեր 'ի տես ընծային 'ի թուղ-
 Ծ Ր ա գ ի Ր Ր՝ } թրս նորա, եւ որ երեւին . . .»

ԳՐԱԳԻՐՈՒԹՅԱՆ—Տեղական եւ այլ քաղաքների ազգային լուրեր, տեղեկութիւններ եւ այլն:

ԳՐԱԳԻՐՈՒԹՅԱՆ } Այս մասերը «Բանասէր» մէջ
 ԱՌԵՒՅՐՈՒԿԱՆ } սպագրուում էր անգղիական
 լրագիրներից թարգմանուած:



Եսրովպ Թաղիաթեանց սարկաւազի ձեռքով հիմնուած Կալկաթայի «Ազգասէր» լրագիրը իւր քառամեայ տարեշրջանն էր մտնում, երբ Հնդկաստանի հայ գաղթականութեան մի ուրիշ կենտրոնում, Մադրասում, որ հայ լրագրութեան նախահօր ծննդավայրն է եղել, սկսուեց «Բանասէր» տասնօրեայ հանդէսը՝ 1848 թուական յունիսի 24-ից Ս. Յովհաննու ձեռնարկութեամբ:

«Բանասէրը» իւր համայնակրացի «Ազգասէրի» ընդունելութիւնը չը գտաւ, բայց եւ այնպէս իւր սակաւաթիւ բաժանորդներով մի առժամանակ կարողացաւ գոյութիւնը պահպանել:

Քաղաքական մասի մէջ «Բանասէրը» կարելի է ասել գերազանց էր իւր նախորդներից. բայց «գրական» եւ «առեւտրական» բաժինները շատ ցանցառ էին ու աննշան:

«Բանասէր», որպէս ժամանակակից ազատամիտ լրագիր, իւր սահմանափակ ծրագրում էլ անխնայ հարուածում էր ամեն մի պատահողի, աջ եւ ահեակ չը նայելով: Բաժանորդները տեսնելով որ «Բանասէրը» իւր անսանձ խօսքերով մինչեւ անգամ շեղուում է մամուլի բարձր նշանակութիւնը պահելուց, հետզհետէ թողին հեռացան:

«Բանասէր» ստիպուեցաւ դադարելու:

Խմբագիր պ. Յովհաննէս իւր հանդիսի դադարմանից մի քանի օր առաջ դեռ եւս յոյս ու քաջալերութիւն էր խնդրում ու սպասում հայ հասարակութիւնից՝ «... Բայց եւ այնպէս այդ ամենայն անյաջող ելք վատակոցս ոչինչ զարհուրեցուցանեն զմեզ, յաչքս մեր խրտուելիքն այդօքիկ որք երկեցուցանեն զմակտի միայն եւ զանբանս 'ի կենդանեաց: Այլ մեր սրտապնդեալ 'ի քաջալերութենէ ճշմարտապէս եւ ուղղագատ բարեկամաց հանապազորդեցուցուկ յերկս մեր աներկիւղ... 2)»

Բայց տեսնելով որ այլեւս ուշ է եւ հասարակութեան լուրջ եւ մեծամասնութիւնը երես դարձրեց եւ ստորագրուողների թիւը մի-երկու տասնեակի իջաւ, երկու համար էլ դուրս տալով պ. Յովհան վերջին համարում յայտնեց որ «Լրագիրս դադարեցաւ 'ի 15-յունիս ամսոյ (1849 թ.) ի կարօտութենէ քաջալերութեան... 3)»⁴ Նշանակէ «Բանասէրի» կեանքը տեւեց հազիւ մի տարի:

ԹՆՆՕԹՈՒԹՈՒՆՆԵՐ.

- 1.) Մեր աղբիւրները «Բանասէրի» մասին—
 - ա. «... 1848-ին հնդկաց Մադրաս քաղաքին մէջ լրագրական թերթ մ'ալ սկսաւ հրատարակուել խմբագրութեամբ Ս. Պ. Յովհաննու: Բանասէր... վիմագիր պզտի թերթ մը որ աւելի իրենց ազգային տեղական լրերովն զբաղուելով ու սուր քննադատութեամբն եւ ոճով անձնականութեանց վիրաւորելով, ոչ երկար կեանք եւ ոչ ալ ընդունելութիւն ունեցաւ...»
 - բ. «Պատմ. հայ. դպր.» Բ. էջ 481.
 - գ. «Բանասէր» Մադրասս դադարեցաւ վասնէր—Վասն զի անաչառ էին բանք նորին եւ ամենեքեանք անսատարութեամբ լքին թողին մեռանել եւ ոչնչանալ...»
 - դ. «Ուսումնասէր» 1851. Թիւ 43.
 - ե. «... անաչառ եւ սրալեզու խմբագիրն իւր թերթը կը հրատարակէր տասն օրը ամբամ մը... եւ գլխաւոր գործն էր նոյն տեղեաց երեւելի ազգայնոց՝ բայց մանաւանդ եկեղեցական դասուն պարսաւելի կողմերը մերկացնել, դատել եւ դատափետել աներկիւղ եւ անաչառ...»
 - զ. «Հանդ. Ամսօրեայ» 1888. էջ 219.
 - է. «Որքան համակրելի էր «Ազգասէրը», այնքան վատ ընդունելութիւն գտաւ... «Բանասէր» թերթիկը. բացի այն որ սա մեր մէջ աւազին լրագիրն էր վիմագրած, նա եւ անդրանիկ կարելի է համարել իւր բռնած ուղղութեամբը... «Բանասէրի» խմբագիրը անխնայ հարուածում էր այս եւ այն անձը եւ երբեմն այնպիսի գործերի վերայ էր խօսում որ միանգամայն մամուլի սրբազան նպատակից դուրս են...»
 - զ. «Արձագանք» 1882 № 21. Ա. Ե.
 - է. «... լեզուն գրաբար. թերթի գլխաւոր նպատակն էր՝ երեւելի ազգայնոց, բայց մանաւանդ եկեղեցականների պարսաւելի կողմերը մերկացնել... բաժանորդները չուզենալով իրենց փողով յանգիմանութիւն գնել, հետզհետէ յետ քաշուեցին...»
 - զ. «Հայոց արդի մատեն.» (ձեռագ.)
 - զ. «Բանասէր 1848. Մադրաս»
 - Դաս. հայ-ազգ. պատմ.» էջ 338.
- 2.) Տես՝ «Բանասէր» 1849. Թիւ 38.
- 3.) Տես՝ «Ուսումնասէր» 1851. Թիւ 43.
- 4.) Մեր աղբիւրներից մի քանիսը գրել են որ «Բանասէրը» մի տարի եւ չորս ամիս տեւեց,

բայց սխալուում են, «Բանասէրի» հրատարակութիւնը տեւեց ուզեղ մի տարեի, դեռ ինն օր էլ պակաս—սկսուելով 1848 թուականի յունիսի 24-ից, դադարուեց հետեւեալ թուականի յունիսի 15-ին:

24.

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ^{1.)}

ԼՐԱԳԻՒՄ

ՔՐՈՂԱԳՐՈՒՄ ԳՐԱԳԻՐՈՒՄ ԵՒ ԱՌԵՒՅՐՈՒՄ

(Երկշաբաթաթերթ)

Սինկափոր (Մառկիւ Քերկի 2.) 1849-1853 Հրատարակուում էր՝ ամսի 1, 15.

Խմբագիր՝ Գրիգոր Գ. Գալստանեան. Վիմագարան պ. Ա. Սէթի. տպ. «Արփի» Դիւրքը (թերթ) միաժալ մի թերթ 4 էջ-երկսիւնեան:

Թուղթը եւ տիպը՝ բաւարար. Բաժանորդագրիւնը՝ Լեզուն ոճը՝ «Ոմանք հրատարեցան ի բաժանորդութենէ՛ Ուսումնասէրին որոց զպատճառն...»

Ծրագիրը՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ—Տեղական եւ մերձակայ հայրենակ քաղաքներից լուրեր, յօդուածներ եւ այլն:

ԳՐԱԳԻՐՈՒՄ—Քննական յօդուածներ, նամակներ եւ այլն:

ԱՌԵՒՅՐՈՒՄ—Լուրեր նոր տեղեկութիւններ, Հնդկաստանի վաճառականութիւն, նաւերի մասին, առեւտրական վիճակագրութիւն, բորսա եւ այլն:

Յիսունական թուականներին կազմած վիճակագրութեանը նայելով՝ երբ «Ուսումնասէր» լոյս աշխարհ եկաւ, Սինկափորում հայ գաղութը կազմում էր միայն 50 հոգուց որոնց 30 այր, 7 կին, 5 տղայ եւ 8 տղջիկ էին:

Թերթի խմբագիր Գալստանեան բաւական չը համարելով Հնդկաստանի «Ազգասէրի» եւ «Բանասէրի» գոյութիւնը, ինքն էլ կամեցաւ Սինկափորում 1849 թուականի յունիսի 1-ից «Ուսումնասէր» անունով մի «գրագիտական քաղաքական եւ առեւտրական» թերթ հրատարակել:

«Ուսումնասէր» կիսամսեան, հայր Գալէմքարեանի ասելով, ունէր ընդամենը 30 բաժանորդ՝ որոնցից 7-ը Սինկափորում: Բայց այդ աղքատիկ շրջանում էլ կարողացաւ «Ուսումնասէր» իւր գոյութիւնը պահել չորս տարուայ չափ:

«Ուսումնասէր» ինչպէս որ «Բանասէրը», լոյս էր տեսնում վիմագրութեամբ, վերջինս իւր ճակատին ցոյց էր տալիս Սինկափորի վիմատիպ պատկերը: Գ. Գալստանեան իւր երկշաբաթաթերթը տպագրել էր տալիս «Արփի վիմագարանի պր. Պ. Ա. Սէթի»: Իսկ 1857 դեկտ. 27-ից սկսած արդէն տպագրուում էր իւր՝ «Մասիս» սեփական վիմագրատան մէջ:

«Ուսումնասէրի» պէս մի թերթի գոյութիւնը իւր ժամանակին ոչ թէ աւելորդ, այլ եւ պիտանի էր: Խմբագիր Գալստանեան իւր սակաւաթիւ բաժանորդներին գոհացընում էր քաղաքական, վաճառականական թարմ նիւթերով. սակայն ցաւելով պէտք է ասել, որ խմբագիրն այնքան ուսումնասէր չէր, որքան ստակասէր կամ դրամասէր. որովհետեւ երբ լսեց որ Աւստրալիայի Մէլպէօուն քաղաքի մօտ ոսկու հանքեր են գտնուած եւ այնտեղ գնացողները հարստութեան տէր են դարձել, սկսեց քարոզել իւր «Ուսումնասէր» (՝) թերթի մէջ որ հայերը գաղթեն դէպի Աւստրալիա եւ տիրանան այդ նոր դուրս եկած ոսկու հանքերին: Բայց երբ տեսաւ որ իւր այդ առաջարկութեանն ականջ դնող չը կայ, 1853 թուականի մայիսի 27-ի համարի մէջ գրեց թէ ոչ ոք չի կամենում «հետեւել մերոցս ազգասէր եւ բարեմիտ յորգորականաց... ուստի եւ մեք ՚ի սէր ազգիս եւ յառաջադիմու-

Թեան նորին՝ յուսացնալ ՚ի խնամս եւ յողորմութեան նախախնամողին մերոյ ստանձնեցանք զայս դժուարին ճանապարհորդութիւնս: Այսպէս մեր «Ուսումնասէր» պարբերականի ոչ ուսումնասէր խմբագիրը Թողնելով իւր դործը, գրական գործունէութիւնից լաւ համարեց վաճառականութիւնը՝ եւ նա ապագայում գուցէ ամենահարուստ անձերից մէկը դարձաւ ՚ի սէր ազգի եւ յառաջադիմութեան» (3)

ԹՆՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Ուսումնասէր» եւ մեր աղբիւրները—
 - ա. «Ազգասէրի» եւ «Բանասէրի» դժբախտ ելքն խոհեմութիւն սորվեցուցած էր «Ուսումնասէր»-ին բայց միեւնոյն «ազատական» հետեւող էր ինքն ալ, ոճոյ չափաւորութիւն պահել կրնալով . . . «
 «Հանդ. Ամսօր.» 1889 էջ 4.
 - բ. «Այն ժամանակ Սինկափորի սակաւութիւ հայք կամեցան իրանց լրագիրը ունենալ: 1849 թուից սկսուեցաւ այդտեղ «Ուսումնասէր» անունով «քաղաքական գրադատական եւ առեւտրական» թերթը, գրաբար լեզուով, երկու շաբաթը մի անգամ. . . «
 «Արձագանք» 1882 թ. № 21. Ա. Ն.
 - գ. «. . . Գրէթէ անմիջապէս յաջորդեց «Ուսումնասէր» . . . կոչուածը, Ասիկայ ալ Հնդկաստանի Սինկափոր քաղաքին մէջ եւ տեղւոյն սակաւութիւ ազգայնոց եռանդմամբն սկսաւ հրատարակուել նախորդին պէս վիճաբար, պարզ գրաբար լեզուով, ու երբեմն նաեւ տեղւոյն աշխարհիկ բարբառը գործածելով . . . «
 «Պատմ. հայ. դպրութ.» բ. էջ 481.
 - դ. «Ուսումնասէր 1849. Սինկափոր վիմ «
 «Իսս. հայ—ազգ. պատմ.» էջ 340.
 - ե. «Նրկշարաթաթերթ» Սինկափոր» (1849) 49—53 Փալստ(ան)եան Հնդկաստան . . . ուղղութիւնը ազատական էր, ձգտում էր խարազանել «
 «Հայոց արդի մատին.» (ձեռագ.)
 - զ. «Վերջապէս Սինկափոր մի քանի տարի առաջ Հնդկաստանից տեղափոխուող հայ գաղութը իւր հետ մտցրեց եւ պարբերական «Ուսումնասէր» հրատարակութիւնը, որը դուրս էր գալիս ամիսը երկու անգամ

Վե՞տա՞իդ տետրակներով երկսինեան. . . «
 «Այժմեան հայերը» Իրւօր. էջ 82.

[«. . . Наконецъ въ Сингапурѣ, перешедшая туда нѣсколько лѣтъ тому изъ Индіи армянская колонія внесла съ собою періодическое изданіе: *Ուսումնասէր* У с с у м н а с с е р ь (другъ просвѣщенія), выходящее два раза въ мѣсяцъ литографированными тетрадами въ два столбца . . . «]

«Нынѣшніе Арм.» էջ 82.

- 2.) Հ. Գալէմբերեան գրել է Հնդկաստան.
- 3.) Տես՝ «Ուսումնասէր» 1850 թիւ 16.
- 4.) Տես՝ «Հանդ. Ամսօր.» 1889. էջ 5.

25.

ՕՃԱՆԱՍՓՈՒԵԱՆ^{1.)}

Բուժբա (Հնդկաստան) 184¹—184².



Իստ դժուար է իմանալ թէ ի՞նչ ծագումից եւ ո՞րտեղից է վերցրած այս հայ պարբերականի անունը, եւ ճիշտ ո՞ր թուականին է սկսել իւր հրատարակութիւնը, այդ մասին մեծ մասամբ մեր աղբիւրները լռում են: Այսքանը միայն մեզ յայտնի է, որ «Օճանասփոեան» հրատարակուելիս է եղել Հնդկաստանի Բուժբա քաղաքում, 40-ական թուականների վերջերին, «Ազգասէր» թերթի կենդանութեան միջոցին. մօտաւորապէս 1847—49, 50 թուականներին: Իւր աննշան ու կարճ կեանքով անյայտ է մնացել մեր մամուլի պատմութեան մէջ . . . :

ԺԱՆՍԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1.) Աղբիւրներ կան միայն՝

ա. „... Եղեն այդ լրագիրք ազգին մերոյ՝ Էնդիկս, որպիսիք են... Օճանասփռեան լրագիր Բումպայեայ...“

„Ազգասէր“ (1850) Թիւ 66.

բ. „Այս հնդկահայ թերթն որ հոս յառաջ կը բերուին իրը „Ազգասէրէ“ յառաջ վերջացած, բայց պէտք չէ իմանալ իրը „Ազգասէրէ“ յառաջ հրատարակուած“

„Հանգ. Ամսօր.“ 1888. էջ 108.

Հայր Գալէմբարեան „Հանգէս Ամսօրեայի“ մէջ իւր „պատմութեան“ մի ծանօթութեան տակ խօսում է որ „Օճանասփռեան“ հայ պարբերականի մասին ինքը տեղեկութիւններ ունի, բայց կարգը չը խանգարուելու համար, կը գրէ իւր տեսութեան վերջը: Բայց ցաւօք սրտի մինչեւ այժմ „Հանգէս“ ներքի մէջ այդ յղուածների շարունակութիւնը չի երեւում:



26.

ԱՍՏՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ^{1.)}



այստանի անբախտ ու անփայլ «Աստղը» որ երկրում է եղել որ երեւի մի ամիս էլ չը տեսելով, կամ չը փայլելով հանդէլ կորչել է ոչ մի կայծ,

ոչ մի հետք չը թողնելով...



Է.

1850-1860.

(ՏՈՒՆԵՐԵԿ)

25 Լ Ր Ա Գ Ի Ր.

Մեր լրագրութեան գործն հետզհետէ սրբու-
 ունեց պանազան կողմեր: Ռուսաստանի, Ֆրանսիայի
 մայրաքաղաքներում, Հայաստանի կենտրոններում
 սկսուեց հայ լրագրութեան գործը: Իսկ Կոստանդ-
 նուպոլսում եւ Տփլիսում հետզհետէ ընդարձակ-
 ուում էր: Այս շրջանում հայ լրագրութեան աս-
 պարէզի մէջ նշանաւոր գործողներից են՝ Մկրտիչ
 վարդապետ Խրիմեան, Կարապետ Իւթիւճեան,
 Գարրիէլ քահանայ Պատկանեան, Մսեր մազիս-
 տրոս Մսերեանց, Ատեփան քահանայ Մանդին-
 եանց, Գարրիէլ եպիսկոպոս Այուզազի, Ատե-
 փաննոս Նազարեան, Յարութիւն Սուաճեան . . .

27.

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Է Ր ^{1.)}

Լ Ր Ա Գ Ի Ր

ՔՆԴՂՔՆԿՈՆ ՈՁԳՈՅԻՆ ԲՈՆՈՅԻՐԵԿՆ.

(Երկշաբաթաթերթ)

Ն ի կ ո մ ի դ ի ա (Տաճկաստան) 1850—1853
 Հ ռ ա տ ա ղ ա կ ու ու մ է Ր
 Խ մ բ ա գ ի Ր՝ Աբրահամ Մուրատեան.
 Տ ա ղ ա Ր ա ն «Հայրենասէրի»
 Դ ի Ր ք Ր (թերթ) քառածալ մի թերթ 8 էջ-
 երկսիւնեան.
 Թ ու Ղ թ Ր եւ տ ի պ Ր՝ նախ տգեղ, յետոյ
 բաւարար.
 Ծ Ր ա գ ի Ր Ր
 Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն—Յօդուածներ, լուրեր ան-
 ղական պաշտօնական լրագիրներից.

Ա Ձ Գ Ո Յ Ի Ն — Լուրեր, տեղեկութիւններ,
 պատրիարքարանի նոր կարգադրութիւն-
 ներ եւ այլն:
 Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն—Վէպիկներ, պատկերներ,
 զանազան յօդուածներ. . .



լրագրական գործիչներն
 այսօր մեր ժամանա-
 կում բարձր դիրքով
 ու ուսումնականանձ-
 նաւորութիւններ են,
 եւ այդ գործով պա-
 րապելցանկացողները
 կանխաւ աշխատում
 են ձեռք բերել հասարակութեան համակը-
 րանքն ու ճանաչումը: Թիւրքիայում 1850-
 ական թուականներին լրագրական գործով
 ազգին ծառայելու խնդիրը տապում էր շատ
 անհատների սրտերը: Ինչպէս ասում է հ.
 Գալէմքեարեան «ամեն մի գրիչ բունել կըր-
 ցողն, կը ձեռնարկէր ազգային գործեր»: Այդպիսիներից մէկը կարելի է հաշուել Աբ-
 րահամ Մուրատեան պատանուն՝ Կոստան-
 դնուպոլսի յայտնի Մուրատ վարժապետի
 որդուն 10—17 տարեկան հասակում:
 Որքան էլ գործ ձեռնարկող մի անփորձ
 երիտասարդ էր, բայց այնուամենայնիւ «Հայ-

րենասէրը՝ իւր գոյութիւնը պահեց մի քանի տարի: Պ. Մուրատեան սաստիկ վառուած «ազգասիրական հոգևով» Յոբի չարչարանքներ էր կրում մինչեւ իւրաքանչիւր «Հայրենասէրի» համարը դուրս էր տալիս: Տպագրական մի մամուլ չը կարողանալով ձեռք բերել, նա նիւթերը գրում, խմբագրում էր, մի տախտակի վերայ էլ տառերը շարում ու թուղթը վերան դնելով, ոտքերով սեղմում ու տպում իւր լրագիրը: Այսպէս շարունակուեցաւ երկու տարի: Երրորդ տարուայ սկզբին մի փոքրիկ մամուլ ձեռք բերեց եւ սկսեց օրստօրէ կանոնաւորել իւր գործը, թերթի դիրքն էլ փոխելով ու գեղեցկացնելով:

Նիւթական անյաջող պայմանները սաւեցրին մեր «Հայրենասէր» լրագրի հայրենասէր խմբագրի եռանդուն սիրտը: Զը կարողանալով մրցել իւր բախտի հետ, Մուրատեան յուսահատուեց եւ 1852 թ. նոյեմբերին, «Հայրենասէրի» 60-դ համարում մի առանձին յայտարարութեամբ յայտնեց որ իւր թերթի օրերը համարուած են, այլ ես յարատեւելու յոյս չկայ: 1853 թուականի մայիսի վերջին դադարուեց «Հայրենասէրը»:

ԺԱՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Հայրենասէր» կիսամսեայ թերթը՝ եւ մեր աղբիւրները—
 - ա. Հայրենասէր որ չափ ալ մեր պատմութեան մէջ աննշանակ երեւոյթներէն ըլլայ, սակայն զարմանալի է Նիկոմիդիայի մէջ կարեւոր միջոցներէ զուրկ հրատարակուելուն բաւական յարատեւ մնալուն եւ ժամանակակից հայ լրագրաց համակրանքն վայելելու համար . . . »
 - Հանդ. Ամսօր.՝ 1889. էջ 5.
 - բ. Նախընթաց 1851 (°) տարւոյն մէջ Նիկոմիդիա փոքուն Ասիոյ հայերէն լեզուաւ պատի կիսաթերթ մը հրատարակելու փորձ փորձեց Մուրատեան Արրահամ՝ «Հայրենասէր» անունը տալով իր օրագրին, որ

- ամիսն երկու անգամ կը տպագրուէր տեղւոյն եւ տէրութեան կարեւոր լրերը համառօտելով . . . »
 - Պատմ. հայ. դպրութ.՝ էջ 484.
- գ. Ուշադրութեան արժանի է Նիկոմիդացի Արրահամ Մուրատեանի ձեռնարկութիւնը, Այդ պարոնը 1850-ին . . . ստեղծեց «Հայրենասէր» անունով մի փոքրիկ թերթ որ երկու շաբաթը մի անգամ հրատարակուելով քաղաքական եւ տեղական լուրերը հրովանդակում իւր մէջ: Սակաւաթիւ բաժանորդներով բաւականացած, երեք տարի շարունակեց այ. Մուրատեան. . . »
 - Արձագանք՝ 1882. № 21 Ա. Ե.
- դ. Իզնամիդում (Նիկոմիդիա) Փոքր Ասիայում դուրս էր գալիս «Հայրենասէր» 1848 թուականի վերջերից . . . »
 - Այժմեան հայերը՝ էջ 80.
- [«Въ Иснамидѣ (Низомидіи) въ Малой Азии выходятъ հայրենասէր Գայրենասերъ (Патріотъ) съ вавца 1849 г. . . . »
 - Нынѣш. Армян.՝ էջ 80.
- 2.) Տես՝ «Հանդ. Ամսօր.՝ 1889 էջ 5.
- 3.) Տես՝ «Մասիս» 1852. թիւ 43.

28.

ԱՐԱՐԱՏ՝ 1.)

ՔՈՂՈՎՈՎՈՆ ԸՌԵՆՏՐՈՎՈՆ ՌԻ ԲՈՆՈՍՏՐԵՎՈՆ

(Շաբաթաթերթ)

Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1850—1851
 Հրատարակում էր՝
 Խմբագիր՝ Գաբրիէլ ք. Պատկանեան.
 Գ. ք. Պատկանեանի տպարան.
 Դիրքը՝ (տեսար.) ութածայ 16 էջ . . .
 Թուղթը եւ տիպը՝ հասարակ.
 Բաժանորդագրինը՝
 Լեզուէն, ոճը՝ } «Այս երկու գործոց ծանրու-
 Ուղղագրութ. } թիւն յանձն առնելով, սկսայ
 Մրագրիւրը՝ } խնդրել եւ ստացայ. . . . »
 ԳԱՂԱՔԱԿԱՆ—Յօգուածներ ու հետաքրքիր լուրեր քաղաքական աշխարհից.

ԱՌԵԻՏՐՈՎԱՆ—Վաճառականական այլ եւ այլ տեսակ տեղեկութիւններ, բորսա եւ այլն: ԲԱՆԱՍԻՐՈՎԱՆ — Կրօնական— Բարոյական յօդուածներ, ոտանաւորներ, մանրավէպեր, նամակներ եւ այլն:



էր Փաբրիէլ Պատկանեան, «Կովկաս» Կովկասի անդրանիկ լրագրի գաղարումից անմիջապէս յետոյ, ունենալով համակրողների մի ստուար հասարակութիւն, վայելելով եւ երջանկալիշատակ Ներսէս Ե. կա-

թողիկոսի սիրալիր յարգանքը, 1850 թուականին Տփլիսուում բաց արեց իւր սեփական տպարանը եւ նոյն թուի սեպտեմբեր ամսից սկսեց խմբագրել եւ հրատարակել «Արարատ» անունով շաբաթաթերթը, որ «Կովկասից» առաւել համակրութիւն եւ ընդունելութիւն գտաւ հայ հասարակութեան կողմից: Եւ ճիշտ որ այդ երկու հայ պարբերականների մէջ եղած տարբերութիւնը քիչ չէր: Քլխաւոր առաւելութիւններից մէկը նորանումն էր, որ ժամանակի պահանջման համեմատ «Արարատը» հրատարակուում էր աշխարհաբար լեզուով: Երկրորդ՝ որ «Արարատը» «Կովկասի» պէս էլ իւր էջերը չէր լցնում քաղաքական անաղ ու անկասկա յօդուածներով. այլ ինչպէս ծրագրում յիշեցինք, «Արարատ» տալիս էր իւր ընթերցողներին կրօնական-բարոյական համեղ յօդուածներ, մեկնութիւններով ու բացադրութիւններով:

«Արարատը» Կովկասում որպէս առաջին աշխարհաբար լրագիր, կարողութեան համեմատ աշխատում էր ընթերցանութիւն ա-

րածել հայ հասարակութեան մէջ, բայց սորանց էլ վիճակուած էր շուտափոյթ վաղճան, որ չը կարողացաւ նպատակներն իրագործել:

Մի դէպք՝ իսկապէս «Արարատ» շաբաթաթերթի դադարման պատճառ դարձաւ: (2:)

Ինչպէս յայտնի է Մոսկուայի Լազարեան ձեմարանի բարերար Լազարեանների տոհմը վերջացաւ արու ժառանգ չը թողնելու պատճառաւ. իսկ նորանց հարստութիւնն անցաւ իգական սեռի սերնդին: Բայց 1850 թուականին տակաւին մի յոյս կար յիշեալ տոհմի համար: Խաչատուր Յովակիմեան Լազարեանց թէեւ ունեցաւ մի քանի աղջիկ զաւակներ, բայց Լազարեան ամբողջ տոհմի իղձն էր արու զաւակ ունենալ իւրեանց հարստութիւնը ժառանգելու համար: Վերջապէս այդ իղձը կատարուեցաւ եւ 1844 թըուականին Խաչատուր Լազարեանց ունեցաւ մի արու զաւակ: Նորածին Լազարեան ժառանգին կնքեց անձամբ Ներսէս Ե. Կաթողիկոսը, անուանելով Յովհաննէս: Թոյլ եւ հիւանդ բայց զարմանալի ընդունակ երեխան 'ի մեծ ցաւ Լազարեան անուանի տոհմին, վախճանուեց 1850 թուականի վերջերին: Ծնողները իւրեանց հանգուցեալ որդու յիշատակին ինչպէս յայտնի է նուիրեցին 50,000 մանէթ, իւրեանց ձեմարանին կից մի որբանոց հիմնելու:

Հանգուցեալ մեծ բանաստեղծ Ռափայէլ Պատկանեան, որ այդ միջոցում գտնուում էր Տփլիսուում եւ աշակերտելով իւր հօրը՝ Տէր Փաբրիէլին՝ աշխատակցում էր «Արարատ»ին, այդ դէպքի մասին մի շատ ցաւակցական դամբանական ոտանաւորի ձեւով մի ճառ գրեց (4) խիստ երախտադիտական զգացմունքով գէպի հանգուցեալը: Հակառակ ժամանակակից սովորութեան, այդ յօդուածը տպագրուեց սեւ շրջանակի մէջ, որ խոր սուգի նշան էր: Յօդուածը թոյլ տուողն էր գրաքննիչ Տէր Յովսէփ աւագ քահանայ Օրբելին որ միեւնոյն ժամանակ հա-

յոց կրօնուսոյց էր տեղական գիմնազիայում: Այդ ժամանակներում Տփլիսի գրաքննիչները, ՚ի թիւս որոց եւ Տէր-Յովսէփը ստորագրուում էին Կովկասի պետական դպրոցների հոգաբարձութեան՝ պ. Սիմէօնովին: Տէր Գարրիէլ Պատկանեանի թշնամիները յարմար գէպքից կարողանալով օգտուել, ի վնաս «Արարատի», Սիմէօնովի մասնակցութեամբ մի գեկուցում գրեցին Կովկասի փոխարքայ իշխ. Վորոնցովին: (4.) Շատ չանցաւ այդ դէպքից, 1851 թուականի մարտ ամսին «Արարատը» դադարուած էր: Աեց ամիս միայն կեանք ունենցաւ:

Ժ Ա Ն Ս Թ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր աղբիւրները Տփլիսի «Արարատի» մասին.

ա. «... Ռուս կովկասեան տիրապետութեան մէջ Տփլիսը արտաբերեց երկու հայկական պարբերական հրատարակութիւններ... «Արարատ» հրատարակութիւն գրականական եւ քաղաքական, որը դուրս եկաւ «Կովկասից» յետոյ եւ վերջացաւ 1851-ին, նորա հրատարակիչ պ. (՝) Պատկանեանի հեռանալու պատճառաւ...»

«Այժմ. հայերը» Գ. Իււլրը. էջ 81.

{ «Въ русскихъ кавказскихъ владѣніяхъ Тифлисъ произвелъ два армянскихъ періодическихъ изданія: „Кавказъ“... и „Араратъ“—обозрѣніе латературное и политическое, появившееся позже „Кавказа“ и прекратившееся въ 1851 г. по случаю выѣзда издателя его г. (?) Патканіанца...»

«Нынѣш. Армян. էջ 81.

բ. Տես՝ «Կովկասի» 1. ծանօթութեան. ք. մասի երկու տողերը:

գ. «... Միայն տարւոյ(՝) մը կեանք ունեցած է այս պատուական օրագիրն որ քաղաքական դիպուածոց հետ՝ ազգային լեզուի պատմութեան եւ մատենագրութեան խնդրոց վրայ կարեւոր եւ գիտնական անդրադարձութիւններ ընելով, ամենուն համակրութիւնն սկսած էր գրաւել: Ընտիր բանաստեղծական քերթուածներ ալ մերթ

ընդ մերթ կը զարգարէին իր էջերը, երամար պատիւ ընելով հեղինակացն ու խմբագրին...»

«Պատմ. հայեր. դար.» ք. էջ 477.

դ. «... Երկու տարուանից յետոյ՝ այն է 1850 թուին Քիֆլիսի մէջ հ. Գարրիէլ Պատկանեանը սկսեց «Արարատ» շաբաթաթերթի հրատարակութիւնը: Այս լրագիրը մի տարի (՝) եւ մի քանի շաբաթ դուրս գալուց յետոյ 1851 թուի սկիզբներին դադարեց, խմբագրի Քիֆլիսից այլ տեղ փոխադրելու (՝) պատճառով...»

«Արձագանք» 1882. № 21. Ա. Եր.

ե. «... Արարատը՝ մի տարի միայն ապրելով եւ չը կարողանալով հաստատ հիմք ու համակրութիւն ունենալ հասարակութեան մէջ՝ դադարեցրեց իւր գոյութիւնը, ինքը խմբագիրը այն համարմունքն ունէր որ իր թերթը ոչ լրագիր է եւ ոչ ամսագիր, այլ աւելի մի հաւաքածու յօդուածների, ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու համար...»

«Հայոց մամուլը Ռուսաստ.» էջ 26.

զ. «... 1850 թուին Քիֆլիսում լոյս տեսաւ մի նոր շաբաթաթերթ «Արարատ» անունով՝ խմբագրութեամբ Գարրիէլ քահանայ Պատկանեանի, «Արարատը» հրատարակուում էր կոտրտած աշխարհիկ լեզուով: Այդ թերթը գոյութիւն ունեցաւ միտայն մի տարի (՝) ...»

«Մտքի Մշակը» Խ. Մալուժ. էջ 28.

է. «... 1850 թուին Քիֆլիսում հրատարակուեց «Արարատ» շաբաթաթերթը եւ մի տարուայ մէջ... դադարեց...»

«Նիւթեր հայոց պատմ. համար» էջ 54

ը. «... «Արարատը» «Կովկասու» իբր շարունակութիւն կը նկատուէր, սակայն քաղաքական մաս ամենեւին չու(ն)էր (՝) Գէթի սկզբան. ... խմբագիրն իր լեզուն աւելի արեւմտեան աշխարհաբարի մերձեցնել կը ջանար՝ ինչպէս ընդհանրապէս աչքն արեւմուտք դարձուցած էր ուրիշ ամեն մասին մէջ ալ... եւ այսպէս «Արարատ» օրըստօրէ զարգացում եւ յառաջադիմութիւն կը ցուցնէր...»

«Հանդ. Ամսօր.» 1889. էջ 87.

թ. «... Նորա («Կովկասի») շարունակութիւնն եղաւ «Արարատ» թերթը (1850) աշխարհաբար լեզուով խմբագրուած որ միմիայն մի տարի գոյութիւն ունեցաւ...»

- „Պատմ. Հայոց“ Ս. Պալաս. էջ 444.
 Ժ. „Արարատ“ 50—51 թիֆլիս Գ. ք. Պատկանեան. դա մի տեսակ շարունակութիւն էր դադարեալ Կովկաս թերթի“
 „Հայոց արդի մատենագր.“ (ձեռագր.)
 Ժա. „Արարատ 1850. Տիֆլիս Մտերեան (“)
 „Դաս. Հայ-ազգայ. պատմ.“ էջ 338.
 „Արարատ“ի մասին ոչինչ չին գրել պ. Արտիւր Լալայտ, „Հայկական մատենադարան գրքում. եւ Հ. Զարրանալեան, „Մատենագիտութիւն Հայկականի“ մէջ:
 2.) Տես՝ „Արձագանք“ շաբաթաթ. 1889. № 15.
 3.) Տես՝ „Արարատ“ քաղաք. առհետր. ու բանասիր. շաբաթաթերթ. 1850. թիւ 16.
 4.) Տես՝ „Արձագանք“ շաբաթաթերթի վերոյիշեալ համարը:

29.

Բ Ա Ն Ա Ս Է Ր ^{1.)}

ԱՄՄԱԿԱՆ ՏԵՏՐ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՏԵՐՍԵՆՆԵՐ ԵՒ ՔՈՂԱՔՈՂՆԵՐ

- Կ ո ս տ ա ն դ ն ու լ պ ո լ ի ս (Տաճ.) 1851-1859
 Հրատարակուում էր
 Հրատարակիչ եւ տէր՝ Յ.Մ. Հիսարեան.
 Տպարան Ն. Քայոլի.
 Դ ի Ր ք ը (տետր.) փոքրադիր ութածալ 1 1/2
 տպագրական թերթ:
 Թ ու Ղ թ ը եւ տիպը՝ լաւագոյն.
 Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն ը՝
 Լ ե գ ու ն ո ճ ը } „... քիչ զիրք կամ սահմանեալ գրութիւնք կը գտընուին, որոնք լուսատր...“
 Ուղղագրութ.
 Մ Ր ա դ ի Ր ը՝

ԱԶԳԱՅԻՆ—«Ազգային յօդուածներ. ժամանակակից ազգային կենաց եւ թերութեանց վրայ, ազգին անցեալն եւ նշանաւոր անձնաւորութիւնները. վէպեր, բանաստեղծութիւններ եւ այլն»:

ԲԱՆԱՍԷՐԱԿԱՆ—Քննադատութիւններ, մատենախօսական ուսումնական եւ այլ յօդուածներ... ճանապարհորդութիւն, կենսագրութիւն, զուարճալիք...:

ՔԱՂԱՔԱԿԱՆ—Քաղաքական տեսութիւն, յօդուածներ, լուրեր եւ այլ տեղեկութիւններ քաղաքական աշխարհից:



ոյն դարու վերջի կիսի սկիզբներում մեր լրագրութեան գործի առատաճումը տուեց մեզ մի քանի լրագիրներ, որոնք ճիշտ որ հարկաւոր են եւ արժանի ուշադրութեան: Այդպիսի լրագիրներից մէկին կարելի է հաշուել Կաստանդնուպոլսի «Բանասէր» ամսական տետրը, որ պ. Հիսարեանի ջանքով հրատարակուել սկսեց 1851 թուականի յունուարի սկզբից:

«Բանասէրի» լոյս տեսած աշխարհը գեղեցիկ բայց լի էր խոչնդոտներով. թէեւ համակրողները քիչ չէին, թէեւ հասարակութեան լուրջ եւ ուղղամիտ մասը յարգող էր «Բանասէրի» ուղղութեանը, բայց թշնամիներ էլ շատ ունեցաւ Հիսարեան: Անուան համապատասխան «Բանասէրը» բանասէր էր իրաւի եւ բազմազան իւր նիւթերով: «Բանասէրի» նպատակն էր՝ «Լուսաւորութիւն, կրթութիւն, քարոզել ազգային յառաջագիմութիւն առաջնորդել... ուստի պէտք է տպագրել հասարակաց համար, եւ անոր ուշադրութիւնը դրդելու հետաքրքրութիւնը շարժելու նիւթոց տպագրութիւն մը պէտք է ընել որ զինք որսայ, կարգալու եւ կրթուելու...»: Խմբագիրը վարժ էր իւր գործում, դիտէր իւր ամսագրին յարմար նիւթեր ընտրել, մի քիչ թուլութիւն նըշմարելի է միայն «Բանասէրի» կրօնական յօդուածների մէջ: Իսկ ինչ վերաբերում էր սոսկ ուսումնական-բանասիրական բաժնին,

մէջ միանգամայն հիանալի էր, եւ առաջնակարգ ժամանակակից իւր ճրագրով լրագիրների մէջ: Հայր Գալէմբեարեան ըստ իւր սովորութեան «Հանդէս Ամսօրեայի» իւր լրագրութեան պատմութեան մէջ գուրս է բերել եւ «Բանասէրի» բոլոր տարիների «ազգային—ուսումնական» յօդուածների ցանկը, որ գովելի գործ է եւ շատ պիտանի կարող է լինել հայ բանասիրաց:

Հազիւ մէկ շաբաթ լրացրեց «Բանասէր» ամսագիրը: 1852 թուականին Փրանսիայի Անրի Գայոլ որի տպարանում էր տպագրւում «Բանասէրը» սկսել էր մի բազմալեզու ամսագիր հրատարակել Journal asiatique de Konstantinople («Ասիական օրագիր Կոստանդնուպոլսոյ») անունով: «Բանասէր» ամսական տետրի խմբագիր լեզուագէտ պ. Հիսարեան թողնելով իւր ամսագրի հրատարակութիւնը, յիշեալ «բազմալեզու» ամսագրի խմբագրութեան պաշտօնն ստանձնեց: Երկու մնաց այդ գործում Հիսարեան թէ ոչ մեզ անյայտ է. բայց թէ քաջ գիտենք որ 1859 թուականին եօթը տարի յետոյ «Բանասէրը» նորից սկսեց հրատարակուել իւր խմբագրի ձեռքով, բայց մի համար միայն հրատարակուած կը գտնենք, հո—ի ուրեմն «Բանասէրի» նոր կեանքը շատ կարճատեւ եղաւ երկրորդ համարն այլ եւս չը հրատարակուելով:

ԺԱՆՍԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ձ.) «Բանասէր» ամսաթերթը եւ մեր աղբիւրները—

ա. ,, . . . Կոստանդնուպոլիս հրատարակուած ազգային լրագրաց լէգէոնին մէջէն մարդ հազիւ կրնայ քանի մը թերթ գտնել՝ որ հրատարակման ժամանակ իրենց կոչման համապատասխանած ըլլան եւ ապագային համար ալ արժէք ունենան: ,,Բանասէրն՝ այս սակաւաւորաց կարգէն է եւ համակրանաց արժանացած է հրատարակման ժամանակ եւ այնուհետեւ . . .

,,Հանդ. Ամսօրեայ՝ 1889 էջ 88.

բ. ,,Բանասէր՝ 1851 Պոլիս Մ. Յ. Հիսարլ(՝)եան)՝

,,Դաս, հայ-ազգ. պատմ. էջ 338.

գ. ,,Յ. Մ. Հիսարեան, բանիբուն երիտասարդ մը 1851-ին ,,Բանասէր՝ հանդէսը սկսաւ հրատարակել ՚ի Պոլիս . . . Այս . . . նպատակն ունի իր (Հիսարեանի) հրատարակութիւնը. շրջանաւոր գրութիւն մը ընտիր հաւաքում մը ընծայել բարոյական ուսումնական քաղաքական եւ զուարճալի գիտելեաց. . .

,,Պատմ, հայ-դպր.՝ բ. էջ 482.

դ. ,,Բանասէր օրագիր ազգային բարոյական (՝) եւ բանասիրական: Հրատարակիչ եւ տէր Յ. Մ. Հիսարեան ի տպ. Գայոլ 1850(՝).՝

,,Մատենադ. հայկակ.՝ Ջարբ. էջ 84.

ե. ,,Բանասէր Կ. Պոլիս 1851-59 թ. խմբ. Հիսարեան խմբագիրն ունէր բաւական որոշ յարձակողական ուղղութիւն. . .

,,Հայոց արդի մատին.՝ (ձեռագ.)

զ. ,, . . . Բանասէր՝ անունով մի պատուական ամսագիր էր պ. Յ. Մ. Հիսարլ(՝)եան գիտնականի խմբագրութեամբ ու շատ հետաքրքիր նիւթեր էր բովանդակում իւր մէջ, բաժանորդաց սակաւութիւնը (՝) դադարեցրեց այդ հրատարակութիւն. . .

,,Արձագանք՝ 1882. № 21 Ա. Եր.

է. ,, . . . Նորանից մինը ,,Բանասէր՝ ճախաձեռնութեամբ երիտասարդ գրող Հիսարեանի: Նա սկսուեց 1851 թուականի հետ եւ նոյն տարուայ հետ էլ վերջացաւ: Այս հանդիսի մէջ մտնում էին նորութիւններ—քաղաքական տնտեսական եւ մանկավարժական. . .

,,Այժմեան հայերը՝ Գիւլոր. էջ 79.

{ ,,Одно изъ нихъ бандасеръ Павассеръ (литераторъ), предпринятое молодымъ писателемъ Гиссаріаномъ; оно началось вмѣстѣ съ 1851 годомъ и съ нимъ же вмѣстѣ кончилось. Въ этомъ журналѣ входили новости литературныя, а также предметы политическіе, экономическіе, педагогическіе. . .

.,Нынѣшніе Арм.՝ էջ 79.

30.

ԲՈՒՐԱՍՏԱՆ¹⁾

Ս. Սահակեան

ՕՐԱԳԻՐ

ԲԵՐՈՅԵԿԱՆ ԲԸՆՈՍԻՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ.

(Ամսագիր)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1851-1853
Խմբագրութեամբ՝ Աշակերտաց Ս. Սահակեան Դպրոցի:

Տպարան Յովհ. Միւհէնտիսեան.

Դիրքը (տետր) ութածալ 1/2 տալ. թերթ. Լեզուն ոճը Ուղղագրութ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿ.
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿ.
Եւ այլն

«...Վարժարանիս աշակերտեալք՝ գրէ՞՞է եօ՞՞ն տարի է ի վեր, ազգին հայրական...»
«Ձանազան ուսմանց եւ գիտութեանց վերաբերեալ յօգուածներ եւ զանազան լեզուներէ թարգմանութիւններ, գրքաբար եւ աշխարհաբար, ճառեր ոտանաւորներ, հետաքրքրական նիւթեր, բարոյական խորհրդածութիւններ եւ առածներ եւ պատմութիւններ արուեստական գիւտեր...»



ոստանդնուպոլսում 50-ական թուականներին իւրաքանչիւր կարող անձ, ընկերութիւն կամ հաստատութիւն ցանկանում էր լրագրական գործով ծառայել ազգին եւ գրականութեանը: Օսմանեան մայրաքաղաքում որ գեո. 1844 թուականից, հայ բարերարների

օժանդակութեամբ Յամաթիա թաղում հիմնուել էր Ս. Սահակեան Վարժարանը, սորա խելահաս աշակերտները իբր մի գրական պտուղ իւրեանց մի քանի տարուայ ջանասէր աշխատութեանց, 1851 թուականի յունուարի սկզբից սկսում են մի ամսաթերթ հրատարակել «Բուրաստան» Ս. Սահակեան խորագրով: «Աշակերտաց ալ երախտագիտութեան պարտն է—գրում է «Բուրաստանի» Ա. Համարը—իւրեանց խնամակալին յուսադրելու անոնց արկեանց արդասիքը զանազան միջոցաւ անոնց ներկայացնելու ջանալ: Այս խորհրդով վարժարանս իւր վերայ եղած անհամար խնամոց եւ հոգերու զուրտեղը թափուած չըլլալուն իբր ճաշակ մը կ'ուզէ իւր երախայրիքը ազգին ընդհանրութեանը ներկայացնել...»

Որպէս մի հայ վարժարանի արդիւնք «Բուրաստանը» սիրալիւր ընդունելութիւն գրտաւ ազգի կողմից: Իւր ժամանակակից հայ լրագիրները յաջողութիւն եւ յարատեւութիւն ցանկացին նորան. բայց աւանդ որ առաջին տարին միայն կարողացաւ կանոնաւորապէս հրատարակուել. 1852 թուականին, ամսագրի բ. տարին, այլ եւս չերեւեցին Ս. Սահակեան «Բուրաստանի» տետրակները. մինչեւ հոկտեմբեր: Այդպիսով ինն ամիս անցած հոկտեմբեր ամսից նորից սկսեց, տպագրուել: Դժբախտաբար նիւթական աննախանձելի գրութեան մէջ մնալով, 1853 թուականի փետրուարից մի քանի տետր էլ անկանոն կերպով հրատարակուելով նոյն թուի հոկտեմբեր ամսին իսպառ դադարուած էր արգէն: Ինչպէս «Հանգէս Ամսօրեան» ստուգել է, երեք տարուայ ընթացքում փոխանակ 36 տետրակի, «Բուրաստան» Ս. Սահակեան օրագիրը լոյս է տեսել 18. Համար—ուղիղ կէս թիւը:

ԺԱՆՍՐԱԳՐԱՆԵՐ.

1.) Մեր ազբիւրները եւ «Բուրաստան» Ս.

Սահակեան» օրագիրը:

ա. ,, . . . Երիտասարդական եռանդեան սոյն արդիւնքն բնականապէս ընդհանուր ուշադրութիւն գրաւել կարող չէր, եւ ոչ ալ իրական արդիւնք մը կարելի էր սպասել ամսաթերթէն: Սակայն իւր հրատարակած նիւթերն արդարեւ սպասածէն աւելի . . . «

„Հանդ. Ամսօրեայ» 1888. էջ 88.

բ. ,, . . . Աշխատասիրողաց անունը թերեւս մեծ առհասարակ մը չ'կարենայ սեպուիլ գրուածքին ընտրութեանը եւ ազնուութեան բայց անոր հակառակ՝ ուսուցչաց արժանաւոր պատիւ ընելու ջանք մը եւ փոյթ երեւցաւ այն բանասիրականին մէջ, յորում ուսումնասէր պատանեկութիւն մը՝ իրենց հասակակցած կը ջանար ջամբել գիտութեան եւ ուսմանց կարեւոր սնունդը. . . «

„Պատմ. Հայ. դպր. « բ. էջ 486.

գ. ,,Բուրաստան Սուրբ Սահակեան. օրագիր բանասիրական. աշխատասիրութեամբ աշակերտաց Ս. Սահակեան դպրոցին Սամաթիոյ: Կ. Պոլիս 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան 1851, 1852. «

„Մատենադ. Հայկակ. « Զարբ. 119

դ. ,, . . . միւս հանդէսն էր ,,Բուրաստան՝ մաքուր գրականական, հրատարակուած էր Կոստանդնուպոլսի Ս. Սահակեան վարժարանի նախկին աշակերտների ձեռքով, «

„Այժմեան Հայերը « Դիւլ. էջ 79.

[. . . Другой журнал: Բուրաստան Սурасданъ (цвѣтникъ) чисто-литературный издается бывшими учениками армянской коллегіи св. Сахава въ Константинополѣ. . . «

„Нывѣсп. Армян. « էջ 77.

ե. ,,1851-ին Սամաթիոյ Ս. Սահակեան ընկերութեան Բ ու ը ր ա ս տ ա ն ը «

„Նոր-Դար « 1884. № 34 էջ 3.

զ. . . Բուրաստան՝ անունով ամիսը մի անգամ ներկայացնում էր Սամաթիոյ թաղում գտնուած ու այն ժամանակները մեծ անուն ունեցող Ս. Սահակեան դպրոցի աշակերտաց աշխատասիրութիւնները. «

„Արձագանք « 1882. № 21. Ա. Ե.

է. ,,Բուրաստան՝ Կ. Պոլիս ամսաթերթ 1851-53 թ. խմբ. աշակերտներ էին Սահակեան վարժարանի. . . «

„Հայոց արգի մատենագ. « (ձեռ.)

ը. ,,Բուրաստան Ս. Սահակեան) 1851 Պոլիս

աշ. Սհկ. վրժ. «

„Դասագ. Հայ-ագգ. « էջ 338.

31.

Մ Ա Ս Ի Ս ^{1.}

Հ Ա Ն Գ Ե Ս

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԵՒ ԶՈՂԱԶՈՒԿԱՆ

(Նաբաթաթերթ)

Կ ո ս տ ա ն դ ն ու կ ո լ . (Տաճ.) 1852-1894-եւս Հրատարակուած է՝ ամեն շաբաթ օր. Տնօրէն-Խմբագրապետ՝ Գրիգոր Զոհրապ.

Արտօնատէր՝ Կ. Ս. Իւթիւճեան. Ի տպարանի «Արեւելք» եւ «Մասիս» լրագրաց.

Դ ի ի թ ը (տետր) ¹/₂ թերթ տպագրակ. 16 էջ երկսիւն. 21 X 29 Հ.-մետր.

Թ ու ղ թ ը եւ տիպը՝ մաքուր, վայելուչ. Բ ա ժ ա ն ո ղ ա գ ի ն ը տարեկան՝

Թիւրքիա . . . 40 դրշ.

Ռուսաստան . . 4 մանէթ.

Եւրոպա . . . 10 ֆրանք.

Հասցէն՝ Կոստանդնուպոլիս (Թիւրքիա.)

Ղալաթիա, Իզմիրի Օղլու-Խան, Թիւ 3—4.

Կամ Konstantinople (Turcie) Kalata Izmiri Ogli-Han 3—4.

Լ ե զ ու ն, ո ճ ը } ,,Այս ամենքը իրենց բնական լեզուով լուրջ կորսուէին, պանդխտելով . . . «

Ծրագրերը՝ ԱԶԳԱՅԻՆ—Առաջնորդող յօդուածներ ընթացիկ շոշափելի լուրջ խնդիրների մասին: Տեղական ազգային լուրեր, պատրի-

արքարանի եւ եկեղեցիների մասին: Նամակներ, թղթակցութիւններ, լուրեր գաւառներից եւ օտար քաղաքներից: Զանազան յօդուածներ տեղեկութիւններ . . .

ԳՐԱԿԱՆ.—Յօդուածներ գրական բանաստեղծական, կենսագրական, մատենախօսական-քննական: Նորավէպք, պատկերք, հնախօսական, տեղագրական, ճանապարհորդական եւ այլ պիտանի յօդուածներ հետաքրքիր տեղեկութիւններով:

ԳԻՏՆԱԿԱՆ.—Լուրջ յօդուածներ գիտնական աշխարհից, նորանոր տեղեկութիւններ, գիտեր գիտութեան այլ եւ այլ ճիւղերից, գեղարուեստ, ճաշակ եւ այլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ.—Յօդուածներ տեղեկութիւններ եւ նոր լուրեր քաղաքական արդի դրութիւնից: Արտասահմանեան նամակներ, ներքին եւ արտաքին լուրեր: Բ. դրան նոր հրամաններ, պաշտօնական ծանուցմունք եւ այլն:

—Սակարան.—Բորսա. ընթացք փոխանակագրոց, արժեթղթոց, բաժնետոմսակաց դրամոց եւ այլն:

—Ծանուցմունք.— Յայտարարութիւններ ամեն տեսակ բաների:

Բովանդակութիւն 1893. 22 մայ.(թիւ 3992)

Տիկին Հրաչեա (նկար.)

Պանդուխտ (առաջնորդող)—Գրիգ. Զոհրայ.

Տիկին Հրաչեա (կենսագր.)—Տիգր. Արփիար.

Լքուած կղզին (ոտանաւոր)—Կարօ.

Օտեանի ներքին կեանքը.—Զ. Եր. Օտեան.

Մայիսի անձրեւներ (ոտանաւոր)—Կարօ.

Խեղճ աղան (նորավէպ)—Յ. Ալփիար.

Վիճակ—Նահապետ.

Շարժուան լուրեր—

Ազգային—Ս. պատրիարքի հիւանդութիւնը. Յոյն վանականի 750 օսմ. ոսկի նուիրելը Իզմիրի հայոց հիւանդանոցին: Ս. պատրիարքի պատարադ մատուցանելը. Տ. Տրդատ Վ. Պալեան. Դուրեանի «Թատրոն» կամ «Թշուառներ». Մելքիսեզէկ եպիսկոպոս. Ս. Պատրիարքի հրատարականը. Հմայեակ եպ. Դիմաքսեանը Կ. Պոլիս. Վա-

ղարշապատի գիւղացւոց աղէտները:

Ներքին—Վեհ. Սուլթանի շքանշան շքանորհումը պ. Նելիտոֆի: Պուլղարական ծանուցումը: Պ. Էտմոն ար՝ Ռոչիլտի 1,000 օսմ. ոսկի նուիրելը:

Հեռագիր Վանից.—Մաքս Միւլլեր—Թոտորի աւազակը—Պասարայի մէջ քօլերայից մեռնողներ—Համբուրգի մէջ քօլերա—Սեւ-ճովի քարանտինան—Դանուբի քարանտինան.—

Արտաքին—Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Ռուսիա, Շիկաքոյի ցուցահանգէսը: Սակարան:



այլ լրագրութեան պատմութեան մէջ ոչ մի լրագիր այնքան փոփոխութիւնների չէ ենթարկուել, այնքան տարբեր ձեւերով չէ հրատարակուել որքան Կոստանդնուպոլսի քաջածանօթ «Մասիսը», որ 1852 թուականից 'ի վէր հրատարակուում է: Թիւրքիայի մեր նշանաւոր գործիչներից մինը, հայ գրականութեան անդամտանում յայտնի անձնաւորութիւն՝ պ. Կարապետ Իւթիւճեան որ իւր գրական բազմաթիւ աշխատութիւններով ու թարգմանութիւններով իւր հրապարակախօսական ընտիր գլուխածներով մեր ազգային ջոջերու-ի կարգն է անցել, 1851 թուականի փետրուարի 2-ից սկսեց հրատարակել «Մասիս» շաբաթաթերթը, որ բազմաթիւ փոփոխութիւնների հանգիպելով, մինչեւ այժմ էլ հրատարակուում է որպէս շաբաթաթերթ:

«Մասիս» լրագրի ներքին արժանիքը ա-

կաւին չը լիշած, խօսենք նորա արաաքին փոփոխութիւնների մասին, որ ինչպէս վերեւում նկատեցինք շատ է ենթարկուել իւր քառասունից աւելի տարուայ կենաց ընթացքում:

«Մասիս» 1852 թուականից, իւր լոյս տեսած օրից հրատարակուում էր ինչպէս շաբաթաթերթ, որպէս տեւեց տասը տարու չափ. այսինքն մինչեւ 1862 թ. յունուարին: Դիրքն էր այդ միջոցին (թերթ) միածալ 4 էջ. 4-սիւնեան 35X50 հ.-մետր: Յետոյ մինչեւ 1864 թ. դեկտ. 22, այսինքն երկու տարուց աւելի, բացի իսկական «Մասիս» շաբաթաթերթից, եւօրեայ (շաբաթը երկու անգամ) հրատարակուում էր «Մանրայուրք Մասիս Լրագրոյ» անուանով մի փոքրիկ թերթ որոյ նպատակն էր՝ ինչպէս գրում է հ. Գ. Գ.—«Լրասէր ժողովրդեան առօրեայ լրեր տալ»: 1865 թ. սկզբից շաբաթաթերթ «Մասիսը» դիրքը մեծացրեց եւ 5-սիւնեան էջերով էր տպագրուում: Դորա հետ էլ 1866 թուականի յուլիսից հրատարակուում էր որպէս յաւելուած մի ուրիշ շաբաթաթերթ դարձեալ «Մասիս» անուանով: 1866 թ. նոյն ամսի 7-ից սկսեց միջակ դիրքով մի ուրիշ թերթ հրատարակուել շաբաթը երեք անգամ: Բայց վերջինս հազիւ կարողացաւ մի ամիս դիմանալ: Իսկ բուն «Մասիս» շաբաթաթերթն այդ տարուանից իւր առաջուայ դիրքն էր ստացել 4-իջեան թերթ 30X35-մետ: Նոյն թուականի օգոստ. 1-ից հրատարակուելով մինչեւ այդ տարուայ (1866) վերջը տեւեց «Մասիս» հիմնական շաբաթաթերթից զատ շաբաթական 2—4 անգամ հրատարակուող «Օրաթերթ Մասիս Լրագրոյ» անուանուող յաւելուածը: Հետեւեալ 1867 թ. ամբողջ տարին բացի օրինաւոր «Մասիսը», շաբաթը երկու անգամ հրատարակուում էր մի միջակ դիրքով լրագիր «Մասիս» անուանով: Հետեւեալ 1868-ին դարձեալ մի ուրիշ յաւելուած «Մասիս Օրաթերթ» անուանով որ շաբաթը 2—4 անգամ հրատարակուելով տեւեց երկու տարի՝ 1866

թուականի վերջը: Յետոյ համարեա իննը տարի, որ «Մասիս» համար բաւականին միջոց էր փոփոխութեան, գլխաւոր շաբաթաթերթը սկսեց շաբաթը երեք եւ երբեմն աւելի անգամ հրատարակուել տեւելով մինչեւ 1878 թ. դեկտ.: Իսկ այդ ժամանակից մինչեւ 1884 յունիսի վերջը «Մասիսը» հանապազօրեայ էր՝ հրատարակուելով շաբաթը վեց համար: Դիրքն էլ 1880 թ. ապրիլին սկսեց մի քիչ աւելի մեծացրած եւ 5-սիւնեան էջերով: 1872 թ. փետրուարի սկզբին աւելի ընդարձակուեց դարձաւ վեց սիւնեան: Իսկ 1884—1894 որ մինչեւ այժմ տասը տարի է «Մասիս» դարձեալ մի քանի փոփոխութիւնների ենթարկուեց: 1884-ից որպէս շաբաթաթերթ էր «Մասիս» (տետր.) 20 էջ. երկսիւնեան. յետոյ թերթ ամսաթերթ, մերթ տասնօրեայ, մերթ երկօրեայ շարունակուեց մինչեւ 1892 թ. Հետեւեալ 1893 թուականի սկզբից դարձաւ շաբաթաթերթ, որ մինչեւ այժմ շարունակուում է: Ուրեմն «Մասիս» իւր 40—42 տարուայ ընթացքում փոփոխութիւնների է ենթարկուել մօտ 20 անգամ: «Մասիսը» դադարման է ենթարկուել՝ նախ 1883 թ. մայիսի սկզբին. երկրորդ անգամ 1888 թ. վերջը. բայց երկու անգամն էլ կարճ ժամանակից յետոյ նորից սկսել է հրատարակուել: Ցանկալի էր որ այլ եւս փոփոխութիւնների չը ենթարկուէր:

Մեծարգոյ Իւթիւճեան խիստ հակառակ էր «Նոյեան Աղաւնու» ուղղութեանը եւ ամեն կերպ պաշտպանում էր ազգային շահերը: «Մասիսը» իւր անխոնջ գործունէութեամբ փառաւոր անդ է վայելում մեր մամուլի պատմութեան մէջ: 40 տարուց աւելի է որ նա պաշտպանում է հայկական սրբազան օրէնքները, ազգային-կրօնական խնդիրները, ժողովրդական միութեան կապը՝ հոգեւոր վարչութիւններն ու եկեղեցին: Սկզբնական տարիներում երբ հայոց մամուլն այսքան զարգացած դրութեան մէջ չէր տակաւին, գրական նորանոր ոյժեր ստեղ-

ծողը, ուսումնական, ընկերասիրական, մարդասիրական խնդիրներ յարուցանողը, Գաղափարական, Տէրվիշեանի եւ գորանց նման յայտնի լէզուագէտ աստղերի յօգուածներով հայոց լեզուն կանոնաւորող եւ իւր ժամանակին որոշ ընթացքի մէջ գնողը՝ «Մասիսն» էր:

Կանոնաւոր նամակներ, թղթակցութիւններ գաւառներից եւ գանազան օտար հայաբնակ երկիրներից, ազգային, տնտեսական եւ այլ կարեւոր հարցերի մասին լիակատար տեղ տուողը՝ «Մասիսն» էր: Պատմագրական բանաստեղծական ընտիր յօգուածներով ու հայ ազգագրական լուրջ գրուածներով հայ հասարակութեան լիացում տուողը՝ դարձեալ «Մասիսն» էր: Մի խօսքով «Մասիսի» կամ սոսկ խմբագիր Իւթիւճեանի յօգնաջան եւ գովելի գործերն անուրանալի են:

Բաւական է որ «Մասիսը» իւր գոյութեան ընթացքում որ քաղաքական ազգային եւ այլ գանազան փոփոխութիւններն անպակաս էին Կոստանդնուպոլսում, նախարարների վեգիւրների եւ մեր պատրիարքարանի հետ ինչքան խլրոտմաներ ու վեճեր են պատահել ու Օսմանեան մայրաքաղաքի ժամանակակից լրագիրներից շատերը գազարել, խմբագիրները ձերբակալուել են, «Մասիս» իւր պարզ ուղղութեամբ հաճելի եւ սիրելի էր ամենին որով եւ կէս դարի չափ է որ պահուում է իւր գոյութիւնը: Մի-երկու անգամ միայն կարճ ժամանակով գազարման է ենթարկուած «Մասիսը», այն էլ Տպագրական Տեսչութեան սխալ հասկացողութեամբ:

Կարապետ Իւթիւճեան «Մասիսի» արտօնատէր-խմբագրի պաշտօնը վարեց սկզբից մինչեւ 1884 թուականի յունիսի վերջը: Աչքերի սաստիկ ցաւը արգելք դարձաւ Իւթիւճեանին շարունակելու իւր գործը. նա «Մասիսը» իւր սպարանով յանձնեց «Արեւելք» լրագրի խմբագրութեան գանազան պայմաններով: Բայց մինչեւ այժմ էլ թերթի տակ ստորագրում է «Արտօնատէր» Կ. Ս.

Իւթիւճեան»: 1888 թ. դեկտեմբ. սկիզբներին ինչպէս վերեւում լիշեցինք, «Մասիսը» դադարուեց, բայց հետեւեալ 1889 թ. յունիս ամսից նորից սկսեց հրատարակուել:

«Մասիսի» տնօրէն-խմբագրապետի ծանր եւ պատասխանատու պաշտօնը վարում է այժմ պ. Գրիգոր Զոհրապ՝ իւր նախորդի նման մի յարգելի անձնաւորութիւն: Նոր խմբագրապետի օրով վերջին տարուանից «Մասիս» էջերում մերթ ընդ մերթ երեւում են պատկերներ ու նկարներ իւր նիւթերին պատշաճաւոր:

«Մասիսին» աշխատակցում էին Թիւրքիայի մեր ականաւոր հայ գրագէտներից շատերը՝ օրինակ Սերովբէ վարժապետ Արաբեան, Յակ. Պէլլեր, Թագ. Միհրզաթեան, Մատ. Այվատեան, Սարգիս Կամլեան, Մկ. Փորթուգալեան, Արուսեակ Մատիկեան, Տ. Մարկ. Նաթանեան, Գ. վ. Սրբուանձաեան, Մ. Գարագաշեանց, Ս. Դէրվիշեանց, Ատոմ, Մ. Ն. Նորիկեան. . .

Նորագոյն աշխատակիցներից լիշենք՝ Հրանտ Ասատուր, Բիւզ. Պողաճեան, Տիգրան Արփիարեան, Գարօ, Երուանդ Օտեան, Յ. Ալփիար, Նահապետ եւ այլք:

Յարատեւութիւն, եւ յաջողութիւն կը ցանկանք «Մասիս» պատուական շաբաթաթերթին:

ԺՆՅՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «Մասիս» եւ մեր աղբիւրները—
 - ա. Եւ այսպէս Կ. Իւթիւճեան . . . անընդհատ աշխատութեամբ կարող եղած է թերթին վերջին տարիներն «Մասիս» Կոստանդնուպոլսոյ առաջինն ընել. նորագոյն գրիչներու շնորհիւ կրնանք ըսել՝ որ «Մասիս» այս միջոցին միշտ պայծառութեան մէջ մնաց եւ հասարակաց համակրութիւնն չկորսեցուց.
 - ,,Հանգ. Ամսօր. 1889. էջ 156.
 - բ. ,, . . . Ներկայ 1879 թուից, Կ. Պոլսի ,,Մասիսը՝ գաղտնալու է ամենօրեայ թերթ. Մինչեւ այժմ ,,Մասիսը՝ շաբաթը երեք

անգամ էր հրատարակուում, եւ բացի լիոքրիկ «Արագրից» ուրիշ ամենօրեայ թերթ չկար Կոստ. Պոլսում . . . »

„Մշակ“ 1879. № 7. էջ 3.

գ. „Մասիս“ լրագիր քաղաքական, ազգային, բանասիրական, առեւտրական, Խմբագիր հրատարակիչ Կ. Ս. Իւթիւճեան, Պոլսի տպ. Մասիս լրագրոյ, 1856(°)—1883. »

„Մատեն. հայկակ.“ Զարբ. էջ 405.

գ. „ . . Մասիսը շարունակութիւն է „Հայաստանի“ իսկ „Մասիսի“ շարունակութիւն է „Արեւելք“ 70—79 վերին աստիճանի մեծ քանակութեամբ տեղին բռնում ազգային խնդիրներ՝ հնաբոսութիւն, պատմութիւն եւ այլն. Այս թերթը Պոլսում դուրս եկածներից ամենաերկարակեացն է՝ տեւեց ամբողջ 37 (°) տարի եւ գեռ շարունակուում է . . . »

„Հայոց արդի մատեն.“ (ձեռագ.)

ե. „Դադարեցաւ „Մասիս“, դադարեցաւ „Հայրենիք“, դադարեցաւ եւ „Արեւելեան Մամուլ“ . . . »

„Նոր-Դար“ 1889 № 75. էջ 3.

գ. Մասիս օրաթերթ 1852—80 Պոլսի Կ. Ս. Իւթիւճ. »

„Իսս. հայ-ազգ. պատմ.“ էջ 339.

է. „ . . Օսմանեան տէրութեան մայրաքաղաքէն ինչուան Հայաստանի հեռաւոր սահմանաց մէջ շարժում մը կը սկսէր երեւնալ, ու ամենափափաքելի էր յառաջադիմութիւնը. Այսպիսի ատենի մը մէջ՝ անհրաժեշտ էր որ ազգն ալ ունենայ իրեն բերան եղող յատուկ օրագիր մը . . . »

„Պատմ. հայ. գպր.“ Բ. էջ 482.

ը. „(Մեր նպատակն է) . . բացադրել ու հաստատել աշխատութեան ամենամեծ զօրութիւնը, բարի վարուց աշխատութեան վրայ ունեցած ներգործութիւնը եւ ասոնց երկուքին մէկ տեղ գալովը, ծագելիք խաղաղութիւնն ու երջանկութիւնը . . . »

„Մասիս“ 1852. թիւ 1. էջ 1.

թ. „ . . (Նոյեան Աղաւնուն) բոլորովին հակառակ ուղղութեամբ սկսեց նոյն 1852 թուին իւր „Մասիսը“ պ. Կ. Իւթիւճեանը, որ այն ժամանակ նոր աւարտած էր կրթութիւնը Ֆրանսիայում, վերագաբձած էր Կ. Պոլսու . . . Տաճկաստանում ոչ մի հայ լրագիր է ծնած որ „Մասիս“ աւելի բարձր լինէր կանգնած որ եւ իցէ արժանաւորութեամբ. չենք ասում նորա մե-

ծամեծ ծառայութիւնները լեզուի մշակութեան վերաբերմամբ . . . »

„Արձագանք“ 1882. № 22. Ա. Ե.

ժ. „ Կ. Պոլսի „Մասիս“ լրագիրը որ մինչեւ այժմ շարաթը երեք անգամ էր հրատարակուում, այս տարի յունուարից ըսկսեց շարաթը մի անգամ հրատարակուել. »

„Մուրճ“. 1893 թ. № 2.

ժա. „ . . 1851 (°)-ին „Մասիս“ անունով լրագիրն հրատարակելու ձեռնարկեց. . . պարզապէս կը հրատարակէր աշխարհաբար լեզուն կոկելու եւ գեղեցկացնելու համար. . . Ուրիշ խմբագիրներու պէս (Իւթիւճեան) շարաթն անգամ մը չփոխեր իւր կարծիքները . . . »

„Ազգային Զօրք“ 8. Պ. 1891. էջ 80

ժբ. „ . . Իսկ այս քան զկէս դարուս սկսան հրատարակուել Կ. Ս. Իւթիւճեանի „Մասիս“ օրագիրն . . . որ անհամեմատ ծառայութիւն մատուց աշխարհիկ լեզուին . . . »

„Պատմ. հայ. մատեն.“ Դուր. էջ 97.

ժգ. „ . . Նորա („Նոյեան Աղաւնու“) տեղը բռնեց „Մասիս“ կամ Արարատ (°) մինչեւ այժմ գոյութիւն ունեցող խմբագրութեամբ պ. Իւթիւճեանի . . . »

„Այժմ. հայերը“ Դիւլոր. էջ 79.

[„ . . . его (у „Ноев. голуб.“) мѣсто занял: „Масисъ“ или Араратъ (?) существующій до сихъ поръ подъ редакціею г. Утуджіана . . . »

„Ныѣшн. Арм.“ էջ 79.

ժդ. „ . . Նրկորդ լրագիրն էր „Մասիսը“ . . . որ մինչեւ այժմ հրատարակուում է Կոստանդնուպոլսում եւ ջերմ կերպով պաշտպանում է հայերի շահերը, եւ չը նայելով մեծամեծ արգելքներին՝ որ սովորական է Տաճկաստանում այդպիսի բաներ, կարողանում է հմուտ կերպով առաջն առնել . . . „Մասիսը“ այժմս էլ հրատարակուում է գեղարուեստական շարաթաթերթի բովանդակութեամբ. հրատարակիչ Իւթիւճեանը յայտնի է արգէն իւր թարգմանութիւններով, Ֆրանսերէն եւ անգլիերէն լեզուներէց . . . »

„Հայկ. մատենագ.“ Բ. էջ 151.

[Die zweite ist der noch heute bestehende „Massis“ oder Ararat, welcher in Konstantinopel eifrig die Interessen der Armenier verteidigt und sich trotz der vielen Hindernisse, die einem solchen Un-

ternehmen in der Türkei entgegen stehen, geschickt durch die Scylla und Charybdis hindurchzuwinden wusste. Der Herausgeber des „Massis“, welcher nunmehr als belletristisches Wochenblatt besteht, ist Üttidschian. Er hat sich durch Übersetzungen aus dem Französischen und Englischen bereits Namen gemacht.

„Arm. Bibliot. էջ 151.
2.) Ըստ ոմանց 1881-ին.

32.



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՋԳԱՑԻՆ ԲՆՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ.

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1852-1853

Հրատարակողուհի էր

Տեարք լրագրոյս՝

Գրիգորիս Մարկոսեան.

Սահակ Ապրոյեան.

Ի Տպարանի Արապեանց.

Դիրքը (թերթ) միաժալ թերթ 4 էջ-4 սիւնեան 36X50 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ անխնամ.

Բաժանորդագինը՝ տարեկ. 120 դր. (2)

Լեզուն ոճը՝ } „Վիպասանութիան օգուտները մարդ չի կրնար ուրա-
Ուղղագրութ. } նալիւ մինք ալ նոյնան...“

Ծրագիրը՝

ՔԱՂԱՔԱԿԱՆ—

Ներքին Լուրեր — Կոստանդնուպոլսում պատահած քաղաքական եւ Բարձր. Դրան ալ պաշտօնական զէպքեր: Արտաքին Լուրեր — Արտասահմանեան ընդարձակ տեղեկութիւններ քաղաքական աշխարհից, լուրեր... ԱՋԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ—

Յարուածներ, թղթակցութիւններ, նամակներ խմբագրութեան, գաւառական լուրեր, վիճակագրական, անտեսական եւ ալ տեղեկութիւններ, ճանապարհորդական նկատողութիւններ... . .

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—

Քննադատութիւն-մատենախօսութիւն, Հնախօսութիւն, ռամկական երգեր: — Զանազան Լուրեր — Տեղական եւ ալ կողմերի նորանոր անցքեր. աշուստ վոր խառն լուրեր օտար լրագիրներից թարգմանուած:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ—

Լուրեր խիստ հարկաւոր վաճառականութեան, Եւրոպական երկիրների ընթացիկ գներ զանազան ապրանքների՝ ինչպէս են, մետաքս, բուրդ, բամպակ, տորօն, որդան կարմիր, սուրճ, պղպեղ, լեղակ, գիտոր տղրուկ, օճառ, եւ այլն:

ՆԱՆԱԻՑՄԱՆԲ — Յայտարարութիւններ ամեն տեսակ բաների:

Բովանդակութիւն 1852. թիւ 59.

Քաղաքական—

Ներքին-լուրեր— Պոսնայէն եկած նամակները— Արտաքին գործոց տեսչութեան գրած նամակները օտար տէրութեանց ղեսպաններին— Ահմէտ փաշայի մահը— Իսահան պէլի նոր պաշտօնը— Ահմէտ Աթապէլի Թուրուք երթալը— Սամսունէն Թոքատ նոր ճանապարհ եւ այլն:

Արտաքին-լուրեր— Անգղիա, — Գաղղիա, — Աւստրիա.

Ազգային Լուրեր—

Նամակ յարգոյ տեարց «Նոյեան Աղաւնույ».— «Արշալոյս Արարատեան»-ից արտատպած մի նամակ.— Հ. Գաբր. Վրդ. Այվազովսքի.— Խմբագրութեան կողմից:

Զանազան— Լուրեր.

Նուիրատուութիւն.— Վէլի փաշայի մէկնիլը— Մէհմետ Քեմիլ փաշայի ժողովը

—Անընական մահ—Նաւերի խորտակում— Եղեռնագործութեան մի դէպք —Թրիէտի շոգենաւը փոթորկի ժամանակ—Նեւա գետի սառչելը . . .

Առեւտրական Նուրեր.—
 Կոստանդնուպոլիս 23 նոյեմբ.—Արմրտեաց գները—Կարծր ցորեն, կակուղ մարացորեն, հաճար, գարի, վարսակ: Բանասիրական (գծի տակ) Մօնթէ Քրիսթո—շարունակ. (թարգմ.)
 Ծանուցմունք.



Արոպայում կրթութիւն ստացող հայ երիտասարդները 50-ական թուականներին վերադառնում էին Կոստանդնուպոլիս եւ նորանցից իւրաքանչիւրը ազգային մի

գործ էր ձեռնարկում: Այս երիտասարդներից՝ պարոնայք Գ. Մարկոսեան եւ Ս. Ապրոյեան որ Բարձրագոյն Գրան թարգմանիչներ էին, ցանկացան միեւնոյն ժամանակ պարբերական մամուլի գործով ծառայել հայ գրականութեան, կանխաւ յայտարարելով որ մի շաբաթաթերթ են հրատարակելու «Նոյեան Աղանի» անունով:

«Նոյեան Աղանի» շաբաթաթերթն սկսեց հրատարակուել 1852 թուականի փետր. 28-ին Յ. Միւհէնտիսեանի տպարանից: Երկու խմբագիրները որ իւրեանց պաշտօններով բարձր դիրք ունէին հայ հասարակութեան առաջ, չը կարողացան «Նոյեան Աղանու» յարատեւութեան մասին հոգալ: Մի տարի միայն կանոնաւորապէս հրատարակուելով, հետեւեալ 1853 թ. օգոստոսի

8-ին թերթի համար-74-ը վերջինն եղաւ: «... Երբ որ տեսանք որ մեր 'ի սէր ազգիս յանձնառու եղած ծանր եւ անշահախնդիր աշխատութիւննիս՝ գրուում է «Նոյեան Աղանու.» վերջաբան յայտարարութեան մէջ—այսպէս օրէօր կը դառնանար եւ թանկագին ժամանակներուս կորուստը (») եւ մեր քաջածանհանգստութիւնները պարապ ելլելէն զատ՝ անոնցմէ աւելի նիւթական կորուստներ ալ ընելու սկսանք, . . . այն ժամանակ աւելի ընտիր համարեցինք շաբաթազրիս հրատարակումը մեր յօժար եւ ազատ կամօք առ այժմ դադարեցնել քան թէ . . . մեր վնասները ծանրացնել . . . »

«Նոյեան Աղանու» դադարելու պատճառ դարձաւ եւ այն դէպքը որ խմբագիր պարոնները կարծես վստահ լինելով իւրեանց պետական պաշտօնեայ լինելուց, վերջին ժամանակներում սկսել էին հակառակ ուղղութիւն բռնել հայոց պատրիարքարանի եւ Ազգային Ժողովի: Հայ հասարակութիւնն երես դարձնելով «Նոյեան Աղանուց», ստիպեցին նորան դադարել: Մանաւանդ որ յարգելի խմբագիրները իւրեանց գործով մեծ հատուցում ու գոհութիւն էին պահանջում հասարակութիւնից, եւ լրագիր հրատարակելը համարում էին «ժամանակի կորուստ» եւ «անհանգստութիւն»:

«Նոյեան Աղանուն» աշխատակցում էին քանի մի անձնաւորութիւններ, ժամանակակից լրագրի աշխատակիցներ—Տիգրան Տէտեան, Հայկ Կոստանդեան, Մսեր Գ. Զմիւռնացի, Յ. Պէլլերեան, Մկրտիչ Արաբաջեան, Արամ Յակոբեան. Խ. Ոսկանեան եւ այլք:

«Նոյեան Աղանին» իւր կարճ կենաց մէջ փոփոխուեց երեք տպարան. նախ Միւհէնտիսեան, յետոյ սեփական եւ վերջը Արապեանց տպարան:

«Աղանու» դիրքը սկզբում աւելի փոքր էր եւ 3 սիւնեան. առաջին տարին սեպտ. սկզբին տպարանի փոփոխութեան հետ յարգոյ խմբագրութիւնն աւետեց շաբաթաթերթի դիրքի փոփոխութեան մասին, ի միջի

այլոց աւելացնելով—«... Թերթը մեծացնելովնիս քանի մը տեսակ օղուտներ ալ պիտի քաղեմք. նախ առեւտրական լուրերուն հրատարակութիւնը շարունակել, որոցմէ աւելամայ զրկեցինք մեր ընթերցողները. երկրորդ մեր ուսումնական եղբարց գրաւոր աշխատութիւնները տպել... եւ երրորդ՝ ազգային լրագրոց տեսութիւն մը ընել որոնց շատոնց կը բաղձայինք... 3)»

Ժ Ա Ն Յ Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Նոյեան Աղաւնին» եւ մեր աղբիւրները՝ ա. «... Նոյեան Աղաւնույ՝ քաղաքական լրերն աւելի ընդարձակ են, եւ պաշտօնական աղբիւրներէ առնելուն, աւելի ստոյգ: Սեփական ուղղութիւն մը կամ նման լրագրեցեալն զատ յատկութիւն մը կամ առաւելութիւն սպասել բնականապէս աւելորդ է...»

„Հանդ. Ամսօր“ 1889. էջ 157.

բ. «... Այսուամենայնիւ անկողմնապահութիւններն ու անչահասիւթութիւնը մեզ վահան բռնելով, մանաւանդ եւ ազգասէր հայրենակցած ընթերցասիրութիւնը զստահանալով, հեզ Աղաւնույս թեւերը բանալ տուինք... որ իւր առաջին վեց ամսուան դժուարութիւնները յաջողութեամբ անցուցուց...»

„Նոյեան Աղաւնի“ 1852. Թիւ 27.

գ. «... Բերկրալի սրտիւ կը տեսնենք որ այս պատուական լրագրոյն յարգոյ եւ ուսումնական խմբագրիւնները՝ ազգին ճշմարիտ օգուտը քաջ ճանաչելով, եղբայրասիրութիւնը իրենց առաջնորդ բռնած են...»

„Արշալոյս Արարատ“ 1852. Թիւ 411.

դ. «... Մէկը „Նոյեան Աղաւնի“ անունով քաղաքական մի շարաթաթերթ էր եւ խմբագրուում էր պ. պ. Գրիգոր Մարկոսեան եւ Սահակ Ապրօ ուսումնասէր երիտասարդների ձեռքով: Երկուսն էլ Տաճկաց Բարձրագոյն Դրանը թարգմանի պաշտօն էին վարում...»

„Արձագանք“ 1882. № 22. Ա. Ե.

ե. „Նոյեան Աղաւնի“ շրթ. խմբագ. Մարկոս. եւ Ապրոյեան 52, 53 Կ. Պոլիս...»

„Հայոց արդի մատենագր.“ (ձեռ.)

գ. „Նոյեան Աղաւնի“ 1852. Պոլիս Գ. Մարկոս. «

„Դասագիրք հայ-ազգ.“ էջ 340.

է. „... Նորա („Հայաստանի“) սեղը 1852 Թ. Բունեց „Նոյեան Աղաւնին“... եւ որ գոյութիւնը պահեց համարեա մի տարի...»

„Այժմեան հայերը“ էջ 79.

[„... Вмѣсто его („Гайнастана“) въ 1852 г. появился его „Ноіянь Агавни“ (Ноевъ голубь), ... существовалъ почти годъ...»

„Нынѣш. Арм. էջ 79.

զ. „... Առաջին լրագիրն էր „Նոյեան Աղաւնի“ եւ հրատարակուեց երկու երիտասարդների ձեռքով Մարկոսեանի եւ Ապրոյի որոնք Բ. Դրան թարգմանիչներ էին եւ ունէին միջոց յայտնելու նոր եւ հաստատ տեղեկութիւններ...»

„Հայկ. մատենագ.“ էջ 159.

[„... Die erste war „Nojan Aghawui“, die Taube Noahs und wurde von zwei jungen, Leuten, Markosian und Abro, herausgegeben. Beide waren Dolmetscher bei der Pforte und hatten daher die Möglichkeit, immer neune und zuverlässige zu Nashrichten bringen...»]

„Arm. Bibliot“ էջ 150.

թ. „... Հաւատար եռանդամը եւ ժիր գործունէութեամբ նոյն 1852 տարւոյն... նոր լրագիր մը... Պոլսոյ մէջ... որ կերպով մը հակառակամարտ դրութիւն կուզէին պահել ազգային իշխանութեան... չը կըրցաւ պրակել ոչ իրենց յոյսը եւ ոչ ալ փափաքը...»

„Պատմ. հայ. դպրութ.“ Բ. էջ 484.

2.) Մեր ձեռքում եղած „Նոյեան Աղաւնու“ համարների եւ ոչ մինի վերայ երեւում է բաժանորդագրին:

2.) Տես՝ „Նոյեան Աղաւնի“ 1853. Թիւ 27.



33.

ԱՐՓԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ^{1.)}

Օ Ր Ա Պ Ի Ր

ԱՐՆՈՍԻՐԱԿԱՆ ԸԶԳՈՑԻՆ ԱՐՄՈՒՄՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՑԵՍՈՒԿԱՆ (Ամսաթերթ.)

- Ձ մ ի ւ ռ ն ի ա (Տաճկաստ.) 1853-1856.
- Հրատարակողն էր՝ ամսի սկիզբներին. Խմբագր. Տէտէեան եղբարց.
- Ի տպարանի Տէտէեան եղբարց.
- Դ ի Ր ք ը (տետր) ութածալ թերթ. 1 տպագրակ. թերթ. 32 էջ.
- Թ ու Ղ թ ը եւ տ ի պ ը՝ տժգոյն.
- Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն ը՝ տարեկան 5 դահեկան կամ 55 դուրուշ:
- Լ ե զ ու ն ո ճ ը } , Արախուժեամբ կը տեսնենք որ մեր սիրելի ազգն Ուղղագրութ. } ալ լուսաւորեալ ազգաց. . . .
- Ծ Ր ա գ ի Ր ը՝
- ԱՌԱՋԻՆ ՄԱՍ.
- Ուսումնական, տնտեսական, գիտնական մանր յօդուածներ թարգմանութիւններ. . .
- ԵՐԿՐՈՐԿ ՄԱՍ.
- Ճառեր, ոտանաւորներ, ազգային լուրեր եւ Շեքսպիրի, Մոլիէրի թատերգութիւններից. զուարճալիք. . .

Թ իւրքիայում 50-ական թուականներին հայ գրականութիւնն սկսեց հետզհետէ բարգաւաճել: Ձմիւռնիայում նշանաւոր հայ գրքագէտ անձինք մի շարք թարգմանութիւններ տուին Եւրոպական յայտնի հեղինակների գրուածներից: Այդ միջոցներում եղբարք Տէտէեանները մի տպարան հաստատեցին Ձմիւռնիայում, որի մէջ տպագրուեցին շատ թարգմանական գրքեր եւ մի երկու հայ պարբերական հրատարակութիւններ: 1853 թ. մայիսի 3-ին մի առ-ով յայտ-

նուեց որ մօտիկ ապագայում հրատարակուելու է մի պարբերական հանդէս եղբ. Տէտէեանների տնօրէնութեամբ. « . . . Եւ ահա աս լուսաւորեալ ազգաց հետեւելով նոյն բարեմասնութենէն բոլորովին զուրկ չէ մնացած ըստ որում զանազան քաղաքներու մէջ տրուած շաբաթական լրագիրներ եւ ամսական տետրակները արդէն համազգեաց գրականութեան եւ հայրենեաց պայծառութեանը վրայ ունեցած սիրոյն ապացոյցները կրնան համարուել: Եւ ահա աս լուսաւորեալ գարուս գիտութեանց եւ արուեստից պայծառութիւնը եւ միանգամայն սիրելի ազգերնուս ներկայ վիճակն է որ մեզ կը հրաւիրեն, որ մենք ալ ըստ կարի անոր զարգացմանը օգնութիւն մը ըրած ըլլանք: Ուստի վստահանալով այնպիսի ազգասէր ազայից եւ ամիրայից վրայ, որոնք ազգին բարելաւութեանը համար ամեն միջոցի գործ կը դնեն եւ ձեռննտուութիւն եւ ազգասիրական քաջալերութիւն չեն խնայեր, համարձակեցանք ձեռք զարնել «Արփի-Արարատեանը» որ եւ առանց փոփոխութեան անուանով շրջաբերական տետր մը հրատարակուելու. . . »

Նոյն տարին յուլիսի 1-ից սկսեց հրատարակուել «Արփի Արարատեանը» որ եւ առանց փոփոխութեան եւ ընդհարման շարունակուեց երկու տարի-1855: Երրորդ տարին՝ դեռ չը հասած 8-դ համարը, 7-դը վերջինն եղաւ. այսինքն դադարուեց 1855 թ. դեկտեմբերին:

«Արփի Արարատեանի» գործունէութիւնն ազգի կողմից այնքան էլ գնահատութեան չարժանացաւ, գլխաւորապէս իւր սակաւակեցութեան, նիւթերի պակասութեան կամ թէ աղքատութեան պատճառով: Ժամանակակից մի անհրաժեշտ գործ չէր «Արարատեան Արփին»: ալ ընթերցանութեան համար զանազան զուարճալիքների եւ յօդուածների շաբաթական ժողովածու: Եղբ. Տէտէեանները հրատարակեցին «Արփիի» մէջ «Հազար եւ մէկ գիշերներ» Արաբական հեքիաթները:

«Մեր ցանկալի նպատակը-- գրում են Տէտե-
եան եղբայրքը-- գուարճալի եւ բարոյական
գրուածներ եւ թարգմանութիւններ հրա-
տարակելով հասարակութեանը զբօսացնել
եւ ընթերցասիրութեան ճաշակը ըստ կարի
տալը ըլլալով՝ «Արփի Արարատեանը» երբէք
կրօնքի եւ Կառավարութեան դէմ բան մը
չ'պիտի հրատարակէ . . .»

Թ Ա Ն Յ Ո Ւ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Արարատեան Արփին» եւ մեր աղբիւր-
ները—

- ա. «. . . Առաջին եւ երկրորդ տարին առանց
փոփոխութեան եւ յառաջադիմութեան
անընդհատ շարունակուեցաւ . . . ինչպէս
առաջին մասն, նոյնպէս երկրորդն տկար
ուժոյ ողորմելի արդիւնք մըն էր . . .»
«Հանգ. Ամսօր.» 1889. էջ 158.
- բ. «Հետեւեալ ազգարարութիւնը՝ մօտերօ
Զմիւռնիոյ մէջ «Արփի Արարատեան» ա-
նունով ամսատետրի մը հրատարակու-
թեան բերկրառիթ լուրը կուտայ . . .»
«Մասիս» 1858 թ. (20 մայիս) էջ 1.
- գ. «Արփի Արարատեան. Զմիւռնիա 53—56
խմբք. Տէտէեան.»
«Հայոց արդի մատենագր.» (ձեռագր.)
- դ. «Արփի Արարատեան» հանդէս բանասի-
րական, ազգային, տնտեսական, ընտա-
նեկան(°), վրայական(°). աշխատասիրեալ
'ի Ա. Յ. Տէտէեան. Զմիւռնիա. 1853.
«Մատեն. հայկակ.» Զարբ. էջ 73.
- ե. «Այդպէս ահա 1853 թուին Զմիւռնիայի
մէջ Տէտէեան երեք եղբայրները մի ըն-
դարձակ տպարան հաստատելով հրատա-
րակել են «Արփի Արարատեան» անունով
ամսագիր, որ մեծ մասամբ եւրոպական
հեղինակութեանց թարգմանութիւններ էր
բովանդակում իւր մէջ եւ ընդամենը եր-
կու տարի շարունակուեց . . .»
«Արձագանք» 1882. № 22. Ա. Ե.
- զ. «Տէտէեան եղբայրք գործունեայ փոյթքն
ու գովելի աշխատասիրութիւնը՝ շատ ա-
ւելի պատուաւոր ու պատուական պիտի
ըլլար, իրեն եւ ազգին եթէ այս նկատ-
մամբ աւելի մտադրութիւն ըլլուէր . . .» Ա-
րարատեան Արփին» միայն երկու տարի
շարունակուեց . . .»

- «Պատմ. հայ դպրութ.» էջ 488.
- է. «Արփի Արարատեան» 1853. Զմիւռնիա.
Տէտէեան.»
«Իստ. հայ-սոց. պատմ.» էջ 338.
- ը. «Արփի Արարատեան. ամսագիր, բա-
նասիրական, տնտեսական եւ ազգային.
1853 թու. Տէտէեան եղբայրք—հրա-
տարակիչք. . .»
Յիշատակարան ձերմակ. (ձեռագիր).
2.) 2. Զարբանուկեան գրել է՝ . . . Ընտանեկան
Վիպական. . .»

34.

ԸՆՏԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԷՐ^{1.)}

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԿԹՈՒԹԵԱՆ
(Ամսագիր.)

Կ ո ս տ ա ն գ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1854-1855.
Հ Ր ո ս ա ր ա կ ու ու մ է Ր՝
Տ ն օ Ր է ն ու թ ե ա մ ք Ազգասիրական Ընկե-
րութեան.
Խ մ ք ա գ ի Ր՝ Վ. Սօֆեալեան.
Ի տ պ ա Ր ա ն ի «Ընտ. Իմաստ.» օրագրի.
Ծ Ր ա գ ի Ր ը՝
Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն—Յօդուածներ բարոյական կըր-
թութեան, առական, խրատներ. . .
Ս Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն—Հայկական արդի եւ հին
դրականութեան վերաբերեալ գրուածներ
պատմութիւն քննադատութիւն. . .



ութեանի մայրաքաղաքում
50-ական թուականնե-
րի սկիզբներին էր որ
կազմուեց մի «Ազգա-
սիրական ընկերու-
թիւն» որի նպատակն
էր ազգասիրաբար ծա-
ռայել ազգային գրա-

կանութեան եւ բարոյական կրթութեան: Այս ազգասէր ընկերութիւնը 1854 թուականի սկիզբներից սկսեց Հրատարակել «Ընտանի Իմաստասէր» ամսաթերթը: Նիւթերի նուագութեան եւ բռնած անգոյն ուղղութեան համար, «Ընտանի Իմաստասէրը» գուր չ'եկաւ Կ. Պոլսի ազգայնոց, որոնցից ոչ մի յոյս ու քաջալերութիւն չունենալով, «Ազգաս. Ընկերութեան» ամսաթերթը հազիւ մի տարին կարողացաւ լրացնել:

Թ Ա Ն Ս Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Ընտանի Իմաստասէր» ամսաթերթի մասին մեր աղբիւրները—
 ա. ,, . . . Յետագայ 1854 թուին Պոլսոյ մէջ նոր ստեղծուած ,,Ազգասիրական՝ անունով ընկերութիւնը կամեցաւ ընտանեկան ընթերցանութեան համար մի բանասիրական ամսագիր հրատարակել ,,Ընտանի Իմաստասէր՝ անունով, բայց այս գործը նոյն տարին դադարեց. . . .
 ,,Արձագանք՝ 1882. № 22 Ա. Ե.
2. ,,Ընտանի Իմաստասէր՝ 1854 Պոլիս. Ազգասիր. ընկեր.՝
 ,,Իսս. հայ-ազգ. պատմ.՝ էջ 338.
- գ. ,, Ընտանի Իմաստասէր. ամսաթ. Կ. Պոլիս 54—55. Ազգասիր. Ընկերութեան հրատարակութեամբ՝
 ,,Հայոց արդի մատեն.՝ (ձեռագ.). . .

35.

ԹՈՒԹԱԿ ԿԱՅԿԱԶԵԱՆ ¹⁾

ՕՐԱԳԻՐ

ԲԱՆՍԻՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

(Ամսաթերթ.)

Զ մ ի ւ ռ ն ի ա (Տաճկաստ.) 1848—1849.
 Հրատարակուում էր

Խ մ բ ա գ ի Ր՝ Տ. Վրթանէս.
 Ի տպարանի «Թուրթակ Հայկազեան»
 Գ ի Ր Ք Ր՝ (Թերթ) ութածալ 1½ տպ. թերթ.
 16 էջ 14X20 հ.-մետր.
 Ծրագիրը՝
 ԲԱՐՈՑԱԿԱՆ—Յօդուածներ բարոյականութեան վերաբերեալ. առականեր, ոտանաւորներ, վէպիկներ եւ այլն:
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Պատմական, մատենագրական, հնախօսական. . .
 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—Գրական, գիտնական յոդուածներ. ճանապարհորդութիւն, կենսագրութիւն . . .



րփի Արարատեանի» հրատարակութեան հետեւեալ տարին բարի նախանձը դըրդեց համաքաղաքացի գրագէտ երիտասարդներից մէկին, որ (1854 թ.) սկսեց

Հրատարակել «Թուրթակ Հայկազեան» անունով մի ամսագիր:

Իզմիրաբնակ Տ. Վրթանէս խմբագիր «Հայկազեան Թուրթակի» թէեւ կարելոյն չափ աշխատում էր իւր ամսագրի կանոնաւորման խնդրի մասին, եւ աւելի դժուարութիւնների չը հանդիպելու համար մի համեստ տպարան գնեց, բայց եւ այնպէս չը յաջողուեց նորան թերթի բարելաւութիւնը տեսնել: Զանազան հանգամանքներ կուտակուեցին խմբագրի գլխին եւ խեղճին յուսահատեցին: Ամսագիրը մի տարին անգամ չը կարողացաւ լրացնել, 1855 թուականի ըսկիզբներին հանգու:

ԺԱՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ «Թուլթակ Հայկազեանի» մասին—
 ա. «Թուլթակ Հայկազեան 54—55 խմբ. վրթանէս. Զմիւռնիա»
 «Հայոց արդի մատենագր.» (ձեռագ.)
 բ. «Թուլթակ Հայկազեան 1855. Զմիւռնիա Տ. վրթան.»
 «Իաս. հայ-ազգ. պատմ.» էջ 339.

36.



ԱՐԾՈՒԻ

ՎԵՍՊՈՒՐԵԿԸՆ^{1.)}

քուղեայ հայրենասէր քեռօք
 յԱրժրունի Մենաստանէն Վարազայ

ԱՄՍԱԳԻՐ

Վարագ (Տաճկ.) 1855—1864.
 Հրատարակողու էր՝ ամսի վերջերին.
 Խմբագիր-Հայրենախօս՝ Մկրտիչ վարագապետ Խրիմեան.
 Ի տպարանի «Վասպուրական Արժւոյն»
 Դիրքը (տետր.) 1 տպ. թերթ. 24-32 էջ
 14x21 հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ բաւարար.
 Բաժանորդագիւնը տարեկան—
 Կոստանդնուպոլիս 3 արծ. մէճիտ.
 Ռուսաստան 4 մանէթ.

Լեզուէն, ոճը՝ } «Թող արդ պահապանն քո
 Ուղղագրութ. } զուարթուն հրեշտակն նստեալ
 Մրագիրը՝ } 'ի վիմի բարձր բունոյտ...»

Ա. ՀԱՆԴԷՍ ԱՍՏՈՒՄԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

—Առ որով պարունակելոց են որ ինչ առ ճշմարիտ կրօն Աստուածապաշտութեան որ առ հաւատս եւ առ եկեղեցին Քրիստոսի վերաբերի եւ ըղծլտի առնել այսու զքաղցրութիւն բանիցն Աստուծոյ 'ի քիմս հայկաժին մանկտոյն քան զմեղր քաղաքական եւ ազգասիրական բանից. . .»

Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆ՝ԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ ՀԱՅՈՑ—Ընդ որով կարգաւ լիշատակելոց են գովութեամբ հանդերձ նախնի քաջազունքն մեր եւ այնոքիք որք հետեւողք գտանին յարդի ժամանակս նոցին հայրենազարդ գործոց ըստ ամենայն հանգամանաց ճառագրելով. . .»

Գ. ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԻԱՐՀԱՑ—

Յորում իբրեւ 'ի պատկերին նշմարելոց են եւ արդի վիճակ քաղաքաց, գիւղից, դերդաստանաց, վանօրէից, մենաստանաց, եկեղեցեաց, ժողովրդոց եւ համօրէն այլ հանգամանաց. որ առ աշխարհագրական տեղեկութեան վերաբերին. . .»

Դ. ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ—

Որ իբրեւ զբուրաստանաբազմազան ծաղկօք զարգարեալ բուրելոց է լինքնէ զանուշահոտութիւն մեծամեծ առաքինութեանց. . .»

Ե. ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ—

—Առ որ բովանդակեմք զհնագունիցն եւ արդի հեղինակաց բազմանիւթ գրուածս ընգարձակ ոճով շարագրեալքն եւ եթէ չաբարանութեամբ՝ զորս մի անգամ 'ի ձեռս բերիլ կարիցեմք 'ի հնագիր մատենագրութեանց. . .»

«Իսկ եթէ պատահեցի երբեմն այնպիսինիւթ ինչ, որ ոչ այն չափ վերաբերի առ

Հինգ սեռս լիշեալ յօրուածոց, զայն եւս արժան դատեմք 'ի վերջոյ թերթին հրատարակել. . . »

Քովանդակութիւն 1858. թիւ 3—(մարտի.)

Ա. Հանդէս Աստուածապաշտութեան եկեղեցաշէն հարցն—

—Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայոց.

Բ. Հանդիսարան հայրենասէր առաքինեայն—

—Արա Արամեան, Նահապետ հայոց.

—Կենցազօգուտ նոր ընկերութիւն թրթենեաց մշակութեան—Մկ. Տ. Ատոմ.

—Առ մեծարգոյ ազգասէր Կարապետ աղա թաշճի—Գ. վ. Սրուանձտեան.

—Դամբանական ճառ 'ի Նիկողայոս Պալեան:

—Ի մահ Պայազատին Պալեանց Նիկ. ձարտարապետին—

Գ. Տեսարանք հայրենի աշխարհաց—

—Մայրաքաղաք Մենաստանաց Վարազ (պիտի շարունակուի.)

Դ. Բուրաստան Բարոյական առաքինութեանց—

—Աղէկութիւն բարերարիդ, գրած պահէ միշտ քո սրտիդ. (բարոյական առած)—Արշ. Գրիգոր.

«Որ գործէ գերկիր իւր լցցի հացիւ» (Առակ) Մ. Փափագեան:



աճկա - Հայաստանում մինչեւ 50-ական թրուականները ոչ մի հայ պարբերական հրատարակութիւն չէր երեւում: Ահա ժամանակակից ժրջան ու դործունեայ Խրիմեան Մկրտիչ երիտասարդ

վարդապետն (այժմ Տ. Տ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մկրտիչ Առաջին) բուն Հայաստանի կենտրոնում կամենում էր մի ամսաթերթ հիմնել, քարոզելու իւր սիրելի ժողովրդեան Աստուածային սուրբ խօսքերը: Ետևով յաջողութեամբ պսակուեց հայրենասէր հոգեւորականի այդ մտադրութիւնը որ նա 1855 թուականի ապրիլ ամսին սկսեց հրատարակել «Արծուի Վասպուրական» անունով մի կրօնական, ազգային, բանասիրական ամսօրեայ հանդէս. բայց ոչ Հայաստանում, այլ Օսմանեան մայրաքաղաքում՝ (2) տակաւին նորա նպատակները կ'իրագործուէին, մինչեւ որ հնար կը լինէր նորան տպագրութեան ամեն հնարաւորութիւններ ձեռք բերել:

Խրիմեան Հայրիկի նպատակը շատ ցանկալի եւ գովելի էր «անհրաժեշտ պարտք է բոլոր քաղաքացի իշխանաց. . . որոնք կարող եւ ձեռնահաս են կարիք ընելու համազգի գիւղացւոց կրթութեան համար ըստ ամենայնի հոգ տանել: Վասն զի դպրոց, ուսում, վարժապետ, ազգասիրութիւն, միայն քաղաքացւոց համար չէ»—դրում էր նա: Իւր միակ փափաքն էր «Հայրենակից գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան համար» աշխատել:

Կոստանդնուպոլսում՝ Իւսկիւտար թաղում «Արծուի Վասպուրականին» սկսուելով 1855 թ. ապրիլից, լրացրեց միամեակը՝ այսինքն մինչեւ 1856 թ. ապրիլ-մայիս:

Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան կողմից 1857 թուականին Խրիմեան կարգուեց առաջնորդ Գլակայ վանից: Հայրիկը իւր նոր պաշտօնակատարութեան տեղը հասնելով, կարգադրեց անմիջապէս Կոստանդնուպոլսից բերել տալ տպագրական մամուլ, տառեր թուղթ եւ այլ պարագաներ, բայց այդ ամենը կապուած էին զանազան դժուարութիւնների հետ:

1858 թուականին լուսուար ամսից ըսկուեց «Արծուի Վասպուրականի» երկրորդ տարին (2): Ահա թէ ինչ է ասում հայրենախօս խմբագիրն իւր ամսաթերթի այդ

տարուայ առաջին տետրակում:— «Իսկ որք զարմացան եւ հարցանեն 'ի քէն Արծիւդ իմ «Թէ զք է այգ նոր օրինակ փոփոխումնդ. ո՞րպէս եկեն եհաս տարածամդ գարուն 'ի Վասպուրական աշխարհ եւ իբր հալեալ 'ի ջուր գարձան վաղվաղակի բարձեալ դիզեալ ձիւնք լերին Վարագայ. եւ այս իսկ են առաւել սքանչելիք յայս մեր զի վասն Արծուոյդ համբաւէին թէ մեռաւ եւ թաղեցաւ յաւուրս աւագ շաբաթոյն եւ յաւելաւ առ նախնին Արծրունեաց եղեալ առ ընթեր շիրմաց նոցին որով եւ ամենայն մարդիկ զԱրծիւոյ ընդ մեռեալ համարէին. . . »

— «Տուր պատասխանի դոցա գու այժմիկ ասա եթէ արդար է զիս մեռեալս կարծէին մարդիկ. ընդ էր ապա եղին կնիք 'ի վերայ կափարիչ դրան գերեզմանիս եւ պահապանք շուրջ զինեւ կացին զգուշութեամբ. . . »

Վարագում «Արծուի Վասպուրական»ին կանոնաւոր կերպով հրատարակուեցաւ. երկու տարի՝ 1858—59:

1860 թուականին, Մկրտիչ վարդապետը՝ ներկայիս Վեհ. Կաթողիկոսը, Վանի առաջնորդ Իգնատիոս վարդապետի հետ ուղեւորուեց ս. Էջմիածին, որտեղից ժողովարարութեան համար մի կոնդակ ստանալով Մատթ. կաթողիկոսից, անց կացաւ Տփլիս եւ Կովկասի միւս քաղաքները, ամեն տեղ գոհացնելով ու հիացնելով իւր ոգեշունչ քարոզներով:

Կը նշանակէ «Վասպուրականի Արծուին» չէր հրատարակուում 1860 թուականի ըսկիզբներում, նորա հայրենախօս-խմբագրի՝ Վարդից բացակայութեան պատճառով: Նոյն թուականի օգոստոս ամսից սկսուեց «Արծուի» գ. տարին. իսկ ե. տարին սկսուեց 1861 թ. վերջերին: (4)

1862 թուականին Խրիմեան հրաման է ստանում Մըշու վիճակի առաջնորդ եւ ս. Կարապետի վանքի վանահայր կարգուելու՝ ձեռքից չը հանելով Վարագը: Այժմ տեղիս ժառանգաւորաց Դպրոցի աշակերտներն որ արդէն լուրջ եւ չափահաս երիտասարդներ

էին գարձել, այնպէս որ Հայրիկի գործերի բազմութեան պատճառով «Արծուի Վասպուրականի» հրատարակութեան գործը իւրեանց վերայ առան: Այգպիսով «Արծուի Վասպուրականին» տեւեց մինչեւ 1864 թուականի մայիս-յունիս ամիսները: (5.)

Հայրիկի պատուական ամսագիրը նշանաւոր է իւր գործունէութեամբ: Ժամանակակից հայ հասարակութիւնը լիանում, կըշտանում էր Մկրտիչ վարդապետի հայրենասիրական աստուածաշաշտական ու բարոյական քարոզներով: Կոստանդնուպոլսոյ բարելիշատակ հայ բարերարների օժանդակութեամբ, Խրիմեան Թիւրքիայի խուլ կողմերում, այն էլ կէս դար սորանից առաջ, կարողացաւ իւր սիրելի ժողովրդին, իւր խոսիչներին առատ նիւթեր տալ կարգալու իւր ամսագրի կանոնաւոր հրատարակութեամբ: Ի՞նչ ասել կողգէ որ Հայրիկի այդ անձնուիրաբար գործունէութեան մէջ պակաս չէին ազգային փշերն ու տատասկները որոնք, ամեն կերպ աշխատում էին խափանել տալ Վեհ. Հայրիկի գործունէութիւնը: Սակայն չը յաջողուեց նորանց այդ բանը եւ Հայրիկ կարողացաւ յաղթանակը տանել:

«Արծուի Վասպուրականի» ամսագրին աշխատակցում էին՝ Գարեգին Սրուանձտեան, Յակովբ քահանայ Մխիթարեան, Մկրտիչ Տէր-Ատոմեան, Արշամ Գրիգորեան, Մարտիրոս Փափագեան, Յակովբ Մելիք-Յակովբեան, Տիգրան Գալփակճեան, Պօղոս Առաքելեան, Պետրոս Մատթեանց, Արսէն Թոխմախճեանց, Գեղամ Աբրահամեանց, Եղիշէ Մեսրոպեանց, Տիգրան Ամիրճանեան, Նահապետ Մեսր. Սարկաւագ Փիրղալէմեան, Յովսէփ Սոլախեան, Ար. Գէորգ Բժիշկեանց, Հրաչեա Մարգ. Սեւիկեան, Բարդուղիմիոս վարդապետ, * * Արտամտեան, Խոսրով Տէր-Կարապետեան, Պաղտասար Միհր. Յարութիւնեան, Խաչատուր Քեօսեանց, Մ. Մկրտիչ Ե. եւ այլք:

Կոստանդնուպոլսում եղած միջոցին «Արծուի Վասպուրական» տպագրուում էր Ա-

րամեան տպարանը, յետոյ Վարազում:

Վեհափառ Հայրիկի կամ «Վասպուրականի Արծուի» մասին այնքան շատ են գրուել, որ ազգը մեզանից մի նորութիւն չի կարող սպասել: Ով ցանկանում է աւելի լաւ ծանօթանալ «Արծուի Վասպուրականի» հետ, թող ձեռք բերէ եւ կարդա նորա բոլոր համարները: Ինչպէս եւ Վեհ. Խմբագիր-հայրենախօսի հետ՝ նորա միւս արժանաւոր գրուածները:

Այսպէս ուրեմն «Արծուի Վասպուրականը» սկզբից մինչեւ 1862 թուականը, խումբագրուում էր Խրիմեան վարդապետի ձեռքով, իսկ յետոյ երկու տարի—մինչեւ 1864 թուականի կիսին, Հայրիկի կրթած սաներու տնօրէնութեամբ:

Այս ամսագրի ճակատին սկզբի տարիներում դրուում էր մի նկար, որը ներկայացընում էր մի թեւատարած արծիւ ամպերի մէջ գայիտոնի վերայ կանգնած: Իսկ յետոյ 60-ական թուականներին փոխուեց մի ուրիշ նկարի:—Մի կողմից Վարագն է երեւում. հեռուից նկատուում է Վանայ ծովակը եւ Վան քաղաքը Վարագի կողմից: Լեռների յետեւից արեւն արդէն կիսաչափ երեւում է եւ իւր լոյսը տարածում ամենուրեք: Արեգակի ճառագայթների մէջ, դէպի ձախ Վանի կողմն է սլանում մի խրոխտ արծիւ որի կտցում բռնած թըղթի վերայ պարզ կարգացուում է՝ «Ողջ ոյն Հայրենեաց»:

Թ Ա Ն Յ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1). Մեր աղբիւրները «Արծուի Վասպուրականի» վերաբերմամբ—

ա. «... Որոնց կարգումն է եւ «Արծուի Վասպուրականի» ամսական հրատարակութիւնը որ յայտնի է Ռուսաստանեայց հայերին իրան ազգաշունչ բովանդակութիւններով ... այս պատուական ամսատետրն որ 1857 թուականից սկսած հրատարակում է մեծաջան Մկրտիչ վարդապետի եւ իրան աշակերտաց փոքրիկ զասախումբերի

աշխատասիրութեամբ ... Այս «Վասպուրական Արծուին» յայտնի է այս կողմերի բանագէտներին որովհետեւ 1859-ին (Ռուսաստանում) մօտ եօթանասուն բաժանորդներ ունէր ...

«Արծուի» 1860. թիւ Ժբ. (էջ 1007.)
բ. «... եւ վերջապէս կը յաջողէր տպագրութեան մամուլը ձեռք բերել եւ «Վասպուրական Արծուի» ամսաթերթ կը հրատարակէր ընդ հովանեաւ թեւոց խաչին. Իւր հայրենասիրական ձայնը 'ի հեռաւորս կը հասնէր ... Օտեան ... իրեն նմանեաց հետ քաջալերելով զվարդապետն՝ կը վերադարձնէին «Վասպուրական Արծուին» է Վասպուրական...»
«Արաքս» 1888. գերք բ. էջ 75.

գ. «... Խրիմեան Մկրտիչ վարդապետ Հայաստանեայց աղէտիցն ու թշուառութեանց ականատես ու գթով եւ կարեկցութեամբ լեցուն սիրտ մը, փառաքեցաւ անոր ցաւոցն ու հառաչանաց թարգման ըլլալ իւր թերթովն ազգայնոց սէրն ու մտադրութիւնը հրահրելով այն նուիրական ու անտերունջ հոգոյն վրայ, որ իւր նիւթական ու բարոյական աւերակացն ու սուերմանց դարմանը կը փնտրէ...»

«Պատմ. հայ-դպր.» բ. էջ 489.
դ. «... Խրիմեան բերել տուեց Վ. Պալսից մամուլ, թուղթ, տառեր, մի խօսքով ինչ որ հարկաւոր է տպագրութեան համար եւ 1857 թուից սկսեց հրատարակել ամսագիր: Դա «Արծուի Վասպուրականի» ամսագիրն է, որի անունը լաւ յայտնի է հայութեան ... Սրկար ժամանակ չանցած՝ լոյս տեսաւ Հայաստանի առաջին ամսագիրը՝ «Արծուի Վասպուրականի» առաջին համարը.»
«Խրիմեան» Խ. Մալումեան. էջ 36, 37.

ե. «... Խրիմեան Մկրտիչ վարդապետը 1856-ին, Հայաստանի այս անձնանուէր նահատակին ազգասիրութեանը եւ հայրենասիրութեանը վրայ գովեստ չհարկաւորիւր, վասն զի ինքնին իւր արդիւնքները կը խօսեն: Վանի մէջ տպարան հաստատելը ու հոն «Արծուի Վասպուրականի» անունով թերթի հրատարակելը (որոնց համար ալ իր հայրենակիցներէն փոխանակ օգնութիւն գտնելու մեծամեծ արգելքներ կը տեսնէ) մեծագործութիւններ կը սեպենք եւ... տարակոյս չունիմք թէ մեր հայրենասէր եկեղեցակոններէն այս

փորձն ընելու փափաքողներ պիտի գրտնուին այսուհետև երբ միջոց ունին ձեռնուրին, եւ իրենց ազգին ու հայրենեաց ծառայութիւն ընելու ընդարձակ ասպարէզ մը կայ առաջեւին. [Թող չը վհատին այլ տեսնեն օրինակն որ կուտայ Խրիմեան վարդապետը ան ատեն ազգն ալ զիրենք կօրհնէ ու հայրենիք իրեն յիշատակը կ'անմահացնէ. . .]

„Իսս. ազգ. պատմ.“ Ս. Փափազ. էջ 317
 Գ. „Արծուի վասպուրականի—Քուրցեալ յերկրէն վանանգա (“) ի Տոսպ. (“). յաշակերտաց ժառանգաւորաց դարոցին վարագայ: Ի վանս վարագայ 1858.“

„Մատենադ. հայկակ.“ Զարբ. էջ 68.
 Է. „ . . . Առանց մի ուսումնարան մտնելու նա (Խրիմեանը) առաջացրել է իւր մտքերը մըտաւոր դարգացման մէջ որ այսօր համարուում է մեր առաջնակարգ հրապարակախօսներէց. հեղինակներէց ու մատենագրներէց մէկը. եւ շատ բանի մէջ նա դեռ ամենից էլ բարձր է: Մեզ օրինակ նրա „վասպուրական Արծուի“. . . “

„Խրիմեան Հայրիկ“ Տ. Փիրում. էջ 38.
 Ը. „ . . . Որչափ կարեւոր եւ օգտակար, նոյնչափ դժուարին գործ էր ազգին բնաշխարհին մէջ թերթ մը հրատարակել քանի որ ամեն ներթական միջոց ու դիւրութիւն կը պակսէր . . . բորբոքեալ սրտէ խմբագրուած թերթին չորս թուերը կը յաջողին համոզել կարող ազգայիններէն . . . Խըմբագրին դիտաւորութիւն չէր թերթ մը հրատարակած ըլլալ. . . “

„Հանդ. Ամսօր “ 1890. թիւ 9.
 Թ. „ . . . Նոյն 1855 թուին Խրիմեան Հայրիկը իւր „Արծուի վասպուրական“ ամսաթերթը սկսեց Պոլսում, ուր երկու (') տարի շարունակելուց յետոյ երբ ինքը 1857 թուին Գլակայ վանից առաջնորդ դարձաւ, այնտեղ տպարան հաստատեց եւ շարունակեց իւր ամսագիրը մինչեւ 1862 (') թուականը . . . “

„Արձագանք“ 1882 թ. N: 22. Ա. Ե.
 Ժ. „Արծուի վասպուրական—1857 թ. (')
 Կ. Պոլիս, Մկրտիչ վ. Խրիմեան“

„Իսսագ. հայ-ազգ. պատմ.“ էջ 338.
 Ժա. „ . . . Նա (Խրիմեանը) եղաւ որ ամենամեծ արգելքներէ յաղթելով առաջին անգամ Հայաստանի մէջ տպարան հաստատեց (1857.) եւ առաջին հայ թերթը հը-

րատարակեց (Արծուի վասպուրական) վանի վարագայ վանքում ուր եւ ժառանգաւորաց դարոց հիմնեց . . . “

„Պատմ. հայոց“ Ս. Պալաս. էջ 479.
 Ժբ. „ . . . Սորա (,Արծուի վասպուրականի“) առաջին համարներն այնքան ոգեւորեցին ընթերցողներին որ շուտով ժողովարարութիւն եղաւ եւ Հայրիկը կարողացաւ իր թերթի . . . իւր սեփական տպարանում լոյս տեսնել. . . “

„Հայոց արդի մատենագր.“ -(ձեռագ.)
 Ժգ. Տէր-Մխիթարեան արժ Յակոբ բահանանոր „Արծուի վասպուրականի“ մշտական աշխատակիցներէց մէկն էր, մի ոտանաւոր ուղերձ է նուիրել վեհ. Հայրիկին որ հետեւեալն է: Հանդուցեալը ՅՏ տարի առաջ գըրելով ներքոյ գրեալ ոտանաւորը, կարծես այն ժամանակ նախազգացել է Խրիմեանի ապագայ (այժմեան) պանծալի վիճակը—

Թուհա՛ր Արծուիդ վասպուրական
 'Ի գարաւոր երբ 'ի քուն,
 Զքեզ կապեալ կաշկանդէին
 Բեւեաք երկնից հաստարուն:
 Ասա՛ թուհաք 'ի թեւ թեւ
 Զխորի թողեալ ծերունի
 Նորափեռուր դարգարեցար
 Յառոյդ 'ի տես նազելի:
 Թուի՛ր յԱրեւ լուսապայծաւ
 Կնիքդ Հայկեան արքայից,
 Աչք հայկազանց առ քեզ պշնւն,
 Աչք Արամեան երամից:
 Գագաթ Արծուոյդ այն ինչ 'ի Թագր
 Թագիւ պճնոյր շող 'ի շող,
 Դառ արագէլք դիշերահաւք,
 'Ի քէն կային սրտադող:
 Թուի՛ր հապա, սիրուն Արծուի
 Թուի՛ր Թուի՛ր պաղտախն:
 Յայդ քո թուի՛ց սքանչելի,
 Ես 'ի վազուց փափաքիմ:
 Սուաունելոյդ հասցէ համբաւ
 Ոչ թէ փայն 'ի Բիւզանդ,
 Այլ 'ի բոլոր յազդ հայկազանց,
 Որք գտանին աստ եւ անդ:
 Մի նեղեցցին սլաք թեւոց
 Բոց նենգողաց անել յուշ
 Հերիք ասցին յարար իւրեանց
 Առնել զքեզ բանդապուշ:
 Մասիս, Նոյեան եւ Ազաւնի
 Եւ Արշալոյսն անգրանիկ
 Երբ Եւրոպա եւ Բագմալ է պ
 Զքեզ առցին երջանիկ:
 Զթեւ ընդ թեւ կապեալ սերով
 Ընդ այս վեհից վաղեփ,
 զԱյրարատեան բանալ զԱրեւ,
 Ուսի՛ր նորոգ մեր Արծուի:

Զարթուր հեղեղ մողթեմք 'ի քէն
Արծուիգ անմահ երկնաւոր,
Զայս կապ սիրոյ պահէրս՝ յաւէրս,
Անմահ փառօք նորանոր:

Իցէ Արծուիգ իմ աննման
Իցէ այն օր եւ այն դար,
Յորում Արփին Հայաստանեայց
Գարձի անդրէն յսկեզար:
Տու՛ր մեզ զայն օր յոր 'ի վերոյ
Դեցուք գըլխոյն նոր Արծուոյս
Զողթական դափնետայ պսակ,
Եւ սաղաւարդն ազգալոյս:

Մարմինը հայոց գեւ 'ի դամբան
Ձեն առեալ քուն եւ զազար,
Դազարեցւոյ նորոգ փառօք
Թորգոման տէր բարերար:
Քանի՜ թողուս Աստուած անմահ
Զազգն հայոց 'ի յերեր
Եւ զարաստուս հեղուլ նոցա՝
Փոխան զեռոց վշտաբեր:

Դու սառնացեալ ազգին հայոց
Փոխարինեա զԱպրիէլ:
Զուարթ Մայիս, նաեւ ընդ այն
Զաւետարեր Գարբիէլ:
Աբազածայ Յնայ ծաղկանց
Կոկնափակ վազգի թերթ,
Թերթ 'ի թերթի ծաղկեցոյ Տէ՛ր,
Թերթ շաղ 'ի շաղ ոսկեթերթ:

զԱրեւ յամպոյ Արքանագիտան
Հանել 'ի լոյս Սարաւոյթ,
Միթարեան քահանային
Են պաղատանք եւ կարօտ:
Յակոբ վարժապետ քահանայ Տէր-Միթարեան:


„Արծուի Վասպուրական“ 1858 էջ 53.
„Արծուի Վասպուրականի“ մասին մեր ազգրիւ-
ներէց ոչինչ չեն գրում՝ պ. Արտիւր Լայստ իւր
„Հայկական մատենադարան“ում, որ բոլորովին
գարմանաբէլ է: Յիշել այնպիսի լրագիրներ որ ա-
մենատնշանն է եւ ոչ մի արժանաւորութիւն չէ
ունեցել, ինչպէս օրինակ „Թուրքի Հայկազեան“
եւ այլն. իսկ մոռանալ „Արծուի Վասպուրականի“,
„Մշակի“ պէս հետաքրքրութեան արժանի լրա-
գիրներին՝ բոլորովին անարդար է եւ դատապար-
տելի:

- 2) „Արծուի Վասպուրականի“ նախ Կոստանդնու-
պոլսում սկսուելը 1855 թուականին, սխալ-
մամբ չեն յիշում „Կոռնիկ“, Պալասանեան,
Մալումեան, Գափամաճեան:
- 3) Պալասանեան եւ Մալումեան գրել են որ „Արծ.
Վասպ.“ երկրորդ տարին սկսեց 1857-ին, որ
սխալուում են: 1858-ին սկսուելու համար մի
զօրեզ փաստ, որ որ մեր ձեռքում ունինք
„Արծուի Վասպուրականի“ բոլոր համարները:
- 4.) Հայր Գալէմբեարեան եւ ուրիշները գրում են
1828-ի վերջերին, իսկ այդ ժամանակներում

Խրիմեան արդէն Մըշու վիճակի առաջնորդ էր
նշանակուած:

5.) Մեր ազգրիւներէ մեծամասնութիւնը գրել են
որ „Արծուի Վասպուրականին“ հրատարակ-
ուեց մինչեւ 1862 թուականը, եւ ոմանք
թէ 1863-ը իսկ ոչ մինը չէ ասում 1864 թը-
ուականը: Այն ինչ դրական փաստ որ մեր
ձեռքում կան „Արծուի“ 1864 թուականի
համարներէց: Իսկ հայր Զարթանալեան իւր
„Իպրութեան“ մէջ թէեւ ճիշտ է գրել՝ մին-
չեւ 64-ը, բայց ամսագրի դադարուելու պատ-
ճառը վերագրում է թէ „ազգին կամքը որ
զինքը պատրիարքութեան աթոռը կը բարձ-
րացնէր, զրկեց Խրիմեան իւր սիրելի առանձ-
նութենէ ու օգտակար պարապմունքէն՝ զԱ-
զգըն ալ՝ հրատարակած եռանդուն թեր-
թերէն. . .“ Վերապատուելի հօր կարծիքով
Խրիմեանի „Արծուի Վասպուրականի“ թող-
նելու պատճառն այն էր, որ „ազգին կամքը“
նորան „պատրիարքական աթոռը կը բարձ-
րացնէր“: Այն ինչ Վեհ. Խրիմեան Կոստան-
դնուպոլսոյ հայոց պատրիարք ընտրուեց 1869
թ. սեպտեմ. ամսին՝ դեռ հինգ տարի յետոյ:

37.



ՄԱՍԵԱՑ
ԱՂԱԽԵԻՒՅՑ^{1.)}

ԻՒՍԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՀԻՊԵՏԱՍՏԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԻՍ
ԱԶԳՈՅԻՆ ՊԵՆՏԱՆՈՐԻՍ ԵՒ ՔՈՂՈՒՄԱՆ
ԳԻՏԵԼԵԱՑ
Թ է ո գ ո ս ի ա (Թուսաստան) 1855—1865.

Հրատարակուում էր՝ամսի 1-ին, 15-ին.
Վերադիտող ամսագրոյս՝ Գաբր. վ.
Այուլագեան. 2.)

Ի տպարանի Խալիպեան Ուսումնարանի
Ազգիս Հայոց:

Գիրքը (տետր.) միասին 1—1 1/2 տպագր.
թերթ 32—48 էջ. երկսիւնեան 24X32
Հ.-մետր.

Քուղթը եւ տիպը՝ մաքուր.
Բաժանորդագինը՝ տարեկ. 6 մթն. արծ.

Լեզուն, ոճը՝ } «... Հաւատոյ մասանց մէջ
Ուղղագրութ. } մոլորութիւն մը չունիմ, կը
սես ու յայտնապէս կը...»

Ծրագիրը՝
ԱԶԳԱՅԻՆ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ.

—«Իպրոցական կանոնադրութիւնք, ազ-
գային յառաջադիմութիւն, տեղագրու-
թիւն, քերթուածք, առակք, մանրն-
լուրք, մատենախօսականք, քաղաքական
տեսութիւն, ծանուցմունք, ցանկ նի-
լծոց Աղաւնոյս»

Բովանդակութիւն «Մասեաց Աղաւնի» Աւ-
տօթէր Հայաստանեայց» 1857. № 3.

Հայկազեան Թանգարան—Նիկոլ Ե-
պիսկոպոս եւ հալածանք նորա ընդդէմ
հայկազեանց Լէհաստանի: (շար.)

Սահմանք Տեսչութեան— Հայաս-
տանեայց Եկեղեցւոյ ՚ի Ռուսիա.

Ազգային երգարան հայոց (մատենախօս.)

Հանդիսարան ԱշխարհաշէնՄարգ-
կանց—Կարլոս Ռիթթէր, Հռեգուզոս,
Թարգ. գաղիէր.—Սողոմ. Գրանոխեան.

Տեսարանք Եւրոպա—Փալէ, Ռուա-
յալ Կալրի Տ՝ Օւլեան:

Կենցաղօգուտ Բանք—Բժշկութիւն
ի Տաճկաստան յամին 1855. Թարգ. Յա-
րութ. Ս. Մուրատեան.—Ստուարադի-
տակ:

Բանալի Բնական Գիտելեաց—Շո-
գիացումն, ջուր, (շարունակ.)

Փարիզեան ամսագիր եւ զանազան գիտե-
լիք—Ուղեւորութիւն ՚ի Փարիզէ ՚ի Կոս-
տանդնուպոլիս:

—Բովանդակութ. պատկերաց վերոյիշեալ՝Նի.

Կարլոս Ռիթթեր.
Փալէ-Ռուայալ.
Կալրի Տ՝ Օւլեան.
Ստուարադիտակ.

Բովանդակութիւն «Մասեաց Աղաւնի»—
«Ծիածան Հայաստանեայց» 1865. Թիւ.
գ. (մարտ.)

Թեմական—Թեմական տեղեկութիւնք.
բեմառացութիւն առաջնորդին յեկեղեց-
ւոյ Սիմֆերափսի.

Բարոյական—Խրատական եւ զուար-
ճալի հին եւ նոր պատմութիւն:

Բանասիրականք — Ուղեւորութիւն
Յովհաննու Այուլագոլսքի.—Միք. Պա-
մերկ: Ճանապարհորդութիւն ՚ի Հայս:

Քաղաքականք—Կայսերական հրովար-
տակ:

Տնտեսականք—Կովու վրայ քանի մը
գիտելիք ըստ ասիացւոյ:

Ազգային յիշատակարանք եւ խըն-
գիրք. Արդեօք ո՞վ էր կամ քնչ էր նա-
խիջեւանի երկպառակութեանպատճառը:
Հանելուկ. . .



աթուղիկութիւնից մայ-
րենի Եկեղեցւոյ գիր-
կը դարձած երեք
վարդապետներ՝Սար-
գիս Թէոդորեան,
Գաբր. Այուլագեան
եւ Ամբրոսիոս Գալ-
ֆայեան, Փարիզում

1855-ի սկզբից սկսեցին հրատարակել «Մաս-
եաց Աղաւնի» միամսեայ պատկերազարգ
հանդէսը, որը խմբագրուում էր հայերէն—
ֆրանսերէն, ճոխ եւ բազմատեսակ ծրագրով:

«Մասեաց Աղաւնին» սկզբում հրատա-
րակուելով հայ ազգաբնակիւթիւնից հեռու,

այնքան ընդհանրութիւն չունեցաւ, որքան էլ որ նորա ուղղութիւնը, նորա նպատակը մօտիկ լինէին հայ ժողովրդի սրտին:

Տեղի «Հայկազեան Վարժարանի» սաները մասնակցում էին Փարիզեան ամսագրի մէջ յօգուածներ ու ոտանաւորներ գրելով: Լ. հ. խմբագիրներից Այուլագոզքի Գաբրիէլ վարդապետն առանձին խնամք էր տանում հանդիսի պայծառութեան եւ նիւթերի կանոնաւոր ընտրութեան մասին:

«Մեր միմեան բաղձանքն ու յոյսը—ասում էր հ. խմբագիրը—այն է՝ որ դիտութեանց լուսով լուսաւորուի հայոց ազգին միտքը, սիրտը կրթուի եւ զարդարուի ընկերական առաքինութիւններով. ձեռքերը լցուին երկրագործութեան, ճարտարապետութեան եւ վաճառականութեան բերքերով. օրէօր աւելի փայլի իւր հաւատարմութեամբն այն տէրութեանց ծառայութեանը մէջ որ կը պաշտպանեն իրեն. սիրելի ըլլա միշտ այն ժողովրդոց՝ որոնց մէջ այսօրուան օրըս ցըրուած է...»

«Մասեաց Աղաւնին» դեռ 50-ական թրուականներին երեւացող պատկերազարդ հայ հրատարակութեանց մէջ որ առաջինն էր, հայ ընթերցողների ճաշակն էր զարգացնում: Բայց ինչպէս ասացինք սպասելի մեծ յաջողութիւնը չունեցաւ Փարիզի հանդէսը՝ եւ այդ պատճառով չորս տարին լրացնելուց յետոյ 1859-ին ստիպուեց տեղափոխուել մի ուրիշ տեղ իւր խմբագիրներով: «Մասեաց Աղաւնին» Փարիզից թուչելով, սլացաւ դէպի Մասիս, դէպի Ռուսաստան: Բայց Այրարատեան երկրից յարմար դատեց հանդիստ առնել Ղրիմի Թէոդոսիա քաղաքը:

1860 թուականից «Մասեաց Աղաւնին» սկսեց իւր կանոնաւոր հրատարակութիւնը, նոր երկրում նոր շրջանում եւ նոր ժողովրդի մէջ: Բայց այս անգամ ոչ հայերէն—Ֆրանսերէն, այլ երեք տարբեր խմբագրութեամբ՝

- ա. Հայերէն
- բ. Ռուսերէն 2.)

գ. Հայերէն—ռուսերէն.

«Աղաւնին» նոր աշխարհում աւելի զօրեղացրնելով իւր թուիչքը, «ազգային, բարոյականք եւ բանասիրականք» նիւթերով սլանում էր հայ աշխարհի զանազան կողմերը եւ հանդիսանում «Աւետաբեր Հայաստանեայց»: Ինչպէս Փարիզում «Հայկազեան Վարժարանի», այստեղ էլ «Խալիպեան Ուսումնարանի» սաներից ոմանք աշխատակցում էին «Մասեաց Աղաւնուն»:

Ռուսաստանում էլ... «Աղաւնին Մասեաց անխոտոր մնալով միշտ իւր սկզբնական նըպատակին, իրեն պարտք կը ճանաչէր տարուէ տարի աւելի օգտակար շինել ազգին, որչափ որ իր կարողութիւնը եւ միջոցները կը ներեն եւ որչափ որ կրնան իրաւամբ պահանջել իրմէ իւր ընթերցողաց մեծ եւ արդարամիտ մասը...»

«Մասեաց Աղաւնին» խօստանում էր մընալ «... ձմարտասէր եւ ճմարտախօս, աներկիւղ, յանդիմանող չարեաց, իւր ընթերցողաց աչքը բացող՝ որ զգուշանան ազգակործան եւ ազգավնաս ձեռնարկութիւններէ եւ թմրած մտքերը արթնցնող՝ որ յետ չը մնան ըստ կարի իրենց չորս դին պատող յառաջագէմ ժողովուրդներէ...»

Մինչեւ այժմ էլ եթէ թերթում ես «Մասեաց Աղաւնու» տետրակները, պատահում ես դեռ շատ թարմ նիւթերի որ մեր օրերն էլ կարելի է արտօթակով կարդալ: Ինչպէս օրինակի համար հանդիսիս 1857 թրուականի մէջ կայ «Սահմանք Տեսչութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ 'ի Ռուսիա» որ գուցէ շատերին անծանօթ լինի: Այդ այն ПОЛОЖЕНІЯ-ն է, որ Ռուսաց Բարձրագոյն Կառավարութիւնից շնորհուած է հայ Եկեղեցւոյ եւ հոգեւոր իշխանութեան կառաւարութեան համար:

«Մասեաց Աղաւնին» հինգ տարի էլ շարունակուեց Թէոդոսիայում, եւ 1865 թ. ամսագիրը 10-դ տարին կէս չեղած դադարուեց, մեզ անյայտ պատճառով: (3)

«Մասեաց Աղաւնին» տպագրուում էր

Փարիզում եղած ժամանակ՝ սկզբից մինչև 1858 թուականը Ռէքէի տպարանում, յետոյ Վալտերի եւ Մէյերի տպարաններում իսկ վերջը դարձեալ Վալտերի, բայց բոլոր ժամանակ էլ տպագրուում էր «Ի գրանոցի շանիկ Արամեան Նիկոմիդիացու» նոր ձուլուած տառերով: Իսկ Ռուսաստանում եղած միջոցին «Աղաւնին» տպագրուում էր «Ի արպարանի Խալիպեան Ուսումնարանի ազգիս Հայոց»:

«Մասեաց Աղաւնու» ճակատին դրուում էր մի շքեղ նկար՝ որ ներկայացնում էր «Ջրհեղեղից յետոյ»—Միաժանը կապուած երկնակամարի վերայ. այ կողմից երեւում է հսկայ Մասիսը՝ Նոյի տապանով, որ տեղ էր շտապում մի աղանի, ծառի օստիկն առած բերանում:

Փարիզում եղած ժամանակ այս նկարն ուրիշ տեսակ էր, նոյն արտայայտութեամբ:

«Մասեաց Աղաւնին» հիմնուելու օրից մինչև Թէոդոսիա գալը (1855—60) հրատարակուում էր որպէս ամսաթերթ: Իսկ Թէոդոսիա եղած միջոցին արդէն երկշաբաթաթերթ էր, հրատարակուելով ամիսը երկու անգամ:

Թ Ե Ն Ս Թ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր աղբիւրները «Մասեաց Աղաւնու» մասին—

ա. «... Հարկ էր ինչուան այն տարին տեսնուածէն աւելի փոյթ մը երեւցնել արեւելքն ու աւելմուտքը փոխադարձաբար իրարու ծանօթացնելու: Ասիկայ էր «Մասեաց Աղաւնոյն» հրատարակման վախճանըն ու նպատակը...»

«Պատմ. Հայ. դպրութ.» ք. էջ 491.

բ. «... Գեղեցիկ եւ յարմարագոյն թուեցան մեզ դասակարգութիւնք նիւթոց հանձարաւոր. խմբագրաց «Մասեաց Աղաւնոյն» ուստի հաւանիմք...»

«Արծուի Վասպուրական» 1858. թիւ ա.

գ. «... եւ «Մասեաց Աղաւնի» պատկերագրաւ ամսագիրը, որ Փարիզից փոխադրից Թէո-

դոսիա Այուազեան Գար. եպիսկոպոսը...»

«Պատմ. Հայ.» Ս. Պալասանեան էջ 444.

դ. «... Վերջապէս նոյն 1855 թուին... Փարիզում սկսուեցաւ «Մասեաց Աղաւնի» պատկերագրաւ ամսաթերթը որ յետոյ 1859 թուին փոխադրուեցաւ Թէոդոսիա եւ մինչև 1865 թ. շարունակուելով դաւադրեց...»

«Արձագանք» 1882 թ. № 22. Ա. Ե.

ե. «... Հ Գարբիէլ վարդապետ Այուազովսքի հրատարեցաւ 'ի կեղծաւոր միաբանութենէ վեներտիկեան վարդապետաց վասն տորազբելոյ նոցին զազգէն Հայոց հերձուածող եւ հերետիկոս, եւ առանձնացեալ 'ի Փարիզ գրեաց յայտարարութիւն վասն հրատարման իւրոյ, եւ սկսաւ հրատարակել զնորոգ օրագիր «Մասեաց Աղաւնի» անուն...»

«Պատմ. Հայոց» Ա. Պերպերեան էջ 594.

զ. «Մասեաց Աղաւնի, Աւետարեր Հայաստանեայց. (կենցաղօգուտ բանք.—Տեսարան աշխարհաշէն մարդկան.—Հայկազեան թանգարան.—Փարիզեան ամսագիր)»

«Մատեն. Հայկակ.» Զարբ. էջ 405.

է. «Գարբիէլ վ. Այուազովսքոյ «Մասեաց Աղաւնին. (1855—1864)...»

«Պատմ. Հայ մատեն.» Ե. վ. 'Ի. էջ 97.

ը. «Մասեաց Աղաւնի. 1855 Փարիզ. յետոյ 'ի Թէոդոսիա Այուազովսքի եւ Գալֆայեան.»

«Գար. Հայ-ազգ. պատմ.» ք. էջ 338.

թ. «... Այոպէս եւ Փարիզում երեք կաթոլիկ վարդապետների ձեռքով հիմնուեց պատկերագրաւ «Մասեաց Աղաւնին»... որ յետոյ տեղափոխուում է Վրիմու Թէոդոսիա քաղաքը եւ շարունակուում է հմուտ լեզուագէտ արք-եպիսկոպոս Այուազովսքու ձեռքով...»

«Հայկակ. մատեն.» ք. էջ 151.

[«... So wurde in Paris von drei zur katholischen Kirche übergetretenen Mönchen die illustrierte Monatschrift „Masiaz Aghawni“...die später nach Theodosia in der Krim verlegt und dort von einem tüchtigen Philologen, dem Erzbischof Ajwazian fortgesetzt wurde.»

«Arm. Bibl.» II. էջ 151.

ժ. «Մասեաց Աղաւնի. 55—75. Փարիզ, Այդ թերթը պատկերագրաւ էր. ունէր լաւ պատկերներ մաքուր տպագրութեամբ եւ

դուրս էր գալիս երկու լեզուներով հայերէն եւ ֆրանսերէն . . .

„Հայոց արդի մաս.“ (ձեռագ.)

2.) Թերթի վերայ նախ ստորագրուում էր խմբագրութեան կողմից՝

„Հրատարակիալ ազգասէր սատարութեամբ պարոն Եղուարդա Ռափայէլի Ղարամբան:

ԽմբագիրԳարրիէլ վարդապետ Այուազովսքի“ 1857-ին . . . Խմբագրութիւն Գարրիէլի վարդապետի Այուազեան եւ Ամբրոսիա Գալֆայեան:

1858-ին. խմբագրութիւն . . . Նորեն ալ՝ վարդապետի Գալֆայեան:

1860-ական՝ Վերադիտող ամսագրոյս Գարր. վ. Այուազեան:

3.) Գուցէ զաղարուեց խմբագիրների հեռանալու պատճառով՝ որ հաւանականէ:

5.) Մեզ չէ պատահած տեսնել „Մասեաց Աղաւնու“ ուսերէն հրատարակութիւնը:

38.

ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ^{1.)}

ՕՐԱԳԻՐ

ԲԵՐՈՒԹԵԱՆ ԲՆԵՍԻՐԵԿՈՆ ՑՆՑՆՈՒԿՈՆ ԵՒ ԲՆԵԿՈՆ ԳԻՑՆԵԼՆԵՑ.

(Ամսաթերթ.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1855-1856.

Հրատարակուում էր՝

Խմբագրութ. } „Մեսրոպեան—

Հրատարակ. } Ընկերութեան»

Մեսրոպեան» անունով ընկերութիւնը որ 50-ական թուականներին գոյութիւն ունէր Կ. Պոլսում, փորձեց մի գրական—բանասիրական հանդէս հրատարակելու «Աստղիկ Արեւելեան» անունով: Կարճ միջոցում ընկերութիւնը լուծուելով, արեւելեան «Աստղիկն» էլ ամպերի մէջ անհետացաւ:

ԹՆՆՕԹՈՒԹԻՐՆՆԵՐ.

1.) Աղբիւրներ «Աստղիկ Արեւելեանի.» ա. „1855-ին Մեսրոպեան ընկերութիւնը Աստղիկ Արեւելեանը. . . “

„Նոր-Գար“ 1884. № 34 էջ 4.

բ. „ . . . Նոյն ատենին՝ Մեսրոպեան կողմուած ընկերութիւն մը հաստատուեց էր ի մայրաքաղաքն, եւ որուն նպատակը պետի ըլլար բանաստ. գրուածներ ու զանազան լեզուներէ թարգմանուած գրքեր ու տետրակներ հրատարակել. . . “

„Պատմ. հայ դպրութ.“ ք. էջ 488.

գ. „Աստղիկ Արեւելեան“ 1855 Պոլիս Մեսր. Ընկեր.

„Իսա. հայ-ազգ. պատմ.“ ք. էջ 338.

39.

ԱՐԵՒԵԼԲ ^{1.)}

(Երկշաբաթաթերթ)

Փարիզ (Ֆրանսիա) 1855—1856.

Հրատարակուում էր՝

Խմբագիրը Ստեփան Ոսկանեան.

Տպարան Վալտերի.

Դիրքը (տետր.) ութածալ 1 թերթ տպագրական. 32 էջ.

Թուղթը եւ տիպը՝ բաւարար.

Բաժանորդագիրնը՝ 26 ֆրանք.

Լեզուներն ոճը } „ . . . Արեւելք այն աստիճան բերան չը պիտի ըլլայ, ուղղագրութ. } եւ մի քանի մարդկանց. . . “

Ծրագիրը՝ Գաղաքական՝ ազգային եւ. . .

Ֆրանսիայի մայրաքաղաքում 1855 թուականին երկու հայ հանդէսներ միասին ըսկսուեցին: «Մասեաց Աղաւնուց» անմիջապէս յետոյ նոյն թուի յուլիսի 1-ից Ստեփան Ոսկանեանի խմբագրութեամբ սկսուեց «Արեւելք» անունով մի կիսամսեայ հայ պարբերական: Երիտասարդ խմբագիրն իրան ա-

զատամիտ Հռչակելով յայտարարեց որ ինքը բոլորովին հակառակ ուղղութիւն է ունենալու ժամանակակից բոլոր հայ լրագիրներէից «... յուսամք թէ ազգը քսան տարիէ՛ ՚ի վեր իմաստակներու սուտ ու մուտ գովեստը եւ անամօթ շողոքորթութիւնը լսելէ ետեւ քիչ մ'ալ ճշմարիտ քննութեան եւ անշահասէր խրատի ականջ պիտի դնէ եւ իւր էական պակասութիւնները պիտի շտկէ...»

Հեշտ բան է խօստանալը, բայց խօստումը կատարելը ոչ այնքան: Պ. Ոսկանեան չը կարողացաւ գէթ մի տարի շարունակել իւր «ճշմարիտ» եւ «անշահասէր» յօդուածներ պարունակող լրագիրը, որ իւր օրում չէր երեւում մի «անշահասէր» եւ «ճշմարիտ» յօդուած:

«Արեւելքը» հազիւ 6 ամիսն անցկացրեց եւ 1856 թ. յունուարի 15-ին 14-դ համարը վերջինն եղաւ.

Մեծ մեծ խօստումներ եւ ամենացտնցաւ գործ՝—ահա մեր խմբագրի լրագրական գործունէութիւնը:

ԻՆՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Արեւելքի» մասին մեր աղբիւրները — ա. «... մինչդեռ ՚ի Կ. Պոլիս ազգային թերթերն հազիւ երբէք սովորական ճամբին քիչ մը կը շղէին ազգային «կենսական» խնդիրներու վրայ մեղմով եւ ակնածութեամբ խօսելու, անդին արեւմտեան լուսաւորութեան կենտրոնին մէջ ՚ի Փարիզ... Ոսկանեան «Արեւելք» անուն կիսամտեայ թերթի մը լոյս տուաւ... խմբագրին համբաւն, թերթին ազատիւն(կ') բովանդակութիւնը, միացեալ խրոխտանաց հետ, նըպատաւոր նշաններ չէին տար երկար կենաց... ՚ի սակաւութենէ բաժանորդաց կամ ինչպէս կերեւայ սնուի չ'գոյնելութոյ. («Մասիս» 1859 թ. 400.): Եւ երօք այնչափ սաստիկ սպառնացուաց «ճշմարիտ քննութեան եւ անշահասէր խրատի» հետքը չ'կար...»
- «Հանդ. Ամսօր.» 1890. թիւ 9.
- բ. «Իսկ Փարիզում 1859 (՝) գմիւռնացի Ստ.

Ոսկանեանի ձեռքով միասին (՝) սկսուեցաւ «Արեւելք» եւ «Արեւմուտք» հանգէսները, բայց առաջինը երկրորդ թէ երրորդ (՝) համարի վերայ դադարեց...»

- «Արձագանք» 1882. № 22. Ա. Ե.
- գ. «... Արեւելք մը ազգը ունեցած էր ի Փարիզ 1854 (՝)—56. խմբագրութեամբ պ. Ստեփան Ոսկանեանի որ արեւմտեան լուսաւորութեան արձագանք պէտք է ըլլար. որ եւ «Արեւելք» եւ «Արեւմուտք» չափելէ վերջը, այժմ բէ ֆօ օ ր մ անուն Փրանսերէն թերթը կը հրատարակէ ի Ջմիւռին...»
- «Նոր-Դար» 1884. № 34. (Սլաք.)
- դ. «Արեւելք» երկչարթաթերթ Փարիզ. 45—56. խմբ. Ոսկանեան. թերթը շուտով դադարեց. նպատակն էր մտարկել հայոց պակասութիւնները...»
- «Հայոց արդի մատեն.» (ձեռագիր.)

40.

ԶՈՒԱՐՃԱԽՍՍ^{1.)}

ՓՐԱԳԻՐ ՊԱՏՆԵՐԱԶԱՐԳ

ԾԱՂԻՐԱԲԱՆՎԱՆ ԵՒ ԲԵՆՈՍԻՐՈՎԱՆ

(Շաբաթաթերթ.)

Կ օ ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1856-1856.
 Հ ր ա տ ա ռ ա կ ու ու մ է ր՝
 Խ մ բ ա գ ը ու թ ե ա մ բ «Զուարճասիր. Ընկ.»
 Ի տ պ ա ռ ա ն ի՝ Արապեանց.
 Դ ի բ ք ը (թերթ.) միաժալ 4 էջ.
 Լ ե գ ու ն, ո ճ ը՝ { «... որոյ նպատակն պիտի ըլլայ զուարճանալ եւ գր-
 Ու ղ ղ ա գ ը ու թ. { ուսընթացնել... պիտոյթն...»
 Ծ ը ա գ ի ը ը՝—
 Ծ Ա Ղ Ի Ր Ա Բ Ա Ն Վ Ա Ն—Առականեր, հանելուկներ, խրատներ, զուեշտական դրուածներ, ծաղրապատկերներ, երգիծաբանական հատուածներ, բառախաղ շուտասելուկ...
 Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն—Վէպիկներ, պատկերներ, ռոտնտուրներ, ազգային առածներ...»



ակաւ են եղել մեր լրագրութեան մէջ զաւելտական կամ ծաղրաբանական հրատարակութիւններ, եղածներն էլ բոլորն եղել են Թիւրքիայում: Այժմս թէ Տաճկաստանում, թէ Կովկասում մի խօսքով ոչ մի տեղ, Հայոց մէջ չունինք մի այդպիսի պարբերաթերթ: Այս ճիւղի մէջ առաջին տեղը բռնեց Հայ պարբերական մամուլի մէջ Կ. Պոլսի «Ձուարճախօս» շաբաթաթերթը, որ 1856 թուականի հոկտեմբ. 25-ից սկսեց հրատարակուել, հրատարակութեամբ «Ձրուարճասիրեաց Ընկերութեան» որ նոր էր հաստատուել Կոստանդնուպոլսում մի խումբ Հայ երիտասարդների մասնակցութեամբ, եւ ինչպէս գրում են «զուարճութեան պիտոյքն շատ զգալի» էր:

Մի-երկու ամիս դեռ չը լրացած, «Ձուարճախօսը» իւր 4-դ թուի վերայ դադարեց: «Ձրուարճասիրեաց Ընկերութեան» նպատակն ու աշխատանքն ի դերեւ ելաւ:

Թ Ա Ն Յ Ո Ւ Մ Ի Ն Ե Ն Ե Ր .

- 1.) Աղբիւրներ՝ եւ «Ձուարճախօս» շաբաթաթ. ա. . . . Բարեպատեհ զէպք մըն է որ վերջիչեալ երկու յոռետես թերթերուն քով կարող ենք գտնել վերին աստիճանի լաւատես թերթ մը
- „Հանդ. Ամսօր.“ 1890. № 11.
- բ. „Յետագայ 1856 թուին Պոլսոյ մէջ լոյս տեսաւ „Ձուարճախօս“ անունով մի թերթ եւ կարճահասակ կեանք վարելուց յետոյ անհետացաւ. . . .
- „Արձագանք“ 1882. № 22. Ա. Ե.
- գ. „Ձուարճախօս 1855 Պոլիս“

„Իաս. Հայ-ազգ. պատմ.“ էջ 338.
դ. „Ձուարճախօս՝ շաբաթաթերթ. Ձուարճասիրեաց Ընկերութեան Կ. Պոլսի 56. . . .“
„Հայոց արդի մատեն.“ (ձեռագ.)

41. ԵՐԵՒԱԿ^{1.)}

ԿՐՈՆԱԿԱՆ ԻՍՏԻՄՆԵՆԵՆ ԵՒ ԲՆԱԿԱՆԵՐԵՆԵՆ²⁾
(Շաբաթաթերթ.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1857-1867.
 Հրատարակուում էր՝
 Խմբագիր եւ Տէր՝ Յովհաննէս Տ. Կ.
 Տէրոյեանց:
 Տպարան Տէրոյեանցի.
 Դիւրքը՝ (4) (տետր.) 8 էջ. 20 X 32 Հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ տգեղ.
 Բաժանորդագրիւնը՝
 Լեզուն, ոճը՝ „Ասիկայ ամենէն արդի կարգադրութիւնով եւ վարդապետութիւնով կը բացատրէ. . . .“
 Ծրագրիւրը՝
 ԿՐՈՆԱԿԱՆ—Յօդուածներ հրատարակախօսական (առաջնորդող), աւետարանական ապացոյցներ, սրբազան պատմութիւն, ճառեր, քննութիւն, բացադրութիւն կրօնական խնդիրների. . . .
 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—Քննադատական յօդուածներ հայկական մատենագրութիւնից, ազգային դաստիարակութիւն, զանազան ուսումնական յօդուածներ, ծանօթութիւններ եւ այլն:
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Ազգային պատմական յօդուածներ, տեղագրութիւն, ճանապարհորդութիւն, հնագիտական եւ այլ յօդուածներ. . . .
 —Այլ եւ այլք—Խառն Լուրեր:
 Բովանդակութիւն 1860. 16 յուլիս (թ. 86)
 —Ապացոյցք աւետարանակ. պատմութ.
 —Ազգային դաստիարակութիւնը.
 —Սահտին պատմութիւնը.

- Խայտառակութեան քննութիւն.
- Այլ եւ այլք.
- Կաքաւի մը համար երկու մարդ.
- Հնգիկ զանգանակ.
- Անասնոց հետ խաղալուն վտանգը.
- Կրօնական հալածանք.
- Ոչնչին արժէքը.



անօթ է մեզ արգէն
Թիւրքիայում յայտ-
նի հրապարակա-
խօս հանգուցեալ
Յովհաննէս վար-
ժապետ Տէր Կարա-
պետեան Տէրոյ-
եան Չամուրճեան,

որը 1850—60 թուականների Կ. Պոլսի մեր նշանաւոր գործողներից մինն է եղել: Սա «Հայաստան» լրագրի գաղտնիւց երեք տարի յետոյ նորից կամեցաւ մտնել լրագրական ասպարէզ: 1853 թուականից սկսեց «Ձոհալ» (5) անունով հայաստա-տաճկաբարբառ կրօնական մի ամսաթերթ հրատարակել իւր սեփական տպարանից: Գարձեալ կամեանալով մաքառել իւր ամենայնհաշտ թշնամիների՝ բողոքականների եւ նորանց բերան «Աւետարների» հետ՝ «Բաժանորդների խնդրանաց հետեւելով»— Ինչպէս գրում է հայր Գալէմքեարեան— պ. Տէրոյեան 1857 թ. յունուարի 1-ից իւր ամսագիրը գարձրեց շաբաթաթերթ հայերէն լեզուով, անունն էլ թարգմանելով «Երեւակ»:

Հանգուցեալ Չամուրճեան պատուելին, որ կրօնագիտութեան մէջ գովելի հմուտութիւն ունէր, հոգւով նուիրուեց ամերիկացի տեղումը գործող միսիոնարների գէմ յարձակուելու, նորանց անմարգագայել տրար-

մունքների գէմ գործելու ազգօգուտ նպատակը յառաջ տանելու գործին: Եւ կարողացաւ «Երեւակ» իւր գոյութիւնը պահել մօտաւորապէս տասը տարի:

«Երեւակ» սկզբից մինչեւ 1860 թ. վերջը՝ չորս տարի կանոնաւոր հրատարակուեց: Հետեւեալ 1861 թուականին վեց ամիս հանգիստ առնելուց յետոյ, յուլիս ամսից նորից շարունակուեց դարձեալ մի տարի, այսինքն մինչեւ 1862 թ. յուլիս ամիսը:

Տէրոյեանց անցեալ պակաս մնացած վեց ամսուայ համարները հրատարակելով, գարձեալ մի տարի գաղար առաւ: Վերջապէս 1864 թուականի սկզբից «Երեւակ» մտնում է «նոր-շրջան» գիրքն էլ փոխուեց մեծ քառածալ գիրքի: «Նոր շրջանի» մէջ «Երեւակ» երկու տարի էլ շարունակուեց՝ 1866 թուականի վերջերին իսպառ դադարուելով:

Թ Ա Ն Յ Յ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Երեւակի» մասին—

ա. „ . . . Խմբագիրն իւր այս [Թերթին տաճկերէն լեզուն ընտրած էր, վասն զի այս լեզուաւ կրօնական Թերթ չկար, եւ կը յուսար բաժանորդաց ստուար գումար մը գրանել. . . “

„Հանգ. Ամսօր.“ 1890 թ. № 9.

բ. „ . . . Անոնց (բողոքականների) գէմ հակառակամարտ գինեցաւ Տէրոյե(ա)նց Յովհաննէս իր „Երեւակ“ ամսագրովը (՝) կրօնական հատուածոց հետ կը խառնէր նաեւ մշտական տեղեկութիւններ. . . “

„Պատմ. հայ. գալուցթ.“ բ. էջ 497.

գ. „ . . . որ 1857 թուին լեզուն հայերէնի գարձնելով կոչեց „Երեւակ“ ու շարունակեց մինչեւ 1865(՝)-ը . . . “

„Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.

դ. „Երեւակ“ ուսումնական, բանասիրական եւ կրօնական հանգէս. խմբագիր եւ տէր Յովհաննէս պատուելի Տէր-Կարապետեան Տէրոյեանց, Պոլիս. 1850(՝)“

„Մատեն. հայկակ.“ Չարբ. էջ 177.

Երեւում է որ հ. Չարբանալեան իւր „Հայկական մասենագիտութիւնը“ կազմելիս աչքի առաջ չէ

ունեցել իւր «Աստուծին հայ դարութեան» գիրքը որովհետեւ շատ լրագիրներ վերջինիս մէջ ուղիղ են գրուած, իսկ «Մատենագիտութեան» մէջ բոլորովին սխալ:

- ե. «Նրեակ» 1857. Պոլիս Յ. Տէրոյեան».
- «Դաս. հայ-ազգ. պատմ.» էջ 338.
- զ. «Նրեակ» երկշարաթաթերթ Տէրոյեանց 57—66 կ. Պոլիս...»
- «Հայոց արդի մատենագր.» -(ձեռագ.)
- է. «1857-ին Տէրոյեանց սկսաւ Նրեակ անու- նով մի տխուր հանգէս մը հրատարակել: Սր չէր անցեր որ հաւն երեք անգամ չը խօսէր հոն: Դեւերու գոյութիւնը ուրացող- ները հերետիկոս կը հռչակուէին. . .»
- «Ազգային ջոշեր» Յ. Պարոն. էջ 65.
- 2.) «Նրեակ» երկշարաթաթերթի համարներէց մեր ձեռքում կան, բայց չէ գրուած այս տո- ղերը. գուցէ գրուելիս են եղել շապկի վերայ:
- 3.) «Նրեակ» կարճ ժամանակում երկշարա- թաթերթ էր որ շուտով փոխուեց շարաթա- թերթի:
- 4.) Դիւրքը երկշարաթաթերթ ժամանակ (տետր) 1 տպ. թերթ. 32 էջ 16x24 հ.-մ.
- 5.) «Ձոհակ» մասին տես գրքիս առանձին բաժ- նում:

42.

ՄՈՒՍԱՅԲ ՄԱՍԵԱՅ^{1.)}

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ՓԱՏԻՈՆԱԿԱՆ

Կ ո ս տ ա ն գ ն ու կ ո լ ի ս (Տաճ.) 1857-1858
 Հրատարակուում էր՝
 Խմբագիր՝ Արամ Հ. Ճիզմէճեան.
 Տպարան՝
 Դիւրքը՝ (թերթ.) միածալ 4 էջ.
 Թուղթը եւ տիպը՝
 Բաժանորդագիրնը՝
 Լեզուն, ոճը՝ } «... Թորգոմիսն ցեղին հա-
 ռազատ զաւակներին սիրող
 Ուղղագրութ. } ընծիրցստիրումին...»
 Ծրագիրը՝—Թատրոնական արձակ գրու-
 թիւններ, քննադատութիւն թատերական
 գրուածքների, բեմական աշխարհից զանա-
 փան լուրեր եւ տեղեկութիւններ, գեղար-
 տեւտական այլ գրուածքներ. . .



զգային թատերաց պատ- մութեան մէջ—գրում է հ. Գալէմբեարեան՝ անշուշտ աննշանակ պիտի չը մնայ որ 1857 թուին Արամ Ճիզմէճեան պատանին» ցան- կացաւ նուիրատուու- թեամբ, Կ. Պոլսում Հայկական թատրոն կազ- մակերպել, բայց նորա սյս մտադրութիւնը չը յաջողուելով՝ նոյն թուականի սեպտեմբե- ռի 7-ից սկսեց մի թատրոնական թերթ հը- րատարակել, անուանելով «Մուսայք Մասեաց» անունը:

Երիտասարդ խմբագրի նպատակն էր զա- նազան թատրոնական գրութիւններ հրա- տարակելով, «Թորգոմեան ցեղին Հարազատ զաւակներուն սրտերը լընթերցասիրութիւն գրգռել»:

Պ. Ճիզմէճեանի շարաթաթերթը սոսկ մասնագիտական թերթ ընդունելով, կարելի է ասել որ իւր ժամանակին կարող էր նը- պատահալարմար լինել, եթէ որ գոնէ քա- նի մի տարի կեանք ունենար. բայց «Մա- սեաց Մուսայքի» օրերն էլ իւր մի քանի նախորդների պէս համարուած էին: Անփորձ խմբագիրը շուտ յուսահատուեց մի քանի անյաջող հանգամանքներից, թերթի գոյու- թիւնը տեւեց հազիւ մի տարի, 1858 թը- ուականի վերջերին հանգաւ:

Թ Ա Ն Յ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Մուսայք Մասեաց» շարաթաթերթը, եւ մեր աղբիւրները—
- ա. . . . տարակոյս չ՝ կայ որ կարող չէր եր- կար կեանք ունենալ եւ արդէն թերթն 3-դ թուոյն սկսաւ ողբեր ընել եւ հրակէր-

ներ կարգաւ Տարի մը վճռած էր ասոր կեանքն. . .

- „Հանդ. Ամսօրեայ“ 1889. Թիւ 11.
- բ. „Մուսայք Մասեաց“ Թատերականք տետրը ա. բ. գ. դ. (միան) խմբազրոյ Արմենակ Հայկունի (") Կ. Պոլիս „Համագային տպարան“ (") 1858 (")
- „Մատեն. Հայկական“ Զարբ. էջ 438.
- գ. „Մուսայք Մասեաց 1857—62 (") Պոլիս Ա. Հայկունի (")
- „Դաս Հայ-ագգ. պատմ.“ էջ 340.
- դ. „Մուսայք Մասեաց“ շրթ. Կ Պոլիս. 57—58. ձեզմէճեան խմբագրի նպատակն էր. . . Թերթը զուտ մասնագիտական էր եւ Թարգմանօրէն տալիս էր զանազան Թատրոնական կտորներ. . .
- „Հայոց արդի մատենագր.“ (ձեռագ.)
- ե. „1857 Թուին վերեւ յիշածների վերայ աւելացաւ „Մուսայք Մասեաց“ անուեով ամիսը երկու (') անգամ հրատարակուող Թերթը որ միայն Թատրոնական գրուածների Թարգմանութիւններ էր բովանդակում եւ ընդամենը մի տարի շարունակուեց.
- „Արձագանք“ 1882. Թիւ 22. Ա. Ե.
- զ. „Կ. Պոլսում դուրս եկաւ. „Մուսայք Մասեաց“. . . որ տալիս էր միայն Թարգմանութիւններ Թատրոնական պիեսաներից“
- „Հայկ. մատեն.“ Ա. Լայստ. էջ 152
- [„... In Konstantinopel entstanden die „Mus-sajk Massiaz“. die Musen des Ararat, welche nur Übersetzungen von Bühnenstücken brachten...“]
- „Arm. Bibl.“ A. L. II. էջ 152.
- Վերոյիշեալ աղբիւրներից հ. Զարբանալեան իւր „Մատենագրութեան“ եւ Մ. Գափամաճեան իւր գրքի մէջ այս շարաթաթերթի հետ շփոթում են 60-ական Թուականներին Կ. Պոլսում Արմենակ Հայկունու հրատարակութեամբ լոյս տեսնող համանուն հանդիսի հետ, որ շատ միատեսակ լինելու համար՝ աններելի չէ:



43.

ՄԵՂՈՒ

ԵՌՈՐԵԱՅ ՀԱՆԴԻՍ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1857-1874
 Հրատարակուեց էր՝ շաբաթն երկու անգամ՝ Հինգշաբթի եւ կիրակի օրերը: Խմբագիր-Տնօրէն՝ Յակովբ Պարոնեան. Խապարանի՝ Ռ. Քիւրքեան.
 Դիրքը (տետր.) քառածալ 1/4 Թերթ. 8 էջ—երկսիւնեան 22X30 հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
 Բաժանորդագրինը՝ տարեկ. 100 դր2. Լեզուէն, ոճը՝ } „... Կըմաղթէ Մեղուն“
 Ուղղագրութ. } ու կը յուսայ որ հայերն էլ
 Ծրագրերը՝ } ապիրախտ չե գտնուիր...“

— ԱԶԳԱՅԻՆ — Առաջնորդող յօդուածներ՝ Ժամանակակից ինդիւրների վերաբերեալ: Ազգային, կառավարչական մարմինների, հիմնարկութիւնների, զանազան գէպքերի մասին յօդուածներ. . .

— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Կենսագրական, ուսումնական, պատմական եւ այլ յօդուածներ. ընդդիմախօսութիւն, քննադատութիւններ, նամակներ եւ այլ տեղեկութիւններ:

— ԶԱՆԱԶԱՆ — Թղթակցութիւններ, մանր լուրեր, ծանօթութիւններ, զուարճալիք, պատասխանիք խմբագրութեան ազգ եւ այլն:

ԵԱՆՈՒՑՄՈՒՆԸ — Յայտարարութիւններ: Բովանդակութ. 1860 Թ. № 87 (յունուար. 31)
 Կտիւնը—(առաջնորդող.)
 Ազգային օրինաւոր կառավարութիւն.
 Ժրջան տղայք—Վաղէնտ. Ժամաէ Տիւուալ:

Մանր լուրեր (որ խոշորնալու վրայ են).
 Մանր զուարճալիք.
 Մեծ մոռացում մը.
 Ծանուցմունք.



Որք-Ասիայի կամ Թիւրքիայի մէջ որքան որ ազգային կենսական խնդիրներն աշխատում էին պահպանել Ձմիւնիայի «Արշալոյս Արատեանը» եւ Կոստանդնուպոլսի «Երեւակը», դորանց բոլորովին հակառակ ուղղութեամբ՝ ծայրայեղ ազատամիտ՝ լոյս աշխարհ եկաւ Կոստանդնուպոլսում 1857 թուականին սեպտեմբերի 15-ից «Մեղու» անունով մի տասնօրեայ հանգէս «Հաւաքածոյ բարոյական, բանասիրական գրագիտական, տընտեսական առեւտրական եւ զուարճալի գիտելեաց»։ Թերթը որ խմբագրուում էր երիտասարդ Յարութիւն Սուաճեանի ձեռքով, նորա էջերը լի էին կծու զաւեշտական յօդուածներով, առանց աջ ու ահեակ նայելու տնօրէն խմբագիրն անգաղար հարուածում էր ազգային Եկեղեցու, պատրիարքարանի, ժողովի եւ այլ ազգային հիմնարկութիւնների պաշտօնեաներին, նորանց ամեն մի փոքր պակասութիւններն էլ լուն ուղտ շինելով, գոռումով, հարայ հրոցով տարածում ամենուրեք։ Շատ անգամ էլ այնպիսի խօսքեր էր գործ ածում իւր լրագրի էջերում, որ երբէք վայել չէր մի թերթի մէջ տպագրուելու։

Սուաճեանի «Մեղուն» չի կարելի ասել որ աւելորդ էր կամ բոլորովին վնասակար. ոչ՝ նա ունէր եւ իւր լաւ եւ գովելի կող-

մերը։ «Մեղուի» առաջին համարում խմբագիրն յատնում է իւր նպատակը թէ՛ «...ազգին ճանչցնել գիտութեանց անհատնում օգուտներն եւ անոնցմէ զուրկ ըլլալը, ճշմարիտ ազգասիրի մը սրտով՝ առանց շողոքորթելու կամ խաբելու՝ իր պակասութիւններն իրեն գիտցնել, իր վերայ ունեցած չափազանց համարումը պակասեցնել...» Ինչքան որ կծու եւ վիրաւորական էին «Մեղուի» խօսքերը, այնքան էլ երեւում էին յօգուածներ, որ ճիշտ կրթող ու դաստիարակող բնաւորութիւն ունէին։ Օրինակ նա անգաղար քարոզում էր ընտանեկան շուայլութիւնները վերջացնել, թղթախաղը եւ այլ ոչ օգտակար սովորութիւններն իսպառ վերջացնել հայ ընտանիքներից եւ այլն։ Եթէ չը լինէին «Մեղուի» սանձարձակ ու շատ անգամ հայհոյական յօդուածները, այդ տասնօրեան իւր ուղղութեան մէջ մի օրինակելի լրագիր կարող էր դառնալ եւ ձեռք բերելով ազգայնոց կողմից համակրողներին մեծ քանակութիւն, աւելի երկար կարող էր պահել իւր դոյութիւնը։ «Մեղուն» իւր կենաց մէջ շատ նշանաւոր փոփոխութիւնների ենթարկուեց։

Սկզբնական դիրքն էր (տետր.) կիսամսեայ տեւեց մինչեւ երկրորդ տարուայ վերջերը—այսինքն 1858 թ. սեպտ. 30-ը։ (2)։ 1859-ի յունուարից սկսեց հրատարակուել որպէս տասնօրեայ (3) քառածալ 8 էջ 22X30 հ.-մետր երկսիւնեան մինչեւ 1863 թուականը։ Դորանից յետոյ մինչեւ 1865 թուականը յուլիսին հրատարակում էր որպէս շաբաթաթերթ, իսկ վերջում արդէն եռօրեայ էր, հրատարակուելով շաբաթ երկու անգամ։

«Մեղու» տասնօրեայ լրագիրն սկզբից մինչեւ 1863 թ. խմբագիր-տնօրէն էր Յարութիւն Սուաճեան, որ 1863-ից տնտեսական անապահովութեան տակ ընկնելով, թերթըն անցաւ Յովհաննէս Հովուեանի ձեռքը։ Պ. Հովուեանց երեք ամիս հազիւ կառավարելով, նոյն թուականի ապրիլի 9-ին յանձ-

նեց Աբրահամ Մուրատեանցին: Վերջինս էլ մինչեւ այդ տարուայ վերջը հազիւ կարողացաւ քարշ տալ: «Մեղուի» հակառակ կուսակցութիւնը զօրեղ էր, խմբագիր խմբագրի ետեւից փոխուում էին, չէին կարողանում գիմանալ: Հետեւեալ 1864 թ. «Մեղուի» խմբագրութեան գործը վարում էր Արմենակ Հայկունին: Վերջինս էլ իւր նախորդների օրինակին հետեւեց. մի տարին հազիւ կարողացաւ լրացնել: Իսկ անդրանիկ խմբագիր-հրատարակիչը՝ պ. Յ. Սուաճեան, չը կամենալով որ իւր սկսած գործը շուտով դադարուի, հետեւեալ 1865 թ. յունուարից նորից անցաւ իւր թերթի գլուխը խմբագիր-տնօրէնի դէկը իւր ձեռքն առնելով: Սուաճեան իւր սիրելի գործի մէջ նորից հաստատուելով սկսեց իբր թէ աւելի լուրջ վերաբերուել գործին եւ որպէս զի թերթի ապահովութեան ու գոյութեան մասին կնարողանայ միամիտ լինել, իրան օգնական-գործակալ նշանակեց Գրիգոր Պարտիզպանեանցին:

Սուաճեան այս անգամ աւելի եւս կուպիտ էր վարուում հայ ընթերցողների եւ իւր բաժանորդների հետ: Օրինակ մի անգամ տարուայ կէսը դեռ նոր անցած, մի «ազգ» վերնագրով յօդուածի տակ գրում է՝ «Լրագիրներուն ստակը տուէք, ալ տղայութիւն է ըրածնիդ իրաւ որ, խղճմտանք չունիք սյէ մարդիկ, ութ ամիս է Մեղու կը կարդաք, օր մը չեղաւ որ միտքերնիդ գար ստակն դեռ վճարած չ'ըլլալնիդ: Պ. ցրուիչը ձեր տանը, ձեր սենեակին, ձեր խանութին գուռը մաշեցուց երթալով գալով, իւր կօշիկը ան մի հարցնէք. . . պ. ցրուող. . . նայէ, քեզի զըրուցեմ, մենք խախք ըլլալնուս, թող անոնք խախկ ըլլան. հիմա կ'երթաս ամենէն ալ ստակ կուզես, չը տան նէ. . . կը պոռաս, չ'եղաւ մէյմալ կը պոռաս, ծեծ կուտես. . . դուն ալ անոնք կը ծեծես. . . դուն ալ հայհոյէ, հերիք չեղաւ չամչցան զապթիէնի տուր, վերջապէս ինչ կընես ըրէ ստակ բեր: . . . Ստակ չը տուող ընթերցողք, ասի լսե-

ցէք ա, ասկէ ետքը զգուշացիք ու ցրիչը հեռուէն տեսնէք նէ ստակը ձեռքերնիդ պատրաստեցէք. ես ազգ ըրի մեղքէն ելալ կամ մեղքը ինէ ելաւ. . .»(4)

Այս ու այսպիսի կծու խօսքերով Սուաճեան լցնում էր «Մեղուի» էջերը եւ վերաւորում իւր մի բուռն բաժանորդներին:

1872 թուականի նոյեմբերի 4-ից «Մեղուն» Սուաճեանի ձեռքից ազատուեց եւ ընկաւ մեր նշանաւոր երգիծաբան հանգուցեալ Յակովբ Պարոնեանի ձեռքը:

Պարոնեան որքան էլ իւր գեղեցիկ սրախօսութիւններով դիպչում էր ժամանակակից ազգային ջոջերին, զաւելտախօսութեան մէջ փառաւոր պաշար ունենալով, շնորհք ունէր այդ բանի մէջ եւ չէր վերաւորում ոչ մէկին: «Մեղուն» Պարոնեանի ձեռքում դարձաւ մի կանոնաւոր լրագիր, ուղղութիւնը աւելի բնորոշ դարձնելով:

Պարոնեան որ արդէն փորձուած էր խրմբագրական գործերի մէջ, տալիս էր իւր ընթերցողներին թարմ եւ հետաքրքիր շատ նիւթեր: Սուաճեանի օրով «Մեղու» թերթի հեռացած բաժանորդները Պարոնեանի օրով դարձեալ ստորագրուեցին:

Հանգուցեալ Պարոնեան համարեա «Մեղուի» իւրաքանչիւր համարում տալիս էր խմբագրական (առաջնորդող) յօդուածներ, անդադար հարուածելով, կշտամբելով ու ծաղրելով հասարակական թերի գործերը, յանդիմանելով ազգային տգեղ սովորութիւնները, ընտանեկան պճնասիրութիւն: Սաստիկ հակառակուում էր Պարոնեան այն բանին, երբ մի հոգեւորական առաջնորդ կամ քարոզիչ չէր կամենում Կ. Պոլսից տեղափոխուել գաւառները: Ահա ինչքան գեղեցիկ խօսքեր մի այդպիսի դէպքի համար: «Կը լսենք թէ պատրիարքարանը իր անշարժ կալուածներին տեսրակին մէջն է անցուցեր այդ եկեղեցականը»:

«Մեղուի» մէջ վերջին էջերում, ինչպէս Սուաճեանի օրով, նոյպէս եւ Պարոնեանի ժամանակ տպագրուում էր զանազան զա-

ւեշտական ծաղրապատկերներ որ բաւականին յաջողութեամբ էին գծագրուած: Փորագրութիւն սկզբում Յ. Հեքիմեանի, վերջում Նշան Պէպետեանի (նկարիչ Սիմ. Էֆ. Նազըճեան):

Օրինակի համար առաջ բերենք մի երկու պատկերների նկարագրութիւնը Սուաճեանի ժամանակակից:

ա. Պատկերը ներկայացնում է Ազգային ժողովի ներքին մասը. հէնց գուցէ գիւտական սենեակը, բոլորովին դուրկ անգամներից կամ երեսփոխաններից: Երեք հատ մկներ առաջ եկած, մինը գրիչը վերցրած գրել է աշխատում, միւս երկուսը միմեանց հետ կռուում են: Դորանց դիմաց կանգնած է այգաեղի ծառան եւ ուզում է գուրս վաճակել այդ անկոչ հիւրերին: Այս պատկերի նպատակն այն է որ Ազգային ժողովը թափուր լինելով իւր մարդկանցից առաջը մնացել է մկներին: Ինչպէս եւ այդ պատկերի տակ գրուած է հետեւեալը՝ «Ազգային ժողովոց խորհրդարաններուն վիճակը, մուկերուն ասպարէզ բացեր է»:

բ. Երկրորդ մի պատկեր ներկայացնում է՝ գրսից միմեանց մօտ երեւում են Պատրիարքարանը եւ Հիւանդանոցը, երեք չորս հօգի գուրս եկած փախչում են. որոնց ամեն մինը տանում է իւր հետ զանազան բաներ. օրինակ առաջին փախչողը շալակած ունի մի մահճակալ եւ ձեռքին բռնած մի զլլակ. երկրորդ գնացողը տանում է իւր հետ հովանոց, վերարկու, պահարան եւ այլն. երրորդը դարձեալ շորեր՝ ծխամորճ, չորրորդը կօշիկներ եւ այլն: Այս պատկերով պ. Սուաճեան ուզում է ցոյց տալ որ Ազգային ժողովի եւ Հիւանդանոցի մէջ ամեն մի մտնող գուրս ելնելիս մի երկու բան հետը վերցնում տանում է: Այս պատկերի տակ գրուած է «Այս տեղերէն դուրս նետուելնուս ետքը Ստամպուլէն ալ գուրս ելնելու ենք»

Իսկ 1850 թուականի վերջին համարի վերջին երեսում նկարուած է հետեւեալը՝

մի քառանկիւնի տախտակ, դրուած նկարչական եռոտանու վերայ, նման դասարանական գրատախտակին: Սորա աջ կողմում կանգնած է մի ճպուռ մարդկային երեսով, երկար ոտներով, սա մի ձեռքով տախտակն է բռնել, միւս ձեռքով գրիչը: Տախտակի վերայ կարդացուում է հետեւեալը—

— 1267436 $\frac{1}{16}$ - Մեղուին եկամուտը
— 1365424 $\frac{1}{8}$ - Մեղուին ծախքը

— 67588 $\frac{1}{16}$
«Հաշուէ, հաշուէ, հաշուէ
Տարեգլխուն հալէ ու մաշուէ»

Մի խօսքով «Մեղուն» եթէ Պարոնեանի ձեռքը չ'անցնէր իւր այսօրուայ արժանի տեղը չէր ունենալ մեր մամուլի պատմութեան մէջ: Սուաճեան պարտական է Պարոնեանին, որ իւր սկսած լրագիրը դրեց որոշ գծերի վերայ:

«Մեղուի» հակառակ կուսակցութիւնը որ հետզհետէ զօրեղանում էր նորանոր լրագիրներ ստեղծելով, մտածելով որ «Մեղուի» խմբագրութիւնն ընկնելով մի խելահաս անձնաւորութեան ձեռք աւելի կարող է վնասել իւր ուղղութեանը, աւելի եւս ամրացրեց իւր մտերմութիւնը Պատրիարքարանի եւ Տպագրական Տեսչութեան հետ, այնպէս որ շատ չանցած՝ 1873 թուականի դեկտեմբերին. . . Մեղուն դադարուեց, տասն եւ չորս ամիս մնալով Պարոնեանի ձեռքում:

«Մեղուն» առաջին տարին մինչեւ 9-դ համարը տպագրուեց «Արապեան տպարան»: Այնուհետեւ մինչեւ 1860-ը թիւը Քիւրքճեանի տպարանը, մինչեւ 1863-ը ճիւղարանի Յովհաննու Միւհէնտիսեան (5).» նոյն թուականի յունիսից «Համազգային տրպարան». 1864 թ. յունուարից նորից Քիւրքճեանի տպարանում, ուր եւ տեւեց մինչեւ վերջը:

«Մեղուին» աշխատակցում էին ի թիւս այլոց Գ. Օսեան, Խ. Միսաքեան, Յով. Եսայեան եւ այլք:

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «Մեղուն եւ մեր աղբիւրները—
 - ա. «Մեղու լրագիր, ուսումնական եւ բանասիրական, Խմբագիր եւ հրատարակիչ Յ. Սուաճեան, Կ. Պոլիս 'ի տպ. Յովհաննու Միւհէնտիսեան. 1857—60(““):
 - „Մատենագ. հայկակ.“ Զարք. էջ 424
 - բ. «Մեղու 1851 (““) Յ. Սուաճեան“
 - „Իաս. հայ-ապգ. պատմ.“ էջ 339.
 - գ. «1859 թ. (““ին կիսամսեայ հանդէս մը սկսաւ հրատարակուիլ... այսպիսի դիտմամբ ձեռք կը զարնէր իր ամսաթերթին (““) հրատարակութեանը, ու եռանդուն գրչովը ու աշխոյժ հանձարով քաւական ընդունելութիւն կը գտնէր... Բայց գործածած սուր ոճը՝ յաճախ չը կարենալով օրինաւոր սահմանին մէջ մնալ, ու ազգին թէ հոգեւոր եւ թէ քաղաքական իշխանութիւնը ու պատուաւոր անհատներ ծաղրածութեանց նիւթ ընելով, ու անանկով զանգատներու յաճախելով... խափանում ունեցաւ...»
 - „Պատմ. հայ. դպրութ.“ բ. էջ 493.
 - դ. «Մեղու երկշաբաթաթերթ Կ. Պոլիս 56 (““)—71 (““). խմբագ. Սուաճեան իբր զաւելչտական թերթ շուտով դադարման ենթարկուեց»
 - „Հայոց արդի մատենագր.“ (ձեռ.)
 - ե. «Յ. Գ. Սուաճեան 'ի Կ. Պոլիս 1855 (““) սեպտ. 16-ին «Մեղու» անուն կիսամսեայ թերթ մը հրատարակեց... իւր էջերուն մէջ կը զետեղէր երբեմն երբեմն ազգային ինքնահաւանութեան անխնայ խայթող յօդուածներ... ազգային հաստատութեանց նաեւ անձնաւորութեանց պարսաւելի եւ ուղղելի մասերն յօդուածներով եւ ծաղրապատկերներով կը խայթէր, եւ այս պատճառաւ ինչպէս ժամանակակից քանի մը թերթեր, նոյնպէս անձնաւորութիւններ իրեն դէմ յարոյց, որոնք յաջողեցան վերջապէս զայն խափանել...»
 - „Հանդ. Ամսօրեայ“ 1890 թիւ 11.
- զ. «Հայ լրագրութեան պատմութեան մէջ Յարութիւն Սուաճեանի «Մեղուն կարեւոր տեղ մը բռնած է. անդրանիկ (‘) հայ զաւելչտաթերթը... նորութիւն մը եղած է Պոլսոյ լրագրութեան առաջին տարիներուն մէջ եւ այսօր հետաքրքիր բանասէրը թղթատելով այդ թերթերը այն ժամա-

- նակուան տոհմային եւ ընտանեկան կեանքին զանազան երեւոյթները պարզուած կը գտնէ հոն...»
- „Մասիս“ („Արձագ.“ 1893. № 3 էջ 3.)
 - է. «Նոյնպէս «Մեղու Կոստանդնուպոլսի» որ էր երգիծարանական երկշաբաթաթերթ Սուլթանի մայրաքաղաքում, որ հայ մեծամեծներին հարուստում էր կծու յօդուածներով...»
 - „Հայկ. մատենագ.“ Ա. Լայոզ. էջ 152.
 - [«... ebendasselbst die „Mehu Konstantinopolso“, die... welche satierisches Zweiwochenblatt war uud den armenischen Bürgern der türkischen Hauptstadt fehlbare Stiche austullte...»
 - „Arm. Bibl.“ II, A. L. էջ 152.
 - ը. «1859 (““) թուականին Պոլսոյ մէջ հանգուցեալ Յարութիւն Սուաճեանի խմբագրութեամբ հրատարակուեցաւ «Մեղու» անունով կիսամսեայ հանդէսը, Այս թերթը... ստաջինը եղաւ որ գործ դրեց Ճիւղական պատկերներ ու անխնայ հարուածեց հասարակական գործունեայ անհատների պակասութիւնները մինչեւ այն աստիճան որ քանի մի անգամ մատնուեցաւ տէրութեան ու դատապարտուեցաւ լուութեան: Մեղուն վերակենդանացաւ 1870 թիւ. բայց այս անգամ էլ մի (‘) տարի միայն շարունակուելով բոլորովին հանգաւ...»
 - „Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.
 - „Մեղուի“ մասին վերոյիշեալ մեր աղբիւրները համարեաւ բոլորն էլ սխալուած են. բացի հրատարակման սկզբի թուից որ մի երկուսը միայն ճիշտ են գրել. իսկ ինչ վերաբերում է «Մեղուի» վերջին տարիներին Յ. Պարոնեանի օրով, ոչ մինը չէ յիշել, բոլորն էլ 72-ին են տուել զաղաբումը:
 - 2.) Հ. Գալէմբեարեան. «Հանդիսի» մէջ գրում է՝ սեպտեմբերի 31-ին. չը մտածելով որ սեպտեմբեր ամիսը 30 օր ունի:
 - 3.) Տասնօրեայ հրատարակուած միջոցին, լոյս էր տեսնում ամսի 10-ին, 20-ին, 30-ին:
 - 4.) Տես՝ «Մեղու» տասնօրեայ 1860 թ. թիւ 109:
 - 5.) Միւհէնտիսեանի տպարանում տպագրուելիս «Մեղուի» համարների վերջին էջերում տրպագրուում էր՝ «Հանդիսի պարունակութեանը պատասխանատու չէ տպարանը»



44.



ՔՆՂՈՂԱԿԱՆ ԵՒ ՌԵՆՍՈՒՐԸՆԿԱՆ

ԼՐԱԳԻՐ

(Շաբաթաթերթ)

Տփիսիս (Ռուսաստան) 1858—1886.

Հրատարակուում էր՝ շաբաթը մէկ անգամ կիրակի օրերը:

Խմբագիր՝ Պ. Սիմէոնեանց.

Հրատարակիչ՝ Հ. Էնֆիաճեանց.

Տպարան Ա. Ռոտինեանց.

Դիրքը (թերթ) միաժալ 4 էջ 5 սիւնեան 47x50 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագրիւնը՝ տարեկան 10 ռուբ. Կէս տարուանը 5 ,,

Լեզուն, ոճը՝ «Շատերը կարծում են որ տաճկահայերի հարցը քննեալ երբ Ուղղագրութ. նոցա յիշատակագիրը դիսպան» Ծրագիրը՝

- I. Պետական Կարգադրութիւնք:
- II. Առաջնորդողներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին:
- III. Ներքին Տեսութիւն—Տեղական եւ Հասարակական խնդիրների վերաբերութեամբ յօդուածներ եւ թղթակցութիւնք:
- IV. Քաղաքական վիճակի վերայ Հաստուածներ եւ լուրեր:
- V. Մանր Լուրեր:
- VI. Խառն Լուրեր:
- VII. Բանասիրական-Ֆէլիէտոններ, պատկերներ, վէպեր, մատենախօսութիւնք, քննադատութիւնք, գիտու-

թեանց եւ արուեստից վերաբերեալ յօդուածներ:

VIII. Պատասխանիք (Խմբագրութեան)

IX. Յայտարարութիւն:

Բովանդակութիւն 1878 թ. № 31.

Բերլինի Վեհաժողովի մասին (առաջնորդ.)

Հայ դպրոցների մասին (առաջն.)

Ազգային—Թղթակցութիւններ.

Ալեքսանդրապոլից—Ալեքսանդրապոլցի.

Մանգլիս—Ղուկաս ք. Սիմէոնեան.

Քարուանսարա—Հանդիսատես.

Նոր-Նախիջեւան—Տիրպի.

Քաղաքական— «Правит. Вѣстн.»-ից արտատպած մի մեծ յօդուած: Բերլինի դաշնագրութեան 61-դ յօդուածը. «Politische Correspondenz»-ից արտատպած մի յօդուած Տաճկա-Հայաստ. դրութիւնից:

Խառն լուրեր՝ Վեհափառ Հայրապետի կոնդակը: Անդրէաս սրբազանի եւ Վ. վ. Բաստամեանի նոր պաշտօնները Գէորգեան ձեմարանում: Ջենկինսի առաջարկը Անգղիական Պարլամենտում Հայոց վերաբերեալ: «Голосъ»-ի թղթակիցը Բերլինի դաշնագրութեան մասին: Հայոց եւ ռուսաց լեզուի ուսուցիչ: Շամշուլտայում նոր ուսումնարան: Ախալքալակում երաժշտական երեկոյ: «Тифлис. Вѣстникъ» լրագրից մի լուր:

Յայտարարութիւններ . . .



Ստանդնուպոլսի «Մեղուին» բոլորովին հակառակ ծրագրով եւ ուղղութեամբ նորա Հրատարակութեան Հետեւեալ տարին Տփիսիսում սկսուեց Համանուն «Մեղու»

Հայաստանի լրագիրը Ստեփաննոս աւագ քահանայ Մանդինեանի խմբագրութեամբ: Բարեխառնակ քահանան ամեն կերպ աշխատում էր ժամանակակից հայ հասարակութեան մատչելի անել իւր լրագիրը, դորա համար էլ ընտրեց մաքուր աշխարհաբար լեզուն:

Ռուսաստանի մէջ անդրանիկ հայ պարբերականներ «Կովկասի» եւ «Արարատի» դադարումից յետոյ ուրիշ ոչ մի լրագիր չ'երևեց մինչեւ «Մեղու Հայաստանին» լոյս աշխարհ եկաւ 1858 թուականի սկզբին: «Մեղուի» հետ միեւնոյն տարին լոյս տեսաւ Մոսքուայի «Հիւսիսափայլը» որ անհաշտ թշնամի էր Տէր Ստեփաննոսի լրագրին:

Ինչպէս «Մեղուն», այնպէս էլ «Հիւսիսափայլը» ունեցան իւրեանց համակրողները: «Մեղուն» աւելի շատ, որովհետեւ գտնուում էր հայ ժողովրդի կենտրոնում եւ աւելի շուտ շուտ էր հրատարակուում քան «Հիւսիսափայլը»: 50-ական թուականներից կարելի է ասել որ «Մեղուն» եւ «Հիւսիսափայլը» ուսուհայերի մէջ երկու հակառակ կուսակցութիւններ ստեղծեցին: «Հիւսիսափայլը» պատկանում էր յառաջադիմական-ազատամիտների գասակարգին, որ այժմ կոչուում է «մշակականներ» իսկ «Մեղուի» կուսակցութիւնը պահպանողականներ որ այժմ պատկանում են «նոր-գարականների» բանակին:

Որպէս մի նորութիւն, մի ազգագուտ ձեռնարկութիւն, ամեն կողմից «Մեղունին» յաջողութիւն, յարատեւութիւն, գործունէութիւն ցանկացին, շնորհաւորելով նորա լոյս աշխարհ գալը, ուղերձներ ոտանաւորներ ու ներբողներ նուիրելով—

Քեզանէջ ջանք, արեւութիւն,
Մեզնէջ խրախոյս եւ օգնութիւն
Յերկնէջ գայ ջեզ մանուկ «Մեղու»
Յաջողութիւն եւ զօրութիւն:

Այսպիսի շատ խօսքերով զարգարեցին «Մեղուի» ճակատը, գովելով ու խրախուսելով նորա գործունէութիւնը: Առհասարակ ամեն մի նոր գործի փառաբանողներ շատ կը լինին զանազան ճոճուան խօսքերով,

ուղերձներով, ու խօսատնում են լիւրախոյս եւ օգնութիւն» բայց մի քանի տարուց յետոյ երբ դործը հասնում է նիւթականի օգնութեան, կարծես ամեն ինչ մոռացութեան է տրուում:

Մեր խօսքը միայն «Մեղուի» մասին չէ. ժամանակից գուրս լինելով մեզ յայտնի չէ նորա սկզբնական տարիների ներքին կեանքը: «Մեղուն» իւր առաջին տարիներում երբ ըստ իւր սովորութեան իւրաքանչիւր տարուայ վերջում ապագրում էր իւր բաժանորդների ընդհանուր անուանանացուցակը, դորանից երեւում է որ «Մեղուի» ստորագրողները թիւը հասել հասնում էր՝ ա. տարին 700-ի. բ. տարին 450-ի. եւ այլն: Թէեւ այն ժամանակուայ հետ համեմատելով, նախկին 450 բաժանորդ ունեցող մի լրագիր, կարելի է ասել այնքան էր տարածուած, ինչքան որ այժմ տարածուած են 1800—2000 ստորագրող ունեցող լրագիրները. ընթերցանութիւնը այժմ քառասուսիս տարածուած լինելով քան 50-ական թուականները:

«Մեղու Հայաստանին» որ հինգ տարի մնաց Տէր Ստեփան Մանդինեանի ձեռքում, գեղեցիկ նիւթեր էր տալիս, թերթին աշխատակցելով ժամանակակից անուանի գրագէտներ, ինչպէս են՝ Գ. ք. Փափաղեան, Յով. Սայաթնովեանց. Եր. Իսահակեանց, Զայրմայր Մսերեանց, Յ. Այթմազեանց. Գ. Մուրատեանց, Գան. վ. Շահնազարեանց, Յակ. ք. Մխիթարեանց, Առ. Արարատեանց, Ռոստոմ-Բէկ Երզնկեանց, Մարտ. ք. Մեծատունեանց, Աբ. վ. Մխիթարեանց, Գէորգ Տէր-Աղէքսանդրեանց, Մելիք Միք-Հայկազեան, Զ. Հ-Զալալեանց, Ստեփան Պալաստեանց, Ս. Լազարեանց, Յովհաննէս Պաշ Աշտարակեցի, Մովս. Զոհրապեան, Աղէք. Երիցեանց, Մկրտ. Արաբաջեան, Քր. Թայիրեանց, Միք. Սատաթեանց եւ այլք:

Մանդինեան քահանայի օրով «Մեղուն» հրատարակուում էր որպէս շաբաթաթերթ փոքրագիր (թերթ) 4 թուղթ 8 էջ երկսին-

եան 22X31 հ.-մետր: Ծրագիրը հետեւեալն էր՝ առաջին տեղը բռնում էր քաղաքական բաժինը, յետոյ բանասիրականը: «Ազգային լուրք»—«Մանր լուրք»—նոր լուրերը եւ այլն. Յօդուածներից քաղաքական մասը մեծ մասամբ թարգմանուում էր օտար լրագիրներից:

«Մեղուն» տպագրուում էր նախ «Ի առաջարանի ներսիսեան Հոգեւոր Իպրոցի Հայոց, Ընծայելոյ յԱզնուական Գէորգայ Արծրունուոյ, Յետոյ 1863 թուից աչ. Էնֆիանեան եւ ընկերութեան» տպարանը. Իսկ 80-ական թուականներին «Մեղուն» արդէն դուրս էր գալիս Ռօսիանանցի տպարանից:

Հանգուցեալ խմբագիրը իւր թերթի տակ ստորագրում էր՝

«Խմբագրիչ՝ Ստեփանոս քահանայ Մանգինեանց» «Մեղուն» լրացնելով իւր հինգամեակը, 1863 թուականին Արժ. Մանգինեանի ձեռքից անցաւ պ. Պետրոս Սիմէոնեանի ձեռքը:

Նոր խմբագիրը հրապարակախօսական ասպարէզ մտնելով, նոր ուժեր աւելացնելով իւր թիւին սկսեց եռանդով գործել բայց ցաւօք սրտի պէտք է ասել որ մի կատարեալ բարեփոխութիւն չը մտցրեց հ. Մանգինեանի թողած «Մեղուն» մէջ: Միեւնոյն գիրք, միեւնոյն արտաքին գեղեցկութիւն եւ ներքին կազմակերպութիւն կամ նիւթերի գասաւորութիւն: Բայց այնուամենայնիւ կազդուրուած ոյժերով գործելով պ. Սիմէոնեան թերթը աշխատեց դնել այնպիսի ամուր հիմքերի վերայ, ուր կարողանայ իւր գործը յարատեւութեան հասցնել:

«Մեղուն» իւր գոյութիւնը հասցրել էր 13-դ տարուան: Ուժ տարի էր որ նոր խմբագրի ձեռքին էր, երբ 1870 թուականի վերջերին դադար առաւ:

«Մեղուն» հակառակորդներն էին այս շրջանում «Հայկական Աշխարհ» ամսաթերթը եւ առաջուանից արդէն «Հիւսիսափայլը»: Երկու հակառակ կուսակցութիւններ շարունակ քարկոծում էին միմեանց. առաջինը

որքան որ հնապաշտ, պահպանողական, վերջիններս այնքան աւելի ազատամիտ յարձակողական: Բանակուիւր հետզհետէ ուստկանում էր: «Հայկական Աշխարհը» «Մեղուն» անուանում էր «ստախօս», «խաւարապաշտ» եւ այլն: «Մեղուն» էլ իւր կողմից պակաս չէր վարձագրում «Հայկական Աշխարհի» խօսքերին:

«Հակառակ «Մեղուն» խմբագրի անդուշտներին որ ամեն կերպ աշխատում էր տարածել իւր թերթը հասարակութեան զանազան խաւերի մէջ, թերթի ստորագրուողները հետզհետէ պակասում էին եւ եղածներից էլ մի մասը հազիւ վճարում բաժանորդագինը: Առաջ բերենք «Մեղուն» մասին մի թեթեւ հաշիւ:

1864 թուականին «Մեղուն Հայաստանին» ունէր 237 բաժանորդ որոնցից վճարողները 183 հոգի էին: Տարեկան մուտքն 1098 ռուբլի. ծախսը 1245 ռ. Ուրեմն բացի այն որ պ. Սիմէոնեան իւր գործ սկսած առաջին տարիներում ոչ մի արգելք չէ ունեցել, այլ մօտաւորապէս դեռ 150 ռուբլի էլ վնաս է արել. ինչպէս եւ 1865-ին վնասուել է 250 ռուբլի: Ահա թէ ինչ է գրում պ. խմբագիրը «Մեղուն» 1864 թ. № 41-ում:

«Մինչեւ ցայժմ դեռ եւս ճշտութեամբ չենք կարողանում որոշել թէ ինչ է պատճառը որ մեր լրագիրներն ու օրագիրները ամենեւին ընթացք եւ յառաջագիմութիւն չունին. արգեօք ժողովրդեան անընթերցասիրութիւնն է պատճառը, թէ օրագիրները նորա ճաշակին անյարմար եւ անհետաքրքրական լինելը...»

Պատճառն իսկապէս կարելի է վերագրել այն բանին որ «Մեղուն» մէջ չէր տպագրուում գաւառներից ու արտասահմանից ընդարձակ նամակներ որ լրագրի մէջ անհրաժեշտ նիւթեր են կազմելու. ընթերցողները երեւի ձանձրացել էին «Մեղուն» շարունակ բանակուիւններից այս կամ այն լրագրի, կամ հանդէսի հետ: Հարկաւոր է յիշել որ

պ. Սիմէոնեան «Մեղուի» գիրքը մեծացրեց միաժալ թերթ 4 էջ 5. սիւնեան 45X61 հ.-մետր. ինչպէս այժմեան «Արձագանքն» է: Արտաքինը փոփոխուելով, ներքինը մնաց մի-եւնոյն գրութեան մէջ. ինչպէս եւ հրատարակութեան կանոնը, շաբաթը մի անգամ, որպէս մինչեւ 1870-ական թուականների վերջերը: Յետոյ դարձեալ շաբաթն երկու անգամ, երեք անգամ եւ վերջին տարին 1886 թուականի յունիսից դարձեալ շաբաթը մի անգամ մինչեւ վերջը:

«Մեղուն» զուտ պահպանողական լրագիր լինելով, իւր մանկութեան հասակից մինչեւ մահը բանակուով մէջ էր արմատական լրագիրների հետ, նախ «Հիւսիսափայլի» յետոյ «Հայկական Աշխարհի» եւ վերջապէս մինչեւ իւր կեանքի վերջում «Մշակ» լրագրի հետ:

Վերջերքս 80-ական թուականներին «Մեղուի» հին աշխատակիցներից մի քանիսը միայն մնացել էին մասնակցող: Հեռացողների տեղ նոր աշխատակիցներից լիշենք, Սուք. եպ. Պարզեանց, Աղէք. Քիչմիշեանց, Հայկունի, Ծերենց, Աղ. Թարխանեան. Կրպէ, Սեն. Արծրունի, Քաղքցի, Փառնակէս, Հայրապետ Առկասեան, Ս. Տէր-Մելիքսէթեան, Համբ. Առաքելեանց, Յով. Նազարեանց, Յ. Պապարինեան, Սիւնեցի, Պետրոս Հայկազունի, օր. Մարիամ Մատինեան, Իմիր, օր Թ. Տէր-Քրիզորեան, Էմմանուէլ եւ այլք: 1858 թուականից սկսուելով, 1883-ին լրացաւ «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամեայ գոյութեան տարելիցը: Իբր վարձագրութիւն «Մեղուի» երկարամեայ գործունէութեան, Հայ գրագէտների մի ստուար խումբ միանալով Հայ հասարակութեան հետ, 1883 թրուականի յունուարի 2-ին փառաւոր հանգիստով Տիփիսում տօնեց «Մեղուի» գործունէութեան 25-ամեայ յոբելեանը: Նոյն օրը հանդէսներ կատարուեցին զանազան քաղաքներ՝ ինչպէս Բագու, Ալէքսանդրապոլ եւ այլն. եւ ամեն կողմից Հայ երիգասարգներ, Հայ հասարակութիւնն ուղարկեց «Մեղուի»

խմբագրութեան շատ թանկագին ընծաներ որ «Մեղուի» հրատարակութիւնը կարող էր ապահովուել մի քանի տարով: Ռուսաստանում եւ եթէ չենք սխալուում Թիւրքիայում առաջին օրինակն էր որ մի Հայ հրատարակախօս այգալիսի մի պատուի էր արժանանում. այն է վարձագրել այն ազգային մշակին, որ գործում է Հայ գրական տնգատանում 25 տարի:

«Մեղուի» յոբելեանի ժամանակ ինչպէս լիշեցինք շատ տեղերից ընծաներ, ուղերձներ, ոտանաւորներ, հեռագիրներ տեղացին խմբագրի գլխին: Բագուի մի խումբ երիտասարգներից որոնք կատարեցին յոբելեանի հանդէսը շատ շքեղութեամբ, պ. պ. Միրզոյեանի, Կարապետեանի Նաջարեանցի աշխատութեամբ ժողովելով 1777 ըուբլի ուղարկեցին «Մեղուի» խմբագրութեան:

Արժանապատիւ Հայր Արսէն քահ. Բագրատունին մի ուղերձ կարդաց յոբելեանի հանգիսի ժամանակ որ ՚ի միջի այլոց ասում է.

... Բո այս աշխատանք հռչակ հանուեցաւ,
 Լոյս առաջ գալով խաւար հեռացաւ
 Խաւարի որդիք թողին ասպարէզ,
 Լուսոյ ժառանգներ եկին ի հանգէս...
 Ենէկ տուին քեզ շատ հարգատներ
 Դէպ քեզ օգնութեան մեկնելով ձեռքեր.
 Առաջ խորհրդով կամեցին խումբեր
 Նոր ոյժ գորութիւն քեզ բերին նուէր:
 Նոցա փառք, պարծանք
 Երախտագէտ են.
 Նոցա յեշտտակ
 Կեցցէ՛ միշտ ամեն,
 Իսկ քո օգտակար վաստակ ժրջան
 Այսօր եւ ապա կեցցէ՛ անսասան,
 Նահապետ անուն ոսկեայ տառերով
 Հայ ազգը ճակատիք թող գրէ շուտով...»

«Մեղու» լրագրից արտատպած, որպէս առանձին գիրք լոյս են տեսել՝

«Մի կտոր հացի պատմութիւն».-Հ. Առկ.
 «Բողոքականութիւնը Կովկասի Հայոց մէջ».—Նոյն.

«Անտուն Անտէր՝ Ալֆոնս Դոդէի.-օր. Թ. Տ-Քր.

«Բաֆֆի կայծերի մատենախօսութ.» Հայկունի. եւ այլն:

Յոբելեանից չորս տարի անցաւ. մի տա-

րի էր մնացել որ «Մեղուն» լրացնէր 30 ամեայ գոյութեան տարելիցը, կամ Սիմէոնեանի 25 ամեակը: Բայց ցաւելով պէտք է տեսի որ «դանակը ոսկորին էր հասել» ինչպէս ասում է հայկական առածը: «Մեղուն» իւր 250 բաժանորդներից էլ չէր կարողանում հաւաքել իւր բաժանորդավճարները, տպարանատէրը, թղթավաճառը փոզ էին պահանջում, խմբագրատանը ոչ մի կոպէք չը կար: Ինչ էր անելու խեղճ խմբագիրը եթէ ոչ քանի շուտ է, քանի դեռ շատ չէ թաղուած պարտքերի մէջ, թերթի գոյութիւնը դադարեցնէր: Այն մարդիկ որոնք մի երկու տարի առաջ մեծ ցոյցերով յօբելեան կատարեցին, չը կարողացան գոնէ մասնաւորապէս մի կերպ ապահովացնել թերթի գոյութիւնը: Բոլորովին զուրկ նիւթական միջոցներից «Մեղուն» դադարեց 1886 թուականի վերջերին, ի մեծ ցաւ իւր համակրողների:

Ժ Ա Ն Յ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե ր .

1) «Մեղուն Հայաստանին» եւ մեր ազբիւրները—

ա. ,, 1858 թիւը նշանաւոր էր գլխաւորապէս ռուսահայոց համար: Այստեղ միեւնոյն թուականի տարեգլխից Թիֆլիսում սկսուեց ,,Մեղուն Հայաստանի“ լրագրի հրատարակութիւնը. հանգուցեալ հ. Ս. Մանդինեանի խմբագրութեամբ որ եւ շարունակուում է այսօր (1882) պ. Պ. Սիմէոնեանի ձեռքով. . . .”

,,Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.

բ. ,, . . . Տիֆլիսում դուրս եկաւ քահանայ Մանդինեանի ձեռքով այժմ (1885) շարունակուող ,,Մեղուն Հայաստանին“ որի խմբագրութիւնը 1862 (‘)ին առաւ լեզուագէտ Սիմէոնեան. . . .”

,,Հայկ. մատեն.“ Բ. Ա. Լ. էջ 152.

[,, . . . In Tiflis gründete ein Pfarrer namens Mandinian die noch bis heute bestehende ,,Mehu Hajastani“, die Biene Armeniens, deren Leitung im Jahre 1862 der Philologe Simonianz übernahm. . . .”]

,,Arm. Bibl.“ II. A. L. էջ 152.

գ. ,, . . . պ. Սիմէոնեանցի ,,Մեղուն Հայաստանին“ 1858(‘)—1885. . . .”

,,Պատմ. հայ. մատեն.“ Ե. վ. Գ. էջ 96.

դ. Մեղուն Հայաստանի 1858 Թիֆլիս. . . .”

,,Իսս. հայ-ազգայ. պատմ.“ Բ. էջ 340.

ե. ,,Մեղուն Հայաստանի“ լրագիր քաղաքական, բանասիրական, առեւտրական, առաջին խմբագիր-հրատարակիչ Ստեփան քահանայ Մանդինեանց. Տիֆլիս”

,,Մատենագ. հայկակ.“ Զարբ. էջ 425.

զ. ,, . . . Մեղուն Հայաստանի“ մահամբձ դրութեան հասած լինելով չը կարողացաւ մշտնաւնակին խմբագրի ձեռքում եւ 1864-ին անցաւ Մանդինեան քահանայի ձեռքից Պետրոս Սիմէոնեանցի ձեռքը”

,,Մտքի մշակը“ Բ. Մալումեան. էջ 30.

է. ,, . . . Իսկապէս Սիմէոնեանցը ինքը շատ լաւ էր հասկանում, որ իր լրագրի անյաջողութեան պատճառը ամենեւին թշնամիների լարած շարութիւնները չեն”

,,Նիւթեր հայ. պատմ. համ.“ Ա. Եր. էջ 64.

ը. ,, . . . Մեղուն պաշտպանելով հայոց ազգային եկեղեցին, որի սկզբունքները ինքը ,,Մշակն“ էլ միշտ սուրբ էր համարում, ախոյեան հանդիսացաւ նոյնպէս իր նշանակութիւնը չը հասկացող հայ հոգեւորականութեան. . . .”

,,Հայոց մամուլը Ռուսաստան.“ էջ 91.

թ. ,,Մեղուն Հայաստանի“. 1859 (‘)ին սկսաւ հրատարակուիլ ,,Մեղուն Հայաստանի“ շաբաթաթերթը Թիֆլիսում Տ. Ստեփան Մանդինեան քահանայի խմբագրութեամբ ,,Պատմ. հայոց“ Ս. Պալասան. էջ 444.

,,Մեղունի մասին“ ոչինչ չէ յիշել պ. Փարսադան Տէր-Մովսիսեան իւր ,,Արդի մատենագրութեան“ մէջ: Զ. Զարբանալեան իւր ,,Դպրութեան“ Բ. գլխի մէջ, հարեւանցի է խօսել ,,Մեղունի“ մասին:

2.) Թերթի ճակատին վերջերք չէր գրուում ,,քաղաքական եւ բանասիրական լրագիր“, ,,Մեղուն“ Մանդինեանի օրով ,,Մեղուն Հայաստանի“ լրագիր քաղաքական բանասիրական եւ առեւտրական էր կոչուում: Սիմէոնեանի ձեռքում եղած միջոցին գրուում էր լրագիր քաղաքական աշխարհն եւ բանասիրական միջոցն վերջը ,,Մեղուն Հայաստանի“ քաղաքական բանասիրական լրագիր:



45.



ՕՐԱԳԻՐ

ԸՆԿՆՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԵՐՈՐԻՈՒԹՅԱՆ
ԵՒ ԳՐԱՐԵՐՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ

(Ամսագիր.)

Մ ո ս ք ու ա (Ռուսաստան) 1858—1865.

Հրատարակողու մ էր՝ ամսի սկզբին.

Հրատարակող՝ Ստեփաննոս Նազարեանց.

Տպարան՝ Լազարեան ձեմարանի.

Դիրքը՝ (տետր.) տպագր. 2 թերթ. 64 էջ
16X26 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագրինը՝ տարեկան՝ Մոսքուա
8 ռուբլի.

„ ուրիշ տեղեր 9 „

Լեզուն, ոճը՝ } „... Կրօնը է հաղորդութիւն
Ուղղագրութ. } մարդու և Աստուծոյ մէջ և
այս հաղորդութեան մէջ...“

Ծրագիրը՝ (2)

ՊԱՏՄԱԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱ-
ՆԱԿԱՆ ԵՒ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ (3)

— «Ճառեր ընդհանուր երկրագիտութեան,
ընդհանուր պատմութեան եւ աշխարհ-
հազրութեան վերայ.»

— «Բնագիտական ճառեր, այսինքն բնու-
թեան օրէնքների եւ զանազան ֆիզի-

քական յայտնագործութիւնների, հասարակախօս աստղաբաշխութեան, քիմիայի, հանգաբանութեան եւ ֆիզիալոգիայի վերայ, այլ եւ բնախօսութիւն տունկերի, դիտութեան արժանի բոյսերի, նոցա անկարգութեան եւ օգտի վերայ եւ վերջապէս կենցաղօգուտ գիւտերի եւ յայտնագործութիւնների մասին.»

— «Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մասճութիւնք եւ զգացողութիւնք թէ ոտանաւոր եւ թէ արձակ ոճով: Թարգմանութիւնք հին հայկական եւ հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից, այլ եւ կրթիտիկայք նորատիպ հայերէն գրուածների վերայ):

Բովանգակութիւն 1861. № 2. (փետր.)
Եիլլերի Մեսինական հարսը (շար.) Ս. Ն.
Նապալիոն Մեծի պատմութիւնը (շար.)
Միք. Վայելչեան.
Թէ քնչ է գաստիարակութիւն-Ս. Աւետ.



րեւելեան լեզուների պրոֆէսսոր, գիտնական Ստեփաննոս Նազարեան 1858 թ. Մոսքուայում հիմնեց «Հիւսիսափայլ» ամսագիրը, որ մինչեւ իւր ժամանա-

կին առաջինն էր ստուար կազմութեամբ. մանաւանդ որ Նազարեանի նման մի յայտնի հեղինակութիւն ունեցող անձնաւորութեամբ, մի նշանաւոր երեւոյթ էր մեր լրագրական շրջանի մէջ:

«Հիւսիսափայլ» ծառայում էր իւր բարձր կոչմանը մեծ հոգաճութեամբ: Հանդու-

ցեալ խմբագիրն իւր գործն սկսած օրից «ազգային լսուսաւորութեան եւ դատաւարականութեան» հոգան էր քաշում: Նա իւր քարոզած սկզբունքներն առաջ մղելու, տարածելու համար, այլ լրագիրներ չման չէր հայհոյում, չէր բարկանում հասարակութեան վերայ. այլ բարեկամաբար ու քնքուշաբար վարուելով, ազնիւ միջոցներով էր վարուում ժողովրդի հետ, աւելի եւ աւելի բարձրացրնելով իւր գիրքը ազգի կամ ժողովրդի առաջ:

«Հիւսիսափայլը» իւր ազատամիտ ուղղութեամբ որպէս մի անհրաժեշտ գործ ազգի համար, ցանկանում էր որ եկեղեցում աւետարանն ու եկեղեցական այլ գրքերը կարգացուեն աշխարհաբար լեզուով, վերանորոգութիւն մտցնել ազգային սրբազան հաստատութիւնների եւ հոգեւորականութեան մէջ. թէեւ շատերը սխալմամբ այդ բաները վերագրում են Տփլիսի «Մշակ» լրագրին:

«Մեղու Հայաստանին» եւ ուրիշները «Հիւսիսափայլ»ին անուանեցին բողոքականութեան օրգան: Դոքսորը Նազարեան առանց մի աղմուկի համեստ ճանապարհով աշխատում էր իւր նպատակին հասնել, ամսագրի էջերում առաջ բերելով վերանորոգման գործին նպաստող պատմական-կրօնական-փիլիսոփայական ընտիր եւ լուրջ յօդուածներ. բայց պէտք է ասել որ ազգային խնդիրներին վերաբերեալ յօդուածները «Հիւսիսափայլ» մէջ երկրորդական տեղ էին բռնում: Նազարեան հեռու լինելով հայութեան կենտրոնից, թողնելով հայկական նշանաւոր խնդիրներ, որոնք կարօտութիւն ունէին մամուլի պաշտպանութեան, օտար ազգերի խնդիրներով էր զբաղուած: Ժամանակի հանգամանքներին նայելով որ պէտք էր ամեն կերպ աշխտտել պաշտպանել ազգային եկեղեցին ու հնութիւնները, յարգելի վարդապետան ասում էր «մի բնֆօրմ պիտոյ է առնի եկեղեցին ոտքից մինչեւ գլուխը... ազգ ու կրօն ջուկ ջուկ խնդիրներ են (ոչ մեր գարում) եւ կրօնը փոխուելով կարէ հայն հայ

մնալ» մի խօսքով «կարճամիտ եւ տգէտ» անուանեց Նազարեան այն մարդկանց, որոնք ազգութիւնը պաշտպանելու համար աշխատում էին պահպանել Հայաստանեաց ս. Եկեղեցին ու այլ սրբութիւնները: Շատերի այն կարծիքի դէմ թէ Նազարեան բողոքականութիւն էր քարոզում, ահա պ. Աղէքսանդր Երիցեանի կարծիքն այդ մասին՝ «...Նազարեանը...միտք չունէր հայերիս բողոքականութիւն քարոզել. այդ բանին պէտք է կատարելապէս հաւաստի լինել: Բայց որ նա իւր գրուածքներով նպաստեց, զարկ տուեց Մամախույ Հայ բողոքականների խնդրոյ երեւան գալուն, այդ եւս մի անհրաքելի փաստ է, որ անշուշտ պիտի դրօշմուկի մեր ազգի վերջի ժամանակուայ պատմութեան մէջ...»

Այնուամենայնիւ որքան մի կողմից կարելի է թերութիւններ նկատել Նազարեանի գործունէութեան մէջ, կրկնապատիկ են նորա արած ծառայութիւնները հայոց լեզուի կանոնաւոր զարգացման գործում:

«Հիւսիսափայլ»ից առաջ էլ ունեցել ենք աշխարհաբար օրագիրներ ու հանդէսներ, բայց նորանցից ոչ մինը աշխարհաբարի տարածման գործում այն չէ արել, ինչ որ արել է Նազարեան, կամ սոսկ «Հիւսիսափայլը»: Իբրեւ նպաստող այդ գործին Արարատեան աշխարհից էլ գործում էր անմահ Խաչատուր Աբովեանը, որ Նազարեանի դասընկերն է եղել, բայց ոչ գաղափարակից:

«Հիւսիսափայլը» որ ամեն կողմով թէ ներքին թէ արտաքին նորութիւն էր ներկայացնում, հին սովորութեան համեմատ իւր բոլոր բաժանորդների անուանացուցակը տպագրում էր ղեկտեմբերի համարի վերջում: Դորանից էլ երեւում է որ այս ամսագրի համակրանքն օրէօր սառելիս է եղել հասարակութիւնից: Ահա թէ ինչպէս: «Հիւսիսափայլն» առաջին տարին ունէր 321 բաժանորդ: Երկրորդ տարին (1859) որ դեռ աւելանում էր՝ 343-ը. իսկ յետոյ սկսել է նուազել այնպէս որ 1862 թուականին «Հիւսիսափայլն» ունէր ստորագրուողներ ընդա-

մենը 170 հոգի, գորա համար էլ 1862-ի վերջերին դարարուեց Նազարեանի տմաագիրը: Անցաւ ամբողջ 1863 թուականը. մօտ էր տարուայ վերջին, երբ խմբագրի բարեկամները ցանկանալով դարձեալ տեսնել «Հիւսիսափայլի» հրատարակութիւնը, հանգանակութիւն բաց անելով մի համեստ գումար հաւաքեցին եւ յանձնեցին Նազարեանցին: Բայց ինչպէս պ. Երիցեանն ասում է ...արդէն ուշ էր, ոչ բարեկամաց նպաստը, ոչ խմբագրի աշխատութիւնը չը կարողացան կենդանացնել «Հիւսիսափայլին»: Հետեւեալ 1864 թուականից նորից սկսեց հրատարակուել եւ մինչեւ տարուայ վերջը հասնելով բոլորովին դադարեց «Թէեւ—շարունակում է Երիցեան—Նազարեանը գուցէ այդ պատճառից դրդուած փոխեց մասամբ իւր դադափարները: Երբեմն առաջուայ քարոզածի հակառակ լեզու գործ ածելով...»

«Հիւսիսափայլ» ամսագրին մշտապէս աշխատակցողներ երեւում են՝ Միք. Նալբանդեան, Յար. Համասփիւռ, Ռաֆֆի, Գէորգ Բարխուդարեան, Ս. Աւետիքեանց, Ս. Սուլթան-Նահ, Սմբատ Նահազիզեանց, Գ. Նահապետեան, Ման. Սատաթեան, Յ. Ոստանիկ, Մ. Լաջուարթեան, Յով. Սայաթնովեանց, Ս. Ստեփանեանց, Միքայէլ Վայելեան, Գ. Թոմասեան եւ այլք:

«Հիւսիսափայլը» շատ աշխատակիցներ չունէր, հրատարակող Նազարեանի հետ ժըրալան աշխատում էր ժամանակակից վազմուտներ հրատարակող Միքայէլ Նալբանդեանց:

Նազարեան իւր լրագրական գործունէութեամբ այն արաւ, ինչ որ վերջերքս ցանկանում է անել Կովկասի «Մշակ» թերթը: Հանգուցեալ Նազարեան «Հիւսիսափայլի» գազարումից չորս տարի անցած կամեցաւ Մոսքուայում գարձեալ մտնի լրագրական ասպարէզ «Լապտեր Հայաստանի» անունով մի Հայկազն Օրագիր հրատարակելով, (4) բայց զանազան արգելքներից յետոյ վրայ հասաւ մեծ գիտնականի մահը:

Պարտք ենք համարում մեր ուսուցիչ-բանաս-

տեղծ պ. Նահ-Ազիզի խօսքերն իշել բարե- յիշատակ Նազարեանի յիշատակին...

Անձեռագործ դու մահարձան քեզ կանգնեցրէ Ոչ հողանիւթ. որպէս երկաթ կամ որձաբար. Հոգը գրչով, սուրբ վաստակով ու անձանձիբ Շունչ կենդանի եւ յետ մահուան հանդիսացար... Աշխարհ ծնար եւ աշխարհիս դարձար մշակ Բայց չը տեսար այս աշխարհիս անդորրութիւն. Աշխատաւոր մարդկան բաժին է փշեայ պսակ, Ահ քրտնաջան սկորներէդ խաղաղութիւն.

ԹՆՆՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «Հիւսիսափայլ» եւ մեր ազբիւրները—
 - ա. „... Հիւսիսափայլ, զոր 'ի Մոսքուա ըսկասն հրատարակել 1860 (') քանի մը ասունական եւ ազգասէր երիտասարդք եւ որոց պարագլուխ էին Ս Նազարեան եւ Մ. Նալբանդեան... իրենց ետանդը չափաւորութեան մէջ չը կրցաւ մնալ. ու երբեմըն քաղաքական իշխանութեան անհրաժեշտ մեծարանաց պարտուց մէջ պակսելով, եւ մերթ եւս ազատական գաղափարներով կեղեցականին դէմ հակառակամարտ երեւնալով, առիթ սուին իրենց հանգիտին առջի բերան խափանելուն ու ետքն ալ բոլորովին դադրելուն...“
 - „Պատմ. Հայ. դպրութ.“ ք. էջ 501.
 - բ. „... Իսկ Մոսքուայում լոյս տեսաւ „Հիւսիսափայլ“ անունով ամսագիրը հանգուցեալ Ս. Նազարեանի խմբագրութեամբ եւ շարունակուեց ընդամենը վեց տարի (1858—1862, 1864“)
 - „Արձագանք“, 1882. № 22. Ա. Ե.
 - գ. „Հիւսիսափայլ օրագիր ընդհանուր ազգային լուսաւորութեան եւ դաստիարակութեան, հրատարակեալ 'ի Ստեփաննոսէ Նազարեանց, Մոսքուա 'ի տպարանի Հայկական ձեւարանի եղբարց Լազարեանց... 1858—1861 (')“
 - „Մատենադ. հայկակ.“ էջ 355.
 - դ. Այդ ժամանակներում, պրոֆեսսոր Նազարեանց Մոսքուայում հրատարակում էր „Հիւսիսափայլը“
 - „Հայկակ. մատենադար “ ք. էջ 152.
 - [„... danu in Moskou Professor Nasarianzen den „Hüssisapail“, das „Nordlicht“...“]
 - „Arm. Bibl.“ II. A. L. էջ 152.
 - ե. „... Հիւսիսափայլը մի նոր ուրախութիւն երեւոյթ էր հայ գրականութան մէջ որ

եւ իր եօթը (') տարուայ գործունէութեամբ
բաւական գործ կատարեց՝ ուղղելով հայ
ընթերցողներէ զբաւանական փշաքած ճա-
շակը թէ ինքնուրոյն սեփական եւ թէ
մանաւանդ թարգմանական գրուածքնե-
րով . . . "

„Հայոց մամուլը Ռուսաստ.“ էջ 53.

- գ. „ . . . Եթէ Նազարեանը մի մեծ պակասութիւն ունէր, իրբեւ վերանորոգիչ-գործող, այն էր որ նա վերին աստիճանի շուտ յուսահատուող շուտ ընկճուող եւ հիասթափուող մարդ էր . . . եւ ճշմարիտ ժամանակակիցներէ կողմից նրա դէմ լարած խնդիրները նրան յուսահատեցրին „Հիւսիսափայլը“ սպանեցին: Նազարեանը մինչեւ անգամ հիասթափման մէջ ընկաւ . . . ”
- „Մտքի մշակը“ Թ. Մայում. էջ 37.

- է. „ . . . Բայց հայերին նա (Նազարեանը) յայտնի է որպէս „Հիւսիսափայլի“ խմբագիր եւ հրատարակիչ . . . „Հիւսիսափայլը“ . . . կարելի է ասել յեղափոխութիւն գործեց ուսահատուող նոր գրականութեան մէջ, թէ նոր կենդանի աշխարհաբար լեզուն գրական գործունէութեան մէջ մըտցնելով եւ թէ կրիտիկական հայացք գըցելով մեր ազգային մի քանի հնացած հիմնարկութիւններէ եւ գաղափարներէ վրայ: Դորանով բացադրուում է այն կատաղի թշնամութիւնը որ յարուցեց իր գէմ իր գործունէութեամբ: Հոգեւորականները եւ միշտ յետագէմ „Մեղու-Հայաստանի“ լրագիրը նրա ամենայնհաշտ եւ ամենակատաղի թշնամիներն էին: . . . ”
- „Մշակ“ 1879. № 62. Գ. Ա.

- ը. „ . . . այնպիսի ամսագիրներ կան որ դեռ եւս իրենց գրականական աղայութեան կամ մանկութեան մէջ են, ասոնց չէ տըրուած գիտնալ թէ ամեն բանին պատշաճը ո՞րն է, եւ մարդու անձնական պատիւն ի՞նչ է, կամ թէ որչափ զգուշալի է տպուած գըրքի մէջ ուրիշ պատուոյն դիպելը: ”
- „Մեղու Հայաստանի“ 1859. № 10.

- թ. „Ստեփան Նազարեանի „Հիւսիսափայլը“ վերջնական կերպով դադարում է ստորագրուող չունենալու համար . . . ”
- „Նիւթ. հայոց պատ. համ.“ Ա. էջ 61.

- ժ. „ . . . Բացի այդ նա („Հիւսիսափայլը“) զօրեղ հակաուակորդներ ունեցաւ նաեւ հոգեւորականների կողմից . . . բայց նա („Հիւսիսափայլը“) տարաւ լաղթականը.

աշխարհաբար լեզուն ընդ միշտ գործածական լեզու դարձաւ . . . ”

„Հայոց արդի մատեն“ (ձեռագ.)

- ժա. „1860 (')-ին սկսաւ հրատարակուել Մոսքուայում „Հիւսիսափայլ“ ամսագիրը Ստեփ. Նազարեանցի խմբագրութեամբ Միք. Նայրանդեանի գլխաւոր աշխատակցութեամբ: „Հիւսիսափայլը“ իւր ժամանակի համար նշանաւոր երեւոյթ էր եւ մեծ ազդեցութիւն գործեց ընթերցող հասարակութեան վրայ ծանրակշիւ յօդուածներով, որոնք ընդհանրապէս ազգի բարոյական եւ մտաւորական կրթութեան են վերաբերում . . . ”

„Պատմ. հայոց“ Ս. Պալասան. էջ 445.

- ժբ. „Հիւսիսափայլ 1858 Մոսքուա Ս. Նազարեան“

„Դաս. հայ-ազգ. պատմ.“ էջ 339.

- ժգ. „ . . . Նազարեանցը ինքը հասկացողութիւն չունէր Հայաստանի աշխարհագրութեան եւ տեղագրական վերաբերութեամբ. „Հիւսիսափայլի“ (1858) ?-դ տեսրակում սկսուում է մի յօդուած „Հայաստան“ (երկրագործակ. եւ բնագլխական ներածութիւն) գործ Ս. Նազարեանցի: Այդ յօդուածը չէ վերջացած եւ թէեւ խօստացած է շարունակութիւնը յետագայ տեսրակներում: Բայց այդ խօստմունքը վեց տարուայ ընթացքում չէ կատարուած: Որովհետեւ Նազարեանցի համար իրաւ որ դժուար էր դորա վերջացնելը . . . ”

„Ներսէս V-դ վախճանուում է 1857 թ. եւ ազգը գրադուած է նոր հայրապետի ընտրութեամբ. խնդիրը վերին աստիճանի ծանր է եւ ազգի բարոյական կենաց համար նշանաւոր: Եւ մինչդեռ օտարազգի լրագիրները լցուում են էջմիածնայ Հայրապետական գահին վերաբերեալ յօդուածներով „Հիւսիսափայլը“ խորին լուութիւն է պահում եւ անտարբեր դիրք բռնում: Հայք ողբում են Ներսէսի մահը „Հիւսիսափայլը“ հէնց առաջի քայլերում անհիմն եւ առանց ապացոյցի երկու անգամ կշտամբում է այդ արժանաւոր հայրապետին: 1858 թուին էջմիածնայ մէջ ընդհանուր ազգային ժողով է գումարուում կաթողիկոսական ընտրութեան համար—„Հիւսիսափայլը“ նոյն միջոցում իւր կարդացողներին զբաղեցնում էր Փրանսիական ապստամբութեան պատճառները

քննելով . . . նոյն 1858 թուի օգոստոսին Քէոզոսիայում բացուում է «Սալիպեան» դպրոցը «Հիւսիսափայլը» ոչ լաւ եւ ոչ վատն է ասում . . . Այնուհետեւ եւս «Հիւսիսափայլը» զարմանալի յամառութեամբ անտարբեր է մնում ազգային նշանաւոր անցքերի վերաբերմամբ. օրին. 1860 թ. Հաստատուում է Տաճկաստանի ՀայոցՍահմանադրութիւնը. «Հիւսիսափայլը» եւ ոչ է յիշում դորա անունը: Քիֆլիսի Հայոց մէջ Ներսիսեան դպրոցի պատճառաւ մեծ շարժում կայ. Նազարեանցը լուծիւն է պահում: Ակսուում է Ձէյթունի աստամբուլութիւնը, Մարաշը Հայոց արիւնով է ներկուում. եւրոպական սէրութիւններն անգամ զբաղուած են «անկախ Հայերի» խնդրով, — Նազարեանցը միայն լուծիւն: Քերթեցէք ամբողջ տարուայ «Հիւսիսափայլը». եւ կը տեսնէք որ . . . այդ ամսագիրը ժամանակ չէ գտնում ազգային պատմական անցքերի վերայ անգամ խօսելու. յանկարծ ամբողջ թերթեր է նուիրում Մոսկուայում բնակուող այս ինչ կամ այն ինչ վաճառականի անձնաւորութեան նկարագրութիւնը: Այդ բաւական չէ «ընդհանուր ազգային դաստիարակութեան» օրագիրը իրան պատիւ չը բերող յանդգնութեամբ դիպչում է մի գերզաստանի իգական սեռի անդամներին եւ այդ այնպիսի խօսքերով որ կրկնելը անկարելի է՝

«Եւ ահա Նազարեանցի ամսագիրը մեր ազգային կեանքի վերաբերութեամբ ինքը իւրեան դատապարտել էր մեռելութեան . . . »

«Փորձ» 1879—80. Աղ. Սրիցեանս,
 «Փորձ» ամսագրի 79—80 այս յօդուածը որ կրում է «Ստեփաննոս Նազարեանց եւ նրա գրականական գործունէութիւնը» խորագիրը, գրել է Աղէքսանդր Սրիցեանը ամսագրի 1879, եւ 1880 թուականի տեսարակներէ մէջ: Պ. Սրիցեացի այս գրուածի դէմ պ. Սմբ. Շահագիզեան գրեց իւր «Հրատարակախօս ձայն» գիրքը, որից նոյնպէս մի քանի կտորներ առաջ ենք բերում այստեղ.—

ժգ. «. . . Ինչ եւ կամին, լծող ասեն այդ պարոնները Նազարեանցի մասին, Նազարեանցի յաղթութեան պատկը Հաստատա է, նոր աշխարհաբարի խնդիրը իւր յառաջագէմ գաղափարներով յաւիտեան շողկապ-

ուած է նորա անուան հետ, ազգային մատենագրութիւնը խլելով գիտութեան բռնակալներէց որ կամէին սեղմել ընդհանուրի հոգին եւ թաղել ամենայն քանքար, Նազարեանցը կտակեց մեզ եւ ժամանակի ինքնաշարժ սկիզբը. . . Սթէ Հէն սերունդը այսօր մաքառում է Նազարեանցի դէմ խօսքով, նոր սերունդը եւ խօսքով եւ գործով կանգնած է նորա դրօշակի տակ. . . »
 «Հրատարակախօս ձայն» էջ 162.

- Կրկին օրա դէմ տես «Փորձ» 1881 թ. Ա. Սը.
- 2.) Մրագիրը տպագրուում էր «Հիւսիսափայլի» շապկի դ. երեսում:
- 3.) Պ. Շահ-Ազիզ Նազարեանի գրուածները բաժանում է «լեզուական, դպրոցական եւ դաստիարակչական Հաստարակակեցական» մասերի:
- 4.) Տես «Հանդէս գրական եւ պատմ.» գիրք Ա. էջ 282.

46.



Ը Մ Ս Ե Գ Ի Ի Բ

ՄԱՄՈՒԼ Ի ՄԱՄՈՒԼ 2)

Մոսքով (Ռուսաստան) 1858—1862.
 Հրատարակուում էր՝
 Հրատարակեալ ի Մսերեայ Մագիստրոսէ Մսերեանց եւ ի Զարմայրայ Մսերեանց: Ի տպարանի՝ Լազարեան ձեմարանի Արեւելեան Լեզուացոյ
 Դիրքը՝ (տետր.) 1-1 1/2 տպագր. թերթ. 32-48 էջ 15 X 23 Հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
 Բաժանորդագրինը՝ տարեկան 4. ըուր.

Լեզուսն, ոճը՝ } , ,դիտել արժան է և զայս, որ
 Ուղղագրութ. } ինչպէս և ի Հոռմկայ և ի
 Սիս. նստող կաթողիկոսքն...»

Ծրագրերը՝

«Ազգային եւ ընդհանուր եկեղեցական
 պատմութիւն.

«Ազգային եւ համաշխարհական պատմու-
 թիւն.

«Ազգային գրականութիւն.

«Աշխարհագրութիւն.

«Ռասափարակութիւն.

«Սովորութիւնք, դիպուածք, ճառք, վէպք.

«Քանաստեղծութիւն.

«Հայկազեան տարեգիր.

«Արուեստականք.

«Մանրալուրք.

«Մանրերգ.

«Ծիծաղաշարժ պատասխանիք.

«Ծիծաղեցուցչք.»

Քովանդակութիւն 1859 թիւ ք.

— Հին ՇԱՐԱԳՐԱԾՔ— Թուղթ ներսէսի արքե-
 եպիսկոպոսի Կիլիկեցւոյ Տարսոնի. (շարու.
 եւ վերջ.)-Մ. Մ.

Տաղ ուրախութեան— Մարտ. Ղարահիսար
 — ՆՈՐ ՇԱՐԱԳՐԱԾՔ— Տեառնդ առաջ, Սո-
 վորութիւն ձրագովաճառութեան կամ կը-
 րակավաճառութեան ի Տեառնդառաջի ե-
 րեկոյին. Մ. Մ.

Հանդէս հարսանեաց Արտաշէսի ք. (ոտանա-
 ւոր) Մսեր Մսերեանց.

Ցուց ՚ի գալուստ Սաթինկան (ոտանաւոր) ի
 հայս— Մսեր Մսերեանց.

Չայն առ Միհրդատ (ոտանաւ.) Ս. Մսրըլեանց:
 Խալիպեան ուսումնարան— Զ. Մ.

Նորանոր արուեստական եւ կենցաղօգուտ
 գիւտեր. Զ. Մ.

Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանքն
 — Զ. Մ.

Վանտալական բարբարոսութիւն տասն եւ
 իններորդ դարու մէջ՝ (Թարգմ. Ռուս.)



ուսահայոց մամուլի
 պատմութեան մէջ
 1858 թուականը նը-
 շանաւոր է: Այս թը-
 ուականին միասին ըս-
 կըսուեցին հրատա-
 րակուել երեք պար-
 բերական հրատարակութիւններ Ռուսաստա-
 նում երեքն էլ նշանաւոր— «Մեղու Հայաս-
 տանի», «Հիւսիսափայլ» եւ յետոյ «ձռա-
 քաղ» ամսագիր որ Մսեր եւ Զարմայր՝ հայր
 եւ որդի Մսերեաններ սկսեցին հրատարա-
 կել Մոսկովում 1858 թուականին:

«ձռաքաղի» տարին երկու գրքերը լոյս
 տեսան որպէս կիսամեայ հանդէս գուցէ
 փորձի համար ինչպէս անում են այդ շատե-
 րը բաժանորդագրութիւնից դուրս:

«ձռաքաղ յարձակ եւ չափածոյ բանից
 հին եւ նոր մատենագրաց»-«արդեամբ եւ ծա-
 խիւք պ. Յովսէփայ Աստուածատրեան Իգ-
 միրեանց Ղալարեցւոյ». Երկրորդ տարուանից
 (1859) «ձռաքաղն» սկսեց կանոնաւորապէս
 հրատարակուել որպէս «Քանասիրական» ամ-
 սագիր. առաջին վեցամսեայ երկու տետրակ-
 ները ոչինչ հաշուելով 1859 թուականի
 համարների վերայ գրուած է «առաջին տա-
 րի»: Որպէս նշանաբան «ձռաքաղի» երեսին
 (շապկի վերայ) տպագրուում էր հետեւեալ
 չորս տողը.

Մի զիս համայն ոչ բանախոյզ
 Ընդ չը պիտոյս գըրեսջիւր
 Զի թէպէտ մեծ չունիմ ողկոյզ
 Սակայն մանրիկ տամ քեզ ձիւ:

Իսկ ներսում առաջին երեսի վերայ տը-
 պագրուում էր մի պատկեր, որը ներկա-
 յացնում էր հետեւեալը: Դէմ ու դէմը երե-
 ւում է Արարատ լեաւը եւ Ս. էջմիածնի
 Կաթողիկէն: Մի կողմը նստած ս. Լուսաւո-

րիչ ձեռքում բռնած ս. Աւետարանը եւ միւս ձեռքով ցոյց է տալիս ս. Եջմիածինը. Իսկ հակառակ կողմը նստած է Հայկ նահապետը մի ձեռքում աղեղը իսկ միւս ձեռքով Հայկեան տարեշրջանը բռնած: Այս տեսարանի վերայից տարածուող ճառագայթների մէջ պարզ կարգացուում է «ձ ա ք ա ղ» ամսագրի անունը:

«ձռաքաղը» խիստ հակառակ էր իւր ուղղութեամբ իւր հայրենակից եւ հասակակից «Հիւսիսափայլի» հետ. վերջինս աշխատում էր աշխարհաբար լեզուի տարածմանը, իսկ «ձռաքաղը» տպագրուում էր գրաբար լեզուով: Հայր Մսերեան հակառակ չէր աշխարհաբարին նա իւր հանդիսի մէջ մերթ ընդ մերթ տեղաւորում էր աշխարհաբար յոգուածները:

«Հայկազեան տարեգիր» վերնագրի տակ «ձռաքաղի» մէջ տպագրուում էր հետաքրքրութեան արժանի շատ նիւթեր, ոտանաւորներ, տաղեր, եւ այլ լուրջ յօդուածներ:

«ձռաքաղը» աշխատակիցներ շատ չուներ, սորա նիւթերը պատրաստում, թարգմանում կամ գրում էին խմբագիրները. ժամանակ առ ժամանակ «ձռաքաղի» էջերում երեւում էին նկարներ ու պատկերներ:

Ժամանակի սովորութեան համեմատ Մսերեան խմբագիրները «ձռաքաղի» տարուայ վերջին համարներում տպագրում էին «Յուցակ բաժանորդաց ձռաքաղի» որից երեւում է որ բ. ասրին բաժանորդների թիւն հասնում էր 372-ի, որոնք ստանում էին 405 օրին.

«ձռաքաղը» 1858-ին դադարեց, գոյութիւնը պահելով ընդամենը չորս եւ կէս տարի: Առաջին տարին տուեց երկու տետրակ. բ. ասրին (1850.) տասներկու տետրակ. գ. ասրին (60—61) հրատարակուում էր ամիսն երկու թերթից: 1862 թուականի յուլիսի տետրակի մէջ մի «ազգ» տպագրուեց որով խմբագիրներն իմաց էին տալիս իւրեանց ընթացողներին թէ «ձռաքաղը» ա ժամանակ դադարուում է, գրաքննիչի հեռաւո-

րութիւնից ծագած դժուարութիւնների պատճառով. . .

ԺՆՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «ձռաքաղ» եւ մեր աղբիւրները:—
 - ա. Ուստի այն երկու տետրակքն տպագրուեցան միայն իբրեւ առ ի փորձ տեսանելոյ համար թէ կայ արդեօք, յոյս մեր նպատակին հասնելոյ թէ ոչ.
 - „Մեղու Հայաստանի“ 1858. № 34.
 - բ. „ձռաքաղ“.—1859-ին սկսու հրատարակել ձռաքաղ բանասիրական—կրօնական ամսաթերթը Մոսքուայում Մսեր մագիստրոս Մսերեանի խմբագրութեամբ.
 - „Պատմ. հայ.“ Ս. Պալաս. էջ 444.
 - գ. „ձռաքաղ. 1859 Մսերեան (“) Մոսքուա“
 - „Դաս. հայ-ազգ. պատմ“ բ. էջ. 338.
 - դ. „ նպատակն էր հին. . . յիշատակարանները ի յոյս ընծայել, լեզուն գրաբար էր եւ այդ պատճառով հակառակորդ „Հիւսիսափայլի“.
 - „Հայոց արդի մատենագ.“ (ձեռագ.)
 - ե. „Մոսքուայի արեւելեան լեզուազ ճեմարանի տպարանէն „ձռաքաղ ամսագիր բանասիրական“ կոչուած թերթ մը ընծայեցաւ ազգին (1859) . . . վասն զի ընդհանրապէս դեռ չը հրատարակուած նախնեաց մատենագրութիւններ մասնէն ու հետաքննական գրուածոց հրատարակութեան սահմանած էր, ընդհանրապէս զեղեցիկ ընտրութեամբ եւ մաքուր տպագրութեամբ.
 - „Պատմ. հայ. դպր.“ բ. էջ 494.
 - զ. „ 1859 թուին Մոսքուայում յոյս տեսաւ հանգուցեալ Մ. Մսերեանի ձեռքով „ձռաքաղ“ ամսագիրը.
 - „Արձագանք“ 1882. թ. № 22. Ա. եր.
 - է. „ ունի ազդային մատենագիտութեան համար իւր յատուկ նշանակութիւնը: Քանի մի ինքնագիր հետազօտութիւնք որոնք միայն ներքին աղբիւրներէ քաղուած են չեն այնչափ քննական ու հիմնական: Իսկ ժամանակակից եւ հասարակութեան վերաբերեալ յօդուածք շատ ցանցառ են.
 - „Հանգ. Ամսօր.“ 1890. № 11.
 - ը. „ ձռաքաղ յարձակ եւ չափածոյ բանից հին եւ նոր մատենագրաց. Մոսք. 1858

ձուքաղ ամսագիր բանասիրական հրատարակեալ... հատոր ա.—1859.

„ բ.—1860—61.

„ գ.—1861—62.

„Մատեն. հայկ.“ Զարբ. էջ 393.

Թ. „... եւ 1859-ին կրօնական բանասիրական ամսագիր հ. Մսեր Մսերեանի (խրմբագրութեամբ)... իսկ մէկը միայն „ձուքաղ“ գրարար... ինչ որ վերաբերում է հայր Մսերեանին կարծեմ աւելորդ է ասել որ նորա գրականական ճաշակը զարգացել էր մեր հին գրականութեան ազդեցութեան տակ... արժանապատիւ ծերունին թէեւ իւր գործունէութեան վերջում տեսնելով եւ համոզուելով որ իւր ամսագիրը ընթերցողներ չունէ, որ անկարելի է ժողովրդի հետ անհասկանալի լեզուով գրած մի քանի յօդուածներ էլ մտնեն իւր հրատարակութեան մէջ...“

„Հայոց մամուլը Ռուսաստան.“ էջ 36.

Ժ. „1859-ին հայր Մսեր Մսերեանը սկսեց հրատարակել „ձուքաղ“ ամսագիրը գրարար լեզուով...“

„Մտքի մշակը“ Թ. Մալում, էջ 29.

Ժա. „... եւ նոյն տեղ „ձուքաղ“ նոյնպէս ամսագիրը (պատրաստում է հրատարակել) Մսեր մագիստրոս Մսերեանը... բայց ահա 1864 թ. վերջն է, „ձուքաղ“ վաղուց է որ չը կայ...“

„Նիւթեր հայոց պատմ.“ Ա. էջ. 55.

2.) „ձուքաղ“ վերջին երկու տարում, (1860-61, 1861-62.) վերնագրի տակ գրուում էր „ամսագիր կրօնական եւ բանասիրական գիտելեաց“.

47.

Ե Ի Ր Ո Պ Ա^{1.)}

ՕՐԱԳԻՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ

(Երկշաբաթաթերթ)

Վ Ի Է Ն Ն Ա (Աւստրիա) 1858—1863

Հ ր ա տ ա ր ա կ ու ու մ է ր

Ա շ խ ա տ ա ս ի ր ե ա լ 'ի Մխիթարեան Միւրանից:

ի տ պ ա ր ա ն ի Մխիթարեանց.

Դ ի ր ք ր (տետր.) 1 տպագր. թերթ. 32

էջ երկսիւնեան. 19X28 հ.-մետր.

Թ ու ղ թ ը եւ տ ի պ ը' մաքուր

Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն ը' տարեկան 5 ֆիոր.

Լ ե զ ու ն ո ճ ը' (Ինչպէս որ էր „Ներուպ“

Ու ղ ղ ա գ ը ու թ. } քաղաքական լրագիր. տես լրագիր Թիւ 20)

Ծ ր ա գ ի ր ը'

«Վիպասանական ուսումնական եւ զբօսեցուցիչ» յօդուածներ... .

«Ներուպան» թէեւ «ընտանեկան» անունն էր կրում, բայց էր իսկապէս «պատմական-կրօնական» Ի'նչ ընդանէին բնաւորութիւն ունին օրինակի համար այս յօդուածները, որ տեղաւորուած են «Ներուպայի» մէջ.

«Մանաղկերտի պաշարումը» (1858. № 1,)

«Պատմութ. վաճառական.» (1858. № 6-7)

«Հայոց կրօնը քրիստ. առաջ.» (1858 № 19)



Իէննայի Մխիթարեան

միաբանութեան

ձեռքով հրատա-

րակուող «Ներու-

պա» քաղաքա-

կան եւ ուսում-

նական շաբաթա-

թերթը, ինչպէս

իւր տեղում գը-

րել ենք, 1857 թուականի վերջերին դա-

դարեց, որովհետեւ այս միջոցին Կոստան-

դնուպոլիս եւ այլուր քաղաքական ազգային

լրագիրք աճեցան որոնք շուտով կը ծանու-

յանէին տեղական օտարօտի թերթերու հե-

ռազրաց տուած լուրերը եւ «Ներուպայի» տը-

ուած շաբաթական լրերն արդէն շատ կը

հննային մինչեւ որ արեւելք կը հասնէին»

Դորա համար էլ բաժանորդներին գոհացում

տալու Համար, քաղաքական «Ներուպան» դարձաւ «Օրագիր Ղնտանեկան»:

1858 թուականից «Ներուպա» ընտանեկան օրագիրն սկսեց կանոնաւորապէս հրատարակուել երկու շաբաթը մի անգամ, որպէս կիսամսեայ Հանդէս: Չորս տարին լրացընելուց յետոյ Հինգերորդ տարին (1863) գեռ չը լրացրած դադարուեց մեզ անյայտ պատճառով:

Ի Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ր Ի Ն Ն Ե Ր .

1.) Հարկաւոր է ասել որ մեր բոլոր աղբիւրները «Ներուպա» քաղաքականը եւ «Ներուպա» ընտանեկանը միասին են գրել. չը նայելով որ բովանդակութիւնը կամ ծրագիրը, նպատակը փոփոխուելով լրագիրն էլ կը փոխուի թէկուզ նորա անունը, քաղաքը, խմբագրութիւնը, տպարանը, դիրքը միեւնոյն մնան:

Մեր աղբիւրները—

ա. Թէ Ներուպա իւր այս ընթացքին որչափ կրցաւ համապատասխանել իւր պարտուցը կմնանք միայն թողուլ որ խօսին այն ամենքն որ «Ներուպան» տեսած են եւ ընթերցած. . . .

„Հանդ. Ամսօրեայ“ 1888. էջ 218.

բ. Ի 1858 ուրիշ ձեւ մը տալ իրենց օրագրին շաբթէ շաբաթ (՝) բանասիրական թերթ. (՝) մը հրատարակելով ու առջի անուան վրայ աւելացնելով «Ղնտանեկան լրագիր» Վիպասանական գրուածոց ազգին մէջ արթնցած նոր սէրը ուզեցին գոհ ընել ընտրել եւ հաճոյական վէպերով ու օկտակար եւ սթափեցուցիչ նորանոր տեղեկութեամբ. . . .

„Պատմ. Հայ. դպր.“ ք. էջ 479.

գ. 1858 թուին վիէննացիք «Ներուպա քաղաքական լրագիրը շինեցին «Ներուպա Ղնտանեկան լրագիր» որ գրադուեցաւ միմիայն վիպասանական գրուածներով. սա եւս 1862 դադարեց մեզ անյայտ պատճառով. . . .

„Արձագանք“ 1882. № 21 Ա. Եր.

դ. Ներուպա օրագիր ընտանեկան աշխատասիրեալ ՚ի Մխիթարեան Միաբանից, Վիէննա ՚ի տպ. Մխիթարեանց 1858—63

Մատեն. Հայկ.՝ Ջարք. էջ 187.
Ե. Ներուպա լրագիրը ընտանեկան (կան) 1858 Վիէննա.

„Դաս. Հայ-ազգ. պատմ.“ ք. էջ 338.
զ. Իսկ «Ներուպա» օրագրից եւ ոչ մի համար խաւրել կարողացանք, վասն զի «Ներուպա» քանի մը օրինակ ունինք ամբողջական եւ կազմած. իսկ առանձին թուեր ամենեւին չեն մնացած որ խաւրել կարողանանք. . . .
„Նամակ մեզ ուղղած. (ձեռագիր.)

48.

ՏՈՄԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ^{1.)}

(Տարեգիր)

Վիէննա (Աւստրիա) 1858—1862.

Հրատարակուում էր՝
՚ի տպարանի Մխիթարեանց.



Ներուպայում Վիէննայի Մխիթարեան Հայրերը տուել են Հայ գրականութեան 4 պարբերական հրատարակութիւն որոնց երրորդ տեղն է բռնում «Տոմար Ղնտանեկան» միամեայ հրատարակութիւնը, ամեն տարի մի օրինակ լոյս ընծայելով:

Մեր ձեռքում չունենալով «Ղնտանեկան Տոմարից», չենք կարող մանրամասնութիւններ առաջ բերել: Այսքանը միայն մեզ քաջ յայտնի է որ «Տոմար-Ղնտանեկանը» չորս տարի է միայն հրատարակուել չորս գիրք տալով, 1862-ին այլ եւս չէր հրատարակուում:

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ր Ի Ն Ն Ե Ր .

1.) Զբ շիտթել տիկին Արուհի Արեգեանի խմբագրութեամբ 1874 թուականին Տփլիսում հրատարակուած «Անտանեկան Տոմար» հանդիսի հետ:

(Տես՝ «Մրագիր հայ ազգագրութեան» Գրիգոր Խալաթեան. յառաջաբ. էջ Ժէ.)

49.

Ա Ր Ե Լ Մ Ո Ւ Տ Ք ¹⁾

Օ Ր Ա Գ Ի Ր

Ր Ե Ն Ո Ւ Թ Ր Ո Կ Ո Ն Ե Ւ Զ Ե Լ Ո Զ Ո Կ Ո Ն

(Կիսամսեայ)

Փ ա Ր Ի Գ (Փրանսիա) 1859—1859.

Հրատարակուող էր՝

Խմբագիր՝ Լ. Ս. Ոսկան.

Արամեան տպարան.



արիզում մի ժամանակ հրատարակուող «Արեւելք» կիսամսեայ հանդիսի խմբագիր պ. Ոսկանեան իւր լրագրի դադարումից յետոյ, 1859 թուականի յունուարից սկսեց նորից

մի ուրիշ հանդիսի հրատարակութիւն, չբխրատուելով մի անգամուայ անյաջող փորձից: Այս անգամ նա իւր հրատարակութեան անունը «Արեւմուտք» դրեց բոլորովին հակառակ «Արեւելքի» անուննը: Բայց բարեբախտաբար թէ գծբախտաբար պէտք է ասել որ «Արեւմուտքն» էլ հետեւեց իւր հանգուցեալ եղբոր օրինակին: Մի քանի ամիս միայն կարողացաւ ապրել, ու շուտով մահացաւ իւր եղբոր հիւանդութիւնից:

1.) «Արեւմուտքի» մասին մեր աղբիւրները —

ա. «Արեւմուտք օրագիր բանասիրական եւ քաղաքական խմբագիր Լ. Ս. Ոսկան. Փարիզ. Արամեան տպարան. 1857 (*)»
«Մատեն. հայկակ.» Զարբ. էջ 65.

բ. «Փարիզի «Արեւմուտք» օրագիրը հրատարակուում էր 1859 թ. յունուարից Ստեփան Ոսկանեանի ձեռքով...»
«Հիւսիսափայլ» 1864 թիւ. 3.

գ. «Արեւմուտք 1856 (*) Փարիզ Ս. Ոսկան.»
«Դաս. հայ-ազգ. պատմ.» էջ 338.

դ. Տես լրագիր թիւ 39. ծանօթ. 1. բ.-գ. բաժինները.

Մեր միւս աղբիւրները ոչ մի ծպտուն չեն հանում «Արեւմուտք» Փարիզի կիսամսեայ հրատարակութեան մասին: Եւ աններելի չէ, քանի որ «Արեւմուտք» եւ «Արեւելք» եղբայրները շատ աննշան ու այժմ էլ հետաքրքրութիւնից զուրս մնացած հրատարակութիւններ են:



Մատենիս ութներորդ (ը.) շրջանը մեր մատուցի պատմութեան ոսկեդարն է: Հայ լրագրութեան գործը 1860—1870-ին կատարեալ բարգաւաճման գրութեան մէջ մտաւ եւ պարբերական հրատարակութեան սահմանը մօտեցաւ իւր գազաթնակիտին: «Սուսկերի պէս են բուսնում» այս թուականներին հայոց լրագրները՝ ասում է պ. Արտիւր Լայսդ: Տաճկաստանի հայոց Սահմանադրութեան անունով վառուած ո՞ր սաճկահայ երիտասարդն ասես որ այս շրջանում լրագիր չը հրատարակեց: Օսմանեան մայրաքաղաքում այս տասնամեակում հայ լրագիրների թիւը չէր ինչ է:

Այսչափ բազմութեան մէջ լրագրական նշանաւոր գործողներ այս շրջանում երեւում են միայն՝ Գար. Սրուանձտեան, Խորէն վարդապետ Ստեփանէ, Մարկոս Աղաբէկեան, Համբարձում Ալաճաճեան, Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքի հայ միաբանութիւն:

50.

ԿՈՌԻՆԿ^{1.)}

ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԻ²⁾

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱՉԳՈՐԻՆ ՌՐՈՅԱԿԱՆ ԼՈՍՏՆՈՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ³⁾

Կռու՛նկ, ուստի կուգաս Հայնիկդ ի հոգիս
Կռու՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՛ս

Տփիթս (Ռուսաստան) 1860—1864.

Հրատարակուում էր՝ ամօր սկիզբներին Խմբագիր՝ Մարկոս Աղաբէկեան.

Հրատարակիչ՝ Հ. Էնֆիաճեանց.

Ի հայտպարանի Գարբիէլի Մելքոնեանց եւ Համբարձումայ Էնֆիաճեանց.

Գիրքը (տետր.) տպագր. 5 թերթ 8-ածալ 40 էջ 16×25 հ.մետր.

Թուղթը եւ տիպը՝ միջակ.

Բաժանորդագիրն ը՛տարեկան 8 ըուբ.

Լեզուն, ոճը՝ } «...Ո՛ր են Հայոց աշխարհ, ուր են դպրուստյց վանքերդ, Ուղղագրութ. } ուսումնական մատնագ...»

Ծրագիրը՝

«... Ազգային նորանոր հեղինակութիւններ, լոյս չը տեսած ազգային յիշատակարաններ, աղբիւրներ, հատուկ գրուածքներ, պատմութիւններ, թատերգութիւններ, եւ բացի սորանից կեանքի եւ բարքի զարգացման համար ժողովրդային փիլիսոփայական եւ բարոյական գրուածքներ եւ այլն...»

Բովանդակութիւն 1863 թ. № 12.

—Գիթօ. պատմութ. քաղաքակրթութեան որ լեւրոպիա. չորեքտասաներորդ եւ վերջին դաս.—Թարգմ. Մարկոս Աղաբէկեան:

—Աղբիւր ազգային արդեան պատմութեան, պատմութիւն կաթողիկոսացն Գանիէլի եւ Գաւթի—ի Մանուէլ վարդապետէ Ալթունեանց Կիւմիշխանեցւոյ:

—Ճանապարհորդութիւն Հայաստանումը Գ. Ե-ցի յիշատակարանից հանած:

—Հայաստանեայց եկեղեցւոյ վիճակը երկ-

- տասաներորդ դարումը—Միսաք Արամ-եանց:
- 1863-ի բաժանորդների թիւն ու անունները:
- Ցանկ նիւթերի 1863 թուի Կունկան.
- Ցայտարարութիւն «Կուռնկ» Հայոց Աշխարհի» ամսագրոյն:
- Նոր օրացոյց 1864 թուականի:



առաջին Հայ ամսագիրն է Կովկասում «Կուռնկ» Հայոց Աշխարհի» ամսագիրը որ 1860 թուականի սկզբից սկսեց հրատարակուել Տփլիսում պ. Մարկոս Աղաբէկեանի խմբագրութեամբ. եւ պ. Համբարձում Էնֆիաճեանի հրատարակութեամբ:

«Կուռնկ» ամսագիրը նոր ժամանակակից Հայ Հանդէսների մէջ, առաջնակարգ տեղը կարող է բռնել իւր բարձր դիրքով, աւելի եւս իւր առատ ու ընտիր նիւթերով: Այնպիսի Հանդէսներ կան որ իսկապէս իւրեանց գոյութեամբ աւելորդ են, քանի որ իւրեանց լինելով մի օգուտ չեն տալիս, չը լինելով էլ մի վնաս. իսկ «Կուռնկի» պէս մի լուրջ, խելացի ամսագրի կարիքը իւր ժամանակին ամենայանհրաժեշտ էր: Այժմ էլ եթէ թերթելու լինես «Կուռնկի» տարակները կարող ես մի թիթարուել: Ինչ գեղեցիկ նիւթեր ասես որ չը կան այնտեղ. վիպասանական համեղ գրուածներ, նամականի... «Կուռնկի» «խապրիկները» զարդարում են պ. Աղաբէկեանի Հանդիսի էջերը: Կան հրատարակութիւններ որ կարելի է ասել բոլորովին չեն համապատասխանում իւրեանց անուններին:

Ահա «Կուռնկն» ինքը բացադրում է թէ ինչու է «Կուռնկ» իւր անունը:

«Մի թէ չկար ինչ համար մի այլ շքեղաշուք, պերճապատկ եւ մեծահամբաւ անուանակոչութիւն—գրում է «Կուռնկի» յարգոյ խմբագիրը—Մի թէ չէի կարող անուանել ինչ նոյեան-Տապան, Արձազանք-Հայրենեաց, Հառաչանք-Հայաստանի, եւ կամ Եփրատ-Կրախտաբուխ... Ես Հայոց կրուռնկն եմ. հայի կենդանի պատկերն եմ. ես գրախտի հինօրեայ թուչունն եմ շատ չար ու բարի տեսած, շատ բարեբաստիկ ու չարաբաստիկ տեսարանների եւ դէպքերի վկայ ու հանգիստադիր... Այս է իմ պանտրիստութեան եւ շրջանառութեան գլխաւոր խորհուրդն եւ ուրիշ ինչ կարիմ անուանել ինչ, եթէ ոչ Կուռնկ ուրեմն կուռնկ եմ ես այն ԿՈՒՐՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ» (4)

Հաստատ որ պէտք է «Կուռնկ» լինէր Հայոց աշխարհի համար պ. Աղաբէկեանի ամսագիրը, պէտք է մեղմացնէր Հայ ժողովրդի վշտերն ու տանջանքները, փարատէր նորատիրութիւնը, իւր բարի «խապրիկներով» իւր գուրեկան կուռնկներով: Նա եկել էր որդալու ազգի դրութիւնը, եւ որ պ. խրմբագիրը «Կուռնկի» առաջին համարում Մ. Խորենացու «ողբ»ից մի կտոր նշանաբան ընտրելով, մի շատ գեղեցիկ յօդուած դրեց՝ որն ամբողջովին չենք կարող, այլ մի քանի կտորներ փափաքում ենք առաջ բերել—

«Ողբամ գրեց Հայոց աշխարհ
«Ողբամ գրեց հանուրց հիւսիսականաց վեհագոյն
Խորենացի. գիրք. Գ. գլ. կր.

«... Ո՞ր ազգումը կայ այն քրիստոնէութեան սէրը, ինչպէս մեր Հայոց աշխարհին որդուց մէջ, որ իր կեանքը իր սերունդը զօհէ իրա եկեղեցւոյն ազատութեան համար...»

«... Ո՞ր ժողովրդումը տեսանք այն նահատակութիւնը, ինչպէս մեր աշխարհին որդուց մէջ, որ հարիւրաւոր տարիներ, հուր, սուր, վիշտ, ցաւ, ջարդ, մահ կրէ իր եկեղեցւոյն վարդապետութիւնը, կանոններն ու ծէսերը, պահպանելու համար...»

«... Ո՞ր անտերուկն է և Հայրենազուրկ ցեղը տեսանք որ իր պանդխտութեան և անպաշտպանութեան մէջ, եկեղեցիներ կանգնէ, Հիւանդանոցներ հաստատէ, ինչպէս մեր հայոց աշխարհին որդիքը...»

«... Ո՞ր աշխարհումը տեսանք այն հայրենական գուլթը մեր աշխարհին որդոցը նման, որ անսահման է իր զաւակացը վրայ...»

«... Ո՞ր նահանգումը տեսանք այն եղբայրական սէրը, մտերմութիւնը և յարգանքը ինչպէս մեր հայոց աշխարհին որդոց նման: Որ քաղաքումը, ո՞ր գիւղումը տեսանք այն հարան ու փեսի առաքինի և հոգեկան ջերմ սէրը որ իրարու վրայ ունին հաւատարմաբար մինչեւ 'ի խորին ծերութիւն' մեր հայոց աշխարհին որդիքը...»

«... Ո՞ւր են Հայոց աշխարհ. ո՞ւր են տառաստեղծ և զրագէտ հայրապետներդ, քաջաժիր թարգմանիչ եպիսկոպոսունքդ, քաջախօս և ճշտագիր պատմաբան վարդապետներդ, աստուածաբան, իմաստասէր երէցներդ, ճարտարախօս և քերթողաբան վանականներդ. խրատատու, քարոզիչ քահանաներդ, սաղմոսերգու սարկաւազներդ և տաղերգու դպիրներդ:»

«Ոչ, չ'կան առաջնորդներ՝ դրագիտութիւն յառաջացնելու և վարդապետներ ուսուցանելու, թարգմանիչներ՝ գրքերդ թարգմանելու և լեզուդ ծաղկեցնելու, պատմաբաններ՝ որդուդ արիութիւններն անմահացնելու, երէցներ՝ օրէնքներ հաստատելու, եկեղեցուդ վարդապետութիւնը մեկնաբանելու, վանականներ՝ աղօթքներ, շարականներ քերթողաբանելու, ժողովրդեանդ քարոզելու, և քահանաներ՝ հաւատացեալները մխիթարելու, սարկաւազներ՝ եկեղեցեացը մէջ սպասաւորելու և դպիրներ՝ երգելու:»

«Եպիսկոպոսունքդ իմաստասիրութիւնից, — վարդապետներդ ուսումնականութիւնից զրկուելով, որդիքդ հոգեւորական և Աստուածային սնունդ չունեցան մոռացան քարոզիչ վարդապետաց իմաստուն խրատները,

պիտանացու հրահանգները, և խրատական յորդորանքները և անմխիթար, յուսահատուած, մոլոր ոչխարի նման ասա և անդ ցիր ու ցան եղան. տաճարներդ թափուր մնալով պաշտօնեաներից, սպասաւորներից ամայի աւերակներ դառան...» 5)

Այսպիսի հոգեբուխ առաջնորդող յոգուածներով լի էին «Կուռնկի» էջերը, աշխատակցում էին ժամանակակից վառվառու գրիչներ, ինչպէս են՝ Մկրտիչ վարդապետ Խրիմեան, Գարեգին Մուրատեան, (Մեղքեպիսկ.) Գարեգին վ. Սրուանձեան, Աբէլարքեպիսկ. Մխիթարեանց, Կարապ. վարդ. Շահնազարեան. Պերճ Պուօշեան, Յով. Ամերիկեան, Յակ. Կարինեանց, Յով. Քուչուքէկեան, Մատթ. Մամուրեան. Աբ. Փափազեան, Հ. Էնֆիաճեանց, Գ. Ռոստոմեանց, Գ. Տէր-Աղէքսանդրեանց, Գամառ-Քաթիպա, Մ. Տէր-Ազարեանց. Մխաբ Արամեանց, Ս. Կիլզառեանց, Ստ. Պալասանեան, Եղիշէ Մեծատունեանց, Գալուստ Երմազանեանց, Ս. Արծրունի, Նատալիա Միրզոյեանց և այլք:

«Կուռնկ» իւր ժամանակի սովորութեան համաձայն ամեն տարի գեկտեմբերի տետրակում ապագրում էր իւր բաժանորդների ցուցակը:

Առանձին գրքով «Կուռնկի» նիւթերից ապագրուել է պ. Պուօշեանի «Սօս և Կարգիթեր» ազգային վիպասանութիւնը:

«Կուռնկ» թէեւ կարճ, բայց հրատարակուել է կանոնաւոր կերպով առանց դադարելու և խախտուելու: Յկսիով 1860 թը ուսականից տեւել է 1864 թ. այսինքն 63-ի վերջը: Չորս տարի հրատարակուելուց յետոյ «Կուռնկը» դադարուեց խմբագրի ընտանեկան արգելքների պատճառով՝ որ զնալու էր Կոստանդնուպոլիս: 6)

Թ Ա Ն Յ Ք Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր ազգիւրները և «Կուռնկ» ամսագիրը՝ ա. նմանօրինակ վիճակի մը հանդիպե-

ցաւ նաեւ ,Վոռնկ Հայոց Աշխարհի՝ կոչուած ամսագիրն, որ 'ի 1863 Մ. Աղաբէկեանի ջանքով կը հրատարակուէր 'ի Տիֆլիս: Ազգային նոր պատմութեան վերաբերեալ՝ հետազօտ ու ջանասէր մտքով ու ձեռքով հաւաքուած յիշատակարաններ ու կարիւր տեղեկութիւններ այդ հանդիսին զարդն ու գլխաւոր արժէքը կըրնային սեպուիլ. ասանկ ալ ազգային գաստիարակութեան եւ կրթութեան համար՝ եւրոպական գրութիւններ եւ խորհրդագածութիւնք ուսումնական գրիչներէ առաջարկուած, թէպէտ եւ ոչ միշտ կարեւոր գաղափարներ եւ ընտրութեամբ . . .”

„Պատմ. հայ. դպրութ.“ ք. էջ 502.

բ . . . Սթէ մէկը վերցնէ ,Վոռնկի՝ համարները, որ տարուանը կուզէ լինի միեւնոյն է եւ ուշադրութեամբ աչքէ անցնէ, կը տեսնէ որ բոլոր գրուածքները վերաբերում են հայերին եւ համարեա թէ ոչինչ չկայ(՝) օտարների մասին, որ անկասկած կարող էր կրթողական նշանակութիւն ունենալ. . .”

„Հայոց մամուլը Ռուս.“ Յարոյ էջ 37.

գ . . . Բայց ամենից նշանաւոր եւ ուշադրութեան արժանի հրատարակութիւնը որ սկսուեցաւ 1860 թուին, դա ,Վոռնկի՝ Հայոց Աշխարհի՝ ամսագիրն է որ խմբագրում էր Տիֆլիսում պ. Մարկոս Աղաբէկեանը եւ շարունակուեց չորս տարի, ազգիս պատմութեան եւ լեզուի վերաբերութեամբ բաւականին առատ նիւթեր բովանդակելով իւր մէջ. . .”

„Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.

դ . ,Վոռնկ Հայոց Աշխարհին՝ ամսագիր բունասիրական նկարագրական եւ վիճակագրական, նուիրեալ արդի եւ նախնի Հայաստանեայց. խմբագրութեամբ Մ. Աղաբէկեանին 'ի տպարանի Հ. Էնֆիաճեանց եւ ընկ. 1860, 61, 62, 63.”

„Մատեն հայկակ.“ Զարբ. էջ 310.

ե . . . Մարկոս Աղաբէկեանի հիմնած ,Վոռնկ Հայոց Աշխարհի՝ ամսագիրը պէտք է ասել որ համեմատաբար աւելի բարձր դիրք ունէր: Այդ ամսագիրը իւր գոյութեան ընթացքում փորձեց ուսումնասիրել, արծարծել ժամանակակից մի երկու հարցեր եւ յատկապէս դարոցական կազմակերպութեան եւ եկեղեցական հարցերը . . . ,Վոռնկը՝ համեմատելով վերին աստի-

ճանի պահպանողական է:”

„Մտքի մշակը“ Խ. Մայումեան. էջ 33.
 վ . . . այստեղ ունէինք մի պատուական ամսագիր ,Վոռնկ Հայոց Աշխարհի՝. որ չը նայելով իւր բովանդակութեան արժանաւորութեանը, հազիւ չորս տարի գիմացաւ թէ ստորագրուողների սակաւութեան ու ընտանեկան դժբախտութեան պատճառով. նրա խմբագիր Մարկոս Աղաբէկեանը 1864 թուի սկզբին թողեց ամսագիրը եւ գնաց Կ. Պոլիս. . .”

Նիւթեր հայոց պատմ.՝ Ա. էջ 61.

է . . . ատենէ մ 'ի վէր կը լսէինք եւ ահա կը տեսնենք այսօր, այն սիրուն ,Վոռնկը՝ եւ թէ մեր մօրը, քաղցր Հայաստանի յիշատակները հնչեցնելու եւ թէ քաղաքականութեան տարբերութեամբ մեզի քիչ ծանօթ եղած Ռուսիոյ հայերուն վիճակն ու յառաջադիմութիւնը երգելու կուզայ. մեր սիրուն անոնց հետ, եւ ամենուս սիրտ ի միասին մեր մօրը սրտին հետ կապելու յաշխատութիւնը յանձն կառնէ. միտքերնիս կուզէ առնել . . . սլացնել Հայաստանի այն վայրերը որ Ազգին նախնի փառաց եւ ճոխութեանց հանդիսարան էին եղած: . . . Հայոց աշխարհին Կրուռնկը պիտի ուսուցանէ մեզի թէ ազդի մը անկորչելի փառքը անոր գիտութեանցըն ու բարոյականին վրայ կը կայանայ եւ պիտի յաջորդէ զմեզ իւր ազգու խրատներովն. . .”

„Մեղու՝ տասնօրեայ Կ. Պոլ. 1860 № 94

ը . . . Այս կողմից աւելի համեստ բայց եւ աւելի կենդանի թերթ(՝) էր ,Վոռնկ Հայոց Աշխարհի՝ ամսագիրը որ 1863 (՝)-ին սկսաւ հրատարակուել Քիֆլիսում, Մարկոս Աղաբէկեանի խմբագրութեամբ. . .”

„Պատմ. Հայոց՝ Ս. Պալասան. էջ 445.

թ . . . Այս թերթը (՝) ձգտում էր իսկապէս շարունակել ,Հիւսիսափայլի՝ (՝) պսակը, սա կարողանում է իւր շուրջն հաւաքել Տիֆլիսի յայտնի գործիչները, Պրնոշեանց . . . Այս թերթը (՝) տեսում է մի քանի տարի. . .”

„Հայոց արդի մատենագր.“ (ձեռագիր)

ժ . Քիֆլիսում ,Վոռնկ Հայոց Աշխարհի՝

„Հայկ. մատեն.“ ք. Ա. Լայսդ. էջ 153.

[, . . . in Tiflis der . . . ,Krunk Hajos Aschhari“

„Arm. Bibl.“ II, A. L. էջ 153.

- Սղիշէ վարդ. Դուբեան, Մինաս Գափամաճեան, Խերեանց գրքերում, Կոռնելի՛ անունը մոռացել են:
- 2.) Նախ էր, Կոռնելի Հայոց Աշխարհէն՛
- 3.) Նախ գրուում էր, . . . ամսագիր բարոյական բանասիրական նկարագրական եւ վիճակագրական: Նուիրեալ նախնի եւ արդի Հայաստանեայց՛:
- 4.) Տես, Կոռնելի՛ 1860 թ. էջ 72—76.
- 5.) Տես, Կոռնելի՛ 1860 թ. էջ 1— 6.
- 6.) Տես ծանօթութիւն 1.) բաժին 4.

51.



Փ Ր Ա Գ Ի Բ

Հ Ե Լ Ը Գ Ե Ը Կ Ը Ն Ի Բ Ը Կ Ը Ն Ը Կ Ը Ն Ե Ի Ը Գ Ի Ե Ը Ի Ն 2.)

Կոստանդնուպոլի(Տաճ.)1860-1894-եւս Հրատարակուում է՛ շաբաթ օրերը. Տնօրէն եւ Տէր՛ Հ. Ս. Ալաճաճեան. Տպագրութիւն Կարապետ Պիպերեան. Դիրքը (Թերթ) միաժալ 4 էջ 5 սիւնեան 36X52 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՛ մաքուր.

Բաժանորդագիւնը՛ տարեկան երկու եւ կէս արծաթ մէճիտ. (Ռուսաստ. 4 ըուբ. կամ 10 Ֆր.)

Լեզուէն, ոճը՛ } . . . Պարտադր կը համարիմք զմեզ այս առթիւ հետ Ուղղագրութ. } ինդրի մեր գաւառարնակ.

Հասցէն՛—Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան Կ. Պոլիս Պալլոգ-Բազար Նաֆիյէ-Խան վերի յարկ թիւ 16.

կամ—H. S. Aladjadjian, Directeur du journal Arménien „Pountch“ 16 Nafié-Han Baulouk-Pazar 16. Konstantinople.

Ծրագիրը՛

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՁԻ—Առաջնորդող յօդուածներ ժամանակակից նշանաւոր Հարցերի վերաբերմամբ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՁԻ — Թղթակցութիւններ զանազան տեղերից, արտասահմանից եւ Թիւրքիայի գաւառներից:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ—Լուրեր Հայկական կեանքից, յօդուածներ տեղեկութիւններ, Պատրիարքարանի, Ազգային ժողովի մասին . . . Պատրիարքական պաշտօնական լուրեր յայտարարութիւններ. . .

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ—Մայրաքաղաքում (Կ. Պոլսում) պատահած զանազան պաշտօնական տեղեկութիւններ, քաղուած տեղական տաճիկ պաշտօնական լրագիրներից, փոշաների եւ այլ պաշտօնական բարձրաստիճան անձանց մասին տեղեկութիւններ. . .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ—Արտասահմանեան պետութիւնների մասին զանազան պաշտօնական լուրեր քաղուածք օտար լրագիրներից. . .

ԴՐԱՄԱԿԱՆ—Բօրսային ցանկ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ—Խառն լուրեր, ամեն տեսակ բաների մասին, նորութիւններ, զուանգան Հետաքրքիր անցքեր եւ այլն: —Ձուարճալիք— Անեկտոտներ, զրոյցներ, առածներ, առակներ. . . —Առողջապահական—Իրաւիք առողջապահութեան, զանազան միջոցներ բարեկեցութեան համար:

ՄԱՆՈՒՑՄԱՆԵՔ — Ցայաբարութիւններ, զանազան լեզուներով:

Բովանդակութիւն(3) 1892 յունուար 4(2288). Խմբագրութիւն Փուլնջի—«Փուլնջի» 30 ամեակը լրանալը: (Խմբ.)

Թղթակցութիւն Փուլնջի—Պայտը 25 դեկ. —Բաբերդ 15 ” —Մարզուան 18 ”

Ազգային Լուրեր—Բերայի թաղ. յանձ-

նաժողովի վերահաստատութեան խնդիրը.
 —Խառն ժողով.—Ամանորի տօնին շնորհաւորութիւնք ս. պատրիարքի մօտ.—Տ. Մամբրէ ծ. վ. Բզնունի Չարսանճաքի առաջնորդ.—Գեր. Տ. Արիստ. եպ. Սեղրակեանց.—Օգոստոսիան Սուլթանի սրբ. պատրիարքին տուած նուէրը ծննդեան տօնին.
 —Գեր. Տ. Եղիշէ ծ. վ. Այուզեան.—Աղքատախնամ Ընկերութիւն.—Տ. Յովակիմ քահ. մահր.—Պատկերահան Կարապետ Սերոբեան.—Ամերիկայի Հայերից նուիրատուութիւն Պարոնեանի այրիին.—Նոր Հրամանագիր ս. պատրիարքի.—Գարձեալ նոր Հրամանագիր.—Ս. պատրիարքի ընդունած շնորհաւորակ. այցելութիւնները ծննդեան տօնին.—Շապին-Գարահիսարի դէպքը:

Ն եր ք ի ն Լ ու ը եր — Գաւառակաց մէջ դազախազի օգնական.— Կառավարութեան մի նոր որոշումը—Օգոստ. Սուլթանի մի նրուէրը.—Թաղորեան էֆ. Ատլիա երթալը.—Ծովային պաշտօնատան սեղանաւորների փոխառութիւնը.—Գուքս Տ' Օրլեանի շրջապայելը.— Սըր Գլաուֆորդ Կ. Պոլսի անգղիական զեսպան.—Գերմանական դեսպանի կնոջ() վերադարձը Կ. Պոլիս.—Խալիկան դեսպան պ. Բեսման—Ինֆլուէնցիա.—Մէհմէտ փաշայի մահը.—Կեղծ դրամի երեւոյթ.—Անյաջող անձնասպանութիւն—Սրճարանի փուլ դալը.—Օգոստ. Սուլթանի նուիրատուութիւնը.—Հասան-Խայրի փաշան.—Ալի Բիզա էֆենտ. մահը.—50 գաղղիակ. ոսկի նուէր Ազգային Հիւանդանոցին.—Հրդէից ապահովութիւն.—Թրամվայի գիծ.—Պաշտօնական մի լուր—Քննիչ ճանապ. Հաղորդակցութեան.—Մի անձնասպանութիւն.—Հոովմի եկեղեցուց գողութիւն.—Ջմիւռնիայի 50 դրամի չափ կարկուտը.—Մէքքէից—350 Կովկասի գաղթականներ Ատանայի նահանգում.—Եգիպտոսի նորընտիր Խտիվը:

Պատուանշան, աստիճան, պաշտօն եւ պարգեւ:

Գրամական—(երկու ծանուցմունք.)

Արտաքին Լուրեր—15,000 ռ. նուէր Ռուսիոյ Թագաժառանգին, —Իտալական նախարար Բելլոյի մի նոր կարգադրութիւնը,—8 աղանի,—Պերլինում նոր ընկերութիւն,—Քուլմպիայի մեծ Հրդէհը,—Մոսքուայի կառավարիչ գուքս Սերգէյ,—Փարիզից Հեռագիր—Եւրոպայում արմտեաց գինը,—Անգղիոյ գահաժառանգի մահը,—Ռուսիոյ Կայսեր մի նոր հրաման,—Ռուսիայի գահաժառանգի մասին մի քանի խօսք,—Գերմանիոյ Կայսեր եւ Պիսմարք,—Պուլգարիոյ Փրետրիկ Իշխանը,—Նորանոր թընդանօթներ,—Անգղիոյ գահաժառանգի Հիւանդութիւնը—Գաղղիոյ ծովային նախարար Բէլլոնի մահը—Յորենի արտահանութեան արգելքը,—Վենետիկի առողջապահական միջազգային ժողովը,—Վիէնայից մի Հեռագիր—Ի Թանճէր խռովութիւնք,—Միացեալ նահանգաց Հանրապետութիւն,—Բիւեր Նովաքու պիեսի ներկայացումը:

Այլ եւ Այլ ք—Յայտարարութիւն թոքախտի Համար.—Սարգի ոստայն օգացոյց,—Թէյին զուտ լինելը փորձելու կերպ,—Բորոտ արջառք—Լեզի նուշը—Բազլայն ու բազլային կեղեւները:

Ընթացք նախնեաց:
 —Տիբերքոս Կայսրն—Ասիքս Եգիպտոսի—Կանայք Կարգեզոնացուց,—Նոյն տեղի Ատուրուրաղ զօրավարի կինը—Պաւսանիաս արքայ Սպարտացուց—Պարսից մէջ օրէնք—
 ● Ա զ դ — . . .

Նախանցեալ տարի Փոնշը լրացրեց իւր 30-ամեայ տարելիցը, որ մեր մամուլը պատմութեան մէջ փոքր թիւ չէ: Համբարձում էֆ. Ալաճաճեան 1860 թուականի յունուարի սկզբից Օսմանեան մայրաքաղաքում սկսեց Փոնշը շաբաթաթերթի հրատարակութիւնը: Ինչպէս Տնորէն-Խմբադիրը գրում էր՝ . . . Փոնշը կը բաղձայ որ մեր անհատական ու ընտանեկան կենաց մէջ տեսնուին

անվհատ եւ անդուլ աշխատասիրութիւն,
սակաւապետութիւն ու պարզասիրութիւն...»

«...Փունջը կը բաղձայ որ մեր ազգի
կենաց մէջ բարձր 'ի գլուխ հանդիսանան
խոհեմութիւն, շրջահայեցութիւն եւ հեռա-
տեսութիւն...»

«...Փունջը կը բաղձայ որ մեր ազգային
վարչական պաշտամանց մէջ գտնուողներն
ամենայն ջանից ու խնամոց առարկայ ընեն
ազգային ներքին բարեկեցութեան կարեւո-
րագոյն գործն.— Բարեկարգութիւն առաջ-
նորդական վիճակաց, բարեկարգութիւն վա-
նորէից.— Բարեկարգութիւն հանրային կըր-
թութեան եւ դաստիարակութեան հանդերձ
հարազատ զարգացմամբ լեզուի, կրօնի, եւ
բարոյականութեան...»

—«Փունջի» նպատակը կամ բաղձանքը այս
տողերից արդէն երեւում է, թէ ինչ է խօս-
տացել անելու եւ որ այժմ էլ անում է, կամ
աշխատում է անել:

«Զիք տարակոյս թէ առանց այսպիսի
բարեկարգութեանց բոլորովին անձնական
է մեր գոյութիւնը»—աւելացնում է տէր-
խմբագիրը:

Աշխատասէր եւ գործունեայ մի անձն է
պ. Ալաճաճեան: «Փունջի» իւրաքանչիւր հա-
մարում համարեա տալիս է առաջնորդող
յօդուածներ, ժամանակակից խոշոր խնդիր-
ների մասին, այն խնդիրների որոնք օրուայ
հարց են դարձած եւ արժանի են լուրջ
ուշադրութեան: Օրինակի համար «Փունջի»
առաջնորդողների նիւթ են կազմում, Թիւր-
քիայի հայաբնակ գաւառների հողային ար-
դիւնաբերութեան հարցերը, հոգեւորակա-
նութեան անդամների մասին զանազան տե-
ղեր հովուելու առթիւ նախագծեր, խոր-
հուրդներ գործելու, եկեղեցիների, դպրոցնե-
րի շինութեան ու բարգաւաճման մասին,
ժողովրդի բարեկեցութեան եղանակը, ազ-
գային այլ հիմնարկութիւնների ողջկեցիկ
պայմաններ եւ այլ օգտակար որոշումներ:

Ըստ երեւոյթին «Փունջ» շաբաթաթերթը
ազգային ժամանակակից այլ եւ այլ լրագիրնե-

րի պէս չի պատկանում ո եւ է բանակի.
պահպանողականների կամ ազատամիտների
կուսակցութեանը, այլ չէզոք գիբք բունե-
լով գլուխը քարշ իւր գործին է նայում.
միահաւասար յարգանք վայելելով հայ ժո-
ղովրդից: Պ. Ալաճաճեան հաւատարիմ մը-
նալով իւր պետութեանը եւ տպագրական
տեսչութեան, վերջերքս Վեհափ. Սուլթա-
նից արժանացաւ ստանալու մի բ. կարգի
շքանշան:

«Փունջը» վերջին տարիներս ծրագրի
կողմից աւելի լաւացել է: Գաւառական
թղթակցութիւնները, ազգային լուրերը բա-
ւականին հետաքրքրութեամբ կարգացում
են: Միայն ափսոս որ շաբաթաթերթ լինե-
լու համար ազգային եւ պաշտօնական լու-
րերը մինչեւ լոյս տեսնելը հնանում են:
Այն տեղեկութիւնները որ Կ. Պոլսի ընթեր-
ցողը պէտք է կարդա «Փունջ» շաբաթաթեր-
թի մէջ, նա արդէն մի քանի օր առաջ
կարդացած կը լինի «Արեւելք»ում «Հայրե-
նիք»ում կամ թէ տաճկերէն այլ եւ այլ
լրագիրներում:

«Փունջը» գծի տակ բանասիրական կամ
թէ մատենախօսական յօդուածներ, Ֆելիք-
տօններից բոլորովին զուրկ է: «Փունջը» տեղա-
կան աշխատակիցներ չունի եւ չի էլ կա-
րող ունենալ. քանի որ իւր ծրագրից դուրս է:
Առաջնորդող յօդուածները խմբագրութիւ-
նից է, ազգային, ներքին եւ արտաքին լու-
րերը թարգմանուած են զանազան լրագիր-
ներից. իսկ թղթակցութիւնների համար
«Փունջն» ունի գաւառական թղթակիցներ
որոնք շարունակ թղթակցում են զանազան
տեղերից. ինչպիսիք են՝ դպր. Բ. Անտէլէպ-
եան, Ս. Մկրտումեան, Մ. Յ. Թոփհանել-
եան, Հ. Բիւրքճեան, Ն. Տէլճէկեան, Յ.
Սէչինեան, Վ. Տէրէճեան, Ս. Յակովբեան,
Ղ. Զիլինկիրեան, Արգոս, Գ. ք. Յովակիմ-
եանց, Ս. Մ. Գասպարեանց, եւ այլք:

«Փունջը» պատանի հասակում մի կարճ
ժամանակ հանգիստ առնելուց յետոյ կանո-
նաւոր կերպով հրատարակուում էր մինչեւ

1892 թ. վերջերին: Այդ ժամանակ տեղական տպագրական տեսչութեան հրամանով «անպայման» դադարման դատապարտուեցաւ: Չանցած մի երկու շաբաթ «Փունջը» նորից սկսեց հրատարակուել, (4) որ եւ տեւում է մինչեւ այսօր:

Ժ Ը Ն Յ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Փունջ» շաբաթաթերթը եւ մեր աղբիւրները—

ա. «... Բայց ասոնց ալ շատ անգամ իրենց նախընթաց թերթերուն նման՝ փայլելն ու խաւրելը մէկ կըլլար: Այսպիսեաց դասէն են «Փունջ» («») ... մեր ծանօթութիւնից դուրս կը մընան...»

«Պատմ. հայ. դպրութ.» ք. էջ 506.

բ. «Փունջ լրագիր քաղաքական ազգային եւ առողջապահական: Հրատարակիչ եւ տէր Համբարձում Ալաճաճեան Կ. Պոլիս 1866(«)»

«Մատեն. հայկակ.» Չարք. էջ 691.

գ. «Փունջ... 1860 Պոլիս Լ. Ալաճաճեան(ա)ն՝ «Իաս. հայ-ազգ. պատմ.» ք. էջ 340.

դ. «... Ժողովրդեան ատենի շարագործի մը «Մասիս» մէջ փառաբանուելը տեսնելով, «Փունջ» իր պաշտօնակցին վրայ կը յարձակի ապուշ, կենդանի, քսու եւ վատ, պատուանուններով...»

«Ազգային ջոջեր» 8. Պ. էջ. 84.

ե. «Փունջ շաբաթաթերթը արգարացնել ճգնաժամ է իւր վերայ դրուած վստահութիւնը իւր փերջին մէկ համարով...»

«Նոր-Իար» 1886 № 7. էջ 3.

զ. «Փունջ 1860—հիմա շարունակուում է Կ. Պոլսում. խմբ. Համբարձում Ալաճաճեան երկ(»)շաբաթաթերթ. առողջապահական, քաղաքական եւ ազգային լրագիր»

«Հայոց արդի մատենագր.» (ձեռագ.)

է. «... 1860 թիւ. աւելացան... պ. Լ. Ալաճաճեանի «Փունջ»...»

«Արձագանք» 1882. № 22. Ա. Եթ.

ը. «Փունջ շաբաթաթերթ. քաղաքական լրագիր. սկսեալ 1860 տէր եւ տնօրէն Համբ. Ալաճաճեան...»

«Օրացոյց 1893 թ.» 8. Տ.-Ա. էջ 92.

«Փունջի» պէս մի երկարակեաց լրագրի անունը բոլորովին չէ յիշել պ. Լայսդ. իսկ յիշել է մի քանի օր կամ շաբաթ ապրողներին:

2.) Այս տողը չի գրուում թերթի ճակատին.

3.) Թերթի ա. երեսում չի տպուում Բովանդակութիւն

4.) Տես «Մշակ» 1892. № 135.

52.

Փ Ա Ր Ի Ձ ^{1.)}

Փ ա Ր Ի Ձ (Փրանսիա) 1860—1863.

Հրատարակուում էր՝ կիրակի օրերը. Խմբագիր՝ Աբրահամ Մուրատեան:



այրենասէր» (2) կիսամսեայ հայ հանդիսի խմբագիր-տնօրէն պ. Աբրահամ Մուրատեան, 1853-ին դադար սալով իւր գործունէութիւնը, եօթ տարի անցած, 1860 թուականի յունուարի 6-ից ըսկսեց Փարիզում հրատարակել «Փարիզ» անունով մի շաբաթաթերթ:

«Հայրենասէրի» պէս «Փարիզն» էլ չը կարողացաւ երկար կեանք ունենալ. երեք տարի միայն ապրելով, 1862 թուականի վերջերին ստիպուեցաւ դադարել:

Ժ Ը Ն Յ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեզ չէ պատահած տեսնել «Փարիզ» շաբաթաթերթից եւ ոչ մի համար. դորա համար էլ անկարող եղանք այս շաբաթաթերթի

դիրքը եւ այլ մանրամասնութիւնները ինչպէս որ տպարանը, ծրագիրը, յիշել այստեղ:

Մեր աղբիւրներն էլ շատ խնայողութեամբ են խօսում «Փարիզի» վերաբերմամբ, այն էլ մի քանիսը միայն որ են՝

iii. ,, . . . Բայց (,,Հայրենասէրի՝ դադարմանից) 7 տարի անցնելէն ետքը՝ նոր եւ ընտրելագոյն կերպարանքով մը միւս անգամ երեւեցաւ ՚ի Փարիզ Գաղղոյ, նոյն մայրաքաղաքին անունը կրելով ու շարժէ շարժ չհրատարակելով:

,,Պատմ. հայ. դպրութ.՝ ք. էջ 485.

iv. ,,Վերջապէս նոյն տարին (1860) ինչպէս վերը յիշեցինք Ֆրանսիայի մայրաքաղաքում պ. Ա. Մուրատեանի ձեռքով լոյս տեսաւ եւ երեք տարի շարունակուց

,,Փարիզ՝ լրագիրը՝

,,Արձագանք՝ 1882. № 22. Ա. Նք.

v. ,,Փարիզ 1861 (՝) Փարիզ Մուրատեանի՝

,,Իսս. հայ-ազգ. պատմ.՝ էջ 340.

vi. ,,Վերջապէս 1860 թուին, պ. Ա. Մուրատեանի ձեռքով լոյս տեսաւ մեծ հմտութեամբ խմբագրուած ,,Փարիզ՝ լրագիրը

,,Արձագանք՝ 1885. № 1. (խմբ.)

2.) ,,Տես լրագիր թիւ 27.

53.

Ս Է Ր ^{1.)}

ՌԻՍՈՒՄԸ ՀԵՂԵՏԱՍԱՆՈՐԵԱՑ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1860-1864. Հրատարակուում էր՝ ամսի կիսին եւ վերջին.

Խմբագիր եւ Տէր՝ Ա. ձեվահիրճեան. Տպարան «Արեւելեան»

Ծրագիրը՝

«Տնտեսական գիտութեան դաստիարակութեան վերայ խորհրդածութիւններ, Հայոց պատմութեան նկատմամբ տեսութիւններ, Հայկական լեզուի վերայ տեղեկութիւնք, ուսումնական եւ բարոյական յօդուածներ . . . »



«ստանդնուպոլսում 1860 թուականին լոյս տեսած մի քանի հայ հանդէսներից մինն էր «Սէր» կոչուած երկշաբաթաթերթը, որ էր «Հանդէս ուսմանց

եւ գեղեցիկ դպրութեանց.» Այս կիսամսեայ պարբերականի խմբագիր եւ տէր, ուսումնական երիտասարդ պ. ձեվահիրճեանի նպատակըն էր «Ծառայել՝ առանց քաղաքական լրագրոց զբաղելու, իրաւանց այլ եւ այլ ճիւղեր, անտեսական գիտութիւն . . . եւ այլն»

Պ. ձեվահիրճեան հաւատարիմ մնալով իւր խօստման տալիս էր իւր ընթերցողներին գիտնական, ուսումնական եւ տնտեսական յօդուածներ: Աշխատակիցները ջերմ համակրութեամբ մասնակցում էին իւրապատշաճ ընտիր յօդուածներ գրելով:

«Սէր» հանդէսը իւր գոյութեան միջոցին քանի մի փոփոխութիւնների ենթարկուեց, թէ դիրքը թէ տպարանը եւ որ գլխաւորն է խմբագիրը միեւնոյնը չը մնացին: Միւհէնտիսեան տպարանից «Սէրը» մտաւ «Արեւելեան տպարան» եւ եթէ չենք սրխալուում «Սէր» հանդիսի խմբագիր-անօրէնի պաշտօնը կարճ ժամանակում անցաւ Գարագաշեանի ձեռքը: 1864 թուականին այլ եւս չէր երեւում «Սէր» հանդէսը:

Ժ Ա Ն Յ Ո Ւ Պ Ո Ւ Ի Ր Ն Ե Ր .

1.) «Սէր» երկշաբաթաթերթը մեր աղբիւրների մօտ—

iii. ,, . . . Այսպէս ահա այսօր տեսնելով մեր մէջը այս նոր Սէրը, ընտիր լրագիր մը մեր ուրախութիւնը ընդ այն կը յայտնենք

եւ կը խնդրենք մեր ընթերցողներէն, որ իրենց ազգին ընծայուած այս Սէրը իրենց անձնական սիրովը գրկեն. այս սէրը որ ազգային յառաջադիմութեան սէրն է, այս Սէրը որ քաղաքակրթութեան եւ աստուածապաշտութեան սէրն է վերջապէս՝

„Մեղու“ Հանդ. տասնօրեայ Կ. Պ. 1860. էջ 223.

բ. „Սէր տասնօրեայ (՝) Հանդէս ուսմանց, քաղաքականութեան եւ գեղեցիկ գալու-թեանց, Խմբ. եւ տէր Ա. ձէվահերձեան. Կ. Պոլիս . . . 1860—1863“

„Մատենագիտ. Հայկակ.“ Զարբ. էջ 618.

գ. „Նոյն տարւոյն մէջ . . . Սէր կաշուած բա-նասիրականին առջին թերթին իրեւեցաւ ՚ի Կ. Պոլիս . . . Երեք կամ չորս տարի մի-այն տեւած է այս թերթին Հրատարակութիւնը . . .“

„Պատմ. Հայ դպրութ.“ Բ. էջ 496

դ. „Սէր 1860 Պոլիս Գարագաշեան“

„Իաս. Հայ-ազգ. պատմ.“ Բ. էջ 340.

ե. „1860-63. Սէր անունով Կ. Պոլ. կիսամ-տեայ թերթ. մեծ խոստումներով լոյս տե-սաւ. նպատակն էր ազգը կրթել, եւ եթէ իւրոպացիք կը . . . Հարուածել, Հայերին դիմադրել.“

„Հայոց արդի մատենագր.“ (ձեռագիր.)

Մեր միւս աղբիւրները լուռ են „Սերոյ“ մասին.

54.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴԱՐ^{1.)}

Կ ո ս տ ա ն դ ն ու ա ղ ո լ ի ս (Տաճ.) 1860-1861.

Հ Ր ա տ ար ա կ ու ու մ է ր օ

Խ մ բ ա գ Ր ու լ թ ե ա մ ր Գ. Տէյրմէնձեանի...

Լ ե զ ու ն ո ճ ը Լ և զ զ ա գ Ր ու լ թ. } „...Ձեր անձնայօժար սրտ: թղխած փոքրիկ ողորմութեան գունձերը, այսինքն նուէրները“



ուսմանի «Մեղու» տաս-

նօրեայ Հանդիսին բո-

ւորովին Հակառակ

ուղղութեամբ 1860

թուականին դուրս

եկաւ Կոստանդնու-

պոլսում «Արեւելեան

Դարը» որի խմբագրի-

րըն էր Գ. Տէյրմէնձեան: Դժբախտաբար

այն թուականին ծնունեց «Արեւելեան Դարը»

որ բացի իրանից այդ տարի միայն Կոստան-

դնուպոլսում լոյս տեսան դարձեալ չորս Հայ

պարբերականներ, նոյն չափ էլ զանազան տե-

ղեր: Սա չը կարողացաւ իւր գոյութիւնը պա-

հել գոնէ մի քանի տարի: Զանազան այլա-

ջող Հանգամանքներ խեղտեցին «Արեւելեան

Դար» իւր ասան ամսեայ Հասակի մէջ:

Ժ Ը Ն Յ Թ Ա Ռ Թ Ի Ռ Ն Ն Ե Ր .

1.) Ետ ցանցառ են մեր ունեցած տեղե-կութիւններն այս Հրատարակութեան մա-սին: Մեր բազմաթիւ աղբիւրներէից սորա անուան յիշել են միայն՝ Երիցեան, Գա-փամաճեան՝

ա. „ . . . 1860 թուին աւելացան՝ . . . Պոլսոյ մէջ պ. Գ. Տէյրմէնձեանի խմբագրու-թեամբ „Արեւելեան Դար“ . . .“

„Արձագանք“ 1882. № 22. Ա. կր.

բ. „Արեւելեան Դար“ 1860. Պոլիս. Գ. Տէ-յրմէնձեանի՝

„Իաս. Հայ-ազգ. պատմ.“ Բ. էջ 338.

գ. „ . . . Նախ Արեւելեան Դար՝ ինչ է չէ-ինք գիտեր, երկրորդ այնքան խորունկ կարդացող չէինք . . . որ . . . այլանդակ . . . բառերը, խօսքերու ու բացադրութիւնները Հասկնայինք . . .“

„Մեղու“ տասնօրեայ. Կ. Պ. 1860 № 116.



55.

ՄԻՈՒԹԻՒՆ ^{1.)}

ՀԱՆԳԻԹ ՀԱՇՏԵՆԻՑ

(Կիսամսեայ)

Զմիւռնիա (Տաճկաստ.) 1860—1862.

Հրատարակուում էր՝

Խմբագիր՝ Ս. Վանանդեցի.

Ի տպարանի «Արշալոյսի Արարատեան».

Բաժանորդագիրն էր՝ տար. 2 արծ. մէճ.

Լեզուէն, ոճը՝ } ... Կարգ կանոն չկայ.
ամեն ազգային գործ, ամեն
Ուղղագրութ. } րան խստն ի խուռն են. . . .



միւռնիա քաղաքի մէջ
«Հաշտենից Ընկերութեան» խնամքով, եւ
Ս. Վանանդեցու խմբագրութեամբ 1860 թրուականի ապրիլ (2) ամսից սկսեց հրատարակուել «Միութիւն» շաբաթաթերթը՝ Հ ա շ Ե Ն Ի Յ (3) կիսամսեայ պարբերականը: Խմբագրութիւնը իւր նպատակն յայտնեց որ «Միութիւնը մեր ազգին յառաջագիմութեան ու բարօրութեան ճշմարիտ աղբիւրները ցուցնելու կը փութայ, ու կ'որդորէ զԱզգը, եւ անոր ծառայութիւն ընելու յանձնառու կըլլայ որ ճանչեն այն աղբիւրները ու անկէ փրկուեն իրենց երջանկութիւնը. . .»
Հանդիսիս խմբագիր Սարգիս Միրզա-Վա-

նանդեցին «Միութեան» միջոցով վէճի էր բռնուած «Արշալոյս Արարատեանի» հետ: Իւր հայրենակից «Ծաղկի» հետ էլ հակառակ էր դպրոցական հարցերի մասին:

Զը նայելով որ «Միութեան» ուղղութիւնը ազնիւ ազատական ուղղութիւն էր, բայց մեծ վէճերի բռնուելով, այնքան դրական գործ չէր երեւում որքան լոկ խօսք ու գրութիւն:

Խմբագրի գրուածներէց «Գրական Կենցաղը» գրութիւնը անուանի տեղ էր բռնում «Միութեան» էջերում:

Երկու տարուց աւելի տեւեց «Միութիւն» հանդիսի գոյութիւնը: Ընկերութեան հետ պատահած այնպիսի հանգամանքները կրճատեցին հանդէսի կեանքը, որ 1862 թուականի վերջերը չը կարողացաւ հասնել:

ԺՆՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Մեր աղբիւրները եւ «Միութիւնը»—
- ա. «Միութեան մեծարգոյ խմբագիրները ազգին արդի վեճակը ամենուն տեսնել կուտան իրենց հանդէսին մէջ ու կը սկսին անոր դարմանն ընելու միջոցները գործածել, ցուցնել եւ գործադրել տալ. . .»
«Մեղու» տասնօր. Կ. Պ. 1860 № 64.
- բ. «Զմիւռնիայում պ. Ս. Վանանդեցու եւ քանի մի ուսումնասէր երիտասարդաց օգնութեամբ հրատարակուեցաւ «Միութիւն Հաշտենից» հանդէսը որ մօտ մէկ եւ կէս (՝) տարի տեւեց. . .»
«Արձագանք» 1882, № 22. Ա. Ե.
- գ. «1860-ին ի Զմիւռնիա հաստատուած Հաշտենից Ընկերութեան ձեռքով «Միութիւն Հանդէս Հաշտենից» կոչուած կիսամսեայ պարբերական մը լոյս տեսաւ. . .»
«Պատմ. հայ. դպրութ.» էջ 499.
- դ. «. . . Հաշտենից ընկերութեան «Միութիւն» հանդէսը մի քանի անձանց մատնութեամբ շուտով դադարեցաւ եւ . . .»
«Փորձ» 1876. № 3. Աղ. Երից.
- ե. «Միութիւն Հանդէս Հաշտենից II- շարա-թաթերթ. 1860. Զմիւռնիա»
«Հայոց արդի մատենագր.» (ձեռագ.)

- գ. «Միութիւն 1861 (') Զմիւռնիա»
 «Դաս. հայ-ազգ. պատմութ.» էջ 339.
 է. «... Միշտ գգուչ լեզու կը բանացնէր իր վէճերին մէջ, բայց ազգային աւելի կարեւոր խնդիրներով քէչ կը զբաղէր...»
 «Յիշատակարան» իզմիրցի ձերմ. (ձեռ.)
 Մեր մի քանի աղբիւրները «Միութեան» սկիզբը սխալմամբ գրել են 1861. իսկ ոմանք դադարումը գնելով 61-ին սկիզբը ճիշտ են գրել: .
 2.) ձերմակեան՝ գրել է յունուարին.
 3.) 1861 թ. սեպտեմբերից աւելացաւ եւ «Ս ա հ-մ ա ն ա դ ր ա կ ա ն»:

56.

ԹՈՒԹԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ ԱԹԻԱՐՀԻ^{1.)}

ՏԵՏԻ

ԱԶԳԱՍԻՐՈՒԿԱՆ ՌԵՐՈՍԵՒԿԱՆ ԵՒ ԶՈՒՐԲՈՒԼԻ ԳԻՑԵԼԵՈՑ

(Կիսամսեայ)

Զմիւռնիա (Տաճկ.) 1860-1860.
 Հրատարակուում էր՝
 Խմբագիր՝ Ա. Հիւսէինճեան ...

60-ական թուականներին Թիւրքիայում հայ լրագրութեան գործը աճելով աճում էր բայց տասից մինը հազիւ մի բանի պիտանի լինէր: Ամեն մի երիտասարդ ինքն իրան «ազգային գործիչ» էր համարում, ուզում էր մի թերթիկ հրատարակելով «խրմբագիր» անունը կրել, ամենեւին հասկացած չը լինելով լրագրական գործի բարձր նշանակութիւնը:

Զմիւռնիայում այդ ժամանակ ոմն Հիւսէինճեան որ տպարաններից մինում գրաշարութեամբ էր պարապում, ցանկացաւ մի հանդէս հրատարակել այդպէս ազգի: Ի՞նչ

արած որ մեր՝ որպէս անաչառ արձանագրորդի պարտքն է լիշել բոլոր հայ լրագիրների անունները լինի նա մեծ, յայտնի գիրքի տէր մի անձնաւորութեան, լինի մի ո եւ է համբակի հրատարակութիւն. ամենը իհարկէ վայելում է իւրապատկան արժանաւոր ուշադրութիւն: Ի՞նչ է նշանակում մամուլի սրբազան պատիւն ու իրաւունքները ունակոխ անել, խմբագրի վեհ կոչումը նսեմացնել: Ահա մի 15—18 տարեկան պատանի «Տնօրէն-Խմբագիր է» դառնում «Թուրքական Հայաստան Աշխարհի» ոչ պատուական երկշաբաթաթերթի եւ 1860 թուականից հրատարակել սկսում:

Ի՞նչ փքուն անուն, քնչ ճոճան վերնագիր. եւ ծաղրաշարժ է այն դէպքը որ պ. Հիւսէինճեան «Թուրքական Հայաստ. Աշխարհի» թէ խմբագիրն էր, թէ արտօնատէր-տնօրէնը, թէ աշխատակիցը, թէ գրաշարը, սրբագրողը, եւ ցրիչը: Ահա մեր մանուկ խրմբագրի լրագրական գործունէութիւնը: Ի՞նչ ասել կուզէ որ այսպիսի լրագիրը որ երեխայական մտքի արտայայտութիւն կարելի է ասել չէր կարող տեւողութիւն ունենալ: Երկու թէ երեք համար միայն կարողացաւ լոյս տեսնել «Հայաստան Աշխարհի Թուրքական» ի մեծ ցաւ իւր դեռահաս խմբագրի դադարեց ոչ մի գործ, ոչ մի նշանակութիւն չը թողնելով մամուլի պատմութեան մէջ:

ԺՆՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Մեր աղբիւրները «Թուրքական» մասին—
 ա. «1860-ին «Թուրքական Հայաստան Աշխարհի» կոչուած կիսամսեայ թերթ մը երեւեցաւ ի Զմիւռնիա Ա. Հիւսէինճեան պատանւոյ մը աշխատասիրութեամբ. որ իւր թերթին գրաշարութիւնն ալ ինք կ'ընէր եւ պիտի ճառէր ազգասիրական բարոյական ու զուարճալի գիտելեաց վրայ. մեր ունեցած տեղեկութեան համեմատ, միայն

ամսոյ մը կեանք ունեցած է. . .”

„Պատմ. հայ. դպր“ ք. էջ 495.

բ. „Չմիւռնիայի մէջ պ. Հիւսէինճեանի աշխատութեամբ (լոյս տեսաւ) „Քութակ Հայաստան Աշխարհի“ . . . (պ. Հիւսէինճեան) սաստիկ ցանկութիւն ունենալով թերթ հրատարակել, այդ պարոնը իւր գրած յօդուածները ինքը շարում էր. ինքը սրբագրում եւ տպելուց յետոյ ինքը ցըրուում քաղաքի մէջ եղած քանի մի բաժանորդներին. . .”

„Արձագանք“ 1882. № 22. Ա. Ե.

գ. „Քութակ Հայաստան Աշխարհի“ տետր ազգասիրական, բարոյական եւ գուարձալի գիտելեաց. Կ. Պոլիս (Պ) 1860. . .

„Մատեն. հայկ.“ Զարբ. էջ 216.

դ. „Քութակ Հայաստան Աշխարհի“ 1860. մի ամիս. հրատարակիչ-Հիւսէինճեան գրաշար. աշխարհաբար „Չմիւռնիա“

„Հայոց արդի մատեն.“ (ձեռագ.)

ե. „. . . մինչեւ անգամ մի գրաշար „հրատարակում է „Քութակ Հայաստանի“ որ բովանդակութիւնը ինքն էր կազմում եւ ինքը անձամբ տանում էր բաժանորդներին տունը. . .”

„Հայկակ. մատեն.“ ք. էջ 153.

[„Ein junger Buchdrucker schuf sogar einen Paragei „Armeniens“ zu dem er selbst den Inhalt schrieb und ihn persönlich seinen wenigen Zahllesern ins Hans trng.“

„Arm. Bibl.“ II. A. L. էջ 153.

57.

Ա Ս Տ Ղ ^{1.)}

Զ մ ի լ ա ն ի ա (Տաճկաստ.) 1860—1860.

Հրատարակուում էր՝

Խմբագրութեամբ՝ Կոստանդին Խաչիկեանի եւ Յովհաննէս Մսերեանցի:



րագրական գործով ազգին ծառայելու տենչն ամուր կապուած էր նաեւ Իգմիրում երկու երիտասարդների՝ Կ. Խաչիկեանցի եւ Յ. Մսերեանցի սրտերի

հետ, որոնք 1860 թուականին փորձեցին մի ձեռագիր պարբերականի հրատարակութեան «Աստղ» անունով: Խմբագիրները որքան եւ կամենում էին վառ պահել «Աստղի» փայլը, իւրեանցից մինը գրելով եւ միւսը տարածելով, բայց մի քանի ամիս միայն փայլելով «Աստղը» մարեցաւ, վիշտ պատճառելով իւր երիտասարդ խմբագիրներին միայն:

Թ Ա Ն Յ Ո Ւ Ր Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Գուցէ մի ձեռագիր հայ պարբերական հրատարակութիւն աւելորդ են համարել յիշել մեր ազբիւրները, կամ թէ անտեղեակ են եղել որ աւելի հաւանական է:

Աղբիւրներ եւ «Աստղ»—

ա. „Աստղ ձեռագիր Կոստ. Խաչիկեան, Յովհ. Մսերեան. 1860“

„Յիշատակարան“ Իգմիրցի. ձերմակեանի:

58.

Կ Ի Լ Ի Կ Ի Ա ^{1.)}

Ա Մ Մ Ա Ք Ե Ր Ք

ԱՌՈՂՁԵՂՈՒՆ ԵՒ ԱՌՈՒՄՆՈՒՆ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1861-1869.

Հրատարակուում էր ամսի սկիզբներին Խմբագրութեամբ՝ Մանուէլի Բարու- նակ Իւթիւճեան:

Ի ապ. Թ. Տիվիթեան.

Ի իր քը (տետր.) 1 տպ. թերթ. 32 էջ 16X25 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ բաւարար.

Լեզուէն, ոճը, } «...Չկայ խնդիր մը, որ այս չափ արժանի չըլլայ մար- Ուղղագրութ. } դոց ուշադրութեան, ...»

Բաժանորդագրինը՝ տարեկան մէկ ար- ծաթ մէճիտիցէ.

Ծրագիրը՝

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.—Յօդուածներ ա- ռողջապահութեան վերաբերմամբ, բը- ժշկական զանազան տեղեկութիւններ, խորհուրդներ...

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.—Ուսումնական ճիւղին վերաբերեալ յօդուածներ, գրական-ազ- գային եւ կրօնական հատ ու կտոր գրուածներ, առածներ...

Բովանդակութիւն 1868. յուլիս 1. (թիւ 13)

Յառաջաբան.—Խմբ.

Նախնի ընտանեկան կեանքը (շարունակ.)

Ամեն տեսակ աշխատութեան մէջ իմա- ցականութեան ազդեցութիւնն (յա- ջորդին.)

Թանգարան ընտիր առածից.

Գործակալութիւնք (Կիլիկիոյ) } շապիկ Ամսաթերթիս պայմանները } վերայ



աճկաստանում պե- տական զինուորա- կան բժիշկ, երբեմն ուսանող Փարիզի Բժշկական ձեմա- րանի, երիտասարդ գոքտոր պ. Մանուէլ Բարունակ Իւթիւ-

ճեան, փորձ փորձեց մի բժշկա-առողջապա- հական-ուսումնական ամսաթերթ հրատա- րակել: Այդ բանը նա մտածել էր գեռ Յը- րանսիայում եղած ժամանակ: Վերջապէս Թիւրքիայի մայրաքաղաքում 1861 թուա- կանից յաջողուեց նորան այդ բանը եւ «Կի- լիկիա» ամսագրի առաջին համարն արդէն լոյս տեսաւ Կոնստանդնուպոլսում:

Յարգելի խմբագիրը իւր ամսագրի «Ու- սումնական» մասում շատ անգամ խրատներ, խորհուրդներ էր տալիս իւր ընթերցողներին ս. Աւետարանի սկզբունքով, ճշմարիտ եղ- բայրասիրութիւն, ողորմասիրութիւն, բա- րութիւն եւ այն ամենը ինչ որ հաճելի է ամենքին ինչ որ գեղեցիկ է: «Երբ մենք մեր տկարութիւնը ճանաչենք—գրում էր պ. Իւթիւճեան—հպարտութեան աղբիւրն, ըստ ինքեան կը ցամքի եւ անմիջապէս ուրիշ զգացմունք մը առ միմեանս գթութեան զգացմունքը ծնունդ կառնու...»

Գովելի էր «Կիլիկիայի» նպատակն ու սի- րելի էր նորա գաղափարը. «Պարտաւորական օրէնքն յաւիտենական օրէնք մ' է»—ասում էր «Կիլիկիայի» գիտնական խմբագիրը, եւ վերջացնում իւր խօսքերը այսպիսի քաղցր բառերով — «ԱՄՆԵՆՅԻՍ ԱԼ ԵՂՐՈՅԲ ԵՆՔ»:

Իւթիւճեան իւր անձնական գործերի պատճառաւ 1862 թուականին չը շարու- նակեց «Կիլիկիայի» բ. տարին: Վեց տարուց յետոյ 1868 թուականի յուլիսից նորից շա- րունակուել սկսեց «Կիլիկիայի» հրատարակու- թիւնը, նոյն ծրագրով ու պայմաններով: Բայց ցաւօք սրտի պէտք է ասել որ շատ չանցած «Կիլիկիա» ամսաթերթն այլ եւս չէր հրատարակուում. ութը տարուայ մէջ միայն 13-15 ամսատետր տալով: Խմբագիրը զինուորական պաշտօնեայ, ինչպէս ասում են գլուխը ծախուած մարդ էր. ազատ չէր որ կարողանար շարունակել ամսաթերթի հը- րատարակութիւնը:

ԾՆՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Կիլիկիայի» մասին մեր աղբիւրները լուռ են, մի քանի տող լիշեւ են միայն՝
 - ա. „1861 թիւ. Պոլսոյ մէջ երեւացին... Կիլիկիա՝ բժշկական առողջապահական թերթը որ խմբագրուում էր Տաճկաց գինւորանոցի բժշկանոցի մէջ դեռ ուսանող (՞) պ. Իւթիւճեանը... «
 - „Արձագանք՝ 1882. № 22. Ա. Եր.
 - բ. „Կիլիկիա 1861 Պոլիս Իւթիւճեան՝
 - „Դաս. Հայ-ազգ. պատմ.« էջ 339.

59.

Թ Ռ 2 Ն Ի Կ ^{1.)}

(Ամսագիր)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1861-1861



ամանեան մայրաքաղաքի մէջ 60-ական թուականների սկիզբներին ծնուած եւ շուտով վերջացած պարբերականներից մինն է եղել եւ այս «Թռչնիկը», որ իւր շատ սակաւ կեանքով ու աննշան գիրքով անձանօթ է մնացել մեր մամուլի պատմութեան մէջ: «Թռչնիկը» մի քանի ամիս է հրատարակուել, թշնամի մարգիկ շուտով խափանել են խեղճին դեռ խանձարուրից չ'ելած:

ԾՆՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Զը շիոթել այս «Թռչնիկ Պիգասեան» հանդէսի

հետ, որի խմբագիր-հրատարակողն էր այժմ Գրեգոր Եպիսկ. Ալէաթճեան:

Մեր աղբիւրներից մէկն է միայն լիշեւ «Թըռչնիկին»

ա. „Թռչնիկ օրագիր ամսօրեայ 1861 Պոլիս՝ «

„Դաս. Հայ-ազգ. պատմութ.« էջ 339.

60.

Ք Ն Ա Ր Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն ^{1.)}

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1861-1863.
 Հրատարակուում էր՝
 Խմբագրութեամբ՝ Գ. Երանեանի եւ
 Տ. Զուխանեանի:



եղարուեստական պարբերական հրատարակութիւններ քիչ ենք ունեցել մեր մամուլի մէջ: Այժմ էլ ունինք մի հատ միայն գեղարուեստական մի վեցամսեայ հանդէս:

Կոստանդնուպոլսում՝ Տիգրան Զուխանեան եւ հանդուցեալ Գ. Երանեան միասին սկսեցին մի «Քնար Հայկական» անունով երաժշտական հանդէս հրատարակել 1861 թուականից, որ եւ իւր ժամանակին ունեցաւ ըստ իւր կարողութեան օգուտ գեղարուեստական ճաշակի զարգացման:

Այսպիսի ծրագրով թերթին ո՞վ է տալիս հրատարակութեան միջոց: Բաժանորդներ չունենալու պատճառով «Քնար Հայկական» ստիպուեցաւ դադարել, մինչեւ 1862-ի վերջերքը հազիւ հասնելով:

ԺԱՆՅՈՒԹՅԱՆՆԵՐ.

1.) Աղբիւրներ «Հայկական Քնարի»—

ա. ,,... Նմանապէս 1861—1862 թուերին Պոլսոյ մէջ... Քնար Հայկական՝ եւրասիական թերթը՝
,,Արձագանք՝ 1882. № 22. Ա. Եր.



61.

Կ Ի Թ Ա Ռ^{1.)}

ՀԱՆԳԻՍ ԱՄՍՈՐԵԱՑ

ՀՐԱՐԻՐ ՀՇԵՎԱԶՆ ՕՐԻՈՐԳԱՑ.

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1861-1862.
Հրատարակուում էր՝
Իմբագրուհի՝ Ե. Կ. Տ. Հայկուհի.



աթունական թուականների Կոստանդնուպոլիսի Հայ լրագրութեան լեզուի մէջ ուշագրութեան արժանի է «Կիթառ» ամսօրեայ Հանգէսը

որի անօրէն-խմբագրուհին էր Ե. Հայկուհի: Այս առաջին եւ վերջին օրինակն է մեր պարբերական մամուլի պատմութեան մէջ որ մի Հայ կին ձեռնամուխ է լինում մի Հանգիսի խմբագրական պատասխանատու գործին: (2.) Առաջինն էր եւ «Կիթառ» նրապատակը. ինչպէս գրում է տիկ. Հայկուհի

«Ասանկ օգտաւէտ նպատակաւ ձեռնարկութիւն մը որ առաջինն է ազգին մէջ յարատեւելու համար քաջալերութեան կարօտ է»: Հայ կանանց ու օրիորդաց զարգացում, աշխատասիրութիւն, դաստիարակութիւն, կրթութիւնն էր «Կիթառ» յարգելի հրատարակչու նպատակը: Սակայն այդատեւելու համար քաջալերութեան կարօտ էր «Կիթառ»: ձիշտ է քաջալերութիւններ եղան զանազան կողմերից, բայց միայն խօսքերով ու տառերով. նիւթական օժանդակութիւն չը տեսաւ «Կիթառ»: Եօթն համար միայն լոյս տեսաւ. ութներորդ համարը դեռ չէ գուրս եկել...

ԺԱՆՅՈՒԹՅԱՆՆԵՐ.

1.) Աղբիւրները եւ «Կիթառ».—


ա. ,,1861 երեւեցաւ 'ի Պոլիս Կիթառ... եւ կը կրէր Ե. Կ. Տ. Հայկուհի ստորագրութիւնը... Հայ ընտանեաց կրթութեան նուիրելով իւր աշխատասիրութիւնը...
,,Պատմ. հայ. դպրութ.՝ ք. էջ. 500.
բ. ,,... և մի տիկնոջ... խմբագրած ,,Կիթառ՝ հանդէսը որ գլխաւորապէս օրիորդների եւ առհասարակ իգական սեռի համար էր...
,,Արձագանք՝ 1882 № 22. Ա. Եր.
գ. ,,Կիթառ 1864 (՝)՝
,,Դաս. հայ-ազգ. պատմ.՝ ք. էջ 339.
դ. ,,Կիթառ 1861. հանդիսիս... հրատարակել էր Հայկուհի ստորագրութեամբ մի կին՝

,,Հայոց արդի մատեն.՝ (ձեռագիր),
2.) «Փարոս Հայաստանի» Մոսքուայի պատկերազարդ հանդիսին մի ժամանակ հրատարակուհի էր տիկ. Սոֆիա Մսերեանց. (տես լրագիր թիւ 115) Մենք այժմ աւելի շատ ունինք զարգացած տիկնայք եւ օրիորդներ. բայց նորանցից եւ ոչ մինի մտքիցն է անցնում մի այսպիսի գործի ձեռնարկութիւնը:





62.



ՀԱՆԳԻՏՈՒ ԿՐԾԱՄՈՒՅՆԱՑ
ՐԱՆՈՍԻՐՈՎՈՆ, ԱԶԳՈՅԻՆ, ԳՐՈՎՈՆ
ՎԻՊՈՎՈՆ (2.)

Զմիւռնիա (Տաճկաստ.) 1861—1865.
Հրատարակողու լուծ էր
Խմբագրութեամբ՝ Գ. Չիլինկիրեանի
եւ Ա. Հայկունու.
Ի տպարանի Տէտէյեան եղբարց.



եր գրականութեան
մէջ արդէն անուն
վաստակած, Թիւրք-
քիայում պ. Գ. Չի-
լինկիրեան որ յայտ-
նի է իւր բազմաթիւ
վէպերի թարգմա-
նութեամբ, 1861 թուականի
յուլիսի 1-ից փորձեց Զմիւռ-
նիայում մի տասնօրեայ

Հանդէս Հրատարակել «Ծաղիկ» անունով,
պարապելու այն խնդրով որը գրաւել էր
ընդհանուր Տաճկահայոց ուշագրութիւնը:

Ազգային Սահմանադրութիւնն էր այդ, որ
ամեն կողմ ուրախութիւն ու հրճուանք էր
պատճառում, որ ամենուրեք լսուում էր
ճառի, երգի, ծափի ձայներ: Օրուայ այս
խառնաշփոթ վիճակում դուրս եկաւ «Ծա-
ղիկը», մասնակից լինելու բոլորի ուրախու-
թեանը: «Զկայ ճշմարիտ ազգասէր մը որ
չը հրճուի. չկայ զգայուն սիրտ մը, որ ծափ
չը զարնէ մեռելատիպ ազգի մը կեանք տը-
ուող այս Հիմնադրութեան վրայ . . . » գրում
էր պ. Չիլինկիրեան: Բայց կարծես Զմիւռ-
նիայում բացի «Արշալոյսից եւ ոչ մի ու-
րիշին էր վիճակուած երկար ապրել, թէեւ
Չիլինկիրեանի չափ հաւասար աշխատում էր
գործի բարելաւութեան համար կոստան-
դնուպոլսեցի Արմենակ Հայկունին: Ինչ ինչ
հանգամանքներ պատեցին «Ծաղիկ» երկշաբա-
թաթերթի գլխին, որի թառամելը սպասե-
լի էր: 1861 թուականին Հայկունին դուրս
եկաւ խմբագրութիւնից՝ թէեւ հեռանալով
դարձեալ գրում էր «Ծաղիկին»:

1863 թուականի սկիզբներին քաղաք-
ժողովի ընտրութեան առթիւ, բողոքողնե-
րին իրաւունք տալով. սրբ. առաջնորդի
պատասխանատուութեամբ «Ծաղիկ» եօթն
ամիս դադար առաւ: Նոյն թուականի նոյ-
եմբերից նորից սկսեց Հրատարակուել:

1864 թուականի սկզբից տասնօրեայ
«Ծաղիկը» փոփոխուեց կիսամսեայ «Ծաղիկ»
բայց նոր փոփոխութեամբ մի տարին էլ
չը լրացրեց:

ԺՆՆՅԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Աղբիւրներ եւ «Ծաղիկ» Իզմիրի—
ա. «Ծաղիկ հանդէս բանասիրական ազգային
գրական, վեպական եւ այլն (երեք (') հա-
տոր) Զմիւռնիա տպ. Տէտէյեան եղբարց»
«Մատեն. հայկակ.» ք. էջ 285.
բ. « . . . եւ պ. Գ Չիլինկիրեանի խմբագրու-
թեամբ «Ծաղիկ» հանդէսը որ երկու
(') տարի շարունակուեց . . . »
«Արձագանք» 1882. № 22. Ա. Ե.

- գ. ,, ... Խմբագիրք՝ պոլսեցի Ա. Հայկունի եւ իզմիրցի Գր. Չիլինկերեան. Հայկունին 61-ին Պոլիս կերթայ... "
- ,,Յիշատակարան՝ իզմիրցի ձերմակեան.
- դ. ,, ... Յաւով եւ դառն զգացմամբ կը յայտնենք որ... Զմիւռնիայում ազնիւ ,,Մաղիկ՝ օրագիրը դադարել է... "
- ,,Հայկակ. աշխարհ.՝ 1868. Թիւ 1.
- ե. ,, ... յիշեալ ազգագուտ պարբերականին դադրումը կը ծանուցանէ, բայց ,,Մաղիկ՝ նման լուրջ թերթի մը... "
- ,,Մասիս՝ 1867. Թիւ 825.

2.) Ըստ ձերմակեանի ,,Հանդէս ազգային՝... րանաստիղծական եւ րանասիրական:

63.



ԼՐԱԳԻՐ ԿԻՍՍԱՄՈՆԱՑ

Մոսքոնա (Ռուսաստ.) 1861-1864.
 Հրատարակուող էր՝ շաբաթ օրերը.
 Խմբագիր եւ Տէր լրագրիս՝ Զ. Մսերեանց:
 Մոսք. Կայսեր. Համալս. տպարանում.
 Դիւրքը (թերթ) միածալ փոքրադիր 4 էջ երկսիւն. 26X36 Հ-մ.
 Թուղթը եւ տիպը՝ միջակ.
 Բաժանորդագրի ն տար. 6 րուբ. արծ.
 Լեզուն, ոճը՝ } ,,...Վասն զի նոյն կարգա-
 Ուղղագրութ. } տրուածինն պարզապէս ցու-
 ցանում է թէ եկեղեցական... "
 Ծրագրիւրը՝
 ԱԶԳԱՅԻՆ — Նամակներ, լուրեր, թղթակցութիւններ, եւ զանազան տեղեկութիւններ:
 ՔԱՂԱՔԱՅԻՆ — Քաղաքական լուրեր, նորանոր տեղեկութիւններ, պաշտօնական ազգիւրներէ քաղուած:
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Յօդուածներ ճանապարհորդական, տեղագրական, վէպիկներ, պատկերներ նամականիք:

- Նորատիպ մատենաք — Գրախօսութիւն նոր լոյս տեսած Հայերէն զանազան գրքերի. Բովանդակութիւն 1864. № 68.-ի.
- Խաչատուր Յով. Լազարեանի 10,000. ր. նուէրը ձեմարանում երկու որդեգիր պահելու համար Թագաւոր Կայսրի հաստատութիւնը.
- Երեւանի Հայոց հոգեւոր դպրոցի նախկին եւ այժմեան դրութեան վերայ — «Մեղ. Հայ.»
- Ս. Երուսաղէմէն յունիսի 16 ամսաթուով հետեւալ եղելութիւնը կը ծանուցանեն: — «Արշ.»
- Սարգիս էֆ. Աղաբէկեանի Կ. Պոլսում եկեղեցեաց եւ դպրոցաց այցելութիւնը — «Մասիս»
- Մայրաքաղաքիս ծուռնալ լրագրին յուլիս 20 թուոյն մէջ հետեւեալը կը կարգանք. — «Մասիս»:
- Ստորագրութիւն Սշական գեղջ եւ նորաբաց դպրոցին՝ յանուն սրբոյն Մեսրոպ պայ. յօդ. դ. (վերջ.) Մեսրոպ վարդապ. Սմբատեանց:
- «Նորատ. Մատ...» — Յովսէփայ Վերդի «Տրովազոր» վերնագրով ողբերգութեան հայ թարգմանութիւնը:
- Վրիպակ.
 (Յայտարար.) Վաճառելի մատենաք ՚ի խրմբագրատան «Համբաւաբերի»:



արոն Զարմայր Մսերեան՝ թերթիս խրմբագիր եւ տէր, «Ճաքաղի» խրմբագրութեան գործը իւր հօր՝ մագիստրոս Մսերին թողնելով, 1861 թուական

նի օգոստոս ամսից սկսեց նոյն քաղաքում եւ նոյն տպարանում հրատարակել «Համբաւաբեր Ռուսիոյ» անունով մի երկշաբաթաթերթ: Տասն եւ հինգ սր սպասել եւ մի փոքրը թերթիկ հրատարակել աղքատ բովանդակութեամբ այն էլ Մոսքուայի պէս տեղում այնքան էլ մեծ գործ չէր. այնուամենայնիւ չը կարողացաւ յաջողութիւն ունենալ ստորագրողներ չունենալու պատճառով:

«Համբաւաբերն» իսկապէս կարելի է ասել որ հետաքրքրական եւ թարմ նիւթեր չէր տալիս. չունէր սեփական թղթակիցներ, չունէր լրատուներ, կանոնաւոր աշխատակիցներ: Այլ չոր ու ցամաք արդէն մի քանի տեղերում տպուած յօդուածներ ու լուրեր էր արտատպուում այս կամ այն լրագիրներէից: Բացառութիւն էին կազմում այժմ սրբ. Սմբատեան Մեսրոպայ արքեպիսկոպոսի երբեմն տպուող յօդուածները, որոնք կարգացուում էին մեծ հետաքրքրութեամբ:

«Համբաւաբերի» ճակատը զարգարուած էր մի գեղեցիկ նկարով որ հետեւեալն էր ներկայացնում: Երեւում է երկրագնտի մի մասը որի վերայից թռչում է մի հրեշտակ, աջ ձեռքում բռնած փողը որ ածում է եւ ձախ ձեռքով «Համբաւաբերն» է բռնած: Հորիզոնի աջ կողմից երեւում է արեւը կիսով չափ որի դէպի վերեւ սփռուած ճառագայթները մէջ պարզ կարգացուում է «Համբաւաբեր Ռուսիոյ» Այս ամսագիրը ըսկսուելով օգոստոս ամսից իւր տարեշրջանը լրացնում էր օգոստոս ամիսներին: Վերջացաւ 1864 թուականի օգոստոսը, եւ «Համբաւաբերը» սկզբից մինչեւ այդ օրը 70-ից աւելի համարներ տալով դադարուեց:

Թ Ա Ն Յ Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր աղբիւրները եւ «Ռուսիայի Համբաւաբերը»:—

ա. „1861-ին լրջ տեսաւ „Համբաւաբեր Ռուսիոյ“ կոչուած երկամսեայ (‘) թերթն ալ՝ իրենց (Մտերեանների) աշխատասիրութեանը արգելեք էր... հրատարակելով քաղաքական ազգային բանասիրական լուրեր հաղորդող ընտիր օրագիր մը որ շարունակեց մինչեւ 'ի 1864...“

„Պատմ. հայ. դպրութ.“ ք. էջ 495.

բ. „... Բացի այս ամսագիրներից ու լրագիրներից 1864—1869 տարիների միջոցում մեր լրագրութեան մէջ յայտնուում են նոր պարբերական հրատարակութիւններ — Մոսքուայում երեւում է „Համբաւաբեր Ռուսիոյ“ ... Ինչ կարող եմ ասել վերեւ յիշած միւս լրագիրների ու ամսագիրների „Հիւսիսի“ Հ ա մ Բ աւ ա Բ Ե Ի՝ եւ ուրիշ օրանց նման պոչաւոր աստղերի մասին, որոնց գոյութեան ժամանակամիջոցը կամ վեց ամիս էր կամ մի տարի եւ կամ շատ շատ տարի ու կէս...“

„Հայոց մամուլը Ռուս.“ էջ 58, 67.

գ. „1861 թուին մինչ Ռուսաստանի հայոց հրատարակութեանցը աւելացաւ միայն Մոսքուայում պ. Զ. Մտերեանի ձեռքով խմբագրած „Համբաւաբեր Ռուսիոյ“ թերթը...“

„Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.

դ. „... 60-ական թուականներին... բացի գոցանից իրեւացին նոր հրատարակութիւններ ինչպէս են՝ „Համբաւաբերը“ Մոսքուայում“

„Մտքի մշակը“ Խ. Մալում. էջ. 30.

ե. „Նազարեանցի „Հիւսիսափայլը“ վերջնական կերպով դադարում է ստորագրուող չունենալու համար, սրան նոյն պատճառով հետեւում է եւ Զարմայր Մտերեանցի „Ռուսիոյ Համբաւաբերը...“

„Նիւթեր հայ. պատ. համ.“ Ա. էջ. 61

Տէր Մեսրոպեան, Գալիսիամաճեան, Արտիւր պ. Լայոզ եւ այլք ոչինչ բան չեն յիշել „Համբաւաբերի“ մասին. Պ. Յարոյ որ իւր ատետիւնը կազմել է աւելի շուտ քան այժմ, (1878.) համեմատաբար պէտք է որ անսխալ լինէր մանաւանդ որ իւր հայեացքը եղել է միայն Ռուսաստանի հայոց մամուլը, բայց „Համբաւաբերի“ սկիզբնական տարին հաշուում է ոչ շուտ քան 1864. եւ տեւումը գրում է որ եղել է „շատ շատ տարի ու կէս...“

64.

ՊԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ^{1.)}

ՀԱՆԴԻՍ ԿԻՍՍԱՄԱՆՈՑ

ՐԱՐՈՒՆԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԲՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ
ՈՒՅԻՏՐԱԿԱՆ.

Ձ մ ի լ ա ն ի ա (Տաճ.) 1862-1863.

Հրատարակուող էր՝
Խմբագրութեամբ՝ Գ. Պարտիզպանեանի եւ Տ. Գարագաշեանի.
Ի Տպարանի Տէտէյեան եղբարց...
Բաժանորդագինը տարեկան 12 Փր.



ը խրատուելով կարծես Ձմիւռնիայում վերջերքս մի քանի ծրլող եւ շուտ չորացող լրագիրներից՝ Հետըզհետէ նոր հրատարակութիւններ գուրսեկան, որոնցից մինն էր 1862 թուականի փետրուարի սկզբից նոյն քաղաքում պ. պ. Գր. Պարտիզպանեանի եւ Տ. Գարագաշեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Պարուն Հայաստանի» կիսամսեայ հանդէսը:

Մի պարբերական հրատարակութեան զանազան գեղեցիկ անուններ կնքելը հեշտ է. դժուար է նորան տեւողութիւն տալը եւ վերջում չամաչելը:

Կարճ միջոցում պ. Գարագաշ Հեռացալ խմբագրական գործից: Պարտիզպանեան չը կարողացաւ «Հայաստանի Պարունը» դար-

նան պէս թարմ պահել: Ինն ամիս միայն տեւողութիւն ունենալով, նոյն տարուայ հոկտեմբեր ամսի վերջերին գաղարեցնել տուին «Պարուն Հայաստանի» իզմիրցի երկշաբաթաթերթին:

ԺՆՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) «Պարուն Հայաստանի» եւ մեր աղբիւրները—

- ա. «Պարուն Հայաստանի նոյն տեղում (Ձմիւռնիայում) եւ նոյն (1861) թուականին» «Հայոց արդի մատեն. (ձեռագիր.)»
- բ. «Պարուն Հայաստանի 1862 Ձմիւռնիա Գ. Պարտիզպան.»
- «Իաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 338.
- գ. «... ասոնց վրայ երրորդ մալ աւելացաւ «Պարուն Հայաստանի» անունը կրելով: Սակայն հրատարակողաց եռանդեանն համեմատ չէր...»
- «Պատմ. հայ. դպրութ.» բ. էջ 499.
- դ. «... Իսկ Ձմիւռնիայի մէջ երեւան եկան պ. Գ. Պարտիզպանեանի ձեռքով «Պարուն Հայաստանի» կիսամսեայ թերթը.»
- «Արձագանք» 1882. № 22. Ա. Եր.
- ե. «Պարուն Հայաստանի» հանդէս ամսօրեայ (՞) Ձմիւռնիա ի տպ. Տէտէյեան եղբ.»
- «Մատեն. հայկակ.» Զարբ. էջ 127.
- զ. «... Գարագաշեան քիչ յետոյ հրատարակուող տուաւ. («Պարուն Հայաստանի») կը դադարի զօրաւոր ազգեցութեան մը հպատակելով...»
- «Յիշատակարան» Իզմիրց. ձերմ. (ձեռ.)

65.

ԱՓԵՂՑՓԵՂ^{1.)}

ՁԱԻՆՏՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

Ձ մ ի լ ա ն ի ա (Տաճկաստ.) 1862-1862.
Հրատարակուող էր՝
Խմբագիր՝ Տէտէյեան.



աճկահայ մեր հայ եղբայրներն էլ քնն տարօրինակ անուն ասես որ չեն տուել իւրեանց լրագիրներին: Զանազան անձինք երբ իւրեանց մի գրուածքը չէր տպագրուում լրագիրներում, դորանից ստիպուած իւրեանք էլ սկսում էին մի պարբերաթերթ հրատարակել: «Ափեղցփեղ» գաւեշտական հանդէսն էլ դորանցից մինն է եղել որ միայն երկու համար հրատարակուելով դադարուել է:

Ժ Ա Ն Ս Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր աղբիւրներից «Ափեղցփեղի» մասին գրել է միայն պ. Երիցեան:

ա. «... Նշանաւոր էր այն իրողութիւնը որ յիշեալ 1862 թուին Զմիւռնիայի մէջ յանկարծ երեւեցան... երգիծարան եւ ծաղրածու թերթեր՝ «Ափեղցփեղ» պ. Տէտէեանի խմբագրութեամբ...»
 «Արձագանք» 1882 № 22. Ա. Ե.

66.

Դ Ի Մ Ա Կ ^{1.)}

ՐԱՆՍԻՐԱԿՈՆ ԵՒ ԶԱՆՅՈՑՆԵՐ

Զմիւռնիա (Տաճկաստ.) 1862—1863.
 Հրատարակուում էր
 Խմբագրութեամբ՝ Կարապետ Տէտէյեանի



Իսաբանասիրական ու կիսագաւեշտական մի թերթ էր պ. Կ. Տէտէյեանի ձեռքով 1862 թուականի յուլիսից Զմիւռնիայում հրատարակուող «Իմակ» թերթը: Պ. խմբագիրը «Իմակը» քաջած երեսին, իւր գաւեշտախօսական յօդուածներով ու կիսակծու կատակներով շատ անգամ դիպչում էր ու վիրաւորում տեղացի ազգայիններից շատերին: «Իմակ» թերթը ընդամենը 26 համար հրատարակուելով դադարելու բախտին արժանացաւ:

Ժ Ա Ն Ս Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Աղբիւրներ եւ «Իմակ»

- ա. «Իմակ» 1862 Կարապետ Տէտէյեան «Յիշատակ» իզմիրցի ձեռմակ. (ձեռ.)
- բ. «Իմակ կէս գաւեշտական եւ կէս բանասիրական խմբ. Տէտէյեան»
 «Հայոց արդի մատեն» (ձեռագ.)
- գ. «Իմակ» 1862 Զմիւռնիա «Տէտէյեան»
 «Իաս. հայ-ազգ. պատմ.» էջ 338.
- դ. «Իմակ» զարձեալ պ. Տէտէյեանի ձեռք.
 «Արձագանք» 1882. № 22. Ա. Եր
- ե. «Իմակ... խմբագրութեամբ Ա. (՝) Կ. Տէտէյեան: Թերթ մը միայն տեսած եմք անկէ. աւելի ապրելու ուժ չունենալը կը համարիմք...»
 «Պատմ. հայ. դպրութ.» բ. էջ 499.

67.

Յ Ա Ի Ե Ր Ժ Ա Յ Ա Ր Ս ^{1.)}

Կ Ի Մ Ա Մ Ս Ե Ա Ց

ՐԱՆՍԻՐԱԿՈՆ ԵՒ ԿԻՏԱԹԵՆՑ

Զմիւռնիա (Տաճկաստ.) 1862-1862.

Հրատարակուում էր՝
Հրատարակիչ՝ Սարգիս Փափազեան. 2.)



եղեցիկ անուն էր ընտ-
րել իւր երկշաբա-
թաթերթի համար
պ. Փափազեան: Իզ-
միրում իւր ժամա-
նակին պէտք է ասել
որ բաւականին նպա-
տակայարմար գոր-

ծեր արաւ«Յաւերժահարս»: Նպատակն էր ըն-
թերցանութիւն տարածել հայ ընտանիքնե-
րում. կար, ձեւ, արուեստ, գիտութիւն եւ
այլ զուարճալի խաղեր ու յօգուածներ ու-
սուցանել: Բայց աւելի լաւ տարածելու հա-
մար իւր թերթը, խմբագիր Փափազեան դի-
մեց զանազան միջոցների՝ ինչպէս գրում է պ.
Երիցեան: Օրինակ՝ գրում էր քաղաքի մէջ այդ
կիսամսեակում ո՞վ ում հետ պսակուեց, ո՞ւմ
կինը ամուսնութիւնից ինչքան միջոց ան-
ցած զաւակ ծնեց, կամ ծնածը արո՞ւ էր
թէ էգ: Քաղաքացիք անպատշաճ համարե-
լով այդպիսի մի վարմունք որ ընտանեկան
ամեն մի գաղտնիքներ հրապարակ էր հա-
նում պ. Փափազեան, աշխատում էին մի-
ջոցներ ձեռք առնել այս «գիտութեանց եւ
արուեստից» երկշաբաթաթերթին դադարեց-
նել տալ: Աղջիկ ունեցող կանայք էլ ընդ-
հանուր բողոք բարձրացնելով դադարեցրին
«Յաւերժահարսին»: որի կեանքը տեւեց ըն-
դամենը վեց ամիս:

ԺԱՆԳԻՄ ՔԱՏԵՐՈՒԿԱՆ.

1.) «Յաւերժահարսի» նկատմամբ մեր ազ-
բիւրները—

- ա. «Յաւերժահարս 1862 Ձմիւռն. Ս. Փափազ.»
"Իսս. հայ-ազգ. պատմ." ք. էջ 340
 - բ. «Յաւերժահարս Ձմիւռնիս Սարգիս Փա-
փազեան 1861(")"
"Հայոց արդի մատենագր." (ձեռագ.)
 - գ. «Անկէ քիչ յետքը Յաւերժահարսն սկսաւ
հրատարակուիլ նոյն քաղաքին մէջ խըմ-
բագրութեամբ Սարգսի Փափազեան»
"Պատմ. հայ դարութ." ք. էջ 499.
 - դ. «Յաւերժահարս կիսամսեայ . . . արուեստից
եւ գիտութեանց նորելուկի եւ զուարճալ-
եաց կը տեւէ 6 ամիս . . . 1862»
"Յիշատակարան" իզմիր. ձեռմ. (ձեռ.)
 - ե. «. . . եւ «Յաւերժահարս» պ. Ստեփան-
նոս (") Փափազեանի ձեռքով քանի մի
համար . . . իբրեւ թէ ընտանեկան ընթեր-
ցանութեան համար էր, բայց եւ դորա
դադարման պատճառը Ձմիւռնիայի հայ
ընտանեկան բողոքն եղաւ . . .»
"Արձագանք" 1882. № 22. Ա. Եր.
- 2.) Փափազեան կեղծ անուն էր իսկական ազգա-
նունն էր՝ Տէր-Վարապետեան:

68.

ՄՈՒՍԱՅՔ ՄԱՍԵԱՑ^{1.)}

ՀԱՆԳԻՄ ՔԱՏԵՐՈՒԿԱՆ

(Ամսագիր)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1862-1862.
Հրատարակուում էր՝
Խմբագիր՝ Արմենակ Հայկունի.
«Համազգային տպարան»

Մեղաւոր չեն մեր աղբիւրներից մի
քանիսը որոնք սխալմամբ այս «Մուսայք
Մասեաց» հանդէսը որ սկսուեց եւ վեր-
ջացաւ—1862 թուականին Արմենակ Հայ-
կունու ձեռքով՝ շփոթում են մօտ հինգ
տարի առաջ համանուն մի այլ պարբերա-
կանի հետ որ հրատարակուում էր Ա. Նիզ-
մէճեանի խմբագրութեամբ: Մեղաւոր չեն

ասում ենք որովհետեւ յիշեալ երկու հանդէսների բացի անուան մի օրինակ լինելուց միանման են եւ նպատակները կամ ծրագիրները այսինքն «Թատրոնական»: Նախորդի նման Հայկունու «Մուսայք Մասեացն» էլ կարճատեւ եղաւ 4 համար միայն հրատարակուեց:

Թ Ա Ն Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Աղբիւրներ «Մուսայք Մասեաց» Հայկունու հանդէսի:
 - ա. «... 1862 թուին կարճ օրուայ համար սկսուեցան եւ մեծ մասամբ նոյն տարին հանգան հետեւեալ թերթերը, Պոլսոյ մէջ «Մուսայք Մասեաց» հանգուցեալ Արմենակ Հայկունոյ խմբագրած. Թատր. հանդէս»
 - բ. «Արձազանք» 1882. № 22. Ա. Ե.
 - գ. «Մուսայք Մասեաց» ձայն ընկերասիրական, լրագիր Կ. Պոլսի 1863 ()
 - դ. «Մատեն. հայկակ» Զարբ. էջ 438.
 - ե. «Մուսայք Մասեաց 1857 ()—62 Պոլսի Ա. Հայկունու»
 - զ. «Իսս. Հայ-ազգ. պատմ.» էջ 340.
 - է. «Մուսայք Մասեաց» երկու առանձին թերթերը միմեանց հետ շփոթողը վերջին երկու աղբիւրներն են:

69.

Վ Ա Ր Դ

ՄԵՍՐՈՎՊԵԱՆ^{1.)}

Հ Ա Ն Կ Է Ս Ա Ր Ո Ւ Բ Ե Ն

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1862-1862.
Հրատարակուում էր՝
Խմբագրող թեամբ՝ Ս. Բարսեղեանի եւ
Թ. Պէռեանցի:



րկու բարեկամներ՝ Ս. Բարսեղեան եւ Թ. Պէռեանց չը կամենալով լրագրական այդ բազմաձևութեան միջոցներում պարապ մնալ, իւրեանք էլ սկսեցին

1862 թուականից հրատարակել մի ամսօրեայ հանդէս՝ «Վարդ Մեսրոպեան» անունը տալով նորան: Չը նայելով որ մէկի տեղ երկուս էին ամսագրիս խմբագիրները այնուամենայնիւ չը կարողացան մի տարի գոնէ ապրեցնել իւրեանց լրագիրը, որ մի տարին այդ ժամանակուայ լրագիրների համար այնքան կեանք էր ինչքան այժմ ասոր տարին: Վարդի պէս շուտով թառամեցաւ «Վարդ» ամսագիրը:

Թ Ա Ն Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Աղբիւրներ եւ «Վարդ Մեսրոպեան» —
 - ա. «1862 թուին կարճ օրուայ համար ըսկսուեցաւ «Վարդ Մեսրոպեան» անունով թերթիկը Ս. Բարսեղեանի եւ Թ. Պէռեանցի ձեռքով . . . »
 - բ. «Արձազանք» 1882. № 22. Ա. Ե.
 - գ. «Վարդ 1862 Պոլսի Թ. Պէռեանց»
 - դ. «Իսս. Հայ-ազգ. պատմ.» բ. էջ 340.

70.

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն

ԵՐԱԺԺՏՈՒԹԻՒՆ^{1.)}

(Ամսագիր)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1863-1863.

Հրատարակուում էր՝
Խմբագրուած էամբ Տ. Չուխաճեանի եւ
Վ. Փափազեանի 2.)



ուխաճեան պ. Տիգրան իւր «Քնար Հայկական» թերթի դարումից չը յուսահատուելով հետեւեալ 1863 թուականին միանալով Վ. Փափազեանի հետ, սկսեց «Օսմանեան Երաժշտութիւն» անունով ամսաթերթ հրատարակել, որ գարձեալ անյաջողութիւնների զոհ գնալով կարճ ժամանակում դադարեց: Հարկաւոր է ասել որ այս թերթը հրատարակուում էր հայտաճկերէն լեզուներով:

ԺՆՅՈՒԹՈՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Օսմանեան Երաժշտութիւն»—
ա. „... Ինչպէս եւ կիսահայերէն կիսատաճկերէն „Օսմանեան Երաժշտութիւն“ ... ամսագիրը որ սկսուեց Վ. Պոլսում ... “
„Արձագանք“ 1882. № 22. Ա. Ե.
- 2.) Չը շփոթել պ. Վրթանէս Փափազեանի հետ, որ այժմ արտասահմանում ուսանում է:



71.

ՁԱՅՆ ԸՆԿԵՐԱՍԻՐԱԿԱՆ^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1863-1863.

Հրատարակուում էր՝
Խմբագիր՝ Արմենակ Հայկունի.



որոպ հանգուցեալ Արմ. Հայկունին, Թիւրքիայում հայոց մէջ երբեմն յայտնի գործող, թողնելով իւր մի քանի մանր գործերը՝ 60-ական թրուականների սկիզբներում երբ ամբողջ ազգն ու մամուլը Սահմանադրութեան խնդրով էին զբաղուած, 1863-ին բարձրացրեց իւր «Ընկերասիրական Զայնը» ցանկանալով «առ ամենայն հայս» տարածել իւր սկզբունքները: Բայց որքան մեծ դժբախտութիւն որ մի-երկու համար հազիւ դուրս գալով հակառակորդների յարձակումներից բնաջինջ եղաւ ու իսպառ կրտուկեցաւ խեղճ Հայկունու «Զայնը»: Մի քանի օրուայ կեանքով «Զայն Ընկերասիրականը» անյայտ է մնացել մեր աղբիւրներից:

ԺՆՅՈՒԹՈՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներս եւ «Զայնը»—
ա. „Զայն Ընկերասիրական, լրագիր. խմբագիր պ. Ա. Հայկունի. Պոլիս 1863“
„Մասեն. հայկակ.“ Զարբ. էջ 468.
Այլ եւս ոչ մի աղբիւր սորա մասին:

72.

ՋԵՓԻՌ ՀԱՅՐԵՆԵԱՑ^{1.)}

ՀԱՆՆԻՍ ՏԱՍԵՕՐԵԱՑ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1863-1863

Հրատարակուում էր ամսի 1, 15, 30-ին.
Խմբագիր՝ Մ. Գափամաճեան.
Ի տպարանի Միւհէնտիսեան.



Ըրերը համարուած էին կարծես իւր ժամանա-րակից հայ լրագիրնե-կի պէս պ. Գափամաճեանի «Զեփիւռ Հայրե-նեաց» տասնօրեայ հանդիսի, որ սկսուեց Կոստանդնուպոլսում

1863 թուականին: Կողմնակի ազահ խորշո-կը յաղթեց, վայր ձգեց «Հայրենեաց Զեփիւ-ռին» որը այլեւս վեր չը կացաւ:

Թ Ա Ն Ս Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Աղբիւրներ—

- ա. „Զեփիւռ Հայրենեաց հանդէս տասնօրեայ Կ. Պոլիս. ի տպ. Միւհէնտիսեան. . .“
- „Մատենագ. Հայկակ.“ Զարբ. էջ 195.
- բ. „ . . . եւ վերջապէս պ. Գափամաճեանի խմբագրութեամբ՝ „Զեփիւռ Հայրենեաց“ հանդէսը. . .“
- „Արձագանք“ 1882. № 22 Ա. Եր.
- գ. „Զեփիւռ Հայրենեաց“ 1862 (՝) Պոլիս Գափամաճեանի
- „Իսս. հայ-ազգ. պատմ.“ էջ 338.

73.

Թ Ո Ւ Չ Ն Ի Կ Պ Ի Գ Ա Ս Ե Ա Ն ^{1.)}

Լ Ր Ա Գ Ի Ր Հ Ն Գ Ե Տ Ա Ս Ս Ե Ն Օ Ր Ե Ա Յ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1863-1863
Հրատարակուում էր ամսի 1, 15-ին.

Խմբագիր Գրիգոր Ալէաթճեան.



Ալէաթճեան եպիսկոպոս գերապատիւ Գրիգորիս իւր աշխարհական ժամանակ, 1863 թը-ուականին, Կոստանդ-նուպոլսում մի երկշա-բաթաթերթ հրատա-րակելու փորձ արեց

ուսումնական — բարոյական բովանդակու-թեամբ՝ «Թռչնիկ Պիգասեան» անունով: Այն վարակիչ ախտը որ մահացուցիչ դարձաւ «Թռչնիկի»ց առաջ հրատարակուած շատ լրագիրների, կարծես վիճակուած էր դիպ-չելու եւ հայր Ալէաթճեանի հանդէսին, որ մի քանի տետրակներ միայն լոյս տեսնելով նոյն ասարին դադարեց:

Թ Ա Ն Ս Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1) Մեր աղբիւրները եւ «Թռչնիկ Պիգասեան»

- ա. „Թռչնիկ Պիգասեան“ լրագիր հնգետա-սանօրեայ, խմբագիր Գրիգոր Ալէաթճեան Կ. Պոլիս 1860“
- „Մատեն. հայկ.“ Զարբ. էջ 218.
- բ. „ . . . Տաճկաստանի մայրաքաղաքում այդ (1863) թուականին երեւեցան՝ պ. Գրիգ. Ալէաթճեանի խմբագրութեամբ „Թռչնիկ Պիգասեան“ որ մի քանի համար տալով դադարեց. . .“
- „Արձագանք“ 1882. № 22 Ա. Եր.
- գ. „Թռչնիկ Պիգասեան 1863 Պոլիս Գ. Ալէ-աթճեան . . .“
- „Իսս. հայ-ազգ. պատմ.“ էջ 339.



74.

ՎԱՐԴ ԿԵՍԱՐԻՈՅ^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1863-1863
Հրատարակուում էր՝
Խմբագիր՝ Մարտիրոս քահանայ Նիկո-
ղոսեան:



Եսարիացի քահանայ
Տէր Մարտիրոս Նի-
կողոսեան Կոստան-
դնուպոլսում 60-ա-
կան թուականների
սկիզբներին լրագիր-
ների աճումը տես-
նելով, ինքն էլ 1863

թուականին սկսեց հրատարակել «Վարդ Կե-
սարիոյ» հանդէսը, որ կարճ ժամանակում
գաղարուեց:

ԹՆՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Վարդ Կեսարիոյ».—
ա. . . Մարտիրոս ք. Նիկողոսեանի ձեռքով
„Վարդ Կեսարիոյ“ սակաւօրեայ թերթը“
„Արձագանք“ 1882. № 22 Ա. Ե.
բ. „Վարդ Կեսարիոյ օրագիր“
„Մատեն. հայկակ.“ Զարբ. էջ 643.
գ. „Վարդ Կեսարիոյ 1863 Պոլիս Մարտիրոս“
„Իսա. հայ-ազգ. պատմ.“ էջ 340.



75.

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ^{1.)}

ՀԱՆԳԻԾ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԵՐ

(Կիսամսեայ)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1863-1864
Հրատարակուում էր ամսի 1,15-ին.
Տնօրէն-խմբագիր՝ Ստեփան Պ. Պերճ
Փափազեան:



րեք տասնեակ տարի ա-
ռաջ, Կոստանդնու-
պոլսում ժամանա-
կակից ազգային ջո-
ջերից մէկը՝ ազգային
երեսփոխան Ստե-
փան էֆ. Փափազ-
եան 1862 թուակա-

նի վերջերում յայտարարեց որ «Ժամանակ»
անունով մի շաբաթաթերթ է հրատարակե-
լու: Պ. Փափազեան հարկաւոր եղածի չափ
ստորագրուողներ չունենալու պատճառով
մտադրուած շաբաթաթերթը առժամանակ
հրատարակել սկսեց ամիսն երկու անգամ
որպէս կիսամսեայ հրատարակութիւն: «Ժա-
մանակի» էջերը լցուում էին ժամանակա-
կից նշանաւոր խնդիրներով եւ լուրջ հար-
ցերով: Նորագոյն պատմութիւն, քննական
յօդուածներ էլ տեղաւորուում էին հանդի-
սիս մէջ:

Հայրենասիրէր «Ժամանակը» իւրեանից

անկախ պատճառներով ստիպուեց դադարել:

ԻՆՏԵՐՆԱԿԱՆՆԵՐ.

1.) «Ժամանակ» Հանդէսը եւ մեր աղբիւրները—

ա. „... Ս. Փափազեանի ձեռքով „Ժամանակ“ շաբաթաթերթը որ մի քանի (‘) տարի շարունակուեց...“

„Արձագանք“ 1882. N: 22 Ա. Եր.

բ. „... 1863-ին (Փափազեան) „Ժամանակ“ անունով Հանդէս մը հրատարակեց եւ բաւական սեւեց, ինչպէս որ սովորութիւն է սուժեի ամեն անոնց, որք... Թղթի մը տակ խճագի կը ստորագրեն...“

„Ազգային ջոջեր“ բ. տպ. էջ 196.

գ. „Տարուան մը կեանք ունեցած է նաեւ „Ժամանակ“ կոչուած Հանդէսը, զոր 'ի Պոլիս կը հրատարակէր Ս. Փափազեան...“

„Պատմ. հայ. դպր.“ բ. էջ 500.

դ. „Ժամանակ“ Հանդէս հայրենանուէր խմբագիր Ստեփան Պ. Փափազեան Կ. Պոլիս 1863—1868 (“).“

„Մատեն. հայկ.“ Զարբ. էջ 239

ե. „Ժամանակ 1863 Պոլիս Ս. Փափազեան“ „Իաս. հայ. ազգ. պատմ.“ էջ 339



76.

Հ Ի Ի Ս Ի Ս^(1.)

ԲԱԶՄԱՎԷՊ ԼՐԱԳԻՐ

(Շաբաթաթերթ)

Ս. Պետերբուրգ (Իռւս.) 1863-1864. Հրատարակուում էր շաբաթ օրերը. Հրատարակիչ՝ Ռաֆայել Պատկանեան: Սեփական տպարան. Դիրքը (թերթ) քառաձալ 8 էջ մեծագիր.



այոց մէջ մեծ բանաստեղծ Հանգուցեալ Ռաֆայել Պատկանեան՝ Ս. Պետերբուրգում 1863 թուականի սեպտեմբերի կիսից սկսեց հրատարակել «Հիւսիս»

շաբաթաթերթը: Պատկանեան իւր նպատակը եւ ուղղութիւնը յայտնեց «Հիւսիսի» առաջին թերթում տպուած «Մի քանի խօսք լրագիր հրատարակելու մասին» խորագրով յօդուածի մէջ: Մի մարդ ամեն կողմով չի կարող փայլել. որքան մեծ ու գովելի հրուշակ ունեցաւ Պատկանեան բնաստեղծութեան մէջ, այնքան աննշան ու անյայտ մնաց խրմբագրական գործում: Կոստանդնուպոլիսի 60-ական թուականների լրագիրների վարակիչ հիւանդութեան զոհ գնաց Ռուսաց մայրաքաղաքի մեր առաջին Հանդէս «Հիւսիսը»: Մի տարուայ գոյութեամբ կարող է պարծենալ «Հիւսիս» Թիւրքիոյ մի քանի օր հրատարակուող լրագիրների առաջ:

«Հիւսիս»ին բացի հրատարակչից աշխատակցում էին ծերունի Տէր Գաբրիել Պատկանեանը՝ խմբագրի հայրը: «Վարդան», «Էէ-հաստանի հայերի թշուառութիւնները» եւ այլն յօդուածները տէր հօր գրչի արգիւնքներն էին: Օր. Օլգա Ամեդի որ փոխադրում, թարգմանում էր յօդուածներ Բայրընից Լանգլուուայից եւ այլ Եւրոպական յայտնի հեղինակներից: Իսկ մեր մեծ բանաստեղծի աշխատութիւններից «Հիւսիսի» մէջ տպուած յիշենք Քարգանական՝ «Ծովաշրջիկ Սինդբադի եօթն ճանապարհորդութիւնները» որ յետոյ առանձին գրքով կով լոյս տեսաւ: Ինչուորոշ գրուածներից նշանաւոր են «Յ. Ալամգարեան» (անկատար) «Խոյցիք» «Աստրախանայ

Հայեր» եւ այլն:

Ի ԱՆՍԻՄԻՍԻՆՆԵՐ.

1.) Թերթի վերայ չէր նշանակուում տարե-
թիւը ոչ ամիսը եւ ոչ օրը:

Մեր աղբիւրները «Հիւսիսի» մասին:

ա. «... 1864(°)—1869 տարիների միջոցում
մեր լրագրութեան մէջ յայտնուում են նոր
պարբերական հրատարակութիւններ...
Պետերբուրգում— «Հիւսիս» ինչպէս տես-
նում էք առանց փայլի(°)...

«Հայոց մամուլը Ռուս.՝ Յարոյ էջ 68.

բ. «... Գամառ-Քաթիկան խմբագրում էր «Հիւ-
սիս» շաբաթաթերթը, բայց սա էլ տա-
րին չէ լրացրեց...»

«Արձագանք 1882. № 22. Ա. կր.

գ. «... երեւացին նոր հրատարակութիւններ,
ինչպէս են... «Հիւսիս» Պետերբուրգում...»
«Մտքի մշակը» Խ. Մալում. էջ 30

դ. «Մեր Գամառ-Քաթիկան որ 1864 (°)
Թուականից սկսած հրատարակում էր
«Հիւսիս» անունով շաբաթաթերթը եւ
շարունակ լոյս էր ընծայում իր եւ իր տիկ-
նոջ գրաւոր աշխատութիւնները...»

«Նիւթեր հայ. պատմ. համար» Ա. էջ 60

ե. «... յետ օրոյ 1866—68 (°) սկսաւ «Հիւ-
սիս» անունով շաբաթաթերթ մի հրա-
տարակել, որ երկու (°) տարի անգամ չէ
տեւեց նիւթական միջոցներ չունենալու
պատճառաւ հարկադրեցաւ դադարեցնել
ու (ինքը) Նախիջիւան վերադառնալ...»

«Օրացոյց» 1893 Ռուստ. Յ. Տ. Արք. էջ 123

զ. «Պետերբուրգում Ռ. Պատկանեանի խմբ-
ագրութեամբ հրատարակուում էր «Հիւ-
սիս»...»

«Հայկ. մատեն.» I, յտ. II. էջ 150.

[«... Sräter entstanden in Petersburg un-
ter der Leitung von Raphael Patkanian,
der „Hülssis“

«Arm. Bibl.» II. էջ 153.



76.

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԱԾԽԱՐՀ^{1.)}

ԲՆԵՎՈՎՈՐԹԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՕՐԱԿԻՐ²⁾

(Ամսագիր)

Բ ա գ ու լ (Ռուսաստան) 1864-1878

Հրատարակուում էր՝ ամսի վերջերին.
Խմբագրող հրատարակող՝ Խորէն վար-
դապետ Ստեփանէ. 3)

Տպարան Մարդասիրական Ընկերութեան
Դիւրքը (տետր) մօտ 2 թերթ տպ. 54 էջ
15X22 հ.-մ. 5.)

Թ ու ղ թ ը եւ տիպը՝ մաքուր 6.)

Բ ա ժ ա ն ո ղ ա գ ի ն ը՝ տարեկան 3 ըբ. 7.)

Լ ե զ ու Ն ո ճ ը { «... Մի զարմանաք այս իմ
հարցի վերա եւ մի օտարոտի
Ուղղագրութ. համարէք այս իմ հարցս...»
Ծրագիրը՝ (ըստ վերնագրի.)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—Յօդուածներ մանկա-
վարժական աշխարհից, ընդարձակ ու ճոխ
տեսութիւններով... .

ԿՐՈՆԱԿԱՆ—Կրօնական յօդուածներ, ճա-
ռեր, քարոզներ: Աստուածաբանական տե-
սութիւններ... .

Բովանդակութիւնը 8.) «Հայկակ. Աշխարհ»
1877, № 1.

—Առաջին քարոզ Բագուի եկեղեցու մէջ.

—Սուրբ օրի ազդեցութիւնը մարդի վերայ-Ա.

—1877. Նոր տարի—Դ.

—Հայ ուսանող եւ ուսումնաւարտ երիտա-
սարդներ—Յակովբեան.

—Գործնական խրատներ անփորձ ուսուց-
չին (շար.)

Շամիրամ Թագուհին (վիպաս.) Յով. Քուչ.

—Ինչքց է. (ոտանաւոր)—Վշտալի.

Մեր ձայն—Հայասեր.
Ծանուցմունք:



մբազիր «Կուռնկ
Հայոց Աշխարհի»
ամսագրի՝ պ. Մար-
կոս Աղաբէկեանի
Տփիսից հեռանա-
լուց յետոյ, այդ ամ-
սագրի խմբագրու-
թիւնը կարելի է ա-
սել 1864 թուականին անցաւ պ. Ստեփան-
նոս Ստէփանէի (այժմ Խորէն ծ. վ. Ստե-
փանէ) ձեռքը: Հայր Խորէն նոր մարդ լինելով
բարեփոխութիւններ մտցրեց ամսագրի հրա-
տարակութեան գործում: Անունն էլ փոխեց
«Կուռնկ Հայկական Աշխարհի» որ եւ կարճ
ժամանակից յետոյ հեռացնելով «Կուռնկը»
թողեց միայն «Հայկական Աշխարհ»: Տփիսի-
սում 1864 թուականից սկսուեց «Հայկական
Աշխարհի» հրատարակութիւնը:

Պ. Աղաբէկեանի ամսագրի անունը փոխ-
ուելով, փոխուեց եւ հոգին: Ուղղութիւնը
աղաքական էր, նպատակը գրականութիւն եւ հանրա-
վարժական առատ յօդուածներ տալ, որ առա-
ջինը պէտք է լինէր իւր օրինակի մէջ:

«Հայկական Աշխարհն» իւր ծնուած օրից
հակառակ հանդիսացաւ իւր հայրենակից
«Մեղու Հայաստանի» լրագրին, որի հետ
մինչեւ վերջը բանակուելի մէջ էր:

Ամսագրիս խմբագիրը իւր հանդիսի ճա-
կատին նշանաբան ունէր հետեւեալ Եւրո-
պական առածը՝

„Quod possum facio, faciant meliora po-
tentes“

«Քվոզ պօսիւմ ֆացիօ, ֆացիանտ մէ-
լօրիա պօտէնաէս»

(«Ինչ կարող եմ կատարում եմ, թող
կատարէ առաւել լաւ, ով կարող է:

ձիշտ որ այն էր անում խմբագիր Ստե-
փանէն ինչ որ կարող էր. շատ չէր խօստա-
նում եւ քիչ կատարում՝ ինչպէս անում են
այդ շատերը: Նա տալիս էր առաջնորդող
յօդուածներ կրօնական ու դաստիարակչա-
կան, մանկավարժական ու վիպասանական
գրութիւններ, ճառեր, քարոզներ, ուսում-
նական—գրական, առողջապահական. այլ
եւ այլ յօդուածներ, ոտանաւորներ, թղթակ-
ցութիւններ եւ այլն: Իւրաքանչիւր համա-
րի մէջ, վերջում տպագրուող «Մեր ներքին
գործեր» վերնագրով յօդուածները մինչեւ
հիմա էլ մեծ հետաքրքրութեամբ կարդաց-
ուում են. այդ յօդուածների տակի «Հայա-
սեր» ստորագրութիւնը շատ հաւանական է
որ պատկանում էր հայր խմբագրի գրչին:

«Հայկական Աշխարհն» իւր գլխին հաւա-
քեց ժամանակակից երիտասարդներից շատե-
րին որոնք աշխատակցում էին իւրեանց վառ-
վուռն յօդուածներով:

Խորէն վարդապետը մի աչքի ընկնող նո-
րութիւն մտցրեց իւր ամսագրի մէջ ուղղա-
գրութեան վերաբերմամբ, բայց շատ հաճե-
լի չեղաւ եւ ընդունելութիւն դռնելուց
զուրկ մնաց: Օրինակ գրելու տեղ «եկաւ,
յետոյ, մերձաւոր» գրում էր «եկավ յետօ
մերձավօր» եւ այլն: Երջանկայիշատակ Տ. Տ.
Գէորգ դ. Կաթողիկոսի յայտնած ցանկա-
լութեան համաձայն Հ. Խորէն դազարեցրեց
իւր այդ նորահնար ուղղագրութեան գոր-
ծածութիւնը, սակայն մինչեւ վերջը պահեց
վ. տառի գործածութիւնը կրաւորական բա-
յերի մէջ օրինակ՝ ասվում է, խօսվում է,
կ'գրվի եւ այլն:

«Հայկական Աշխարհ» սկսեց գրական յա-
րաբերութիւն ունենալ եւ Պարսկաբնակ ու
Տաճկաբնակ հայերի հետ ապագրելով այն
տեղերից նամակներ, թղթակցութիւններ եւ
Կոստանդնուպոլսի հայ լրագրիներից արտա-
տրպելով հետաքրքիր յօդուածներ. աւելի
եւս ուշք դարձնելով Կիլիկիայի հայերի եւ

Սաի կաթողիկոսութեան վերաբերմամբ: «Հայկական Աշխարհի» միջոցաւ նորա ընթերցողները հետզհետէ ծանօթանում էին Եւրոպական նշանաւոր գրողների երկերին կամ գործունէութեանց, ինչպիսիք են՝ Վիքտոր Հիւգո, Եւքսպիլը, Մօլիէր, Գէօթէ, Եիլլեր, Գրեմ, Գամբետա եւ այլք:

«Հայկական Աշխարհի» ընդունելութիւնը հայ գրագէտ հասարակութեան կողմից, հետզհետէ մեծանում էր, բաժանորդներ ունեցաւ 400-ից աւելի որ այն ժամանակ մի ամսագրի այդքան բաժանորդ ունենալը հաւասար է այժմեան 1000-ին: Կանայք էլ սկսեցին մասնակցել «Հայկական Աշխարհին» զանազան յօդուածներ տալով: Մշտականապէս հայր Ստեփանէի հանդէսին աշխատակցում էին ՚ի թիւս այլոց հետեւեալ անձինք՝ Գրիգ. Արծրունի, Իշխ. Բագրատունի, Մ. Պեշիքթաշլեան, Յով. Գուչուքէկեան Հ. Առաքելեան, Յ. Ոստանիկ, Ա. Վարդանեան, Աբր. Ամիրխանեան, Յար. Առաքելեան, Ս. Սարգսեան, Ս. Կ. Ջալալեան, Ն. Լալալեան, Ա. Մելիք—Ազարեան, Դոքտ. Յովհաննիսեան, Զ. Գրիգորեանց, Ս. Մուստաֆեան, Ս. Գուրգէնեան, Յ. Գեղամեան, Գ. Դաւթեան, Յ. Տէր—Միրաքեան եւ այլք:

«Հայկական Աշխարհն» անգագար հրատարակելու մանրամասնութիւններ հրատարակելով Տփլիսի Մարիամեան օր. դպրոցի կեանքի զարգացման եւ բարօրութեան մասին, աշխատում էր օր առաջ դպրոցի բարեւոլութիւնը տեսնել, հասարակութեան հոգին միտցնելով դպրոցական գործերի հետ:

«Հայկական Աշխարհն» աշխատում էր ըստ իւր կարեաց՝ աշխարհաբար լեզուի մշակութիւնը հոգալ, հոգեւորական դասի մէջ կանոնաւոր ընտրութիւն, գլխաւորապէս նորաստորին պաշտօնեաների նկատմամբ: Եւրոպական կեանքի նշանակութիւնն ազգային յառաջագիմութեան համար, հայկական թատրոնի բարեվայել զարգացում, ժողովրդական առողջապահութիւն, ուսուցիչների կատարեալ կացութիւն, հայ մայրերի կրթու-

թիւն, ժողովրդի նշանակութիւնն ազգային գործերի մէջ, մայրենի եկեղեցու բարեկարգութիւն, Հայաստանեայց ժողովրդի իւր մայրենի Առաքելական ս. Եկեղեցուն ցմահ հաւատարմութեան պարտականութիւն: Այսպիսի նիւթեր անսպառ ու այսպիսի մտքերով լի էին «Հայկական Աշխարհի» էջերը:

«Հայկական Աշխարհ» գրչանակի եւ հանդիմանի ամսագիրը Տփլիսում կանոնաւորապէս հրատարակուեց եօթ-ութ տարի, մինչեւ 1871 թուականի յունիս ամիսը: Այդ թուականի յունիսին խմբագիր պ. Ստեփանէի էջմիածին գնալու պատճառով, ամսագիրը առժամանակ դադարուեց: Եւ երբ հանդիսիս խմբագիրը վարդապետական կոչումն ստացած էջմիածնից Եուզի ուղեւորուեց, 1874 թուականից սկսեց Եուզիում հրատարակել «Հայկական Աշխարհն» այս անգամ Մանկավարժական եւ կրօնական ծրագրով: Այդ ժամանակուանից «Հայկական Աշխարհն» սկսեց ճանապարհորդել Կովկասի զանազան քաղաքները որ մեր մամուլի պատմութեան մէջ ոչ մի լրագիր այդ բարեւոլ չէ ունեցել: Հոգեւոր Մայրապոյն Իշխանութիւնն ուր որ ուղարկում էր խմբագիր վարդապետին, նա ստիպուած էր խմբագրատունը, իւր մամուլն այնտեղ հաստատել: Այդպէս միայն երկու տետրակ հրատարակելով Եուզիում, նոյն թուականի մայիսի համարից տպագրուում էր Գանձակում: Գանձակից էլ տեղափոխուեց Տփլիս, եւ 1876 թուականին մի քանի համարներ լոյս ընծայելով 1877 թ. ա. տետրակից արդէն հրատարակուում էր Բագուում, որտեղ մնաց մինչեւ 1878 թ.: Այդ թուականին հայր Խորէն էջմիածնում կանչուեցաւ Գէորգեան ձեմարանում ուսուցչական պաշտօն եւ «Արարատի» խմբագրի գործն ստանձնելու հոգելոյս Գէորգ գ. հայրապետի կարգադրութեամբ: Այդ ժամանակից դադարեց «Հայկական Աշխարհ» 12 տարի թափառական կեանք վարելով:

Խորէն վ. Ստեփանէն 1879 թուականին

Էջմիածնում հաստատուելով, որ այլ եւս չէր կարող շարունակել իւր ամսագրի հրատարակութիւնը, պատրաստուում էր լսնձնել այժմ հանգուցեալ Վասակ Բաբաջանեանցին: 2.)

Ամեն մի հայ պարբերականի լաւ եւ պակասաւոր կողմերը քննելով՝ անաչառ դուրս գալու համար ցոյց տանք եւ «Հայկական Աշխարհի» մի քանի թերութիւնները:

«Հայկական Աշխարհը» որքան որ պարունակում էր իւր մէջ օտար կեանքին վերաբերեալ յօդուածներ, հարցեր, դորա համեմատ քիչ էր խօսում մեր ժողովրդի կեանքից: Օրին. «կանանց հարցը», «ամրմիներ այրելու խնդիրը» որպէս անհրաժեշտ նիւթեր լոյս էին տեսնում ամսագրի մէջ, իսկ որ խմբագիրը ըստ իւր ճակատագրի ման եկաւ գտնազան հայաբնակ տեղեր, մի օր չը դրեց տեղական ժողովրդական կեանքից նիւթեր, նորանց բարք ու վարքը, սովորութիւնները եւ այլն: Գիտնական խմբագիրը հարկաւոր էր համարում մատենախօսութիւններ գրել Եւրոպայում լոյս տեսնող գտնազան գրուածների մասին, իսկ իւր աչքի առաջ հայ լեզուով լոյս տեսնող գրքերի մասին մի գրախօսական ակնարկը խնայում էր: Ինչ որ է՝ այս մի քանի անմեղ թերութիւնները չեն կարող արատ բերել «Հայկական Աշխարհի» արժանաւորութեանը եւ ոչ նորա ուսումնական խմբագրի խմբագրական գործունէութեանը:

Թ Ա Ն Ս Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Հայկական Աշխարհի» մասին մեր աղբիւրների կարծիքները—

ա. «... Հարեւանցի յեշատակենք «Հայկական Աշխարհ... որոնք 'ի լրոյ միայն ծանօթ են մեզ կամ ինչուան հիմա շարունակութիւննին անծանօթ...»

«Պատմ. հայ. դպրութ.» ք. էջ 505.

բ. «Այս ամսագիրը ամեն խոչնդոտների գիմանալով թէեւ շարունակուեց 14 (՝) տարի

բայց իւր Թափառական կեանքով միայնակ օրինակը եղաւ... Սկսուելով Թիֆլիս դա անցու Շուշի 1874, ապա նորից Թիֆլիս (՝) 1876 (՝). այս տեղից Բաբու (՝) 1878 (՝). եւ վերջապէս Էջմիածին (՝) 1879 (՝) «

«Արձագանք» 1882. № 22. Ադ. Եր.

գ. «... Հայկական Աշխարհը» կատարել Թըշնամի էր այն ժամանակուայ «Խաւարապաշտ» (՝) լրագիրների մանաւանդ «Մեղուէն»: Օրինակ նա այնքան վատ կարծիք ունէր «Մեղուի» մասին որ եթէ «Մեղուի» մէջ մի մարդու գովում էին, դա արդէն «Հայկական Աշխարհին» հիմք էր տալիս ասելու հրապարակով որ ուրեմն այդ մարդը անպիտան մարդ է...»

«Մարտի մշակը» Խ. Մալում. էջ 35.

դ. «... Այս հրատարակութիւնը («Պուսկը») յանձն առաւ վերականգնեցնել 1865 (՝) Թուից Մոսկուայի համալսարանի կանգիտատ Ստեփաննոս Ստեփանէն...»

«Նիւթեր հայոց պատմ.» Ա. էջ 61.

ե. «... պ. Ստեփանէն «Հայկական Աշխարհը»... համեմատելով «Հիստորիայի» հետ, շատ կողմից ցածր էր նորանից, եւ քանի գնում էր՝ աւելի ու աւելի վատանում էր «Մեղուի» պէս... իսկ «Հայկական Աշխարհի» այն յօդուածները որոնք խօսում են օտարների մասին այնքան էլ նշանաւոր չեն... Թիւ անես (որ) հայր Խոբէն Ստեփանէնի ամսագիրը հաւատարիմ է մնում կրօնական—մանկավարժական բայց խկապէս իր խառը պրօգրամին...»

«Հայ. մամ. Ռուս.» Յարոյ էջ 63, 54.

զ. «Հայկական Աշխարհի» արդիւնազորութիւնը ներկայումս, համեմատելով նորա արդիւնազորութեանը անցեալում, ցուցանում է անուրանալի յառաջադիմութիւն, թէ լեզուի եւ թէ նիւթերի պատուականութեան մասին առհասարակ... Մենք յօժարութեամբ խոստովանում ենք «Հայկական Աշխարհի» հրատարակողի բարի դիտաւորութիւնը աշխատասիրելու յօդուատ ազգի, որչափ բերում է նորա կարողութիւնը. մանաւանդ իւր տառապալից դրութեան մէջ եւ պատերազմելով ընդդէմ հազար տեսակ դժուարութիւնների: Մենք կը ցանկայինք տեսնել նորան աւելի խաղաղ դրութեան մէջ...»

«Հանդէս գր. եւ պատմ.» ա. Ստ. Նազ.

է. «... Հայը մտքով է առեւտրական ոգի եւ կրօնի մէջ: Այժմ հայերը ունին մինչեւ անգամ մի կրօնական ամսագիր, որ հրատարակում է մի վարդապետ եւ որ կարելի է անուանել կրօնական—առեւտրական ամսագիր: «Հայկական Աշխարհ» է եւ խմբագիրը Հ. Խորէն Ստեփանէ: Չէ՞ք հաւատում ընթերցող որ ,,Հայկական Աշխարհը՝ կարող է անուանուել Կրօնական — առեւտրական ամսագիր կարդացէք ամսագրի (1877) փետրուար եւ մարտ տետրակի ,,Աղօթքի գորութիւն» վերնագրով յորուածը...»

,,Մշակ» 1877. № 28. Ասիացի.

բ. ,,Հայկական Աշխարհ 1866 (°) Տփլիս 2. Էնֆիաճ. (°)»

,,Իսս. հայ-ազգ. պատմ.» էջ 339.

թ. ,,... Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր դպրանոցն եւ օրհորդական Մարիամեան ուսումնարանն որ առաջին ազգային օրհորդական ուսումնարանն էր Կովկասում, ,,Հայկական Աշխարհի» խմբագրի աշխատութեամբ եւ արդիւնքով հիմնուած (°)... Թիֆլիսում եւ առհասարակ ժողովրդական լուսավորութիւնը բազմատեսակ քրեւնադատութեան եւ հոգատարութեան նիւթ էին կազմում ամսագրում խմբագրութեան կողմից...»

Մի ձեռագիր:

2.) Նախ՝ Աւսումնական եւ գրականական հրատարակութիւն:

Յետոյ Գրականական եւ մանկավարժական օրագիր.

Իսկ վերջում ինչպէս յիշեցինք, մանկավարժական եւ կրօնական օրագիր:

3.) Նախ՝ աշխարհական պ. Ստեփ. Ստեփանէ.

4.) Ակզբում Տփլիսում եղած ժամանակ տպագրուում էր՝ նախ Էնֆիաճեանցի, յետոյ Մեղիքեանի եւ վերջը սեփական տպարանում: Եունի եղած միջոցին՝ Հոգեւոր Դպրոցի, Գանձակում Ֆեօդորովի եւ Քառումեանցի, Տփլիսում Մարտիրոսեանցի եւ Բագուում ,,Մարդասիրական Բնկերութեան» տպարանում:

5.) Դիւրքը նախ (տետր.) 44. էջ 15×24 հ.-մետր. յետոյ ,, 44-46 էջ 14×19 ,, եւ Բագուում եղած միջոցին այն էր ինչ որ յիշել ենք վերեւը:

6.) Քուղթն ու տիպը առաջի տարիներում անխնամ էին, յետոյ հետզհետէ փոխուեց դէպի լաւը, միայն ամեն դէպքում էլ ուղղագրու-

թեան-սրբագրութեան վերայ առանձին խնամք էր տանում Հ. խմբագիրը:


7.) Ակզբից մինչեւ 1875 թ. 5 ըուբլի էր, յետոյ մինչեւ վերջին տարին 3 ըուբլի:

8.) Նախ ամսագրի բովանդակութիւնը տպագրուում էր տետրակի ա. երեսում, իսկ Բագուում եղած միջոցին բոլորին չէր տպագրուում: Յիշենք այստեղ որ ,,Հայկական Աշխարհի» շապիկը (կողը) գոյնաւոր թղթից չէր լինում այլ սպիտակ:

9.) ,,Մեզ հաղորդում են Երեւանից որ Խորէն վրդ. Ստեփանէն ,,Հայկական Աշխարհի» հրատարակութիւնը յանձնել է պ. Վ. Բարաջանեանին. պարոնը յիշեալ ամսագիրը հրատարակելու է Երեւանում»

,,Մշակ» 1879 № 51.

,,Հայկական Աշխարհի» մասին մեր աղբիւրներից ոչինչ չեն գրում՝ ,,Մատենագիտ. հայկական» «Հայկական մատենադարան», ,,Հայոց արդէ մատենագրութիւնը» ,,Պատմ. հայ.» Ս. Պալ.:



78.

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ 1.)

ԱՐԱԳԻՐ ՄԱՆՁԵՍՏԻՒ

ՔՈՂԱՔՈՒԿԱՆ ԳՐՈՒԿԱՆ ԳԻՑՆՈՒԿԱՆ ԿՐՕՆՈՒԿԱՆ ԵՒ ԱԹԵՒՏՐՈՒԿԱՆ

(Ամսագիր)

Մ ա ն չ ե ս տ ր (Անգղիա) 1864-1865.

Հրատարակուում էր ամսի սկիզբներին.

Հրատարակիչ՝ Ասպետ Կարապետ վարդապետ Շահնազարեանց.

Տպարան «Երկրագունդ» Հանդիսի.

Դիւրքը (տետր) ութածալ 1-2 տպ. թերթ. 32-64 էջ 3-սիւնեան 23×34 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը մաքուր.

Բաժանորդագիւնը՝ տարեկան 25 շիլին.

Լեզուն, ոճը՝ } ,,... Իրրև հայ և իրրև Ուղղագրութ. } վարդապետ Կիկղոսյ Հնդկաստանի պատուի...»

Մրագիրը՝

ՔՈՂԱՔՈՒԿԱՆ—Քաղաքական տետրութիւն.

Եւրոպական ժամանակակից լուրեր, յօդուածներ քաղաքական բնաւորութեամբ: ԳՐԱԿԱՆ—Պատկերներ, մանրավէպեր, հրնագիտական, քննական յօդուածներ, խառն լուրեր, զուարճալիք. . .

ԳԻՏՆԱԿԱՆ—Գիտնական յօդուածներ, զանազան գիտութիւնների վերաբերեալ. . .

ԿՐՕՆԱԿԱՆ—Կրօնական հարցերի վերաբերեալ զանազան յօդուածներ, ճառեր, քարոզներ. . .

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ—Ընթացիկ գներ, հրապարակի վերայ ծախուող զանազան տպրանքների. . .

Բովանդակութիւն 1864, № 6. (6-18 ապր).

—Քաղաքական—Մեծ Բրիտանիա—Փրանսիա—Ռուսիա—Գերմանիա—Իանըմարզ—Իտալիա:

—Գրական—Հնագիտութիւնք, Երկու նամակների թարգմանութիւնք, որ Սուլթան Սիւլէյման 1826, 1829, գրել է առ Լուտովիկոս ժգ. գաղիացւոյն:—Կանոնադիրք եւ բանադրանք (շար.)—Խառն լուրեր, զուարճալիք, մանրավէպք հանճարաբանութիւնք ("):

—Առեւտրական—հրապարակի վերայ ծախուող նիւթերու գիներու շարժման վերայ տեղեկութիւնք եւ նոցա ցուցակ:



արբերական հրատարակութիւններ հայերէն լեզուով ինչպէս շատ հեռաւոր տեղեր, այնպէս էլ մի հանդէս ունեցել ենք Անգղիայի Մանչեստր քաղաքում, շնորհիւ հանգուցեալ Կարապետ Մահ-

նազարեան գիտնական վարդապետի, որ ս. Եջմիածնի միաբան էր եւ Մանչեստրի հայ գաղութի հովիւ: Արժանայիշատակ Մահնազարեան ծանօթ է շատերիս որպէս հնագէտ—մատենագիր, որպէս խմբագիր եւ որպէս բարերար Կոստանդնուպոլսի (Նուպար)—Մահնազարեան դպրոցի:

Ինչպէս Անգղիայի հայ գաղթականութեան առաջնորդ-հովիւն է այժմ բարեշ. Սուքիաս վարդապետ Պարոնեանը, 1860-ական թուականներին նոյն պաշտօնով Մանչեստրում էր գտնուում Կարապետ վ. Մահնազարեանը: Սա կամենալով իւր հեռաւոր պաշտօնատեղում էլ ազգօգուտ մի գործ շարունակել եւ տեղացի մի բուռն հայերի սրտերը մխիթարել, մի տան մէջ որ գեռահայկական եկեղեցի չը լինելու պատճառաւ կը պատարագէր եւ եկեղեցական բոլոր արարողութիւնները կը կատարէր (151 Rumford strus) տեղացի հայ վաճառականների սժանգակութեամբ մի մատուռ կառուցեց, տպագրական տառեր եւ մամուլ պատրաստելով մատուռին կից մի սենեակում, 1864 թրուականի կիսից սկսեց «Երկրագունտի» հրատարակութիւնը: Ականատես մարդիկ վկայում են որ երբ անգղիացի երկու գրաշարները չէին կարողանում հայերէն տառերը անսխալ շարել, հայր Մահնազարեան շատ անգամ օգնում էր նորանց գործին: Իւր ժամանակին «Երկրագունտի» պէս մի համեստ հրատարակութիւն որ հետաքրքիր ու լուրջ գրուածներով լի էին նորա էջերը, արժանի է սիրալիր ուշադրութեան. մանաւանդ որ «Երկրագունտը» հրատարակուում էր հայ գրականութեան, հայ ազգաբնակչութան ու հայ ինտելիգէնցիայից շատ հեռու որ շատ դժուար է մի պարբերականի համար այդ պայմաններից հեռու լինելը:

«Երկրագունտի» նիւթական հանգամանքները մասամբ ապահովուած էին, յուսալի էր որ առնուազն կարող էր մի հինդ-տասը տարի հրատարակուել, բայց «չիք բարիք առանց շարութեան», խմբագրի անձնական արգելք-

ները պէտք է դադարեցնէին շուտով «Երկրագնտ»ին. ԵաՀնագարեան Հիւանդացաւ, ամսագիրը մի տարին հազիւ լրացրեց: Անգղիական թողեց հայր-խմբագիրը շտապեց հարաւ որ Փրանսիայում գուցէ օղի փոփոխութիւն-թիւնից կարողանայ կազդուրուել: Կարճ ժամանակ մնալով այգտեղ, անցաւ Եգիպտոս, որ տեղ եւ հանգիպեց խեղճ վարդապետին մահը: ԵաՀնագարեան վախճանուեց 1865 թուականին: Այդպիսով հայ—անգղիական «Երկրագունտը» մի տարի հազիւ շրջելուց դադարեցրեց իւր գործունէութիւնը: Այս «Երկրագունտը» յոյս տեսաւ յետոյ Կ. Պոլսում 2) Ցանկալի էր որ Մանչեստրի այժմեան առաջնորդ հայր Պարոնեանը որ նոյնպէս հմուտ է այդպիսի գործերում, շարունակէր, կամ մի նոր պարբերական հրատարակութիւն սկսէր: Երեւի նիւթական չափաւոր միջոցներ եւ այլ պայմաններ, կը նպաստեն գործին: 3).

ՓՈՒՆՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) «Երկրագնտի» լուրը համարներն ի միասին կազմած մի օրինակ կայ Կ. Պոլսում արժանապատիւ Յովհ. աւագ քահանայ Մկրեանի մօտ:

Մեր աղբիւրները եւ «Երկրագունտ»—

ա. „ . . . Ջարմանալի անշուշտ պիտի թուի Ձեզ երբ լսելու ըլլաք թէ 'ի Մանչեստր եւ ոչ մի օրինակ մը կը գտնուի „Երկրագունտ“ էն ոչ առանձնականաց քով. . .

(Մի նամակ) Սուք. վ. Պարոնեան.

բ. „ . . . 1864 թ. հանգուցեալ Կարապետ վարդապետ ԵաՀնագարեանը որ Անգղիայում գտնուող հայ վաճառականների համար Մանչեստրում մի մատուռ էր կառուցել սկսեց այստեղ „Երկրագունտ“ հանդէսը որ երկարատեւ չեղաւ. . .

„Արձագանք“ 1882. № 22 Ա. Ե.

գ. „Երկրագունտը լրագիր Մանչեսթրի. հրատարակիչ Կ. վ. ԵաՀնագարեան—միաբան Ա. Էջմիածնի. . . 1865 (‘)“

„Մատեն. հայկ.“ Ջարբ. էջ 180

դ. „ . . . Քաղաքական դիպուածոց յաճախու-

թիւնք, հետաքննին մտաց ճարակ եւ սթափում աւելցնելով, անոնց վրայ խօսող հայկական օրագրաց եւ լրագրաց թիւն ալ շատցուցին. . . Այսպիսեաց դասէն են Երկրագունտը. . .

„Պատմ. հայ. դար.“ Բ. էջ 500

- 2.) ԵաՀնագարեանի կտակի համաձայն տպարանի մամուլը, տառերը եւ այլ պարագաները տեղափոխուեց Կ. Պոլիս Նուպար—ԵաՀնագարեան վարժարանը, որտեղ „Երկրագունտ“ նորից հրատարակուել սկսեց: Տես առանձին:
- 3.) Այժմ աւելի յաջողութիւն կունենայ ընթերցասիրութիւնը աւելի տարածուած լինելով:

79.

Փ Ո Ւ Ն Ջ Ի Կ¹⁾

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ լ ի ս (Տաճ.) 1864-1864
 Հրատարակում էր
 Տնօրէն եւ տէր՝ Համբարձում Ալաճաճեան:



ունջ» շարաթաթերթի տէր եւ տնօրէն պ. Համբարձում Ալաճաճեան՝ 1864 թուականի մէջ փորձ փորցեց որպէս «Փունջի» յաւելուած մի թերթիկ հրատարակել «Փընջիկ» անունով, որ մի քանի համար միայն հրատարակուելով հանգիստ առաւ:

ՓՈՒՆՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) Մեր աղբիւրները առանձնապէս «Փըն-

ջիկի մասին ոչինչ չեն լիշել. պ. Երիցեան ինչպէս եւ պ. Գափամաճեան միայն լիշել են «Փընջիկի» անունը «Փունջ» շարաթաթերթի Հեա միամին:

ա. ,,Նւ պ. Ալաճաճեանի աշխատութեամբ ,,Փունջ" եւ առանձին ,,Փընջիկ" . . .
,,Արձագանք" 1882. № 22 Ա. Եր.
բ. ,,Փունջ" եւ ,,Փնջիկ" 1860 Հ. Ալաճաճե(ա)ն:,,
,,Դաս. Հայ-ազգ. պատմ." բ. էջ 340.

80.

ԱՐԾՈՒԿ ՏԱՐՈՆՈՅ^{1.)}

Լ Ր Ա Տ Ա Ր
(Ամսագիր)

Տարոն (Տաճկ.) 1864-1865.
Հրատարակուում էր ամսի վերջերին:
Խմբագիր՝ Գարեգին Սրուանձտեան.
Տպարան Վարագայ Վանքի.
Թուղթը եւ տիպը՝ բաւարար.
Լեզուն ոճը { ,,... սոյն համառօտ ազգա-
րարութեամբ, կ'աղայեմ զբեզ
Ուղղագրութ. { ընթացողք, երկայնամիտ...»



եր դարու ալիսօսիկ կրօնաւոր, Հանգուցեալ բանասէր Հայր Գարեգին Սրուանձտեան, Հոգեսուն սան քաջածանօթ Խրիմեան վարդապետի, վերջինիս Վարագից Հեռանալուց յետոյ կամեցաւ շարունակել իւր սիրելի վարժապետի սկսած գործը՝ «Արծուի Վասպուրականի» հրատարակութիւնը: Սրուանձտեան գործի գլուխ կանգնեց 1864 թուականին, եւ «Արծ-

ուի» Վասպուրականի» անունը Համեստաբար փոխադրեց «Արծուի» Տարոնոյ:

Երիտասարդ խմբագիրն այն նպատակը այն հոգին ունէր, այն իդիալին էր ձգտում, ինչ որ էր իւր մեծ վարժապետը, ազգի անզուգական Հայրիկը: Բայց դժբախտաբար Արծուի Հեռանալով, նորա տեղը բռնեցին զանազան ցեղի թռչուններ, որոնք կամենում էին Արծուիկին խեղդել իւր բնի մէջ: «Արծուիկ» չը կարողացաւ Հասնել այն բարձրութեանը, որին Հասել եւ կանգնած սրտաւս աչքերով չորս կողմն էր նայում քաջ ու անվհատ «Արծուին»:

«Տարոնոյ Արծուիկը» կաղ 'ի կաղ առաջ գնալով Հազիւ մի տարեշրջանը լրացրեց— դառն Հանգամանքները ստիպեցին կապել «Արծուիկի» թեւերը անքակտելի կապերով որ այլ եւս «Հայրենասէր թեւօք» չը կարողանայ թռչել Հայաստան աշխարհի զանազան կողմերը ինչպէս իւր նախորդը:

Ահա թէ քննէ գրում հոգեւոյս Սրուանձտեան իւր մեղրաշուրթ բերանով «Արծուիկի» վերջին տետրակում:»

«Ես ալ իմ ծնողին ճակատագիրն ունիմ. «Վասպուրական Արծուին» ճանաչող «Տարոնոյ Արծուիկին» պիտի չի զարմանար, բայց մեր արգոյ բաժանորդներէն մէկ քանին Հետեւեալ բողոքն ուղղած են առ մեզ.— Տարբերաց երկու մասէն, կ'ըսեն բաղկացած էր ձեր թերթիկն, վասն զի գարունը ծնաւ, ամառը թռաւ, աշունը մեռաւ, ձմեռը թողեցաւ ըսենք ինչ ըսենք: Ի՞նչ շատ կը սիրէինք զինքն իբրեւ Հայրենեաց պատմաբեր թռչնիկ, բայց դուք շարունակութիւն մը չունիք, շատոնց ի վեր չընդունելով, Արծուիկիդ թերթն՝ անոր կարօտ ենք, եւ կը փափաքինք յատնէք մեզ թէ քննէ Ե առիթ ատոր դադարման կամ ընդհատութեան. ձեր զանցառութիւնն արդեօք թէ տեղուդ անյարմարութիւն. . . — կը պատասխանենք՝ Այո՛ տեղոյն անյարմարութիւն, անկարգութիւն, բռնաւորութիւն, վանքի մասնաւոր միաբանութիւն, . . . եւ ասոնց ամե-

նուն հայր շահասիրութիւնն է առիթ որ զհայր Արծուիկ մատնեցին, Արծուիկի օրօրանը դարձուցին իրեն դերեզման. կապեցին զմամուլ, գոցեցին տպարան, փակեցին զառաջնորդարան, ցրուեցին զվարժարան. . . » 2). Ահա այսպիսի ձախորդ հանգամանքներ կաշկանդեցին «Արծուիկ»ին եւ ստիպեցին լռել ութ ամիս հրատարակուելուց յետոյ:

Ի ԱՆՍՊՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Արծուիկ Տարոնոյ» եւ աղբիւրներ—
 - ա. «Արծուիկ Տարոնոյ» լրատար. Տարոն 'ի վանս Վարազայ 1864»
 - » Մատենագ. հայկակ» Զարբ. էջ 68.
 - բ. «Մուշի մէջ հ. Գարեգին Սրուանձտեանը որ Խրիմեան Հայրիկի առաջագէմ աշակերտն էր, սկսեց Արծուիկ Տարոնոյ թերթը հրատարակել, բայց զանազան խոչնդոտների պատճառով դադարեց տարին հազիւ լրացնելով. . . »
 - » Արձագանք» 1882 № 22. Ա. Եր.
 - գ. «. . . Բայց (Խրիմեանի) ընկերակցաց մէկը Գարեգին վարդապետ Սրուանձտեանց Տարոնոյ մէջ 'ի 1864 ուրիշ համանուն թերթի մը հրատարակութեան ձեռք զարկաւ Արծուիկ Տարոնոյ կոչելով զայն. . . »
 - » Պատմ. հայ դպրութ.» բ. էջ 489.
 - դ. «. . . Արծուիկ Տարոնոյ 1863 (') Տարոն Գ. Սրուանձտեան.»
 - » Գաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 339.
- Մեր միւս աղբիւրները լուռ են այս հանդիսի մասին: Իսկ յիշողներից պ. պ. Նրիցեան եւ Գափամաճեան սխալմամբ 1863 թուականին են վերագրել «Արծուիկի» սկզբնաւորութիւնը:
- 2.) Տես. «Պատմ. հայ. դպր.» բ. էջ 490.

81.

ԼՈՒՍԱՓԱՅԼ¹⁾

ՀՍՆԻԿՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Զմիւռնիա (Տաճկաստ.) 1864-1865.
Հրատարակում էր

Խմբագիր՝ Գ. Ազճալեան.



Սակաւ օրուայ համար լրադրութեան ասպարէզ մտաւ պ. Ազճալեանի «Լուսափայլը», որ Զմիւռնիայում 1864 թուականի վերջերին սկսեց հրատարակուել: Մի-երկու ամիս տեւեց միայն:

Ի ԱՆՍՊՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.) Աղբիւրներ—
 - ա. «Լուսափայլ հանդէս կիսամսեայ 1864 Զմիւռնիա. Գ. Ազճալե(ան):
 - » Գաս. հայ-ազգ. պատմ.» էջ 339.
 - բ. Զմիւռնիայի մէջ պ. Գ. Ազճալեանը, հանդէս «Լուսափայլ» կիսամսեայ. . . »
 - » Արձագանք» 1882 թ. № 22. Ա. Ե.

82.

ԱՐՄԱԻԵՆԻ¹⁾

ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՀՈՂՈՂՈՒԹՅԱՆ ԱՋԿՈՅԻՆ ԲՆՆՍԻՐՈՒԹՅԱՆ

Գահիրէ (Եգիպտոս) 1865—1865.
Հրատարակում էր՝ ամսի կիսին եւ վերջին:
Խմբագիր՝ Աբրահամ Մուրատեան.

ցանէ իբրեւ դաստիարակ պարզ եւ մաքուր աշխարհաբարով Հայ-Եկեղեցւոյ սկզբունքները եւ կը պաշտպանէ Նորա շահերը օտար ոտնձգութիւններէ. նուիրած է նաեւ ուրիշ շարք մը յօգուածներ լուսաւորութեան գործին եւ նա շարունակ դաստիարակութիւն կը քարոզէ ինչպէս քաղաքացւոյն՝ նոյնպէս եւ գիւղացւոյն, ինչպէս արական՝ նոյնպէս եւ իգական սեռի համար. . . »

«Սիօնը» իւր ազնիւ սկզբունքով գրաւել էր ազգի՝ նոյնպէս եւ տիրող Օսմանեան Կառավարութեան սէրն ու համակրանքը: Հէնց այդ պատճառով է որ իւր տասներկուամեայ գոյութեան միջոցին ոչ մի դադարման կամ նկատողութեան չէ ենթարկուել, այլ ընդհակառակը երկու անգամ էլ արժանացել է քաջալերութեան:

«Սիօնի» գաղարման գլխաւոր պատճառներն եղել են նոյն թուականների (1877-1878) մէջ հետզհետէ ս. Աթոռին պատահած ներքին եւ արտաքին հարուածները: Մի կողմից ս. Տեղերի խնդիրը, որ այդ թուականների վերին աստիճանի բորբոքուած էր (Ամենից նշանաւորն էր Լատինաց ս. Յակովբայ Հայոց Վանքի մէջ տարին մի անգամ պատարագելու խնդիրը, որ մինչեւ այդ ժամանակ հայ միաբանութեան կամքով ու թողտուութեամբ կը պատարագէին, մինչեւ որ 1870-ական թուականներին բարեյիշատակ Եսայի պատրիարքը կարողացաւ տեղական Կառավարութեան ձեռքով բոլորովին արգելել: Այս մասին եղած դատերու ընդարձակ նկարագիրը տես՝ «Սիօն» 1869-70 թուականների համարներում) եւ միւս կողմից ներքին ձախորդութիւնները բոլորովին ջլատեցին Վանքի զօրութիւնը եւ մինչեւ անգամ մեծ պարտքի տակ ձգեցին: Այս բոլոր անյաջողութիւնների հետ միացաւ նաեւ «Սիօնի» բաժանորդների հետզհետէ նուազելը: Վերջինիս պատճառն էլ ոչ այլ ինչ էր եթէ ոչ անկանոն թղթատարութիւնը որ «Սիօնի» համարները կամ շատ ուշ էին հասնում կամ ճանապարհների բոլորովին կորսուում էին:

Այսպիսի յարգելի պատճառներով 1877 թրուականի վերջերին «Սիօնը» գաղարուեց:

Յանկալի էր որ յարգոյ միաբանութիւնը հոգ տանէր այժմ էլ «Սիօնի» հրատարակութիւնը շարունակելու: «Քաղաքական» մասը գուրս ձգելով, (որ չի պահանջուում մի հսգեւորականութեան ձեռքով հրատարակուող վանքական հանդիսից) ծրագիրը դարձնել՝ «Կրօնական - Ազգային-Փրական» Գտնէմեր հոգեւոր կենտրոններում, ս. Աթոռնորում՝ ս. Էջմիածնում եւ ս. Երուսաղէմում ունենանք մի-մի «կրօնական» հանդէս անարատ եւ իւր կոչման հարազատ:

Թ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Սիօն» ամսագիրը եւ մեր աղբիւրները —
 - ա. «... Երուսաղէմի եւ Արմաշու ուխտերն ալ շուգեցին անտարբեր մնալ ազգային յառաջադիմութեան համար բացուած ասպարիզին մէջ: Անոնց առաջնորդը՝ հայրենեաց բարւոյն սիրովը վառուած՝ կարգի գրին կամ բոլորովին ՚ի նորոյ կանգնեցին տպարաններ, բազմաթիւ գրոց եւ թարգմանութեանց ձեռք զարկին հին նախնեաց՝ դեռ եւս անտիպ երկասիրութիւններ՝ ազգին ընծայեցին: Ասոնք բաւական չ'սեպելով՝ իրանց օրինակովն ու խօսքով խրախուսեցին զմիաբանսն ու «Սիօն» 1860 (՝) . . . ամսագիրքն երեւեցան յորոց առաջինն դեռ եւս կը շարունակուի (1877) . . . »
 - բ. «Պատմ հայ. դպրութ.» ք. էջ 505.
 - գ. «Սիօն ամսագիր ազգային, բանասիրական գրագիտական, կրօնական, բարոյական, եւ ժամանակագրական, 1866-77 Երուսաղ. ՚ի տպ. Առաքելական ուխտի Սրբոց Յակովբեանց»
 - դ. «Մատեն. հայկ.» Զարբ. էջ 620.
 - ե. «... Վերջապէս Երուսաղէմում (ս.) Յակովբեանց հայ միաբանութիւնը սկսեց «Սիօն» ամսագրի խմբագրութիւնը եւ շարունակեց տասներկու տարի»
 - զ. «Արձագանք» 1882 № 22 Ա. Եր.
 - է. «... Այնտեղ կայ ժառանգաւորաց դպրոց տպարան եւ ճոխ մատենադարան. հրա-

տարակուում է() ,,Սիօն" անունով թերթը. . . ."

,,Հայոց վանքերը" Կ. Կոստան. էջ 83.
Ե. ,, . . . Երբ 1866 թուականին Երուսաղէմի միաբանութեան ձեռքով ,,Սիօն" ամսաթերթը սկսաւ հրատարակուել, պատանի Սահակը () որ այն ժամանակ 17 տարեկան էր, դարձաւ այդ թերթի արդիւնաւոր աշխատակիցներից մինը եւ 7,8 տարի շարունակ բազմաթիւ իմաստալից յօդուածներ ու պիտանի գրուածքներ գետեղելով նրա մէջ՝ իւր գեղեցիկ գրչով ու լեզուով գրաւեց բոլորի ուշադրութիւնը այն աստիճան որ 1874 () թուականից սկսած ,, Սիօնի" խմբագրութիւնը լիովին յանձնուեցաւ նրան. Հինգ () տարի շարունակ այսինքն մինչեւ 1879 () թիւը նա վարեց ,,Սիօնի" պատասխանատու խմբագրի պաշտօնը հետաքրքիր եւ իւր կոյման արժանի դարձնելով այդ թերթին ամեն հայ ընթացողի համար . . ."

,,Նոր-Դար" 1866 . № 64.

գ. ,, Սիօն 1866. Երուսաղէմ"

,,Դաս. հայ-ազգ. պատմ. ք. էջ. 340.

Պ. պ. Փարսաղան Տէր. Մովսիսեան, Արտիւր Լայոզ, իսպառ մոռացել են ,,Սիօնը":

84.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն^{1.)}

(Շաբաթաթերթ)

Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1866-1867,
Հրատարակուում էր՝
Խմբագիր՝ Գէորգ Տ.-Աղէքսանդրեան:

Պէտրգ Տէր-Աղէքսանդրեան նպատակ ունենալով Կովկասում հայ վաճառականների գործերի համար հրատարակել մի շաբաթաթերթ, 1866 թուականի սկիզբներին պատրաստուելով «Վաճառական» անունով թերթի հրատարակութիւնն սկսեց, որով խօսատանում էր հայ առեւտրականների ֆինանսական-տնտեսական գործերին ու հաշիւներին

գիւրութիւն տալ, հրատարակելով զանազան հաշուապահական խնդիրներ, տոկոսիքներ աղուսեակ, բօրսա, եւ այլն: Պ. Տէր-Աղէքսանդրեանի շաբաթաթերթը հազիւ մի եւ կէս տարի տեւեց: Հարիւրաւոր վաճառականներ իւրեանց օգտի համար չը կարողացան մի թերթիկի նիւթական վիճակն ապահովացնել:

«Վաճառական» դադարեց 1867-ի յունիսին:

Թ Ա Ն Յ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Վաճառական» եւ աղբիւրները—

ա. ,, . . . Իսկ պ. Գ. Տէր-Աղէքսանդրեանի խմբագրութեամբ հրատարակուեցաւ ,,Վաճառական" առեւտրական թերթիկը որ մէկ ու կէս տարի շարունակուեց. . ."

,,Արձագանք" 1882 № 22 Ա. Եր.

բ. ,, . . . Նոր լրագրի (,,Վաճառականի") խմբագիր պ. Տէր-Աղէքսանդրեանը. . . երբէք չէր, եւ չէր էլ կարող լինել խմբագիր մի այնպիսի հրատարակութեան որ կրում լինէր իր վերայ ,,Վաճառական" անունը. . ."

,,Հայոց մամ. Ռուս." Յարոյ էջ 70.

85,

Գ Ա Ր Ո Ւ Ն^{1.)}

Ա Մ Մ Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՈՇԻՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆՍՅԻ-ՆԵՐԱԿՈՒԹՅԱՆ

Տ փ խ ի ս (Ռուսաստ.) 1866-1866.
Հրատարակուում էր ամսի վերջերին:
Հրատարակիչ՝ Ստեփաննոս աւագ քահանայ Մանդինեանց:
Ի Տպարանի Գլխաւոր Կառավարութեան Փոխարքային Կովկասու:

Դիրքը՝ (անտր) 2 սպ. թերթ. 64 էջ
14x24 հ.-մետր.

Թուղթը եւ աիւլը՝ միջակ.

Բաժանորդագրինը՝ տարեկ. 6 ռուբլի.

Լեզուն ոճը } Որովհետեւ քննչախ կոյրն ոչինչ չէ կարող գգալ իւր Ուղղագրութ. } անծին մէջ լուսատր...“

Ծրագիրը՝

ա. «... Հոգեւորական առարկայք, պատմութիւն քրիստոնէութեան եւ եկեղեցու, ճառեր, քարոզներ, երեւելի սուրբ վարդապետների վարքագրութիւնք, թէ հին եւ թէ նոր հեղինակութիւնք կամ թարգմանութիւնք, թէ գրաբար եւ թէ աշխարհաբար...»

բ. «Ռոմաններ (բանաստեղծական պատմութիւնք) վիպասանութիւնք, զրոյցներ, համառօտ նկարագրութիւնք, դրամէք, (թատրոնական ձեւով շինած պատմութիւն) ոտանաւորներ, թէ հեղինակութիւնք թէ թարգմանութիւնք...»

գ. «Մատենագրական.— Անաչառ եւ անկողմնակի քննութիւն հայերէն երեւելի գրքերի եւ գրուածքների վերայ, որք են՝ դասական գրեանք, վերաբերեալ կրօնին եւ եկեղեցական արարողութեանց եւ ծէսերին, Հայոց լեզուի դպրութեան, նոյնպէս ամսագիրներին եւ լրագիրներին...»

դ. «Տնտեսական տարեգրութիւն— Ներքին կեցութիւն Հայոց. Ֆէլիէտոն, երեւելի անձանց կենսագրութիւնը»:

Բովանդակութիւն 1866 թ. № 1

Գարուն ամսագիր—Ս. ա.-բ. Մանգինեանց:

Օրիորդների դաստիարակութիւն—Մ. Թաղ.

Ստորագրութիւն Թիֆլիսու—Ա. Տ-Յակովբ.



ախկին խմբագիր «Մեղու Հայաստանի», հանգուցեալ Ստեփ. աւագ քահանայ Մանգինեանցը թերթը պ. Պետրոս Սիմէոնեանին յանձնելուց երեք տարի յետոյ՝ 1866

թուականին Տիֆլիսում սկսեց հրատարակել «Գարուն» ամսագիրը, որը ծառայելու էր «ազգային լուսաւորութեան եւ դաստիարակութեան»: Հայր Մանգինեան Պետրոս վարդապետ Ղափանացու տաղերից մի տուն ընտրել էր իւր ամսագրի երեսին որպէս նշանաբան՝

Պայծառ արփին արդ բարձրացաւ
Հալման սառին ժամ է արդէն,
Կարմիր վարդին ոստ կակղեցաւ,
Ծաղկման ծառին ժամ է արդէն:

«Մեր ամսագրի անունը կոչեցինք Գարուն—գրում է հ. խմբագիրը— որ եկեղեցական, կրօնական, ուսումնական եւ բարոյական գիտութիւնների բուրաստաններից քաղելով ծաղիկներ, փունջ կապենք ամսագրիս միջոցաւ, եւ ամեն մի ամիս ընծայենք մեր սիրելի եղբարց, ինչպէս Գ(գ)արնան վարդի փունջ եւ հետզհետէ ծաղկի մեր բուրաստանը...»:

Տէր Ստեփանը շատ էր սիրում գրաբար լեզուն եւ իւր ամսագրի էջերը շատ անգամ լցնում էր գրաբար գրուածներով:

«Գրաբարն այն պատճառով ենք հրատարակում,—գրում էր նա—որ մէկ՝ որ այդ արմատական եւ մայր լեզուն պահպանուի, որ աշխարհաբարի ծնողն է եւ կեանքն. եւ երկրորդ՝ որ մեր երանելի նախնեաց հասուն կտոր գրուածքները տպագրելով պահպանենք նոցա անմուռանալի յիշատակը...»

Տէր Հօր յօդուածների հետ «Գարուն» ամսագրում տպագրուում էին Մ. Թաղիաթեանի, Ա. Տէր-Յակովբեանի, Յ. Յ. Ազնաւուրեանի, Յ. վ. Ալամդարեանի, Սահառնունու, Գ. Ներսիսեանի եւ այլոց յօդուածները:

«Գարուն» երբեմնապէս բանակուուի մէջ էր մտնում «Հայկական Աշխարհի» հետ գրաբարի խնդրի վերաբերմամբ: Հայր Մանդինեանի ամսագրի պէս մի հրատարակութիւն ոչ թէ աւելորդ, այլ եւ պիտանի էր իւր ժամանակին. դժբախտաբար մի տարին էլ չը կարողացաւ լրացնել: Յուլիս ամսին 7-դ տետրակը վերջինն եղաւ: Ի՞նչ էր պատճառը, նիւթական միջոցներից զուրկ լինելը թէ խմբագրական անձնական հանգամանքները, այդ մեզ անյայտ է մնացել:

ԺԸՆՍԹՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրները եւ «Գարուն» ամսագիրը— ա. . . . մի կողմը թողնելով նոյնպէս Թիֆլիսի «Գարուն» «ազգային լուսաւորութեան եւ դաստիարակութեան» ամսագիրը որ մեզ արդէն լաւ ծանօթ «Մեղուի» նախկին խմբագիր տէր Ստեփան. . . «Հայոց ամուլը Ռուսաստան» Յարոյ էջ 67 բ. . . . Թիֆլիսի մէջ «Մեղու Հայաստանի» նախկին խմբագիր Ս. ք. Մանդինեանը հրատարակեց «Գարուն» ամսագիրը բայց վեց (°) համար տալով դադարարեց. . . «Արձագանք» 1882 № 22 Ա. եր.
- գ. . . . Գարուն ամսագիրը որ հրատարակեց «Մեղու» նախկին խմբագիր Տէր Ստեփան Մանդինեանը. . . «Մտքի մշակը» Խ. Մալումեան էջ 30

2.) Ամսագրի ծրագիրը տպագրուում էր շապիկ վերջին երեսում. իսկ բովանդակութիւնները առաջին կամ երկրորդ երեսում:

85.

Ծ Ի Ա Ծ Ա Ն^{1.)}

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1866-1866

Հրատարակուում էր՝
Խմբագիր՝ Տ. Զուխաճեանց:



Երրորդ անգամն է որ պ. Տիգրան Զուխաճեանը յայտնուում է «խմբագիր». նախ «Բնար Հայկական» անունով երաժշտական թերթին էր խմբագիր, որ շուտով դադարեց, յետոյ «Օսմանեան Երաժշտութիւն» հանդիսին նոյն օրուան արժանացրեց, այս անգամ էլ «Ծիածան» անունով մի թերթսկեց հրատարակել որ մի տարի հազիւ քարշ գալով 1866 թ. վերջերին դադարուեց:

ԺԸՆՍԹՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Մեր աղբիւրները եւ «Ծիածանը»— ա. . . . նոյն (1866) տարի նմանապէս լոյս տեսաւ Կ. Պոլսում «Ծիածան» հանդէսը. . . «Արձագանք» 1882 № 22, Ա. եր. բ. «Ծիածան 1866 Կ. Պոլիս Զուխաճեան» «Դաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 339.

86.

**Ծ Ի Լ Ն
Ը Ի Ը Ր Ը Յ Ր Ի^{1.)}**

ՀԱՆԳԵՍ

ԱԶԳՈՑԻՆ, ԲԸՆՍԹՈՐՈՎԱՆ ԵՒ ՄՅԱՌՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆ
(Ամսագիր)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1866-1867.

Հրատարակուում էր ամսի վերջերին.
Խմբագիր՝ Մարկոս Աղաբէկեան.
Տպարան Ռուբենի Յ. Քիւրքեան.
Դիւրքը տպ. 2 թերթ 64 էջ. 16X24 Հ.-մ.



Փխխում հրատարակուող «Կուռնկ» ամսագրի խմբագիր պ. Մարկոս Աղաբէկեան Կոստանդնուպոլիս վերադառնալով 1866 թուականին սկսեց հրատարակել «Ծիլն Աւարայրի» ամսագիրը որ ծրագրով, ուղղութեամբ շատ տարբեր չէր «Կուռնկ»-ից: Ազգային պատմութեան անցեալ եւ ժամանակակից շրջանում օրուայ հարց դառած նշանաւոր խնդիրներ եւ այլ հետաքրքիր յօդուածներ, պատիւ էին բերում մեծապատիւ խմբագրին. . .

Ոչ իւր կամքին հաճելի, «Ծիլն Աւարայրի» առաջին տարին դարձաւ եւ վերջին տարի: 1867-ին ազգը այլ եւս չը տեսաւ «Ծիլն Աւարայրի» պատուական ամսագրին:

ԾՆՆՅՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրները եւ «Ծիլն Աւարայրի»—
ա. . . . պ. Մարկոս Աղաբէկեանը Պոլսոյ մէջ սկսեց «Ծիլն Աւարայրի» ամսագիրը որ մէկ ու կէս տարի շարունակուելով շատ հետաքր տեղեկութիւններ հրատարակեց. . .
 «Արձագանք» 1882 № 22 Ա. Ե.
բ. «Ծիլն Աւարայրի 1866 թ.»
 «Հայոց արդի մատեն.» (ձեռագ.)
գ. . . . 'ի Պոլ. «Ծիլն Աւար» առաջինին («Կուռնկ») ուղղութեամբ ու տպագրական օրինաց թուղտուղութեամբն աւելի համարձակելով (')

- Պատմ. հայ. դպրութ.՝ բ էջ 502.
դ. «Ծիլն Աւարայրի հանդէս բանասիրական եւ ազգային, խմբագրութեամբ Մարկոսի Աղաբէկեան. Կ. Պոլիս 'ի տպարանի Ռ. Յ. Քիւրքեան, 1863 (')»,
 «Մատեն. հայկակ.» Զարբ. էջ 287.
ե. «Ծիլն Աւարայրի 1866 Պոլիս Մ. Աղաբէկե(ան)»:
 «Դաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ. 339.
 «Ծիլն Աւարայրի» ամսագրի բոլոր տետրակներից միասին կազմած մի օրինակ գտնուում են Սարիզամուշում պ. Կարապետ Իսահակեանի մօտ:

88.

Ա Ս Ի Ա¹⁾
(Շաբաթաթերթ.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1867-1875
Հրատարակում էր կիրակի օրերը.
Խմբագիր՝ Մ. Փորթուզալեանց.



Երջին ժամանակներս Մարսելիայում «Արմենիա» թերթի խմբագիր, Թիւրքիայում յայտնի պ. Փորթուզալեան, Կոստանդնուպոլսում 1874 թուականին

ստանձնեց «Ասիա» լրագրի խմբագրութիւնը որը 1867 թուականից սկսուել էր պ. Գ. Բէյիգեանի ձեռքով:
Մի տարի, այլ եւս արգելուում է պարոնին այդ գործը: Պ. Մկրտիչ Փորթուզալեան ստիպուած է լինում հեռանալ Սուլթանի մայրաքաղաքից: «Ասիայի» ղէկը մնում է բոլորովին թափուր:

Փորթուգալեան թողնելով Թիւրքիան անցնում է արտասահման եւ տասնեակ տարուց լետոյ, սկսում է ուրիշ թերթի հրատարակութիւնը:

ԹՆՆՑԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Ասիա» լրագիրը եւ մեր աղբիւրները. ա. «... 1872 (՝) Թուին Պոլսոյ մէջ լոյս տեսաւ «Ասիա» անունով թերթը» «Արձագանք» 1882. № 22. Ա. Եր. բ. «Ասիա 1872 (՝) Պոլիս Գ. Ռէխեսան» «Դաս. հայազգ. պատմ.» բ. էջ 338.

89.



ԿՐՕՆԱԿԸՆ, ԲՈՐՈՅԵԿԸՆ, ԳՈՏՄԵԿԸՆ, ԲԸՆՍՍԻՐՈՎԸՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ 2.)

(Ամսագիր)

Վ ա ղ ա ը շ ա յ ա տ (Ռուս.) 1868—1894-Լս Հրատարակուում է՝ ամսի վերջերին 3) Խմբագրութեամբ Ս. Էջմիածնի միջնակցական 4.)

Ի Տ ա ղ ա ը շ ա յ ա տ Ս րբոյ Կաթուղ. Էջմիածնի 5) Դիւրքը՝ (տետր.) 3-4 տպագրակ. թերթ. 120 էջ. 16x25. Հ.-մ.

Թ ու ղ թ ը եւ տիպը՝ մաքուր. Բ ա ժ ա ն ո ղ ա զ ա զ ի ն ը՝ տարեկան 4 մանէթ. Լ ե գ ու շ ո ճ ը } «... Բրիտոններ, որ տեսած էք այս փորձութիւնը, Ուղղագրութ. } դուք գիտէք եւ այն...» Ծ ը ա զ ի ը ը՝

ԿՐՕՆԱԿԱՆ—Կաթողիկոսական կոնդակներ, քարոզներ, ճառեր, աստուածաբանական գիտութիւն, եկեղեցական—կրօնական այլ յօդուածներ, ոտանաւոր, գրուածներ, ներ-

բողներ ուղերձներ, նամակներ, ընդհանրականներ, յառաջադրութիւններ, կրօնական գրքերի մասին քննադատութիւն: ԲԱՐՈՅԱԿԱՆ—6) Մանր յօդուածներ, առականեր, ոտանաւորներ եւ այլ թարգմանական գրութիւններ:

ՊԱՏՄԱԿԱՆ—Պատմական տեսութիւններ, զանանան վանքերի, տեղերի, ճանապարհորդութիւն. լիշատակարաններ, յօդուածներ պատմական կեանքից, պատճէն նամակների եւ այլն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Քննադատական յօդուածներ, առողջապահութիւն, օգերեւոյթաբանութիւն, երկրագործութիւն, տեսութիւններ դպրոցական աշխարհից, արուեստագիտութիւն վաճառականութիւն... .

ԱԶԳԱՅԻՆ—Քաղաքական յօդուածներ ազգային լրագիրներից. նամակներ, կառավարչական կարգադրութիւններ, ուսումնարանական վարչութեան տեղեկագիր, հաշուեցոյց վանքական կալուածների, նրուիրատուութիւններ, լուրեր, տեղեկութիւններ... .

«Պաշտօնականք» քաղուածքներ Սինոդի օրագրութիւնից: Ծանուցումն:

Բովանդակութիւն 1890, № 9. (սեպտ.)

Կրօնական—Եղիա Մարգարէի տեսիլը (Բերսիէ).

Բանասիրակ.—Ստրկութեան վիճակը Հին աշխարհում եւ քրիստոնէութեան ազդեցութիւնը նորա վերայ. (շարունակ.)—Ս. Մանդինեան:

Ազգային—Վերադարձ Վեհափառ Հայրապետի ազգիս 'ի Մայր Աթոռս.

—Ուսումնական վարչական լանձնաժողովի կողմից:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ. Նուիրատուութիւնք, համառօտ հաշիւ Մոզգոկի երկսեռ ուսումնարանաց հայոց, նոր-Բայազէդ քաղաքի... —Պաշտօնականք.-քաղուածք կոնդակաց Վեհ. Հայրապետի ազգիս... .

Քաղուածք յօրագրութեանց Սինոդի. ծանուցումն.

Հասցէն՝ Վաղարշապատ. Էջմիածնի տպարանական ժողով:
 կամ— Вагаршапатъ. Въ Эчмиадзинскій типограф. комитетъ.
 կամ— Vagarchapat. (Russie) Komitet Imprimerie Etchmiadzin.



ըջանկայիշատակ Գէորգ
 դ. կաթողիկոս որ
 յայտնի է ազգին
 Իւր շատ նշանաւոր
 ազգօգուտ գործե-
 րով, ինչպէս են ս.
 Էջմիածնի ձեմարա-
 նը, Թանգարանը,

Մատենադարանը, Հայկական ձայնագրութեան բարգաւաճումը, Բիւրականի կաթողիկոսական ամարանոցը, Հառիճու վանքական կալուածների բարեկարգութիւնները, ս. Մաշտոցի եւ այլ հին վանքերի նորոգութիւններ, բազմաթիւ կրօնական—ազգային գրքերի հրատարակութիւն եւ այլն, այդ բոլորի հետ հոգեւոյս Հայրապետի օրով որ գեւ երկու տարի էր բարձրացել ս. Լուսաւորչի Գահը, յատուկ Իւր հրամանով 1868 թուականի սկզբից սկսուեց կիսապաշտօնական «Արարատ» ամսագիրը որ մինչեւ այժմ հրատարակուում է: Շատ ափսոս որ հանգուցեալ Հայրապետի մի-երկու հիմնած գործերն այժմ մեր ժամանակում կատարեալ փոփոխութեան են ենթարկուած եւ այն նպատակին չեն ծառայում ինչ որ ցանկանում էր Արժանայիշատակ Ամենայն Հայոց Հայրապետը:

«Արարատի» բարեկարգ գրութիւնն այն ժամանակ տեսնուեց, երբ գեւ հիմնադիր Հովուապետը Գահի վերայ էր: Հոգեպէս եւ

բարոյապէս միթարուում է մարդ երբ թերթում է «Արարատի» նախնական թուականների տետրակները, բազմակողմանի գեղեցիկ նիւթեր, կրօնական-բարոյական մի ամսագրի վայել ոտանաւորներ, ճառեր, քարոզներ... «Կուռնի» ամսագրի խմբագրական կազմակերպութեան նման էր «Արարատի» նիւթերի դասաւորութիւնը: Իսկ այժմ թէեւ Վանքի տպարանի զարգանալով «Արարատի» թողլին ու տպագրութիւնն աւելի գեղեցիկ են քան առաջ, բայց ներկայ յարգոյ խմբագրութիւնը երբեմնապէս այնպիսի յօգուածներ է գետեղում ամսագրի էջերում որ ոչ միայն վայել չէ, այլ եւ անպատուաբեր է «Արարատի» էջերում տպագրուելու:

Մի ամսագիր որ ազգի սեփականութիւն է հաշուում, որ հրատարակուելով ազգային կենտրոնում՝ ս. Աթուում, ազգի հաշուով ու միջոցներով է իւր գոյութիւնը պահում, չը պէտք է որ մի ո եւ է կուսակցութեան գործիք դառնայ, բանակուիւնների ու վէճերի մէջ մտնի:

Լինելով Հայոց Հայրապետութեան օրգան(բերան), լինելով գրաքննչական հետաքննութիւնից ազատ, չը պէտք է իւր էջերը լցնէ անտեղի կշռամբանքներով, գործիք դառած զանազան միաբանների, կարող է աւելի լուրջ աւելի խոհեմ գործելով պարպել:

«Արարատ» այժմ տպագրուում է «Հրամանաւ Ամեն. Տ. Տեղակալի Հայրապետութեան Հայոց»:

Մինչեւ նորընտիր Մկրտիչ Հայրապետի Գահ բազմելը, որ անշուշտ պէտք է բարեփոխէ ու բարեզարգէ ամսագրիս ներքին կազմակերպութիւնը, կը մնայ այդպէս:

«Արարատի» խմբագրութիւնը զանազան ժամանակներում վարել են քանի մի անցինք. վերջերքս պ. Պետրոս Սիմէօնեան, Արիս, եպիսկոպոս Գաւթեան. վերջինիս յատուկ «Արարատի» խմբագիր Հաստատեց իւր Կոնդակով հանգուցեալ Մակար Ա. Կաթողիկոսը, բայց վերջերքս «միաբան» ստորագրող մի

պարոն՝ Գալուստ Տէր-Մկրտչեան առանց մի կանոնաւոր ընտրութեան յանձնէ առել «Արարատի» խմբագրութան պաշտօնը:

«Արարատին» սկզբնական թուականներին աշխատակցում էին՝ Աբէլ արքեպիսկ. Մխիթարեան, Վահրամ վարդ. Մանկունի, Ստեփ. վարդ. Մխիթարեան, Գրիգ. եպիսկ. Աղափիրեան, Մեսրոպ վարդ. Սմբատեան, Մկրտ. Գայֆաճեան, Կ. Տէր Սարգսեան, Մանուէլ ք. Աստուածատուրեան, Ենովք Մովսիսեան, Մեսրոպ վարդ. քահ. Գեօնջեանց, օր. Սօֆիա Առաքելեանց: Գաբր. քահ. Պատկանեաց, Մելք. քահ. Քալանթարեան, Եղիազար արքեպիսկոպոս, Հայր. Ղուկասեանց, Մ. Բագրատունի, Յով. Մուշեղեանց, Ղազ. Աղայեանց, Աղ. Քալանթարեանց, Աղէք. Մխիթարեանց, Աշրղ-Ջիւանի, Փ. Վարդանեան, Աւագ-սարկ. Գ. Սուրէնեանց, Ստ. Մալխասեանց, Գալուստ Երմազանեանց, Եղիշ. վարժ. Մեծատունեաց, Ս. Հախումեանց, Կոստ. Մելիք-Շահնազարեանց, Կարապետ Կոստանեանց, Մկրտիչ Պալեան, բժ. Սևետ. Բաբայեանց, Ստ. Ստեփանէ, Սամուէլ Գիւլգատեանց, Քաջբերունի, Ա. Ք. Երիցեան, Հայկորդի, Աւետաւ-սարկ. Փինաջեանց եւ այլք:

Վերջերքս միայն՝ Ա. Տէր-Միքէլեանց, «Փ», Միաբան . . .

Սկզբում ինչպէս բաժանորդների ցուցակից երեւում է «Արարատ» ունեցել է բազմաթիւ աշխարհական ստորագրողներ, ոչ ուսուցիչներ այլ «կամաւոր» ստացողներ. բայց այժմ ստացողներն էլ դժգոհ են որ ստիպուած են ստանալու: Մեզ շատ է պատահած տեսնել «Արարատի» ամբողջ աւարուայ տետրակները առանց թղթհատած հասարակ բանացնելու թղթի տեղ կշիռով ծախելիս:

Ինչո՞ւ թող տալ մամուլի այդ չափ ըստորանալը ժողովրդի աչքում. մանաւանդ այն պարբերականի որը ս. Էջմիածնի, Մայր Աթոռի հրատարակութիւնն է: Զանձաբընում է ընթերցողներին այն գէպքը, որ «Արարատի» համարները շատ ուշ են ստաց-

ուում, օրինակ մայիսի համարը հազիւ դաւառացիներին է հասնում յուլիսի վերջերին, իսկ գիւղերը աւելի ուշ է հասնում:

«Արարատի» ճակատին սկզբի տարիներում տպագրուում էր մի պատկեր, որ բաւականին անյաջող էր փորագրութեան կողմից: Ներկայացնում էր Արարատները եւ Էջմիածնի ս. Կաթողիկէն: Յետոյ մինչեւ 'ի Տէր հանգուցեալ Մակար Առաջինի օրերը փոփոխուել էր կլիշէն մի քանի անգամ, աւելի գեղեցկանալով: Բայց լիշեալ Կաթողիկոսի մահից յետոյ, ամսագրի տիրող ձեռքերը գուցէ այլեւս իւրեանց ազատ զգալով եւ երկրորդական բան հաշուելով կրօնն ու եկեղեցին, այդ կլիշէն փոխեցին մի ուրիշի հետ, որը Գէորգեան ձեմարանի բաւականին անճաշակ նկարն էր ներկայացնում, մի կողմից երեւցնելով ս. Էջմիածնի Վանքի շատ փոքր տեսքը:

«Արարատը» իւր գոյութեան 26-ամեակը լրացրեց. որ 1/4 դար կեանքը ներկայիս հայ լրագիրների մէջ փոքր թիւ չէ: Ռուսաստանում այժմ հրատարակուող հայ լրագիրներից ամենահինն է «Արարատը»: Յուսանք որ ողջամիտ անձերի ձեռքերով «Արարատը» իւր նախնական ուղղութեան մէջ մտնելով կը լրացնէ իւր 50, եւ աւելի՛ 100-ամեակը: Վարչական մարմնի ձեռքում նիւթական միջոցներից կատարեալ ապահով է:

Ժ Ա Ն Օ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

1 «Արարատ» ամսագրի մասին մեր աղբիւրները:—

ա. . . . Արդի (1878) Հայրապետն Գէորգ Գ. փափաքեցաւ այս հանդիսին հրատարակութեամբ թէ, նոր ուսումնական ասպարէզ բանալ միաբանից, եւ թէ վրանին դրուած ուսման անսիրելութեան(“) արատը սըրբել: . . . Նիւթոց ընտրութեան եւ ճութութեան ջանք եւ գովելի փոյթ երեւցուց մանաւանդ առաջին տարիներուն մէջ. . . .
„Պատմ. հայ, դպրութ.“ Բ. էջ 502.

բ. ,,...Արարատը պէտք է որ իւր գոյութիւնն ունենայ. եթէ ոչ որպէս հասարակական հարցեր քննող, հայ ժողովրդին զարթեցնող, կրթող ամսագիր, այլ գոնէ որպէս հայ եկեղեցուն վերաբերեալ զանազան տեղեկութիւններ, կարգադրութիւններ ,,ակտ" եր փոփոխութիւններ հաղորդող մասնաւոր հրատարակութիւն.."

„Հայոց մամուլը Ռուսաստան." էջ 69
 գ. ,,Արարատ ամսագիր կրօնական պատմական բանասիրական եւ բարոյական գիտելեաց, Աշխատասիրութիւն Միաբանից ս. Էջմիածնի, հրամանաւ Աստուածընտիր եւ վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ դ-ի ընդհանրական Հայրապետի եւ Ասպետի "ի Ս. Էջմիած. 1868—1882. "

„Հայկակ մատենագիտ." Զարբ. էջ. 7.
 դ. ,,Բայց (1868) թիւ ունեցանք երեք նորանոր հանդէսներ՝ Էջմիածնայ միաբանութեան սկսած „Արարատ" ամսագիրը որ մինչեւ այս օր էլ շարունակուում է..."

„Արձագանք" 1882 .N: 22. Ա. և. և.
 ե. ,,... Էջմիածնում „Արարատը" հանգուցեալ Գէորգ դ. կաթողիկոսի հրամանով որ մինչեւ այժմ շարունակուում է... "

„Հայկական մատենադ." բ. էջ 153.
 [,,... in Etschmiadsin auf Veranlassung des verstorbenen Patriarchen Georg IV der bis heute bestehende „Ararat" und noch andere länger..."

„Arm. Bibl." II. էջ 153"
 զ. ,,...60-ական թուականների վերջերին... երեւացին նոր հրատարակութիւններ... եւ Էջմիածնում Գէորգ IV-ի օրով ,,Արարատ" պաշտօնական ամսագիրը... "

„Մտքի մշակը" Խ. Մալում. էջ 30.
 է. ,,... թող պատասխանեն մեզ լօգիական եզրակացութեամբ մեր պոտուելի հարբը ս. Էջմիածնի. թէ թնչ խորհուրդ ունի „Արարատ" ամսագիրը հրատարակել Ռուսաց հայերի մէջ մի լեզուով որ դոցա անհասկանալի է... "

„Հանդէս գրական եւ պատմ." Ս. Նագ.
 ը. „Ստացել ենք Էջմիածնում հրատարակուող „Արարատ" ամսագրի յունուարի տետրը: Այս տարի այդ „Արարատը" փոփոխութեան է ենթարկուել եւ արտաքուստ... "

„Նոր-Իտա" 1892. N: 26. (խմբ.)
 թ. „Էջմիածնի „Արարատ" ամսագ. 1868-85"

„Պատմ. հայ մատեն" եղ. վ. Իուր. էջ 97
 Ժ. „ Արարատ ամսագիր 1868 Էջմիածնին"
 „Դաս. հայ-ազգ. պատմ" բ. էջ 338.

- 2.) Նախ եղել է ,,կրօնական պատմական բունասիրական եւ բարոյական գիտելեաց" 2-դ եւ 3-դ տարիներում դուրս է ձգուած ,,գիտելեաց " բառը, Յետոյ աւելացաւ ,,Ազգային" ը:
- 3.) Ոչ կանոնաւոր.
- 4.) Ամսագրի վերայ վերջին տարիներս խմբագրի ստորագրութիւն չի երեւում.
- 5.) Նախ մեծ դիրքով էր երկսիւն. 18x27 հ.-մ.
- 6.) „Բարոյական" բաժինը սակաւ էր նիւթերով.

90.

Ի Ր Ա Ի Ո Ւ Ն Ք^{1.)}

ԻՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՇԱՐԱԳԻՍՄԵՐԻՔ

Զ մ իւ ու ն ի ա (Տաճկաստ.) 1868-1868.
 Խ մ բ ա գ ի ը՝ Սարգիս-Միրզա Վանանդեցի.



եր պարբերական մամուլի պատմութեան մէջ միակ իրաւագրական թերթը եղել է «Իրաւունք» շաբաթաթերթը, որ 1868 թուականի նոյեմբերի վերջերից սկսեց հրատարակուել Իզմիրում Սարգիս Մ.

Վանանդեցու խմբագրութեամբ: Բայց որպէս մասնագիտական թերթ յաջողութիւն չունեցաւ. հէնց նոյն տարուայ հետ էլ վերջացաւ ,,Իրաւունքը" չորս հինգ համար հազիւ տալով:

Ի ԱՆՍՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Մեր «Աղբիւրները» «Իրաւունք» շաբաթաթերթը—
- ա. «Իրաւունք շաբաթաթերթն սկսեց հրատարակուել. Սարգ. Միրզա 1868 . . .» «Յիշատ. իզմիրցի ձերմակ. (ձեռ.)
 - բ. «Իրաւունք 1868 Ձմիւռ. Ս. Միրզա» «Իաս. հայ-ազգ. պատմ. էջ 339.
 - գ. «. . . եւ վերջապէս (1868) Ձմիւռնիայի մէջ պ. Սարգիս Միրզայի խմբագրութեամբ լոյս տեսաւ «Իրաւունք» անունով երաւարանական մասնագիտական թերթը . . . երկարատեւ չեղաւ. . .» «Արձագանք» 1882. № 22. Ա. Ե.

91.

Է Ր Ի Ջ Ա¹⁾

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(Կիսամսեայ)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1868-1869
Հրատարակուում էր ամսի 1-ին, 15-ին:
Խ մ բ ա գ ի Ր՝ Խ. Գ. Թերզեան 2.)



ոստանդնուպոլսում «Էրիզա» անունով մի թատրոնական հանդէս էլ ունեցել ենք որ 1868 թուականին հրատարակել սկսեց պ. Գ. Թերզեան: Նիւթա-

կանի մասին անյաջողութիւնների հանգիպելով, կարճ միջոցում դադարուեց մի տար-

ուայ վերջերին դեռ չը հասած:

Ի ԱՆՍՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Էրիզա» Թատր. երկշաբաթաթերթը եւ մեր աղբիւրները՝
- ա. «Էրիզա 1868 Պոլիս Խ. Գ. Թերզեան» «Իաս. հայ-ազգ. պատմ. բ. էջ 339.
 - բ. «Պ. Խ. Թերզեանի խմբագրութեամբ սկսուեց «Էրիզա» թատրոնական հանդէսը.» «Արձագանք» 1882, № 22 Ա. Ե.
 - գ. «Էրիզա հանդէս կիսամսեայ» «Մատեն. հայկ.» Զարբ. էջ 198.
 - դ. «(1870) օգոստոսը Թիֆլիսում անցկացրեց ժամանակ ինչ առաջ Կ. պ(Պ)ոլսում հրատարակուող «Էրիզա» օրագրի խմբագրող մեծապատիւ պ. Ստեփան Մելիքեան(՝) «Հայկական Աշխարհ» 1870 № 7-8
- 2.) Հայր Խորէն Ստեփանէի ասելով Օրագրի խմբագրողն էր Ստեփան Մելիքեան: Այդ դէպքում չի կարող որ սխալուած լինի հ. Խորէն: Ուրեմն «Էրիզա» ին կարճ ժամանակում եղել են խմբագիրներ՝ Թերզեան եւ Մելիքեան:

92.

Մ Ա Մ Ո Ւ Լ¹⁾

ԱՐՁԱԳԱՆԻ ՀԱՄԱՐԱԿԱՆ

ԿԱՐԾԵԱՑ

ՀԱՆԴԵՍ ԶԱԻՆՇՏԱԿԱՆ

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1869-1883
Հրատարակուում էր
Խ մ բ ա գ ի Ր՝ Գէորգ Այուլագեան.
Տպարան. . .

Լ ե գ ու Ն, ո ճ ը } «. . . Աւելորդ չեմք համարեր ասել որ Յշուառ գիւղացիք Ուղղազրութ. հարկադրուեցան նոցա. . .»
—Ազգային լուրեր, թղթակցութիւններ եւ զանազան տեղեկութիւններ. . .
—Ձաւեշտական — երգիծաբանական գրու-

Թիւններ, անեկտոտներ. բառախաղ, հանելուկ եւ այլ զուարճալիք:



ուարճախօս վառվրուուն երիտասարդ Գէորգ էֆ. Այուլազեան, Թիւրքահայոց մէջ 1869 թուականի սկզբից «Մամուլ» ազգային—զաւեշտական հանդիսի

հրատարակութիւնն սկսեց, որ շատ նրման էր «Մեղու» տասնօրեայ հանդիսին: Նրման էր ասում ենք, որովհետեւ «Մամուլն» էլ իւր սրախօսութիւնների հետ տեղաւորում էր նաեւ զանազան ծաղրապատկերներ, որոնք նկարում էր Թիւրքիայում ժամանակակից յայտնի նկարիչ Տելեմաք Էնքսերճեան:

«Մամուլ» իւր անուան համեմատ բացի զաւեշտականից տալիս էր իւր ընթերցողներին նաեւ ազգային—ուսումնական յօդուածներ, դպրոցական հարցերի եւ այլ խնդիրների մասին տեղեկութիւններ եւ այլն:

1883 թուականին Օսմանեան երկրում տեղական քրիստոնեաների եւ մահմետականների մէջ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ Կ. Պոլսում ՚ի թիւս ալլոց ձերբակալուեցաւ եւ «Մամուլի» խմբագիր պ. Այուլազեանը, ու Տպագրակոն տեսչութեան հրամանով թերթն էլ ենթարկուեց դադարման երկու ամիս ժամանակով: Գործը քննուելով պ. Այուլազեան որ եւ Ազգային փողովի անդամ էր՝ քաղաքական յանձաւոր ճանաչուելով, Միտլի կղզին աքսորուեցաւ ց՛մահ: Սակայն երեք տարին լրանալու մօտ էր, 1886 թ. օգոստոսին, Վեհափ. Սուլթանը անհասարակօրէն ներեց Այուլազ-

եանին: Վերադառնալով Կ. Պոլիս, «Մամուլի» խմբագիրը կամեցաւ շարունակել իւր հանդէսը բայց անյաջողութիւնների հանդիպեց:

ԺԱՆՅԱՆՅԱՆՆԵՐ.

- 1.) «Մամուլ» եւ մեր աղբիւրները —
 - ա. ,, . . . 1861 (°) Թուին պ. Այուլազեանի ձեռքով ,,Մամուլ" թերթը. . . .
 - ,,Արձագանք" 1882 № 22 Ա. եր.
 - բ. ,,Մամուլ 1869 Գ. Այուլազեանի
 - ,,Դաս. հայ-ազգ. պատ." բ. էջ 336.

93.

Ա Ր Ա Ր Ա Տ .1)

ԱՐԱՊԻՒ Կ. ՊՈԼՍՈՑ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1869-1872. Հրատարակուում էր ' Խմբագիր՝ Մ. Այուլազեան. . .



արոն Մատթէոս Այուլազեան 69 թուականին հիմնեց Կոստանդնուպոլսում «Արարատ» խրագիրը, որ հրատարակուում էր հայ եւ տաճկերէն լեզուներով:

Մի տարի միայն այս ձեւով հրատարակուելով, «Արարատ» սկսեց գուրս գալ «Գործասէր Ընկերութեան» ծախքերով, որպէս եւ տեւեց մինչեւ 1872 թ: Յետոյ ծրագիրը փոխելով տեղափոխուեց Ամերիկա:

ԺԱՆՍԻՍԻՍԻՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Արարատ»—
 ա. ,,Արարատ 1869 Պոլիս Մ. Այուստեան.“
 ,,Իաս. Հայ-ազգ. պատմ.“ ք. էջ 338.
 բ. ,,Իսկ Պոլսոյ մէջ պ. Այուստեանի խմբա-
 գրութեամբ ,,Արարատ“ . . .“
 ,,Արձագանք“ 1882 № 22 Ա. Եր.

94.

Ե Փ Ր Ա Տ^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1869-1870
 Հրատարակուում էր՝
 Խմբագիր՝ Ս. Հ. Ֆելեկեան. . .



եղեցիկ անուն, բայց
 իւր գործունէու-
 թեամբ «Նփրատը»
 մեր մամուլի պատ-
 մութեան մէջ մի
 նշանակութիւն չէ
 թողել: Հագիւ մի
 տարի կարողացել է

ապրել Բիւզանդեան երկրում պ. Ֆելեկեանի
 Հանգէսը:

ԺԱՆՍԻՍԻՍԻՆՆԵՐ.

- 1.) Նփրատի մասին աղբիւրներ—
 ա. ,,Նփրատ 1869 Պոլիս Ս. Հ. Ֆելեկեան“
 ,,Իաս. Հայ-ազգ. պատմ.“ Մ. Գ. էջ 338
 բ. ,,Հետագայ 1869 թուին. . . Կ Պոլսոյ մէջ
 . . . պ. Ֆելեկեանի ձեռքով ,,Նփրատ“ . . .“
 ,,Արձագանք“ 1882 № 22 Ա. Եր.

գ. ,, . . . ասի (Պարոնեան) արդէն ծանօթ է
 ժողովրդին երբեմն ,,Նփրատայ“ խմբագր-
 րութեամբ. . .

„Արձագանք“ 1893 № 12 (,,Մասիս“)
 Մեր այս երրորդ աղբիւրից երեւում է որ մեր
 երգիծարան Հանգուցեալ Յակ. Պարոնեան, կարճ
 ժամանակում վարել է ,,Նփրատի“ խմբագրութեան
 պաշտօնը:

95.

Օ Ր Ա Գ Ի Ր^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1869-1869
 Հրատարակուում էր՝
 Խմբագիր՝ Օգսէն Խոճասարեան. . .


Քիւրքիայում 60-ական թուականների Հայ
 լրագրութեան բազմութեան մէջ վերջինն
 է «Օրագիրը»: Օրագիրը, որ 1869 թուականին
 Սեպտեմբերի 6-ից սկսեց Հրատարակել Հան-
 գուցեալ Օգսէն Խոճասարեան, բայց թերթի
 ոչ արժանաւորութեան Համար կարճ կեանք
 ունեցաւ: Նիւթական միջոցների պակասու-
 թիւնը զգալի կերպով երեւում էր «Օրագրի»
 միամեայ կացութեան մէջ: Մինչեւ տարուայ
 վերջերին քարշ դալով 60-ական թուական-
 ների Հետ վերջացաւ:

ԺԱՆՍԻՍԻՍԻՆՆԵՐ.

- 1.) «Օրագիր» լրագիրը եւ մեր լրագրու-
 թեան աղբիւրները.
 ա. ,,Օրագիր“ 1862 (”) Պոլիս Օ. Խոճասար-
 եան . . .“
 ,,Իաս. Հայ-ազգ. պատմ.“ ք. էջ 340.
 բ. ,, . . . եւ պ. Օգսէն Խոճասարեանի ձեռքով
 ,,Օրագիր“ թերթը. . .“
 ,,Արձագանք“ 1882 № 22 Ա. Ե.
 գ. ,,Օրագիր.
 ,,Հայոց արդի մատեն.“ (ձեռագ.)
 դ. ,,Օգսէն Խոճասարեան Սամաթիոյ թաղին

երեսփոխան էր եւ ընդդիմադիր կուակցութեան ամենէն նշանաւոր ատենարաններէն մին. Հանգուցեալը սնորհէ խմբագրապետն էր «Օրագիր» լրագրին եւ իւր գրչով այն ատեն ազդեցութիւն ունէր Հանրային կարծեաց վերայ. իր մոլութիւնն այն էր

որ ուրիշ սամաթիացիներու պէս՝ ինքն ալ Բագոսը քիչ մը շատկէկ կը պաշտէր՝
 «Արաբս» 1893 գ. Ա. էջ 93.
 Այլ եւս ոչ մի աղբիւր «Օրագրի» մասին:



Թ.

1870-1880.

(ՏՈՒՆՈՐԵՆԿ)

21 Լ Ր Ա Գ Ի Ր.

Նախընթաց շրջանի հսկառակ այս տասնամեակում հայ լրագրութեան գործը թուով նուազեց քան աւելացաւ: Բայց այժմս լրագրութիւնը դարձաւ ժողովրդի, հասարակութեան կրթիչ, քարոզիչ, առաջնորդող, լուսաւորող, ոչ առաջուայ նման ցաք ու ցրիւ ծրագիրներով. զանազան տեսակ մտքերի արտայայտութիւն կամ ծնունդ. (բա. ցառութիւնների մասին չէ մեր խօսքը): Քաղաքական փոփոխութիւնները, տնտեսական ու կեանքի այլ պայմանները ժողովրդին հասցրին գիտակցութեան աստիճանի:

Ներկայ ասանամեակում նշանաւոր գործողներից յիշենք՝ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Վահան վարդապետ Բաստամեան, Ջարմայր Մըսերեան, Մատթէոս Մամուրեան, Գրիգոր Արծրունի, Աբգար Յովհաննիսեան:

96.

Յ Ո Յ Ս^{1.)}

ՕՐԱԳԻՐ

ԲԵՐՏՆԵՎԵՆ ԿՐԹՆԵՎԵՆ ԲԵՆԵՍԻՐԵՎԵՆ

Արմաշու-Վանք (Նիկո՛սիո՛ւ-Տաճկաստ.) 1870-1877.

Հրատարակուում էր ամսի վերջերին. Հրատարակութիւն Միաբանական ուխտին որ 'ի Արմաշ.

Ի Տպարանի Վանացն Չարխափան սուրբ Աստուածածնի:



րուսադէմում ս. Յակովբեանց հայ միաբանութեան խնամքով հրատարակուած «Սիօն» ամսագրի յաջողութիւնը տեսնելով, Արմաշու Վանքի միաբանու-

թիւնն էլ 1870 թուականից սկսեց հրատարակել «Յոյս» անունով մի բարոյական հանդէս: Այն միջոցները որ ունէր «Սիօնը» թէ նիւթական եւ թէ աշխատակցող անձանց նկատմամբ, դժբախտապէս չունէր «Յոյսը»: Խմբագրութեան յոգնջան աշխատութեանց հսկառակ, «Յոյսը» երկար կեանք չունեցաւ. թէեւ սկզբից յաջողութիւն տեսնուեց: Եօթնամեայ հասակը հազիւ հասցրին «Յոյսին» որ եւ բախտ չունեցաւ այլ եւս հրատարակուելու: 1876 թուականի վերջերին դադարուեց չը նայելով որ «Յոյսը» մի օգտակար եւ խնամքով խմբագրուած հանդէս էր եւ իւր ծրագրի համեմատ պարունակում էր իւր մէջ բազմաթիւ հետաքրքիր նիւթեր:

ԹՆՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) «Յոյս» ամսագրի մասին մեր աղբիւրները

Հրատարակուում էր ամսի վերջերին.
Խմբագիր՝ Մարկոս Աղաբէկեան.
Տպարան Ռուբենի Յ. Քիւրքեան.
Դիւրքը տպ. 2 թերթ 64 էջ. 16X24 Հ.-մ.



Փխիսում Հրատարակուող «Կուռնկ» ամսագրի խմբագիր պ. Մարկոս Աղաբէկեան Կոստանդնուպոլիս վերադառնալով 1866 թուականին սկսեց Հրատարակել «Ծիւն Աւարայրի» ամսագիրը որ ծրագրով, ուղղութեամբ շատ տարբեր չէր «Կուռնկ»-ից: Ազգային պատմութեան անցեալ եւ ժամանակակից շրջանում օրուայ Հարց դառած նշանաւոր խնդիրներ եւ այլ հետաքրքիր յօդուածներ, պատիւ էին բերում մեծապատիւ խմբագրին. . .

Ոչ իւր կամքին հաճելի, «Ծիւն Աւարայրի» առաջին տարին դարձաւ եւ վերջին տարի: 1867-ին ազգը այլ եւս չը տեսաւ «Ծիւն Աւարայրի» պատուական ամսագրին:

Ծ Ա Ն Յ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

- 1.) Աղբիւրները եւ «Ծիւն Աւարայրի»—
ա. . . . պ. Մարկոս Աղաբէկեանը Պոլսոյ մէջ սկսեց «Ծիւն Աւարայրի» ամսագիրը որ մէկ ու կէս տարի շարունակուելով շատ հետաքրքիր տեղեկութիւններ Հրատարակեց. . .
«Արձագանք» 1882 № 22 Ա. Ե.
բ. «Ծիւն Աւարայրի 1866 թ.»
«Հայոց արդի մատեն.» (ձեռագ.)
գ. . . . ՚ի Պոլ. «Ծիւն Աւար» առաջինին («Կուռնկ») ուղղութեամբ ու տպագրական օրինաց թոյլտուութեամբն աւելի համարձակելով ()

- դ. «Պատմ. Հայ. դպրութ.» բ էջ 502.
ե. «Ծիւն Աւարայրի հանդէս բանասիրական եւ ազգային, խմբագրութեամբ Մարկոսի Աղաբէկեան. Կ. Պոլիս ՚ի տպարանի Ռ. Յ. Քիւրքեան, 1863 () ,,
,,Մատեն. Հայկակ.« Զարբ. էջ 287.
ե. «Ծիւն Աւարայրի 1866 Պոլիս Մ. Աղաբէկեան»:
,,Իաս. Հայագգ. պատմ.« բ. էջ. 339.
,,Ծիւն Աւարայրի« ամսագրի բոլոր տեսրակներէց միասին կազմած մի օրինակ գտնուում են Սարիղամուշում պ. Կարապետ Իսահակեանի մօտ:

88.

Ա Ս Ի Ա ^{1.)}

(Շաբաթաթերթ.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1867-1875.
Հրատարակուում էր կիրակի օրերը.
Խմբագիր՝ Մ. Փորթուզալեանց.



Երջին ժամանակներս Մարսելիայում «Արմենիա» թերթի խմբագիր, Քիւրքիայում յայտնի պ. Փորթուզալեան, Կոստանդնուպոլսում 1874 թուականին

ստանձնեց «Ասիա» լրագրի խմբագրութիւնը որը 1867 թուականից սկսուել էր պ. Գ. Րէյիզեանի ձեռքով: Մի տարի, այլ եւս արգելուում է պարոնին այդ գործը: Պ. Մկրտիչ Փորթուզալեան ստիպուած է լինում հեռանալ Սուլթանի մայրաքաղաքից: «Ասիայի» ղէկը մնում է բոլորովին թափուր:

Փորթուգալեան թողնելով Թիւրքիան անցնում է արտասահման եւ տասնեակ տարուց յետոյ, սկսում է ուրիշ թերթի հրատարակութիւնը:

Թ Ա Ն Ս Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր .

- 1.) «Ասիա» լրագիրը եւ մեր աղբիւրները. ա. . . . 1872 (°) Թուին Պոլսոյ մէջ լոյս տեսաւ «Ասիա» անունով թերթը՝ «Արձագանք» 1882. № 22. Ա. Եր. բ. «Ասիա 1872 (°) Պոլսի Գ. Ռէիսեան» «Դաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 338.

89.



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն, Բ Ե Ր Ո Ւ Ը Կ Ա Ն, Պ Ա Ր Մ Ը Կ Ա Ն, Բ Ա Ն Ը Ս Ի Բ Ը Կ Ա Ն Ե Ւ Ա Ջ Գ Ն Ե Ր Ի Ն 2-)

(Ամսագիր)

Վ ա ղ ա Ր շ ա պ ա տ (Ռուս.) 1868—1894-Լս
 Հրատարակուում է՝ ամսի վերջերին 3)
 Խմբագրութեամբ Ս. Էջմիածնի մի-
 բանութեան 4.)
 Ի Տ պ ա Ր ա ն ի Սրբոյ Կաթող. Էջմիածնի 5)
 Դիւրքը՝ (տետր.) 3-4 տպագրակ. թերթ.
 120 էջ. 16x25. Հ.-մ.
 Թ ու ղ թ ը եւ տիպը՝ մաքուր.
 Բ ա ժ ա ն ո Ր զ ա գ ի ն ը՝ տարեկան 4 մանէթ.
 Լ ե զ ու ն ո ճ ը } . . . Քրիստոնսւյք, որ տե-
 Ու ղ ղ ա գ Ր Ո Ւ Թ . } սած էք այս փորձութիւնը,
 } դուք գիտէք եւ այն. . . .
 Ծրագիրը՝
 Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն.—Կաթողիկոսական կոնդակներ,
 քարոզներ, ճառեր, աստուածաբանական
 գիտութիւն, եկեղեցական—կրօնական այլ
 յօդուածներ, ոտանաւոր, գրուածներ, ներ-

բողներ ուղերձներ, նամակներ, ընդհան-
 րականներ, յառաջադրութիւններ, կրօնա-
 կան գրքերի մասին քննադատութիւն:
 Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն.—6) Մանր յօդուածներ, առակ-
 ներ, ոտանաւորներ եւ այլ թարգմանական
 գրութիւններ:
 Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն.—Պատմական տեսութիւններ,
 զանանան վանքերի, տեղերի, ճանապար-
 հորդութիւն. յիշատակարաններ, յօդուած-
 ներ պատմական կեանքից, պատճէն նամակ-
 ների եւ այլն:
 Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն.—Քննադատական յօդուած-
 ներ, առողջապահութիւն, օգերեւոյթաբա-
 նութիւն, երկրագործութիւն, տեսութիւն-
 ներ դպրոցական աշխարհից, արուեստագի-
 տութիւն վաճառականութիւն . . .
 Ա Ջ Գ Ա Յ Ի Ն.—Քաղուածական յօդուածներ ազ-
 գային լրագիրներից. նամակներ, կառա-
 վարչական կարգադրութիւններ, ուսում-
 նարանական վարչութեան տեղեկագիր,
 հաշուեցոյց վանքական կալուածների, նը-
 ուիրատուութիւններ, լուրեր, տեղեկու-
 թիւններ . . .
 «Պաշտօնականք» քաղուածքներ Սինոդի
 օրագրութիւնից: Ծանուցումն:
 Բ ո վ ա ն դ ա կ Կ Լ Թ ի Ն 1890, № 9. (սեպտ.)
 Կրօնական—Եղիա Մարգարէի տեսիլը (Բեր-
 սիէ).
 Բանասիրակ.—Ստրկութեան վիճակը հին
 աշխարհում եւ քրիստոնէութեան ազդե-
 ցութիւնը նորա վերայ. (շարունակ.)—Ս.
 Մանդինեան:
 Ա.զգային—Վերադարձ Վեհափառ Հայրա-
 պետի ազգիս 'ի Մայր Աթոռս.
 —Ուսումնական վարչական յանձնաժողո-
 վի կողմից:
Կ Ա Ն Ա Ի Ց Ո Ւ Մ Ն. Նուիրատուութիւնք, հա-
 մառօտ հաշիւ Մոզդոկի երկսեռ ուսում-
 նարանաց հայոց, Նոր-Բայազէդ քաղաքի . . .
 —Պաշտօնականք.-քաղուածք կոնդակաց
 Վեհ. Հայրապետի ազգիս . . .
 Քաղուածք յօրագրութեանց Սինոդի. ծա-
 նուցումն.

Հասցեն՝ Վաղարշապատ. Էջմիածնի տպարանական ժողով:
 կամ— Вагаршапатъ. Въ Эчмиадзинскій типограф. комитетъ.
 կամ— Vagarchapat. (Russie) Komitet Imprimerie Etchmiadzin.



ըջանկայիշատակ Գէորգ
 Գ. կաթողիկոս որ
 յայտնի է ազգին
 Իւր շատ նշանաւոր
 ազգօրուտ գործե-
 րով, ինչպէս են ս.
 Էջմիածնի ձեմարա-
 նը, Թանգարանը,

Մատենադարանը, Հայկական ձայնագրու-
 թեան բարգաւաճումը, Բիւրականի կաթողի-
 կոսական ամարանոցը, Հառիճու վանքական
 կալուածների բարեկարգութիւնները, ս. Մաշ-
 տոցի եւ այլ հին վանքերի նորոգութիւն-
 ներ, բազմաթիւ կրօնական—ազգային գրք-
 քերի հրատարակութիւն եւ այլն, այդ բո-
 լորի հետ հոգելոյս Հայրապետի օրով որ
 դեռ երկու տարի էր բարձրացել ս. Լու-
 սաւորչի Գահը, յատուկ Իւր հրամանով 1868
 թուականի սկզբից սկսուեց կիսապաշտօնա-
 կան «Արարատ» ամսագիրը որ մինչեւ այժմ
 հրատարակուում է: Շատ ափսոս որ հան-
 գուցեալ Հայրապետի մի-երկու հիմնած գոր-
 ծերն այժմս մեր ժամանակում կատարեալ
 փոփոխութեան են ենթարկուած եւ այն
 նպատակին չեն ծառայում ինչ որ ցանկա-
 նում էր Արժանայիշատակ Ամենայն Հայոց
 Հայրապետը:

«Արարատ» բարեկարգ գրութիւնն այն
 ժամանակ տեսնուեց, երբ դեռ հիմնագիր
 Հովուապետը Գահի վերայ էր: Հոգեպէս եւ

բարոյապէս մխիթարուում է մարդ երբ
 թերթում է «Արարատի» նախնական թուա-
 կանների տետրակները, բազմակողմանի գե-
 ղեցիկ նիւթեր, կրօնական-բարոյական մի
 ամսագրի վայել ոտանաւորներ, ճառեր, քա-
 ըրողներ. . . «Կռուկն» ամսագրի խմբագրական
 կազմակերպութեան նման էր «Արարատի» նիւ-
 թերի դասաւորութիւնը: Իսկ այժմ թէեւ
 Վանքի տպարանի զարգանալով «Արարա-
 տի» թուղթն ու տպագրութիւնն աւելի գե-
 ղեցիկ են քան առաջ, բայց ներկայ յարգոյ
 խմբագրութիւնը երբեմնապէս այնպիսի յօդ-
 ուածներ է զետեղում ամսագրի էջերում որ
 ոչ միայն վայել չէ, այլ եւ անպատուաբեր
 է «Արարատի» էջերում տպագրուելու:

Մի ամսագիր որ ազգի սեփականութիւն
 է հաշուում, որ հրատարակուելով ազգային
 կենտրոնում՝ ս. Աթոռում, ազգի հաշուով
 ու միջոցներով է իւր գոյութիւնը պահում,
 չը պէտք է որ մի ո եւ է կուսակցութեան
 գործիք դառնայ, բանակուիւնների ու վէճերի
 մէջ մտնի:

Լինելով Հայոց Հայրապետութեան օր-
 գան(բերան), լինելով գրաքննչական հետա-
 քննութիւնից ազատ, չը պէտք է իւր էջերը
 լցնէ անտեղի կշւամբանքներով, գործիք
 դառած զանազան միաբան-ների, կարող է-
 աւելի լուրջ աւելի խոհեմ գործելով պա-
 րապել:

«Արարատ» այժմ տպագրուում է «Հրա-
 մանաւ Ամեն. Տ. Տեղակալի Հայրապետու-
 թեան Հայոց»:

Մինչեւ նորընտիր Մկրտիչ Հայրապետի
 Գահ բազմելը, որ անշուշտ պէտք է բա-
 րեփոխէ ու բարեզարդէ ամսագրիս ներ-
 քին կազմակերպութիւնը, կը մնայ այդպէս:

«Արարատի» խմբագրութիւնը զանազան
 ժամանակներում վարել են քանի մի անցինք.
 վերջերքս պ. Պետրոս Սիմէօնեան, Արիս,
 եպիսկոպոս Գաւթեան. վերջինիս յատուկ «Ա-
 րարատի» խմբագիր Հաստատեց իւր Կոնդա-
 կով հանգուցեալ Մակար Ա. Կաթողիկոսը,
 բայց վերջերքս «միաբան» ստորագրող մի

պարոն՝ Գալուստ Տէր-Մկրտչեան առանց մի կանոնաւոր ընտրութեան յանձն է աւել «Արարատի» խմբագրութեան պաշտօնը:

«Արարատին» սկզբնական թուականներին աշխատակցում էին՝ Աբէլ արքեպիսկ. Մխիթարեան, Վահրամ վարդ. Մանկունի, Ստեփ. վարդ. Մխիթարեան, Գրիգ. եպիսկ. Աղափիրեան, Մեսրոպ վարդ. Սմբատեան, Մկրտ. Գալֆաճեան, Կ. Տէր Սարգսեան, Մանուէլ ք. Աստուածատուրեան, Ենոկ ք. Մովսիսեան, Մեսրոպ քահ. Գեօնջեանց, օր. Սօֆիա Առաքելեանց: Գաբր. քահ. Պատկանեաց, Մելք. քահ. Քալանթարեան, Եղիազար արքեպիսկոպոս, Հայր. Ղուկասեանց, Մ. Բագրատունի, Յով. Մուշեղեանց, Ղազ. Աղայեանց, Աղ. Քալանթարեանց, Աղէք. Մխիթարեանց, Աշրղ-Ջիւանի, Փ. Վարդանեան, Աւագ-սարկ. Գ. Սուրէնեանց, Ստ. Մալխասեանց, Գալուստ Եերմազանեանց, Եղիշ. վարժ. Մեծատունեաց, Ս. Հախումեանց, Կոստ. Մելիք-Շահնազարեանց, Կարապետ Կոստանեանց, Մկրտիչ Պալեան, բժ. Սևետ. Բաբայեանց, Ստ. Ստեփանէ, Սամուէլ Գիւլգատեանց, Քաջբերունի, Ա. Ք. Երիցեան, Հայկորդի, Աւետաւ-սարկ. Փինաջեանց եւ այլք:

Վերջերքս միայն՝ Ա. Տէր-Միքէլեանց, «Փ», Միաբան . . .

Սկզբում ինչպէս բաժանորդների ցուցակից երեւում է «Արարատ» ունեցել է բազմաթիւ աշխարհական ստորագրողներ, ոչ ուսուցիչներ այլ «կամաւոր» ստացողներ. բայց այժմ ստացողներն էլ դժգոհ են որ ստիպուած են ստանալու: Մեզ շատ է պատահած տեսնել «Արարատի» ամբողջ աստուայ տետրակները առանց թղթհատած հասարակ բանացնելու թղթի տեղ կշիռով ծախելիս:

Ինչո՞ւ թողլ տալ մամուլի այդ չափ ըստորանալը ժողովրդի աչքում. մանաւանդ այն պարբերականի որը ս. Էջմիածնի, Մայր Աթոռի հրատարակութիւնն է: Զանձաքցւում է ընթերցողներին այն դէպքը, որ «Արարատի» համարները շատ ուշ են ստաց-

ւում, օրինակ մայիսի համարը հազիւ գաւառացիներին է հասնում յուլիսի վերջերին, իսկ գիւղերը աւելի ուշ է հասնում:

«Արարատի» ճակատին սկզբի տարիներում սպագրուում էր մի պատկեր, որ բաւականին անյաջող էր փորագրութեան կողմից: Ներկայացնում էր Արարատները եւ Էջմիածնի ս. Կաթողիկէն: Յետոյ մինչեւ ՚ի Տէր Հանգուցեալ Մակար Առաջինի օրերը փոփոխուել էր կլիշէն մի քանի անգամ, աւելի գեղեցկանալով: Բայց չիշեալ Կաթողիկոսի մահից յետոյ, ամսագրի տիրող ձեռքերը գուցէ այլեւս իւրեանց ազատ զգալով եւ երկրորդական բան հաշուելով կրօնն ու եկեղեցին, այդ կլիշէն փոխեցին մի ուրիշի հետ, որը Գէորգեան ձեմարանի բաւականին անճաշակ նկարն էր ներկայացնում, մի կողմից երեւցնելով ս. Էջմիածնի Վանքի շատ փոքր տեսքը:

«Արարատը» իւր գոյութեան 26-ամեակը լրացրեց. որ 1/4 դար կեանքը ներկայիս հայ լրագիրների մէջ փոքր թիւ չէ: Իրուսաստանում այժմ հրատարակուող հայ լրագիրներից ամենահինն է «Արարատը»: Յուսանք որ ողջամիտ անձերի ձեռքերով «Արարատը» իւր նախնական ուղղութեան մէջ մտնելով կը լրացնէ իւր 50, եւ աւելի՛ 100-ամեակը: Վարչական մարմնի ձեռքում նիւթական միջոցներից կատարեալ ապահով է:

Թ Ե Ն Օ Թ Ո Ր Թ Ի Ի Ն Ն Ե Ի .

1 «Արարատ» ամսագրի մասին մեր աղբիւրները:—

ա. Արդի (1878) Հայրապետն Գէորգ Գ. փափաքեցաւ այս հանդիսին հրատարակութեամբ թէ, նոր ուսումնական ասպարէզ բանալ միաբանից, եւ թէ վրանին դրուած ուսման անսիրելութեան(“) արատը սրբել: . . . Նիւթոց ընտրութեան եւ ճոխութեան ջանք եւ գովելի փոյթ երեւցուց մանաւանդ առաջին տարիներուն մէջ. . . « Պատմ. հայ, դպրութ.՝ բ. էջ 502.

բ. „...Արարատը պէտք է որ իւր գոյութիւնն ունենայ. եթէ ոչ որպէս Հասարակական Հարցեր քննող, Հայ Ժողովրդին զարթեցնող, կրթող ամսագիր, այլ գոնէ որպէս Հայ եկեղեցուն վերաբերեալ զանազան տեղեկութիւններ, կարգադրութիւններ „ակտ“ եր փոփոխութիւններ հաղորդող մասնաւոր հրատարակութիւն...”

„Հայոց մամուլը Ռուսաստան.“ էջ 69
 գ. „Արարատ ամսագիր կրօնական պատմական բանասիրական եւ բարոյական գիտելեաց, Աշխատասիրութիւն Միաբանից ս. Էջմիածնի, հրամանաւ Աստուածընտիր եւ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ դ-ի ընդհանրական Հայրապետի եւ Ասպետի “ի Ս. Էջմիած. 1868—1882.“

„Հայկակ մատենագիտ.“ Զարբ. էջ. 7.
 դ. „Բայց (1868) թիւ ունեցանք երեք նորանոր հանդէսներ՝ Էջմիածնայ միաբանութեան սկսած „Արարատ“ ամսագիրը որ մինչեւ այս օր էլ շարունակուում է...”

„Արձագանք“ 1882 .№ 22. Ա. Ն. ե. „... Էջմիածնում „Արարատը“ հանգուցեալ Գէորգ դ. կաթողիկոսի հրամանով որ մինչեւ այժմ շարունակուում է...”

„Հայկական մատենագ.“ բ. էջ 153.
 [„... in Etschmiadsin auf Veranlassung des verstorbenen Patriarchen Georg IV der bis heute bestehende „Ararat“ und noch andere länger...”

„Arm. Bibl.“ II. էջ 153.
 զ. „...60-ական թուականների վերջերին... երեւացին նոր հրատարակութիւններ... եւ Էջմիածնում Գէորգ IV-ի օրով „Արարատ“ պաշտօնական ամսագիրը...”

„Մտքի մշակը“ Խ. Մալում. էջ 30.
 է. „... թող պատասխանեն մեզ լօգիական եզրակացութեամբ մեր պատուելի հարբը ս. Էջմիածնի. թէ թնչ խորհուրդ ունի „Արարատ“ ամսագիրը հրատարակել Ռուսաց հայերի մէջ մի լեզուով որ դոցա անհասկանալի է...”

„Հանդէս գրական եւ պատմ.“ Ս. Նազ.
 ը. „Ստացել ենք Էջմիածնում հրատարակուող „Արարատ“ ամսագրի յունուարի տետրը: Այս տարի այդ „Արարատը“ փոփոխութեան է ենթարկուել եւ արտաքուստ...”

„Նոր-Իար“ 1892. № 26. (խմբ.)
 Թ. „Էջմիածնի „Արարատ“ ամսագ. 1868-85“

„Պատմ. Հայ մատեն“ եղ. վ. Գուր. էջ 97
 Ժ. „Արարատ ամսագիր 1868 Էջմիածնին“
 „Դաս. Հայ-ազգ. պատմ“ բ. էջ 338.

- 2.) Նախ եղել է „կրօնական պատմական բանասիրական եւ բարոյական գիտելեաց“ 2-դ եւ 3-դ տարիներում դուրս է ձգուած „գիտելեաց “բառը: Յետոյ անելացաւ „Ազգային“ ը:
- 3.) Ոչ կանոնաւոր.
- 4.) Ամսագրի վերայ վերջին տարիներս խմբագրի ստորագրութիւն չի երեւում.
- 5.) Նախ մեծ դիւրով էր երկսին. 18x27 Հ.-մ.
- 6.) „Բարոյական“ բաժինը սակաւ էր նւթերով.

90.

ԻՐԱՒՈՒՆՔ^{1.)}

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԱՓՈՓԵՐԹ

Զ մ իւ ու ն ի ա (Տաճկաստ.) 1868-1868.
 Խ մ բ ա գ ի Ր՝ Սարգիս-Միրզա Վանանդեցի.



եր պարբերական մամուլի պատմութեան մէջ միակ բնութեան թերթը եղել է «Իրաւունք» շաբաթաթերթը, որ 1868 թուականի նոյեմբերի վերջերից սկսեց հրատարակուել Իզմիրում Սարգիս Ս. Վանանդեցու խմբագրութեամբ: Բայց որպէս մասնագիտական թերթ յաջողութիւն չունեցաւ. հէնց նոյն տարուայ հետ էլ վերջացաւ „Իրաւունքը“ չորս հինգ համար հազիւ տալով:

Ի ԱՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Մեր «Աղբիւրները» «Իրաւունք» շաբաթաթերթը—
 - ա. «Իրաւունք շաբաթաթերթն սկսեց հրատարակուել. Սարգ. Միրզա 1868 . . .»
 - »Յիշատ. իզմիրցի ձերմակ. (ձեռ.)
 - բ. «Իրաւունք 1868 Զմիւռ. Ս. Միրզա»
 - »Իաս. հայ-ազգ. պատմ. էջ 339.
 - գ. «... եւ վերջապէս (1868) Զմիւռնիայի մէջ պ. Սարգիս Միրզայի խմբագրութեամբ լոյս տեսաւ «Իրաւունք» անունով իրաւաբանական մասնագիտական թերթը . . . երկարատեւ չեղաւ . . .»
 - »Արձագանք» 1882. № 22. Ա. Ե.

91.

Է Ր Ի Զ Ա¹⁾

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԳԻԾ

(Կիսամսեայ)

Կ ո ս տ ա ն դ ն ու կ ո լ ի ս (Տաճ.) 1868-1869
Հրատարակուում էր ամսի 1-ին, 15-ին:
Խմբագիր՝ Խ. Գ. Թերզեան 2.)



ոստանդնուպոլսում
«Էրիզա» անունով
մի թատրոնական
հանդէս էլ ունեցել
ենք որ 1868 թու-
կանին հրատարա-
կել սկսեց պ. Գ.
Թերզեան: Նիւթա-

կանի մասին անյաջողութիւնների հանդիպելով, կարճ միջոցում դադարուեց մի տար-

ուայ վերջերին դեռ չը հասած:

Ի ԱՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Էրիզա» Թատր. երկշաբաթաթերթը եւ մեր աղբիւրները՝
 - ա. «Էրիզա 1868 Պոլիս Խ. Գ. Թերզեան»
 - »Իաս. հայ-ազգ. պատմ. բ. էջ 339.
 - բ. «Պ. Խ. Թերզեանի խմբագրութեամբ սկսուեց «Էրիզա» թատրոնական հանդէսը.»
 - »Արձագանք» 1882. № 22 Ա. Ե.
 - գ. «Էրիզա հանդէս կիսամսեայ»
 - »Մատեն. հայկ.» Զարբ. էջ 198.
 - դ. «(1870) օգոստոսը Թիֆլիսում անցկացրեց ժամանակ ինչ առաջ Կ. պ(Պ)ոլսում հրատարակուող «Է(Է)րիզա» օրագրի խմբագրող մեծապատիւ պ. Ստեփան Մելիքեան(՝)
 - »Հայկական Աշխարհ» 1870 № 7-8
- 2.) Հայր Խորէն Ստեփանէի ասելով Օրագրի խմբագրողն էր Ստեփան Մելիքեան: Այդ դէպքում չի կարող որ սխալուած լինի հ. Խորէն: Ուրեմն «Էրիզա»-ին կարճ ժամանակում եղել են խմբագիրներ՝ Թերզեան եւ Մելիքեան:

92.

Մ Ա Մ Ո Ւ Լ¹⁾

ԱՐԶԱԳԱՆՔ ՀԱՍԱՐԱԿԱՆ

ԿԱՐՇԵԱՑ

ՀԱՆԳԻԾ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Կ ո ս տ ա ն դ ն ու կ ո լ ի ս (Տաճ.) 1869-1883
Հրատարակուում էր
Խմբագիր՝ Գէորգ Այուլագեան.
Տպարան. . .
Լեզուէն, ոճը { «... Աւելորդ չեմք համարեր
ասել որ Թշուառ զիւղացիք
Ուղղագրութ. { հարկադրուեցան նոցա . . .»
— Ազգային լուրեր, թղթակցութիւններ եւ
զանազան տեղեկութիւններ. . .
— Զաւեշտական — երգիծաբանական գրու-

Թիւններ, անեկտոտներ. բառախաղ, հանելուկ եւ այլ զուարճալիք:



ուարճախօս վառվրուուն երիտասարդ Գէորգ էֆ. Այուլագեան, Թիւրքահայոց մէջ 1869 թուականի սկզբից «Մամուլ» ազգային—զաւեշտական հանդի-

սի հրատարակութիւնն սկսեց, որ շատ նրման էր «Մեղու» տասնօրեայ հանդիսին: Նրման էր ասում ենք, որովհետեւ «Մամուլն» էլ իւր սրախօսութիւնների հետ տեղաւորում էր նաեւ զանազան ծաղրապատկերներ, որոնք նկարում էր Թիւրքիայում ժամանակակից յայտնի նկարիչ Տելեմաք Էնքսերճեան:

«Մամուլ» իւր անուան համեմատ բացի զաւեշտականից տալիս էր իւր ընթերցողներին նաեւ ազգային—ուսումնական յօդուածներ, դպրոցական հարցերի եւ այլ խնդիրների մասին տեղեկութիւններ եւ այլն:

1883 թուականին Օսմանեան երկրում տեղական քրիստոնեաների եւ մահմետականների մէջ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ Կ. Պոլսում 'ի թիւս այլոց ձերբակալուեցաւ եւ «Մամուլի» խմբագիր պ. Այուլագեանը, ու Տպագրական տեսչութեան հրամանով թերթն էլ ենթարկուեց դադարման երկու ամիս ժամանակով: Գործը քննուելով պ. Այուլագեան որ եւ Ազգային ժողովի անդամ էր՝ քաղաքական յանձաւոր ճանաչուելով, Մի Կիլիկի կղզին աքսորուեցաւ ց'մահ: Սակայն երեք տարին լրանալու մօտ էր, 1886 թ. օգոստոսին, Վեհափ. Սուլթանը ահապարհածաբար ներեց Այուլագ-

եանին: Վերադառնալով Կ. Պոլիս, «Մամուլի» խմբագիրը կամեցաւ շարունակել իւր հանդէսը բայց անյաջողութիւնների հանդիպեց:

ԺՆՅՈՒԹՈՒՆՆԵՐ.

- 1.) «Մամուլ» եւ մեր աղբիւրները —
 - ա. ,,... 1861 (°) Թուին պ. Այուլագեանի ձեռքով ,,Մամուլ" Թերթը. . ."
 - ,,Արձագանք" 1882 № 22 Ա. եր.
 - բ. ,,Մամուլ 1869 Գ. Այուլագեան"
 - ,,Դաս. հայ-ազգ. պատ." բ. էջ 336.

93.

Ա Ր Ա Ր Ա Տ .¹⁾

ԱՐԱՐԱՏ Կ. ՊՈԼՍՈՑ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1869-1872. Հրատարակուում էր ' Խմբագիր՝ Մ. Այուլատեան. . .



արոն Մատթէոս Այուլատեան 69 թուականին հիմնեց Կոստանդնուպոլսում «Արարատ» խմբագիրը, որ հրատարակուում էր հայ եւ տաճկերէն լեզուներով:

Մի տարի միայն այս ձեւով հրատարակուելով, «Արարատ» սկսեց դուրս գալ «Գործատէր Ընկերութեան» ծախքերով, որպէս եւ անեւց մինչեւ 1872 թ: Յետոյ ծրագիրը փոխելով տեղափոխուեց Ամերիկա:

Ի Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Աղբիւրներ եւ «Արարատ»—
 ա. „Արարատ 1869 Պոլիս Մ. Այոււտեան.“
 „Իաս. Հայ-ազգ. պատմ.“ Բ. էջ 338.
 Բ. „Իսկ Պոլսոյ մէջ պ. Այոււտեանի խմբագրութեամբ „Արարատ“...“
 „Արձագանք“ 1882 № 22 Ա. Եր.

94.

Ե Փ Ր Ա Տ^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1869-1870
 Հրատարակուում էր
 Խմբագիր՝ Ս. Հ. Ֆելեկեան...



Եղեցիկ անուն, բայց
 իւր գործունէութեամբ «Նփրատը»
 մեր մամուլի պատմութեան մէջ մի
 նշանակութիւն չէ
 թողել: Հազիւ մի
 տարի կարողացել է

ապրել Բիւզանդեան երկրում պ. Ֆելեկեանի հանդէսը:

Ի Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Նփրատի մասին աղբիւրներ—
 ա. „Նփրատ 1869 Պոլիս Յ. Հ. Ֆելեկեան“
 „Իաս. Հայ-ազգ. պատմ.“ Մ. Գ. էջ 338
 Բ. „Հետազոյ 1869 Թուին... Կ Պոլսոյ մէջ
 ... պ. Ֆելեկեանի ձեռքով „Նփրատ“...“
 „Արձագանք“ 1882 № 22 Ա. Եր.

գ. „... ասի (Պարոնեան) արդէն ծանօթ է
 Ժողովրդին երբեմն „Նփրատայ“ խմբագրութեամբն...“

„Արձագանք“ 1893 № 12 („Մասիս“)

Մեր այս երրորդ աղբիւրից երեւում է որ մեր երգիծարան հանգուցեալ Յակ. Պարոնեան, կարճ ժամանակում վարել է „Նփրատի“ խմբագրութեան պաշտօնը:

95.

Օ Ր Ա Գ Ի Ր^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1869-1869
 Հրատարակուում էր
 Խմբագիր՝ Օգսէն Խոճասարեան...


Թիւրքիայում 60-ական թուականների հայ լրագրութեան բազմութեան մէջ վերջինն է «Օրագիրը»: Օրագիրը, որ 1869 թուականին Սեպտեմբերի 6-ից սկսեց հրատարակել հանգուցեալ Օգսէն Խոճասարեան, բայց թերթի ոչ արժանաւորութեան համար կարճ կեանք ունեցաւ: Նիւթական միջոցների պակասութիւնը զգալի կերպով երեւում էր «Օրագրի» միամեայ կացութեան մէջ: Մինչեւ տարուայ վերջերին քարշ գալով 60-ական թուականների հետ վերջացաւ:

Ի Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Օրագիր» լրագիրը եւ մեր լրագրութեան աղբիւրները.
 ա. „Օրագիր“ 1862 (”) Պոլիս Օ. Խոճասարեան...“
 „Իաս. Հայ-ազգ. պատմ.“ Բ. էջ 340.
 Բ. „... եւ պ. Օգսէն Խոճասարեանի ձեռքով
 „Օրագիր“ թերթը...“
 „Արձագանք“ 1882 № 22 Ա. Ե.
 գ. „Օրագիր.
 „Հայոց արդի մատեն.“ (ձեռագ.)
 զ. „Օգսէն Խոճասարեան Սամաթիոյ Թաղին

երեստիտան էր եւ ընդդիմադիր կուակցութեան ամենէն նշանաւոր ատենարաններէն մին. Հանգուցեալը սնորէն խմբագրապետն էր «Օրագիր» լրագրին եւ իւր գրչով այն ատեն ազգեցութիւն ունէր հանրային կարծեաց վերայ. իր մոլութիւնն այն էր

որ ուրիշ սամաթիացիներու պէս՝ ինքն ալ Բագոսը քիչ մը շատկէկ կը պաշտէր՝
 «Արաքս» 1893 գ. Ա. էջ 93.
 Այլ եւս ոչ մի աղբիւր «Օրագրի» մասին:



Թ.

1870-1880.

(ՅՈՒՆԱՐԵԱԿ)

21 Լ Ր Ա Գ Ի Ր.

Նախընթաց շրջանի հակառակ այս տանա-
մեակում հայ լրագրութեան գործը թուով նուա-
զեց քան աւելացաւ: Բայց այժմս լրագրութիւնը
գարձաւ ժողովրդի, հասարակութեան կրթիչ, քա-
րոզիչ, առաջնորդող, լուսաւորող, ոչ առաջուայ
նման ցաք ու ցրիւ ծրագիրներով. զանազան սե-
սակ մտքերի արտայայտութիւն կամ ծնունդ. (բա-
ցառութիւնների մասին չէ մեր խօսքը): Քաղաքա-
կան փոփոխութիւնները, տնտեսական ու կեան-
քի այլ պայմանները ժողովրդին հասցրին գիտակ-
ցութեան աստիճանի:

Ներկայ ասանամեակում նշանաւոր գործող-
ներից յիշենք՝ Հմայեակ Եպիսկոպոս Դիմաքսեան,
Վահան վարդապետ Բաստամեան, Զարմայր Մը-
սերեան, Մատթէոս Մամուրեան, Գրիգոր Արծրունի,
Արգար Յովհաննիսեան:

96.

Յ Ո Յ Ս^{1.)}

ՕՐԱԳԻՐ

ԲԵՐՈՅԵԱԿԸՆ ԿՐՅՆԵԱԿԸՆ ԲԵՆԵՍԻՐԵԱԿԸՆ

Արմաշու-Վանք (Նիկոսիոս-Տաճկաստ.)
1870-1877:

Հրատարակուում էր ամսի վերջերին.

Հրատարակութիւն Միաբանական ուխ-
տին որ 'ի Արմաշ.

Ի Տպարանի Վանացն Զարխափան սուրբ
Աստուածածնի:



րուսադէմում ս. Յակով-
բեանց հայ միաբա-
նութեան խնամքով
հրատարակուած
«Սիօն» ամսագրի
յաջողութիւնը տես-
նելով, Արմաշու
Վանքի միաբանու-

թիւնն էլ 1870 թուականից սկսեց հրատա-
րակել «Յոյս» անունով մի բարոյական
հանդէս: Այն միջոցները որ ունէր «Սիօնը»
թէ նիւթական եւ թէ աշխատակցող ան-
ձանց նկատմամբ, դժբախտապէս չունէր
«Յոյսը»: Խմբագրութեան յոգնաջան աշխա-
տութեանց հակառակ, «Յոյսը» երկար կեանք
չունեցաւ. թէեւ սկզբից յաջողութիւն տես-
նուեց: Եօթնամեայ հասակը հազիւ հասցը-
րին «Յոյսին» որ եւ բախտ չունեցաւ այլ
եւս հրատարակուելու: 1876 թուականի վեր-
ջերին գաղարուեց չը նայելով որ «Յոյսը»
մի օգտակար եւ խնամքով խմբագրուած
հանդէս էր եւ իւր ծրագրի համեմատ պա-
րունակում էր իւր մէջ բազմաթիւ հետա-
քրքիր նիւթեր:

ԺՆՏԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) «Յոյս» ամսագրի մասին մեր աղբիւրները

ա. «... Նախ յիշենք որ 1869 թուից շարունակուող մեր պարբերական թերթերը (ն) էին՝ ... Արմաշու վանքում «Յոյս» տասնորեայ... կամ «Յետագայ 1869 թուին Արմաշու վանքում սկիզբն առաւ «Յոյս» ամսագիրը ...

«Արձագանք», 1882. № 22. Ա. Եր.
բ. ... եւ «Յոյս» ընդհանրապէս ընտիր եւ օգտակար թերթ մը, դրամական անձկութեանց եւ ժամանակիս պարագայից համար դատուած է լռել...»

«Պատմ. հայ. դպր.» բ. էջ 505.
գ. «Յոյս» 1864 Արմաշի վանքէն՝
«Դաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 339.
դ. «Առաջին՝ Արմաշու Զարխափան Աստուածածնի վանքը Նիկոմիդիոյ մօտ, ուր կայ միաբանութեան դպրոց, եւ տպարան. մի ժամանակ հրատարակուեցաւ «Յոյս» անունով թերթը...»

«Հայոց վանքերը» Կ. Կոստան. էջ 83.
ե. «Յոյս» ամսագիր. բարոյական, կրօնական եւ բանասիրական հրատարակութիւն, միաբանական ուխտէն յԱրմաշ, ՚ի տպ. վանասցն Զարխափան սուրբ Աստուածածնի 1870 1876...»

«Մատեն. հայկակ.» Զարբ. էջ 474.
Առաջին երկու աղբիւրները՝ հայր Զարբանալեան եւ պ. Սրիցեան «Յոյս» ամսագրին հրատարակութեան սկզբնաւորութիւնը ընդունում են 1869 թուականին որ համարեա համակարծիք են մեզ հետ իսկ պ. Գափամաճեան գրել է 1864-ին, որի սխալ լինելը չենք կարող ապացուցանել: Սրեւէ այդ թուականին մի երկու համար հրատարակուելու փորձ է եղել:

97.

ՀՈՐԻՋՈՆ¹⁾

(Երկօրեայ)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1870-1871
Հրատարակուում էր երկուշաբթի,
հինգշաբթի եւ շաբաթ օրերը:
Խմբագիր՝ Գ. Էզաճեան.



Խմբագիրը՝ պ. Գ. Էզաճեան, որ երկու տարի առաջ մտածել էր Կոստանդնուպոլսում մի երկօրեայ թերթ հրատարակել, 1870 թուականից յաջողում է նորան «Հորիզոնի» լոյս ընծայելը: Նիւթական անապահովութեան պատճառով «Հորիզոնը» մի տարեշրջանը հազիւ լրացրեց, սկսուելով 1870 թ. սկզբին եւ վերջանալով վերջին:

ԹԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Հորիզոն» եւ աղբիւրներ—
ա. «Հորիզոն 1870 Պոլիս Գ. Մ. Էզաճեան»
«Դաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 339.
բ. «Հորիզոն երկօրեայ հանդէս պ. Գ. Էզաճեանի խմբագրութեամբ»
«Արձագանք» 1882. № 22 Ա. Եր.

98.

Գ Ի Տ Ա Կ¹⁾

(Երեքօրեայ)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1870-1874
Հրատարակուում էր՝
Տէր եւ տնօրէն՝ Խ. Հ. Ս. Իւթիւճեան.

60-ական թուականների հոսանքը, 70-ական թուականներին դեռ երեւում էր. նախընթաց շրջանի պէս այս տասնամեակի սկիզբներին էլ քիչ չեն ըստ Յարոյլի «պաշաւոր աստղերի» թիւը որոնց լոյս տեսնելն

ու գազարուելը կատարուել է շատ կարճ ժամանակում: Գորանցից մինը կարելի է հաշուել Կոստանդնուպոլսում 70 թուականի մարտ ամսից հայ բողոքական քարոզիչ պ. Հ. Ս. Իւթիւճեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Դիտակ» շաբաթաթերթը: Թերթիս նպատակն էր հակառակ միսիոնարներին գիտել ազգային զանազան հարցեր, խնդիրներ ու կնճռոտ տեղեկութիւններ ու իւր յօդուածներով պարզել, մաքրել այդ ամենը: Ցաւօք սրտի մի քանի տարի միայն վճռուած էր «Դիտակի» կեանքը: 1871 թուականի յունուարից հրատարակուում էր շաբաթը երկու անգամ մանր թերթ քառածալ եւ կիրակի օրերը մեծ թերթ երկծալ: Այսպէս տեւեց մինչեւ դ. տարին՝ 1874 թ. Նիւթական այն անյաջողութիւնները որ «Դիտակի» պէս շատերին մահուան պատճառ դարձաւ, մահացրեց եւ պ. Իւթիւճեանի խեղճ թերթին:

ԺՆՆՑԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Մեր աղբիւրները եւ «Դիտակ» շաբաթաթերթը—
- ա. «Դիտակ շաբաթաթերթ 1870 Պոլսի Հ. Ս. Իւթիւճեանի»
 - «Դաս. հայ-ազգ. պատմ.» ք. էջ 338.
 - բ. «Դոցա վերայ 1870 թուին աւելացաւ Պոլսում «Դիտակ» շաբաթաթերթը պ. Հ. Իւթիւճեանի խմբագրութեամբ»
 - «Արձագանք» 1882. № 22 Ա. Եր.



99.

ՀԱՅՐԵՆԻՔ¹⁾

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՆԻ ԶԵՂԱԶԵՆՆԵՆ²⁾

(Ամենօրեայ 3)

Կոստանդնուպոլս (Տաճ.) 1870-1894-եւս Հրատարակուում է ամեն օր, բացի կիրակի օրերից.

Տէր եւ տնօրէն՝ Յովհաննէս Շահնազար.

Խմբագրապետ՝ Արփիար Արփիարեան.

Տպարան (4) Դիւրքը՝ 5.) (թերթ.)՝ միածալ 4 էջ 5-սիւնեան 38X54 հ.-մ.

Թուղթը եւ տիպը՝ բաւարար.

Բաժանորդագրինը՝ տարեկան՝ Թիւրքիա 75 ղրշ. մէճ.

— — Ռուսաստ. 10ր.

— — Եւրոպ. 25 ֆր.

Հասցէն՝ «Հայրենիք» լրագրի խմբագրութ. Ղալաթիա Էսկի պանք Սմմանի. Կոստանդնուպոլիս.

կամ Bureaux du Journal „Hairenik“

Calata aneien local de la Banguk Imp. Ottomane.

Gonstantinople.

Լեզուն, ոճը } «նետուած են այնպիսի գործերու մէջ որք չէ այն ցողը որուն վրայ իրենց բնածին...»

Ծրագրի ըր՝

ԱԶԳԱՅԻՆ—Առաջնորդող յօդուածներ ազգային ժամանակակից հարցերի վերաբերմամբ: Ազգային ժողովի, Պատրիարքարանի

պաշտօնական լուրեր, տեղեկութիւններ, պատրիարքական շրջաբերականներ, ազգային մանր լուրեր. . .

ԳՐԱԿԱՆ—Յօդուածներ Հայկական գրականութեան վերաբերմամբ, քննական յօդուածներ, թերթօն՝ վէպեր, պատկերներ, նամակներ, թղթակցութիւններ, լուրեր գաւառներէց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ—Ներքին եւ արտաքին լուրեր, պետական կարգադրութիւններ, յօդուածներ քաղաքական բնաւորութեամբ: —Հեռագիրներ. —Յայտարարութիւններ 6) զանազան լեզուներով:

Բովանդակութիւն՝ 7) 1893 № 104 (1 լուրիս)

—«Հայրենիքի վերաբացումը»(մի քանի խօսք)

—Ո՛վ պիտի ընէ (առաջնորդող)

—Շերամ եւ կիներու լսարանը.

—Անգղիերէն նոր օրաթերթ մը (նամակ Լոնդոնից)

—Առաջիկայ պատերազմը քանի՞ պիտի նստի

—Քաղաքական կազմութիւնը.

—Ամօթապարտը մասն Ա. (Թերթօն «Հայրենիքի»)

—Օրուան Հեռագիրները՝—Բոցտամ, Պերլին, Բարիզ, Պերլին, Լոնդոն Օտեսա.

—Ազգային լուրեր— Դպրեվանքը, քաղաքական ժողով, տնտեսական խորհուրդ, Իգմիրի վարժարանները. . .

—Ներքին լուրեր, —Բարձր. Խտիվն ի Կ. Պոլիս.Ֆրանսիական գաղթականութիւնը,Սերպիակ. Վարժարանք ՚ի Թիւրքիա, Սէլանիկից Պոլիս Երկաթուղի, Գաթարանք, Բոհլմէլի—Հիսարի պարիսպները.

Գաւառներէն լուրեր. . .

—Յայտարարութիւններ (Եօթն Հաս) 8.)

—«Հայրենիքի» դազարման միջոցին (խմբ.)

—Ազգային լուրեր— Գանտիլի Ս. Առաքելոց եկեղեցին, —ազգային Հիւանդանոցի ելմտոյցը, — Աղթամարի կաթողիկոսի մի կարգադրութիւն, — Իգմիրեան կտակի մըրցանակաբաշխութիւնը, — Բերայի պարտքերի Հատուցման լանձնաժողովը, — Բար-

դող վ. Պագճեանի Պոլիս գալը, — Պօղոս եպիսկոպոսի Հրաժարականը, — Սահակ վարդապ. Արճէշի վանահայր:

—Ներքին լուրեր— Բաիֆ փաշա, — Պետ. Եֆ. Գուլումճեան—Դատական նախարարութեան մի նոր որոշումը, — Գրաւման գրերու գործածութեան փոփոխութիւնը— Պուլկարաց Եկզարքարանին 1892-ի մի վիճակագիրը, — Պատժական դատութեան մի նոր օրէնք.

— Գաւառներէն— Տիվրիկ, — Մալաթիայ, — Արնթափ, — Կարին, — Տիարպէքեր, — Ատանա, — Ամասիա, — Խարբերգ.

Մէհմետ աւագակը, — Տէրսիմ, Հերքումն ստութեանց (Սապահ)

—Յայտարարութիւններ. . .



այրենիքն» էլ «Մասիս» լրագրից ոչ պակաս փոփոխութիւններէ է ենթարկուել խմբագրական գործերի մէջ: 1870 թրուականին «Հայրենիք» լրագրի սկիզբն է դնում Կոստանդնուպոլսում պ. Վարդանեան, որպէս շաբաթական լրագիր: Եառ չ'անցած «Հայրենիք» Հանգիստ է առնում խմբագրի անձնական Հանգամանքների շընորհիւ: պ. Մելիքեան գործի գլուխ է կանգկում որպէս «Տնօրէն եւ խմբագիր» «Հայրենիք» լրագրի: Մ. Մելիքեանի օրով «Հայրենիք» տարեցտարի սկսեց զարգանալ եւ յառաջադիմել, ազատական սկզբունքներով Հակառակ էր պահպանողական լրագիրներին, մինչեւ 80-ական թուականներին էլ վիճաբանութեան մէջ էր «Հայրենիք» «Մասիս», «Արեւելքի» Հետ:

Պ. Մելիքեան «Մասիս» լրագրին նայելով, ինքն էլ 1887 թուականի մարտ ամսից ըսկսեց հրատարակել որպէս յաւելում՝ «Հայրենիք» Կիրակնօրեայ թերթը օգնական ունենալով պ. Մ. Գափամաճեանին: Մելիքեան որպէս «արտօնատէր», իսկ վերջինս «անօրէն-խմբագիր»: «Կիրակնօրեայ Հայրենիքի» դիրքն էր (տետր.) 8 էջ. քառածալ 3-սիւնեան. 26X36 հ.-մետր:

Ծրագիրն էր՝ մօտաւորապէս, Ազգային տեսութիւն, բարոյական, կենսագրական, երգիծարանական յօդուածներ, ոտանաւորներ առածներ, գաւառական բարբառներով նամակներ 9.)

Յայտարարութիւններ. . .

«Կիրակնօրեայ Հայրենիք» իւր ընթացքը շուտով փոխելով, միացաւ «Հայրենիք» շաբաթաթերթի հետ:

Թիւրքաց տպագրական Տեսչութեան հրամանով 1889 թուականի ապրիլ ամսին «Հայրենիքը» «նորոշման» կերպով դադարման դատապարտուեցաւ: Մի թէ երկու ամիս անցած, նորից սկսեց հրատարակուել, նոյն հրատարակիչների տնօրէնութեամբ:

1890 թուականի սկզբից «Հայրենիքի» խմբագրութեան ղէկն անցնում է բոլորովին նոր մարդկանց ձեռք: Տէր եւ տնօրէն՝ Յովհաննէս Նահնգապար. խմբագրապետ՝ Արփիար Արփիարեան 10.)

«Հայրենիք» իւր նոր գործողների ձեռքում գարձաւ ամենօրեայ լրագիր, հրատարակուելով շաբաթական վեց անգամ, թերթի թուահամարը նորից սկսելով: Պ. Արփիարեանի*) եւ Նահնգապարի լրագիրը յաջողութեամբ սկսեց առաջ գնալ. թերթի ստորագրուողները հետզհետէ աւելանում էին, լրագրի նիւթերն էլ պէտք է ասել որ արժանի էին ուշադրութեան: Բայց խմբագրութեան կողմից դէպի տիրող Իշխանութիւնը

*) 1893 թ. հոկտեմբերին, այս պարտնի անունը ջնջուել տրուեց, «Հայրենիքի» ձեռագրից, իւրեան էլ պաշտօնից հեռացուեց: Տես՝ «Մշակ» 1891 թ. № 1. Ման. հեղ.

երբեմն անսանձ յօդուածներ գրուելով, նոյն 1862 թուականի մարտ ամսին ստիպեցին դադարել: Չորս ամիս անցնելով, յուլիսի 6-ից «Հայրենիք» շարունակում է՝ իւր հրատարակութիւնը: Յարգոյ խմբագրութիւնը՝ ի միջի այլոց հետեւեալ տողերն է տեղաւորում այդ առաջին համարում՝

«... երբ «Հայրենիք» վերստին կերեւի, իւր առաջին պարտաւորութիւնն կը համարի իւր խորին երախտաւորութեան արտայայտութիւնը դնել յոտս Գահոյից Նորին Կայսերական Վեհափառութեան, որու գթութեան եւ մարդասիրութեան ով կը դիմէ ետ չըգառնար ձեռնուռնայն... «Հայրենիքի» խմբագիրները եւ պաշտօնեաները կը վերսկսին իրենց գործը հաւատարիմ ն. Կ. Վեհափառութեան օրէնքների, որ է Օսմ. Պետութեան բարգաւաճումը եւ բարօրութիւնը...»

Իւրեանց խօստման համաձայն հաւատարիմ չը կարողացան մնալ «առ յոտս Գահոյից Նորին Կայսերական Վեհափառութեան»: Հագիւ մի տարին բոլորուելու վերայ էր, երբ մի անպատշաճ վարմունքի համար «Հայրենիքին» նորից ստիպեցին դադարել այսպիսի մի հրամանագրով՝

«Հայրենիք լրագրին արտօնատէրը քանիցըս պատուէրների եւ օրէնքների ղէմ հակառակ գործելու պատճառով իւր լրագիրը այս օրուանից սկսած անպայման կերպով դադարեցրած է»

18 Զիւլէճճէ 1310

10 յունիս 1893

Այդպիսով 1893 թ, յունիսի 10-ից «Հայրենիք» դադարում է: Նոյն թուականի յուլիսի 1-ից այսինքն քսան օր յետոյ, «տպագրական Տեսչութեան արտօնութեամբ» նորից սկսում է հրատարակուել որ եւ տեսնում է մինչեւ այսօր:

«Հայրենիք» տպագրուում էր նախ՝ Կ. Պերպերեանի տպարանում, յետոյ Ճիվէլէկեանի, իսկ վերջին տարիներում թերթի վերայ չի գրուում տպարանի անուն:

«Հայրենիք» այժմս Պոլսում յայտնի լրագիր-

ներից մինն է, վերջին տարիներումս ներկայ կաթող. ընտրութիւնների ժամանակ ջերմ համակրում էր «Մշակ» լրագրի թեկնածութեան, հակառակ լինելով Կ. Պոլսի «Արեւելք», «Մասիս», «Ծաղիկ» լրագիրներին, ինչպէս եւ Կովկասի «Արձաղանք» եւ «Նոր-Դար» թերթերին:

ԹՆՆՍԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Հայրենիք» եւ մեր աղբիւրները—
 - ա. Երէկ տպագրական Տեսչութեան յունիս 30 թուակիր հրամանագիրը կ'արտօնէր «Հայրենիքի» վերաբացումը: Այսօրուրն է կը վերասկսենք «Հայրենիք», «Հայրենիք» 1893 1 յուլիս (N: 504)
 - բ. Ստիպան Թ'նչ չափ եւս սահման կարելի է պահանջել պ. Հայկակից (Արփ. Արփիկարեանից) որ հրապարակական ներդրութիւն խնդրելով, համբուրեց պ. Նորատուկեանի ձեռքը: «Արձագանք» 1892 N: 85 էջ 2.
 - գ. «Հայրենիք» օրաթերթ քաղաքական եւ ազգային սկսեալ (ե) 1871 (') Յովհաննէս Նահապար արտօնատէր: «Օրացոյց ժողով-պատկեր» 1893 էջ 65
 - դ. «Հայրենիքի» հրատարակիչները ըմբռնած են թէ իրենց պարտականութիւնը շատ աւելի մեծ է քան ուրիշ ո եւ է թերթի պարտականութիւն, վասն զի այս թերթի գինն այնքան ոչինչ է, որ նա պիտի կրնայ մտնել մեր ընկերութեան ամեն խաւերուն մէջ. . . «Մշակ» 1891 N: 88 էջ 3
 - ե. «Հայրենիք 1890 (""") Կ, Պոլիս, Արփ. Արփիկարեանց. «Հայոց արդի մատեն» (ձեռագ.)
 - զ. «... Դադարեցաւ... դադարեցաւ «Հայրենիք» դադարեցաւ. . . «Նոր-Դար» 1889 N: 75 էջ 2.
 - է. Կ. Պոլսոյ «Հայրենիք» շաբաթաթերթն բարձրագոյն հրամանով դադարեցաւ. . . «Փունջ» 1889 ապր. 22 էջ 1
 - ը. «Հայրենիք 1870 Պոլիս Ա. Մ. Մեղիքե(ա)ն» «Դաս. հայ-ազգ. պատմ.» բ. էջ 339

- թ. «Հայրենիք շաբաթաթերթ քաղաքական բ. (") տարի Կ. Պ. «Հանդ. Ամսօր» 1889 էջ 262.
- ժ. «Հայրենիք-օրաթերթ քաղաքական եւ ազգային, սկսեալ 1871 (') արտօնատէր Մկրտիչ Մեղիքեան. . . «Օրացոյց 1893 թ. Ռոստով. Բ. Տ.-Աթ. ժա. . . . 1870 թուին աւելացան Պոլսում. . . Հայրենիք. . . պ. Վարդանեանի խմբագրութեամբ.»
- ժբ. «Հայրենիք գաւառական լրագիր, ազգային բանասիրական, ուսումնական եւ աւելարական. Տնօրէն եւ տէր խմբագիր Մ. Բ. Մեղիքեան. . . «Մատեն. հայկ.» Զարբ. էջ 792.
- 2.) Նախ «Հայրենիք օրագիր ազգային եւ քաղաքական»
- 3.) Նախ շաբաթաթերթ. յետոյ ամենօրեայ, դարձեալ շաբաթաթերթ, եւ վերջապէս ամենօրեայ որ տիւում է մինչեւ այժմս:
- 4.) Այժմեան «Հայրենիքի» վերայ տպարանի աւտուն չի նշանակուում:
- 5.) Մկրտիչ Մեղիքեանի օրով «Հայրենիք» գիրքն էր (թերթ) միածալ 3 էջ 4-սիւնեան. 29X45 հ.-մետր:
- 6.) Յայտարարութիւններ «Հայրենիք» ում տպագրուում են խառն, երբեմն յողուածները մէջ:
- 7.) Թերթի սկզբում քաղաքականութիւնը չի տպուում:
- 8.) Գուցէ աւելի վճարով, յայտարարութիւններ տպագրուում էր «Հայրենիք» բ. գ. երեսներում:
- 9.) «Կիրակնօրեայ Հայրենիքում» ինչպէս եւ միւս «Հայրենիքում» պ'Մեղիքեանի օրով «գծի տակ» բանասիրական յողուածներ տպագրուում էր այնպէս՝ որ կարելի կը լինէր կտրել եւ գիրք կազմել:
- 10.) Թէեւ մութ, բայց յայտնի է մեզ որ «Հայրենիքի» խմբագրութեան պաշտօնը կարճ ժամանակու մ'արել են՝ պ. պ. Բիւզանդ Պողոս-ձեան եւ Մ. Սարեան:

100.

ՓՈՂ ԱՌԱՌՕՏԵԱՆ^{1.)}

(Երկօրեայ.)

Կ Թ Ե Մ Ե Ն Դ Ե Ն Ո Լ Կ Ո Ւ Ի Ս (Տաճ.) 1870-1870

Հրատարակուում էր՝
Խմբագիր՝ Յ. Պարոնեան:



զգային ջոջերի»,
«Մեծապատիւ
մուրացկանների»
եւ այլ երգիծա-
բանական քանի
մի գրքերի եւ
պարբերական հը-
րատարակութիւն-
ների հեղինակ՝
մեր միակ զա-

ւեշտախօս երգիծաբանական հանգուցեալ
Յակովբ Պարոնեան 1870 թուականին «Փող
Առաւօտեան» անունով մի զաւեշտական
հանդէս սկսեց հրատարակել Կոստանդնու-
պոլսում: 20-25 համարներ հազիւ կարողա-
ցաւ լոյս ընծայել Պարոնեան, ստորագրուող-
ների պակասութեան պատճառով նոյն տար-
ուայ մէջ դադարեցրեց:

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Զը շփոթել «Փող Արեւելեան» ամենօրեայ լը-
բագրի հետ որ սկսուեց 1873 թուականի ապրիլից
խմբագրութեամբ Բարդուղ Սուրի, Գաֆաֆեան
եւ ընկ. տպարանից, որը յարգելի պատճառներով
չը մտաւ մեր գրքի մէջ:

Աղբիւրներ եւ «Փող Առաւօտեան»
ա. «Փող Առաւօտեան 1870 Պոլիս Յ. Պարոն.
Դաս. հայ-ազգ. պատմ.» ք. էջ 340
բ. «Փող Առաւօտեան երկօրեայ պ. Յ. Պարոն-
եանի ձեռքով»
«Արձագանք» 1882 № 22. Ա. Նը.



101.

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ^{1.)}

ՔՈՂՈՔՈՎԱԾՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՑՆԱԿԱՆ

(Տասնօրեայ)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1870-1871
Հրատարակուում էր ամսի 1, 10, 30-ին
Խմբագրութեամբ Նուպար—Շահնա-
զարեան Վարժարանի Սաների...
«Ի իր քը (տետր.) ութածալ 16...



խոնական-բանասէր
հանգուցեալ Կարա-
պետ վարդապետ
Շահնազարեան
Մանչեստրում «Երկ-
րագունտ» ուսում-
նական հանդէսը
ինչպէս իւր տե-

ղում լիշեցինք հրատարակում էր մինչեւ
1866 թուականը: Սորա մահուանից յե-
տոյ իւր կտակի համաձայն «Երկրագըն-
տի» տպարանը Մանչեստրից տեղափոխ-
ուեց Կոստանդնուպոլիս, Նուպար Շահնա-
զարեան դպրոց, որ եւ այնտեղ 1870 թը-
ուականի յունուարից սկսեց հրատարակուել
«Երկրագունտ»—քաղաքաբական— գրական
շաբաթաթերթը, վարժարանի յառաջողէմ
սաների խմբագրութեամբ, 'ի յիշատակ իւր-

եանց բարերար Հ. Շահնազարեանի 1871 թ. մայիսին երկրորդ՝ գարձաւ տասնօրեայ Հանդէս:

Յաջող էին «Երկրագունտ» Հանդիսի հրատարակութեան պայմանները. նիւթերը հետաքրքիր եւ գնահատելի էին սակայն վարժարանի կազմ ու հանգամանքները փոփոխուելով, «Երկրագունտն» էլ դադարուեց նոյն 1871 թուականի յուլիս 30-ին, 9 համար հրատարակուելով:

Ժ Ա Ն Ս Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1. Աղբիւրներ եւ «Երկրագունտ»—
 ա. ,, . . . 1870 թուին աւելացան Կ. Պոլսում
 .. ,, Երկրագունտ՝ շաբաթական, Նուպար-
 Շահնազարեան դպրոցի սաների ձեռքով՝
 ,, Արձագանք՝ 1882. № 22 Ա. Ս.
 բ. ,, . . . ՚ի Կ. Պոլիս զոկուած են ամենայն
 սարօքն յազգային վարժարանն որ ՚ի Խաս-
 Գիւղ կոչուած արուարձանն, հաստատեալ
 Նուպար-Շահնազարեան անուամբ. . . .՝
 ,, Նամակ՝ մեզ ուղղեալ Սուք. վ. Պարոն.

102.

Մ Օ Դ Ա ^{1.)}



րեխայամիտ անձի մտքի ծնունդ է երեւում Թիւրքիայի մայրաքաղաքում այս լրագիրը որ իւր աննշանութեամբ յայտնի չէ եղել մեր աղբիւրներին: Միայն պ. Երիցեան իւր տեսութեան մէջ յիշել է սո-

րա անունը: Անունից երեւում է որ մեզ անյայտ մարդը որ «խմբագիր» անունը կրելու պատիւն էլ չի վայելում, նպատակ է ունեցել մօզաներ, նորաձեւութիւններ տարածել, նորանոր հագուստների եւ այլ շուքութիւնների: Բարեբախտաբար իւր բընի մէջ խեղդուել է եւ երկար ժամանակ անյայտութեան մէջ մնալով, լուի անունն է հասել մեզ:

103.

Մ Ո Ւ Զ Ի Կ ^{1.)}



ուղիկ» կոչուած հրատարակութիւնը ըստ երեւոյթին երաժշտական հանդէս է եղել որ դարձեալ անյայտ է մնացել մեր բոլոր աղբիւրներից: Անյայտ չէ մնացել միայն մեր հմուտ բանախոյզ պ. Երիցեանից որ դարձեալ յիշել է «Մուղիկ»ին: Սա էլ Տաճկաստանի մայրաքաղաքի գործ է, «Մօզայի» պէս 70-թուականներին, բայց մի քանի համարներ հրատարակուելով, գուցէ եւ ձեւագիր, աննշան է մնացել մեր մամուլի պատմութեան մէջ:



104.

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Մ Ա Մ ՈՒ Լ ^{1.)}

ՀԱՆԳԻՍ

ԳՐԱԿՆԵՐՈՒՄ ԵՒ ՔՐԱՑՔՐԱԿՆԵ

(Ա մ ս ա գ ի ը)

Զ մ ի ռ ո ն ի ա (Տաճ.) 1871-1894-եւս.
Հրատարակուում է ամսի սկիզբներին.
Խ մ բ ա գ ի ը-Տնօրէն Մատթէոս Մամուրեան
Տպարան Մամուրեանի:

Դ ի ը ք ը (տետր.) ութածալ.
Թ ու ղ թ ը եւ տիպը՝ մաքուր.
Բ ա ժ ա ն ո ը գ ա գ ի ն ը՝ տարեկան 8 1/2 մէճ.

Թուսաստան 4 ըուր.

Օտար երկիրներ 10 Ֆրանք.

Հ ա ս ց է ն Զմիւռնիա(Տաճկ.-Ասիա) Մատթ.
Մամուրեան:

Կաժ—Smyrne (Turquie-d' Asie) Mat. Mamou-
rian.

Լ ե գ ու ն ո ճ ը } ,, Այս անգամ կաթողիկոս-
Ու ղ ղ ա գ ը ու թ. } սուրբան իրիւ արժանաւո-
Մրագիրը՝ } ռազոյն ընտրելի կը լինի...''

—Առաջնորդող յօդուածներ, ազգային հիմ-
նական խնդիրների մասին:

Պատմական, մատենագրական, կենսագրա-
կան, բանաստեղծական, ճանապարհորդա-
կան, գիտնական, յօդուածներ, թղթակցու-
թիւններ, լուրեր, տեղեկութիւններ: Մա-
տենախօսութիւն տեղադրութիւն, բանա-
սիրական, ուղեւորական յօդուածներ, վէպիկ-
ներ, պատկերներ եւ այլն: Նամակներ խրմ-
բաղրութեան:

—Քաղաքական տեսութիւն, ընդարձակ տե-
ղեկութիւն, յօդուածներ քաղաքական աշ-
խարհից, նոր լուրեր պաշտօնական լրա-
գիրներից քաղուած:

—Խառն լուրեր, պատասխաններ.

—Յայտարարութիւններ—զանազան լեզու-
ներով:



միւռնիայում «Արշալոյս
Արարատեան»ից յետոյ,
մինչեւ 70-ական թուա-
կանները մի կարգին
պարբերական Հայ հրա-
տարակութիւն չ'երեւե-
ցաւ: Զանազան օտարո-

տի անուններով լրագիրներ եւ հանդէսներ
ծնուում եւ շուտով վերջանում էին:

Ահա Հայ գրականութեան մէջ քաջա-
ծանօթ, Հայ գրական ասպարիզի մէջ ան-
խոնջ աշխատաւորներից մի յարգելի անձ-
նաւորութիւն՝ Մատ. Մամուրեանց, 1871
թուականից սկսեց «Արեւելեան Մամուլ»
հանդիսի հրատարակութիւնը, որ ահա 21-դ
տարին է որ հրատարակուում է յաջողու-
թեամբ:

«Մամուլ» այսօր Թիւրքիայի Հայ լրա-
դրութեան մէջ պատուաւոր եւ անուանի է:

Մամուրեան Հայ գրագէտ հասարակու-
թեան յայտնի է ոչ միայն իւր գրական
գործունէութեամբ, որ բացի «Արեւելեան
Մամուլից» բազմաթիւ երկերի հեղինակ է
եւ թարգմանիչ, այլ վարել է նա շատ ժա-
մանակներում ազգային խոշոր պաշտօններ,
ինչպէս «Մեսրոպեան Վարժարանի» տես-
չութիւն, Պատրիարքարանի քարտուղարու-
թիւն եւ այլն:

«Արեւելեան Մամուլ» որտեղ մուտք է գործել, իւր քաղաքական-գրական ընտիր յօդուածներով լիացրել է հայ ընթերցողներին եւ հետզհետէ իւր եւ իւր խմբագրի յարգանքն ու պատիւն աւելացրել:

«Արեւելեան Մամուլ» համամիտ էր հանգուցեալ Պալդազարեանի հիմնած լրագրի սկզբունքներին՝ «Արշալոյսի» դաւանած գաղափարները հաճելի եւ յարգելի էին «Մամուլին»: Սիրել լոյս, յառաջագիմութիւն, ուսում, քաղաքակրթութիւն. պահպանել կրօն, եկեղեցի, մայրենի լեզու եւ սրբութիւններ՝ կարճ խօսքով այս է «Մամուլի» ուղղութիւնը:

Թիւրքիայի հայ գրողներից երեւելիանձինք մասնակցել են անցեալում եւ մասնակցում են այժմ պ. Մամուրեանի հանդէսի աշխատակցութեան:

«Արեւելեան Մամուլ» հանդէսն էլ Թիւրքիայի միւս լրագիրների պէս դադարման եւ փոփոխութիւնների ենթարկուել է: 1889 թուականի սկիզբներին դադարուեց «Մամուլ» եւ նոյն թուականի հոկտեմբերի սկզբից նորից սկսեց հրատարակուել:

«Արեւելեան Մամուլ» սկսուեց ամսաթերթ, յետոյ շաբաթաթերթ եւ վերջապէս ամսագիր որ շարունակուում է մինչեւ այժմ:

«Մամուլ» նախ տպագրուում էր «Եղբ. Տէտէեանների» տպարանում, յետոյ փոխուեցաւ սեփական տպարան:

Յաջողութիւն, յարատեւութիւն Թիւրքիայի Հայոց «Մամուլ»ին:

Թ Ա Ն Ս Թ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Արեւելեան Մամուլ» եւ մեր աղբիւրները—

ա. 1871 թիւ . . . Ձմիւռնիայում հրատարակուեց պ. Մատթէոս Մամուրեանի խմբագրութեամբ «Արեւելեան Մամուլ» ամսագիրը որ մինչեւ հիմա էլ շարունակուում է եւ մինչեւ այսօր Տաճկաստանի մէջ հրատարակուած գիտնական եւ բա-

նասիրական ամսագիրներից ամենաընտիրըն է իւր բովանդակութեամբ:

«Արձագանք», 1882. № 22 Ա. Ս. Բ. . . . Մատթէոս Մամուրեան—Ը ն հ ա ն ու ը պ ա տ մ ու թ իւ ն, Ա ն գ ղ ի ա կ ա ն ն ա մ ա կ ա ն ի. Հ ա յ կ ա կ ա ն ն ա մ ա կ ա ն ի եւ այլն: Կը խմբագրէ Արեւելեան Մամուլ հանդէսն. Թարգմանած է բազմաթիւ վիպասանութիւններ . . .

«Պատմ. հայ մատենագր. Եղ. վ. Իուր. գ. . . . Սուանդով եւ հմտութեամբ լի թերթ մ' է: «Արեւելեան Մամուլ» կոչուածը զոր է Ձմիւռնիա կը հրատարակէ Մ. Մամուրեան. եւ որուն գրչի զգուշաւորութիւն եւ կարծեաց նուազ ազատականութիւն առաւել փափաքելի եւ օգտակար պիտի ընէ իր թերթին շարունակութիւնը . . .

«Պատմ. հայ. դպրութ.» Բ. էջ 504.

դ. Ժամանակակից պարբերական հանդէսների մէջ երկուսը կան որոնք իրանց բովանդակութեամբ եւ ուղղութեամբ, այնքան ծանօթ են հայ հասարակութեանը, որ աւելորդ ենք համարում այդ մասին մի բան ասել մեր կողմից. Թիւրքիայում Ձմիւռնիայի «Արեւելեան Մամուլը» եւ Ռուսաստանում Թիֆլիզի «Փորձը» . . .

«Փորձ» 1880 № VI-VII (էջ 213):

ե. Օրինակի համար, Արեւելեան Մամուլը թղթակցին Շահնուրի լեզուն, որ գեղեցիկ է եւ պճնասէր . . .

«Հոսհոսի ձեռատետրը» Բ. տպ. էջ 177.

գ. «Արեւելեան մամուլ. հանդէ՛» հնգետասանօրեայ ազգային բանասիրական եւ քաղաքական. խմբագրութեամբ Մ. Մամուրեանի. 1871—1881. Ձմիւռնիա. 'ի տըպար. Տէտէեան եղբայրց,

«Մատենագիր. հայկակ. Ջարթ.» էջ 65. է. . . . Ձմիւռնիայում. հանդէս. Արեւելեան մամուլ . . .

«Հայկակ, մատենագ.» Բ. էջ 155

[In Smyrna. Die Monatsschrift: «Arewelian Mamul», (Östliche Presse)

«Arm. Bibl.» II. էջ 155 . . .

ը. «Արեւելեան Մամուլ. Հանդէս գրականական եւ քաղաքական, ամիսը մի անգամ. սկսեալ 1871. Մատ. Մամուրեան. խմբ. տնօրէն. է Ձմիւռնիա . . .

«Օրացոյց Ժողով. պատկ.» 1893 էջ 66.

Թ. „Կ. Պոլսից մեզ գրում են.—„Ձեզ յայտնի է, որ Ձմիւռնիայում քսան տարի շարունակ հրատարակուող „Արեւելեան Մամուլը“ խափանուած էր: Այժմս պարքտ եմ համարում ծանուցանել Ձեզ, որ „Արեւելեան Մամուլը“ վերստին լոյս է տեսնում: Կառավարութիւնը թոյլ է տուել յարգելի Մ. Մամուրեանին նորից հրատարակելու „Արեւելեան Մամուլը“: Ինչպէս վստահ ազդիւրներէից տեղեկացանք, այսուհետեւ „Արեւելեան Մամուլը“ լոյս պիտի տեսնէ շարաթը մի անգամ: “

„Նոր-Դար“ 1889. № 169. էջ 2.

Ժ. „Ձմիւռնիոյ „Արեւելեան Մամուլն“ որոյ խմբագիրն է մեծ. Մ. Մամուրեան, յայտնի է իւր լուրջ հայացքներով, փոր ձառութեամբ ազգային կեանքի մէջ եւ երկար տարիներ պատրիարքարանի քարտուղարի պաշտօն վարելով ծանօթ հանգամանաց եւ անձնուորութեանց . . . Մենք առանձին նշանակութիւն ենք տալիս „Արեւելեան Մամուլի“ խօսքերին, որովհետեւ նա ազգային գործերի վերայ առ հասարակ լրջութեամբ է նայում եւ առանց որ եւ է կուսակցութեան ոգւոյ . . . “

„Մեղու Հայաստ.“ 1885. № 25.

105.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՐԱԳՐԱՅԻՆՆԵՐԻ

Ա Ր Ա Գ Ի Ր 2.)

Տ փ թ ի ս (Ռուսաստան) 1872-1894-եւս. Հրատարակուում է շարաթը երեք անգամ՝ երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը.
Խ մ բ ա գ ի ը՝ Աղէքսանդր Քալանթար.

Հրատարակի՛ Մ. Մելիք-Աղամալեան. Տպարան Կովկասի կառավարչապ. գրասենեակի.

Դ ի ը թ ը՝ (Թերթ.) միաժալ 4 էջ 4-սիւնեան 36X50 Հ.-մետր. 3.)

Թ ու ղ թ ը եւ տ ի պ ը՝ միջակ.

Բ ա ժ ա ն ո Ր զ ա գ ի ն ը՝ տարեկան 10 մթ. կէս տար. 6 ”

Հասցէն՝ Տփլիս. «Մշակ» լրագրի խմբագրատուն:

կամ՝ Тифлисъ. Редація газеты „Мшакъ“

կամ՝ Tiflis (Caucasie) Redaktion du journal „Mschak“

Լ ե զ ու ն, ո ճ ը } „ . . . Սակայն քանի որ այդ Ուղղագրու թ. } չէ կայ, այլ շահվում է միայն չարչին, իսկ գիւղացին . . . “

Ծրագիրը՝

— ԱՌԱՋՆՈՐԴՈՂ — Յօդուածներ ժամանակակից հարցերի մասին:

— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ — Յօդուածներ զանազան խնդիրների վերաբերեալ ազգային կեանքից: Ներքին լուրեր, գաւառներից եւ տեղական նամակներ:

— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ — Յօդուածներ արտասահմանեան կեանքից. քաղաքական բնաւորութեամբ յօդուածներ եւ լուրեր, արտաքին լուրեր:

— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Վէպեր, պատկերներ, զրոյցներ, նամակներ, ճանապարհորդական եւ այլ նկարագրութիւններ, մատենախօսութիւն:

— ՖԵԼԻԵՏՈՆ.

— ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ 6.)

— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.

— ՏԵՂԵԿԱՑՈՅՑ.

— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բովանդակութիւն 1891. № 128.

Առաջնորդող — Հացահատիկների արտահանութիւնը — Գ. Ա.

Ներքին տեսութիւն. — «Մշակի» ծրագիրները գաւառական քաղաքներում, — Թիւրքաց հիւպատոսը Թիֆլիսում, — «Ա-

րեւելք» լրագիրը,— Կովկասի գժատան նախագիծը,— Թիֆլիսի առեւտրական բանկի նուէրը ռուս սովետներին,— „Тифл. Лист.“ մի լուր:— Վերին Ագուլիսից, — Շահնազարից, — Թիֆլիսից, — „Нов. Обоз.“ — մի լուր:— «Տարագ»- մի լուր: Կաղզուանից, Թիֆլիսից, «Ամուսիններ», Սաֆրազեանների խաղը, Ալէքսանդրապոլից:

«Մշակ» հեռագիրներ— Պետերբուրգ, Տաշկենտ, Պետերբուրգ, Փարիզ, Բերլին, Պետերբուրգ:

Բանասիրական— Նիւթեր հասարակական կեանքի ռուսամասիրութեան համար:



նցեալ 1892 թուականի դեկտեմբերի 19-ին, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, 47 տարեկան հասակում, թոքերի բորբոքումից վաղճանուեցաւ յայտնի հայ

հրապարակախօս Գրիգոր Արծրունին, որ հայ հասարակութիւնը մեծ բազմութեամբ, բազմաթիւ պսակներով ու ցոյցերով, հանգուցեալի մարմինը հողին յանձնեց նոյն ամսի 27-ին:

«Մշակ» գրականական եւ քաղաքական լրագրի խմբագիր-հրատարակողն էր Գրիգոր Արծրունին, որ քսան երկար տարիներ հրատարակում էր իւր թերթը:

1870-ական թուականների սկիզբներում երբ Ռուսաստանի հայ ժողովուրդն արգէն շատից-քչից հասկացել էր մամուլի նշանակութիւնը, երբ 60-ական թուականներին «Հիւսիսափայլը», «Կուսակց», «Մեղու Հայաստանին» արգէն հարթել էին գրականու-

թեան ճանապարհի խոչնդոտները, ինչպէս եւ սորանցից առաջ անմահ Աբովեան աշխարհաբար լեզուի հիմը դրեց իւր «Վերջ Հայաստանի» պատուական աշխատութեամբ, Գրիգոր Արծրունի փիլիսոփայութեան դոքտորի տիտղոսով, Գերմանիայից վերադառնալով, 1872 թուականի սկզբից Տիֆլիսում սկսեց հրատարակել «Մշակ» լրագիրը որպէս շաբաթաթերթ:

«Մշակի» խմբագրի գործն սկսած օրից նորա մօտ հաւաքուեցին հայ գրագէտներից մի քանի դիրք ունեցող անձնաւորութիւններ, ինչպիսիք են՝ Գաբրիէլ Սունդուկեան, Ստեփաննոս Պալասանեան, Աբգար Յովհաննիսեան, Աղէքսանդր Քիչմիշեանց, Գէորգ Չմշկեանց, Միհրդատ Ամբրիկեանց, Պողոս Իզմայելեան, Բաֆֆի եւ այլք, որոնք թերթիս երիտասարդ խմբագրի հետ մեծ եռանդով աշխատակցում էին խմբագրական գործերում բազմապատկ նիւթեր տալով: Մանաւանդ որ Արծրունին Գերմանական ուսում ստացած լինելով այնքան էլ հմուտ չէր հայերէն լեզուին: Ինչպէս այդ բանը թօտովանել է հանգուցեալը այն ժամանակուայ գրաքննիչ Ղայթմազեանցին (Ցենսոր Կայթմազով): Վերջինիս հարցին թէ՛ «Ասացէք խնդրեմ, մի՞թէ գուրբ այնքան տիրապետում էք հայ լեզուին որ յանձն էք առել մի լրագիր հրատարակել»— Արծրունին համեստօրէն պատասխանում է, որ թէպէտ ինքը այնքան չէ տիրապետում իւր մայրենի լեզուին, բայց իւրեան շրջապատում են այնպիսի մարդիկ, որոնք արգէն յատնի են հայոց գրականութեան մէջ . . .

Ահա թէ ինչ է գրում հանգուցեալ Պարոնեան «Մշակի» սկզբնաւորութեան եւ այլ անձանց մասնակցութեան մասին`--«Արտօնութիւն առնելուն պէս տուն վազեց Արծրունին եւ հարիւր քառասուն նամակ գրեց հրաւիրելով իւր ծանօթներին, որ հաճին «Մշակի» խմբագրութեանը մասին նպատակ իրեն: Բարեկամներն ընդունեցին այս հրաւերն եւ 1872-ին 'ի լոյս եկաւ «Մշակն»

որ բաժանորդներէն աւելի խմբագիրներ ունէր . . . »

Յիշեալ խմբի շնորհիւ «Մշակը» դրուեց հաստատ հիմքերի վերայ եւ առաջին տարիներում արդէն սկսեց կատարելապէս տարածուել: Մանաւանդ որ «Մշակի» սկզբնաւորութեան տարին Գովկասում ոչ մի այլ լրագիր չէր հրատարակուում: «Հայկական Աշխարհը», «Մեղուն» հանգիստ էին առել նախընթաց թուականին:

«Մշակը», ինչպէս յիշեցինք նախ հրատարակուում էր որպէս շաբաթաթերթ: 1876 թուականից դարձաւ եռօրեայ (շաբաթն երկու անգամ): 1878-ից փոխուեց ամենօրեայ (շաբաթը հինգ անգամ) 1886 թուականից դարձաւ երկօրեայ հրատարակուելով շաբաթը երեք անգամ, որպէս եւ տեւում է մինչեւ այժմ:

Սոսկ Արծրունու մասին քննութիւնը մեր ծրագրից դուրս է, մանաւանդ որ շատ տեղեր կան գրուած արդէն՝ մինչեւ անգամ առանձին գրքերով: Կրկնութիւններից հեռու մնալու համար, այսչափը կասենք միայն, որ «Մշակը» իւր ուժի չափ զարկ տուեց հայ գրականութեան զարգացման գործին, Գովկասի հայ մամուլին տուեց մի կազմակերպութիւն:

«Մշակը» որպէս ազատամիտ (liberale) ուղղութեան տէր՝ բոլորովին հակառակ էր նախ՝ «Մեղու Հայաստանի», յետոյ «Նոր-Պար» եւ «Արձագանք» պահպանողական լրագիրների: Ինչպէս եւ Քիւրքիայում «Արեւելք» «Մասիս» «Ծաղիկ» թերթերի հետ:

«Մշակը» իւր քսանամեայ գոյութեան միջոցին արծարծեց շատ նշանաւոր խնդիրներ ազգային կեանքից: Բայց շնորհիւ իւր հակառակորդ թերթերի նորա բաղձանքների մեծ մասը՝ ինչպէս «Կոհարակ» խնդիրը, կոնստանդնուպոլսի խնդիրը եւ այլն, անբազործելի մնացին: Լեզուի խնդիրը «Մշակում» շատ անխնամ էր թողնուած. ինչպէս հանգուցեալ խմբագիրն ասում էր թէ՛ գրլիաւոր նպատակն այն չէ որ լեզուի ճշտութիւնը պահպանուի, լեզուագիտութեան կամ հայկաբանութեան կանոնների համա-

ձայն լինի. այլ այն, որ ժողովրդին հասկացնէ իւր մտքերը, իւր գաղափարները: Լաւ ծանօթ չը լինելով իւր մայրենի լեզուին, գերմանական ուսման ազգեցութեան տակ Արծրունին իւր խօսքերը համեմում էր Եւրոպական բառերով. այնպէս որ սկզբում ժողովրդին աւելի դժուարամարս էր այդ լեզուն, քան թէ գրաբարը: Ահա մի հեռագրի թարգմանութիւն, որ տպագրուած է «Մշակի» մէջ՝

«Բէյնալ պատերազմական մինիստրին պատարակեց որ խիստ մեծուրաներ չը գործադրեց սենատորի մ' դէմ որ լէքիդիմական ցուցմունքներ առաւ: Կապիտալը կամենում է գէմիծիօնէ տալ: Բիւրժուէի սօմաները ընդունուած են սենատից, եպիսկոպոսների կրետիտը մերժեց եւ ժողովի սէսիան փակուած է յայտնում: Բիւլլէտէնը կը ծանուցանէ թէ Կայսերուհին պլեվրիտ ունի . . . » 9.)

Առաջին տարում «Մշակի» բաժանորդների թիւը հասաւ 500-ի: Բ.—գ. տարիներում բարձրացաւ մինչեւ 700-ի: Հետեւեալ տարիներում մերթ իջնում, մերթ բարձրանում էր: Բարձրանալիս 800-ից չէր անցնում: Վերջին տարիներում միայն «Մշակի» ստորագրուողները 1000-ից անցկացան:

«Մշակը» մինչեւ 1884 թուականը կանոնաւորապէս հրատարակուեցաւ: 1884 թուականին Արծրունու անձնական հանգամանքների պատճառով «Մշակի» հրատարակութիւնը դադարուեցաւ: Խմբագրի հօր պարտքերի տեղ վաճառուեց Արծրունու մեծ քարուանսարայը, թատրոնը, տունը, որի մէջ էր եւ «Մշակի» խմբագրատունը: Գրիգոր Արծրունին այդ գրութեան մէջ գրում է՝

«... Այժմ խառն գրութեան մէջ, երբ դեռ չը դիտեմ ինչ միջոցներով ինքս պէտք է ապրեմ. որտեղ կը լինի «Մշակի» խմբագրատունը, որտեղ կը լինի բնակարանս, ստիպուած եմ առ ժամանակ գոնէ երկու ամսով դադարեցնել «Մշակի» հրատարակութիւնը . . . »

Թողնելով «Մշակը», խմբագիրը իւր

րեւելք» լրագիրը, — Կովկասի գժատան նախագիծը, — Թիֆլիսի առեւտրական բանկի նուէրը ռուս սովեալներին, — „Тифл. Лист.“ — մի լուր: — Վերին Ագուլիսից, — Շահնազարից, — Թիֆլիսից, — „Нов. Обоз.“ — մի լուր: — «Տարագ» — մի լուր: Կաղզուանից, Թիֆլիսից, «Ամուսիններ», Սաֆրագեանների խաղը, Ալեքսանդրապոլից:

«Մշակի» Հեռագիրներ — Պետերբուրգ, Տաշկենտ, Պետերբուրգ, Փարիզ, Բերլին, Պետերբուրգ:

Բանասիրական — Նիւթեր Հասարակական կեանքի ուսումնասիրութեան Համար:



նցեալ 1892 թուականի դեկտեմբերի 19-ին, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, 47 տարեկան Հասակում, թոքերի բորբոքումից վաղճանուեցաւ յայտնի Հայ

Հրապարակախօս Գրիգոր Արծրունին, որ Հայ Հասարակութիւնը մեծ բազմութեամբ, բազմաթիւ պսակներով ու ցոյցերով, Հանգուցեալի մարմինը Հողին յանձնեց նոյն ամսի 27-ին:

«Մշակ» դրականական եւ քաղաքական լրագրի խմբագիր-հրատարակողն էր Գրիգոր Արծրունին, որ քսան երկար տարիներ հրատարակում էր իւր թերթը:

1870-ական թուականների սկիզբներում երբ Ռուսաստանի Հայ ժողովուրդն արգէն շատից-քչից Հասկացել էր մամուլի նշանակութիւնը, երբ 60-ական թուականներին «Հիւսիսափայլը», «Կուռնկը», «Մեղու Հայաստանին» արգէն հարթել էին գրականու-

թեան ճանապարհի խոչնդոտները, ինչպէս եւ սորանցից առաջ անմահ Արովեան աշխարհաբար լեզուի հիմը դրեց իւր «Վէրք Հայաստանի» պատուական աշխատութեամբ, Գրիգոր Արծրունի փիլիսոփայութեան դոքտորի տիտղոսով, Գերմանիայից վերադառնալով, 1872 թուականի սկզբից Տիֆլիսում սկսեց հրատարակել «Մշակ» լրագիրը որպէս շաբաթաթերթ:

«Մշակի» խմբագրի գործն սկսած օրից նորա մօտ հաւաքուեցին Հայ գրագէտներից մի քանի դիրք ունեցող անձնաւորութիւններ, ինչպիսիք են՝ Գաբրիէլ Սունդուկեան, Ստեփաննոս Պալասանեան, Աբգար Յովհաննիսեան, Աղէքսանդր Գիշմիշեանց, Գէորգ Չմշկեանց, Միհրդատ Ամերիկեանց, Պօղոս Իզմայելեան, Բաֆֆի եւ այլք, որոնք թերթիս երիտասարդ խմբագրի հետ մեծ եռանդով աշխատակցում էին խմբագրական գործերում բազմատեսակ նիւթեր տալով: Մասնաւոր որ Արծրունին Գերմանական ուսում ստացած լինելով այնքան էլ հմուտ չէր Հայերէն լեզուին: Ինչպէս այդ բանը խօստովանել է Հանգուցեալը այն ժամանակուայ դրաքննիչ Ղայթմագեանցին (Ցենսոր Կայթմագով): Վերջինիս հարցին թէ՛ «Ասացէք խնդրեմ, մի՞թէ գուք այնքան տիրապետում էք Հայ լեզուին որ յանձն էք առել մի լրագիր հրատարակել» — Արծրունին համեստօրէն պատասխանում է, որ թէպէտ ինքը այնքան չէ տիրապետում իւր մայրենի լեզուին, բայց իւրեան շրջապատում են այնպիսի մարդիկ, որոնք արգէն յատնի են Հայոց գրականութեան մէջ . . .

Ահա թէ ինչ է գրում Հանգուցեալ Պարոնեան «Մշակի» սկզբնաւորութեան եւ այլ անձանց մասնակցութեան մասին՝ — «Արտօնութիւն առնելուն պէս տուն վազեց Արծրունին եւ հարիւր քառասուն նամակ գրեց հրաւիրելով իւր ծանօթներին, որ հաճին «Մշակի» խմբագրութեանը մասին նպատակել իրեն: Բարեկամներն ընդունեցին այս հրաւերն եւ 1872-ին ՚ի լոյս եկաւ «Մշակն»

որ բաժանորդներէն աւելի խմբագիրներ ունէր . . . »

Յիշեալ խմբի շնորհիւ «Մշակը» դրուեց Հաստատ Հիմքերի վերայ եւ առաջին տարիներում արդէն սկսեց կատարելապէս տարածուել: Մանաւանդ որ «Մշակի» սկզբնաւորութեան տարին Կովկասում ոչ մի այլ լրագիր չէր հրատարակուում: «Հայկական Աշխարհը», «Մեղուն» հանգիստ էին առել նախընթաց թուականին:

«Մշակը», ինչպէս յիշեցինք նախ հրատարակուում էր որպէս շաբաթաթերթ: 1876 թուականից դարձաւ եւօրեայ (շաբաթն երկու անգամ): 1878-ից փոխուեց ամենօրեայ (շաբաթը հինգ անգամ) 1886 թուականից դարձաւ երկօրեայ հրատարակուելով շաբաթը երեք անգամ, որպէս եւ տեւում է մինչեւ այժմ:

Սոսկ Արծրունու մասին քննութիւնը մեր ծրագրից դուրս է, մանաւանդ որ շատ տեղեր կան գրուած արդէն մինչեւ անգամ առանձին գրքերով: Կրկնութիւններից հեռու մնալու համար, այսչափը կասենք միայն, որ «Մշակը» իւր ուժի չափ զարկ տուեց Հայ գրականութեան զարգացման գործին, Կովկասի Հայ մամուլին տուեց մի կազմակերպութիւն:

«Մշակը» որպէս ազատամիտ (liberale) ուղղութեան տէր՝ բոլորովին հակառակ էր նախ՝ «Մեղու Հայաստանի», յետոյ «Նոր-Պար» եւ «Արձադանք» պահպանողական լրագիրներին: Ինչպէս եւ Թիւրքիայում «Արեւելք» «Մասիս» «Ծաղիկ» թերթերի հետ:

«Մշակը» իւր քսանամեայ գոյութեան միջոցին արծարծեց շատ նշանաւոր խնդիրներ ազգային կեանքից: Բայց շնորհիւ իւր հակառակորդ թերթերի նորա բազմանքների մեծ մասը՝ ինչպէս «Կոհարդ» խնդիրը, Կոհարդի հարցը, Կոհարդի խնդիրը եւ այլն, անիրագործելի մնացին: Լեզուի խնդիրը «Մշակում» շատ անխնամ էր թողնուած. ինչպէս հանգուցեալ խմբագիրն ասում էր թէ՛ գրութեանը նպատակն այն չէ որ լեզուի ճշտութիւնը պահպանուի, լեզուագիտութեան կամ Հայկաբանութեան կանոնների համա-

ձայն լինի. այլ այն, որ ժողովրդին հասկացնէ իւր մտքերը, իւր գաղափարները: Լաւ ծանօթ չը լինելով իւր մայրենի լեզուին, գերմանական ուսման ազդեցութեան տակ Արծրունին իւր խօսքերը համեմում էր Եւրոպական բառերով. այնպէս որ սկզբում ժողովրդին աւելի դժուարամարս էր այդ լեզուն, քան թէ գրաբարը: Ահա մի հեռագրի թարգմանութիւն, որ տպագրուած է «Մշակի» մէջ՝

«Ընթանալ պատերազմական միջոցներին պախարակեց որ խիստ մեծուբաներ չը գործադրեց սենատորի մ' դէմ որ լէքիդիմական ցուցմունքներ առաւ: Կապիտալը կամենում է դէմիծիօնէ աւլ: Բիւրժուէի սօմաները ընդունուած են սենատից, եպիսկոպոսների կրետիտը մերժեց եւ ժողովի սէսիան փակուած է յայտնում: Բիւլլէտէնը կը ծանուցանէ թէ Կայսերուհին պլեվրիտ ունի . . . » 9.)

Առաջին տարում «Մշակի» բաժանորդների թիւը հասաւ 500-ի: Բ.—գ. տարիներում բարձրացաւ մինչեւ 700-ի: Հետեւեալ տարիներում մերթ իջնում, մերթ բարձրանում էր: Բարձրանալիս 800-ից չէր անցնում: Վերջին տարիներում միայն «Մշակի» ստորագրողները 1000-ից անցկացան:

«Մշակը» մինչեւ 1884 թուականը կանոնաւորապէս հրատարակուեցաւ: 1884 թուականին Արծրունու անձնական հանգամանքների պատճառով «Մշակի» հրատարակութիւնը դադարուեցաւ: Խմբագրի հօր պարտքերի տեղ վաճառուեց Արծրունու մեծ քարուանսարայը, թատրոնը, տունը, որի մէջ էր եւ «Մշակի» խմբագրատունը: Գրիգոր Արծրունին այդ գրութեան մէջ գրում է՝

«... Այժմ խառն գրութեան մէջ, երբ դեռ չը գիտեմ ինչ միջոցներով ինքս պէտք է ապրեմ. որտեղ կը լինի «Մշակի» խմբագրատունը, որտեղ կը լինի բնակարանս, ստիպուած եմ առ ժամանակ գոնէ երկու ամսով դադարեցնել «Մշակի» հրատարակութիւնը . . . »

Թողնելով «Մշակը», խմբագիրը իւր

առողջութիւնը վերականգնելու համար գր- նաց Շվէյցարիա: 1885 թուականի վերջե- րին հազիւ վերադարձաւ Արծրունին արտա- սահմանից եւ 1886 թուականի սկզբից նո- րից շարունակեց «Մշակի» հրատարակու- թիւնը:

Նախ քան «Մշակի» այս ընդմիջու- մը, դեռ եօթնամասուն թուականներին երբ թերթին աշխատակցում էին ինչպէս լիշեցիներ քանի մի դիրքով անձնաւորութիւններ, Ար- ծրունու եւ վերոյիշեալ պարոնների մէջ մը- քերի շփումներ առաջ դալով, խմբից մեծա- մասնութիւնը հեռացան: «Մշակ»ին աշխա- տակիցներ աւելացան նորանոր մարդիկ՝ երի- տասարդներ, ուսանողներ եւ այլք: Արծրու- նին չը վհատուեց. իւր քանի մի աննշան բարեկամներով մըցել սկսեց իւր զօրեղ հա- կառակորդների հետ, եւ այդ կռիւր վերջա- ցաւ իւր մահով:

«Մշակ»ին աշխատակցել են հետեւեալ ան- ձինք. Մելիքատէ, Գ. Չմշկեան, Հ. Առաքել- եան, Ա. Արասխանեան, Գ. Սունդուկեանց, Ս. Սպանդարեանց (Իւնիւս), Յ. Աբէլեան, պ. Պաօշեան, Հ. Ղուկասեան, Յ. Գեղամեանց, Մ. Քոչարեանց, Աղ. Քալանթարեան, Ն. Ա- քելեան. Ն. Աթանասեան, բժ. Միրմանեան, Ա. Ծատուրեան, Հայկակ, Սիւլիւկ, Փ. Վար- դանեան, Ասիացի, Վ. վ. Բաստամեանց, Գր. Պալեանց, Ս. Բէկ-Նազարեանց, Բ. Նա- ւասարդեան, Մ. Միանսարեանց, Մ. Փոր- թուղալեանց, Ս. Մելքումեանց, Պ. Քա- թանեան, Ս. Արծրունի, Յարոյ, Գ. Բաշին- ջաղեան, Գր. Նիկողոսեան, Մ. Սաղաթել- եան, Նիրուանզադէ, բժ. Տէր-Գրիգորեան, բժ. Վ. Արծրունի, Ա. Նազարէթեան, Ա. Եզեկեան, Լէօ, Ստ. Ղորղանեան, Ստ. Լի- սիցեան, Խ. Մալումեան, Տիգ. Յովհաննիս- եան, Ա. Սարուխանեան, Վ. Փափաղեան, Ս. Ատրպետ, Ս. Հախումեան, Գր. Տիգրան- եան Ապրոյ եւ այլք:

«Մշակը» 70-ական թուականներին շա- րունակաբար յօդուածներ էր արտատպում Թիւրքիայի հետեւեալ հայ լրագրիւններից՝

«Արշալ. Արարատեան», «Մասիս», «Լրագիր», «Փուլնջ» «Թէրճմանը Եֆրեար», «Մանդու- մէի Եֆրեար»: Ռուսաց՝ «Правит. Вѣстѣ». «Тифлис. Вѣстѣ» եւ այլն: «Մշակը» Ռուսաս- անում առաջնակարգ լրագրիւնների կարգին է պատկանում, թէ նիւթերով թէ դիրքով: Այստեղ առաջ ենք բերում մի ազիւսակ ո- րով իմացուում է թէ մի տարուայ ընթաց- քում ինչքան նիւթ են տպագրել իւրեանց մէջ մեր երկու շատ տարածուած կովկա- սի թերթերը: Վերջնենք «Մշակի» էլ «Նոր- Դարի» էլ 1891 թուականի համարները: Վերջինիս խմբագրապետի Տփլիսից բացա- կայ լինելու պատճառով, այդ տարի աւելի նուազ համարներ են տպուել քան ամեն տա- րի: 1891 թուականին «Մշակն» հրատա- րակուել է 148 համար, «Նոր-Դարը» 183 համար:

Այստեղ մեր ազիւսակից կը տեսնենք որ 20 տարուայ մէջ որ «Մշակն» ինչքան է տա- րածուել, համարեա նոյն չափով տարած- ուել է ժողովրդի մէջ եւ ժողովրդականու- թիւն է ստացել «Նոր-Դարը» ասոր տար- ուայ մէջ: Բայց նիւթերի թուական քա- նակութիւնը, «Մշակինը» աւելի է քան «Նոր-Դար»ինը այդ էլ վերագրելու ենք նո- րան որ վերջինիս «բանասիրական» յօդուած- ները շատ երկար լինելով, աւելի ընդարձակ տեղ են բռնում—

Նիւթեր տուել են 1891 թ. ընթաց.	Մշակը	Նոր- Դարը
Առաջնորդող յօդուածներ .	76	62
Ներքին տեսութ. (յօդուածներ լուր. (քրոնիկ)	154	142
Արտաքին տես. (յօդուածներ. լուրեր.	2072	2178
Բանասիրական յօդ. (գծի փոխ)	198	*
Փելիէտօն (գծի փոխ)	953	74
Նամակներ խմբագրութեան.	58	6
Խառն լուրեր	6	4
Նամակ. ներք. թէ արտաք. (թղթակց)	60	11**)
Հեռագրիւններ	405	280
	198	139
	հաւա-	տար:

ԾԱՆՕՐ. ՀԵՂԻՆ.

*) „Նոր-Դարի“ մէջ „արտաքին տեսութիւն“ առանձին բաժին չկայ խառն է քրոնիկոնի մէջ:

**) Սրբեւի նորա համար է որ „Նոր-Դարը“ իւրեան ուղղած նամակների մեծ մասը տեղաւորում է „տեղեկատու“ի բաժնում:

Չենք յիշել երկու լրագրի էլ Տեղեկացոյցը, կամ Տեղեկատուն եւ յայտարարութիւնները:

Այժմ տեսնենք թէ „Մշակի“ կամ „Նոր-Դարի“ նամակները (թղթակցութիւնները) որ տեղերից են ուղարկուած՝

Նամակներ ստացել են՝	Մշկ.	Նորդ.
Աբասթումանից	1	—
Ազդոր	—	1
Ալէքսանդրապոլ	5	1
Ախալցխա	7	6
Ախալքալակ	1	2
Ամրուան	—	2
Անի	—	1
Ասիաբատ	—	4
Աստրախան	—	2
Արբիտուալի	—	1
Արմաւիր	—	2
Արդահան	3	—
Արդինա	1	—
Արդուին	3	—
Բագու	13	7
Բագում	18	6
Բրաջուր	—	1
Գանձակ	3	3
Գեչրլու	1	—
Գիրք	—	1
Գորի	2	—
Գարաչիչակ	5	1
Դէրպէնդ	—	2
Դիլիճան	2	1
Եալտա	—	2
Ելինդորֆ	—	1
Երեւան	9	—
Եկատերինոպար	1	3

Նամակներ ստացել են՝	Մշկ.	Նորդ.
Ջաբաթալա	1	—
Թէոդոսիա	—	1
Թէմիր-Խան-Շուրա	—	1
Թիֆլիս	—	1
Խոզդիր	1	—
Խարասու-Բազար	—	2
Կաղզուան	2	—
Կամենեց-Պոգոլսկ	—	2
Կարծախ	—	1
Կարճուան	—	1
Կատարին	—	1
Կերչ	—	1
Հին Նախիջեւան	8	6
Ղարս	2	1
Ղարաքիլիսէ մեծ	—	2
Ղազախ	—	1
Ղափան	—	1
Ղալարուադ	—	4
Ղալալա	—	1
Ղալթամիր	1	—
Ճալէթ	—	1
Մանգլիս	1	—
Մարդաքեան	—	1
Մոզզոկ	1	—
Մոսքուա	2	1
Մերքին Ագուլիս	1	—
Ներքին Ախտա	9	—
Նոր Բայազիդ	9	1
Նոր Նախիջեւան	1	9
Նուխի	1	—
Շամախի	—	3
Շուշի	12	7
Պետախոբակ	2	2
Պետերբուրգ	3	—
Ջուղա (նոր)	—	1
Սալեան	—	1
Սաղեան	—	1
Սարոզ	—	3
Սարիղամուշ	—	1
Սերակս	—	1

Նամակներ ստացել են	Մշկ.	Նորոր.	
Սղնախ	4	—	
Սիսիեան	—	1	
Սիմֆերապոլ	—	2	
Ստաւրապոլ	—	2	
Սուլիջ	—	1	
Վաղարշապատ	7	—	
Վարդաշէն	1	1	
Վերին Ագուլիս	2	—	
Վայոց Ձոր	—	2	
Վերին Ազա	—	1	
Փառակա	1	—	
Փիփ	2	—	
Փոթի	2	—	
Քուծախիս	1	—	
Քարահանջ	—	1	
Օգեսա	2	—	
Օրբազար	—	2	
Օքրոպակերտ	1	—	
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԻՑ	Ամերիկա	—	1
	Աւստրիա	1	—
	Գերմանիա	1	1
	Թիւրքիա	8	—
	Իտալիա	1	—
	Շուէյցարիա	3	—
	Պարսկաստան	21	13
Փրանսիա	8	—	
Ընդամենը՝	198	139	

Ինչպէս տեսնում ենք «Մշակն» աւելի է նամակներ ստացել քան «Նոր-Ռարը»: «Մշակի» 198 նամակները գրուած են 50 տեղերից, «Նոր-Ռարի» 139 նամակը 64 տեղերից: Ուրեմն եզրակացութիւնն այս է որ թէ եւ «Մշակի» թղթակցութիւնները 60-ի չափ աւելի են «Նոր-Ռարի»-ից, բայց «Նոր-Ռարը» աւելի տարածուած է քան «Մշակը»:

«Մշակը» տպագրուում էր նախ «Մերթի» եւ ընկ» տպարանում, յետոյ Յով. Մարտիրոսեանի, վերջապէս Կովկասի Կառա-

վարչապետի գրասենեակի տպարանում:

«Մշակի» խմբագրապետ Գրիգոր Արծրունու խմբագրութիւնից բացակայ եղած ժամանակ, թերթի տակ ստորագրում էր նախ՝ «Մշակ լրագրի օգնական խմբագիր՝ Գրիգոր Նիկողոսեան 10)»): յետոյ վերջին տարիներում, «Փոխ-խմբագիր՝ Յով. Տէր-Մարկոսեան»:

«Մշակ» լրագրից արտատպուած են աւանձին գրքերով, Բաֆֆիի «Դաւիթ բէկը», «Ղարաբաղի աստղագէտը», «Հայ կինը», «Հայ երիտասարդութիւնը», «Զալալէդգին», «Ոսկի աքաղաղ»: Գր. Արծրունու՝ «Այնտեղ եւ այստեղ», «Էվելինա»: Վ. Փափաղեանի պատկերներից եւ այլն:

1890 թուականին լրացաւ Գրիգոր Արծրունու 25-ամեայ գրական գործունէութիւնը: «Մշակից» առաջ էլ նա գրում էր «Մեղուի», «Հայկական Աշխարհի» եւ այլ օտար լրագիրների մէջ: Հայ գրողէտ հասարակութիւնը ցոյց տալու համար որ ինքն հասել է գիտակցութեան այն աստիճանին, որ գիտէ գնահատել իւր մեծ գործիչների գործունէութիւնը, այդ թուականի մայիսի 6-ին Տիֆլիսում տօնեց «Մշակի» խմբագրի 25-ամեայ գրական գործունէութեան յօբելեանը: Այդպիսի մի հանդէս հայոց մէջ երկրորդն էր Կովկասում:

Դարձեալ երկու տարի՝ եւ այլ եւս չը կայ «Մշակը»: Գրիգոր Արծրունու վախճանը, եւ «Մշակի» վախճանն էր: 1892 դեկտեմբերի վերջերին տարին դեռ չը լրացրած «Մշակը դադարուեց:

Հանգուցեալ խմբագրի բաղձանքն ու տենչն էր որ «Մշակի» հրատարակութիւնը դարձեալ շարունակուի միեւնոյն ծրագրով, միեւնոյն ուղղութեամբ: Արծրունու կտակի համաձայն թերթի հրատարակիչ պէտք է լինէր Կովկասի Մարիամ (օր.)Մելիք-Աղամալեան: 1893 թուականի սկիզբներից արդէն տիկ(օր.) Աղամալեան հաստատուեց հրատարակիչ պաշտօնում (11.) իսկ խմբագիր չը լինելու պատճառով «Մշակը» մինչեւ հոկտեմբերի կիսին չէր երեւում: Ահա «Մշա-

կի» մի աւետարեր Համար լոյս տեսաւ, 1893 թ. № 1. ազդարարելով որ խմբագիր Հաստատուած է արդէն Ալէքսանդր Քալանթար, Հրատարակիչ Մ. Մելիք—Աղամալեան: Հետեւեալ նոյեմբ. ամսից սկսեց «Մշակի» կանոնաւոր հրատարակութիւնը: Ուրեմն «Մշակը» խմբագրի փոփոխութեան Համար 1893 թուականին դադար առաւ տասն ամիս:

Յարատեւութիւն եւ յաջողութիւն ենք ցանկանում «Մշակ» թերթին, շնորհաւորելով նոր խմբագրին, որ առաջինի տեղը բռնելու Համար կարելի է վստահել:

ԹՆՅՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) Մեր մամուլի պատմութեան մէջ ոչ մի լրագիր այնքան աղբիւրներ չունի ինչքան որ ունի «Մշակը»: «Մշակի» կամ Գրքագոր Արծրունու մասին կան առանձին գրքեր էլ:

Ահա մեր աղբիւրների կարծիքները «Մշակի» մասին՝

«... Մենք մեր ներքին տեսութեան տակ կզրցենք հէնց էսպիսի հասարակական գործեր, թէ ինչ է շինում գիւղացին, վաճառականը, ուսուցիչը, ուսումնարանները եւ այլն: Կաշխատենք այստեղ ցոյց տալ նրանց լաւ եւ վատ կողմերը անկողմնակի, որքան որ մեր ձեռներեցը կ'գայ...»

„Մշակ“ 1872 № 1 էջ 3. (խմբ.)

«... երբեմն այլանդակ լեզուով, որ ընթերցողն կը շուարի կը մնայ թէ երկու այլանդակներուն որուն վրայ խնդայ եւ որուն վրայ լայ, Ութը տարիներէ հետէ կուզէ իւր աշխարհարը, գոր ֆրանսիացի մը աւելի շատ կը հասկնայ այսօր, քան հայ մը ...»

„Ազգային ջոջեր“ Թ. Պարոն. Կ. Պոլիս էջ 332.

«... Նոյն փափաքն եւ նոյն տեսութիւնն („Փորձի“) կրնանք ընել նաեւ „Մշակ“ քաղաքական օրագրին համար գոր 1871 (“) թուականէ 'ի վեր կը խմբագրէ եւ կը տպագրէ (հրատարակէ) 'ի Տփլիս Գ. Արծ-

րունի...»

„Պատմ. հայ. դպրութ.“ Բ. էջ 504.

«... Վերջապէս նոյն (1872)-ին Թիֆլիսի մէջ պ. Գրիգոր Արծրունոյ ձեռքով սկսուեցաւ „Մշակ“ լրագիրը որ նախ շաբաթական էր եւ յետոյ ամենօրեայ դառնալով, մինչեւ հիմա (1889.) շարունակուում է...»

„Արձագանք“ 1882. № 22 Ա. Եր.

«... Եւ վերջ է վերջոյ պ. Արծրունին այս բոլոր ուժերը փոխեց վանագան Խ.—երով, Մ.—երով, Nemo—ներով, իրեն օգնական ընտրեց, եթէ թուարանական լեզուով ասենք մի—0. եւ շրջապատեց իրեն երեխաներով...»

„Հանդէս գրակ. եւ պատմ.“ գիրք Ա.

«... Մշակ քաղաքական եւ գրականական. ամենօրեայ լրագիր: Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի. Թիֆլիս. 1872—83—(94-եւս)»

„Մատեն, հայկակ“ Զարբ. էջ 436.

«... Այս թերթի հմուտ եւ բոլորովին հիմնաւոր օրինակելի ղեկավարութիւնը ցոյց է տալիս իւր խմբագրի հիմնաւոր զարգացման տէր լինելը: Իւր դօքտոր—աստիճանը ձեռք է բերել պ. Արծրունի Հայդէլբերգի համալսարանում...»

„Մագազին“ շաբաթաթ. 1885. № 15.

«... Nach gediegenen Mustern gehaltene Leitung lasse in seinem Redacteur einen Mann von tüchtiger wissenschaftlicher Bildung erkennen...»

„Magazin“ 1885 № 15.

«... Այժմս (1885) դուրս են գալիս հայոց լեզուով հետեւեալ լրագիրները եւ ամսագիրները... Թիֆլիսում „Մշակ“...»

„Հայկակ. մատենագ.“ Բ. էջ 155.

«... Gegenwärtig erscheinen in armenischer Sprache folgende Zeitungen und Zeitschriften. In Tiflis die Tagesblätter „Mschak“ (Der Arbeiter)»

„Arm. Bibliot“ II. էջ. 155.

«... Շատ ժամանակ չէ որ տօնուեցաւ (Գ. Արծրունու) բեղեմնաւոր գործունէութեան քսան եւ հինգ ամեակը: Արծրունին հայ ազգի այն ղեկավարներէն էր, որոնք եռանդով պաշտպանելով նորա շահերը՝ ոչ նուազ եռանդով հանդէս են գալիս, պաշտպանելու մեր մեծ համառուական հայրենիքի շահերը: „Մշակ“»

լրագիրը որի խմբագիրն էր Արծրունին, հինց այդ ուղղութեան օրգանն էր: Ըստ արժանոյն գնահատելով քանքարաւոր հրապարակախօսի ջանքերը, ցանկալի է որ գտնուի նորա արժանաւոր յաջորդը, որպէս զի գորանայ այն ազնիւ գործը, որին այնպիսի անձնագոհութեամբ ծառայում էր Արծրունին”

„Ռուսկայա Միսըլ“ 1893. գիրք ա. էջ 189
 [„ . . . Недавно онъ (Григ. Арцруни) праздновалъ двадцатипятилѣтіе свой плодотворной дѣятельности. Арцруни принадлежалъ въ числу тѣхъ вождей армянскаго народа, которые горячо отстаивая его интересы съ неменьшею энергіей выступаютъ назащиту интересовъ нашего великаго обще-русскаго отечества. Газета „Мшавъ“ редакторомъ которой былъ Арцруни, было органомъ именно этого направленія. Воздавая должное усиліямъ повоеннаго даровитаго публициста пожелаемъ чтобъ ему нашелся достойный преемникъ чтобы росло и крепло то благородное дѣло которому такъ самоотверженно служ. Арцруни.“

„Русская Мысль“ 1893. էջ 189
 ժ. „Մշակը“ կարելի է համարել հայկական մտքի արտայայտիչ, հայոց մտաւոր կեանքի շտեմարան: Իր գոյութեան օրից սկսած այդ լրագիրը դէպի ինքը գրաւեց այն բոլոր մարդկանց, որոնք կարող էին գրել . . . Գրեգոր Արծրունին իրրեւ հրապարակախօս եւ խմբագիր ստեղծեց հայոց մէջ քաղաքական մամուլը”

„Մտքի մշակը“ Խ. Մալում. էջ 83. 84.
 ժա. „ . . . Առ հասարակ Արծրունի եղբայրների գրուածների ազդեցութիւնը օրեցօր մեծանում էր եւ համակրողների թիւը շատանում”

„Նիւթեր հայ. պատ. համ.“ ա. Ա. Սր. էջ 86
 ժբ. „ . . . Վերջին ժամանակները „Մշակի“ օրինաւոր աշխատակիցների հեռանալուց յետոյ՝ „գիմնագիտ“—„սեմենարիտ“ համրակ պատանիներն ու ամեն տեսակ տիրացուները սկսեցին մեծ դեր խաղալ եւ մասնակցել „Մշակ“ում”

„Հայ. մամուլը Ռուսաստ“ Յարոյ էջ 95.
 ժգ. „ . . . Անպայման հակառակ լինելով նրա՝ ազգի եւ եկեղեցու վերաբերութեամբ բըռ-

նած ուղղութեան, չենք կարող չը գովել նրա գործունէութեան եռանդը, աշխատանքի մէջ քստն տարի շարունակ ցօյց տուած տոկունութեանը”

„Նոր-Դար“ 1892. № 206.

ժդ. „ . . . Մշակի յարգոյ խմբագիրը ինչպէս երեւում է բոլորովին անտեղեակ է ազգի անցեալին եւ ներկային եւ իրրեւ լոկ եւրոպէամուլ կամենում է ազգի բոլոր հաստատութիւնները ձեւակերպէ օտարի ձեւերով. մոռանալով որ ամեն ազգ իւր առանձին յատկութիւնքը ունի . . . այսանգամ այսքանովս բաւականացած յայտնում եմ „Մշակին“ որ սխալուում է նա. եթէ կարծում է թէ հայ եկեղեցական դասը այնքան տգէտ է որ չէ կարող ճանաչել „Մշակի“ եւ նորա նմանների ընթացքը եւ ուղղութիւնը”

„Արարատ“ (Էջմ.) 1874. էջ 110.

ժե. „ . . . այդ վերացական աշխարհաբաղաբացութեան սկզբունքը, ծանր հարուածներ տուած են արդէն հայկական մարմնոյն եւ „Մշակի“ ծայրայեղ եւ հակակրական ազգամիաս արշաւանքը, հայ ազգութեան ու եկեղեցւոյ սահմանին մէջ մոռացուած չեն”

„Արեւելեան Մամուլ“ 1885. № 6.

ժգ. „ . . . Նորագոյն հրատարակութիւնների մէջ նշանաւոր տեղ է բռնում „Մշակ“ լրագիրը. Գր. Արծրունու խմբագրութեամբ. 1871 (°)—1883, որ առանձին զարկ տուեց լրագրական գործին Ռուսահայոց մէջ”

„Պատմ. հայոց“ Ս. Պալասան. էջ 445.

ժէ. „ . . . Գրեգոր Արծրունւոյն „Մշակն“ (1870°) —1884”

„Պատմ. հայ. մատ.“ Եղ. վ. Դուր. էջ 97

ժը. „Մշակ Տիֆլիս“ Գ. Արծրունի”

„Դաս. հայ-ազգ. պատմ.“ բ. էջ 340.

ժթ. „ . . . Նա (Արծրունին) ծանօթ չի եղել մեր ազգի անցեալի հետ . . . Նա չը գիտէր մեր անցեալը, մեր լեզուն գորա համար գոցա բնական ճանապարհով զարգացմանը մնասեց”

„Հայոց արդի մատեն.“ Փարս. (ձեռագ.)

ի. „ . . . -Ոչ, ոչ, պէտք է որ եթեամ, կըսէ Թորոս աղան եւ գրօսարանէն դուրս կը նետէ ինքն զինքն երթալու համար. շուկայ-ոչ, առանձին տեղ մը գտնելու եւ քիչ մը հայհոյելու համար. „Մշակի“

խմբագրատունն գոնէ մօտ ըլլար . . .”

„Իրկար“ 1887. էջ 177.

Քիչ չէ քսան զանազան տեղերից կարծիքներ հաւաքել „Մշակի“ մասին: Որ կարելի է եզրակացութեան գալ Արծրունու գործունէութեան մասին: Մեզ մնում է միայն ասել որ մեր ազգիւրներից ոմանք միակողմանի են գտնուել դէպի „Մշակը“: Օրինակ պ. Մալումեան իւր „Մտքի մշակում“ գոյեստների անթիւ կուտակումներով մինչեւ երկինք է բարձրացնում Գրիգոր Արծրունուն իւր „Մշակով“: Մինչեւ անգամ անուանելով նորան „Մամուլի ստեղծող, վերանորոգիչ, անվեհեր հերոս“ եւ այլն:

Մալումեանից ոչ պակաս գրաւում է դէպի „Մշակը“ պ. Փարսազան Տէր-Մովսեսեան իւր ձեռագիր „Արդի մատենագիտութեան“ մէջ: Ուրիշ թերթերի մասին որ իւր տեսրակի մէջ գրել է մի քանի տող, „Մշակին“ նուիրում է մի քանի երեսներ: Բայց վերջինս թուել է եւ Արծրունու պակասաւոր կողմերը:

Սորանց հակառակ պ. Յարոյ խօսում է „Մշակին“ հակառակ. օրինակ նա գրում է որ „Մշակը“ հաւաքեց իւր գլխին „գիմնագիտոս, սեմինարիստ“ համբակներ, տիրացուներ եւ այլն: Պարոնի կողմից այդ մի փոքր անհամեստութիւն է: Ո՞ր մի մեծ ուսումնականը, գիտնականը նախ „գիմնագիտոս“ „սեմինարիստ“ կամ „բեալիստ“ չէ եղել, կամ ինքը պ. Յարոն մի տեղ ուսանող եղե՞լ է թէ ոչ: Ինչ վաստ բան է արել Արծրունին եթէ այդ „համբակներից“ մեծ ուժեր է ստեղծել, առաջ քաշել:

- 2.) Այստողերը տպուում էր նախ, բայց վերցուեց յետոյ:
- 3.) Առաջին տարին դիրքը տարօրինակ էր՝ նեղ եւ երկար:
- 4.) Նախ բոլորովին տարբեր:
- 5.) Նախ ոչ այսչափ հարուստ, միայն ունէր „առեւտրական“ բաժին:
- 6.) „Մշակը“ իւր հեռագիրներն ստանում էր նախ „Միջազգային Ընկերութ.“-ից, վերջերքս „Հեւսիսային Գործակալութիւնից“:
- 7.) Տես „Ազգային ջոշեր“ Յ. Պարոնեան,
- 8.) Տես „Մշակ“ 1884 № 31.
- 9.) Տես „Ազգային ջոշեր“ Յ. Պ. ա. տպ. էջ 332

10.) Տես „Հայրապետութիւն Հայոց“ Մաթ. Եպիսկ. Իգմիրեան. էջ 317.

11.) „ . . . Հրատարակութեան իրաւունքը տրուած է տիկ. Մարիամ(օր)Մելիք-Աղամալեանցին, որուն կը մնան նաեւ հանգուցեալ պ. Գր. Արծրունիի շարժական ստացուածքը, որ ընդամենը 1000 ռբ. է գնահատուած . . . „Մշակը“ տակաւին չի հրատարակուիր, թերթին պատասխանատու-խմբագիրը որոշուած չըլլալուն պատճառաւ . . .”

„Արեւելք“ 1893 թ. (15 յունիս)

106.



(Ամսաթերթ.)

Կոստանդնուպոլի(Տաճ.)1872-1894-եւս Հրատարակուում է ամսի սկիզբներին: Արտօնատէր՝ ձ. Բ. Կրին.

Տնօրէն-Խմագիր՝ Հ. Ս. Պարնըմ.

Ի տպարանի Յակովբ Պոյաճեան.

Դիրքը՝ (Թերթ.) միածալ 4 էջ Յ-սիւնեան 38X54 Հ.-մ.

Թուղթը եւ տիպը՝ լաւագոյն.

Բաժանորդագիրն՝ տարեկան՝ 1¼ մէճ.

Հասցէն՝ Հ. Ս. Պարնըմ, Ամերիկեան խան. Կոստանդնուպոլիս.

կամ՝ H. S. Parnm. Amerikian han Constantinople.

Լեզուն ռճը՝ { „Համբերութիւնն է անտրտունջ եւ ուրախութիւնս կրօնի ներդրումներ ու . . .”

Ծրագիրը՝

Կրօնական, ուսումնական եւ բարոյական, յօդուածներ, տեղեկութիւններ, թարգմանական հաս ու կտոր գրուածներ, աշխարհահար լեզուով, աղօթքներ, ճառեր, խը-

րատներ եւ այլն:
 Բովանդակութիւն 1890 № 11 (նոյեմբ.)
 Պարսից շահը—(պատկերով).
 Լիբանան լեռ (պատկերով)
 Համբերող եղէք. —Իմաստուն որոշումը.
 —Առիւծների մէջ քնացող աղջիկ մը.—
 Լաւ կրթուած ծովաբլ մը:
 Հերմոն լեռ
 Դանի աղբիւրը } պատկերներ:
 Բնական աղբիւր



ւետաբեր համա-
 նունութեթբբողո-
 քական միսիոնար-
 ների ձեռքով Կան
 է- հիմ օտարի էր որ
 հրատարակում էր
 Կոստանդնուպոլի-
 սում: Որպէս զի
 իւրեանց «սուրբ»
 գաղափարները

կարողանան տարածել եւ մատաղ սերնդի
 մէջ, 1872 թուականից սկսեցին «Աւետաբեր»
 պշայոյ համար ամսօրեայ հրատարակութիւնը:
 Նիւթական ապահովութեան մասին ամենե-
 ւին կարօտութիւն չունենալով, երեխայոց
 աւելի հետաքրքրական դարձնելու համար
 տարեցտարի աշխատում են թերթը գեղեց-
 կացնել: Բազմաթիւ պատկերներ ու նկարներ
 վայելուչ են դարձնում «Աւետաբեր» շաբա-
 թաթերթը, նոյնպէս եւ «Տղայոց Համար»ը
 մինչեւ այժմ հրատարակուում են:

Թ Ա Ն Յ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Աւետաբեր» պշայոյ համար ամսագիրը

մեր աղբիւրները միացրել են «Աւետաբեր
 կրօնական ուսումնական քաղաքական»
 շաբաթաթերթի հետ:

ա. 1872-էն սկսեալ խմբագրող կը հրատարակէր բացի գլխաւոր երկու պատկերազարդ ամսաթերթից . . . եւ որոյ անունն էր «Աւետաբեր» պշայոյ համար.
 «Հանդ. Ամսօրեայ» 1889 Հ. Գ. Գ.
 բ. «Տղայոյ համար «Աւետաբերի» բաժանորդ գրուողներն ի սկզբանէ կարծուած էն շատ աւելի ըլլալով, յիշեալ թերթին առաջին թիւը բաւական չեղաւ. . . Ամերիկայէն սպասուած պատկերազարդ թուղթերը մեր ձեռքը հասնելուն պէս, իսկոյն բ. տպագրութիւն մը պիտի ըլլայ.
 «Աւետաբեր» 1872. Թիւ 15

107.



Ա Մ Ս Ա Գ Ի Բ Պ Ա Տ Ն Ե Ր Ա Ջ Ա Ր Գ

Թ է ո գ ո ս ի ա (Ռուսաստ.) 1873-1874.
 Հրատարակուում էր՝ ամսի վերջերին.
 Խմբագրող եւ հրատարակիչ՝ Գրիգոր Տէօլվէթեանց:
 Типографія Армянской Семинаріа.
 Գիրքը՝ (տետր) միածալ 1½ թերթ տպ.
 16 էջ. 2-սիւնեան. 25X33 Հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
 Բաժանորդագիրնը՝ տարեկ. 5 ռբ. արծ.
 Լեզուն ոճը } «. . . Կինդրներ նաեւ ուսումնական անձանց գրաւորա-
 Ուղղագրութ. } կան զործակցութիւնը.»
 Ծրագիրը—
 ա. «Տնական եւ գիւղական տնտեսութեան

երկրագործութեան, արհեստից վաճառականութեան, եւ այս նիւթերու մեծապէս օգնող բնական գիտութեանց վերայ».

բ. «Մանկավարժութեան եւ առողջապահութեան վերաբերեալ նիւթոց վերայ»:

գ. «Աշխարհագրական տեղեկութիւններ, ամենն ալ որքան կարելի է զուարճալի ոճով շարադրուած, եւ հաւատարիմ նոր ճանապարհորդաց, պատմութիւններէն քաղուած»:

դ. «Պատմական յօդուածներ՝ հին եւ նոր ընդհանուր պատմութիւնէ առնուած, հանդերձ հարկաւոր խորհրդածութեամբ. նմանապէս վախճանեալ եւ կենդանի՝ ազգային եւ օտարազգի մեծանուն մարդկանց կենսագրութիւններ, իւրաքանչիւրին կենդանագրովը»:

ե. «Հետաքրքրական եւ զուարճալի վիպասանութիւններ. որ ընդհանրապէս օտար երկրաց ընտրելագոյն հեղինակներէն թարգմանուած պիտի ըլլան»:

զ. «Բանասիրական յօդուածներ, մատենագրական ու լեզուագիտական դատողութիւններ. մանր ոտանաւորներ, առակներ, առածներ, ազգային եւ օտար սովորութեանց ստորագրութիւններ, նախապաշարմունքներ եւ այլն»:

«Ձանագանք» վերնագրով վերջին մասը պիտի բովանդակէ Կայսերական Կառավարութեան երեւելի կարգադրութիւններ, նմանապէս ներքին եւ արտաքին ամսօրեայ դիպուածոց եւ դիւտից կարճառօտ լիշատակութիւններ»:

«Նախագծիս խօսքերէն այս եւս կիմացուի որ մեր ամսագրոյն նպատակէն բոլորովին դուրս են կրօնական խնդիրներ, կամ վիճաբանութիւններ, եւ քաղաքական կառավարութեանց վերայ խորհրդածութիւններ»:

Բովանդակութիւն 1873. թիւ բ.
ՏՆՏԵՍԱԿԱՆՔ — Սկզբունք տնտեսութեան բ. (շարունակութիւն):

Գինին թթուիլը արգելելու հնար.
Պաշարները մրջիւններէն պահելու հնար.
Վազր եւ կոկորդիլոս (պատկերներ)
Գիւղական տնտեսութիւն:
ԲՆԱԳԻՏԱԿԱՆՔ—Օդապարիկ (շարայարուժ.)
Կրակապաշտ պարտիկներ (պտտկեր)
Վազր եւ կոկորդիլոս.
ԱՇՄԱՐՀԱԳՐԱԿԱՆՔ—Կրակապաշտ պարտիկներ:
ՊԱՏՄԱԿԱՆՔ— Վասիլ Յովսէփեան իշխան Բէհրուտեանց:
Վասիլ Յ. իշխ, Բէհրուտեանց (նկար.)
ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆՔ—Հաճի Թաթոս. դ. (շարայար.)—Ա. տղայս.—Ա. Խոմեաքով.
ՄԵՆՈՒՑՈՒՄՆ.



Որիդոր Եգորովիչ Խաչիկ-Տէօլվէթեանց մտադրութիւն ունենալով Թէոդոսիայում մի պատկերազարդ ամսագիր հրատարակելու, 1872 թուականի վերջերին մի յայտարարութիւն ցրուեց հայ հասարակութեան մէջ, որ հետեւեալ 1873 թ. սկզբից հրատարակելու է «Դաստիարակ» պատկերազարդ ամսագիրը: «... Գործոյն բազմատեսակ օգտակարութիւնը միշտ աչքի առաջ եւ ունենալով, մանաւանդ թէ անհրաժեշտ հարկաւորութիւնը ճանչնալով համարձակեցանք ձեռք զարնելու պատկերազարդ ամսագրոյ մը հրատարակման, յուսալով որ նիւթական դժուարութիւնները —ինչպէս որ շատ բանի մէջ,—նախ այս պարագայիս մէջ մեծաւ մասամբ կրնան լողթուիլ անխոնջ աշխատասիրութենէ եւ

աներկիւղ վստահութենէ՝-գրում էր Տէօլվէթեան,—«... Դաստիարակ» անունը, որ առաջնորդող, կրթութիւն տուող, խրատող կը նշանակէ, անոր համար ընտրեցինք որ առանց երկար բացադրութեան հասկացընեմք՝ թէ մեր դիտաւորութիւնը եւ այս աշխատութեան նպատակն է օգտաւէտ գրաստիարակն ազգիս առ հասարակ» աւելացնում է խմբագիրը:

Թէեւ պ. Տէօլվէթեան իւր յայտարարութեան մէջ խօստացել էր որ «Դաստիարակը» «պիտի սկսի իւր կանոնաւոր ընթացքը ... 1873 տարւոյն յունուարէն», բայց գործի հանգամանքները յետաձգեցին ամսագրի յոյս տեսնելը հինգ ամիս: «Դաստիարակի» առաջին տետրակը յոյս տեսաւ 1873 թուականի յունիս ամսի սկզբին, որի առաջին երեսում գրուած «Ծանուցման» մէջ խմբագրութիւնը յայտնում է որ «Դաստիարակի» տարին կը հաշուուի յունիսից-յունիս. «որովհետեւ պէս պէս պատճառներով կարելի չ'եղաւ յունուարէն» սկսել:

«Դաստիարակի» նիւթերը հազուադիւրս էին եւ հետաքրքիր: Տնտեսական, աշխարհագրական եւ այլ առատ յօդուածները լիացնում էին ընթերցողներին: Բազմատեսակ յօդուածների հետ «Դաստիարակը» աալիս էր պատշաճաւոր նկարներ ու պատկերներ:

«Դաստիարակ» շատ նման էր իւր հայրենակից «Մասեաց Աղաւնուոյն» որը դադարուած էր արդէն: Տառերն էլ միեւնոյն «Մասեաց Աղաւնուոյ» տառերն էին:

«Դաստիարակի» ճակատին տպագրուում էր մի խորհրդաւոր նկար:

Ցաւօք սրտի պէտք է ասել որ «Դաստիարակ» երկար կեանք չունեցաւ. թէեւ խմբագիրը չէր յուսահատուել «անխոնջ աշխատութենէ եւ աներկիւղ վստահութենէ» բայց ամսագրի կեանքը հազիւ մի տարի կտրողացաւ տեւել:

ԺԱՆՅՈՒԹԱԻԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Ազգիւրներ «Դաստիարակի» —
 - ա. «Մի կողմը թողնենք Թէոդոսիայի «Դաստիարակը»...
 - „Հայ. մամուլը Ռուս.“ Յարոյ էջ 122.
 - բ. „Մի եւ նոյն տարին (1879)՝ պ. Իաշիկեանի (՝) ձեռքով Թէոդոսիայում հիմնուեց „Դաստիարակ“ անունով մանկավարժական (՝) լիւթը բայց անյաջող եղաւ...
 - „Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.
 - գ. „Դաստիարակ 1872 (՝) Թէոդ. Գ. Իաշիկօֆ. (՝)“
 - „Դաս. հայ-ազգ. պատմ.“ բ. էջ 338.

108.

Դ Գ Ր Ո Ց

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Թ Ո Ւ Ն

Ա Մ Մ Ա Գ Ի Ր

Վ ա զ ա ը շ ա պ ա տ (Ռուսաստ.) 1874-1876
 Հ Ր ա տ ա ը ա կ ու ու մ է ը՝ ամսի վերջերին.
 Խ մ բ ա գ ի ը-Հ Ր ա տ ա ը ա կ ի չ՝ Վ ա հ ա ն վ ա ը-
 դ ա պ ե տ Բ ա ս տ ա մ ե ա ն ց .

Ի տ ա պ ա ը ա ն ի Ս . Գ ա յ ի ա ն ե ա ն Վ ա ն ի ց :
 Գ ի ը ը ը (տետր.) 1—2 տպ. թերթ. 32—64
 էջ. 14 X 20 հ.-մետր.

Թ ու զ թ ը եւ տ ի պ ը՝ բաւարար.
 Բ ա ժ ա ն ո ը դ ա գ ի ն ը՝ տարեկան վեց մա-
 ն է թ արծաթ .

Լ ե գ ու ն ո ճ ը } „... Վերջապէս մի ազդու
 Ու ղ ղ ա գ ը ու թ . } եւ հզոր ապացոյց է նաեւ
 Ծ ը ա գ ի ը ը՝ } այն հանգամանքը որ ...“

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս .

- ա. «Մանկավարժական խորհրդածութիւններ.»
- բ. «Քննութիւն դպրոցական կանոնադրութիւնների, դասագրքերի եւ առհասարակ

մանկավարժական մատենադրութեան:»

գ. «Տէրութեան եւ ազգային հոգեւոր իշխանութեան կարգադրութիւններ յատկապէս ազգային ուսումնարանների վերաբերմամբ:»

դ. «Պատմական եւ վիճակագրական տեղեկութիւններ, հայոց ուսաց եւ օտար ազգի դպրոցների մասին:»

ե. «Ազգային դպրոցների վարչութիւնների հաշիւներ, յայտարարութիւններ եւ այլն:»
ԵՐԿՐՈՐԿ ԽԱՍ.

ա. «Քաղուածներ ազգային եկեղեցական պատմութիւնից:»

բ. «Քաղուածներ հայոց ուսաց եւ ընդհանուր պատմութիւնից:»

գ. «Համառօտ տեղեկութիւններ ընական (ֆիզիքական) ընդհանուր աշխարհագրութիւնից:»

դ. «Մասնաւոր տեղեկութիւններ ընական դիտութեան ամենայն ճիւղերից:»

ե. «Համառօտ քաղուածներ զանազան երկրներում կատարուած ճանապարհորդութիւններից:»

զ. «Համառօտ կենսագրութիւններ, երեւելի մարդոց:»

է. «Համառօտ հատուածներ ազգային ընտիր շարադրութիւններից հին (գրոց) եւ նոր (աշխարհաբար) ոճով:»

ը. «Մանկական վէպեր, ոտանաւորներ, առակներ եւ այլն:»

Բովանդակութիւն 1875 № 7.

Ա. Դպրոցական սահմանադրութիւն—Մանդինեանցի:

Մեր ազգային հոգեւոր դպրոցները յայտկոյս Կովկասու.—Արիստ. վ. Սեդրակեան:»

Վիճակագրական տեղեկութիւններ արքունի ուսումնարանների մասին (կը շարունակուի):»

Բ. Պլուտարքոս—(կենսագրութիւն.)»

Հօր խօսակցութիւնները իւր զաւակների հետ, ազգային կրօնի եւ եկեղեցու վերայ:»

«Սկզբնական տեղեկութիւններ ընութեան երեւոյթների վերայ» (կը շարունակուի):



ահան վարդապետ Բաստամեանց, ուսումնական եւ հմուտ մանկավարժ, վանահայր Ս. Գայիանիէ Վանքի Վարդապատում, մի յարգելի անձնաւորութիւն, որ ծանօթ է մեր դրականութեան իւր պատուական գրուածներով, ինչպէս եւ Գոշ-Մխիթարի դատաստանագրքի հրատարակութեամբ, հայ լրագրութեան պատմութեան մէջ էլ պատուաւոր լիշատակութիւն է թողել իւր «Դպրոց» մանկավարժական ամսագրով:

«Դպրոցը» հրատարակուել սկսեց 1874 թուականի ապրիլ ամսից սեփական տրպարանից:

«Դպրոց» իւր գործունէութեամբ յետ չը մնաց «Հայկական Աշխարհից» իսկ գերազանցեց Թէոդոսիայի «Իաստիարակ»ից, ոչ արտաքին շքեղութեամբ:

«Դպրոց» իւր հարուստ ծրագրով ծառայում էր իւր իսկական նպատակին: Այն հանգամանքներում որ իւր ամսագիրն հրատարակում էր հ. Բաստամեանը, այն տոկունութեամբ որ գործում էր վարդապետ-խրմբագիրը, դժուար թէ մի ուրիշին յաջողուէր, նա վառուած էր իւր սուրբ նպատակով «ձեռնտու լինել ազգային դպրոցների յառաջագիմութեան. . . ուղեցոյց լինել դպար»

րոցական վարժապետներին, տեսուչներին, հոգաբարձուներին...տալ աշակերտներին ընթերցարան հարուստ զանազան օգտակար նիւթերով: Բաստամեան անդադար գրում ու թարգմանում էր ընտիր յօդուածներ եւ տեղաւորում «Ռպրոցի» էջերում:

«Ռպրոց» առաջինը եղաւ որ ծանօթացրեց հայ հասարակութեան մեր ազգային ծխական ուսումնարանների ներքին կազմակերպութեան հետ, լի ու լի ծանօթութիւններով: «Ռպրոցն» էր որ տալիս էր հայ ընթերցողներին դպրոցական հաշիւներ, վիճակագրական տեղեկութիւններ, ծանօթացնում էր գերմանական մանկավարժների կեանքերի հետ, գրում էր ուսուցչական ժողովների մասին, հետաքրքրուում էր ուսումնարանական-առողջապահական կանոններով, անում էր մանկավարժական դասախօսութիւններ:

Վերջապէս «Ռպրոցն» էր որ բ. բաժանմունքում տեղաւորում էր մանկական ընթերցանութեան յարմար գեղեցիկ նիւթեր, որ ոչ մի մանկական հրատարակութիւն (եթէ միայն ունինք) այդ բանը չի կարող անել: Հիանալի էին «Հօր խօսակցութիւնները իւր զաւակների հետ ազգային կրօնի եւ եկեղեցու վրայ» վերնագրի տակ լոյս տեսնող յօդուածները, որ պարբերաբար լոյս էին տեսնում համարեա իւրաքանչիւր տետրակի բ. բաժնում:

«Սիրելի՛ զաւակներ—հօր բերանով խօսում է հայր Բաստամեան—անցած անգամ ես ձեզ խօստացայ պատմել մեր սուրբ Գրքի գոր Լուսաւորչի պատմութիւնը: Այնպիսի մեծ բարերարութիւններ արած է մեր ազգին եւ եկեղեցուն, որ ամենայն հայ մարդ պտրտաւոր է Հայր Գրքի պէս լաւ իմանալ նորա պատմութիւնը... 2.)

Իրաւ որ այսպիսի խօսքերը մի ողջամիտ հայ հագեւորականի գրչի արդիւնք են:

«Ռպրոցը» աշխատակիցներ համարեա թէ չունէր. ինքը հայր խմբագիրն էր գրում յօդուածներ եւ թարգմանում օտար

լրագիրներից՝ ինչպէս ռուսաց „Семя и Школа“, „Дѣтское Чтеніе“, „Народная Школа“ եւ այլ ամսագրներից. „Manuel Jene-gal“ եւրոպական հանդիսից եւ այլն:

Մի քանի անձնաւորութեանց ստորագրութիւնները երբեմն երբեմն երեւում էին «Ռպրոցի» յօդուածների տակ՝ օր. Ա. վ. Սեդրակեան, Ն. Կարապետեան, Պ. Հայկազունի, Կ. Թեմուրազեանց եւ այլք:

«Ռպրոց» թէեւ հրատարակուելու էր 1874 թուականի յունուարի սկզբից, բայց «ինչ ինչ հանգամանքները եւ նոր տպարանի հաստատելը» յետաձգեցին մինչեւ ապրիլ ամիսը:

Առաջին երեք տետրակները կանոնաւորապէս լոյս տեսան իւրաքանչիւր ամսի վերջին: Յետոյ № 4—5 տետրակները միասին լոյս տեսաւ մի հատորում: № 6,— 7—8 տետրակները դարձեալ միասին: Իսկ 9—10, եւ 11—12 նոյնպէս երկ-երկուս միասին: 1857 թուականի յունիս ամսին լրացաւ «Ռպրոցի» առաջին տարին սկսուեց յուլիսից եւ տեւեց մինչեւ 1876 թուականի յուլիս ամիսը:

Ձանազան անյաջողութիւններ արդէն շրջապատել էին «Ռպրոցին»: Մի կողմից բաժանորդներն էին սկսել պակասել ըստ մեր սովորութեան, միւս կողմից խմբագրի՝ վանքում գտնուած անհաշտ թշնամի պաշտօնակիցները համ ու հոտ չէին տալիս դժբախտ վարդապետին եւ կոյր նախանձից դժբախտ, շատ անգամ «Ռպրոցի» տպարանից տառերի արկղիկներից փախցնում էին բոլոր «ա»երը կամ «ե»երը, որպէս զի այլ եւս գրաշարը չը կարողանայ մի նախադասութիւն անգամ շարել եւ «Ռպրոցի» հրատարակութիւնը դադարուի: Այսպիսի տմարդի վարմունքները որ միանգամայն աններելի եւ անպատուաբեր են, վշտացրին ու զայրացրին հանգուցեալ հայր Բաստամեանին: Առաւել յուսահատական էր այն դէպքը որ այդպէս անողները իւր «ընկեր» կոչուող անձնաւորութիւններն էին:

«Իպրոցը» դադարուեց 'ի մեծ ցաւ Հայ մանկավարժական գործունէութեան. Հ. Բաստամեան էլ շատ չանցած վիճակներէ 'ի մեծ ցաւ Հայ գրագէտ Հասարակութեան:

ԺԱՆՊԱՐԻՊՈՒՄՆԵՐ.

- 1.) «Իպրոց» եւ մեր աղբիւրները—
 - ա. «... Այս վերջին տասը տարուայ մէջ... լոյս տեսան Հետագայ հանդէսները... էջմիածնում Հ. Վահան վ. Բաստամեանի ձեռքով «Իպրոց» մանկավարժական ամսագիրը...»
 - «Արձագանք» 1882. № 22. Ա. Ե. Բ. «... Մենք սպասում ենք որ «Իպրոցի» խմբագիր հայրը՝ Մոսկուայի Համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի կանդիդատը—վերադառնալով Փարիզից, ուր ուսումնասիրում է այժմ կանոնիկական իրաւունք, գայ եւ պատմէ մեզ, թէ ինչ էր իւր մասնագիտական մանկավարժական ամսագիրը. ինչ նշանակութիւն ունէր եւ ինչպիսի յօդուածներ էր տալիս...»
 - «Հայոց Մամուլը Ռուստ.» էջ 123.
 - գ. «Իպրոց մանկավարժական ամսագիր. խմբագիր Հրատարակիչ՝ Վահան վարդապետ Բաստամեանց 'ի միաբանից սրբոյ էջմիածնի... Վաղարշապատ, ի Վանս ս. Գայիանեանց 1875»
 - «Մատեն. հայկական» Զարբ. էջ 161.
 - դ. «... Հանգուցեալ Վահան վ. Բաստամեանի հրատարակած օգտուէտ յօդուածներով «Իպրոց» ամսագիրը դադարեց բաժանորդ չունենալու պատճառաւ...»
 - «Մանկավարժանոց» 1884 № 1 էջ 4.
 - ե. «... ոչ ոք խելք ունեցող մարդերից եւ մեք ամենեւին կարող չեմք ուրանալ հայր Վահան Բաստամեանցի գովանի աշխատասիրութենը նոր հայկական դրուութեան մէջ. ուր գլխաւորաբար նուիրած է մանկավարժութեան կարեւոր գործին.»
 - «Հանդ. գր. եւ պտմ.» գ. Աէջ 242 Ս. Նազ.
 - զ. «Իպրոց 1875, Ռուս. Վ. վրդ. Փստմ. (»)»
 - «Դաս. հայ-աղգ. պատմ.» Բ. էջ 338.
 - է. «Իպրոց» լոյս տեսաւ Գայիանիէ վանքում. «... Նպատակն էր մանկավարժական այլ եւ այլ յօդուածներով ծանօթացնել ժո-

ղովըղին այդ գիտութեան հետ... Նոյն խկ նա (Բաստ.) առանձին տպարան հիմնեց, յետոյ ծախելով միաբանութեանը, մի առժամանակ գնում է արտասահման. «... Հայոց արդի մատեն.» (ձեռագիր) 2.) Տես «Իպրոց» 1874 № 3. մասն Բ. էջ 85.

109.

ՆՈՐ ԴԱՐ 1.)

ՕՐԱԳԻՐ Կ. ՊՈԼՍՈՑ

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1874-1879
Հրատարակուում էր
Խմբագիր Օգոստին Խոճասարեան:
Լեզուն, ոճը } «... Մեր ազգային ժողովն՝ որուն պատիւն ունիմ փոքրիկ Ուղղագրութ. մէկ անդամն ըլլալու, ...»



Ժմեան «Նոր-Դար» լրագրից գատ, որ հրատարակուում է Տրփխիսում պ. Սպանդարեանի խմբագրութեամբ, 70-ական թուականներին Կոստանդնուպոլսում էլ «Նոր Դար» անունով մի լրագիր գոյութիւն ունէր ուղղութեամբ բաւականին նման այժմեան «Նոր-Դար»ին,—որ հրատարակում էր «Օրագրի» խմբագիր պ. Օգոստին Խոճասարեանի խմբագրութեամբ: Մեր բազմաթիւ աղբիւրներից եւ ոչ մինը չէ լիջել «Նոր Դարի» անունը որ առնուազն հրատարակուել է վեց-եօթ տարի: Ինչպէս յայտնի է մեր աղբիւրները երբեմնապէս լիջել են այնպիսի թերթեր, որոնք մէկ կամ մի քանի Համար են լոյս տեսել: Զրկարողանալով մի

Համար ձեռք բերել Կ. Պոլսի «Նոր Դար»-ից մեզ անյայտ է մնում թէ Հաստատակա- երը է սկսել իւր Հրատարակութիւնը: Որով- Հետեւ խմբագիրը թերթի վերայ Համարը նշանակում էր «Օրագրի» Համարների շա- րունակութեամբ: Միայն մեզ յայտնի է որ 1874 թուականին Պոլսում Հրատարակող «Նոր Դարը», 1878 թուականին դեռ եւս գոյութիւն ունէր եւ այդ տարուայ վերջե- րին տիրող կառավարութեան Հրամանով դադարման ենթարկուեց: Մեր կարծիքով «Նոր Դարը» եղած պիտի լինի օրաթերթ: «Նոր Դար»-ից յօդուածներ էին արտատպում մեր «Մշակ» եւ «Արարատ» լրագիրները:

Թ Ա Տ Ր Ո Ն Ի Կ Ն Ե Ր .

- 1.) Կ. Պոլսի «Նոր Դարը» մեր աղբիւրները—
 ա. «Ի պատրիարքարանի Հայոց Կ. Պոլս» վերնագրով մի յօդուած էր արտատպել «Նոր Դարից» էջմիածնի «Արարատ» օրից յետոյ գրում է՝ «յետ այսօրիկ ՆՈՐ ԴԱՐԸ կ'յաւելու հետեւեալ իրաւացի գի- տողութիւնը . . .»
 «Նոր Դար» Օրագիր. Թ. 1947. (1874).
 «Արարատ» 1874 թ. էջ 39.
- բ. «Թիւրքիայի Հայերի տանջանքները» վեր- նագրով մի յօդուած է արտատպել «Մշա- կը» Կ. Պոլսի «Նոր Դար»-ից եւ իւր մի առաջնորդողում «էլ չըկայ Հայոց սահ- մանադրութիւն» վերնագրով հետեւեալն է ասում . . . Կ. Պոլսի մէջ Հրատա- րակող Հայոց «Նոր Դար» լրագրի գեկտ. 19-ի Համարի մէջ կարդում ենք հետեւ- եալ անյարգ եւ ստրկական գրութիւնը . . .»
 «Մշակ» 1877. № 13 էջ 1.

110.

Թ Ա Տ Ր Ո Ն ^{1.)}

Ա Մ Մ Ա Պ Ի Ր

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1874-1877

Հրատարակուած էր ամսի սկզբներին. Խմբագիր՝ Յակովբ Պարոնեան.



այարդի գրականութեան մէջ յայտնի Հոսոս- Հանդուցեալ Յա- կովբ Պարոնեան իւր «Փող Առաւօտեան» Հանգիսի դադարե- լուց չը վհատուած, Կ. Պոլսում նոր աշ- խոյժով 1874 թուականի ապրիլ ամսից փոր- ձեց մի ուրիշ զաւեշտական Հանգիսի Հրա- տարակութեան «Թատրոն» վերնագրով: Ինչ- պէս խմբագրի նախկին պարբերական Հրա- տարակութիւնները, այնպէս էլ «Թատրոնը» շատ երկարատեւ չեղաւ: Երեք տարի մի- այն Հրատարակուելով, 1877 թ. յունիսի վերջին հանգաւ:

Թ Ա Տ Ր Ո Ն Ի Կ Ն Ե Ր .

- 1.) «Թատրոն» զաւեշտական Հանդէսը եւ մեր աղբիւրները—
 ա. «. . . Պոլսում «Թատրոն» զաւեշտական- թերթը Յ. Պարոնեանի խմբագրութեամբ»
 «Արձագանք» 1882. № 22 Ա. Եր.
- բ. «. . . Թատրոն 1874 Պոլսի Յ. Պարոնեան»
 «Իսս. Հայ-ագգ. պատմ.» բ. էջ 339.
- գ. «. . . Պարոնեանի գրուածքները ցրուած են զանազան Հրատարակութիւնների մէջ. Թատրոնի, Խիկարի օրի (օրոնց) խմբ- րագիրն ինքն էր . . .»
 «Նոր-Դար» 1891 № 106. էջ 3.



111.



ԼՐԱՊԻՐ ԱՄԵՆՈՐԵԱՅ 2.)

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ԲՆԱՍԻՐԱԿԱՆ 3.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1875-1886
Հրատարակողու մ էր՝ ամեն օր բացի
կիրակի եւ տօն օրերից: 4.)

Հրատարակող՝ Հմայեակ եպ. Գիմաքսեան.
Տնօրէն-Խմբ.՝ Բիւզանդ Պողոսեան 5.)
Տպագրութիւն Սամուէլ Ղ. Պարտիզ-
պանեան եւ Ընկեր.

Գիրքը (թերթ) միածալ 4 էջ... 6.)
Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
Բաժանորդագրինը՝ տարեկան, նախ
2 1/2 մէճիտ.

Լեզուն, ոճը } ... Հանդիսի խմբագրու-
թիւնն իւր ջերմագին շնոր-
Ուղղագրութ. } հակառակին յայտնել... 6.

Ծրագիրը՝
ԿՐՕՆԱԿԱՆ—Աստուածաբանական եւ այլ
կրօնական յօդաւածներ, քարոզներ, ճա-
ռեր, աղօթքներ, մաղթանքներ, քննու-
թիւն կրօնական խնդիրների... .

ԱՋԳԱՅԻՆ—Ազգային ժամանակից խնդիր-
ների վերաբերեալ զանազան յօդուած-
ներ, տեղական լուրեր, ոտանաւորներ,
թղթակցութիւններ, տեղեկութիւններ
գաւառներից, պատրիարքարանից պաշ-

տօնական տեղեկութիւններ:
ԲՆԱՍԻՐԱԿԱՆ—Վիպասանական, կենսա-
գրական, ճանապարհորդական, յօդուած-
ներ, մատենախօսութիւն, հնախօսու-
թիւն... .

Բովանդակութիւն 1876, մայիս 8. թիւ Ժէ.
Ծանուցմունք խմբագրական, ա. բ. գ.
դ. ե. ՚ի նպաստ Հայաստանեայց տպա-
րանի.

Կրօնական -- Գոյութիւն Աստուծոյ
(Փիղիքական ապացոյցք) շարուն. եւ
վերջ.—Թարգ. ի գաղ. Յարութիւն
Գ. Գոյումճեան:

Բարոյական—Առաժանի (Թարգ. ի
Պարսկականէ)—Ա. Նիկող. Թոթվայեան:
Առողջապահական — Առողջաբա-
նութենէն նշխարներ, ը.—Թաթուլ.

Ազգային—Աղէտք հայութեան, ա. բ.
գ. դ.—Մ. Սմբ. Գաբրիէլեան:
—Գերապ. Տ. Սուքիաս նորաստակ ե-
պիսկ. Պարզեանց:

—Յովհաննէս վարդապետ.

—՚ի Կալկաթայէ.

—Արարատ.

—Դպրոցական հանդէս.

—Սիօն.

—Հայր Տ. Գարեգին քահ. Գ. Սարեան.

—Առաջարկ ՚ի մասին ազգային Սահմա-
նադրութեան տարեդարձի.— Կարապետ
Մ. Նիզամեան:

—Միսինարաց ոգին.

—Նամակ մի՝ Նիկոպոլէն.

—Նազարէթ Նուրիխանեան.

—Իւլէմաններու պատգամաւորութիւնը.

—Ազգ. Հայկակ. Համազգ. Գործ. Ընկեր.
Գէորգ ձիւճեան:

—Նամակ Խմբագրութեան.

Օրագրութիւն ազգային լրոց.

Մայիսի 2 կիր.

—Գարուչեշմիի եկեղեցւոյ տօնախմբու-
թեան առթիւ բարձր. Մկրտիչ ս. արք-
եպիսկոպոս Խրիմեանի պատարագը եւ
քարոզը.

Մայիսի 3. բշ.

- Ամբաստան վարդապետի ս. Երուսաղէմից Կ. Պոլիս ժամանելը:
- Տիմէթէոս ծ. վ. Սափրիչեան.
- Ս. Պատրիարքի պալատ գնալը.
- Հանրաժանօթ Զիլինկիրեանի հիւանդանոց ղրկուելը.
- Վանօրէից խորհրդի ժողովը.
- Կրօնական ժողովը 'ի Ղալաթիա.

Մայիսի 4. գշ.

- Տնտեսական եւ ելմտից խառն խորհուրդը.
- Մի մասնաժողովի գումարումը.

Մայիսի 5. գշ.

- Դատաստանական խորհրդի գումարումը.

Մայիսի 6. եշ.

- Գեր. Մատթ. ծ. վ. Իզմիրլեան.
- Լուրեր Զմիւռնիայից.

Մայիսի 7. ուր.

- Ազգային երեսփոխանական ժողովը.



ստանդնուպոլսում 70-ական թուականների սկիզբներում մի շարք նորեղուկ լրագրիւրների եւ հանդէսների մէջ, եթէ կայ մէկը որ իսկապէս արժանի է ուշադրութեան, այդ 1875-ի սկիզբից գերապատիւ Հմայեակ եպիսկոպոս Գիմաքսեանի (դեռ ծ. վ.) ձեռքով հրատարակուող «Լոյս» շաբաթաթերթն էր, որ «կրօնական, ազգային, բարոյական, ուսումնական, ընտանեկան» ծրագրով էր հրատարակուում:

«Լոյսի» պէս մի կրօնական—բարոյա-

կան հանդիսի պակասութիւնը այժմ էլ զգացուում է: Սա նշանաւոր էր իւր հարուստ ու ընտիր նիւթերով. կատարեալ յարգ ու պատիւ էր վայելում իւր դիրքով, իւր ազդեցութեամբ ու իւր գեղեցկութեամբ: «Լոյսի» հայր խմբագիրն ու աշխատակիցները, տալիս էին հայ ընթերցողներին ընթերցանութեան յարմարաւոր նիւթեր առողջ գաղափարով գրուած: «Լոյսն» էր անդադար կուռուող տեղական անամօթ բողոքական քարոզիչների հետ. «Աւետաբերի» ամենաոխերիմ թշնամին էր հայր Գիմաքսեան իւր «Լոյսով»: «Լոյսը» ճիշտ որ լոյս էր տարածում հայ ժողովրդի մէջ: Լոյս Աստուածպաշտութեան, լոյս ազգասիրական, լոյս բարոյականութեան, լոյս ուսումնական, լոյս ընտանեկան եւ այլն:

«Լոյս» շաբաթաթերթի առաջին երեսում 7.) տպագրուում էր մի գեղեցիկ նրկար որը ներկայացնում էր՝ մէջ տեղից կիսով չափ երեւում է արեւը, որի սփռուած ճառագայթների մէջ կարգացուում է «Լոյս»: Աջ կողմում մի լլրակի վերայ հաւաքուած են մարդիկ, որոնց դիմաց լճի ափին ծառերի տակ կանգնած քարոզում է աշխարհիս Փրկիչը: Լճի միջից մի մակույք է շտապում դէպի հաւաքուած ժողովուրդը, որի մէջ նստած են երեք հոգի: Պատկերի ձախ կողմից երեւում է Արարատ լեռուը, քիչ առաջ մի եկեղեցի (որ երեւի ուղեցել են ս. Էջմիածինը նկարել): Աւելի առաջ երեւում է մի գիւղ կամ քաղաք, եւ գետի ափին հաուաքուած ժողովուրդ, էշերով, եզներով, երեւի ուզում են լճի միւս կողմն անցնել ս. Փրկչի քարոզը լսելու: Մի քանի զգեստաւորուած հոգեւորականներ խաչ ու խաչուառով ընդ առաջ են գնում Յիսուսին: Այս փոքր, բայց խորհրդաւոր պատկերի տակ մի առանձին ժապաւէնի վերայ գրուած է «Ես լոյս յաշխարհ եկի»՝ փորագրող Մանուկեան: «Լոյս» շաբաթաթերթը կարճ ժամանակ իւր հրատարակութիւնն ընդհատեց հայր խմբագրի անձնական հանգա-

մանքների պատճառով: 80-ական թուականներին 8) «Լոյսի» խմբագիր-տնօրէն կարգուեց Մինաս Գափամաճեան, եւ կարճ ժամանակից Բիւզանդ Պողաճեան: Սըրբազ. Իիմաքսեան ժամանակ չունենալու պատճառով «Լոյսի» արտօնատէր-հրատարակչի դերն էր միայն կատարում: «Լոյս» իւր այս փոփոխութեան հետ դարձաւ ամենօրեայ թերթ: Այսպէս հրատարակուեց «Լոյս» մինչեւ 1885 թուականի վերջերին: 1886-ին այլեւս չէր հրատարակուում սրբ. Իիմաքսեանի թերթը ինչ ինչ պատճառներով:

ԻՆՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Լոյս»—
ա. «Վերջապէս Լոյս յետ այսորիկ զուտ ազգային թերթ մը պիտի լինի եւ առանց քաղաքականութեան հետ գործ ունենալու. զանց չպիտի առնէ նաեւ երբեմնակի պատմական ծանօթութիւններ սալ ներուպիոյ ընդհանուր աշխարհավարութեան վրայ, որ կ'իշխէ ընդհանուր ազգաց ճակատագրոյն . . .»
„Լոյս“ 1885. Թիւ (Ն.-Դ.)
բ. „Լոյս 1872 (°) — 73 (°) Պոլիս Հ. վ. Դիմ.“
„Դաս. հայ-ազգ. պատմ.“ հ. էջ 339.
գ. „ . . . „Լոյս“ կիսակրօնական (°) կիսուրանասիրական (°) թերթ հ. Հմայեակ վ. Իիմաքսեանի ձեռքով . . .»
„Արձագանք“ 1882. № 22 Ա. Նր.
դ. „ . . . Իսկ „Լոյս“ իւր տարեկան առաջնորդող կնքելու պահուն իւր յանկարծակի կենազրու լինելը զգալով միայն կարծես հարկ համարած է իւր յողումին վերջը մի քանի սող յաւելու հայ լրագրութեան մասին, այն էլ իւր ցաւալի մահը ծանուցանելու նպատակաւ . . .»
„Նոր-Իար“ 1886. № 3. էջ 3.
- 2.) Նախ շարաթաթերթ.
- 3.) Նախ՝ „կրօնական, ազգային, բարոյական, ուսումնական, ընտանեկան եւ այլն“
- 4.) Նախ՝ ամեն շարաթ օրերը.
- 5.) Նախ՝ „Տէր-խմբագիր՝ Հմայեակ. ծ. վ. Դիմաքսեան“
- 6.) Նախ՝ (տետր) 1/2 թերթ. տպագր. 16 էջ

- երկ-սիւնեան 22x30 հ.-մետր:
- 7.) Շապիի վերայ տպագրուում էր այլ տեսակ.
- 8.) Եթէ չենք սխալուում 1885 թ. սկզբին.

112.

ՆՈՐԱԳԻՐ^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճկ.) 1875-1875
Խմբագիր Օգսէն Խոճասարեան.

Կոստանդնուպոլիսում «Օրագրից» յետոյ «Նոր Դարի» խմբագիր պ. Օգսէն Խոճասարեան կարճ ժամանակ դադար տալով իւր գործերին, 1875-ին սկսեց «Նորագիր» թերթի հրատարակութիւնը, որի վերայ դարձեալ շարունակուում էր դնել իւր հին լրագիրների համարները:

ԻՆՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ—
ա. „Նորագիր“ այժմ դադարուած թերթ“
„Արձագանք“ 1882. № 22. Ա. Ն.
Այսպէս միայն անունն է յիշել հայր Զարանալեան իւր „Դարութեան“ մէջ, որից եւ վերջրել է պ. Տէր-Մովսիսեան:

113.

ԼՐԱԳԻՐ^{1.)}

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1876-1879.
Հրատարակուում էր
Խմբագիր՝ Ն. Թիւլպէնտեան.
Տպարան՝
Լեզուէն ոճը { „ . . . Նորին սրբազնութիւնը
Ուղղագրութ. } Լօնդրայի մէջ Աւստրիոյ դեսպան Պայսըթ կոմսէն . . .»




կսուեց 1876 թուականին Պ. Նիկողայոս Թիւլպէնտեանի «Լըրագիրը», որ մի ըզգալի ծառայութիւն չարաւ Կ. Պոլսի ընթերցող Հասարակութեան: Կարող էր

առաջ գնալ «Լըրագիրը» դորան ապացոյց որ դարձաւ ամենօրեայ թերթ, բայց իւր անտակտ յօդուածներով ու ձանձրալի ոճով տիրող Կառավարութեան դէմ մի քանի Հակառակ գրութիւնների պատճառով, 1879 թ. լունուարին դադարման դատապարտուեցաւ:

Ժ Ա Ն Յ Ո Ւ Թ Ի Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Լըրագիր» լրագիրը եւ աղբիւրներս—
 - ա. «Թիւրք կառավարութիւնը . . . մի քանի օր առաջ դադարեցուց լրագիր թերթն . . .» «Մշակ» 1879 № 17. էջ 3.
 - բ. «Լրագիր 1875 (՝) Պոլսի Ն. Թիւլպէնդ.» «Դաս. Հայ. ազգ. պատմ.» բ. էջ 339.
 - գ. «Պոլսում «Լըրագիր» այժմ դադարուած թերթ» «Արձագանք» 1882. № 22. Ա. եր.

114.



ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՄԻԱՄՈՒԿԱԾ ՀԱՆԳԻՄ

Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1876-1881

Հրատարակուում էր ամսի վերջերին. Խմբագիր-Հրատարակիչ՝ Աբգար Յովհաննիսեան.

Տպարան Հ. Էնֆիաճեան եւ Ընկ. 2.)

Դիրքը (գիրք) 12—18 տպ. թերթ. 150-200 էջ 18X27 հմետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր, գեղեցիկ. Բաժանորդագրինը՝ տարեկան տասը ռուբլի.

Լեզուներն ոճը } « . . . Հայերը խիստ են իւրեանց բարբի մէջ. ճշտու-Ուղղագրութ. } Յիսմբ պահպանում են . . . » Ծրագիրը՝

«ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—Ինքնուրոյն թէ թարգմանած բանասիրական աշխատութիւններ, կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ոսմաններ, դրամատիկական գրուածներ, թէ արձակ եւ թէ ոտանաւոր: ՊԱՏՄԱԿԱՆ—Յօդուածներ Հայոց, եւ ընդհանուր պատմութիւնից: Այս բաժնում կը տեղաւորի եւ ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—Դիւրըմբռնելի ոճով գրուած զանազան յօդուածներ գիտութեանց այլ եւ այլ ճիւղերից առնուած:

ՄԱՆԿԱՎԱԿԱՆ — Մանկավարժական Հարցերի վերաբերմամբ ընդհանուր յօդուածներ, դպրոցական գործի այժմեան դրութիւնը թէ Հայոց մէջ եւ թէ արտասահման:

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ մատենախօսութիւն Հայոց եւ օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Յօդուածներ եկեղեցույ, ուսումնարանաց, ուսուցչաց, ազգային տնտեսութեան եւ Հասարակական կեանքի: Թղթակցութիւններ ամեն Հայաբնակ տեղերից, կարգադրութիւնք, Տէրութեան եւ Հոգեւոր Վարչութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Տեսութիւն ներքին գործոց ընդհանրապէս, եւ Անդր-Կովկասի առանձնապէս: Թղթակցութիւնք եւ զանազան Հաղորդութիւնք Կովկասի կեանքի մասին:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ — Ամենայն տեսակ լուրեր: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Յովանդակութիւն՝ 1880. թիւ գ. (մարտ.)

— Ֆիէսկո ողբերգութիւն Շիլլերի. թարգ. Գէորգ Բարխուդարեանի (շարուն.)

— Աշխարհագրութեան ուսումը սկզբնական ուսումնարանում. դասախօսութիւն Է. Լվասէօրի՝ Փարիզի աշխարհահանդէսի ժամանակ:

— Յառաջ (նմանութիւն.) յԲանաստ.

— Դիւցազնի մահը (Բայրըն.) Պ. Խալաթ.

— Թէ Բնչ տեղ է բռնում հայերէն լեզուն Հնդկա-եւրոպական լեզուների շրջանում—պրօֆ. Ք. Պատկանեան:

— Ամուսնութեան վիճակագրութիւն— Revue Scientifique.

— Իմ ճանապարհորդութեան յիշատակները— Գ. Խատիսեան:

— Մեծ. (բանաստեղծութիւն) Գամառ-Քաթիպա.

— Թիֆլիսի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան մասին.

Յաւելուած.

— Փերիզադէի երգը. գործ Ալբեր Այնոյի թարգ. Յ. Լալայեանի.

— Մի նկատողութիւն— Վ. վ. Բաստամեանց.

— Նամակ Ա. վ. Ռուբինեանց.

— Յայտարարութիւններ.



արոն Աբգար Յովհաննիսեան 1876 թրուականի յուլիսից սկսեց Տփիսում հրատարակել «Փորձ» եռամսեայ հանդէսը: Կովկասում նորածին «Փորձը» իւր ասպա-

րիզում տեսաւ երկու հայ ամսական հրատարակութիւններ՝ Էջմիածնի «Արարատ» կրօնական, եւ «Դպրոց» մանկավարժական հանդէսները. բայց այլ էր «Փորձի» ծրագիրը այլ էր «Փորձի» շրջանը: «Կռունկի» դարելուց յետոյ Տփիսում զգացուում էր մի լուրջ հանդիսի կարեւորութիւն, եւ այդ պակասը լրացրեց պ. Յովհաննիսեանի եռամսեան:

«Փորձի» մէջ հայ ընթերցողները կը գտնէին առատ նիւթեր կարգալու համար. «եռամսեայ» ժամանակ պ. Յովհաննիսեանի հանդէսը աւելի նման էր մի բազմավէպ ժողովածուի, քան պարբերական հրատարակութեան: «Փորձի» մէջ տպագրուում էին այնպիսի յօդուածներ որոնք հննալ չը գիտեն. որոնք այսօր էլ կարելի է յափշտակութեամբ կարչալ: Շիլլերի դրամատիկական գրուածները, զանազան ճանապարհորդական նկարագրութիւններ լի էին «Փորձի» էջերում: «Գրիչ» ստորագրութեամբ մատենախօսական յօդուածները որը պատկանում էին հանգուցեալ ուսուցչապետ Ստեփաննոս Պալասանեանին, ազահութեամբ կարգացուում էին: Ո՞վ ծանօթ չէ «Փորձի» գրքերի մէջ տպագրուող պ. Գէորգ Չմշկեանի «Թատրոնական յիշողութիւնների» հետ: Իսկ Պրուօշեանի գեղեցիկ վէպերի հետ արդէն ծանօթ է մեր հասարակութիւնը:

Ինչ որ է «Revue des deux Mondes» ն ֆրանսիացիների եւ «Вѣстникъ Европы» ն ռուսների համար, այն էր «Փորձը» հայերի համար: (3.)

Ինչպէս յիշեցինք «Փորձը» նախ հրատարակուում էր երեք ամիսը մի անգամ որպէս «եռամսեայ» հրատարակութիւն: Նիւթերի առատութիւնը, հասարակութեան խնդիրը, գրականութեան պահանջը ստիպեցին պ. խմբագրին եռամսեայ «Փորձը» ամսօրեայ դարձնելու: Ծրագիրը, դիրքը, պահելով միեւնոյնը, 1879 թուականի սկզբից «Փորձը» հրատարակուում էր ամիսը մի անգամ որպէս ամսօրեայ հանդէս:




կուեց 1876 թուականին Պ. Նիկողայոս Թիւլպէնտեանի «Լըրագիրը», որ մի ըզգալի ծառայութիւն չարաւ Կ. Պոլսի ընթերցող Հասարակութեան: Կարող էր առաջ գնալ «Լըրագիրը» դորան ապացոյց որ գարձաւ ամենօրեայ թերթ, բայց իւր անտակտ յօդուածներով ու ձանձրալի ոճով տիրող Կառավարութեան դէմ մի քանի Հակառակ գրութիւնների պատճառով, 1879 թ. յունուարին դադարման դատապարտուեցաւ:

ԹՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Լըրագիր» լրագիրը եւ աղբիւրներս—
 ա. «Թիւրք կառավարութիւնը . . . մի քանի օր առաջ դադարեցուց լրագիր թերթն...»
 «Մշակ» 1879 № 17. էջ 3.
 բ. «Լըրագիր 1875 (՝) Պոլսի Ն. Թիւլպէնզ.»
 «Իաս. Հայ. ազգ. պատմ.» բ. էջ 339.
 գ. «Պոլսում «Լըրագիր» այժմ դադարուած թերթ
 «Արձագանք» 1882. № 22. Ա. Եր.

114.



ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԳԵՍ

Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1876-1881

Հրատարակուած էր ամսի վերջերին. Խմբագիր-Հրատարակիչ՝ Աբգար Յովհաննիսեան.

Տպարան Հ. Էնֆիաճեան եւ Ընկ. 2.)
 Գիրքը (գիրք) 12—18 տպ. թերթ. 150-200 էջ 18X27 Հ-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր, գեղեցիկ. Բաժանորդագիրնը՝ տարեկան տասը ռուբլի.

Լեզուէն ոճը { «... Հայերը խիստ են իւրեանց բարբի մէջ. ճշտու-Ուղղագրութ. { թիւով պահպանում են...»
 Ծրագիրը՝

«ԳՐԱԿԱՆԱԿԱՆ»—Ինքնուրոյն թէ թարգմանած բանասիրական աշխատութիւններ, կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ոսմաններ, դրամատիկական գրուածներ, թէ արձակ եւ թէ ոտանաւոր: ՊԱՏՄԱԿԱՆ—Յօդուածներ Հայոց, եւ ընդհանուր պատմութիւնից: Այս բաժնում կը տեղաւորի եւ ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ—Գիւրըմբռնելի ոճով գրուած զանազան յօդուածներ գիտութեանց այլ եւ այլ ճիւղերից առնուած:

ՄԱՆԿԱՎԱԿԱՆ—Մանկավարժական Հարցերի վերաբերմամբ ընդհանուր յօդուածներ, դպրոցական դործի այժմեան գրութիւնը թէ Հայոց մէջ եւ թէ արտասահման:

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ մատենախօսութիւն Հայոց եւ օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Յօդուածներ եկեղեցույ, ուսումնարանաց, ուսուցչաց, ազգային տնտեսութեան եւ Հասարակական կեանքի: Թղթակցութիւններ ամեն Հայաբնակ տեղերից, կարգադրութիւնք, Տէրութեան եւ Հոգեւոր Վարչութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Տեսութիւն ներքին գործոց ընդհանրապէս, եւ Անգր-Կովկասի առանձնապէս: Թղթակցութիւնք եւ զտնազան Հաղորդութիւնք Կովկասի կեանքի մասին:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ — Ամենայն տեսակ լուրեր: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Բովանդակութիւն՝ 1880. թիւ գ. (մարտ.)

— Փիէսկո ողբերգութիւն Շիլլերի. թարգ. Գէորգ Բարխուդարեանի (շարուն.)

— Աշխարհագրութեան ուսումը սկզբնական ուսումնարանում. դասախօսութիւն է. Լվաստօրի՝ Փարիզի աշխարհահանդէսի ժամանակ:

— Յառաջ (նմանութիւն.) յԲանաստ.

— Դիւցազնի մահը (Բայրըն.) (Գ. Խալաթ.

— Թէ քնչ տեղ է բռնում հայերէն լեզուն Հնդկա-եւրոպական լեզուների շրջանում — պրոֆ. Բ. Պատկանեան:

— Ամուսնութեան վիճակագրութիւն — Revue Scientifique.

— Իմ ճանապարհորդութեան յիշատակները — Գ. Խատիսեան:

— Մեծ. (բանաստեղծութիւն) Գամառ-Քաթիպա.

— Թիֆլիսի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան մասին.

Յաւելուած.

— Փերիզադէի երգը. գործ Ալբեր Այնոյի թարգ. Յ. Լալայեանի.

— Մի նկատողութիւն — Վ. վ. Բաստամեանց.

— Նամակ Ա. վ. Ռուբինեանց.

— Յայտարարութիւններ.

րիզում տեսաւ երկու հայ ամսական հրատարակութիւններ՝ Եջմիածնի «Արարատ» կրօնական, եւ «Գպրոց» մանկավարժական հանդէսները. բայց այլ էր «Փորձի» ծրագիրը այլ էր «Փորձի» շրջանը: «Կուռնկի» դադարելուց յետոյ Տփիսիում գգացուում էր մի լուրջ հանդիսի կարեւորութիւն, եւ այդ պակասը լրացրեց պ. Յովհաննիսեանի եռամսեան:

«Փորձի» մէջ հայ ընթերցողները կը դըռնէին առատ նիւթեր կարդալու համար. «եռամսեայ» ժամանակ պ. Յովհաննիսեանի հանդէսը աւելի նման էր մի բազմավէպ ժողովածուի, քան պարբերական հրատարակութեան: «Փորձի» մէջ տպագրուում էին այնպիսի յօդուածներ որոնք հինալ չը գիտեն. որոնք այսօր էլ կարելի է յափշտակութեամբ կարչալ: Շիլլերի դրամատիկական դրուածները, զանազան ճանապարհորդական նկարագրութիւններ լի էին «Փորձի» էջերում: «Գրիչ» ստորագրութեամբ մատենախօսական յօդուածները որը պատկանում էին հանգուցեալ ուսուցչապետ Ստեփաննոս Պալասանեանին, ազահուլթեամբ կարդացուում էին: Ո՞վ ծանօթ չէ «Փորձի» գրքերի մէջ տպագրուող պ. Գէորգ Չմշկեանի «Թատրոնական յիշողութիւնների» հետ: Իսկ Պրուօշեանի գեղեցիկ վէպերի հետ արդէն ծանօթ է մեր հասարակութիւնը:

Ինչ որ է «Revue des deux Mondes» ֆրանսիացիների եւ «Вѣстникъ Европы» ռուսների համար, այն էր «Փորձը» հայերի համար: (3.)

Ինչպէս յիշեցինք «Փորձը» նախ հրատարակուում էր երեք ամիսը մի անգամ որպէս «եռամսեայ» հրատարակութիւն: Նիւթերի առատութիւնը, հասարակութեան խնդիրը, գրականութեան պահանջը ստիպեցին պ. խմբագրին եռամսեայ «Փորձը» ամսօրեայ դարձնելու: Ծրագիրը, դիրքը, պահելով միեւնոյնը, 1879 թուականի սկզբից «Փորձը» հրատարակուում էր ամիսը մի անգամ որպէս ամսօրեայ հանդէս:



արուն Աբգար Յովհաննիսեան 1876 թրուականի յուլիսից սկսեց Տփիսիում հրատարակել «Փորձ» եռամսեայ հանդէսը: Կովկասում նորածին «Փորձը» իւր ասպա-

«Փորձ» ամսագիրը իւր «Յաւելուած»ում որը մօտաւորապէս բաղկանում էր 50—60 էջերից, տալիս էր իւր ընթերցողներին եւրոպական ընտիր գրուածներից թարգմանութիւններ:

«Փորձ»ին աշխատակցում էին ժամանակակից Հայ գրականութեան հերոսները՝ ինչպիսիք են՝ պրոֆ. Քերովբէ Պատկանեան, Ստեփաննոս Պալասանեան, Բաֆֆի, Աղէքսանդր Քիչմիշեան, Գրիգոր Խալաթեան, Սեդրակ Մանդինեան, Կարապետ Կոստանեան, Մարկոս Աղաբէկեան, Աղէքսանդր Երիցեան, Պերճ Պաօշեան, բժշկ. Աւետիք Բաբայան, Աբիսողոմ Յովհաննիսեան, Ծերենց, Գէորգ Բարխուդարեան, Քաջբերունի, Սմբատ Շահազիզեան, Վահան վ. Բաստամեան, Գամառ-Քաթիպա, Գաբրիէլ Սունդուկեանց, Գէորգ Չմշկեան, Հոսհոս, Գ. Մարիսեան, Փիլիպպոս Վարդանեան, բժ. Գուշարեանց, Յովակիմ Գեղամեանց եւ այլք:

Հրատարակութիւններ՝ արտատպած «Փորձ» Հանդիսից:

Պ. Պաօշեան — Շահէն, Հացի-խնդիր, Կուուածաղիկ:

Աբգ. Յովհաննիսեան — Հայր եւ Հայաստանը օտարների աչքում:

Շիլլեր — Օրլեանի կոյսը (թարգմ. Գ. Բարխուդարեան):

Ա. Երիցեան — Ներսէս Վ. կաթող. կենսագրութիւնը:

Ժորժ-Սան — Գարիբալդի (թարգմ.)

Գ. Սունդուկեան — Խաթաբալա, եւ այլն:

Սկսուելով 1876-ի կիսին, «Փորձը» դադարեց 1881 թուականի կիսին՝ հրատարակուելով հինգ տարի: 1882-ին «Փորձի» տեղ «Արձագանք» շաբաթաթերթն էր հրատարակուում պ. Յովհաննիսեանի խմբագրութեամբ:

ԺԱՆՕԹԱՌԻԹԻՒՆՆԵՐ.

1.) «Փորձ» Հանդիսի մասին մեր աղբիւրները՝ ա. «... Եւ կարծում եմ որ պ. Յովհաննիսեանը մինչեւ այժմ փորձում է Հայ ընթերցողներին հարկաւոր անհրաժեշտ այդ երկու բաժինները միասին յարմարցնելով, իրագործել: Ուզում եմ ասել որ «Փորձը» թէ ընթերցանութեան հաւաքածու եւ թէ հասարակական հարցերի մասին տեսութիւն անող հրատարակութիւն կամենում է լինել: Նորա լայն, մեծ պրագրամմը աշխարայ ցոյց է տալիս մեզ այդ նպատակայարմար ցանկութիւնը...»

«Հայոց մամուլը Ռուս.» Յարոյ էջ 124.

բ. «... Նորագոյն հրատարակութիւն մըն է «Փորձ» եռամսեայ հանդէսն որ խմբագրութեամբ Աբգարու Յովհաննիսեանց կը տպագրուի ի Տիփլիս 1876 տարունէ ՚ի վեր: Նիւթոց առատութեանը հետ միացնելով ազգային հին եւ նոր կեանքէ առնուած պատմական, մատենագրական տեղեկութեանց յաճախութիւն, փափաքելի կընէ անընդհատ շարունակութիւնը. եւ աւելի զգուշաւոր ընտրութեամբը ունենայ ազգին ներկայ ուսումնական վիճակին վրայ իւր արժանաւոր ազդեցութիւնը...»

«Պատմ. Հայ. դպրութ.» բ. էջ 503.

գ. «Փորձը» իւր հետը բերաւ ոչ մի գաղափար ոչ մի պրինցիպ (սկզբունք) նա չը յայտնեց մեզ իւր համոզմունքները: Նա միայն մի քանի բաներում կարծես թէ փորձեց իրաւարանական տեսակետի վրայ կանգնել եւ այն շատ թոյլ ու անշնորհ կերպով... Այն իրաւարանութիւնը որ «Փորձն» է գործ ածում. ի հարկէ կըթողական ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ եւ բախտաւորապէս ընթերցողներից շատերի համար բոլորովին աննկատելի է անցել... Հիմնական պրինցիպի եւ համոզմունքների բացակայութիւնը մեր կարծիքով գլխաւոր յատկանիշն է «Փորձի»...»

«Մշակ» 1878. № 218.

դ. «Փորձ» ազգային եւ գրականական հանդէս. խմբագիր Աբգար Յովհաննիսեանց. 1876-1881. Տիփլիս ՚ի տպար. Մարտիրոսեանի եւ ընկ. (՝)...

«Մատենագ. Հայկակ» Զարբ. էջ 691.

ե. „Փորձ“ 1875(“”) Արգար Սարգիսեան (“”)“
 „Դաս. հայ-ազգ. պատմ.“ ք. էջ 340.
 2.) „... Արգար Յովհաննէսեանցի „Փորձ“
 եռամսեայ հանդէսն 1876—...“

„Պատմ. հայ մատ.“ Եղ. վ. Դ. էջ 97.
 է.) „... Բոլոր հայ հանդէսների մէջ, որոնք
 դուրս են եկել երբ եւ իցէ, գլխաւոր տե-
 ղը բռնում է Արգար Յովհաննէսեանցի
 „Փորձ“ ամսագիրը... որ պարունակում
 էր իւր մէջ քաղաքակիրթ յօդուածներ,
 եւ իւր բովանդակութեամբ մօտենում էր
 եւրոպական հանդէսներին...“

„Հայկակ Մատենագ.“ ք. էջ 153.
 [„... Fine der bedeutendsten armenischen
 Zeitschriften, welche je erschienen, war
 die im Jahre 1876 in Tiflis von Abgar
 Joannissiany gegründete Monatsschrift
 „Porels“ (Pordz) welche die Erschei-
 nungen des gesamten Kulturlebens der Ge-
 genwart umfasste und ihrem Inhalte nach
 den europäischen Revuen nahe kam...“
 „Arm. Biblot.“ II. էջ 153.

ը „... Նորագոյն հրատարակութիւնների
 մէջ նշանաւոր տեղ է բռնում... „Փորձ“
 ամսագիրը՝ Արգ. Յովհաննէսեանի խմբա-
 գրութեամբ. (1876-81) յայտնի էր իւր ճոխ
 բովանդակութեամբ եւ եւրոպական ըն-
 տիր հեղինակութիւնների թարգմանու-
 թեամբ...“

„Պատմ. հայոց“ Ս. Պալասան. էջ 445.
 Թ. „Փորձ ընդարձակ ծրագրով, թերթի (“)
 նպատակն էր տալ մեր գրականութեան
 ընտիր դասական գործերի օրինակներ. ըստ
 որում նա թարգմանական գրուածքներ
 շատ է տուել ընդունելով իւր մէջ յայտնի
 հայ գրողների աշխատութիւնները...“
 „Հայոց արդի մատենագր.“ (ձեռագ.)

2.) Հայր Զարբանայեան իւր „Մատենագիտութ.
 մէջ գրել է „ի սպար. Մարտիրոսեան
 եւ ընկ.“ առաջինը որ Մարտիրոսեանի
 սպարանը ընկերութեան չի պատկանում.
 երկրորդ որ „Փորձ“ սկզբից մինչեւ վեր-
 ջը տպագրուում էր Հ. Էնֆիաճեանցի տը-
 պարանում:

3.) Տես՝ „Հայոց Մամուլը Ռուսաստ.“ էջ 124.



115.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ Թ Ե Ր Թ ^{1.)}

ԱՄՄԱԳԻՐ

Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1878-1880
 Հրատարակուում էր՝ ամսի վերջերին.
 Խմբագիր՝ Յակովբ Տէր-Յովհաննիսեան.
 Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի.
 Դիրքը՝ (տետր) 1-2 տպ. թերթ. 32-64
 էջ՝ 15X24 հ.-մ.

Թ ու ղ թ ը եւ տ ի պ ը՝ մ ի ջ ա կ .
 Բ ա ժ ա ն ո ղ ա գ ի ն ը՝ տ ար ե կ ա ն 6 ը ու բ .
 Լ ե գ ու ը ն ո ճ ը՝ } „... Մենք առ հասարակ
 Ու ղ ղ ա դ ը ու թ . } հակառակ ենք զանազան շը-
 ների, միանների, կովերի...“
 Ծրագրերը՝

Ա. Դպրոցական խնդրի եւ ազգային դաստիա-
 րակութեան վերաբերեալ առաջնոր-
 դող յօդուածներ. Դպրոցական գոր-
 ծի ներկայ դրութիւնը մեր մէջ: Սկզբ-
 նական ուսումնարաններ տղայոց եւ օրի-
 որդաց: Մանկավարժական բովանդակու-
 թիւն ունեցող յօդուածներ:

Բ. Ուսումնարաններին վերաբերեալ տնօ-
 րէն ու թ ի լ ն ն եր . կ առ ա վ ար ու թ ե ա ն
 եւ զանազան վարչութիւնների կողմից:

Գ. Մատենախօսութիւն եւ կրիտիկա դասա-
 կան գրեանց եւ մանկավարժական շարա-
 դրութիւնների:

Դ. Երեւելի մանկավարժների կենսագրու-
 թիւններ; եւ մանկավարժութեան պատ-
 մութեան վերաբերեալ յօդուածներ:

Ե. Այլ եւ այլք: Թղթակցութիւններ մանկա-
 վարժական ընկերութիւնների խորհուրդ-

ների եւ ժողովների օրագրութիւններ:
 2. Յայտարարութիւններ մատենագրութեան
 եւ առհասարակ ուսումնարանական գոր-
 ծին վերաբերեալ:

Բովանդակութիւն 1878. № 1.

- Առաջնորդող—Մանկավարժ. մասին.
- Մանկական ընթերցանութեան գրքեր.
- Փրէօրէլի կենսագրութիւնը— Ս. Բ.
- Մայրենի լեզուի ուսումը տարրական
 դպրոցների մէջ—Ա. Բաշաթրեանց.
- Այլ եւ այլք.
- Յայտարարութիւնք.
- Նամակագրութիւն (խմբ. կողմից)



անկավարժական
 «Դպրոց» ամսագիրը
 երկու տարի էր որ
 դադարուել էր: 1878
 թուականի յուլիս
 ամսից Տիփսիսում պ.
 Յ. Տէր-Յովհաննիսեանի

խմբագրութեամբ հրա-
 տարակուել սկսեց մի ուրիշ «Մանկավար-
 ժական Թերթ»՝ նոյնպէս ամսագիր:

Երկար չը տեւեց «Մանկավարժական
 Թերթի» հրատարակութիւնը, բայց եւ ու-
 նեցաւ իւր օգուտները: Խմբագրի նպատա-
 կըն էր՝ ընդ միութիւն տալ գրականութեան
 մէջ յայտնուած, բայց ցրուած մանկավար-
 ժական մտքերին եւ իրողութիւններին:
 Երբորդ՝ դիւրութիւն տալ հեշտ միջոցներով
 ծանօթանալ կրթեալ ազգերի մէջ ընդուն-
 ուած մանկավարժական նորութիւններին:
 Երբորդ՝ քննութեան ենթարկել դասագրքեր,
 ձեռնարկներ եւ մեր մէջ ընդունուած մե-
 թողները եւ Զորբորդ՝ միջոց տալ մեր ու-
 սուցիչներին իրանց փորձերը եւ դիտողու-

թիւնները յայտնել յօգուտ ի գիտութիւն
 ընդհանրութեան . . . »

«Մանկավարժական Թերթը» յուլիսից
 սկսելով իւր հրատարակութիւնը, հետեւեալ
 յուլիսին էլ լրացնում էր իւր տարեշրջանը:

Բացի խմբագրից ամսաթերթիս աշխա-
 տակցում էին մեր մանկավարժներից՝ Առա-
 քել Բահաթրեանց, Սեդրակ Մանդինեանց,
 Յովհաննէս Զիգիանեան, Հ. Առկասեան եւ
 այլք:

Թերթիս մէջ պարբերաբար լոյս էին տես-
 նում հանգուցեալ Բաշաթրեանցի, հետա-
 քրքրութեան արժանի եւ ուսուցիչներին
 անհրաժեշտ յօդուածներ:

«Մանկավարժական Թերթի» 1878-1879
 թ. տետրակները որ մեր ձեռքում ունինք,
 պարունակում են Բաշաթրեանի յետագայ նը-
 շանաւոր յօդուածները՝

- I. «Մայրենի լեզուի տարրական ուսումը»
- II. Քերականութիւն աշխարհիկ լեզուի(2)
- III. Մայրենի լեզուի ուսումը տարրական
 դպրոցների մէջ.
- IV. Ընթերցարանը եւ նորա նշանակու-
 թիւնը ժողովրդակ. դպրոցների մէջ.
- V. Այբբենարան.

«Մանկավարժական Թերթը» մի բանով
 շատ նման էր էջմիածնի «Արարատ»ին, որ
 ամեն մի ուսուցիչ պարտաւորական պէտք
 է ստանար: Յ.)

«Մշակ» լրագիրը շատ էր յարձակուում
 թերթիս վերայ, մանաւանդ մի անգամ երբ
 պ. Տէր-Յովհաննիսեան ռուսաց «Дѣло»
 ամսագրից մի յօդուած էր թարգմանել եւ
 յօդուածի տակ դիտմամբ թէ սխալմամբ մո-
 ռացել էր «Дѣло» ի անունը ստորագրել:

«Ես քնչ անեմ—ասում էր մանկավարժ
 խմբագիրը—որ գրաշարները շարելիս սխալ-
 ուել եւ յօդուածի տակ չեն գրել «Дѣло»
 ամսագրի անունը: 4.)

Առանց այլ աղբիւրների դիմելու կարելի
 է ասել, որ «Մանկավարժական Թերթը»
 դադարեց նիւթական ապահով դրութեան
 մէջ, մութ պատճառներով: 5.)

Ի Ը Ն Ս Թ Ի Թ Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Մանկավարժական Թերթ»-աղբիւրներ՝ ա., . . . Գարձեալ մի նոր հայոց ամսագիր պէտք է շուտով հրատարակուի «Մանկավարժական» (Թերթ) անունով, Արդեօք մանկավարժութիւնը բառով պ. Տէր-Յովհաննիսեան փոքրերի՞ թէ մեծերի դաստիարակութիւնն է հասկանում՝ «Մշակ» 1878 թ. № 25 էջ 2.
 - բ., . . . Պ. Յ. Տէր-Յովհաննիսեանի ձեռքով «Մանկավարժական Թերթ» ամսագիրը որ մէկ տարի շարունակուելով դադարեց. «Արձագանք», 1882. № 22. Ա. Եր.
 - գ., . . . պ. Յակոբ Տէր Յովհաննիսեանի հրատարակած «Մանկավարժական Թերթ» պատուական եւ օգտուէտ ամսագիրը ստիպուեցաւ դադարել . . . «Մանկավարժանոց» 1884 № 1 էջ 4.
 - դ., . . . Գոհութեամբ կը տեսնենք որ Տփլիսի մէջ ուսումնական եւ ազգասէր ազգայնոց խմբակ մը՝ այս պակասը լրացնելու ձեռնարկած են Մեծայարգոյ պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեանի խմբագրութեամբ, կը յուսանք որ այս նոր ամսատետրը Թիւրքիոյ մէջ ալ արժան եղած ընդունելութիւնը կը գտնէ . . . «Մասիս» 1879. № 2230.
 - ե. «Մանկավարժական Թերթն» ունի կոչումըն, ունի պատրաստութիւն եւ գործողներ որոնք ոչ թէ լոկ կը գրեն դաստիարակութեան վերայ, այլ ինքնին դաստիարակութեան պաշտօն վարելով, մի կողմէն կը գործեն ու կը փորձեն, եւ միւս կողմէն կը գրեն . . . «Արեւիկեան Մամուլ» 1879 թիւ .
 - զ. «Մանկավարժական գրքոյկից արդէն սլըսեց համակրութիւն գտնել հայ հասարակութեան մէջ. եւ այդ համակրանքը մինչեւ այսօր շարունակուում է աճել եւ մեծանալ, այն աստիճանի որ Տաճկաստանի հայերի մէջ Կ. Պոլսում ինքնըստինքեան բնականաբար հիմնուում է դորա գործակալութիւն ամբողջ Շ(Տ)աճկաստանի հայոց եւ նոցա դպրոցների մէջ տարածելու համար . . . «Մանկավ. Թերթ» 1878-79. տետր. 12.
- 2.) Տես նաեւ առանձին գրքով հրատարակուած.
 - 3.) Տես «Մշակ» 1878 № 157.
 - 4.) Տես «Մշակ» 1879 № 129.

5.) Ապահով կարելի է ասել՝ որովհետեւ «Մանկավարժ. Թերթն» ունէր 300 բաժանորդ որ քիչ չէ մի մասնագիտական հրատարակութեան համար. վերջին տետրակում տպագրուած հաշուից երեւում է որ Թերթի հրատարակութիւնից մի տարուայ մէջ արդիւնք եղել է 273 ըր.

116.



ՄԵԿԱՄՍԵՆԱՅ ՀԱՆԳԻՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԵՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Մ ո ս ք ու ա (Ռուսաստ.) 1879—1882.
 Հրատարակուում էր՝ յունուարին, մարտին, մայիսին, յուլիսին, սեպտեմբերին, նոյեմբերին.
 Հրատարակիչ՝ Սոփիա Մսերեանց.
 Խմբագիր-Պատասխանատու՝ Խաչատուր Խաչիկեանց.
 Տպարան՝ Ա. Ա. Գատցուկի.
 Դիրքը՝ (տետր) մեծադիր 1 թերթ տպ. 32 էջ 24 X 34 Հ.-մետր. երկսիւնեան.
 Թուղթը եւ տիպը՝ շատ մաքուր.
 Բաժանորդագիրնը՝ տարեկ. 5 ըուր.
 Լեզուն ոճը } «Արմենիոյ մէջ նախակրթական դպրոցաց թիւն օր ըստ Ուղղագրութ. օրէ կաւիրանայ և շատ»
 Ծրագիրը՝
 ՊԱՏՄԱԿԱՆ—Յօդուածներ հայոց եւ ընդհանուր պատմութիւնից:
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Կենսագրութիւններ, մատենագրութեան եւ ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ոտանաւորներ, ճանապարհորդական նկատողութիւնք. . .

ԱԶԳԱՅԻՆ—«Հայկազեան տարեգիր» թղթակցութիւններ, լուրեր, նամակներ եւ այլ յօդուածներ ազգային ժամանակակից հարցերին վերաբերեալ:

Ք ա ղ ա ք ա կ ա ն Տ ե ս ու թ ի լ ն, յօդուածներ քաղաքական դրութիւնից:

Ա յ լ եւ ա յ լ ք. Չանազան հատուկորդրուածներ, «կարգա ու կիմանաս» եւ «ճշմարիտէ» վերնագրերի տակ. Ֆելիէտօն, զաւեշտական այլ դրուածներ, գիտութիւն եւ արուեստ:

Թ ղ թ ա դ ի ը—Պատասխաններ խմբագր. Յ ա յ տ ա ը ա ը ու թ ի լ ն ն ե ը.

Բովանդակութիւն 1881 № 5.

- Եսայի արք-եպիսկոպոս Կարապետեան.
- Քանի մի խօսք Յովհաննէս Այուզզովսքու կենսագրութիւնից.
- Շիրակի մի քանի հնութիւնները (շար.)
- Սարգիս Աւետիսեան Տիգրանեանց.
- Տանկրէզ Լօրդ Բիկոնսֆիլդի վէպը Դ. Ա.
- Մատենագրութիւն.
- Հայկազեան տարեգիր.
- Գիտութիւն եւ արուեստ.
- Այլ եւ այլք.
- Չանազան գիտելիք.

Ն Կ ՈՐ Ն ԵՐ ԵՒ Պ Ա Ց Կ ԵՐ Ն ԵՐ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ.

- ա.) Եսայի պատրիարք Երուսաղէմայ.
- բ.) Սարգիս Ա. Տիգրանեանց.

ԱԶԳԱՅԻՆ ՀՆՈՒԹԻՒՆՔ.

- ա.) Ազրակու ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը.

ՏԵՍԱՐԱՆՔ ԱՇԽԱՐՀԻ.

- ա.) Բաղդատ քաղաք եւ Շէլի Օմարի գերեզմանը.
- բ.) Բայրամի տօնը Թուսուզ քաղաքում.
- գ.) Անազարբայի Հռովմէական ջրանցքների մնացորդքը.



ամբաւաբեր Ռուսիոյ²⁾
անունով պ. Զարմայր Մսերեանցի խմբագրութեամբ Մոսքուայում հրատարակուող թերթի դադարուելուց անցել էր տասն եւ հինգ

տարի որ սկսեց հրատարակուել «Փարոս Հայաստանի» պատկերազարդ հանդէսը նոյն քաղաքում, նոյն անձի խմբագրութեամբ:

Պ. խմբագիրը լաւ խնամք էր տանում հանդէսի թէ արտաքին շքեղութեան եւ թէ ներքին բովանդակութեան վերայ: «Փարոսը» պատկերազարդ կարելի է ասել բաւիս ընդարձակ նշանակութեամբ: Մօքուր եւ նոր կլիշներ «յատուկ մեր հանդիսի համար» ին փորագրուում:

«Փարոս Հայաստան»ին առաջին տարին հրատարակուեց միայն մի օրինակ: Երկրորդ (1880) տարին երկու օրինակ, որպէս կիսամեայ հրատարակութիւն: Իսկ երրորդ տարուանից սկսեց կանոնաւոր հրատարակուել երկու ամիսը մի անգամ:

«Փարոսի» ներքին արժանաւորութիւնը դեռ չը քննած, մի քանի խօսք արտաքինի մասին: Հանդիսի ճակատին դրուում էր մի պատկեր որը ներկայացնում էր Մոսքուայի մի ընդարձակ փողոց:

«Փարոսի» շապկի վերայ նշանաբան էր դրուած հետեւեալ աւածը՝

«Լաւ է անագան քան ոչ երբէք»:

Պ. Մսերեանի հանդէսը իւր շքեղ հրատարակութեամբ եւ պէս պէս նիւթերի բովանդակութեան, արժանի էր առանձին ուշադրութեամբ եւ ամեն մի գեղարուեստասիրի սեղանը կարող էր զարդարել: Բացի հանդիսի ներքին բովանդակութիւնից՝ որ

առատ էր ընթերցանութեան յարմար գեղեցիկ նիւթերով, շապկի վերայ էլ (ներքին էջեր.) տպագրուում էր բաւականին հետաքրքիր տեղեկութիւններ: Օրինակ՝ «Փարոսի» աշխատակիցների ցանկը, «Տարեցոյց Փարոսի»-որի մէջ կը մտնեն երեւելի անցքերի դիպուածքների ժամանակագրութիւն:

«Համառօտ ազգային տօնացոյց», «Աւուրք մահուան երեւելի հայկազեանց»—«Հայերէն լրագիրք եւ օրագիրք Ռուսաստանի» (իւր հրատարակուած թուականին):

«Հայաստանի Փարոսին» ինչպէս իւր գլըրուածից երեւում է «խոստացել են միշտ աշխատակցելու» (եւ .աշխատակցել են) հետեւեալ անձինք: «Պ. Զայրմայր Մ. Մսերեանց, Տ. Աստղիկ*, Ս. եւ Տ.—Մոսկուայում: Պ. Արմենակ Սիւնի*, Մոծակ*—Տիփլիսում: Պ. Կ. Յովհանջանեան եւ Զիւան(ի)* Ալէքսանդրապոլում: Պ. Տ. Փ. Պ. Տիգրան Աշոտ*, Պ. Միրզա Մսերեանց—Զմիւռնիայում:—Պ. Յ. Զաքրեան՝ Զէյթունում եւ այլք, որոնց անունները դեռ իրաւունք չունինք հրատարակելու: Ունիմք նա եւ սեփական թղթակից Լոնգոնում, Փարիզում, Կ. Պոլսում, Կարին, Վան, Իսպահան, Բագու, Երեւան եւ այլ տեղեր.»

«Փարոսի» հրատարակութեան վերջին տարում. պ. խմբագիրը իւր անձնական գործերի պատճառով որ ժամանակ չունէր, հանդէսի խմբագրութեան ղեկը յանձնեց պ. Խաչատուր Խաչիկեանին, հրատարակութեան արտօնութիւնը թողնելով տիկ. Սոֆիա Մրսերեանցին:

Ափսոս որ «Փարոսի» պէս մի շատ հար-

*) Աստղանիշ դրուածները կեղծ անուններ են: Ծանօթ. «Փարոսի» խմբ.

կաւոր հանգէս, կարող չեղաւ գոնէ մի տասնեակ տարի գոյութիւնը պահել: Երեք տարուայ ընթացքում 8-9 տետրակ հազիւ լոյս տեսաւ, 1881 թուականի վերջերին դադարուեց: Վերջին համարում յայտնելով թէ «... հանդիսիս հրատարակութիւնը նորագլխաւոր աշխատակցի հիւանդութեան պատճառով այս տետրովս դադարում է եւ աւելի հրատարակուելու չէ»:

Ժ Ա Ն Յ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Փարոս Հայաստանի» պատկերազարդ հանդէսը մեր աղբիւրների մօտ— ա., Փարոս 1879 " " Մսերեան.

„Իսա հայ-տգգ. պատմ.“ Բ. էջ 340.

Բ. . . Մոքսուայում „Փարոս“ () անունով հրատարակութիւնը որ նախ պ. Զ. Մսերեանի ձեռքով տարեկան մէկ տետրակ էր դուրս գալիս, ապա վերջին 1881 թուին տիկին Մսերեանի խմբագրութեամբ () երկու ամիսը մի անգամ պատկերազարդ էր հրատարակուում, եւ ընտանիքներում կարդալու համար անչափ յարմարութիւններ կարող էր ունենալ . . .

„Արձագանք“ 1882 № 22. Ա. Եր.

Գ. . . վրայ հասաւ Մսերայ Մագիստրոսի մահը: Որդին ժառանգ հօրը ազգասէր փութոյն եւ յարատեւող ուսումնականութեան, քանի մը տարիէն „Փարոս“ () կոչուած թերթ մը սկսաւ հրատարակել, առանց որոշեալ ժամանակի: Ինչուան հիմա շարունակելուն չենք կրնար որոշ տեղեկութիւն մը տալ . . .

„Պատմ. հայ. դպրութ.“ Բ. էջ 495.

2.) Տես՝ լրագիր թիւ 63.

Այլեւս ոչ մի աղբիւր:



ժ.
1880-1890.

(ՏԵՆՆԵՐԵԿ)

44 Լ Բ Ա Գ Ի Բ.

Հայ գրականութիւնը 80-ական թուականներէն ծաղկեց ու բարգաւաճեց: Դէպի առաջադիմութիւն, դէպի լոյս է շտապում հասարակութիւնը: Ամեն տեղ՝ որսեղ հայ տպարան կայ, սխեցին գրքեր հրատարակել: Ճշտումը մեծ է. գաւառներում էլ նորանոր գրքեր են լոյս տեսնում, թիւրքիայում այս շրջանը 60-ական թուականներէն նուազ՝ բայց Ռուսաստանում անցկացաւ Պարբերական մամուլը սխում է յառաջադիմել. պահանջը մեծ է. ուսմիկ դասակարգն անգամ «նորութիւններ» է հարցնում «գազէթ»ներէն: Այս տասնամեակում ստեղծուեցին քանի մի գովելի պարբերական հրատարակութիւններ, որոնք մինչեւ այժմ հրատարակուելով դարձել են անհրաժեշտ պահանջ: Գրականութեան մէջ էլ կիանք եւ է գալիս. շիումը մեծ է: Հասարակական ամեն մի շարժուացքը լրագրութեան նիւթ է դառնում: 60—70-ական թուականներին «Հիւսիսափայլի», «Մեղու Հայաստանի» լրագիրները օրով ստեղծուած կուսակցութիւններն այս տասնամեակում մարմնացան, որոշ գոյներ ստացան: Ազատամիտները եւ պահպանողականները վէճերով ու բանակռիւներով անգրագէտ մարդիկ անգամ հետաքրքրուում են, մասնակցում նորանց գործերին: Քաղաքա-գրականական, գիտնական, մանկավարժական, մանկական եւ այլ ծրագիրներով հրատարակուող հայ լրագիրները, յեղափոխեցին, պատրաստեցին մեր հասարակութեան կեանքըն ընդհանրապէս: Այս շրջանում գործողների մէջ նշանաւոր են՝ Բիւզանդ Քէչեան, Յովն. Փալազաշեան, Արգ. Յովհաննիսեան, Ն. Խոսրովեան, Ս. Սպանդարեան, Ա. Արասխանեան, Մ. Փորզուգալեան, Հ. Ս. Դէվրեշեան, եւ Վիէննայի միութարիանք:



117.

ԱԾԽԱՏԱՆՔ^{1.)}

ՔՆՂԵՔԸ-ԳՐԵՆԵՆԵՆՆ

(Շաբաթաթերթ.)

Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1880-1880

Հ ր ա տ ա ր ա կ ու ու մ է ր

Խ մ ք ա դ ի ր-հ ր ա տ ա ր ա կ ո ղ Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ե Ր

Մ ե լ ք ի ս ե ղ է կ ե ա ն :

Տ ա յ ա ր ա ն 2.)

Դ ի ր ք ք (թ ե ր թ) մ ի ա ծ ա լ 4 է ջ 4-ս ի լ ն ե ա ն .

Բ ա ժ ա ն ո Ր Դ ա գ ի ն ը՝ տ ա ր ե կ ա ն 5 ղ ու ք լ ի

Լ ե զ ու ն , ո ճ ը } «... Նիւթեր և անմշակ յոգ-

Ու ղ ղ ա գ ը ու թ . } ուսմանի խմբագրութիւնը ըն-

Մ ը ա գ ի ը ը՝ } դուռում է ժիմհան և յառ...»

Ա. — Գատաստանական ժամանակագրութիւն

Բ. — Տեղական կեանքի ուսումնասիրութիւն,

թէ տնտեսական թէ վիճակագրական ու

թէ գիւղատնտեսական կողմից:

Գ. — Գրականութիւն, գիտութիւնների բո-

լոր ճիւղերի վերաբերութեամբ՝ աշխատու-

թիւններ. լինին նորանք թարգմանութիւն-

ներ թէ ինքնուրոյնութիւններ. քննագա-

տութիւն ուս, հայ եւ օտարազգի գրա-

կանութիւններ:

Դ. — Քաղաքականութիւն, քաղաքական հայ-

եացք եւ յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
 Ե.—Մանր լուրեր.
 Զ.—Մասնաւոր յայտարարութիւններ:



Րիգոր Տէր-Մելքիսեդէկեան, պատշաճաւոր իշխանութիւնից 1879 թրուականին իրաւունք ստացաւ Տփլիս քաղաքում հրատարակելու կէս

հայերէն, կէս ռուսերէն, «Աշխատանք—Трудъ» շաբաթաթերթը: Ինչ ինչ պատճառներով գործը լեւտաձգուեց մինչեւ 1880 թուականի սկիզբը: Նախապէս յայտարարելով թէ «... Աչքի առաջ ունենալով ենթադրելի ահագին ծախսերը, «Աշխատանք» լրագրի խմբագրութիւնը իր լրագրի հրատարակութիւնը ինչպէս նաեւ իր բաժանորդների լրագիր ստանալու իրաւունքը լեւտաձգում է, օրէնքից նրան տուած տարեկան ժամանակամիջոցի հիման վրայ մինչեւ անորոշ ժամանակ... »:

«Աշխատանքի» անորոշ ժամանակը որոշուեց եւ 1880 թուականի սկզբից հրատարակուեց: 10—12 համար հազիւ կարողացաւ լոյս ընծայել պ. Տէր-Մելքիսեդէկեան. նոյն թուականի ապրիլ ամսին «Աշխատանք» շաբաթաթերթն արդէն դադարուած էր:

Թ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Մեր աղբիւրները՝ «Աշխատանք» թերթը:

ա. «...Աշխատանք կիսահայերէն կիսառուսերէն շաբաթաթերթը պ. (Տէր)-Մելքիսեդէկեանի խմբագրութեամբ որ 12-դ համարի վերայ դադարեց...»

«Արձագանք» 1882. № 22. Ա. Եր.

2) Հակառակ մեր ցանկութեան չը կարողացանք գոնէ մի համար ձեռք բերել «Աշխատանք» շաբաթաթերթից, որ կարողանայինք տպարանը եւ այլ մանրամասնութիւններ լիջել այստեղ:

118.

Մ Է Տ Է Օ Ր Ա ^{1.)}

Գ Ի Ց Ա Վ Ա Ն Ը Ջ Գ Ա Ց Ի Ն Ե Ի Գ Ի Ո Վ Ա Ն Ո Վ Ա Ն
Հ Ի Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Զ միւլու նիա (Տաճկաստան) 1880-1884
 Հրատարակուում էր անկանոն կերպով
 Հրատարակիչ՝ Գ. Մսերեան.
 Տպագրութիւն Գ. Մսերեան.
 Գիրքը (գիրք) 6—7 տպ. թերթ. 200-250 էջ 15X23 հ-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
 Բաժանորդագինը՝
 Լեզու, ոճը } «... Եւ իրօք պարբերական
 Ուղղագրութ. } հրատարակութիւնէ՛ մը լացի
 ուրիշ պայմանները, որոշ...»
 Մրագիրը՝

ԳԻՏԱԿԱՆ — Վարդապետութիւն իրական, ֆիզիքա, աշխարհային ենթագրութիւնք երկրագունտի եւ այլ տիեզերական մարմինների վերաբերմամբ:

ԱԶԳԱՅԻՆ — Քննական խնդիրներ, յօդուածներ, ազգային զանազան հարցերի վերաբերմամբ, հասարակական խնդիր, ճառեր, պատասխաններ եւ այլն:

ԳՐԱԿԱՆ — Պատմական—Վիպական եւ այլ գրական յօդուածներ, բանահիւսական... «Փունջ» — Երեւելի մարգկանց կարծիքներ, հատընտիր հաւաքածուներ, զանազան բարի վերաբերեալ»

- Բովանդակութիւն 1880. գիրք ա.
- Երկու խօսք սոյն հրատարակութեան առ-
թիւ—Հրատարակիչ Գ. Մսերեան.
 - Արեւելեան խնդիր, հայկական խըն-
դիր (շարունակ.)
 - Ամերիկացի միսիօնարք—Սիւնի.
 - Այցելութիւն 'ի կիրակնօրեայ ժողո-
վարան բողոքականաց յԻսկիւտար—Հո-
րոյ.
 - Ամերիկացի միսիօնար ձ. Վ. Վուտի
պատասխանը—ձ. Վ. Վուտին: Պ. Հո-
րոյի պատասխանը—Հորոյ:
 - Վարդապետութիւն իրականութեան
(շարունակ.)
 - Գրական ենթագրութիւնք աշխար-
հածնութեան:
 - Նոր Յունաստան:
 - Յովհաննա Բաբուլի—Թարգմ. Գ. Խո-
րասանճեան:
 - Փունջ կամ սէր կեանք եւ ամուս-
նութիւն.—Թարգմ. Օրպել.
 - Մեղրի հիւթը, (ոտանաւոր) Օրպել.
 - Սեւ եւ կապոյտ աչքերը (ոտան.)
նոյն.
 - Հին գինի (ոտանաւոր):



սերեան Գրիգոր,
Թիւրքիայի մեր հին
գործիչներից մէկը՝
որ վերջին ժամանակ-
ներս վաղճանուեց,
«քանի մ' արժանաւոր բարե-
կամներու այլ եւ այլ երկա-
սիրութիւնները 'ի մի ամ-

փոփելով 'ի լոյս ընծայելու փափաքով», Իգ-
միրում 1880 թուականից հրատարակել ըս-

կսեց «Մէտէօրա» գիտ(ն)ական, ազգային
եւ գրական» հանդէսը: «Մէտէօրան—գը-
րում էր իւր յառաջարանում հանգուցեալ
հրատարակիչը—առ այժմ լոկ հաւաքածոյ
մ'է գիտական, ազգային եւ գրական գոր-
ծերու ու թարգմանութիւններու, հետեւ-
աբար իւր էջերը բաց են ամեն գրիչներու
համար որոնք իրանց ազգին ու հայրենաց
կ' ուզեն նուիրուել...»: Հանդիսիս հրատա-
րակիչը բացառում էր թէ չի («Մէտէօ-
րայի») նպատակն է ժամանակիս ոգոյն եւ
Եւրոպայի գիտական շարժման արձագանք
ըլլալ, մի եւ նոյն համակրութեամբ ըն-
դունելով նաեւ աստուածաբանական, հոգե-
բանական եւ գրական հայուածքներով գըր-
ուած կարեւոր յօդուածները»:

Թէպէտ եւ արգոյ հրատարակիչը «Մէ-
տէօրայի» «քանի մը հատոր կը խոստանայ
հասարակութեան մէկ տարուան շրջանի
մէջ», բայց հազիւ չորս գիրք կարողացաւ
լոյս ընծայել այն էլ անկանոն ժամանակով
իբր «տարեգիր»—միամեայ հանդէս:

Ինչ վերաբերում է «Մէտէօրայի» ներ-
քին կազմակերպութեան, կարող ենք ասել
որ ոչ թէ որպէս հանդէս, այլ որպէս ժո-
ղովածու, արժէ ուշադրութեան: «Մէ-
տէօրայի» չորս գրքերի մէջ էլ ընթերցողը
կարող է իւր ճաշակին յարմար գրուածներ
գտնել կարգալու:

Առաջին երկու գրքերի մէջ մեծ տեղ են
բռնում պատմական բաժնում՝ «Նոր Յու-
նաստան» գործ է. էէմէնիցի—Փօթոս Յա-
ւելաս: Վիպական բաժնում—Էմման. Ռօի-
տիսի—Յովհաննա Բաբունին (պատմ. վէպ):
Իսկ առաջնորդող յօդուածները «Արեւելեան
խնդիր-հայկական խնդիր» վերնագրով, հետա-
քըքիր կարգացուում են: Մատ ազահուլութեամբ
են կարգացուում նաեւ գրքերի վերջերում
«Փունջ» վերնագրի տակ գրուող հատընտիր
մտքերը, որ պատկանում են աշխարհահռչակ
մարդկանց: Մեր ցանկութիւնն է մի քանի
տող ընդօրինակել «սիրոյ» վերաբերմամբ:

Սէրը բոլոր մարդուս կեանքը կը սահմանէ.

Մասիյեօն.

Սէրը տիեզերքին ճարտարապետն է.

Հեղիօտ.

Սէրը շատ չնչին, բայց կենաց ամենէ ծանր խնդիրն է.

Փրանսիզվէյ.

Սէրը աշխարհիս կառավարողն է.

Պաքոն.

Սէրը Աստուծմէ աւելի զօրաւոր է, վասըն զի երկու հոգին մէկ կ'ընէ.

Ապուհօ.

Սէրը յանկարծ կը ծնի, սիրել կամ չըսիրել մեր ընտրութիւնէ կախում չունի

Քոռնէյլ.

Սէրը երիտասարդներու թագաւորը եւ ծերունիների բռնաւորն է.

Օքսէնսթէրն.

Սէրը ամենագեղեցիկ սրտերու մէջ կը բնակի՝ ինչպէս որ կրծան որդը ամենէ գեղեցիկ վարդի կոկոնին կը փակէ.

Շէյ'քսպիր.

Սիրէցէք, կեանքի մէջ աղէկ միայն այս բանս կայ.

Ճ. Սան.

Սիրահարուած ըլլալուն համար երիտասարդ մը պարսաւելը՝ հիւանդանալուն համար մէկուն յանդիմանութիւն ընելու կընմանի.

Տիւքլօ.

Մայրական սէրը միակ երանութիւնն է որ յուսոյ ամեն խոստումներէն գեր 'ի վեր է.

Տիկին դը - Ֆլահօ.

Այս աշխարհիս մէջ մայրն է միակ Աստուածը.

Է. լը Կուվէ.

Արարչագործութեան ամեն կենդանիներուն մէջ, շունէն սկսելով մինչեւ կինը, մայրական սիրտը միշտ վսեմ բացն մ'է.

Աղ. Դիւմա.

Ժ Ա Ն Յ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Մէտէօրա» եւ մեր աղբիւրները—
 - ա. ,,Մէտէո(օ)րա հանդէս ուսումնական (") եւ բոնասիրական Զմիւռնիա 'ի տպ. Գ. Մսերեան. 1881(")—83(")."
 - բ. ,,Մատինագիտ. հայկակ." Զարբ. էջ 428.
 - գ. ,,Զմիւռնիայի մէջ պ. Գրիգոր Մսերեանի խմբագրութեամբ. ,,Մէտէօրա" գիտական, ազգային եւ գրական հրատարակութիւնը, որ 1880 թուին սկսուելով տակաւին երկու գիրք է հանդէս հանել," ,,Արձագանք" 1882. № 22. Ա. Երեց.

119.

Պ Ա Ա Կ ^{1.)}

ԱԶԳԱՅԻՆ, ԶԱՂԱՔՈՒԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՁԱԳԻՐ

(Շարաթաթերթ)

Երեւան (Ռուսաստ.) 1880-1884

Հրատարակուում էր՝

Խմբագիր-հրատարակող՝ Վասակ Պապաճանեանց.

«Պսակ» լրագրի տպարան.

Դիւրքը՝ . . .

Բաժանորդագինը՝ տարեկան- 4 ռուբ.

Լեզուէն ոճը՝ } «. . . Իսկ այժմս, մի քանի հանգամանքներից, մանաւանդ Ուղղագրութ. } անցեալտարուայ միութից վեր

Մրագիրը՝

ԱԶԳԱՅԻՆ—

Առաջնորդող յօդուածներ ազգային այլ եւ այլ, հարցերի մասին, նամակներ, լուրեր եւ այլ տեղեկութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ տեսութիւն. յօդուածներ ժամանակակից քաղաքական դրութիւնից, լուրեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-յօդուածներ. ազգային բանասիրութիւնից, ֆէլիէտօն, խառն լուրեր, պատասխանիք խմբագրութեան:



րեւան քաղաքում առաջին անգամ սկըսուեց հայերէն լրագիր հրատարակուել 1880 թուականին հանգուցեալ Վասակ Պապաշանեանի խմբագրութեամբ:

«Պսակ» շաբաթաթերթն սկսուեց 80 թուականի մարտ ամսից որ էր նախ «գրականական, պատմական եւ մանկավարժական»:

«Մեր լրագիրը կը լինի՝— գրում էր խմբագիրը-ժամանակի օրագրութիւն. նա կընդունի իւր մէջ ինչ որ ժամանակի պիւքները կը բերեն կը հասցնեն նրան: Նա կը լինի մի ընդհանուր ընդունարան»:

Խմբագիրը ցանկացաւ 1881 թուականի հոկտեմբերից «Պսակը» հրատարակել շաբաթը երկու անգամ որպէս եւօրեայ թերթ, բայց քիչ լստոյ յայտնեց որ «...մի քանի հանգամանքներից, մանաւանդ անցեալ տարուայ մեր ուժից վեր դէՖիցիտից (ծախքը) ստիպուած, ... «Պսակի» շաբաթն երկու անգամ հրատարակուելը կախումն ունի նրա ստորագրուողների թուից»: «Պսակ» շաբաթաթերթը հրատարակուեցաւ ընդամենը չորս տարի: 1883-ի վերջերից արդէն նուազում էր կեանքը. 1884 թուականի սկզբին եթէ չենք սխալուում «Պսակը» դադարման դատապարտուեց իւր մի ինչ որ յանցանքի պատճառով:

Թ Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Պսակ» եւ մեր աղբիւրները— ա. «... լրագիրը ներկայ թ. (1881) հոկտեմբերից կը հրատարակուի շաբաթը երկու անգամ. կաւելանայ եւ քաղաքա-

կան մասը ...»

«Առողջապահական թերթ» 1881 № 1. բ. «... երեւանում պ. Բարաճանեանի խմբագրութեամբ «Պսակ» լրագիրը ...»

«Արձագանք» 1882. № 22. Ա. Եր. գ. «... ինչ՝ կը նշանակէ գաւառական թերթին այդ տեսակ պրօգրամ տալ. «մանկավարժական եւ պատմական» եթէ գաւառական լրագիր էք հրատարակում պէտք է գաւառական լրագրի պրօգրամ տաք նորան եւ նպատակ չը դնէք ձեզ ընդհանուր հարցեր վճռելու ...»

«Մշակ» 1880. № 49. Գ. Ա.

120.

Վ Ա Յ Ե Լ Ք ^{1.)}

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Մ Ս Ե Ս Յ .

Կ ո ս տ ա ն դ ն ու ա ղ ո լ լ ի ս (Տաճ.) 1880-1881.
Հրատարակուում էր՝
Տնօրէն՝ Մ. Գալէնտէրեան.



ոստանդնուպոլսում 1880 թուականի հոկտեմբեր ամսի 15-ից մի նոր ամսագիր երեւեցաւ պ. Գալէնտէրեանի տնօրէնութեամբ, «Վայելք» անունով:

«Վայելքի» նպատակն էր՝ իգական սեռին սովորեցնել կար, ձեւ եւ այլ տնային անհրաժեշտ գիտելիքներ:

«Վայելք» մինչեւ տարուայ վերջը հազիւ կարողացաւ դիմանալ:

ԻՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1.) «Վայելք» եւ. ազբիւրներ—
 ա. „(Վայելք) . . . առաջին թիւը տեսնելու
 եւ աչքէ անցնելու պատիւն ունեցանք,
 բայց մենք բան մը չկրցինք հասկնալ
 եթէ մինչեւ ամսու գլուխ բան մը հաս-
 կնամք կ'իմացուենմք . . .“
 „Հոսհոսի ձեռատետրը“ բ. ապ. էջ 150.
 բ. . . . Պոլսում երեւեցած մի քանի նոր հան-
 դէսները ինքզնիս „Վայելք“ անունով մո-
 գայի շարաթաթերթը (') . . .“
 „Արձագանք“ 1882. № 22. Ա. Երէջ.

121.

Ա Ր Ե Գ Ա Կ ^{1.)}

ՀԱՆԳԻԾ

ՌՈՍՏՈՒՄՆԱԿՆ ԵՒ ԱՐՈՒՍՏՈՒՄՆԱԿՆ.

(Նաբաթաթերթ.)

Կոստանդնուպոլիս 1880-1880.
 Հրատարակողու էր կիրակի օրերը:
 Արտօնատէր Ա. Յ. Չատէյեան:
 Խմբագիր Մ. Յ. Բարսեղեան:



նօրէնութեամբ պ. Մ.
 Բարսեղեանի Կ. Պոլ-
 սում 1880 թ. մայի-
 սի 17-ից սկսեց Հրատարակ-
 ուել «Արեգակ» անունով ու-
 սումնական եւ արուեստական
 շարաթական հանդէսը, որի մի
 համարը միայն տեսնուած է:

ԻՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1.) Ոչ մի աղբիւր սորա մասին:

122.

Բ Ի Ի Ր Ա Կ Ն ^{1.)}

ՀԱՆԳԻԾ

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

(Ամսագիր)

Կոստանդնուպոլիս (Տաճկաստան)
 1881-1894-եւս

Հրատարակողու է ամսի վերջերին.
 Տէր եւ Խմբագիր՝ Հ. Ստեփան Խ. Իւ-
 թիւճեան.

Տպագրութիւն Գ. Պաղտատլեան.
 Գիրքը՝ (տետր) 1 ապ. թերթ 32
 էջ. երկսիւն. 21 X 29 հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Լեզու, ոճը { „ . . . Մեռած ենք, սակայն
 կապրինք, մեռած ենք հնոյն
 Ուղղագրութ. } եւ ստորագունին համար . . .“
 Բաժանորդագրիւնը՝ տարեկան 1 1/2 մէ-
 ճիւղի է.

Հասցէն՝ Տպարան եւ գրատուն Գ. Պաղ-
 տատլեան: Սուլթան—Համամ
 փողոց թիւ 14.

Կոստանդնուպոլիս:

կամ՝

G. Paçatlian Sultan-Hamam № 14.
 Gonstantinople.

Ծրագիրը՝ 2.)

ԳԻՏԱԿԱՆ—կլլեւայլ յօդուածներ գիտու-
 թեան զանազան ճիւղերի վերաբերեալ. աշ-
 խարհագրութիւն, բնախօսութիւն. ար-
 ուեստ, նորութիւններ:
 ՔԱՂԱՔԱԿԱՆ—ներքին եւ արտաքին լու-

րեր, քաղաքական ժամանակակից գրու-
թիւնից:

ԱԶԳԱՅԻՆ—Յօդուածներ զուտ կրօնական
բնաւորութեամբ, ճառեր, քարոզներ, խը-
րատներ, պատճէններ զանազան գրուած-
ներ, ոտանաւորներ, տեղեկատու:

Ազգ. ք.—Յայտարարութիւններ.

Բովանդակութիւն 1892. ապրիլ (թիւ 196.)

—Նուէրք («Բիւրակն» ամսագրի)

—Մեռեալ եւ սակայն կենդանի.

—Հողմոց թեւերուն վրայ (շարունակ.)

—Բարեջրում քրիստոնէութեան—Մ.

Մինաս.

—Վերջին մրմունջ Փրկչին—Հայկազն.

—Անուն մը քանդակել (ոտանաւոր)
Թարգմ. Ա. Ի.

—Ծագումն եւ ընթացք աւետարանա-
կան ՚ի Հայս. մասն գ. (շարունակ.)

—Բնախօսութիւն. երկրորդ գալուստան
Քրիստոսի եւ արքայութիւն երկնից. մասն Ա.-

—Հատուածք Կոլդսմիդհի գրութիւն-
ներէն—Մ. Մինաս.

—Աթէնք եւ Հռոմ—Յովհ. Ե. Գապա-
տայեան.

—Իմ սէրը (ոտանաւոր)-Աւետ. Կիւլպէնկ.

—Գիտական բարձր կեանք (շարունակ.)

—Կենդանի ջերմոցք (Յ. Ուիլս.) Ս. Գ. Գ.

—Համազգային Հրաւեր-պատճէն շրջա-
բերականի:

—Արեւելեան որբանոց-Գ. Պաղտատեան.

—Քաղաքական. ներքին լուրեր.

—Ազգ. ք.

տալ լուսաւորչականներին: «Բիւրակն» գու-
ցէ կարողանար իւր հայաշատ շրջաններում
քիչ շատ ցանել իւր որոմները եթէ չը լի-
նէին այսօրուայ մեր թիւրքահայ մի քանի
թերթերը որոնք սաստում ու պապանձե-
ցնում են «Բիւրակն»ին եւ նորա նմաններին:
Խմբագրական հանգամանքների պատճառով
մի-երկու տարի էլ դադար առաւ «Բիւրա-
կըն» եւ յետոյ ամսագիր դառնալով մինչեւ
այժմ շարունակուում է:

ԺՆՅՈՒԹՈՒՆՆԵՐ.

- 1.) «Բիւրակն» ամսագիրը եւ աղբիւրներ—
 - ա. «Բիւրակն լրագիր գիտնական քաղաքա-
կան եւ ազգային Զ-է տարի. Կ. Պ. տպ.
Գ. Պաղտատեան. Տէր եւ խմբ. Հ. Ստե-
փան Խ. Իւթիւճեան...»
«Հանդ. Ամսօր.» 1889 էջ 261.
 - բ. «Բիւրակն հանդէս գիտնական եւ քաղա-
քական ամիսը երկու անգամ սկսեալ 1881
Ստեփ. Խ. Իւթիւճ. ...»
«Օրացոյց ժող-պատկ.» 1893 էջ 65.
 - գ. «Բիւրակն հանդէս գիտական եւ քաղա-
քական, ամիսը երկու անգամ սկսեալ
1881. խմբ. տնօրէն. Ստեփան Խ. Իւ-
թիւճեան...»
«Օրացոյց» 1893. Ռոստով էջ 91.
- 2.) «Բիւրակն» ծրագրի վերնագիրը թէեւ էր, «Գիտ-
նական քաղաքական եւ ազգային», բայց
նիւթերը դասաւորուում էին «Ազգային
գիտնական եւ քաղաքական» կերպով,
և պէտք է ասել որ «Ազգային» բաժ-
նում տպագրուում էին «կրօնական»
բազմաթիւ յօդուածներ:

Ճարպիկ բողոքականները «Աւետարեք»
լրագրին մի թեւերկեր տալու համար 1881-ի
յուլիսից հիմնեցին մի կիսամօտդիր «Բիւ-
րակն» անունով, ոմն Ստեփան Իւթիւճեա-
նի խմբագրութեամբ: Հանգիսիս խմբագիրն
ամեն կերպ աշխատում էր թունդ կրօնա-
կան յօդուածներով «ուղիղ ճանապարհ» ցոյց



123.

ԱՌՈՂՋԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆՐԱՅԾ.

ՆՈՒԷՐ ԱԶԳԻՆ

Երեւան (Ռուսաստ.) 1881-1882.

Հրատարակուում էր՝ ամսի վերջերին. Խմբագիր-Հրատարակիչ՝ Բժիշկ Լեւոն Տիգրանեանց.

«Պսակ» լրագրի տպարան 2.)

Դիրքը՝ (տետր.) 1 տպ. (թերթ) 32 էջ երկ-սիւնեան. 17x25 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Լեզուն, ոճը } «...Անասունների վրա փոր-
Ուղղագրութ. } մեր են արել որ եթէ խափա-
նում են կաշուի արտադր...»

Բաժանորդագիրնը՝ տարեկ. 3 թուր.

Ծրագիրը՝

I. Պետական կարգադրութիւնները ժողովրդի առողջապահութեան վերաբերութեամբ:

II. Առողջապահական յօդուածներ աշխարհիկ ոճով, ժողովրդի առողջապահական պայմանները. բժշկական արհեստը ժողովրդի մէջ, բժշկականութիւնը ժողովրդականացրած:

III. Բժշկական մատենախօսութիւն.

IV. Խառն լուրեր: Յայտարարութիւններ. Բովանդակութիւն 1882. № 6.

ա. Սառը ջրում լեղանալն առողջարար է—Լ. Տ. ք. Ծնունդ.

գ. Երկայնակեցութիւն—բժայ. Արտէմ Ի. Յովհաննիսեան.

դ. Ընդհանուր առողջապահական ժողովի կարգադրիչ յանձնաժողովի առթիւ—Լ. Տ. ե. Սպանութիւնները եւ վիրաւորութիւնները Երեւանի գաւառում—բժ. Յ. Անանեան.

զ. Քաղաքային բժշկի յիշատակարանից.

է. Ժողովրդական բժշկութիւն.

ը. Խառն լուրեր.

թ. Խմբագրութեանս առաջարկած լուծելու հարցեր:

ժ. «Առողջապահական Թերթի» առաջին տարուայ հաշիւը:

ժա. Յայտարարութիւններ.

ժբ. Վիճակագրական աղիւսակ պատկերի ծնունդների եւ մահի Երեւանում 1882 թ. յունիս ամսին. եկեղեցական տոմարներից քաղած.

ժգ. Օղի բարեխառնութիւնը Երեւանում թ. յունիս:



առողջապահական պայմանները, բժշկական գիտութիւնը հայոց մէջ դեռ այնքան չէր տարածուել. բժիշկներ, բժշկապետներ այնքան չունէինք ինչքան այժմ: Նախ-

նական շրջաններում առողջապահութիւնը մի երկրորդական բան հաշուելով, աւելորդ էին համարել այդ ծրագրով մի հանդէս հրատարակել: Այդ շատ օգտակար գործի առաջին պատիւն Ռուսաստանում վայելում է բժիշկ պ. Լեւոն Տիգրանեանցը որ այն ժամանակ Երեւանի քաղաքային բժիշկ էր եւ տեղական առողջապահական յանձնաժողովի նախագահ: Պ. Տիգրանեան 1881 թուականի կիսից Երեւանում սկսեց հրա-

տարակել «Առողջապահական» ամսագիրը: «Բժշկականութիւնը գործագրուում է շնորհիւ վայրենի ազգերի մէջ. իսկ առողջապահօրէն ապրում են միայն լուսաւորեալ ազգերը»:

Այս տողերը նշանաբան էր դրել բժիշկը իւր ամսագրի երեսին:

«Առողջապահական Թերթի» սկզբնաւորութիւնը կատարեալ յաջող էր: Գործը ընդունում էր եռանդով. խմբագիր բժիշկից զատ «Առողջապահական Թերթին» աշխատակցում էին Հայ բժշկապետներ եւ բժիշկներ, Աւետիք Բաբայեան, Գր. Տէր-Գրիգորեան, Գր. Քոչարեան, Յ. Անանեան. Ա. Միրմանեան, Ար. Յովհաննիսեան, Ար. Շահազիզեան եւ այլք:

Պրոֆ. Վիրխովը երբ 1881 թուականի սեպտեմբերին գտնուում էր Տփլիսում Հրնագիտական Ժողովին մասնակցելու համար, երբ պատահամբ «Առողջապահական Թերթի» մի համար ձեռքն է ընկնում, զարմանում է որ հայերէն առողջապահական թերթ կայ. ստուում է իւր շրջապատողներին թէ՛ «Եթէ այդ թերթը յաջողութիւն ունենայ ձեր (հայ) ժողովորդի մէջ, դա կը լինի ապացոյց որ հայոց ազգում կայ մի դասակարգ, որ գտնուում է զարգացման որոշ բարձրաստիճանի վրայ. որովհետեւ առողջապահօրէն կամենում են ապրել միայն լուսաւորեալ ազգերը, իսկ վայրենիները չեն կարող զգալ առողջապահութեան կարեւորութիւնը... »

Ինչ՞ կասես որ պրոֆեսսորի կարծիքը կարծիք էր, եւ զարմացքը իզուր: «Առողջապահական Թերթը» սկսուելով 1881 թ. յուլիսից, ուղիղ մի տարի կարողացաւ գոյութիւն ունենալ, 1882 թուականի օգոստոսին այլեւս լոյս չը տեսաւ «Թերթի» 8-ր մասը:

«Առողջապահական Թերթի» հաշուից երեւում է, որ ունեցել է ընդամենը 443 բաժանորդ որոնց 60-ը բաժանորդագինը չեն վճարել:

Շատ ակոստ որ այժմ մի առողջապահ-

հական պարբերական չունինք որ անհրաժեշտ է մեր հասարակութեան: Թոյլ ենք տալիս մեզ մի խորհուրդ տալու պ. խմբագրին, որ դարձեալ շարունակէ իւր «Առողջապահական Թերթի» հրատարակութիւնը, որ նիւթական գործն այժմս ապահով կը լինի:

Ժ Ա Ն Յ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Բ .

- 1.) Առողջապահական Թերթի—ազգիւրներ. ա. «...Նրեւանում պ. բժիշկ Լեւոն Տիգրանեանի ձեռքով «Առողջապահական Թերթ» ամսագիրը...» «Արձագանք» 1882. № 22. Ա. Նր.
- 2.) Թերթի վերայ չէր տպագրուում տպարանի անունը:

124.



ԳՐԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ՀՈՂՈՒՄՆԵՐ

ԱՐԱԳԻՐ

(Երկօրեայ)

Տփլիս (Ռուսաստան) 1882-1894-եւս. Հրատարակուում է՝ չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը: Խմբագիր-Հրատարակիչ Աբգար Յովհաննիսեան. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Դիւրքը (Թերթ) միածալ 4 էջ վեց-սիւնեան 44X61 հ.-մետր. Թուղթը եւ տիպը լաւագոյն. Բաժանորդագինը՝ տարեկան 10 ռուբ. կէս տարուանը 6 " Լեզու, ոճը { " . . . Ինչպէս յայտնի է վերջին կամողիկոսական ընտրութեան ժամանակ սահման... » Ուղղագրութ.

Ծրագրերը՝ *)
ԱՌԱՋՆՈՐԴՈՂ յօդուածներ. ժամանակա-
կից նշանաւոր խնդիրների վերաբերեալ:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Յօդուածներ ազգա-
յին կեանքին վերաբերեալ. նամակներ խըմ
բազրուիթեան, թղթակցութիւններ, լուրեր
տեղական եւ այլ հայաբնակ տեղերից, ա-
ւօրեայ մանր լուրեր, եւ այլն:

ԲԱՆԱՍԻՒԱԿԱՆ—Յօդուածներ ազգային հին
եւ արդի գրականութեան մասին. հնագի-
տական, պատմական, լեզուաբանական գըր-
ուածներ: Հայերէն լեզու, տեղագրու-
թիւն, ճանապարհորդական նկարագրու-
թիւնք եւ այլն:

ՖԵԼԻԿՏՕՆ—Վէպեր, գրամա, լիշողութիւն-
ներ, ոտանաւորներ, պատմական տեսու-
թիւն, հատուածական նամակներ, արտա-
սահմանեան նամականի. կենսագրութիւն-
ներ, նոր գրքեր:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ.—Յօդուածներ
գիտութեան այլեւայլ ճիւղերի վերաբեր-
մամբ. բնախօսութիւն, քիմիա, բժշկակա-
նութիւն: Նոր գիւտեր, ճարտարապետու-
թիւն, գեղարուեստ, ուսում:

ԹԵՐԹՕՆ—Յօդուածներ զաւեշտական բը-
նաւորութեամբ: Օտարօտի երեւոյթներ:

ՄԱՏԵՆԱՌՕՍՈՒԹԻՒՆ — Քննադատութիւն
Հայերէն եւ օտար նշանաւոր գրքերի:

ՔՆԻԿԻՄԱՌՕՍՈՒԹԻՒՆ—Նամակներ միմեանց
հակառակ. ընկերութիւնների, գպրոցների
եւ այլ ազգային հաստատութիւնների հա-
շիւներ եւ այլն:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ—Արձանագրութիւն Տըփ-
խիսի դատաստանական պալատում քննուած
հետաքրքիր գործերի, նա մանաւանդ որոնք
վերաբերում են ազգային կեանքին:

ԲԱՂԱՔԱԿԱՆ—Արտաքին տեսութիւն Յօդ-
ուածներ. քաղաքական աշխարհից, քաղա-
քական ներկայ գրութիւնը, տեղեկութիւն-
ներ, լուրեր, քաղաքական բնաւորութեամբ

*) Վերջերքս աւելցցաւ եւ «Մամուլի
Տեսութիւն» անունով մի բաժին:
Ման. աշխատ.

ԶԱՆԱԶԱՆ—Խառն լուրեր, «Նիւթեր հա-
յոց պատմութեան համար» հատ ու կտոր
գըրուածներ հասարակական կեանքից:
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—«Հիւտիսային Հեռագրական
Գործակալութիւնից» . . .

ՏԵՂԵԿԱՏՈՒ-Նուիրատուութիւն, հաշիւներ,
նաւերի եւ երկաթուղիների երթեւեկու-
թիւն եւ այլ վաճառականական տեղեկու-
թիւններ, բօրսա.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Հայերէն եւ օտար
լեզուներով:

Բովանդակութիւն 1892. թիւ 53.
(մայիս 6—18.)

«Արձագանքի» հեռագիրներ 3.)

Առաջնորդող—Խրիմեան Հայրիկ (խմբ.)

Ներքին տեսութ.-Ներկայացում ի պատիւ
տաճկահայ պատգամաւորների: Մանկա-
վարժ Սիմէօնովի ժողոված վիճակագրու-
թիւնը: Ուզունթալայի ծխակ. դպրոցի
նուէրներ: Բալակլաւայից: Աշակերտնե-
րի մարմնամարզական խնդիր, «Քիմիա»
«Արծուի մտածմունքը»:

Ֆելիէտօն—Հաւատը: Հայկական ներկա-
յացումներ Աղէքսանդրապոլում. (լիշո-
ղութիւններ Գաջբերունու): Նօրա՝ գրա-
մա 3 արարուած. թարգմ. Տիրուհի Կոս-
տանեանցի (շար.)

Բանասիրական—Ս. Էջմիածնի վերանորո-
գութիւնն ժ. գարում. Կ. Կոստանեան
(շարուն.)

Բաղաքական—Փրանսիա, —Բելգիա—Աւրս-
տրիա—Ունգրիա.

Հեռագիրներ—Պետերբուրգ. Ս. Պետեր-
բուրգի բորսան 4.)

Զանազան—Մի շապլոնական ռեկլամ. խա-
ղաթղթերի գիւտի 500 ամեակը:

Տեղեկատու—Անգրկովկասեան երկաթու-
ղի, ռուսաց շոգենաւային ընկերութիւն,
փոստային կառքերի երթեւեկութիւն,
վրաց պատերազմական ճանապարհի վե-
րայ:

Յայտարարութիւններ 5.)

Հասցէն՝ Տիփլիս «Արձագանք» լրագրի խմբագրատունն.

կամ՝ Тифлисъ Редація газеты „Ардзаганъ“

կամ՝ Tiflis Rédaction du journal „Ardzagang,,



որձ» ամսագրի դադարելուց անմիջապէս յետոյ, նորա խմբագիր-հրատարակիչ՝ քաղաքատնտեսութեան դոքտոր պ. Աբգար Յովհաննիսեան պատրաստուեց եւ հետեւեալ 1882 թուա-

կանից սկսեց «Արձագանք» գրականական եւ քաղաքական շաբաթաթերթի հրատարակութիւնը: «Փորձ» ամսագրից պակաս չէր իւր նիւթերի կազմութեամբ «Արձագանք» շաբաթաթերթը: Բաֆֆի, Երիցեան, Նորայր, Տէր-Աւետիսեան, Արասխանեան, Երրուանդազէ, Մ. Բարխուդարեան իւրեանց ղեղեցիկ գրուածքներով հասարակութեան ուշքը դրուեցին դէպի նոր շաբաթաթերթը:

Ծերունի Պատկանեանի «Արարտա»ից յետոյ Տիփլիսում մի կատարեալ շաբաթաթերթ չերեւացաւ մինչեւ «Արձագանքը», որ մեր ժամանակին այն օգուտը տուեց ինչ որ կարող էր տալ մի լրագիր որ «Փորձի» ժառանգորդը կոչուելու արժանաւորութիւնն ունենար: Արիպասանութիւն, մատենախօսութիւն, հրապարակախօսական ընտիր գլուխածքներերով լի էին «Արձագանք» շաբաթաթերթերթի էջերը: Բաֆֆու վէպերը, գրուածները, Երիցեանի հնագիտական պատուական յօդուածները օրէ օր շաբաթաթերթի յարգն էին բարձրացնում մամուլի պատմութեան մէջ: Նորանոր աշխատակիցներ աւելացան, Յարոյ, Համբօ, Երեւնց, Եզեկ-

եան, Վր. Փափագեան, Մալխաս, Սիւլիւկ եւ այլք:

1884 թուականի նոյեմբերի 8-ին Ներքին Գործոց պ. Նախարարի կարգադրութեամբ «Արձագանք» շաբաթաթերթը գազարուեց ու թն ամիս ժամանակամիջոցաւ:

1885-ի յուլիսի 9-ից նորից շարունակեց իւր հրատարակութիւնը՝ նոյն դիրքով եւ նոյն ծրագրով: Աւելի եւս արտաքին տեսքը գեղեցկացնելով եւ հետաքրքրական առատ նիւթեր ապագրելով:

Պ. Յովհաննիսեան նպատակ ունենալով իւր ընթերցողների ճաշակը զարգացնել գեղարուեստի մէջ, 1890 թուականի սկզբից «Արձագանքը» դարձնում է պատկերազարդ, դիրքը աւելի եւս մեծացնելով (6) եւ գեղեցկացնելով: Կովկասում մի կատարեալ պատկերազարդ պարբերականի կարեւորութիւնը զգալի էր. ամեն տեղերից շնորհաւորական, նամակներ, հեռագիրներ տեղացին «Արձագանքի» խմբագրութեան, խրախուսելով հրատարակիչ խմբագրին իւր այդ նոր գործունէութեան մէջ: Կոստանդնուպոլսից մի քաջալերական նամակ էլ գրում է Խրիմեան Հայրիկը, ներկայիս ամենայն հայոց Կաթողիկոսը՝

«Թոյլ տուր, որ ես էլ քո նոր փառաւոր ձեռնարկութեան շնորհաւորեմ: Ուրախ եմ, շատ ուրախ պատկերազարդ «Արձագանք» թերթիդ նորափայլ հրատարակութեանն որ մինչեւ ութերորդ թերթ մեզ հասաւ.

Գիտէ՞ք ես շատ սիրահար եմ պատկերներու. մանաւանդ երբ այդ պատկերներ Աստուածաշունչ գրոց եւ Աւետարանին հրաշալեաց վերաբերին: Եւ դուք իմաստուն խորհրդով երկնային մասն երկրին

Հետ կը խառնէք որպէս զի ժողովուրդ ոչ միայն գեղարուեստով պքանչանայ այլ եւ հոգին սուրբ կրակով վառի: Ոչ միայն ինձ, այլ եւ համայն ազգին իրչափ սիրելի են մեր հայրենեաց վանքերու հոյակապ տաճարաց պատկերներ՝ ինչպէս Հաղարծնի վանուց պատկեր: Իսկ ես կօրհնեմ զձեզ եւ ձեր այդ ձեռնարկութիւն, որ տակաւ առ տակաւ աճի, զարգանայ եւ նոր ոգի ներշնչէ ազգին:

Վասն ձեր միշտ աղօթարար՝

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ.

Կ. Պոլիս.

1890 թ. 25-ապրիլ:

Հեշտ բան չէր Կովկասում «Արձագանքի» պէս մի հանդէս հրատարակել պ ա տ կ ե Ր ա զ ա Ր Դ բ առ ի ս բ ու ն նշանակութեամբ: Գործին յարատեւութիւն տալու համար անհրաժեշտ էր «Արձագանքի» ն ի լ թ ա կ ա ն ա պ ա հ ո վ ու թ ի լ ն ը: Մի բազմաձայն շքեղ հրատարակութիւն պահպանելու համար հարկաւոր են դուրսութիւնն ապահովացնելու չափ բաժանորդներ: Ս. Պետերբուրգի մեր այժմեան միակ պ ա տ կ ե Ր ա զ ա Ր Դ հանդէսը՝ «Արաքսը» որ տարին միայն երկու գիրք է հրատարակուում այնքան ստորագրուողներ չունի որ կարողանայ ապահովուել իւր դրութեան մէջ, այն էլ Պետերբուրգի պէս տեղում որտեղ կրկնապատիկ աժան են նստում հրատարակչի վերայ կլիշները, թուղթը, ապագրութիւնը եւ այլն: Պ. Աբգար Յովհաննիսեան տեսնելով որ թերթի ծախքերը մուտքից գերազանցում են, լաւ համարեց վերջ ապ պատկերներին ու նկարներին: 1891 թուականի № 19-ից սկսեց հրատարակել «Արձագանք» որպէս մեծագիր քաղաքական թերթ շաբաթը երեք անգամ որպէս եւ շարունակուում է

մինչեւ այսօր:

Այսպիսի փոփոխական հանգամանքներում «Արձագանքի» հին աշխատակիցներին Երուսաղեմ, Մալխաս, Պոստեան, Փափագեան, Եղէկեան, Արասխանեան հեռացան. նոր աշխատակիցներ աւելացան՝ Զմըշկեան, Իսահակ Յարութիւնեան (Լօրդ). Գիւտք. Աղանեան, Կ. Կոստանեան, Քաջբերունի, Բագ. Այուազեան, Տիրուհի Կոստանեանց, Քամալեանց Ս., Ն. Քարամեան, Փ. Վարդանեան, Գ. Մաւրաթեան, Յով. Յովհաննիսեան, քժպ. Յ. Քաջարեան, Յով. Լալայեանց Արշ. Թումանեան, Գ. Շովրեան, Ս. Կանայեանց, Փ. Վարդանեանց եւ այլք:

«Արձագանք» լրագիրը ուղղութեամբ պահպանողական է. համամիտ լինելով տեղացի «Նոր-Դար»ին, Թիւրքիայի «Արեւելք», «Մասիս», «Ծաղիկ» «Արեւ. Մամուլ» լրագիրներին. իսկ հակառակ «Մշակ»ին «Հայրենիք»ին «Մուրճ»ին:

Կաթողիկոսական ընտրութեան ժամանակ «Արձագանքի» 1884 թուականի թեկնածուն ներսէս Վարժապետեանն էր. իսկ վերջին ընտրութեան ժամանակ թիւրքահայ եպիսկոպոսներից էր աշխատում կաթողիկոս տեսնել:

«Արձագանքը» այժմ մեր յայտնի լրագիրներից մինն է: Կովկասի լրագրական վերջին վիճակագրութիւնից երեւում է որ «Արձագանք» 1892 թուականին մուտք ունեցել է 10,000 ռ. 833 բաժանորդ-220 քաղաքում, 613-ը դուրսը:

1891 թուականին «Արձագանքի» տակ խմբագրի հետ ստորագրում էր՝ Տնօրէն-Յարոյ: Խմբագրապետի Տիխոնից հեռանալու ժամանակ, նախ «օգնական խմբագրի» Աղէքսանդր Մովսիսեանն». վերջերքս «Փոխ-խմբագիր Փիլիպպոս Վարդանեանն»:

«Արձագանք»ից արտատպուած, առանձին գրքերով հրատարակուել են՝ Բաֆֆի—Սամուէլը (պատմ. վէպ):—Կ. Կոստանեանցի «Թովմամ Մեծոփեցու յիշատակարանը»: Երուսաղեմի «Զուր յոյսերը», «Արամբին», Ա.

Ջարգարեանի «Շիրուանի կոյսը»-Աղ-Մամի-կոնեանի «Հովոսէպոստոս», -Տիրուհի Կոստանեանցի (Թարգմ.) «Նորա»-գրաման, Գիւտ ք. Աղանեսունցի (Թարգմ.) «Գիւղի սուրբը» եւ այլն:

Ժ Ա Ն Յ Յ Թ Յ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

- 1.) «Արձագանք» լրագիրը եւ աղբիւրները:
 - ա. «Արձագանք» գրականական եւ քաղաքական շարաթաթերթ, Խմբագիր-Հրատարակիչ Արգար Յովհաննիսեան: Տնփեսիս է տպ. Յով. Մարտիրոսեան 1882. «Մատենագիտ. Հայկակ.» Ջարբ. էջ 70
 - բ. «... Սթէ մի ժամանակ աշխատակցել է «Արձագանք»ին եւ տպաւանցել է մի այլ լրագրի բանակ, Արգար Յովհաննիսեան կըսկսէ իւր Թերթի էջերում ամեն մի քայլափոխում նոյն չափ խայտառակել այդ մարդուն, որչափ առաջ գոյարանում էր նրան. . . .»

«Մշակ» 1892 № 142.
 - գ. «... եւ Արձագանքն—1885.»

«Պատմ. Հայ. մատեն.» Ե. ղ. Գ. էջ 97.
 - դ. «... 1882-ին նոյն խմբագիրը (Յովհաննիսեան) սկսեց հրատարակել «Արձագանք» շարաթաթերթը 1889(°)-90. պատկերազարդ էր եւ 91-ից օրաթերթ շարաթը երեք անգամ: Ձեւը փոխել է այդ ընթացքում, բայց գոյնն ու ուղղութիւնը պահպանել.»

«Հայոց արդի մատենագր.» (ձեռագ.)
 - ե. «Արձագանք. շարաթաթերթ գրականական եւ քաղաքական. սկսեալ 1882. Արգար Յովհաննիսեան խմբագիր-հրատարակիչ. Տնփեսիս»

«Օրացոյց ժող.-պատկ.» 1893 էջ 66.
 - զ. «... 1881-ին այդ, («Փորձը») դարձաւ «Արձագանք» շարաթաթերթ որ մինչեւ այժմ շարունակուում է . . .»

«Հայկակ. մատենագ.» Բ. էջ 153.

Im Jahre 1881 wurde sie in ein Wochenblatt „Ardzagank“ (Echo) umgewandelt, das noch bis heute besteht.

«Arm. Bibibot., II. էջ 153
 - է. «Արձագանք»—լրագիր գրականական եւ քաղաքական, կհրատարակուի շարաթը երեք անգամ, չորեք. ուրբ. եւ կիրակի

- օրերը. սկսել 1882 խմբագիր-հրատարակիչ Արգար Յովհաննիսեան.»

«Օրացոյց» 1893 Թ. Ռոստով էջ 94.

Ե. «Ներկայումս Ռուսահայոց մէջ հրատարակուում են. . . «Արձագանք» շարաթաթերթը.»

«Պատմ. Հայոց» Ս. Պալատան էջ 445.

Ջարմանալի է թուում մեզ որ պ. Երեցեան իւր տեսութիւնը գրել է «Արձագանք»ում եւ մոռացել է յիշել այս Թերթի անունը:
- 2.) Դիրքը շարաթաթերթ ժամանակ՝ տետր 16 էջ երկ-սիւնեակ 24x32 Հ.-մետր:
- 3) Այս «Հեռագիրները» ամեն ժամանակ չեն լինում:
- 4) Եւ ներքին փոխառութեան վիճակահանութեան համարները կը տպուին այս բաժնում:
- 5) Յայտարարութիւններ տպագրուում են բառը 4-գ. երեսում 2. 1-երեսում 4 կոպ.
- 6) Կէս Թերթ տպ. 16 էջ. 1. սիւնեան 27—35 Հ.-մ.

125.

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

Թ Ա Ղ Ա Վ Ր Դ Ե Ը Ն ^{1.)}

(Ամսատետր)

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1882-1886
 Հրատարակուում էր՝ ամսի վերջերին.
 Խմբագրողութեամբ՝ Տօքտոր Մ. Բ.
 Իւթիւճեանի.
 Ի տպարանի «Մէճմուլը Հաւատիս»
 լրագրոյ.
 Դիրքը (տետր) 24-32 էջ. 11x15 Հ.-մ.
 Թողութը եւ տիպը՝ բաւարար.
 Բաժանորդագրինը՝ վեցամսեայ 6 դր.
 Ծրագիրը՝
 Բժշկական, առողջապահական, յօդուածներ,
 առտնին տնտեսութիւն, գաստիարակութիւն,
 երկրագործութիւն, խրատներ,
 գուարճալիք:
 Բովանդակութիւն 1883 թիւ 19.
 Մշտնջենաւոր քօլեւայք:



անազան ծրագիրներով պարբերական հրատարակութիւններ ինչքան որ ունեցել ենք դորանց մէջ շատ սակաւ են բժշկական-առողջապահական հանդէսները:

Երեւանի «Առողջապահական Թերթ»-ից յետոյ սկսուեց Կոստանդնուպոլսում հետեւեալ 1882 թուականից «Մատենադարան ժողովրդեան» փոքրիկ ամսատետրը, որ բացի բժշկա-առողջապահական գրուածքներից խմբագիր պ. Մ. Իւթիւճեանը տալիս էր իւր ընթերցողներին ընթերցանութեան յարմար այլ եւ այլ նիւթեր:

«Աշակերտ Օսմանեան եւ Գաղիոյ Բժըշկական ձեմարանաց՝ բժիշկ կայսերական բանակի եւ արքունի պալատան՝ «Գոքտօր Մանուէլ Բարունակ Իւթիւճեան, «ժողովրդեան Մատենադարանի» հրատարակութիւնն սկըսելով 1881-ի յունիսից, մի-մի տետրակների մէջ պարբերաբար հրատարակեց հետեւեալ նիւթերը՝

- ա. Պատուաստ եւ իր օգտակարութիւն.
 - բ. Ակուայք եւ զանոնք առողջապահելու միջոց.
 - գ. Առողջաբանութիւն ընդհանուր.
 - դ. Գաստրարակութիւն.
 - ե. Աւտին տնտեսութիւն.
 - զ. Երկրագործութիւն.
 - է. Զուարճալի երգներ.
 - ը. Արիւն.
 - թ. Միջոցք երկայնակեցութեան.
 - ժ. Անդամազննութիւն.
 - ժա. Մորթի անդամազննութիւն.
 - ժբ. Մշտնջենաւոր քօլեռայք եւ այլն:
- Զորս տարուայ չափ տեւեց պ. Իւթիւճեանի հանդէսի հրատարակութիւնը: 1886

թուականին այլեւս չերեւեցաւ «Մատենադարան»:

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Մատենադ. ժողովրդեան» եւ աղբիւրներ՝
- ա. «... յօրինուած է, որ սոյն կազմուածքին օրինաց համեմատ ապրիլը սովորի, անպատճառ եւ անշուշտ մարդիկ մինչեւ մէկ դար՝ հարիւր տարի պիտի ապրեն. զոր կ'բաղձայ իր ընթերցողաց մատենադարանիս խմբագիրն սօքսոր Մանուէլ Բ. Իւթիւճեան»
 - բ. «Մատենադ. ժողովրդ.» 1883 (էջ 28.)
 - բ. «Շնորհակալութեամբ ստացանք պ. դոքտօր Մ. Իւթիւճեանից իւր հրատարակումը» «Մատենադարան ժողովրդեան» վերնագրով առողջապահութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ փոքրիկ գրքովինը...»
 - «Աղբիւր» 1883. № 3.

126.

Գ Ր Ա Կ Ա Ն Ե Ի Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ր Ժ Ո Ւ Մ ^{1.)}

(Ամսագիր)

Կոստանդնուպոլս (Տաճ.) 1882-1889
Հրատարակուում էր ամսի վերջերին.
Խմբագիր՝ Եղիա Տէմիրճիպաշեան.

Միակ գրական-փիլիսոփայական հանդէսն է մեր մամուլի պատմութեան մէջ պ. Տէմիրճիպաշեանի «Գրական եւ Իմաստասիրական Շարժում» ամսագիրը որ 1882ից Կոստանդնուպոլսում սկսեց հրատարակուել: Եօթը տարի կեանք ունեցաւ «Շարժում» բայց իւր անմատչելի ծրագրով հասարակութեան մէջ

Հաչակ չը կարողացաւ վաստակել: Ամսագիրը Հրատարակուում էր իւր մի քանի տասնեակ բաժանորդների համար: 1888 թուականի վերջերին այս հանդէսը դադարուեցաւ:

Ի Ա Ն Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Շարժում Գրակ. եւ Իմաստասիրական» եւ մեր աղբիւրները—
 - ա. «... Գրական եւ Իմաստասիրական Շարժում» խմբագրութեամբ Եղիա Տէմիրճիպաշեանի . . .»
 - »Նոր-Դար« 1886 № 1. էջ 3.
 - բ. »Գրական եւ Իմաստասիրական Շարժում ամսաթերթ Կ. Պ. խմբ. Ե. Տէմիրճիպաշեան . . .»
 - »Հանդ. Ամսօր.« 1889 էջ 261.
 - գ. » . . Շարժում գրական-փիլիսոփայական . . . «
 - »Հայկակ. մատենադ.« Բ. էջ 155.
 - { . . . »Scharsum, (Bewegung), litterarisch-philosophische . . . «
 - »Arm. Bibliot.« II. էջ 155.

~~~~~  
127.



**ԳՐԱԿԱՆԱԿԱՆ-ՔՈՂՈՎՈՒՄՆ ԵՒ ԱԶԳՈՅԻՆ ԱՄՍԱԳԻՐ**

Տփիսիս 2.) (Ռուսաստ.) 1882-1884.  
 Հրատարակուում էր՝ ամսի սկիզբներին.  
 Խմբագիրը-Հրատարակող՝ Սիմէօն Հախումեան.  
 Տպարան Ս՝. Վարդանեանի եւ Ընկ.  
 Դիբբը (գիրք) 3 տպ. թերթ. 36 էջ 17×26 հ-մետր.

- Թուղթը եւ տիպը՝ մաքուր.  
 Բաժանորդագիրնը՝ տարեկան ութը ռուբլի.  
 Լեզուն ոճը { . . . . Մանր եւ յուսահատական է նրա համար որ մինչ Ուղղագրութ. } դեռ շահատեսական սկզբանց՝  
 Ծրագիրը՝  
 Ա. Ժամանակագրութիւն, տէրութեան կարգադրութիւններ, ռուսաց արտասահմանի եւ Կովկասի նորութիւններ:  
 Բ. Քննական յօդուածներ հայերի եւ նոցա դրացի ազգերի տնտեսական, բարոյական եւ մտաւորական դրութեան մասին:  
 Գ. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ, ինքնուրոյն եւ թարգմանական:  
 Դ. Մտտենախօսութիւն—Քննութիւն հայերէն լեզուով տպագրուող, նոյնպէս եւ այն օտար գրքերի որոնց նիւթը հայոց ու Կովկասեան, կեանքից է առնուած:  
 Ե. Քաղաքական տեսութիւն.  
 Զ. Ներքին տեսութիւն.  
 Է. Մանկավարժական ժամանակագրութիւն.  
 Ը. Այլ եւ այլք.  
 Թ. «Յաւելուած» եւրոպական եւ ռուսաց հեղինակների գրուածներ, թարգմանութիւններ:  
 ժ. Յայաարարութիւններ.  
 Բովանդակութիւն 1884 № 1.  
 I. Ընթերցողներին—(Խմբ.)  
 II. Երեւում են (պատկեր)—Շիրուան-զաղէ.  
 III. Բժիշկ կանայք Հնդկաստանում-Ս. Թաղէոս.  
 IV. Սիրոյ երգ (ոտանաւոր)—Պատահակ.  
 V. Սիմէօնի հայրը (Գիւղը-Մոպառ.) Հ. Մատոյ.  
 VI. Գեղջուկի յոյսը (ոտանաւոր)-Սրինգ.  
 VII. Բուրժուազեան մեր գրականութեան մէջ—Հ. Ա.  
 VIII. Խրիմեան Հայրիկ—Յ. Տէր-Մովսէսեանց.  
 IX. Անձնագրահ նապաստակ (Շչեղբիւնից) Շիրուանզաղէ.

- X. Նամակներ իմ ընկերին—Ընկեր.
- XI. Մի պատասխան—Ս. Հախում.
- XII. Մամուլի տեսութիւն.
- XIII. Յայտարարութիւններ:



մեն մի գործ, եթէ մի մարդ սկսում է, աչքի առաջ է ունենում մի նպատակ՝ որ սուրբ է, անհրաժեշտ է իւր կարծիքով: Իւր աքանջիւր լրագիր որ սկսուել է, նորա խմբագիրը պատրաստուած է եղել մի գաղափար, մի նպատակ տարածելու: Պ. Սիմէօն Հախումեան Գրականական Կոալիցիոն եւ Կոալիցիոն «Գործ» անունով մի ամսօրեայ Հանդէս սկսեց Հրատարակել 1882-ից: Անունով «ամսագիր» էր «Գործ», բայց տարին մի Համար էր դուրս գալիս: Երրորդ տարին կամ երրորդ գիրքը 1884-ի մայիսի սկիզբներին յայտնուեցաւ, եւ կարծեմ որ այդ, «Գործի» վերջին Համարն եղաւ:

Եթէ «Գործի» Հրատարակութիւնը կանոնաւոր լինէր, կարող էր դառնալ ժամանակակից «Մուրճ», որովհետեւ նորա մէջ տրպագրուում էին լուրջ եւ պիտանի յօդուածներ: 1884 թուականի կաթող. ընտրութեան ժամանակ «Գործը» պաշտպանում էր «Նոր-Գարի» թեկնածութիւնը:

«Գործի» աշխատակիցներից լինենք՝ Երուսաղէմ, Յ. Տէր-Մովսիսեան. Հ. Առաքելեան, Սրինգ, Ս. Թադէոսեան եւ այլք:

**Թ Ա Ն Օ Ք Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .**

1.) «Գործ» ամսագիրը եւ մեր աղբիւրները.

ա՛, ... Ստացանք «Գործ» ամսագրի երրորդ տարուայ առաջին Համարը. դորա բովանդակութեան մասին մենք կանխաւ տպագրել էինք: ... Յանկանում ենք յաջողութիւն «Գործին» եւ սպասում ենք, որ նա այսուհետեւ կանոնաւոր կը Հրատարակուի «Նոր-Գար» 1884 № 72. էջ 2.

2.) Նախ Երկրիւմ:

128.



**ՄԱՆԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՍՈՒԼ.**

Տփիսիս (Ռուսաստան) 1882-1884  
Հրատարակուում էր՝ ամսի կիսերին.  
Խմբագիր-Հրատարակիչ՝ Նիկողայոս Խոսրովեան.

Տպարան՝ Մովսէսի Վարդանեան.  
Գիրքը (տետր) 4 տպ. թերթ. 128 էջ  
16x25 Հ-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.  
Բաժանորդագիրն ը՛ տարեկան Հինգ (8)  
րուբլի.

Լեզուն, ոճը՝ } ... Մեզ լուրեր են հասնում  
Ուղղագրութ. } և շատերից անծամբ լսել ենք,  
որ խմբագրութեանս իրրև թէ՛:  
Ծրագիրը՝

Ա. Ազգիս Վեհափառ Հայրապետի եւ թեմական վերատեսուչների կարգադրութիւնները, ազգային ուսումնարանաց վերաբերութեամբ:

Բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ-Յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ:

Գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—Յօդուածներ, պատմութեան, աշխարհագրութիւն, դրականութեան, տոհմագրութիւն եւ լեզուի վերաբերութեամբ:


ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—Քննական յօդուածներ. դասագրքերի եւ մանկական ընթեր-

Հաշակ չը կարողացաւ վաստակել: Ամսագիրը Հրատարակուում էր իւր մի քանի տասնեակ բաժանորդների համար: 1888 թուականի վերջերին այս հանդէսը դադարուեցաւ:

**Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .**

- 1.) «Շարժում Գրակ. եւ Իմաստասիրական» եւ մեր աղբիւրները—
  - ա. «... Գրական եւ Իմաստասիրական Շարժում» խմբագրութեամբ Եղիա Տէմիրճիպաշեանի . . .»
  - „Նոր-Դար“ 1886 № 1. էջ 3.
  - բ. „Գրական եւ Իմաստասիրական Շարժում ամսաթերթ Կ. Պ. խմբ. Ե. Տէմիրճիպաշեան . . .»
  - „Հանդ. Ամսօր.“ 1889 էջ 261.
  - գ. „Շարժում գրական-փիլիսոփայական . . .»
  - „Հայկակ. մատենադ.“ Բ. էջ 155.
  - [„... „Scharsum, (Bewegung), litterarisch-philosophische . . .»
  - „Arm. Bibliot.“ II. էջ 155.

127.



**ԳՐԱԿԱՆԿԱՆ-ՔՈՂԱՔՈՒԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ**

**ԱՄՍԱԳԻՐ**

- Տ փ ի ի ս 2.) (Ռուսաստ.) 1882-1884.
- Հրատարակուում էր՝ ամսի սկիզբներին.
- Խ մ բ ա գ ի Ր-Հրատարակող՝ Սիմէօն Հախումեան.
- Տպարան Ս. Վարդանեանի եւ Ընկ.
- Դ ի Ր ք Ր (գիրք) 3 տպ. թերթ. 36 էջ 17×26 հ-մետր.

- Թ ու Ղ թ Ր եւ տիպը՝ մաքուր.
- Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն Ր՝ տարեկան ութը ըուբլի.
- Լ ե գ ու ն ո ճ Ր } „... Ծանր և յուսահատական է նրա համար որ մինչ Ուղղագրութ. } դեռ շահատեսական սկզբանց“
- Ծրագիրը՝
- Ա. Ժամանակագրութիւն, տէրութեան կարգադրութիւններ, ռուսաց արտասահմանի եւ Կովկասի նորութիւններ:
- Բ. Քննական յօդուածներ հայերի եւ նոցա դրացի ազգերի տնտեսական, բարոյական եւ մտաւորական դրութեան մասին:
- Գ. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ, ինքնակրօն եւ թարգմանական:
- Դ. Մտտենախօսութիւն—Քննութիւն հայերէն լեզուով տպագրուող, նոյնպէս եւ այն օտար գրքերի որոնց նիւթը հայոց ու Կովկասեան, կեանքից է առնուած:
- Ե. Քաղաքական տեսութիւն.
- Զ. Ներքին տեսութիւն.
- Է. Մանկավարժական ժամանակագրութիւն.
- Ը. Այլ եւ այլք.
- Թ. «Յաւելուած» եւրոպական եւ ռուսաց հեղինակների գրուածներ, թարգմանութիւններ:
- Ժ. Յայտարարութիւններ.
- Բովանդակութիւն 1884 № 1.
- I. Ընթերցողներին—(Խմբ.)
- II. Երեւում են (պատկեր)—Շիրուան-զագէ.
- III. Բժիշկ կանայք Հնդկաստանում-Ս. Թադէոս.
- IV. Սիրոյ երգ (ոտանաւոր)—Պատահակ.
- V. Սիմէօնի հայրը (Գիւգը-Մոպսս.) Հ. Մատոյ.
- VI. Գեղուկի յոյսը (ոտանաւոր)-Սբինգ.
- VII. Բուրժուազեան մեր գրականութեան մէջ—Հ. Ա.
- VIII. Խրիմեան Հայրիկ—Յ. Տէր-Մովսէսեանց.
- IX. Անձնագուհի նապաստակ (Շէքերինից) Շիրուանզագէ.

- X. Նամակներ իմ ընկերին—Ընկեր.
- XI. Մի պատասխան—Ս. Հախում.
- XII. Մամուլի տեսութիւն.
- XIII. Յայտարարութիւններ:



մեն մի գործ, եթէ մի մարդ սկսում է, աչքի առաջ է ունենում մի նպատակ՝ որ սուրբ է, անհրաժեշտ է իւր կարծիքով: Իւր աքանչիւր լրագիր որ սկսուել է, նորա խմբագիրը պատրաստուած է եղել մի գաղափար, մի նպատակ տարածելու: Պ. Սիմէօն Հախումեան Գրականայն Կազմայն «Գործ» անունով մի ամսօրեայ Հանդէս սկսեց հրատարակել 1882-ից: Անունով «ամսագիր» էր «Գործ», բայց տարին մի Համար էր գուրս գալիս: Երրորդ տարին կամ երրորդ գիրքը 1884-ի մայիսի սկիզբներին յայտնուեցաւ, եւ կարծեմ որ այդ, «Գործի» վերջին Համարն եղաւ:

Եթէ «Գործի» հրատարակութիւնը կանոնաւոր լինէր, կարող էր դառնալ ժամանակակից «Մուրճ», որովհետեւ նորա մէջ տրպագրուում էին լուրջ եւ պիտանի յօդուածներ: 1884 թուականի կաթող. ընտրութեան ժամանակ «Գործը» պաշտպանում էր «Նոր-Գարի» թեկնածութիւնը:

«Գործի» աշխատակիցներից լիշենք՝ Երուանզադէ, Յ. Տէր-Մովսիսեան. Հ. Առաքելեան, Սրինգ, Ս. Թաղէոսեան եւ այլք:

**Թ Ա Ն Օ Ք Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .**

1.) «Գործ» ամսագիրը եւ մեր աղբիւրները:

ա՛ . . . Ստացանք «Գործ» ամսագրի երրորդ տարուայ առաջին Համարը. դորա բովանդակութեան մասին մենք կանխաւ տպագրել էինք. . . Յանկանում ենք յաջողութիւն «Գործին» եւ սպասում ենք, որ նա այսուհետեւ կանոնաւոր կը հրատարակուի՝ «Նոր-Գար» 1884 №: 72. էջ 2.

2.) Նախ Շուշինում:



**ՄԵՆԿՈՎՈՐԹՆԵՆ ԱՄՍԵՒՐ .**

- Տ փ խ ի ս (Ռուսաստան) 1882-1884  
Հրատարակուում էր՝ ամսի կիսերին.  
Խմբագիր-Հրատարակիչ՝ Նիկողայոս Խոսրովեան.
- Տ պ ա ռ ա ն՝ Մովսէսի Վարդանեան.
- Գ ի Ր ք Ր (տետր) 4 տպ. թերթ. 128 էջ 16x25 Հ-մետր.
- Թ ու Ղ թ Ր եւ տիպը՝ մաքուր.
- Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ի ն Ր՝ տարեկան Հինգ (8) ըուբլի.
- Լ ե զ ու ն, ո ճ Ր՝ } . . . Մեզ լուրեր են հասնում  
Ուղղագրուութ. } և շատերից անձամբ լսել ենք,  
որ խմբագրում ենան իրրև. Թէ՛:
- Ծ Ր ա գ ի Ր Ր՝
- Ա. Ազգիս Վեհափառ Հայրապետի եւ թեմական վերատեսուչների կարգադրութիւնները, ազգային ուսումնարանաց վերաբերութեամբ:
- Բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ-Յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ:
- Գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—Յօդուածներ, պատմութեան, աշխարհագրութիւն, գրականութեան, տոհմագրութիւն եւ լեզուի վերաբերութեամբ:
- ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—Քննական յօդուածներ. դասագրքերի եւ մանկական ընթեր-



ցանութեան գրքերի:

Ե. ԱՅԼԵԻԱՅԼՔ—Ձանազան տեղեկութիւններ Ռուսաստանի եւ արտասահմանի ուսումնարանական կեանքից:

Զ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բովանդակութիւն 1883 № 2.

Կաթնուղիկոսական ընտրութ. մասին (խմբ.)

Մսակեր բոյսեր—Ա. Պ. Քիշմիշեանց.

Գիտութիւնը եւ իսլամականութ. Փ.

Վարդանեանց.

Խղճի ձայնը մանկակ. Հասակում-Գ. Շահբ.

Մի փոքրիկ նկատողութիւն-Յով. Նազար.

Մատենախօսութիւն—Կ. Կոստանեանց.

Այլեւայլք.

Մանկական բաժին—ա.) Համբ. բ.)

Փախստական (Լեւոնոնգովից) գ.) Խալ-

խալ անեմ աղուն անեմ:

Զուարճալիք—Հանելուկներ, խնդիրներ

—Յայտարարութիւններ:



այոց մէջ եղած մանկավարժական հրատարակութիւնները՝ ինչպէս եւ մանկավարժները ստեղծուել են Ռուսաստանում: «Հայկական Աշխարհի, «Բաստարակի», «Բարոցի» եւ «Մանկավարժական Թերթի» գործունէութիւններից յետոյ, 1882 թուականին որ այդպիսի բովանդակութեամբ պարբերական հրատարակութիւն չունէինք, պ. Նիկողայոս Խոսրովեան: օգոստոս ամսից սկսեց Տիփլիսում հրատարակել «Վարժարան» մանկավարժական ամսագիրը:

«... Ամեն կողմից տեսնում ենք, որ հայն ուսում եւ կրթութիւն է ցանկանում,

բայց այդ ցանկութիւնը շատ տեղերում դեկավարների պակասութեան պատճառով մընում է անկատար եւ մեր ազգի առաջ գընալու այդ միակ ճանապարհը չէ հարթընունում... ընդունելով այսքան ծանր բեռն իւր վերայ, «Վարժարանը» յուսով է դոնեայ մասամբ հասնելու այն նպատակներին, որ համառօտապէս վերը գծագրեցինք: Մեզ սիրելի է յուսալ որ հայ ընտանիքը եւ հայ ուսուցիչը ու վարժուհին, հայ մանկանց դաստիարակութեան գործում իւրեանց օժանդակ կարող կը լինին առնել «Վարժարանը»՝ որ կաշխատի իւր կարողութեան չափ ծառայել ազգային լուսաւորութեան նուիրական գործին: ...»

Այսպիսի յոյսերով պ. Խոսրովեան սկսեց իւր գործունէութիւնը, ամեն կերպ ջանալով հարուստ նիւթեր տալու հայ ուսուցիչներին եւ ընթերցողներին ընհանրապէս...»

«Վարժարանի» նպատակն էր «...հեռու պահելով իւրեան անձնական յարձակմունքներից եւ կուսակցական հաշիւներից, քննութեան առնել հայ ուսումնարանի ներկայ (80-ական թուականների) դրութիւնը եւ միջոցներ ցոյց տալ նորան ժամանակի պահանջներին համապատասխան դիրք բռնելու համար...» նպատակ հարթելու ազգային կրթութեան փշալից ուղին, առաջնորդելով ժողովրդեան մէջ գործելու փափաք ունեցող անձանց եւ միջոցներ տալով նոցա ժողովրդեան պահանջին բաւականութիւն տալու... տալ հայ ուսանողի ընթերցանութեան, զանազան հասակների համար վէպեր, զրոյցներ, զուարճալիքներ եւ բանասիրական յօդուածներ ազգային կեանքից...»: Ահա այսպիսի մի գեղեցիկ, ազգօգուտ եւ անհրաժեշտ նպատակով ամսագրի գոյութիւնը տեսեց ընդամենը երկու տարի: Սկզբից խրախուսողներ փառաբանողներ անթիւ էին, բայց նիւթական «օժանդակ լինել» չէին կարող:

«Վարժարանի» լոյս տեսնելու պէս, բարոյական պարտականութիւն հաշուեցին իւ-

րեանց աշխատակցել նոր ամսագրին մեր մանկավարժական աշխարհի մէջ անուն վաստակած անձեր՝ Սեդրակ Մանգինեան, Կարապետ Կոստանեան, Աբիս. Յովհաննիսեան, Յ. Չիգիանեան, օր. Գայանիէ Յովհաննիսեան (այժմ տիկ. Գայանիէ Մատակեան Կ. Պոլսում յայտնի մանկավարժ.) Փ. Վարդանեան, Ս. Պալասանեան, Առաքել Բահաթրեանց, Ղ. Աղայեանց, Ս. Բէկ-Նազարեանց, Ա. Սպարապետեան, Գր. Երզնկեան, Աղ. Արարատեան: Մասնաւոր գրուածքներով մասնակցողներից յիշենք՝ Գամառ-Քաթիպա, Լօրդ (Իս. Յարութիւնեան) Աղէքսանդր Քիշմիշեան, Գր. Շահբուղդեան:

«Վարժարան» իւր առաջին տարին կանոնաւորապէս հրատարակուեցաւ՝ 1882-ի օգոստոսից 1883-ի օգոստոս: Բ. տարուայ 2-դ տետրակի (սեպտեմբ.) վերայ կանգ առաւ «բաժանորդների աննշան քանակութեան» համար: Չորս ամիս դադարուած մնալով հետեւեալ 1884 թուականի փետրուար ամսից նորից սկսեց հրատարակուել: «Այսպէս չորս ամիս դադարելուց յետոյ—գրում է պ. խմբագիրը—մենք նորից ձեռնամուխ ենք լինում «Վարժարանի» հրատարակութեանը: Այս չորս ամսուայ ընթացքում հանդիսիս բաժանորդների թիւը թէեւ զգալի կերպով չաւելացաւ, բայց եւ այնպէս մենք մանկավարժական օրգանի կարեւորութիւնը շատ կարեւոր համարելով, վճռեցինք ամենայն տեսակ դժուարութիւններին յաղթելով, շարունակել, նորա հրատարակութիւնը . . .»

Ափսոս որ պ. խմբագիրը իւր խօստման համեմատ չը կարողացաւ «ամենայն տեսակ դժուարութիւնների» դիմանալ. 1884 թ. սեպտեմբերի վերջին բոլորովին դադարեց վերջին չորս տետրակները միասին հրատարակուելով: Պ. Խոսրովեան «Վարժարանի» վերջին համարում մի առաջնորդող յօդուած գրեց «Վարժարանի վերջնական դադարումը» վերնագրով, հայկական հետեւեալ առածը նշանաբան ունենալով՝ «գնա մեռի, արի սիրեմ»: Այս յօդուածի մէջ պ. խմբագիրը գայ-

րանում է իւր քննադատների վերայ: «... Վարժարանը» իւր գոյութեան ընթացքում կարողացաւ այն անել, ինչներում էին նորա ոյժերը. հիւրընկալել այն մանկավարժների գրուածները, որոնք ներկայումս գոնէ մեր մէջ առաջինն են: Մենք էինք սխալ ուղղութեան հետեւում եւ տուժեցինք թէ ուսուցչաց սառն անտարբերութիւնն էր «Վարժարանի» խափանման պատճառ, այդ թողնում ենք պատմութեանը»:

Մենք ասում ենք որ «Վարժարանի» խափանման պատճառը ոչ թէ «խալ ուղղութիւնն էր, այլ ուսուցչաց սառն անտարբերութիւնն էր, այլ օրին հարցնողը: 900 հայ ուսուցիչներից 50-ը միայն բաժանորդ էին «Վարժարանի»: Իսկ ամսագրիս վճարող բոլոր բաժանորդների թիւը 170-ից չանցկացաւ: Իհարկէ մի հրատարակութիւն եթէ չունեցաւ բաւարար ստորագրուողներ, անշուշտ կը դադարուէ: Բայց կհրարդեօք մի պատճառ որ ուսուցիչները շատ չէին ստորագրուում «Վարժարան»ին. շեշտելով ենք ասում որ կհրար: Պ. Խոսրովեանի ամսագրի մէջ յաճախ պատահում էին այնպիսի գրուածներ, որոնք պէտք է խօստովանել որ բարձր էին մի շարք ուսուցիչների հասկացողութիւնից: Փիլիսոփայական խրթին յօդուածներ էր տրպարուում «Վարժարանի» մէջ, որ անմարս ու անհասկանալի էին շատերի համար. դորա համար գուցէ «Վարժարան» այն ընդունելութիւնը չունեցաւ ուսուցչական շրջաններում, ինչ որ ունեցաւ. «Հայկական Աշխարհը»: «Վարժարանը» իւր գոյութեան ընթացքում մի օր չը քննեց մեր դպրոցների ներքին կեանքը, լաւ եւ վատ կողմերը: Այս մասին մանրամասն գրուած կայ «Նոր-Պար» լրագրի 1884 թ. № 133-ի մէջ թէ ինչպէս նոյն թուի օգոստոսի 12-ին տասնից աւելի ուսուցիչներ հաւաքուելով «Մեղուի» խմբագրատունը, «Վարժարանի» հրատարակութիւնը շարունակելու համար են աշխատել: Ժողովի մէջ ուսուցիչներից «գտնուեցան երկուսը» որոնք բացատրեցին «Վար-

ժարանի» անյաջողութեան պատճառները ասելով թէ «Վարժարանը» որ դադարում է դրա պատճառը պարոնը (Ն. Խոսրովեանը) թող չորոնէ ուսուցիչներին անտարբերութեան եւ դէպի իրան պատասխանի թուլութեան մէջ, այլ նորա մէջ, որ «Վարժարանը» մինչեւ ցայսօր շատ քիչ կամ բոլորովին չէ համապատասխանել հայ ուսուցիչների պահանջին:

Հանդիսիս խմբագրութիւնը «Վարժարանի» վերջում երբեմն կցում էր որպէս յաւելում «Մանկական Բաժին» որը պարունակում էր իւր մէջ բաւականին հետաքրքիր նիւթեր, հեքեաթներ, զրոյցներ, զրուարճալիք, հանելուկներ, խնդիրներ եւ այլ մանկական ընթերցանութեան յարմար նիւթեր: Այս բաժնի մէջ առանձնապէս աշխատակցում էր հանգուցեալ Աղէքսանդր Արարատեան:

«Վարժարանը» այժմ էլ որ լինէր, իւր մասնագիտութեան մէջ առաջնակարգ տեղը կարող էր բռնել, բայց ամփոս որ «արեւը կտուրից» անցկենալուց յետոյ միայն զգում ենք մեր պակասութիւնը, որ չը կարողացանք օգնել, ու ստիպեցինք դադարելու: Երկու տարի ինչպէս յիշեցինք ապրեցաւ «Վարժարան». 1884 թ. սեպտեմբերի վերջին գաղար առաւ, հայ մանկավարժական գործի մէջ մի բարի յիշատակ թողնելով:

**ԻՆՏԵՐՍԻՏԻՆՆԵՐ.**

- 1.) «Վարժարան» եւ մեր աղբիւրները—
  - ա. .... «Վարժարանը» ապարէզ էր այնպիսի անձերի, ինչպիսիք են Բահաթըրեան, Պալասանեան, Մանդինեան, Աղայեան եւ ուրիշները . . . չենք կարող չը համաձայնուել «Վարժարանի» խմբագրութեան հայ մամուլի լուծեան մասին արած նկատողութիւնների առթիւ . . .»
  - բ. «Նոր-Պար» 1884. № 133.
  - բ. «Վարժարանը այն համեստ, խելացի, պարկեշտ ամսագիրն էր, որ իւր յատկութեամբ, կատարեալ համապատաս-

խան էր իւր բովանդակութեան, դաստիարակչական նպատակին: Համեստ էր ուստի եւ ազնիւ նորա ծագումը, նշանաւոր էր նորա գոյութիւնը եւ կեանքը լի մտածութեամբ եւ գիտնականութեամբ եւ անտրտունջ իւր չքաւոր սնդկով: Նորա աշխատակիցները կրում էին պատուական անուններ, համբաւարեր, փորձառու, ուսումնական, դաստիարակիչք . . .»

«Մեղու Հայաստ.» 1885. № 3.

129.

**ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ** <sup>1.)</sup>

**Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ**

**ՀԱՌԱՔԱԾՈՅ**

**ՐՐՐՈՐԿԱՆ, ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԿՆ, ՊԵՏՐԵԱՆ, ՌԻՍՈՒՄՆԵՐՈՒԿՆ, ԸՅԹԵՐՀՈՎՐԵՎՈՆ**  
 ԵՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ.

(Կիսամսեայ)

**ՄԱՆԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՄՈՆԻՐՈՒՄՆԵՐ, ԶՈՒՐՐՈՒԼԻ ԻՈՂՐԵ-**

Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1882-1889.  
 Հրատարակուում էր ամսի 1, 15-ին.  
 Հրատարակիչք (2.) Նշան Կ. Պերպերեան եւ Ս. Տէօփլաթեան.  
 Խմբագիր՝ Կ. Կարակիլեան.  
 Տպագրութիւն՝ Նշան Կ. Պերպերեան.  
 Դիւրքը (տետր.) <sup>1</sup>/<sub>2</sub> թերթ տպ. 16 էջ  
 2-սիւն. 19×26 հ.-մետր.  
 Թուղթը եւ տիպը՝ վայելուչ.  
 Բաժանորդագիրն՝ տարեկան 2 արծ.  
 մէճիտ.  
 Լեզուն, ոճը } «... Մեծ. Մ. Մամուրեան էֆ. խոստացած է մեզ շա- Ուղղագրութ. } րունակել նս եւ գալ տարի...»  
 Ծրագիրը՝  
**ԲԱՐՈՅԱԿԱՆ**—Առական, խրատներ, եւ այլ բարոյական յօդուածներ:  
**ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԿԱՆ**—Յօդուածներ կրօնական

բնաւորութեամբ, աղօթքներ . . .

ՊԱՏՄԱԿԱՆ.— Հայոց եւ օտար պատմութիւններից գրուածքներ, վէպեր . . .

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.— Գիտութեան այլ եւ այլ ճիւղերից համառօտ տեղեկութիւններ, գեղարուեստ, բնութիւն . . .

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Ճանապարհորդական նկատողութիւններ տեղագրութիւն եւ այլն: ԵՒ ԱՅԼ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ մասին տեղեկութիւններ, մանկական թատրոն, կենսագրութիւն, վէպեր, զուարճալի խաղեր, հանելուկներ, խնդիրներ, առտնին տնտեսութիւն.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . .

Բովանդակութիւն 1884 տետր. 22.

Յայտարարութ. 1885 տարւոյ. (խմբ.)

— Առ դատրիկն քերթողին (ոտանաւոր) Լամարտինից՝ Աղէք. Գ. Փանոսեան.

— Պէպիկը (մանկական թատերգութ.)

— Հրաշից վերայ— Պօսիւէ՝— Մխիթար.

— Յակոբ եւ իւր բարեկամները (շարուն.)

պաշտ. Գ. Յակովբեան:

— Սեբաստիա— Սեւաստ. (շարունակելի) (պատկերով).

— Առտնին տնտեսութիւն մասն բ. (շարուն.) Մ. Մամուրեան.

— Դիւցազունք աշխատութեան (շարուն.) (Բիչարդ Քօպտրնի նկարով)

— Յայտարարութիւններ.

— Հանելուկ.



թէ մեր պարբերական հրատարակութեանց մէջ ունեցել ենք մի մանկական կատարեալ հանդէս՝ որ իսկապէս ծառայել է իւր նպատակին, մատաղ սերնդին դաս-

տիարակելով եւ հայ ընտանեաց տնտեսութիւն սովորեցնելով, այդ «Բուրաստան Մանկանց» կիսամսեայ հրատարակութիւնն էր, որը 1882 թուականից Կոստանդնուպոլսում սկսեց հրատարակուել մեծ. Նշան էֆ. Պերպերեանի եւ պ. Տէովլէթեանի հրատարակչութեամբ եւ Կ. Գարակիւլեանի խմբագրութեամբ:

Արտաքին տեսքով որ վայելուչ ու դեղեցիկ էր «Մանկանց Բուրաստանը», ներքին կողմով էլ պակաս չէր: Պ. Պերպերեանի հանդէսն իւր համեստ ծրագրով իւր ժամանակին կատարեալ ազդեցութիւն ունեցաւ հայ մանկական աշխարհի զարդացման գործին: Մեծ. Մ. Մամուրեանի «առտնին տնտեսութիւն», վերնագրով յօդուածները անգին նիւթեր էին «Բուրաստանի» մէջ:

«Բուրաստան Մանկանց» հետզհետէ յառաջադիմեց, ամեն հայ ընտանիք անհրաժեշտ էր հաշուում այդ երկշաբաթաթերթի ստանալը: Բիչ ժամանակում «Բուրաստանի» ստորագրողների թիւը հազարից անցկացաւ: Պ. Պերպերեան Չարդարեանի տպարանից իւր հանդէսը փոխադրեց սեփական տպարան:

Մի խօսքով հետզհետէ ճոխանում ու ընդարձակուում էր «Բուրաստանի» դործը: Վերջին տարիներում «Բուրաստանի» խմբագրութիւնը յարմար դատեց իւր բաժանորդների մէջ վիճակ ձգել 40-50-ի չափ նշանաւոր հիղինակաների գրքեր, «Փափաւական Հրեայ» «Մօնթէ Քրիստօ» եւ այլն: Հանդիսի նկարներն ու պատկերներն էլ քանի գնում բազմանում էր ու դեղեցկանում: Վերջերքս «Բուրաստանի» էջերում երեւում էին հուշակաւոր հայ նկարիչ պ. Այուլազովաքու վրձինի արդիւնքները: Ցաւալի էր եւ մի անգամայն ամսոսալի, որ այժմ դադարուած է այդ հրատարակութիւնը, որի նմանը չենք ունեցել եւ այժմ էլ չունիք: Փափաքելի էր որ նորից շարունակէր իւր հրատարակութիւնը պ. հրատարակիչը:

«Բուրաստանի» հրատարակութիւնը տեւ-

ժարանի» անյաջողութեան պատճառները ասելով թէ «Վարժարանը» որ դադարում է դրա պատճառը պարոնը (Ն. Խոսրովեանը) թող չորոնէ ուսուցիչներին անտարբերութեան եւ դէպի իրան պաշտօնի թուլութեան մէջ, այլ նորա մէջ, որ «Վարժարանը» մինչեւ ցայսօր շատ քիչ կամ բոլորովին չէ համապատասխանել հայ ուսուցիչներին պահանջին:

Հանդիսիս խմբագրութիւնը «Վարժարանի» վերջում երբեմն կցում էր որպէս յաւելուած «Մանկական Բաժին» որը պարունակում էր իւր մէջ բաւականին հետաքրքիր նիւթեր, հեքեաթներ, զրոյցներ, զրուարձալիք, հանելուկներ, խնդիրներ եւ այլ մանկական ընթերցանութեան յարմար նիւթեր: Այս բաժնի մէջ առանձնապէս աշխատակցում էր հանգուցեալ Աղէքսանդր Արարատեան:

«Վարժարանը» այժմ էլ որ լինէր, իւր մասնագիտութեան մէջ առաջնակարգ տեղը կարող էր բռնել, բայց ափսոս որ «արեւը կտուրից» անցկենալուց յետոյ միայն զգում ենք մեր պակասութիւնը, որ չը կարողացանք օգնել, ու ստիպեցինք դադարելու: Երկու տարի ինչպէս յիշեցինք ասպրեցաւ «Վարժարան». 1884 թ. սեպտեմբերի վերջին դադար առաւ, հայ մանկավարժական գործի մէջ մի բարի յիշատակ թողնելով:

**Ի Ը Ն Յ Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ն Ե Ր .**

- 1.) «Վարժարան» եւ մեր աղբիւրները—  
 ա. . . . . «Վարժարանը» ասպարէզ էր այնպիսի անձերի, ինչպիսիք են Բահաթըրեան, Պալաստեան, Մանգինեան, Աղայեան եւ ուրիշները . . . չենք կարող չը համաձայնուել «Վարժարանի» խմբագրութեան հայ մամուլի լուրթեան մասին արած նկատողութիւնների առթիւ . . . . .  
 «Նոր-Ռար» 1884. № 133.  
 բ. . . . . «Վարժարանը այն համեստ, խելացի, պարկեշտ ամսագիրն էր, որ իւր յատկութեամբ, կատարեալ համապատաս-

խան էր իւր բովանդակութեան, դաստիարակչական նպատակին: Համեստ էր ուստի եւ ազնիւ նորա ծագումը, նշանաւոր էր նորա գոյութիւնը եւ կեանքը լի մտածութեամբ եւ գիտնականութեամբ եւ անտրտունջ իւր չքաւոր սնդկով: Նորա աշխատակիցները կրում էին պատուական անուններ, համբաւարներ, փորձառու, ուսումնական, դաստիարակիչք . . . . .  
 «Մեղու Հայաստ.» 1885. № 3.

129.

**ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ** <sup>1.)</sup>

**Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ**

**ՀԱՌԱՔԱԾՈՅ**

**ՐԱՐՈՇԱԿԱՆ, ՔՐԻՍՏՈՆԷՆԿԱՆ, ՊԵՏՐՎԿԱՆ, ԻՍՈՒՄՆԵՆԿԱՆ, ԸԹԻՈՐՀՈՒԴԱԿԱՆ**  
 ԵՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ.

(Կիսամսեայ)

**ՄԱՆԿԱԿԱՆ ՎԷՊԵՐ, ՄԱՆԵՐՎԷՊԵՐ, ՋՈՒՐԱՎՈՒ ԽՈՂԵՐ-**

- Կ ո ս տ ա ն դ ն ու պ ու լ ի ս (Տաճ.) 1882-1889.  
 Հրատարակուում էր ամսի 1, 15-ին.  
 Հրատարակիչք (2.) Նշան Կ. Պերպերեան եւ Ս. Տէօվլաթեան.  
 Խմբագիր՝ Կ. Կարակիրեան.  
 Տպագրութիւն՝ Նշան Կ. Պերպերեան.  
 Դիրքը (տետր.) 1½ թերթ տպ. 16 էջ 2-սիւն. 19X26 հ.-մետր.  
 Թուղթը եւ տիպը՝ վայելուչ.  
 Բաժանորդագրիւնը՝ տարեկան 2 արծ. մէճիտ.  
 Լեզուէն, ոճը } . . . Մեծ. Մ. Մամուրեան էֆ. խոստացած է մեզ շա՛նկալի նա եւ գալ տարի. . . . .  
 Ծրագրիւրը՝  
 ԲԱՐՈՑԱԿԱՆ—Առականեր, խրատներ, եւ՛ այլ բարոյական յօդուածներ:  
 ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ—Յօդուածներ կրօնական

- բնաւորութեամբ, աղօթքներ . . .
- ՊԱՏՄԱԿԱՆ**—Հայոց եւ օտար պատմութիւններից գրուած քննարկ, վէպեր . . .
- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ**—Գիտութեան այլ եւ այլ ճիւղերից համառօտ տեղեկութիւններ, գեղարուեստ, բնութիւն . . .
- ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ** — Ճանապարհորդական նկատողութիւններ տեղադրութիւն եւ այլն: Ե՛ի ԱՅԼ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ մասին տեղեկութիւններ, մանկական թատրոն, կենսագրութիւն, վէպեր, զուարճալի խաղեր, հանելուկներ, խնդիրներ, առտնին տնտեսութիւն.
- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** . . .
- Բովանդակութիւն 1884 տետր. 22.
- Յայտարարութ. 1885 տարւոյ. (խմբ.)
- Առ դատրիկն քերթողին (ոտանաւոր) Լամարտինից՝ Աղէք. Գ. Փանոսեան.
  - Պէպիկը (մանկական թատերգութ.)
  - Հրաշից վերայ—Պօսիւէ՝—Մխիթար.
  - Յակոբ եւ իւր բարեկամները (շարուն).
- պաշտ. Գ. Յակովբեան:
- Սեբաստիա—Սեւաստ. (շարունակելի) (պատկերով).
  - Առտնին տնտեսութիւն մասն բ. (շարուն.) Մ. Մամուրեան.
  - Գիւցազունք աշխատութեան (շարուն.) (Բիչարդ Գօպարնի նկարով)
  - Յայտարարութիւններ.
  - Հանելուկ.



թէ մեր պարբերական հրատարակութեանց մէջ ունեցել ենք մի մանկական կատարեալ հանդէս՝ որ իսկապէս ծառայել է իւր նպատակին, մատաղ սերնդին դաս-

տիարակելով եւ հայ ընտանեաց տնտեսութիւն սովորեցնելով, այդ «Բուրաստան Մանկանց» կիսամսեայ հրատարակութիւնն էր, որը 1882 թուականից Կոստանդնուպոլսում սկսեց հրատարակուել մեծ. Նշան էֆ. Պերպերեանի եւ պ. Տէովլէթեանի հրատարակութեամբ եւ Կ. Գարակիւլեանի խմբագրութեամբ:

Արտաքին տեսքով՝ որ վայելուչ ու դեղեցիկ էր «Մանկանց Բուրաստանը», ներքին կողմով էլ պակաս չէր: Պ. Պերպերեանի հանդէսն իւր համեստ ծրագրով իւր ժամանակին կատարեալ ազդեցութիւն ունեցաւ հայ մանկական աշխարհի զարգացման գործին: Մեծ. Մ. Մամուրեանի «առտնին տնտեսութիւն», վերնագրով յօդուածները անդին նիւթեր էին «Բուրաստանի» մէջ:

«Բուրաստան Մանկանց» հետզհետէ յառաջադիմեց, ամեն հայ ընտանիք անհրաժեշտ էր հաշուում այդ երկշաբաթաթերթի ստանալը: Քիչ ժամանակում «Բուրաստանի» ստորագրողների թիւը հազարից անցկացաւ: Պ. Պերպերեան Չարգարեանի տպարանից իւր հանդէսը փոխադրեց սեփական տպարան:


Մի խօսքով հետզհետէ ճոխանում ու ընդարձակուում էր «Բուրաստանի» գործը: Վերջին տարիներում «Բուրաստանի» խրմբագրութիւնը յարմար դատեց իւր բաժանորդների մէջ վիճակ ձգել 40-50-ի չափ նշանաւոր հիղինականների գրքեր, «Քափառական Հրեայ» «Սօնթէ Քրիստո» եւ այլն: Հանդիսի նկարներն ու պատկերներն էլ քանի գնում բազմանում էր ու գեղեցկանում: Վերջերքս «Բուրաստանի» էջերում երեւում էին հուշակաւոր հայ նկարիչ պ. Այուլազովօքու վրձինի արդիւնքները: Ցաւալի էր եւ մի անգամայն ափսոսալի, որ այժմ դադարուած է այդ հրատարակութիւնը, որի նմանը չենք ունեցել եւ այժմ էլ չունիք: Փափաքելի էր որ նորից շարունակէր իւր հրատարակութիւնը պ. հրատարակիչը:

«Բուրաստանի» հրատարակութիւնը տեւ-

եց եօթը տարի, 1889 թուականին այլ եւս չէր երեւում:

**ԹՐՆՈՐԱՍՏԻՆՆԵՐ.**

- 1.) «Բուրաստան Մանկանց» եւ. աղբիւրներ:
  - ա. «Բուրաստան Մանկանց. երկշաբաթաթերթ պատկերազարդ, է. տարի, 4. Պ. սպարան եւ տէր տնօրէն՝ Ն. Կ. Պերպերեան.»
    - «Հանդ. Ամսօր.» 1889. էջ 261.
  - բ. «Բուրաստան Մանկանց Կ. Պոլիս 1881 (՝)»
    - «Մատենագ. Հայկակ. Չարբան. էջ 119
  - գ. «Եւրաքանչիւր Համարը դարդարած է գեղեցիկ պատկերներով պէտք է ասել որ «Բուրաստանին» գործակցում են Քիւրքիայի գրականական ընտիր ոյժերը. . .»
    - «Նոր-Դար» 1888 Ն: 4. էջ 2.
  - դ. «Բուրաստան Մանկանց խմբ. Հրատ. Պերպերեան եւ Դէօլլէթեան 1882-ից Հիմա (՝) Կ. Պոլիս»
    - «Հայոց արդի մատենագր.» (Ճեռագ.)
  - ե. «Կոստանդնուպոլսում» «Բուրաստան Մանկանց . . .»
    - «Հայկակ. Մատենագ.» բ. 8. էջ 155.
- [. . . In Konstantinopel „Burastan Man-kanz“ (Kindergarten). . .
- «Armen. Bibl.» II. էջ 155.
- 2.) Վերջերքս Պ. Պերպերեան ստորագրում էր՝ «Տէր-տնօրէն Նշան Կ. Պերպերեան»:
- 3.) «Բուրաստանին պակասութիւն կարելի է հաշուել այն, որ ծրագրի Համեմատ նիւթերը չէին սպագրուում բաժինների մէջ, այլ դասաւորուում էր խառն:



130.



ՊԱՏՄԻԱՐԱԿԱՆ ԵՐԱՆԻՐ

ԵՒ

**ՏԱԻՆՈՒԱԾՈՎ**

**ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Տի ի ի ս (Ռուսաստ.) 1883-1894-եւս.  
 Հրատարակուում է ամսի վերջերին.  
 Ժամանակ. խմբ. Վ. Սուլթանեան.  
 Հրատ. Տ. Նազարեան.  
 Տպարան՝ Վրաց. Հրատարակչ. Ընկերու-թեան:  
 Դիրքը (տետր) մէկ ու կէս ապ. թերթ.  
 48 էջ 16x24 հմետր.  
 Թուղթը եւ տիպը՝ մաքուր.  
 Լեզուն ոճը { «Նա տեղափոխուեց ուրիշ տուն իր հետ տանելով և Ուղղագրութ. այդ ծաղիկը. Այդ սեննակն»  
 Բաժանորդագրինը՝ տարեկան երեք ռուբլի 28 կոպ.

Ծրագիրը՝ 3.)

Ա. բաժին.

«Մանրավէպեր, զրույցներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ, բանաստեղծութիւններ, գիտութիւն եւ արուեստ, նոր լուրեր, այլ եւ այլք, զուարճալիք, մանկական, ֆրէօբելեան, շախմատի եւ այլ խաղեր, ռեբուսներ, թուաբանական խնդիրներ, անեկտոտներ, հանելուկներ, շուտասելուկներ, երգեր նոտաներով:»

Բ. բաժին.

«Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, տեղեկութիւններ, առաջարկութիւններ, խորհուրդներ, մատենախօսութիւն եւ նոր գրքեր, խառն լուրեր, պատասխաններ, յայտարարութիւններ:»

Բովանդակութիւն 1891. № 7.

Մշակ վարձող տէրը. (պատկեր)

Երկնքի արքայութիւնը. Աւետար. Մատթ. Էն ձորի միջում (ոտանաւոր) Գ. Ասատուածատ. Փրեզերիկ Դուկաս (վերջ) Թարգ. օր. Մ. Սերեբրակեան:

Թուրքական վրան (պատկեր).

Ուխտագնացութիւն (Հէյնէից)-Ջ. Բալուդ. Վիլհէլմ Թէլլ (Լամարթին)-Ն. Առաքել.

Մշուհու վիշտը (ոտանաւ.)-Յ. Ղազարեան.

Ղազարի մօր օրօրոցի երգ (Լերմոնտ.) Գ. Ա.

Ձուարճալիք: Դոմինոյի քարերի հաւասարակշռութեան փորձեր. հանելուկներ.

Յայտարարութիւններ:

Հասցէն՝ Տիֆլիս, (Ռուսաստ.-Կովկաս)

«Աղբիւր» պատկերազարդ հան-

դիսի խմբագրատուն:

Կամ՝ Тифлисъ (Руссія-Кавказъ) Редація иллюстр. журнал. „Агбуръ“

Կամ՝ Tiflis (Russe-Caucase) Rédaction des journal illustrés. „Agbur“



ինչեւ 80-ական թուականները հայլրագրութեան մէջ չերեւեցաւ մի զուտ մանկական հրատարակութիւն որ ծառայէր մեր մատաղ սերնդի դաստիարակութեան եւ կրթութեան

գործին, ընթերցանութեան յարմար նիւթեր մատակարարելով: 1882-ին Թիւրքիայի կենտրոնում՝ Կոստանդնուպօլսում, լոյս տեսաւ մի այդպիսի հայ հրատարակութիւն «Ռուրաստան Մանկանց» անունով որի մասին խօսեցինք իւր տեղում: Հետեւեալ 1883 թուականին մի մանկական հանդէս էլ լոյս տեսաւ ռուսահայոց կենտրոնում՝ Տիֆլիսում, պ. Տիգրան Նազարեանցի խմբագրութեամբ: Ուրախալի երեւոյթ էր տեսնել մի մանկական պատկերազարդ հրատարակութիւն, որի նպատակն էր՝ «... Հայ սերունդի մէջ զարթեցնել պատուասիրութեան զգացմունքները, զարգացնել հայ երեխայի մէջ սէր դէպի իւր շրջապատողները, բարի նախանձ դէպի ամեն վսեմը, ազնիւր՝ եւ ատելութիւն դէպի ամեն վնասակարն ու չարը...»

«Ճշմարիտ է մենք ունինք պարբերական հրատարակութիւններ—գրում է «Աղբիւրի» հրատարակիչը—որոնք ամենայն անձնութեամբ առաջնորդում են հայ հասարակութիւնները, տալիս են նրանց յայանի ուղղութիւն, ծանօթացնում են նրանց գրականութեան, արդի քաղաքական աշխարհի հետ, մինչեւ անգամ իրանց շրջանակի մէջ նրանք հայ ժողովուրդին ընթերցանութեան նիւթ են մատակարարում, բայց մեր այդ. թերթերը ծառայում են հասակ առած ժողովուրդին ու նրանց կոչումից բոլորովին



դուրս է եւ առաջնորդել մատաղ հասարակութիւնները, ցանել նրանց մէջ ազնիւ մարդ լինելու սերմեր, զարթեցնել նրանց մէջ ազնիւ, բարի ձգտումներ եւ արմատախիլ անել չար ու վնասակար որոմն . . . Ահա այսպիսի մի հրատարակութեան անհրաժեշտութիւնն օր օրի վրայ խիստ զգալի էր լինում մեր մէջ եւ ահա ինչու մենք ձեռնարկեցինք այս տեսակ մի հրատարակութեան»:

Գովելի նպատակ էր «Աղբիւրի» նպատակը, եթէ միայն կարողանար հաւասարիմ մնալ իւր խոստումներին, որոնց թղթի վերայ գրելը ամեն մարդ հեշտութեամբ կարող է: «Աղբիւրը» այն ժամանակ կարող էր մի բան անել, եթէ նորա ծրագիրը կազմուած լինէր զուտ մանկավարժական, մանուկների ընթերցանութիւն տարածելու համար. իսկ «գաստիարակիչներին» կարդալու նիւթեր տալու համար պ. խմբագիրը անձեռնահաս էր:

«Աղբիւրը» մանկավարժական մասնագիտական մի թերթ չէ—գրում է Նազարեան—ինչպէս շատերը կարծում են, եւ եթէ նրա բովանդակութեան մէջ մտնում են մանկավարժութեան, ու գաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, առաջարկութիւնները . . . այդ տեսակ յօդուածները իբրեւ ձեռնարկ պէտք է ծառայեն գաստիարակիչներին ծանօթանալ «Աղբիւրի» ուղուութեան եւ նպատակի հետ»:

Միթէ «Աղբիւրի» «պարտաւորութիւնը եւ նպատակը» այնքան անհասկանալի, այնքան խրթին էին, որ գաստիարակիչները միանգամից չէին կարող հասկանալ՝ կամ ինչպէս խմբագիրն ասում է ծանօթաւոր. մանաւանդ որ պ. Նազարեան իւր «պարտաւորութիւնը» արդէն «Աղբիւրի» առաջին տետրակում յայտնել է Մանկական պատկերազարդ «Աղբիւր» ամսագիրը տարեկան տասը (4) համար տալով էր հրատարակուում: Բաւականին գեղեցիկ նիւթեր էին պարունակուում պ. Նազարեանի հանդէսի էջերում, աշխատակցելով՝ Րաֆֆի, Ա.

Աղայեան, Գաբօ, Կ. Մելիք-Շահնազար, Սրբինգ, Քամալեանց Ս., Գ. Բարխուդարեան, Լ. Մելիք-Աղամեան, Յ. Յովհաննիսեան, Ա. Ծատուրեան, Գ. Աստուածատրեան, Ս. Բէկ-Նազարեանց, Պ. Պաօշեան, Լէօ, Փ. Վարդանեան, Լ. Առաքելեան: Վերջերս՝ Բ. Թագէտեան, Յ. Կոստանեան, Ս. Հախումեան, Փ. Վարդանեան, Լէօ, Զ. Բալուղեան, Յար. Թումանեան, Յով. Թումանեան, Աւ. Իսահակեան, Մ. Նաւասարդեան, Գ. Սինանեան, Կ. Գիւլնազարեանց, Ս. Աւետեան եւ այլք:

Խմբագիր պ. Տիգրան Նազարեանի հետ խմբագրական գործերում հաւասար չափով, զուցէ եւ աւելի աշխատող պ. Գաբրիէլ Միրզոյեան, 1885 թուականին դուրս եկաւ «Աղբիւրի» խմբագրութիւնից չը կարողանալով Նազարեանի հետ միասին գործ շարունակել: Պ. Միրզոյեան պատրաստուում էր «Աղբիւր»ին հակառակորդ մրցող մի հանդէս հրատարակել «Նաւակ» անունով, բայց չյաջողուեցաւ:

Պ. Միրզոյեան մի բաց նամակով դիմում է Նազարեանցին իւր իրաւունքները պաշտպանելու համար՝

«Ձեզ յայտնի պատճառներով ես օտիպուած եղայ առ ժամանակ դադարել յուլիսի 1-ից «Աղբիւրի» խմբագրութեան մէջ աշխատելուց»:

«Ինք լաւ գիտէք որ ես հաշտարար դատաւորին դիմող չեմ Ձեզանից ոտնակոխ արած իրաւունքներս վերականգնեցնելու համար, ինչ մնում է առաջարկել Ձեզ միջնորդ դատարան (третейский суд) մեր յարաբերութիւնները պարզելու համար . . .»

Միրզոյեան իւր կողմից միջնորդ նշանակեց պ. պ. Ա. Աղայեանին եւ Յակ. Տէր-Յովհաննիսեանին. գործը քննուեց. պ. Նազարեան ներողութիւն խնդրեց Միրզոյեանից եւ հաշտուեցին: Այդպիսով «Նաւակի» հրատարակութիւնը առկախ մնաց մինչեւ այժմ:

Նազարեանի վարմունքների պատճառով «Աղբիւրի» կանոնաւոր աշխատակիցներից հե-

ուացան շատերը որոնց հետ եւ պ. Միրզոյեան:

Պ. Տիգրանը մնաց միայնակ մի քանի երիտասարդների հետ, սկսեց զանազան հնարներ մտածել. որպէս զի բաժանորդները չը պահասեն, տարուայ վերջերին մեծ մեծ խոստումներ տալով, «եօլա» էր գնում մինչեւ որ հասաւ 1892 թ. հոկտեմբեր ամիսը: Տեսնելով որ այլ եւս պաշտօնում մնալ անկարելի է, եւ եթէ մնար հետեւեալ տարին բաժանորդների քառորդ մասը չէր կարող տեսնել, նոյեմբերի 1-ից «Աղբիւրի» հրատարակութեան իրաւունքը եւ գործերը յանձնեց բժ. Գանիէլ Լիսիցեանին, իբր մի քանի տարի արտասահման գնալու նպատակով. սակայն մինչեւ այսօր Նազարեանը արտասահմանի երես չէ տեսել: «...Խոչնդոտները, դժբախտութիւնները անթիւ էին, սակայն դրանք մեր եռանդը չէին սառեցնում, մանաւանդ որ ամեն կողմից միշտ համակրական ցոյցերի ենք հանդիպել մեր վերաբերմամբ, սակայն տասներկու (") տարուայ անընդհատ գիշեր-ցերեկ աշխատութիւնից մենք յոգնել ենք եւ մի առ ժամանակ դիտաւորութիւն ունենալով հեռանալ արտասահման (") հրաւիրել ենք իբրեւ խմբագրութեան մշտական աշխատակիցներ՝ «Աղբիւրի» սկզբնական հիմնադիրներից եւ աջակիցներից առաջագոյնին՝ պ. Գաբրիէլ Միրզոյեանցին...»—գրում է Նազարեան:

Տարիներով քանդած գործը շուտով չէր կարող շինուել. Նազարեան այնպէս էր ձանձրացրել իւր ընթերցողներին որ չը նայելով խմբագրութեան նորոգութեան, նորանցից շատերը չէին ուզում վերանորոգել իւրեանց բաժանորդագինը: Նոր խմբագրութիւնը այդ բանի հնարը մտածելով, թըղթիկներ տպագրել տուեց եւ ցրուեց հեռացող բաժանորդներին, այսպիսի բովանդակութեամբ... նոյեմբ. 1-ից լոյս տեսած համարները-15 համար «Տարագի», եւ երեք համար «Աղբիւրի»-կարող են գաղափար տալ 1892 թ. բաժանորդներին, թէ ինչ ուղղու-

թեան է հետեւելու ներկայ խմբագրութիւնը. Ինչ ոյժերով է գործելու եւ որչափ ճշտակատար է լինելու: Մեր կողմից ոչ մի ջանք չենք խնայիլ, մանաւանդ որպէս զի բաժանորդները ճշտօրէն ստանան թերթերը: Այս աւել քան եռամսեայ փորձը վստահութիւն է տալիս մեզ Ձեզ առաջարկելու, որ իբրեւ «Աղբիւրի» եւ «Տարագի» անցեալ տարուայ բաժանորդների, վերանորոգել Ձեր բաժանորդագրութիւնը, եւ աջակցել մեզ գտնելով Ձեր ծանօթ շրջաններում թերթերիս համար նոր բաժանորդներ...»

Ինչ համեմատութիւն... «Աղբիւրը» երբ նոր սկսուեց, երբ նորան աշխատակցում էին Բաֆֆու, Պաօշեանի, Աղայեանի պէս մարդիկ, բաժանորդների թիւը հասնում էր 3000ի. իսկ 1892 թուականին երբ Նազարեան հեռացաւ, թողեց նոր խմբագրութեան ընդամենը 285(5) ստորագրուող: Ճարպիկ գտնուեց Նազարեան որ հեռացաւ, մի տարի էլ եթէ մնար շատ հաւանական է որ բաժանորդների թիւը կը հասնէր 0-ի:

Առանձին գրքով հրատարակութիւններ, արտատպած «Աղբիւրից»՝ Փէրօ—Յ. Ղազարեանի: Փայտաշէն խրճիթից սպիտակ տուներ: Մենաքեմ Գամաղացու պատմ. եւ այլն:

«Աղբիւրը» սկզբից մինչեւ 1890 թուականը տպագրուում էր Յ. Մարտիրոսեանի տպարանում. այնուհետեւ մինչեւ 1893-ը «Արօր» տպարանում, 1893 թուականի ըսկզբից մինչեւ այժմ տպագրուում է «Վրաց Հրատ. Ընկեր.» տպարանում:

Բժիշկ Գանիէլ Լիսիցեան «ժամանակաւոր խմբագիր» մանկական «Աղբիւր» հանդէսի, վաղճանուեց 1893 թ. կարծեմ սեպտեմբերի վերջերին կամ հոկտ. սկիզբներին: «Աղբիւրի» խմբագիր է ճանաչուում այժմ «ժամանակաւոր խմբագիր Վ. Սուլթանեան»:

**Ի Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .**

- 1.) «Աղբիւրի» աղբիւրներ չունինք, միայն պ. Լայսդ լիջել է՝  
 ա. . . . Տփլիսում մանկական «Աղբիւր» . . . .  
 «Հայկ. Մատեն.» ք. էջ. 196.  
 [«In Tiflis die „Acbur“ (Die Quelle) . . .  
 „Arm. Bibliothek“ II. էջ 156.  
 ք. . . . Խեղճ Տիգրան Նազարեանց իր  
 Համար Հանգիստ նստած էր Թիֆլիսում  
 եւ Հրատարակում էր իր Հրատարակու-  
 թիւնները, . . . յանկարծ . . . տրզզզ . . .  
 եկան նստեցին նրա գլխին Գարբէէլ Մեր-  
 զոյեան եւ Ստեփ. Լիսիցեանց . . .  
 „Մշակ“ 1892 № 142.
- 2.) «Յաւելուածներ» սակաւ էին տեսնուում:
- 3.) «Աղբիւրի» նիւթերը դասաւորուում էին ցրիւ  
 ու անկանոն:
- 4.) Տարուայ մէջ մայիս-յունիս, եւ օգոստոս-սեպ-  
 տեմբերի Համարները տպագրուում էին  
 միասին:
- 5.) Որոնց 130 տեղում, 150-ը օտար տեղերում:
- 6.) «Աղբիւրի» ուղղագրութիւնը մի քանի փոփո-  
 խութիւնների է ենթարկուել. սկզբից մինչեւ  
 1890 թուականը Հետեւում էր Հին եւ ըն-  
 դունուած ուղղագրութեան՝ «ու» գործա-  
 ծելով: 90 թուականից «ու» է գործածում.  
 93-ի սկզբից դարձեալ «ու» մտցրին «Աղ-  
 բիւրի» մէջ:

131.

**Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ւ Ն Տ <sup>1.)</sup>**

ԱՄՍԱԳԻՐ «ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

Հ Ա Ն Գ Է Ս

**Գ Ր Ը Կ Ը Ն Ե Ի Գ Ի Ց Ն Ը Կ Ը Ն .**

Կ ո ս տ ա ն դ ն ու լ յ ո լ ի ս (Տաճ.) 1883-1889  
 Հրատարակուում էր՝ ամսի վերջերին:  
 Հրատարակութիւն «Ասիական Ընկե-  
 րութեան»  
 Խ մ բ ա գ ի Ր - Տ ն օ Ր է ն՝ Յակովբ Պարոնեան.  
 Ի տ պ ա Ր ա ն ի Արամեան.

Դ ի Ր ք ը (տետր.) 11½ տպ. թերթ 48 էջ.  
 Թ ու Ղ թ ը եւ տ ի պ ը՝ մաքուր.  
 Բ ա ժ ա ն ո Ր գ ա գ ի ն ը՝ տարեկան երկու  
 արծ. մէճիտիէ.  
 Ծ Ր ա գ ի Ր ը՝  
 Գ Ր Ա Կ Ա Ն — Մատենախօսական, պատմական,  
 վիպական, բանաստեղծական գրուած քներ,  
 կենսագրութիւն, ճանապարհորդութիւն  
 երգիծաբանութիւն . . .  
 Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն — Բանասիրական-Հնագիտական,  
 գեղարուեստական գրուած քներ. յօդուած-  
 ներ գիտութեան այլ եւ այլ ճիւղերից:  
 Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն . — Յայտարարութիւններ:



«Ստանդնուպոլսում 80-  
 ական թուականների  
 սկիզբներին կազմը-  
 ուած Հայկական «Ա-  
 սիական Ընկերութիւ-  
 նը» 1883 թուակա-  
 նի յունուարից Յա-  
 կովբ Պարոնեանի խրմ-

բագրութեամբ սկսեց Հրատարակել «Երկրա-  
 գունտ» գրքին եւ գրքին միամսեայ Հան-  
 գէսը: Իւր ճիւղի մէջ վայելուչ տեղ է բըռ-  
 նում մեր «Երկրագունտը»՝ թէ արտաքին  
 գեղեցկութեամբ, թէ նիւթերի ընտրու-  
 թեամբ: Աւելի լաւ ու գովելի կը լինէր, եթէ  
 լուրջ վերնագրի տակ երբեմնապէս Հանդի-  
 սիօ էջերում տեղ չը բռնէին զանազան կի-  
 սազաւեշտական բնաւորութեամբ նկատու-  
 ղութիւններ եւ այլն:  
 «Երկրագնտի» տետրակները շատ անգամ  
 լոյս էին տեսնում երկու Համարը մի անգա-  
 մից, ինչպէս պատահում է այդ շատ ամսա-  
 գիրների հետ:  
 1884-ից «Երկրագունտ» Հրատարակուել

սկսեց Եղիա Տէմիրճիպաշեանի տնօրէնութեամբ եւ խմբագրութեամբ. մինչեւ որ 1888 թուականին լուծուեցաւ «Ասիական Ընկերութիւնը», «Երկրագունտն» էլ ստիպուեցաւ դադարելու:

**Ժ Ա Ն Յ Ո Ւ Ռ Ո Ւ Ն Ն Ե Ր .**

- 1.) «Երկրագունտ» եւ մեր աղբիւրները—
  - ա. «... Թէեւ պէտք է խոստովանենք որ «Երկրագունտը» մինչեւ այժմ մեր տեսած Կ. Պոլսում հրատարակուած ամսագիրներէց աւելի լաւ է կազմած եւ բովանդակութիւնը բաւականին հետաքրքիր է...»
  - «Նոր-Իար» 1888 № 86. էջ 2.
  - բ. «Երկրագունտ հանդէս գրական եւ գիտնական Զ. տարի Կ. Պ.»
  - «Հանդ. Ամսօր» 1889. էջ 261.
  - գ. «... Կոստանդնուպոլսում .. «Երկրագունտ» «Հայկակ. Մատեն.» բ. էջ 155.
  - [«In Konstantinopel... Erkragunt (Globus).» «Arm. Bibliot.» II. էջ 155.

132.

**Ը Ն Տ Ա Ն Ի Ք <sup>1.)</sup>**

ԿԻՍՏԱՄՍԵԱՑ ՀԱՆԳԵԾ

ՐԱՐԱՅՈՒԹՅԱՆ ՑՆՑՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ.

(Երկշաբաթաթերթ.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1883-1884  
Հրատարակուում էր երկու շաբաթը մի անգամ՝ կիրակի օրերը:  
Խմբագիր՝ Սիմէօն Գափամաճեան:

Պարոն Սիմ. Գափամաճեանի խմբագրութեամբ եւ մի խումբ հայ կանանց եւ օրիորդների աշխատութեամբ, 1883 թուականի

սեպտեմբերի 15-ից Կոստանդնուպոլսում հրատարակած «Ընտանիք» կիսամսեայ թերթը մէկ տարի տեւեց, այսինքն մինչեւ 1884 սեպ. 1-ին: Հանդիօխ յարգելի աշխատակցուհիք զանազան կեղծ անունների տակ ընտանեկան, տնտեսական եւ զուարճալի յօդուածներ գրելով, հետաքրքիր գարձրին «Ընտանիք» երկշաբաթաթերթը: Սակայն կարճ ժամանակում 24 համարի վրայ դադարուելով, միակնյայտի օգուտ չերեւեցաւ:

**Ժ Ա Ն Յ Ո Ւ Ռ Ո Ւ Ն Ն Ե Ր .**

- 1.) «Ընտանիք» եւ մեր աղբիւրները—
  - ա. «Հնգետասանօրեայ Ընտանիք մը կայ որ մեծ մասամբ զանազան կեղծ անուանց տակ վարագցեալ տիկիներ եւ օրիորդներ կը խմբագրեն (...)»
  - «Նոր-Իար» 1884 № 34. էջ 3.
  - բ. «Կ. Պոլսում» «Ընտանիք» «...»
  - «Հայկակ. Մատենադ.» բ. էջ 155.
  - [«... In Konstantinopel «Ntanik» (Die Familie).» «Arm. Bibliothek.» II. էջ 155.

133.

**ԵՐԵՒԱՆԻ**

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ <sup>1)</sup>**

Երեւան (Ռուսաստ.) 1883-1886.  
Հրատարակուում էր՝ կիրակի, չորեքշաբթի, եւ ուրբաթ օրերը:  
Խմբագիր-Հրատարակիչ՝ Էմին Տէր-Գրիգորեանց:  
Տպարան՝ Էմին Տէր-Գրիգորեանց.  
Դիրքը (թերթ.) միաճալ. երկ-սիւն. 4 էջ. 25X35 հ-մետր.  
Թուղթը եւ տիպը՝ միջակ.

Բ ա ժ ա ն ո ղ ա գ ի ն ը՝ տարեկան մէկրուբ.  
 Լ ե զ ու ն, ո ճ ը } ,, . . . Առաւօտեան ինչպէս  
 Ուղղա գր ու թ. } երևանում, գետնաշարժի...<sup>64</sup>

Ծ Ր ա գ ի ը ը՝  
 Տեղական Լուրեր.  
 Անեկտոտներ, ծիծաղաշարժ գրուածքներ.  
 Յայտարարութիւններ:  
 Բովանդակութիւն 1885. № 1.

ԼՈՒՐԵՐ—Գետնաշարժ Երեւանում եւ էջ-  
 միածնում: Կ. Պոլսի ազգային ժողովի ընտ-  
 րութիւնները: Երեւանի պ. նահանգա-  
 պետի ժողովը: Երեւանի եղանակը: Երե-  
 ւանի փոխ նահանգապետը: Նահանգիս  
 Հայ ուսումնարանները: Երեւանի թուրք  
 մսագործները: Երեւանի նահանգապետի  
 դասախօսութիւնները: Քաղաքագլուխ Վ.  
 Գեղամեանցը: Երեւանում ծառաների ու-  
 ճիկները:—Երեւանի թեմական պատգա-  
 մաւորի ընտրութիւնը:

ԱՆԵԿՏՈՏՆԵՐ ԵՒ ԾԻԾԱՂԱՇԱՐՉԻ ԶՐՈՅՑ-  
 ՆԵՐ:

Տփիխի պարբերական մամուլի մասին, ծի-  
 ծաղացնող խորհրդածութիւններ: Մեղու,  
 Մշակ, Արձագանք, Նոր-Ռար, Աղբիւր,  
 Գործ: Զորս Հատ անեկտոտներ: Մի է-  
 պիզոզ գաւառական ուսուցչի կեանքից:  
 Երկու անեկտոտներ. պարապմունքներ:  
 Յայտարարութիւններ՝ Արարատ, Նոր-Ռար,  
 Մեղու Հայաստանի, Աղբիւր, Մանկավար-  
 ժանոց, Кавказь.

**Մ**եր պատմութեան մէջ եղել են այնպի-  
 սի լրագիրներ, որոնք հրատարակուելով ոչ  
 Հայաշատ կենտրոններում՝ որ ծառայեն ընդ-  
 հանուր Հայ հասարակութեան, օգուտ են  
 տուել միայն իւրեանց ծննդավայրերում. այս-  
 ինքնայն քաղաքներին, որտեղ նորանք հրա-  
 տարակուել են: Այդպիսի լրագիրներից մէկն  
 է «Երեւանի Յայտարարութիւններ» կոչուած  
 թերթը, որ 1883 թուականից Երեւանում  
 սկսեց հրատարակուել պ. Էմին Տէր-Գրիգոր-

եանի խմբագրութեամբ, տպագրութեամբ եւ  
 հրատարակութեամբ:

«Երեւանի Յայտարարութիւնները» շաբաթը  
 երեք անգամ հրատարակուելով, տալիս էր  
 իւր ընթերցողներին զանազան հետաքրքիր  
 նորութիւններ, լուրեր, տեղեկութիւններ եւ  
 այլն: Իւր փոքր շրջանում կատարեալ գոր-  
 ծում էր պ. Տէր-Գրիգորեանի երկօրեան:

Թերթիս վերնագիրը թէեւ «Յայտարա-  
 րութիւններ», բայց ինչպէս ծրագրից ե-  
 րեւում է՝ բացի յայտարարութիւնները պա-  
 րունակում էր իւր մէջ լուրեր տեղական  
 դրութիւնից, անեկտոտներ, զաւեշտական գր-  
 ուածքներ, առակներ, զրոյցներ եւ այլ հե-  
 տաքրքիր նիւթեր: Չենք սխալուում որ ա-  
 սենք թէ Երեւանում այժմ էլ անհրաժեշտ  
 է «Յայտարարութիւնների» գոյութիւնը: Ե-  
 րեւանի թերթիկը եթէ հրատարակուի նո-  
 րից, հաւատացած ենք որ բացի Երեւանից  
 շրջակայ քաղաքներից էլ ստորագրուողները  
 պակաս չեն լինի, մանաւանդ որ բաժանոր-  
 դագիրը շատ չնչին է:

«Երեւանի Յայտարարութիւնները» աշ-  
 խատակիցներ չունէր, գուցէ ունենար տե-  
 ղական լրատուներ միայն: Թերթիս բոլոր  
 նիւթերը գրում եւ խմբագրում էր պ. Տէր-  
 Գրիգորեան. սորա գրուածքի իւմորի հե-  
 ծանօթացնելու համար առաջ բերենք հե-  
 տեւեալը, որ գրուած է Տփիխի մեր լրա-  
 գիրների մասին:

«ՄԵՂՈՒ»

Մեր ներկայ անդրանիկ լրագիր, իմ ան-  
 գրանիկ եղբայրը 25 տարին շուռ տուեց  
 դափնի պսակներ ու պարգեւներ ստացաւ,  
 ազգային եւ կրօնական հարցերը պաշտպա-  
 նեց... Հների սէրը, նորերի ատելութիւնը  
 շահեց 1000 բաժանորդների ձայներ լսեց,  
 հոտն առաւ ու ինքը երբէք չը տեսաւ.  
 այդպիսով այսօր 28 տարին մտաւ եւ խոս-  
 տովանեց որ կարծեմ 250 բաժանորդէն ա-  
 ւելի չունի... Ես իմ Աստուածը ապրի ին-

քը աֆերիմ համբերութիւնը...

«ՄՇԱԿ»

Լուսահողին էլ շատ չար ու բարիք տեսաւ. իւր միշտ եռացող կեանքում շատ օգտաւէտ եւ պիտանի առաջնորդող յօդուածներ տուեց մեզ, թէեւ մի քանի տեղ սրխալուեց ու իւր սխալը չուզեցաւ ճանաչել... կրօնն ու եկեղեցին երրորդ պլանումը թողեց, բայց էլի նրա պէս ոչ ոք գործ չը տեսաւ:

«ԱՐՁԱԳԱՆՔ»

Շատ խօսեց, շատ գոռգոռաց, մեծ մեծ բրդեց, հայոց ազգի նեցուկն իրան հրատարակեց, օրինաւոր «Փորձ» ամսագիրը շաբաթաթերթի փոխեց... Ուղիղն ասած «Արձագանքը» պիտանի թերթ է. ես ցանկանում եմ. դուք էլ ցանկացէք որ ութ ամիս շուտ անցնի, նորա ապաշխարանաց օրերը լրանան:

«ՆՈՐ-ԴԱՐ»

Նոր մարդ, նոր լուսաւորիչ, սկիզբը շատ յաջողակ եղաւ, դեռ գլուխը ձուից չը հանած, թեւերը 1200 կողմեր տարածեց, 1200 բաժանորդ ունեցաւ, ուրիշ թերթերի սիրտը պատռացրեց... Ես իմ Աստուածը «Նոր-Դարը» մեծ ծառայութիւն արեց անցեալ տարի. սա էլ որ մեր կաթողիկոսական խնդիրը դրեց ընտանեկան կեանքի վրայ: Ապրի ինքը, շատ ապրի:

«ԱՂԲԻԻՐ»

Անունը մեծ, ինքը պստիկ... Սա իւր մտքումը դրել է մեր երեխաների սիրտը շահել. երբեմն արդարեւ շատ լաւ երեխաների մարտնչու յօդուածներ է տպում, բայց միմին էլ այնպէս անմարս բաներ է բուց թողնում, որ ստամոքս պէտք է որ աղա...»

«ԳՈՐԾ»

... Խալիսի ութ ութ մանէթներն առաւ ջերը գրեց, մէկ ու կէս համար տպեց ու փաստափուսէն քաշեց... (2.)

ԺԱՆՅՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) Աղբիւրներ եւ «Երեւանի Յայտարարութիւններ»—

ա. «Որախոթեամբ լսում ենք որ տեղացի պ. Է. Տէր-Գրիգորեանը, անցեալ փետրուարին խնդրամատոյց է եղել որ «Երեւանի Յայտարարութիւններ» անունով պարբերական թերթը թոյլ տրուի նորից հրատարակելու...»

«Նոր-Դար» 1893. № 41.

2.) Տես «Երեւանի Յայտարար.» 1885. № 1.

134.

ՆՈՐ-ԴԱՐ

ՔՐԴԱՔՐԿԱՆ ԵՒ ԳՐԱԿՆԱԿԱՆ 2.)

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԱՐԱԳԻՐ 3.)

Տփիսիս (Ռուսաստ.) 1884-1894-ԵՆԱ.

Հրատարակուում է ամեն օր, բացի կիրակի եւ տօներին հետեւող օրերից:

Խմբագիր - Հրատարակիչ՝ Սպանդար Սպանդարեան.

Տպարան եւ վիմագրատ. Ա. Մելիք-Շահնազար.

Դիւրքը (թերթ.) միածալ 4 էջ հինգ. սիւն. 31x50 հ.մետր.

Թուղթը եւ տիպը՝ միջակ. Բատանորդագիւնը՝ տարեկան 10 ը.

կէս տարուայ 6 »

Լեզուէն, ոճը, { «... Կարծես թէ այդ մի մասնաւոր դէպքով, մամուլից Ուղղագրութ. { դուրս կիսնքի մէջ կատար...»

Հասցէն՝ Տիփլիս (Ռուսաստ. Կովկաս)  
 «Նոր-Դար» լրագրի խմբագրու-  
 թեան.  
 կամ՝ Тифлисъ (Руссія Кавказъ) Въ  
 Редацію газеты „Норъ-Даръ“.  
 կամ՝ Tiflis (Russe Caucase) Redaction  
 du journal „Nor-Dar“

**Ծ Ր ա գ ի Ր Ը՝**  
 Տէրութեան կարգադրութիւններ 4.)  
 ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.—Յօդուածներ ժամանակա-  
 կից լուրջ եւ նշանաւոր խնդիրների մասին:  
 ՔՐՈՆԻԿՈՆ.—Տեղեկութիւններ, լուրեր ա-  
 ուօրեայ ամեն տեսակ հարցերի մասին. նո-  
 րութիւններ, լուրեր տեղից եւ օտար հայա-  
 բնակ կողմերից: Պատահական յօդուած-  
 ներ զանազան նիւթերի վերաբերմամբ:  
 ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Նամակներ, Կովկա-  
 սի զանազան հայաբնակ քաղաքներից, գիւ-  
 ղերից, Ռուսիայի եւ արտասահմանի նշա-  
 նաւոր քաղաքներից:  
 ՌՈՒՍԻԱՅԻ ԹԵՐԹԵՐԻՑ.—Քաղուածքներ մայ-  
 րաքաղաքի նշանաւոր թերթերից. հետա-  
 քըքիր տեղեկութիւններ, Նախարարա-  
 կան նոր կարգադրութիւններ, եւ այլն:  
 ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԹԵՐԹԵՐԻՑ.—Տեղեկութիւն-  
 ներ արտասահմանի հայերից. Սրբ. պատ-  
 րիարք հայրերի մասին, նորանց նոր կար-  
 գադրութիւնները. Կիլիկիայի եւ Ալթա-  
 մարայ կաթողիկոսների մասին եւ այլ հե-  
 տաքըքիր յօդուածներ:  
 Յօդուածներ ազգային կեանքից, գաւառա-  
 կան ընդարձակ նամակներ, տպաւորութիւն-  
 ներ, հայկական թատրոն, ճանապարհորդու-  
 թիւններ, նամակներ խմբագրութեան, գրա-  
 խօսութիւն նոր գրքերի մասին, հնագի-  
 տական, առողջապահական եւ այլ պիտա-  
 նի յօդուածներ:  
 ՔԱՂԱՔԱԿԱՆ-ընդարձակ գրուածքներ եւ  
 տեղեկութիւններ. քաղաքական արդի դրու-  
 թիւնից: «Քաղաքական լուրեր» ժամանա-  
 կից գրութիւնից:  
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (գծի տակ)—Վիպասանու-  
 թիւններ, պատկերներ, եւ այլ յօդուած-

ներ ազգային կեանքից. կենսագրութիւն,  
 ընդարձակ մատենախօսութիւն, գիտու-  
 թիւն եւ արուեստ, նամակներ արտա-  
 սահմանից, յիշողութիւններ, զրոյցներ  
 հայ գիւղական կեանքից, դասախօսու-  
 թիւններ, ճառեր, քարոզներ, եւ այլն:  
 ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—Չանազան լուրեր, օտար-  
 ների կեանքից, արտասովոր նորութիւններ  
 մեր կեանքից:  
 ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—«Հիւսիսային Հեռագրական  
 Գործակալութիւն»ից: Բօրսա:  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ—«Նոր-Դարի»  
 Պատասխաններ:  
 ՏԵՂԵԿԱՏՈՒ—Երկաթուղի, պոստային կառ-  
 քերի, շոգենաւերի երթեւեկութիւն, Ազ-  
 գային հիմնարկութիւնների հաշիւներ, նա-  
 մակներ, ընդգիմախօսութիւն.  
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Հայերէն եւ օտար  
 լեզուներով:  
 Բովանդակութիւն 1893 № 21.  
 Առաջնորդող—Հայոց պարբերական մամուլի  
 դրութեան մասին. (խմբ.)  
 Քրոնիկոն—Փետր. 1-ի ներկայացումը: Ներ-  
 սիսեան Դպրանոցի նոր քարտուղար: Օգնու-  
 թիւն խեղճերին: Նոր սպանդանոց: Վիր-  
 դուսի Ռոստամ եւ Ջոհրապ: Զեռնագը-  
 րութիւն Վաղարշապատում: Ախալքալա-  
 կից: Պետերբուրգից: Թաթլուից: Սիմֆե-  
 րապոլից: Փոթիից: Մէջիտ Պետերբուրգում:  
 Արմաւրից: Ալեքսանդրապոլից: Սուչաւայից:  
 Գիտական շարժում—Հրատ.  
 Մամուլի շուրջը—Ռ. Բ.  
 Թղթակցութիւններ—Սաղիան—Սաղիանցի.  
 Քաղաքական—Վիէննայի Wiener Tagediatt  
 թերթի յօդուածը, գերման-ռուս դաշնակ-  
 ցութեան մասին:—Ռուսիայի եւ Գերմա-  
 նիայի միջեւ տնտեսական պատերազմ:—Ռու-  
 սական նաւատորմի Ֆրանսիա դուրս գա-  
 լը:—Սանդուխեան կղզիների թագուհու իւր  
 երկրի սահմանադրութեան փոխելը:—Եւ-  
 րոպական մամուլի կարծիքը Վիլհելմ Կայ-  
 սրի խօսած ճառի մասին:—Սոֆիա եւ Փի-  
 լիպպոպոլ ուղարկուելիք ծրարների բըռ-

նուիրը:—Գերմանիայի պետական կանցլեր գրաֆ. Կապրիւլի կազմած նախագիծը պատերազմական նաւատորմի չհամար:—Գըլադստոնի Եգիպտական քաղաքականութեան պաշտպանութիւնը:

Բանասիրական—Լուսաւորութեան կենդրոնը (շարունակ.)—Մուրացան:

Խառն լուրեր—Վոսկո-դե-Գամա: Գաւազրութիւն: Մեծագին ընծայ:

Հեռագիրներ (5.) Պետերբուրգ, Բերլին, Վաշինգտոն, Վիէննա, Պարիզ, Պետերբուրգ: Յայտարարութիւններ . . .



Քիսիսում եւ Կոստանդնուպոլսում 1884 թրուականին լոյս տեսան միասին քանի մի լրագիրներ, որոնց մէջ նշանաւոր են, եւ մինչեւ այժմ հրատարակուում են «Արեւելքը» Կոստանդնուպոլսում, եւ «Նոր-Գարը» Տփլիսում:

Դօքտոր Սպանդարեան 1883 թուականից արդէն պատրաստուելով, 1884 թուականի յունուարի սկզբից (6) սկսեց հրատարակել «Գրականական եւ քաղաքական» «Նոր-Գար» լրագիրը:

«Նոր-Գարը» լոյս աշխարհ գալով, Տրփիսում իրեն գործակիցներ տեսաւ «Մեղու Հայաստանի» լրագրին, եւ հակառակ բանակում «Մշակ»ին եւ «Արձագանք»ին:

«Նոր-Գարի» ստեղծուիլը անհրաժեշտ էր. հարկաւոր էր գործել տարբեր ուղղութեամբ, «Թմրութեան մեռելային անտարբերութեան» մէջ, ինչպէս գրում է իւր առաջին համարում թերթիս խմբագիր-հրատարակիչը: «Մտքի՝ աղքատութիւն, հոգւոյ ա-

պականութիւն, սրտի սառնութիւն, կեանք առանց ազնիւ ձգտումների, երիտասարդութիւն առանց իդիալների—ահա «Նոր-Գարի» տեսած աշխարհը . . .»: Այն անհրաժեշտ էր մի թերթի գոյութիւնը, ուր կամենում էր «զարթեցնել թմրած ոյժերը, առաջ մղել ժողովրդի մէջ առողջ ձգտումները: «Նոր-Գարը» պէտք է առաջ քաշէ այն մարդիկներին, որոնք կարող կը լինին հայ ժողովրդին առաջնորդելով ցոյց տալ պարտիզի դուռը, որոնք կը ջոկեն կճեպը պտուղից, ծաղիկը փուշից. որոնք ծարաւ ժողովրդին ցոյց կը տան աղբիւրների տեղը, եւ չեն թոյլ տալ նրան խմելու լճակի կանգնած վնասակար ջրիցը . . .»

Թէ ի՞նչ նպատակով սկսեց իւր թերթի հրատարակութիւնը պ. Սպանդարեան, այդ շատերին յայտնի է: «Նոր-Գարը» տասնեակ տարի է որ ազատամիտների բարեփոխումներից պաշտպանում է ազգային սրբութիւնները: «Ձեն(ք) թողնիլ—գրում է պ. խմբագիրը—որ այդ մանուկ ժողովուրդը համարձակ ձեռք բարձրացնէ հրաշակերտների վրայ. մօտենայ նրան մինչեւ որ հասկանայ հրաշակերտների գեղեցկութեան խորհուրդը»: Եւ ճշմարիտ ինչո՞ւն է ձեռք բարձրացնել՝ ազգային սրբազան հաստատութիւնների վերայ, որոնցից բացի մի օգուտը ոչ մի վնաս չի հասնում մեզ: Թող ազատամիտ թերթերը աշխատեն լուսաւորութիւն տարածել գրականութեամբ, դիտութիւններով, ուսումով. երբ ամենը եղաւ, երբ այլ ուրիշ գործ չունեցանք, եկեղեցու բարեփոխութիւնները շատ հեշտ է: Բայց մենք որ ոչինչ չենք արել, դեռ ժողովուրդը չէ հասել գիտակցութեան մի որոշ աստիճանի, որ եկեղեցին, ազգային սրբութիւններն ու ծէսերն է նորանց կապողը, այժմ աշխատում ենք կերպարանափոխել այդ բոլորը, մի երկրորդական, երրորդական բան հաշուելով: Ո՞վ է ընդդէմ առաջադիմութեան, ո՞վ է ընդդէմ լուսաւորութեան. խաւարասէր մարդ չի լինի աշխարհում. ամեն ազգ



աշխատում է հասնել ցանկալի նպատակին, ամեն մի անհատ ձգտում է դէպի յառաջ, դէպի ազնիւր, գեղեցիկը, բարին: Մի՞թէ մի նորութիւն որ օգտակար է մեզ չը պէտք է ընդունենք, կամ մի հնութիւն որ վնասակար չը պէտք է բաց թողնենք եւ ընդհակառակը:

«Նոր-Պարի» նպատակն էլ հէնց այդպէս է. դեռ 83 թուականի վերջերին նա մի յայտարարութիւնով յայտնեց իւր նպատակը որ առաջ ենք բերում այստեղ:

«Նպատակը.— Տարածել հայերի մէջ Եւրոպական քաղաքակրթութիւնը, պատրաստելով մտաւորապէս եւ բարոյապէս զարգացած եւ լաւ բնակութեան տէր հայեր:»

«Ուղղութիւնը.— Երբ պէտք է պաշտպանել մայրենի լեզուն, եկեղեցին, պատմական յիշատակները, աւանդութիւնները, գեղեցիկ սովորութիւնները եւ այլն, «Նոր-Պարը» պահպանողական է:

«Երբ պէտք է արմատախիլ անել, հարուածել այն ամենը, ինչ որ դէմ է հասարակութեան շահերին, ինչ որ թունաւորում է ժողովրդի մտաւոր եւ բարոյական զարգացումը, ինչ որ արգելք է ժողովրդի կազմի աճելուն, այդտեղ նա ազատամիտ է, արմատական է:

«Պղծի, մտքի եւ համոզմունքի ազատութիւնը ընդունելով, հասարակութեան եւ եկեղեցւոյ կենսական շահերի պաշտպանութիւնը իբրեւ սկզբունք է ընդունել «Նոր-Պարը»:

Իրաւ որ շատ պիտանի էր օր առաջ տեսնել «Նոր-Պարի» ուղղութեան մի թերթ: Շատ լաւ է նկատել մեծ. Ս. Մամուրեան թէ՛ «Նոր ծրագրով եւ նոր հմտութեամբ զինուած թերթ մը պէտք էր եւ այդ թերթըն եղաւ «Նոր-Պարը» որով պաշտօնն այնքան ծանր ու տաժանելի էր, որքան Թիֆլիսի հասարակութեան գլուխները պաշարող մշուշը թանձր, եւ ներքին դաւերու ցանցն անտեսանելի էին: «Նոր-Պար» մտաւ անվէհեր այդ փշալից ասպարէզն . . .»

«Նոր-Պարը» իւր հրատարակման առաջին օրերից ունեցաւ իւր համակրողների, իւր հետեւորդների մի խումբ, որ հետզհետէ ստուարացաւ եւ այսօր դարձել է մի բազմանդամ հասարակութիւն: Այն անձը որ գիտէ գնահատել իւր մայրենի եկեղեցին, իւր նախորդներից ժառանգած ամեն մի սրբութիւններ, նա «Նոր-Պարի» կողմն է, նա «Նոր-Պարի» բարեկամն է: Բացի Ռուսաստանի մէջ, արտասահմանում էլ «Նոր-Պարի» անկեղծ համակրողները պակաս չեն եւ հետզհետէ աւելանում են: Մեր երիտասարդներից շատերը որոնք որ դեռ իսկապէս չեն հասկացել թէ ներկայիս գրութեան մէջ ինչ գին ունի մեր Եկեղեցին, մեր ազգային սրբութիւնները, հակառակ են «Նոր-Պար»ին. մինչեւ անգամ կարծելով թէ մի վնասակար թերթ է պ. Սպանդարեանի լրագիրը: Յիշեալ մի շարք անձնակորութիւններից հետզհետէ հասնելով գիտակցութեան այն աստիճանին որ լսում, հասկանում են թէ «Նոր-Պարի» այսօրուայ պաշտպանածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր ժողովրդի, մեր ազգութեան հիմը, սիւնը, սկսում են սրբտանց յարգել «Նոր-Պար»ին եւ փայփայել նորա զաղափարները: Այս բաները փաստեր են եւ օրինակները բիւրաւոր:

Շատերն էլ ուղիղն ասած, իսկութեամբ չը հասկացած «Նոր-Պարի» ուղղութիւնը, հակառակ են նորա հետ: Կարծում են թէ «Նոր-Պարը» խաւարասէր է, յետագէմ է. լաւ, օգտաւէտ բաներ երբէք չի սիրում. յառաջադիմութիւն, լոյս չի քարոզում եւ այլն:

Տասներորդ տարին է որ հրատարակուում է «Նոր-Պարը» եւ այդ միջոցում նա շատ օգուաններ է տուել մեր հասարակութեան, շատ օգտաւէտ խնդիրներ է յարուցել եւ 'ի կտտար հանել: Թերթեցէք ուշադրութեամբ նորա 10 տարուայ համարները, դուք կը տեսնէք որ սա ճիշտ է եւ արգարացի:

Իժուար է եղել անցեալում «Նոր Պարի» գործը եւ դժուար է ներկայումս, այսքան կեանքի զանազան հոսանքների մէջ նա աշխատ-

տել է հաւատարիմ մնալ իւր ուղղութեանն ու նպատակին որ արդէն յայտնեցինք: Տասը տարուայ մէջ հրատարակուել է կանոնաւոր կերպով, ոչ մի անգամ չը ընդհատելով հրատարակութիւնը: Բայց ցաւելով պէտք է ասենք, որ չենք կարողացել գոնէ սորա հրատարակութեան համար նիւթական դրութիւնն ապահովացնել: Շատ ազգային հիմնարկութիւնների «Նոր-Պարն» ուղարկուում է նուէր, եւ որպէս զի թերթը չը վնասուի նորա բաժանորդները ցանկալի էր անտրտունջ ուղարկէին, վճարէին իւրեանց հասանելիքը: «Նոր-Պարը» վերջերքս մի քանի ամիս տպուում էր կաթնագոյն ընտիր թըղթի վերայ, որ ոչ մի հայ օրաթերթ չէր տըպագրուում. բայց խմբագրութիւնը նախատեսելով որ այդ բանը ձեռնտու չէ, կարող է վնասուել, վերջացրեց եւ ենթարկեց նախկին դրութեան: Ամենիս ցանկութիւնն է որ մեր թերթերը, ոչ մի օր չը յետաձգուեն, կանոնաւոր լոյս տեսնեն, լաւ թուղթ ու տպագրութեամբ, բայց չէ որ այդ ամենը դրամով կը հոգացուեն: Ձեռն յիշուում համարը, անցեալներում «Նոր-Պարը» լիջել էր թէ ինչքան ստացուելիք ունի բաժանորդներից, եւ այդ փողի քանակութիւնը հասնում էր մի քանի հազարների: Շատ հաւանական է որ թերթիս խմբագրութեան ցանկութիւնը լինի «Նոր-Պարը» հրատարակել շաբաթական 6-7 անգամ, տպագրել ընտիր թղթի վերայ, ունենալ սեփական տպարան, բայց այդ ամենը, այդ ցանկութիւնը ինչ միջոցով կարելի է կատարել, եթէ ոչ դրամական օգնութեամբ: «Նոր-Պարի» բաժանորդների թիւը սկզբից էլ բարձր է եղել հազարից, եւ այսօր էլ իւր ըստորագրողներով «Նոր-Պարն» առաջինն է Ռուսաստանի հայ թերթերի մէջ: Բայց ինչ արած որ 1500 բաժանորդներից մի մասն են միայն վճարում:

Ահա այս է մեր հասարակութեան մի գասակարգի սովորութիւնը. լրագիր ստանալ, կարգալ ցանկանում է, բայց վճարել՝ ոչ. եթէ

նպատակ ունի խմբագիրը դործն ընդարձակելու, հարկաւ չի կարող: Ահա հայ լրագրի դրութիւնը: Երբ գործիչը, խմբագիրն արդէն ծերանում է կամ ոյժը կորցնում, նըուազում ֆիզիքապէս եւ մտաւորապէս, մաշուում է մի հասարակ պատճառից կեանքի ծանր լրծի տակ, ահա այնժամ մեր հասարակութիւնը, մեր ինդելիգենցիան չը տեսնուած հանդիսով եւ մեծ ծախսեր անելով հողն է իջեցնում իւր սիրելի առաջնորդողի խոնջացած մարմինը: Ամեն կողմից ծրարներ, հեռագիրներ, պսակներ է որ գալիս է հանգուցեալի հասցէին, որ եթէ նորա կենդանի ժամանակ ստացուէին այդ ծախսերի համեմատ դրամ, կատարեալ ապահովուած կը լինէին թերթն ու խմբագիրը:

Ռուսաստանում բացի «Նոր-Պարը» ամենօրեայ լրագիր չունինք: Կովկասում շաբաթը հինգ անգամ հրատարակուող հայ լրագիրները կոչում են ամենօրեայ, ինչպէս եւ կոչուել է 1878 թուականին «Մշակ» լրագիրը:

Ահա թէ ինչ է ասում արտասահմանի մի հայ թերթ այդ մասին «...Եւ գիտէք թէ ինչ է Կովկասի հայերէն ամենօրեայ լրագիր անուանածը: Այնտեղ ամենօրեայ կասեն այն լրագրին որ շաբաթը շատ շատ 5 անգամ է հրատարակուում... մթթէ պարծանք կրնայ բերել Ռուսիայի հայերին, որոնք միլիօն ու կէսի չափ մի թիւ կը կազմեն, որոնք բարձրամտութեամբ չեն հաւնել Թիւրքիայի հայերին եւ կը սիրեն քննադատել զանոնք միշտ յիրաւի կամ անիրաւի, երբ դեռ մինչեւ այժմ մի ամենօրեայ լրագիր չեն կրցած ունենալ: Իսկ «Նոր-Պարը» որ ամբողջ Ռուսիայի հայերի ամենօրեայ կոչուող միակ թերթըն է, շաբաթը 5 անգամ միայն կը հրատարակուի... մինչգեռ Կ. Պոլսի մէջ այժմ իսկ... ամենօրեայ հինգ լրագիր կը հրատարակուի հայերէն լեզուով կամ տառերով, որոնց չորսը կիրակի եւ տօն օրերը միայն չեն հրատարակուիր...»

Արդարացի է այս թերթի նկատողութիւնը Ռուսահայերի վերաբերմամբ. բայց

պէտք է խոստովանել որ Կ. Պոլսի եւ Տրփ-խիսի միջոցները միեւնոյնը չեն լրագրի հըրատարակութեան ծախսերի համար: Այնուամենայնիւ «Նոր-Դարը» Տփխիսի միւս թերթերից շատ համարներ է տալիս, տարեկան առնուազն 220-225, միեւնոյն բաժանորդագնով:

«Նոր-Դարը» իւր առաջին տարուանից սկսած մինչեւ օրըս տուել է հայ ընթերցողներին բազմակողմանի համեղ նիւթեր: Գծի տակ «Բանասիրական» բաժնում շարունակ ո՞վ չէ կարդացել Մուրացանի վէպերը՝ «Չհաս է», «Իմ կաթոլիկ հարսնացուն», Անպատճառ իշխանուհին», «Խորհրդաւոր միանձնուհին» եւ այլն: Նար-Դոսի «Ջազուներն»: Վարսամի «Մատենախօսութիւնները», Պ. Լ.-ի «Գրականական աշխարհից» հետաքրքիր գրուածները: Մանաւանդ առաջին տարիներում Թիւրքիայից Գարեգնի, Սըլաքի նամակները: Գերմանիայից Յովհաննէս Տէր-Միրաքեանի, Լորդի հատուածական նամակները, վերջերքս պ. Խաչումեանի Շիկաքօյից գրած հետաքրքիր նամակները եւ այլն:

«Նոր-Դարի» մշտական աշխատակիցներից լինենք՝ Իւնիւս, (7) Գէորգ Տէր-Յովհաննիսեան, (Մուրացան.) Մանուկ Աբեղեան, Մակար Տէր-Սարգսեան, (Փառնակէս.) Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեան, (Տմբլաճի Խաչան.) Գրիգոր Նիկողոսեան, Յակովբ Ճաղարէկեան, Նար-Դոս, Բժ. Միտաք Արամեանց, Աղէքսանդր Թարխանեանց, Ա. Մելիք-Աղամալեանց, Յովհաննէս Խաչումեանց, Մինաս Բերբերեան, Աղէք. Ծատուրեանց, Ս. Շահազիզեան, Ջարմայր Մսերեանց, Պետրոս Սիմէոնեանց, Ոստանիկ, Գ. Սեւ-Իրիցեան, Գիւտ ք. Աղանեանց, Գէորգ Չմշկեանց, Ռ. Պատկանեան, Արշակ Ագապեանց, Ղազարոս ք. Յովսէփեան, Գամալեանց Սարգիս, Պերճ Պաօշեանց, Սեգրակ Մանդինեանց, Սլաք, Յով. Տէր-Միրաքեանց, Իսահակ Յարութիւնեան, (Լորդ) Բ. Այուազեան, Աղ. Մամիկոնեան, Եղիշէ Թոփճեան, Գէորգ Շերենց, Աղ.

Նաջարեանց, Փիլիպպոս Վարդանեանց, Աղ. Քիշմիշեանց, Մահաֆզագէ, Շիրակեցի, Գէորգ Չուբար, Գալուստ Շերմազանեան, Գոշ, Յովհաննէս Մալխասեան, Ստարական, Հրատ. Յ. Ճուղուրեան, Ճանապարհորդ եւ այլք:

Որ «Նոր-Դարն» աւելի ժողովրդակաշնացած է քան մի ուրիշ լրագիր, այդ ամեն մարդ խոստովանում է: Անձամբ պատահել ենք զանազան հեռաւոր գիւղեր, որ մարդ կարծում է թէ այդ տեղեր գուցէ մի կարդացող էլ չի լինի. բայց տեսել ենք «Նոր-Դար», որ կամ իւրեանք են ստանում, կամ հարեւան գիւղից են բերել կարդալու: Մի ապացոյց էլ կարող է լինել «Նոր-Դարի» մէջ զանազան գիւղերից ուղարկուած լուրերը կամ թղթակցութիւնները. որ եթէ այդ տեղերից լուր կամ նամակ են ուղարկում, կը նշանակէ ստանում, կարգում էլ են:

Առաջ ենք բերում այստեղ մի ցանկ, որով յայտնի կը լինի թէ «Նոր-Դարը» մի տարուայ մէջ ինչքան նիւթեր է տալիս իւր ընթերցողներին: Վերցնենք 1891 թուականը, որ խմբագրապետի արտասահման գնալու պատճառով քիչ համարներ հրատարակուեց. ընդամենը 183:

|                           |      |
|---------------------------|------|
| Առաջնորդող յօդուածներ — — | 62.  |
| Բանասիրական — — — —       | 74.  |
| Փէյլիէտօն — — — —         | 4.   |
| Պատահական խառն յօդուածներ | 142. |
| Թղթակցութիւններ — — —     | 138. |
| Լուրեր (օտար տեղերից) — — | 718. |
| Մատենախօսական յօդուածներ  | 21.  |
| Նամակներ խմբագրութեան —   | 21.  |
| Խմբագրութեան կողմից — —   | 46.  |
| Արտասահմանի հայ թերթերից  | 50.  |
| Ռուսիայի թերթերից — — —   | 8.   |

Չենք հաշուել տեղական լուրերը, խմբագրութեան կողմից գրած տեղեկութիւնները, զանազան լրագիրներից արտատպած մանր լուրերը, խառն լուրերը, հեռագիրները, տեղեկատուն, յայտարարութիւնները:

«Նոր-Դարը» առաջին տարիներում ունէր Առեւտրական բաժին, որ շատ պիտանի

էր մեր վաճառականներին: Ունէր Օբայոյ, ունէր Պարսիսներ. սկզբի երկուսը թնչ պատճառով վերացուեց, այդ մեզ անյայտ է:

Նկատել այստեղ մի բան, որ «Նոր-Ռարի» մէջ «Հեռագիրների» վերնագիրը իհարկէ սխալմամբ վերջին տարիներումս սկսել է անճիշտ տպագրուել: Թէեւ մի աչքի ընկնող նշանաւոր բան չէ, բայց պէտք է ուղղել որ շփոթութիւնից հեռու մնայ կարգացողը:

Այսինքն փոխանակ տպագրելու «Նոր-Ռարի» հեռագիրներ. Հիւսիսային գործակալութիւնից, գրուում է Հեռագիրներ

Նոր-Ռարի Հիւսիսային գործակալութիւնից: Կարծես թէ «Հիւսիսային Գործակալութիւնը» պատկանում է «Նոր-Ռարի»:

Պահպանողական ուղղութիւն ունենալով, «Նոր-Ռարն» այսօր համամիտ եւ հաշտ է «Արձագանքի», «Արեւելքի», «Մասիս», «Ծաղկի» հետ, եւ հակառակ է «Մշակի» «Հայրենիքի» «Մուրճի» հետ: Վերջերքս կաթող. ընտրութիւնների ժամանակ լրագիրների հետ յայտնի է լինում եւ ընթերցողների ուղղութիւնները: Զարմանալի մարդիկ կան եթէ մի գեղեցիկ օգտաբեր յօդուած, առաջնորդող է լոյս տեսնում մի լրագրում, հակառակ բանակի մարդիկ չեն հաւանում, չեն էլ ուզում կարդալ, սխալ են դատում. որովհետեւ գրողը իւրեանց լրագիրը չէ, թէեւ գիտենան. էլ որ այդ յօդուածը ճիշտ է, արդարացի է: Այդպէս էլ հակառակ կողմըն է: Բայց այդպէս չը պէտք է կարծել. ինչ որ մէկի տեսակետից սխալ է, միւսի համար ուղիղ. ազատական ծրագրով գործելուն արգելք է, պահպանողականին շահաբեր, կամ հակառակը: Ոչ մի լրագիր ոչ մի հանդէս հասարակութեան դժբախտութեան, ժողովրդի թշուառութեան համար չի աշխատել, բոլորն էլ աշխատում են նորա բարորութեան, բարգաւաճման, լուսաւորութեան, յառաջագիմութեան եւ կենսական շահերի օգտին: Ամենի նպատակները, ամենին ցանկալի կետը մէկ է, ծրագրները, ճանապարհ-

ները տարբեր. ով ուզում է ազատ կարող է կամ այս, կամ այն ճանապարհով գնալ մէկը միւսին անուանարկելու հարկաւորութիւն չկայ: Մէկի կարծիքով ինքը կարող է շուտ հասնել եւ անվնաս ցանկալի նպատակին, միւսի կարծիքով ինքը:

«Նոր-Ռարն» սկզբում տպագրուում էր Միխելսոնի տպարանում: 1886—87-ի յուլ. 20-ը Կրամարենկոյի, այնուհետեւ մինչեւ 1893 թ. մայիսի 8-ը, Ռուս «Կաւկազ» լրագրի գրասենեակի տպարանը եւ մինչեւ այժմ Շահնազարեանցի տպարանում:

Հրատարակութիւններ՝ արտատպ. «ՆորՌար»ից Մուրացանի—«Իմ կաթողիկ հարսնացուն» (վէպ.)

Նար-Ռոսի—«Աննա Սարոյեան. (նամակներ): Եիրակեցի—«Պատկերներ իրակ. կեանքից» Բժ. Մ. Արամեան—«Սալիանից Էջմիածին» (ճանապ.) եւ այլն:

Թերթիս խմբագրապետ պ. Սպանդար Սպանդարեանի Տիֆլիսից հեռանալու ժամանակ, «Նոր-Ռարի» տակ նախ ստորագրում էր՝ «փոխ. խմբագիր Գ. Տէր-Յովհաննիսեան». իսկ վերջերքս «պաշտօնակատար-խմբ. Ման. Աբեղեան»:

«Նոր-Ռարը» անցեալ 1893 թ. սկզբին իւր 10-ն ամեայ տարեմուտի առթիւ երբ շատ տեղերից համակրական նամակներ, հեռագիրներ, եւ շնորհաւորութիւններ ստացաւ, մի քանի մարդիկ եւ զանազան կիսահայ անձնաւորութիւններ, „ПРАСОУБ“-ների խմբագիրներ, կոյր նախանձից սկսեցին իւրեանց վայել հայոյանքներ թափել «Նոր-Ռարի» հասցէին հասարակութեան մէջ. եւ որ ստացան ըստ կարգին պատիժը: Հակառակ այդպիսիների ցանկութեան, «Նոր-Ռարը» մինչեւ այժմ յաջողութեամբ հրատարակուում է ոչ մի անգամ դադարման կամ նկատողութեան չը ենթարկուելով:

պէտք է խոստովանել որ Կ. Պոլսի եւ Տրփ-խիսի միջոցները միեւնոյնը չեն լրագրի հըրատարակութեան ծախսերի համար: Այնուամենայնիւ «Նոր-Պարը» Տփխիսի միւս թերթերից շատ համարներ է տալիս, տարեկան առնուազն 220-225, միեւնոյն բաժանորդագնով:

«Նոր-Պարը» իւր առաջին տարուանից սկսած մինչեւ օրըս տուել է հայ ընթերցողներին բազմակողմանի համեղ նիւթեր: Գծի տակ «Բանասիրական» բաժնում շարունակ ո՛վ չէ կարդացել Մուրացանի վէպերը՝ «Ձհաօ է», «Իմ կաթողիկ հարսնացուն», Անպաաճառ իշխանուհին», «Նորհրդաւորմիանձնուհին» եւ այլն: Նար-Պոսի «Ձագունեանը»: Վարսամի «Մատենախօսութիւնները», Պ. Լ.-ի «Բրականական աշխարհից» հետաքրքիր գրուածները: Մանաւանդ առաջին տարիներում Թիւրքիայից Գարեգնի, Սըլաքի նամակները: Գերմանիայից Յովհաննէս Տէր-Միրաքեանի, Լորդի հատուածական նամակները, վերջերքս պ. Խաչումեանի Եիկաքօյից գրած հետաքրքիր նամակները եւ այլն:

«Նոր-Պարի» մշտական աշխատակիցներից լինենք՝ Իւնիւս, (7) Գէորգ Տէր-Յովհաննիսեան, (Մուրացան.) Մանուկ Աբեղեան, Մակար Տէր-Սարգսեան, (Փառնակէս.) Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեան, (Տմբլաճի Խաչան.) Գրիգոր Նիկողոսեան, Յակովբ Նազարբէկեան, Նար-Պոս, Բժ. Միտաք Արամեանց, Աղէքսանդր Թարխանեանց, Ա. Մելիք-Աղամալեանց, Յովհաննէս Խաչումեանց, Մինաս Բերբերեան, Աղէք. Ծատուրեանց, Ս. Շահազիզեան, Չարմայր Մսերեանց, Պետրոս Սիմէոնեանց, Ոստանիկ, Գ. Սեւ-Իրիցեան, Գիւտ ք. Աղանեանց, Գէորգ Չմշկեանց, Ռ. Պատկանեան, Արշակ Ագապեանց, Ղազարոս ք. Յովսէփեան, Քամալեանց Սարգիս, Պերճ Պաօշեանց, Սեդրակ Մանգինեանց, Սլաք, Յով. Տէր-Միրաքեանց, Իսահակ Յարութիւնեան, (Լորդ) Բ. Այուազեան, Աղ. Մամիկոնեան, Եղիշէ Թոփճեան, Գէորգ Շերեանց, Աղ.

Նաջարեանց, Փիլիպպոս Վարդանեանց, Աղ. Քիշմիշեանց, Մահաֆղադէ, Եիրակեցի, Գէորգ Չուբար, Գալուստ Եերմազանեան, Գոշ, Յովհաննէս Մալխասեան, Օտարական, Հրատ. Յ. Ճուղուրեան, Ճանապարհորդ եւ այլք:

Որ «Նոր-Պարն» աւելի ժողովրդակալանացած է քան մի ուրիշ լրագիր, այդ ամեն մարդ խոստովանում է: Անձամբ պատահել ենք զանազան հեռաւոր գիւղեր, որ մարդ կարծում է թէ այդ տեղեր գուցէ մի կարդացող էլ չի լինի. բայց տեսել ենք «Նոր-Պար», որ կամ իւրեանք են ստանում, կամ հարեւան գիւղից են բերել կարդալու: Մի ապացոյց էլ կարող է լինել «Նոր-Պարի» մէջ զանազան գիւղերից ուղարկուած լուրերը կամ թղթակցութիւնները. որ եթէ այդ տեղերից լուր կամ նամակ են ուղարկում, կը նշանակէ ստանում, կարդում էլ են:

Առաջ ենք բերում այստեղ մի ցանկ, որով յայտնի կը լինի թէ «Նոր-Պարը» մի տարուայ մէջ ինչքան նիւթեր է տալիս իւր ընթերցողներին: Վերցնենք 1891 թուականը, որ խմբագրապետի արտասահման գնալու պատճառով քիչ համարներ հրատարակուեց. ընդամենը 183:

|                           |      |
|---------------------------|------|
| Առաջնորդող յօդուածներ — — | 62.  |
| Բանասիրական — — — —       | 74.  |
| Ֆէլիէտօն — — — —          | 4.   |
| Պատահական խառն յօդուածներ | 142. |
| Թղթակցութիւններ — — —     | 138. |
| Լուրեր (օտար տեղերից) — — | 718. |
| Մատենախօսական յօդուածներ  | 11.  |
| Նամակներ խմբագրութեան —   | 11.  |
| Խմբագրութեան կողմից — —   | 46.  |
| Արտասահմանի հայ թերթերից  | 50.  |
| Ռուսիայի թերթերից — — —   | 8.   |

Չենք հաշուել տեղական լուրերը, խմբագրութեան կողմից գրած տեղեկութիւնները, զանազան լրագիրներից արտասպաճ մանր լուրերը, խառն լուրերը, հեռագիրները, տեղեկատուն, յայտարարութիւնները:

«Նոր-Պարը» առաջին տարիներում ունէր Առեւտրային բաժին, որ շատ պիտանի

էր մեր վաճառականներին: Ունէր Օբայոյ, ունէր Պարտիսներ. սկզբի երկուսը թնչ պատճառով վերացուեց, այդ մեզ անյայտ է:

Նկատել այստեղ մի բան, որ «Նոր-Պարի» մէջ «Հեռագիրներ» վերնագիրը իհարկէ սխալմամբ վերջին տարիներուս սկսել է անճիշտ տպագրուել: Թէեւ մի աչքի ընկնող նշանաւոր բան չէ, բայց պէտք է ուղղել որ շփոթութիւնից հեռու մնայ կարդացողը:

Այսինքն փոխանակ տպագրելու «Նոր-Պարի» հեռագիրներ. Հիւսիսային գործակալութիւնից, գրուում է Հեռագիրներ

Նոր-Պարի Հիւսիսային գործակալութիւնից: Կարծես թէ «Հիւսիսային Գործակալութիւնը» պատկանում է «Նոր-Պարի»:

Պահպանողական ուղղութիւն ունենալով, «Նոր-Պարն» այսօր համամիտ եւ հաշտ է «Արձագանքի», «Արեւելքի», «Մասսի», «Ծաղկի» հետ, եւ հակառակ է «Մշակի» «Հայրենիքի» «Մուրճի» հետ: Վերջերքս կաթող ընտրութիւնների ժամանակ լրագիրների հետ յայտնի է լինում եւ ընթերցողների ուղղութիւնները: Զարմանալի մարդիկ կան եթէ մի գեղեցիկ օգտաբեր յօդուած, առաջնորդող է լոյս տեսնում մի լրագրում, հակառակ բանակի մարդիկ չեն հաւանում, չեն էլ ուզում կարգալ, սխալ են դատում. որովհետեւ գրողը իւրեանց լրագիրը չէ, թէեւ գիտենան. էլ որ այդ յօդուածը ճիշտ է, արդարացի է: Այդպէս էլ հակառակ կողմըն է: Բայց այդպէս չը պէտք է կարծել. ինչ որ մէկի տեսակետից սխալ է, միւսի համար ուղիղ. ազատական ծրագրով դործելուն արգելք է, պահպանողականին շահաբեր, կամ հակառակը: Ոչ մի լրագիր ոչ մի հանդէս հասարակութեան դժբախտութեան, ժողովրդի թշուառութեան համար չի աշխատել, բոլորն էլ աշխատում են նորա բարորութեան, բարգաւաճման, լուսաւորութեան, յառաջդիմութեան եւ կենսական շահերի օգտին: Ամենի նպատակները, ամենին ցանկալի կետը մէկ է, ծրագրները, ճանապարհ-

ները տարբեր. ով ուզում է ազատ կարող է կամ այս, կամ այն ճանապարհով գնալ մէկը միւսին անուանարկելու հարկաւորութիւն չկայ: Մէկի կարծիքով ինքը կարող է շուտ հասնել եւ անվնաս ցանկալի նպատակին, միւսի կարծիքով ինքը:

«Նոր-Պարն» սկզբում տպագրուում էր Միխելսոնի տպարանում: 1886—87-ի յուլ. 20-ը Կրամարենկոյի, այնուհետեւ մինչեւ 1893 թ. մայիսի 8-ը, Ռուս «Կաւկազ» լրագրի գրասենեակի տպարանը եւ մինչեւ այժմ Եհնազարեանցի տպարանում:

Հրատարակութիւններ՝ արտատպ. «Նոր-Պարի» Մուրացանի—«Իմ կաթողիկ հարսնացուն» (վէպ.)

Նար-Պոսի—«Աննա Սարոյեան. (նամակներ): Եիրակեցի—«Պատկերներ իրակ. կեանքից» Բժ. Մ. Արամեան—«Սալիանից Էջմիածին» (ճանապ.) եւ այլն:

Թերթիս խմբագրապետ պ. Սպանդար Սպանդարեանի Տփիսից հեռանալու ժամանակ, «Նոր-Պարի» տակ նախ ստորագրում էր՝ «փոխ. խմբագիր Գ. Տէր-Յովհաննիսեան». իսկ վերջերքս «պաշտօնակատար-խմբ. Ման. Արեղեան»:

«Նոր-Պարը» անցեալ 1893 թ. սկզբին իւր 10-ն ամեայ տարեմուտի առթիւ երբ շատ տեղերից համակրական նամակներ, հեռագիրներ, եւ շնորհաւորութիւններ ստացաւ, մի քանի մարդիկ եւ զանազան կիսահայ անձնաւորութիւններ, „ПРАСОУ“ -ների խմբագիրներ, կոյր նախանձից սկսեցին իւրեանց վայել հայուանքներ թափել «Նոր-Պարի» հասցէին հասարակութեան մէջ. եւ որ ստացան ըստ կարգին պատիժը: Հակառակ այդպիսիների ցանկութեան, «Նոր-Պարը» մինչեւ այժմ յաջողութեամբ հրատարակուում է ոչ մի անգամ դադարման կամ նկատողութեան չը ենթարկուելով:

ԹՆՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) «Նոր-Դար» եւ մեր աղբիւրները—
  - ա. «... Իսկ Ձեր համասփիւռ «Նոր-Դարի» առաջին եւ երկրորդ համարները մեծ համակրութիւն գտան «Թէրճեման» էն եւ «Արեւելք» էն մէկ քանի մասերը վերջինն մէջ արտատպուեցան...»
  - «Նոր-Դար» 1884. № 2.
  - բ. «Տիֆլիսում» «Նոր-Դար»
  - «Հայկակ. Մատենագ.» ք. էջ 155.
  - [In Tiflis „Nor-Dar“ (Das neue Zeitaitei)“ «Arm. Bibliot.» II. էջ 155.
  - գ. «Նոր-Դար» խմբ. Ս. Սպանդար. 1883“
  - «Հայոց արդի մատեն.» (ձեռագ.)
  - դ. «Նոր-Դար»... ներկայումս Ռուսահայոց մէջ հրատարակուում են»
  - «Պատմ. Հայոց» Ս. Պալասան. էջ 445.
  - ե. «Որքան որ Ֆրանսիան... անյաջողութիւններէ հանդիպեց որքան մեծ յաջողութեամբ է պսակուել Անգլիական ձեռնարկութիւնները Ասիայում, հետեւաբար աւելի քան... Որքան բառին տրամաբանօրէն միայն այնքան բառը պէտք է հետեւի եւ ոչ հետեւաբար...»
  - «Մեղու Հայաստանի» 1885. № 98.
- 2.)—3.) Այս տողերը «Նոր-Դարի» համարներին չեն գրուում թէեւ հարկաւոր են.
- 4) «Տէրութեան կարգադրութիւններ» շատ սակաւ են պատահում. Համարի սկիզբը գրուում են Առաջնորդող յօդուածները.
- 5.) «Հեռագիրները «Նոր-Դարը» նախ տպագրուում էր առաջին երեսում խոշոր տառերով, այժմ տպագրուում է 3-դ կամ վերջին երեսում.
- 6.) Բաժանորդագրութիւնից դուրս, փորձի համար 2 թերթ լոյս տեսաւ 1883 թուականի դեկտեմբերի 30-ին եւ 31-ին.
- 7.) Եթէ չենք սխալուում «Իւնիւս» ստորագրութիւնը պատկանում է թերթիս խմբագրատնին. Պ. Սպանդարեան այդ ստորագրութեամբ 70-ական թուականներին աշխատակցում էր նաեւ «Մշակ» լրագրին.

135.

ԼԱՊՏԵՐ ԴԻՕԳԻՆԵԱՆ<sup>1.)</sup>

ՀԵՆՐԻՍ ԱՉԳՈՅԻՆ ԵՒ ՋԱՆՅՈՒՆՅԱՆ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1884-1889

Հրատարակուում էր՝  
Տէր եւ Տնօրէն՝ Արամ Աշճեան.



«Սասնաղնուպոլսում Աշճեան պ. Արամ 1884 թուականին փորձ փորձեց մի զաւեշտական եւ ազգային փոքրիկ հանդէս հրատարակելու: «Իփօգինեան Լապտերը» երկու համար լոյս տեսնելով, Տաճկաց «Կրթութեան Նախարարութիւնից» զաղարման դատապարտուեցաւ: Չորս տարի յետոյ 1888 թուականի վերջերին «Իփօգինեան Լապտեր» քանի համար էլ լոյս տեսաւ եւ յաւեանազազարեց:

ԹՆՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ «Լապտերի»:
- ա. «Իփօգինեան Լապտերը» հազիւ երկու անգամ վառուեցաւ, անդէն մարել տուաւ կրթական նախարարութիւնը, Լապտերի իւրը պաշտօնական ձեթավաճառէն առնուած չըլլալուն համար...»
- «Նոր-Դար» 1884 № 34. էջ 8.
- բ. «Լապտեր Իփօգինեան» հանդէս ազգային եւ զաւեշտական Տէր եւ տն. Աշճեան Ա. Կ. Պ. 40դր.,
- «Հանդ. Ամսօր.» 1889. էջ 262.

136.

ԹԱՆԳԱՐԱՆ

ԺՈՂՈՎՐԴԵԸՆ<sup>1.)</sup>

(Ամսատետր)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1884-1886:

Հրատարակուում էր՝ ամսի կիսերին. Խմբագրութեամբ՝ Տօքթօր Մ. Բ. Իւթիւճեանի.

Տպագրութիւն Ա. Աշճեան. Դիրքը (տետր) 1 թերթ տպ. 32 էջ 10X15 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր. Բաժանորդագիրնը՝ տարեկան 6 ղրշ.

Լեզուն ոճը } ,,...և գոնուած տեղն ալ  
Ուղղագրութ. } ծովուն խիստ մօտ ըլլալուն  
յարմար պարագայից մէջ կեր-

Ծրագրիը՝ Աշխարհահայկ երեւելի արանց կենսագր-րու թիւններ, Հանդերձ կենդանագրերով: Թովանդակութիւն 1884 թիւ 1-2. Գիտութիւն եւ Ֆրանքլին:



Հակերտ Օսմանեան եւ Գաղիոյ բժշկական ճեմարանաց, բժիշկ կախերական բանակի եւ արքունի պալատան՝ դօքտոր պ. Մանուէլ Բարունակ Իւթիւճեան՝ որ մի ժամանակ խմբագրում էր «Կիլիկիա» Հանդէսը եւ վերջերքս 1882 թուականից սկսեց Հրատարակել «Մատենադարան ժողովրդեան» ամսատետրը, երկու տարուց յետոյ էլ սկսեց «Թանգարան ժողովրդեան» անունով տետրակներ ի Հրատարակութիւնը, տարեկան 12 տետրակներ տալով, պ. Իւթիւճեան նպատակ ունէր տասներկու երեւելի արանց կենսագրութիւններ Հրատարակել: Այդպէս «Թանգարանի» ընթերցողները ծանօթացան միշտ բնշանաւոր անձանց կենսագրութեան, ինչպիսիք են՝ Պենիամեն Ֆրանքլին, Առաքել Բահաթրեանց, Կիւթէնպերկ, Պիւֆոն,

Մովսէս Խորենացի, Միռապո, Ռափայել, Եղիշէ, Առակօ եւ այլք:

«Ժողովրդեան Թանգարանի» տետրակները յաճախ պատահում էին երկուսը միասին կազմած:

«Մատենադարանից շատ չը կարողացաւ տպրել «Թանգարան». եւ որ նորահետ միասին դադար առաւ 1885 թուականի վերջերին:

137.

# ԱՐԵՒԵԼԻՔ

ՕՐԱԳԻՐ

ՔՈՂՔՈՂԿԱՆ ԵՒ ԱՉԳՈՅԻՆ

(Ամենօրեայ)

Կոստանդնուպոլ (Տաճ.) 1884-1894-եւս Հրատարակուում է՝ ամեն օր. Արտօնատէր՝ Ս. Տամատեան. (Խմբագիր՝ Բիւզանդ Քեչեան): Տպագրութիւն՝ «Արեւելք» լրագրոյ. Դիրքը (թերթ.) միածալ 4 էջ 6-սիւնեան 47X68 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ բաւարար. Բաժանորդագիրնը՝ տարեկան 150 դահեկ. արծաթ: Կէս տարին 75 ,, Ռուսաստան տարեկան 15 ըուրլի Այլ երկիրներ ,, 40 ֆրանք. Հասցէն՝ խմբագրութիւն «Արեւելք» օրագրի.

Ղալաթիա. Կոստանդնուպոլիս. կամ՝ Rédaction du journal „Arevêk“ Galata Constantinople.

Լեզուն ոճը } ,,...Հնչեց հրաւերի զանգակն  
Ուղղագրութ. } Լեւոստիոսանց իջան յնկերե-  
ցի ուր ատեանը բացուեցաւ...»  
Ծրագրիը՝



**ՔԱՂԱՔԱԿԱՆ**—Ընդարձակ յօդուածներ քաղաքական աշխարհից, արտաքին տեսութիւն, տեղեկութիւններ, լուրեր, արդի քաղաքական դրութիւնից, արտասահմանեան նամականի՝ քաղաքական բնաւորութեամբ: Պաշտօնական կարգադրութիւններ, տեղեկութիւններ, լուրեր տիրող կառավարչութեան եւ այլ օտար պետութիւնների պաշտօնական լրագիրներից քաղուած:

**ԱԶԳԱՅԻՆ.**

**Առաջնորդող**—Յօդուածներ առօրեայ ազգային խնդիրների մասին. պաշտօնական տեղեկութիւններ, լուրեր, ազգային պատրիարքարանից. Ազգային ժողով, նոր կարգադրութիւններ սրբազ. պատրիարք Հօր. ճառեր, քարոզներ, ուղերձներ, շրջաբերականներ եւ այլ գրուածներ:

**Թերթօն Արեւելքի**—(Գծի տակ.)

Պատմական վէպեր, ժամանակակից յայտնի հեղինակների գրուածներ, վիպասանութիւններ օտարների կեանքից, թարգմանական գրուածներ Եւրոպական նշանաւոր անձանց աշխատութիւններից. Հատուածական նամակներ, կենսագրութիւններ, վիճակագրութիւն, եւ այլ գրուածներ ազգային կեանքից:

**Ներքին Լուրեր**—Նոր կարգադրութիւններ Բարձրագոյն Դրան. պետական օրինաց փոփոխութիւններ. Բարձրագոյն Հրաման. կառավարչական պաշտօնեաների տեղափոխումն, մանր լուրեր, տեղական թիւրք լրագիրներից թարգմանօրէն արտատպած:

**Ազգային Լուրեր**—Յօդուածներ հայկական լուրջ խնդիրների մասին. հառապող գրուածներ, շարագրութիւններ, օտանաւորներ, ազգային հանդէսներ. առօրեայ պատահական դէպքեր, մեր կեանքին վերաբերեալ. նամակներ թմբագրութեան. թղթակցութիւններ, լուրեր գաւառներից եւ այլ հեռաւոր հայաբնակ տեղերից. խրմբագրութեան կողմից . . .

**Հեռագիր**—Օրական հեռագրերն իւրօր սային եւ Հաւասի Հեռագրական Գործա-

կալութիւններից:

**Սակարբան**—Բորսա տեղական եւ արտասահմանեան, զանազան վիճակհանութեան աղիւսակներ . . .

**Աստի Անտի**—Չանազան հետաքրքիր խառն լուրեր, արտասովոր դէպքեր ու նորութիւններ . . .

**Յայտարարութիւններ**—Հայերէն եւ օտար լեզուներով:

**Բովանդակութիւն** 1893. 2 յունիսի (թ. 2799.)

**Քաղաքական**—Փրանսիական գործեր, Ռուսիա, ի Շիքալօ, Կալիչա, Հապէշտան, Աւստրիա եւ Ռուսիա, Բողոքականք եւ կաթողիկէ ի Գերմանիա, Մարդակերք, Յանդուքն աւազակութիւն, Սեղանւորական, Կաւկասիայէն, Փարիզի սակարան, Պէհրինկի . . Սիպէրիա:

**Թերթօն Արեւելքի**. Լուի ժաքոլիօ—Իւզօրի ջաղացքին ոճիրը (շարունակելի).

**Ազգային Լուրեր**—Սահակ-Մեսրոպբեան մըրցանակաբաշխութեան ներկայացուած աշխատութիւններ: Խասգիւղի Գալֆայեան Որբանոցի մայրապետի Իզմիր մեկնիլը: Գանտիլիի եկեղեցին:

**Ներքին Լուրեր**—Պաշտօնականք—ի Կայս. պալատ. ի Բարձր. Դուռն. Դատաւորաց երդումը, Ղալաթիոյ մաքսատունը, Նոր ծրագիր, Ազգարարագիր, Բէժի նոր կանոնագիրը, Ռուսական դեսպան, Կ. Պոլսի արուեստահանդէսը, Մահու պատիժ, Վիճակ, Մարդահամար, Սամսոն-Սեբաստիոյ երկաթուղին, Հնդախտ, Օտար պատուանդան, Կազի մենաշնորհ, Ոգելից ըմպելիներ, Թիւնելի ընկերութիւնը, Իտալական հիւպատոսը, Սպանիական գեսպանատունը, Անտառաց վարչութիւնը, Թուշնոց ծիրտ, Մախսիսէի վարչութիւնը, Կիսարիոյ դաւաւը, Դիակ, Հայրասպան, Չըոսանաւ, Ծովային նախագահ, Տերքոսի ջուր, Եմէնի, Իւնայի սուրհանդակ, Մալաթիա, Սիւրքէճի, Ոճիրք եւ արկածք, Պուրքէյից, Ոչխարներ Ազրիանուպոլսոյ, Օրթաքեոյ գաւառակը:

—Նեւրուզ-23 Քիւշիւքեօրկիւստիս-Խան }  
 —Համբուրգի Մ. Մ. Վալաթէն եւ Ընկ. } 2)

Լինարտի փողոցին ոճիրը—

—Հեռագիր այսօրուան—Փարիզ, Վիէննա, Պելկրատ, Փետերսպուրկ:

—Սակարան—Ղալաթիա, Եւրոպական պորտա:

—(«Ազգային լուրեր») —Իզմիրի առաջիկայ հունձքը—Տ. Գ.

—Նամակ Ամերիկայէ—Գոլոմպեան ցուցահանգէսը—Հ. Ա.

—Աստի Անտի — Գարեջուրն յԵւրոպա, Էրիկ մարգուն մարթին տակ, կեանքի պայքարը:

Յայտարարութիւնք:—



այ լրագրութեան մէջ առաջին տեղն է բռնում «Արեւելք» իւր հսկայական մեծութեամբ: Փառաւոր դիրքով քաղաքական եւ ազգային նիւթերի ընդարձակ շտեմարան է «Արեւելք» ամենօրեայ լրագիրը, որը 1884 թուականից ՚ի վէր Կոստանդնուպոլսում հրատարակուում է արտօնատէր պ. Ստեփան Տամատեանի տնօրէնութեամբ եւ պ. Բիւզանդ Քեչեանի խմբագրապետութեամբ:

«Արեւելք» 400 Օսմանեան լիրայի չափ դրամագլուխ ունենալով, մինչեւ այսօր յաջողութեամբ հրատարակուում է, որ շաբաթական ամեն օր համար լոյս հանելը այդպիսի մեծութեամբ հեշտ չէ. եւ այսօր «Արեւելք» կարող է պատիւ բերել մեր լրագրութեան Եւրոպական ազգերի առաջ:

«Արեւելքի» ղեկավարները սկզբից էլ եղել են մի խումբ աշխոյժով ազգասէր երիտասարդներ, նորանցից ամեն մինը ժրջանութեամբ աշխատելով խմբագրական եւ այլ գործերում:

Ս. Տամատեան «Արեւելքի» պատասխանատուն է, «Արեւելքի» արտօնատէրն է. իսկ խմբագրապետն է պ. Քեչեան ղիտնական եւ քաղաքագէտ երիտասարդը:

«Արեւելքը» սկզբի տարիներում յաւելուած էր տալիս արտասահմանեան բաժանորդների համար:

«Արեւելք» տասներորդ տարին ղիմաւորեց եւ այդ տասնամեակում իւր ուղղութեամբ, իւր գործունէութեամբ, այսօր նշանաւոր է մեր լրագրութեան մէջ: Թիւրքիայի մայրաքաղաքում գործելով, լինելով յայտնի, բարձր դիրքով եւ համարեա կիսապաշտօնական հայ լրագիր, պաշտպանում է ազգային շահերը, մեր եկեղեցու եւ պատրիարքարանի իրաւունքները եւ այն ամենը, ինչ որ սիրելի է ազգի մեծամասնութեան, ինչ որ օգտակար է մեր հասարակութեան կենսական շահերին, յառաջդիմութեան:

«Արեւելք» ձեռք ձեռքի տուած իւր համաքաղաքացի մի երկու եւ Կովկասի մի երկու թերթերի հետ, աշխատում է պահպանողական դիրք բռնել յօգուտ ազգի եւ ընդհանրապէս կրօնական խնդիրների մէջ: Վերջերքս կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ պ. Քեչեանի լրագիրը պաշտպանում էր Թիւրքիայի հայ եպիսկոպոսների կողմը. այսինքն այն թեկնածութիւնը, որը կամենում էին պահպանողական լրագիրները—որ եւ յաջողուեց:

«Արեւելք» այսօր մեր ամենատարածուած լրագիրներից մինն է: Ռուսաստան եւ այլ հեռաւոր երկիրներ, մինչեւ անգամ հեռաւոր Ամերիկա, Անգղիա եւ այլ ուրիշ տեղեր հարիւրաւոր համարներով է տարածուում, եւ հեռագհետէ ընդարձակուում, պատկառելի կերպարանք ստանում:

«Արեւելք» լրագրին աշխատակցում են

Թիւրքիայի հայ գրադէտներին շատերը: Տիգրան եւ Հրազդան (կեղծ անուն) Արփիարեան եղբայրների վաւրուուն ոճով գրած յօդուածները գարդարում են «Արեւելքի» էջերը:

«Արեւելք» ինչքան որ պաշտպանում է ազգային կենսական շահերը, նոյնքան հաւատարիմ է եւ սիրելի տիրող Պետութեանը՝ Վէհ. Սուլթանին եւ Նորա իրաւունքներին հպատակ ու պաշտպան:

Այն սովորութիւնը որ վարակել է Թիւրքիայի մեր միւս լրագիրներին, շուտ շուտ կերպարանափոխուել, կամ տասն օրը մի անգամ դադարման ենթարկուել, «Արեւելք» իւր տասնամեայ գոյութեան միջոցին ոչ մի փոփոխութեան չէ ենթարկուել: Վերջերքս միայն 1891 թուականի հոկտեմբերամսին մի ոչ այնքան անմեղ յօդուածի համար «Արեւելք» պարտաւորուեցաւ դադարելու, բայց շուտով ներումն ստացաւ եւ սկսեց հրատարակուել ու մինչեւ այսօր հրատարակուում է յաջողութեամբ:

Յարատեւութիւն եւ յաջողութիւն «Արեւելք»ին:

Թ Ա Ն Օ Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ն Ր .

1.) Աղբիւրներ եւ «Արեւելք» օրաթերթը՝ ա. «... Որ Կ. Պոլսի «Արեւելք» լրագիրը դադարեցրած է Թիւրքաց Կառավարութեան հրամանով անորոշ ժամանակով դադարման շարժառէթը ինչպէս հաւատացնում են «Արեւելք»ում տպուած մի յօդուած էր որի մէջ այդ լրագրի էրզրումի թղթակիցը խօսում է առեւտրի անկման մասին էրզրումում եւ այդ անկման պատճառների մասին...»

«Մշակ» 1891. № 121. էջ 2.

բ. «... Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթը հաստատուն քայլերով կամենում է բարձրացնել լրագրի դիրքը Կ. Պոլսում իւր նիւթերի ընտրութեամբ, թղթակցութիւններով եւ լուրջ դատողութեամբ: Ինչպէս երևում է «Արեւելք» Կ. Պոլսի «Մը-

շակ» (") պիտի գտնայ...»  
«Մանկավարժանոց» 1884 № 4.

գ. «Արեւելք լրագիր քաղաքական եւ ազգային, հանապազօրեայ, սկսեալ 1884 յունուարի 1-ին. հրատարակութիւն յատուկ ընկ. Ստեփան Տամատեան.»

«Օրացոյց ժող. պատկ.» 1893 թ. էջ 65.

դ. «Ստացանք Պոլսում նոր լոյս տեսնող «Արեւելք» անունով թերթի... համարները... ցանկանում ենք այդ նոր թերթին ամեն կերպ յաջողութիւն: Ինչպէս երևում է թերթը լայն շրջանակի վրայ է հաստատուած...»

«Նոր-Իւր» 1884. № 7. էջ 3.

ե. «Արեւելք օրագիր քաղաքական Ե. տարի Կ. Պ. տպ. Արեւելք 150 դր.»

«Հանդ. Ամսօրեայ» 1889 էջ 261.

զ. «Կ. Պոլսոյ մէջ լոյս են տեսնում հետեւեալ հայ լրագիրները եւ պարբերական հրատարակութիւնները. «Արեւելք» ամենօրեայ 3-դ (") տարի...»

«Արձագանք» 1885. № 18. էջ 245.

է. «Ուրեմն այդ դէպքում «Արեւելք»ին թնչ անուն ենք տալու, եթէ ոչ հայութեան ամենակենսական շահերի դրդել...»

«Հայրենիք» 1886. (6-ն յունուար).

ը. «Արեւելք-լրագիր քաղաքական եւ ազգային ամենօրեայ սկսեալ է 1-ն յունուարի 1884. հրատարակութեան յատուկ ընկերութեան. Ստեփան Տամատեան արտօնատէր»

«Օրացոյց» 1893 թ. ծոցի. Ռաս. էջ 90.

թ. «... Ահա կանցնի «Արեւելք» որ ինչպէս յայտնի է Հայոց առաջին թերթն է...»

«Խիկար» 1887. թիւ ա.

ժ. «... Իսկ մօտ ժամանակների մէջ 'ի լոյս կ'ընծայուին... եւ Արեւելք...»

«Պատմ. հայ. մատեն.» Ե. վ. Դուր. էջ 97.

ժա. «... Այժմս դուրս են գալիս հայերէն լեզուով հետեւեալ լրագիրները եւ հանգէսները... Կոստանդնուպոլսում ամենօրեայ Արեւելք յաւելուածով արտասահմանեան բաժանորդների համար...»

«Հայկակ. մատենագ.» ք. էջ 154.

[, «... Gegenwärtig erscheinen in armenischer Sprache folgende Zeitungen und Zeitschriften. In Konstantinopel: Die Tageblätter „Arewelk“ (Der Orient) mit einer Wochenausgabe für

das Ausland . . .“

„Arm. Bibliot.“ II. էջ 154.

Պ. Փարսադան Տէր-Մովսիսեան Կոստանդնուպոլսի միւս լրագիրներէ անունները չի շել է, մինչեւ անամ շատ աննշան հըրատարակութիւններէ, բայց, Արեւելքի՝ անունը գրել մոռացել է:

2) Երեւի կրկնակի վճարով, ինչպէս Կովկասի թերթերը յայտարարութիւններ տպագրում են առաջին երեսում, Կոստանդնուպոլսոյ թերթերի մէջ էլ տպագրում է յայտարարութիւններ երկրորդ, երրորդ էջերում՝ յօդուածներէ մէջ:

138.

# Խ Ի Կ Ա Ր

Հ Ա Ն Գ Ի Ս Ը Մ Ս Ե Ը Յ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1884-1888

Հրատարակուում էր ամսի վերջերին. Խմբագիր՝ Յ. Յ. Պարոնեան.

Տնօրէն-Գործակալ Նշան Կ. Պերպերեան.

Տպարան Նշան Կ. Պերպերեան.

Դիրքը (տետր.) տպ. 32 էջ 15 X 24 Կ. մետր. Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագիրն ը տարեկան 2 արծ. մէճիտիէ.

Լեզուն, ոճը, } „... Այս պարտականութիւնն կատարելէն ետքը կը յուանըր Ուղղագրութ. որ պիտի ներուի մեզ...“

- Թատերական—Թատրոնական գրուածներ—կատակերգութիւններ ազգային կեանքից.
- Գրական—Առտնին կեանքից յօդուածներ, նամակներ խմբագրութեան, նոր գրքեր...
- Երգիծաբանական—Ձաւեշտական յօդուածներ, մանր լուրեր, զուարճալիք, այլ եւ այլ գրուածներ ծիծաղաշարք բնաւորութեամբ:

Յայտարարութիւններ:

Բովանդակութիւն 1886 թիւ (նոյեմբ.)

Պաղտասար աղբար—կատակերգութ. երեք

արարուածով. (շարունակութ.)

Սգտակարագունին.

«Եթէ»ներ.

Գիտութիւնը մանկացնել.

Նամակ առ խմբագրութեան.

Առտնին կռիւներ:



արոնեան Յակովբ, Տնօրէն-Խմբագիր «Սեղուի», «Եփրատի», «Թատրոնի», «Փող Առաւօտեանի», «Երկրագնտի» եւ այլոց, խմբագիր եղաւ նաեւ 1884 թուականի օգոստոսին

Ազրիանուպոլում «Խիկար» ամսեայ հանդէսին:

«Խիկարը» մեր երգիծաբանական զաւեշտական պարբերական հրատարակութիւնների մէջ առաջինը կարելի է հաշուել: Մարդ մի քանի տող չի կարող կարգալ առանց ծիծաղելու: Պարոնեանի գրչի տաղանդն այստեղ հասել է իւր գագաթնակետին:

«Խիկարի» 1886-1887 թուերը որ մեր մօտ ունինք, մեծ տեղ են բռնում այստեղ Պաղտասար աղբար կատակերգութիւնը, «Առտնին կռիւներ», «Քաղաքավարութեան վնասները»: Չենք լիշում այն հատ ու կրտոր գրուածները, «Պիտանի հարցումները» «Նամակները» 2.) եւ այլն որ «Խիկարի» նիւթերի հետ ծանօթանալու համար պէտք է միայն կարգալ: Մեր լիշածներից առաջինը «Պաղտասար աղբար» մի շատ ծիծաղելի եւ ուրախ կատակերգութիւն է, ծիծաղի հետ ունի նաեւ իւր բարոյականը: Մեր տաղանդաւոր, հանգուցեալ երգիծաբանի լիշատակը վառ պահելու համար մի բարեկամական խորհուրդ ենք տալիս Տփլիսի հայ թատրոն-

նական ժողովին արտագրել այս պիեսը եւ գրաքննչական ատեանից թույլտուութիւն ստանալով բարձրացնել մեր բեմի վերայ:

Երկրորդը՝ «Աւտնին կռիւներ» պարբերաբար տպագրուող յօդուածները ցոյց են տալիս հեղինակի սաստիկ ատելութիւնը դէպի նորանոր ձեւութիւնները, հփաները եւ ընտանեկան այլ շռայլութիւնները:

Երրորդը՝ որի վերնագիրն է «Քաղաքավարութեան վնասները», զաւելցած խմբագիրը ցոյց է տալիս թէ զանազան տեսակ քաղաքավարութեան կանոնների հետեւելով մարդ քնչքան վնասուում է՝ թէ դրամական թէ ֆիզիքական:

«Խիկարը» սկսուելով օգոստոս ամսից, տարեշրջանը բոլորում էր օգոստոս ամիսներին:

Ա. տարին (1884-85) կանոնաւոր հրատարակուեց:

Բ. „ (1885-86) ոչ կանոնաւոր, տարուայ վերջերին տեղափոխուեց Կոստանդնուպոլիս:

Գ. տարին (1886-87) կանոնաւոր հրատարակուեց:

Դ. „ (1887-88) արդէն դադարուեց:

Կոստանդնուպոլսում «Խիկարի» տնօրէն գործակալ նշանակուեց Նշան Կ. Պերպերեան: Ահա ինչ է գրում խմբագիրը 3-դ շրջանի առաջին տետրակում— «Այս անգամ մեր ի Կոստանդնուպոլիս ուղեւորութեան առթիւ տեսանք որ ամեն կողմէ փափաք կը յայտնուի «Խիկարի» վերատին հրատարակութեան համար, զոր քաջալերելու համար աջակցութիւն եւս կը խոստացուի մեզ: Այս փափաքանաց՝ որոց մէջ մաս մ՝ ունինք՝ չը կրնալով դիմադրել, դիմեցինք առ... Նշան Կ. Պերպերեան ուր ծանօթ է ազգայնոց որքան իւր հաստատամտութեամբն, նոյնքան իւր արհեստովն ու ճաշակովն, խընդրելու համար իւր աջակցութիւն... Իր (Պերպերեանի) աջակցութիւնն ըստ մեզ պատուաւոր երաշխաւորութիւն մ՝ է «Խիկարի» յարատեւութեան, եթէ Կոլզն ինչ խրախոյս

գտնենք ընթերցողաց կողմէն»:

«Գալով հանդիսիս պարունակութեան, կը յայտնեմք թէ պիտի խօսի նա այն ամեն ճիւղերու վրայ, զորմ կընդգրկէ զուարճախօս թերթ մը. ըստ ներքոյ տպագրական ազատութեան, պիտի աշխատինք «Խիկարն» այնպիսի դիրքի մէջ պահենք, որ կարենայ գահացնել ամեն կարգի ընթերցողներու: Կարելի եղածին չափ պիտի ջանանք չը հրատարակել այլաբանական գրուածքներ, զորո հարկն կը ստեղծէ եւ որոց մէջ կը մարի երգիծանքն...»

Եթէ «իր (Պերպերեանի) աջակցութիւնն... պատուաւոր երաշխաւորութիւն մ՝ ընէր սորա յարատեւութեան»՝ արդեօք քնչը պատճառ դարձաւ «Խիկարի» նոյն թուականին վերջանալուն:

Թ Ա Ն Յ Օ Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Կարելոր նամակ մը» —

... Խմբագիր Խիկար... Հանդիսի.

„ Կը փութամ իմ ամենազերմ երախտագիտական զգացումներս հրատարակել յայտնել ձեզ. որուն պարտ եմ կեանքս:

„ Հինգ տարիներէ հետէ սրտի նեղութիւն եւ մեղամաղձտութիւն ունէի այնպէս որ անապատ քաղաքուր որոշում տուած էի: Մայրաքաղաքիս ամենէն նշանաւոր բժշկիկներուն դիմեցի, անոնց դեղերն առի, գիտարաններու մէջ դեղ չը ձգեցի, ախտս անոնց ամենն ալ լափեց եւ միշտ յաղթող եղաւ: Իսկ երբ սկսայ „Խիկար“ կարգաւ, ախտս կամաց կամաց տկարանալ սկսաւ, եւ փառք տ(Տ)իրոջը՝ այսօր երկաթի պէս քաջաւուղջ եմ:

„ Տասն օրինակ „Խիկարի“ բաժանորդ գրեցէք զիս եւ ընդունեցէք կաղաչեմ, իմ ամենախորին երախտագիտութիւնս որով մնամ՝

Խոնարհ ծառայ

Ստեփան Թորոսեան:

Կ. Պոլիս 29 յունիս 1887.

(Մանօթ.— Այս Ստեփան Թորոսեանն շփոթելու չէ այն Ստեփան Թորոսեաններու հետ, որք կը կարծեն թէ իրանք են այս

Ստեփան Թորոսեանը.) „Խիկար“ ծանօթ. „Խիկար“ 1886—87. էջ 341.

2.) Այս տեսակ „կարեւոր նամակներով“ լինեն „Խիկարի“ էջերը, որ կարգացողը ծիծաղելուց յետոյ գովում է հանգուցեալի տաղանդը:

139.

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2.)

## ԱՄՄԱՊԻՐ

Ս. Պետերբուրգ (Ռուսաստ.) 1884-1887  
Հրատարակուում էր՝ ամիսների սկզբին.  
Խմբագրող-Հրատարակող՝ Խորէն Տ.  
վ. Ստեփանէ:

Ի. Ն. Սկորոխոգովի տպարան 3.)  
Գիրքը՝ (տետր.) 1<sup>1</sup>/<sub>2</sub>-2. տպ. թերթ. 40-60 էջ. 11x17 հմետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.  
Բաժանորդագրինը՝ տարեկան երեք  
րուբլի.

Լեզուն, ոճը } ... Նորան գրուում է և  
Ուղղագրութ. } վերջապէս համոզում է այս  
ինչ տեսակ ուղղութեան հե-  
Մրագրերը՝

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՒԹՅԱՆ — Յօդուածներ մանկա-  
վարժական աշխարհից: Մեր դպրոցների  
արդի դրութիւնը: Գաղութական վիճակազ-  
րութիւններ, տեղեկութիւններ, հաշիւներ  
եւ այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ — Մատենագրական փոքրիկ  
յօդուածներ, լիշատակարաններ, բանաս-  
տեղծական, աշխարհագրական, կենսագրա-  
կան յօդուածներ, տեղագրութիւն:

Պատասխանիք խմբագրութեան.

Յայտարարութիւններ:

Բովանդակութիւն 1887 № 1.

Գաղութի ոգին.

Հնգկաստանի եւ Բիրմանիոյ հայեր-Ս. Գուլ.

Լազիստանի հայեր.

Մի երկու խօսք Տրապիզոնի թեմի կրթա-  
կան վիճակի առթիւ:

Օտարական հաստատութիւնները Կիլիկիա-  
յում:

Թուրքիոյ եւ առանձին Կ. Պոլսոյ հայ ժո-  
ղովրդեան արդի վիճակը:

«Ազգաբար» անդրանիկ հայ ամսագիրը, եւ  
նրա խմբագիր Յարութիւն քահ. Շմաւոն-  
եան—Ս. Գ.

Հայաստանի արդի աշխարհագրական եւ ժո-  
ղովրդական մատենագրութիւն:

Բովանդակ—ա. գրքի (շապկի վերայ)



որէն Տ. վ. Ստեփա-  
նէն «Հայկական Աշ-  
խարհի» խմբագրող-  
հրատարակող ինչ-  
պէս լիշեցինք իւր  
տեղում արժանալի-  
շատակ Գէորգ դ. կա-  
թողիկոսի հրամա-  
նով Ս. Էջմիածին

կանչուեցաւ: Հայր Ստեփանէն մնաց Էջմիած-  
նում զանազան պաշտօններով. ինչպէս Գէ-  
որգեան ձեմարանի ուսուցչութեամբ, «Արա-  
րատ» ամսագրի խմբագրութեամբ եւ այլն:  
1884 թուականի մարտ ամսից հայր Ստե-  
փանէն սկսեց հրատարակել «Մանկավարժա-  
նոց» ամսագիրը, որը խմբագրուում էր Էջ-  
միածնում, տպագրուում էր Տփլիսում:

«Մանկավարժանոցիս պետագօգիւմի  
նոյն ինքն անունը ցոյց է տալիս իւր նը-  
պատակը—ասում էր հայր խմբագիրը-մանկա-  
վարժներ պատրաստելու տեղ, մանկավարժ-  
ների դպրոց école normale, Lehrer-Seminär  
учительская семинария... ոչինչ չէ կա-  
րող խել մեզանից այն հաստատուն հաւա-  
տը. թէ կը գայ ժամանակ թէպէտ գուցէ

եւ ոչ շուտ երբ մեր սերունդները կը սկըսին զարմանալով լիշել թէ որքան երկար արհամարում էինք մենք կրթութեան գործը եւ թէ որչափ չարչարանքներ կրեցինք այս անհոգութեանց: Սակայն մանուկների կրթութեան սուրբ գործն սկսելով, մենք պիտի քաջ իմանանք որ մեր սեփական կրթութեանը բոլորովին անգոյացուցիչ է եղել եւ նորա հետեւանքներն ընդհանրապէս տխուր եւ թշուառ են, եւ թէ մենք պիտի ամեն միջոցներ գտնենք մեր մանուկներին մեզանից առաւել լաւ մարդիկ դարձնելու համար:»

1885 թուականին «Մանկավարժանոցը» իւր խմբագրի հետ տեղափոխուեցաւ Ախալցխա: Հ. Ստեփանէն նշանակուած էր Ախալցխայի յաջորդ եւ տեղական հայ դպրոցների տեսուչ: Կարճ ժամանակում Հոգեւոր բարձր Իշխանութիւնը հայր Խորէնին Ախալցխայից հեռացրեց: Այդ միջոցներում «Մանկավարժանոցի» մի տետրակ տպագրուեցաւ դարձեալ Տփլիսում: Իսկ երբ նշանակուեցաւ Ս. Պետերբուրգի հայոց քարոզիչ, մի տետրակ էլ հրատարակուեցաւ Ռուսիայի մայրաքաղաքում որ «Մանկավարժանոցի» վերջին համարն էր:

Հոգեւոր իշխանութիւնը այդտեղ էլ հանգիստ չը թողեց խմբագիր-վարդապետին, հրամայեց գնալ Ղրիմի Սուրբ-Խաչի վանքը վանահայրութեան պաշտօնով: Ս. Պետերբուրգից հեռանալով, ինչպէս լիշեցինք 1887 թուականի մարտի տետրակը վերջինն էր:

«Մանկավարժանոցը» շատ խնամքով էր սրբագրուում որ քչերին է այդ յաջողուած:

Հայր խմբագիրը «Մանկավարժանոցին» նշանաբան էր գրել թէ «Faisons notre devoir le reste est vanite» (Մենք մեր պարտքը կատարում ենք, մնացածն ունայնութիւն է): Իւր պարտքը կատարում էր նա, կատարում էր բառիս բուն նշանակութեամբ: «Մանկավարժանոց» իւր փոքր գիրքով պակաս չէր մընում «Հայկական Աշխարհից»: «Մանկավարժանոց» իւր ընթերցողներին ծանօթացրեց

աշխարհահռչակ մանկավարժների եւ նորանց գրուածների հետ, ինչպիսիք են՝ Հ. Թիրար, Պէտտալոցցի, Դիստերվէզ, Դիտտէս, Ժ. Ռուսօ, Մարիօն, Կոմպէյրէ եւ այլք:

Այսպիսով հ. խմբագիրն աշխատում էր արդարացնել իւր առաջին նշանաբանը—

Vereis amor da potria nao movido de premio vil, mas alto e guasi eterno—(Կը տեսնես հայրենիքի սէրը ոչ թէ անյարգ շահախընդրութիւնից շարժուած, այլ վսեմ եւ իբր յաւիտենական):

«Մանկավարժանոցն» աշխատակիցներ քիչ ունէր. նորա ինքնուրոյն թէ թարգմանական յօդուածները պատրաստում էր հայր խմբագիրը: Երբեմնապէս երեւում էին մի քանի ստորագրութիւններ՝ Ս. Գուլամիրեանց իշխ. Բագրատունի, Թ. Պալեան, Իգնատիոս եւ այլն:

«Մանկավարժանոց» ամսագիրը տարին տալիս էր տասը համար, յուլիս եւ օգոստոս ամիսներին չէր հրատարակուում:

**Ժ Ա Ն Օ Թ Ա Ռ Թ Ի Ա Ն Ն Ե Ր .**

- 1.) «Մանկավարժանոց» եւ աղբիւրներ—
  - «... Մանկավարժանոցն» առաջին անգամ հայերիս մէջ հրատարակեց ազգային դպրոցների մէջ աւանդելի բոլոր առարկաների վեցամեայ համակենտրոնական ծրագիր, աշակերտական կանոններով եւ դաստիարակների հրամանով, Նոյնպէս եւ դպրոցների տեղագրիներ եւ օրինակելի դասաւանդութիւններ. ընթերցողներն ուսուցիչներ պիտի լինէին, որոնք աններելի անտարբերութեամբ վարուեցան «Մանկավարժանոցի» հետ, ինչպէս եւ բոլոր մանկավարժական պարբերաթերթերի հետ սորանով ցոյց տալով իրանց անպատրաստութիւնն իհարկէ ուսուցչական վսեմ պաշտօնին... Հայկական ազգի ոչ վերելի երոյ այլ հիմնական կրթութիւն եւ լուսաւորութիւն, եւրոպայացումն մայրենի լեզուով, եւ բարեկարգ ազգային դպրոցով, ամենայն կեղծ ու պատիւր հնոտի պարագաների իսպառ արտաքսումն, ազ-

գային դպրոցներում ճշմարտութեան, արդարութեան, գեղեցիկութեան, պարտաճանաչութեան, աշխատասիրութեան, հայրենասիրութեան, գաղափարների ծաւալումն, ազգային դպրոցում բանիմաց, անձնուէր եւ աշխատասէր ուսուցիչների բարեխիղճ պաշտօնավարութեամբ, այս նշուիրական նիւթերն էին՝ «Մանկավարժանոցի» խմբագրութեան դաւանութիւնը...» (Մի ձեռագրից)։

բ. «... Ախալցխայում...», Մանկավարժանոցի «... Հայկակ. Մատեն.» բ. էջ 156.

[... in Achalzik (Transkaukasien), die Monatschrift „Mankawarshanoz“ (Der Erzieher)...» „Arm. Bibliot.“. II. էջ 156.

- 2.) Նախ միայն «Մանկավարժական»
- 3.) «Մանկավարժանոցը» տպագրուում էր նախ՝ Տփլիսում եղած միջոցին Յով. Մարտիրոսեանի, Ախալցխայում եղած միջոցին Ղալամքեարեանի, Ս. Պետերբուրգում Ն. Ակորոխոֆովի տպարանում։

140.



**ԼՐԱԴԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԶԵՂԱԶԱՎԱՆ ԸՌԵՆՏՐԱԿԱՆ,**  
**ԵՒ ԸՅԼՆ 2.)**

(Եռօրեայ)։

Մարտէլլ (Փրանսիա) 1885-1894-եւս.  
 Հրատարակուում է շաբաթը երկու անգամ, երեքշաբթի եւ շաբաթ օրերը.  
 Տնօրէն խմբագիր Մ. Փորթուգալեան.  
 Հայրէն տպարան Մ. Փորթուգալեան.  
 Դիրքը (թերթ.) միաժալ 4 էջ 4-սիւնեան 32x42 հ.-մետր.  
 Քուղթը եւ տիպը՝ բաւարար.  
 Բաժանորդագինը՝ տարեկան 20 ֆր.  
 Հասցէն՝ Մ. Փորթուգալեան. խմբագիր «Արմենիա» լրագրի—Մարտէլլ (Փրանսիա) կամ՝ M. Portoukalian rédacteur du journal „Armenia“ Marseille (France)

Լեզուն ոճը } «...Արդէն հայերս լաւ հասկցած եմ որ եւրոպական տէրութեանց շահն կը պահանջէ.»  
 Ծրագրի է՝

ԱԶԳԱՅԻՆ—Առաջնորդող յօդուածներ, ազգային խոշոր խնդիրների վերաբերեալ, նամակներ, թղթակցութիւններ, լուրեր Թիւրքիայի Ռուսիայի եւ այլ երկիրների հայաբնակ քաղաքներից եւ տեղերից։

ՔԱՂԱՔԱՎԱՆ—Ընդարձակ տեղեկութիւններ քաղաքական աշխարհից, յօդուածներ, տեղեկութիւններ, լուրեր քաղաքական բընաւորութեամբ, քաղաքական շարժում, զանազան վիճակագրութիւններ ծրագիրներ եւ այլն։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ—Նոր լուրեր. տեղեկութիւններ առեւտրական դրութիւնից։

Յայտարարութիւններ, զանազան լեզուներով։ Բովանդակութիւն 1886. № 83.

Նամակ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն—Ոսկան.

Նամակ Թիւրքիայէն (Վան)—

Մի շնորհաւորութիւն Պուլկարիայի նոր առաջնորդի ընտրութեան առթիւ (Վառնա) Յ. Ս. Փ.

Նամակ Փրանսիայէն (Փարիզ)—

Նուիրատուութիւն...

Ընդհանուր հայոց եկեղեց. ժողով.

Փրանսիական լուրեր.

Ծանուցումներ...



որթուգալեան պ. Մկրտիչ որ մի ժամանակ Կոստանդնուպոլսում հրատարակում էր «Ասիա» լրագիրը եւ երբեմն աշխատակից էր «Մշակ» լրագրին, Թիւրքիայից անցնելով Փը-



րանսիա կանգ առաւ Մարտէլլում որտեղ եւ սկսեց իւր լրագրութեան գործը 1885 թրուականի օգոստոսի 1-ից հրատարակելով «Արմենիա» «Ազգային եւ քաղաքական» եւ ուրեայ լրագիրը:

Հետո չէր մի լրագիր հրատարակել այն երկրում, որտեղ հայերը շատ փոքր թիւ են կազմում եւ գլխաւորն այն է նորա գոյութիւնը պահել մի քանի տարիներ:

Պ. Փորթուգալեան իւր մի ընդարձակ ծանուցագրի մէջ բացագրում է իւր թերթի ուղղութիւնը, նպատակը. յայտնում է իւր հայեացքները խղճի, ազատութեան եւ Հայաստանեայց եկեղեցու վերայ, ազատութեան եղբայրասիրութեան եւ հաւասարութեան դադափարների վսեմութիւնը եւ այլն: Եւ ցանկալով որ իւր թերթը ամեն տեղ՝ ուր հայեր կան ազատ կարողանայ մուտք գործել, վարուում է այն տէրութիւնների օրէնքներին համեմատ: «Եւ որովհետեւ «Արմենիա» հայ թերթը հաղորդակցութիւն ունի Թիւրքիոյ Ռուսիայի եւ Պարսկաստանի հայերի հետ, որոնք մեր ազգի մեծամասնութիւնն կը կազմեն, բնականապէս պարտաւոր ենք խոհեմութեամբ պահանջած սահմանին մէջ, յարգել նաեւ նոցա տիրող պետութիւնների հաստատած օրէնքները...»

«Մեր լրագիրը մի կողմէն պահպանողական է եւ միւս կողմէն արմատական. մեր թերթը կրօնական թերթ չէ եւ թէ լուսաւորչականութիւն քարոզելու սահմանուած չէ» — գրում էր պ. խմբագիրը:

Մի փորձուած հրապարակախօսից սպասելի չէր այսպիսի խօսքեր թէ «լուսաւորչականութիւն քարոզելու սահմանուած չէ»: Այդ հասկանալի է որ եթէ կրօնական թերթ չէ, ուրեմն լուսաւորչականութիւն քարոզելու չէ:

Ամեն մի ողջամիտ եւ լուրջ մտածող հայ անձն զիտէ որ այսօր մեզ ազգային-կրօնական-քարոյական կասկերով միացնողը մեր Եկեղեցին է եւ լուսաւորչականութիւնը:

Օգոստոս ամսից սկսուելով «Արմենիան», իւր տարեշրջանը լրացնում էր օգոստոս ա-

միսներին, 1888 տարուայ վերջերին խմբագիրը մի «Արմենիան պիտի շարունակուի թէ ոչ» վերնագրով առաջնորդող յօդուածի մէջ յայտնեց որ ստիպուած է «Արմենիան» դադարեցնելու: «...Առաջին հարուածն ստացաւ Արմենիան իւր Թիւրքիա մուտքն արգելուելով եւ մնաց միմիայն այդ երկրէն դուրս գտնուող հայերի հետ... քաւական երկար տարիներ վնասով... քանի որ ուրիշներէ ալ օգնութիւն չկայ շարունակելու համար, մենք ցաւ ի սիրտ ստիպուած ենք դադարեցնել «Արմենիայի» հրատարակութիւնը...»

Վերջերքս նորից սկսեց հրատարակուել:

**Թ Ա Ն Ս Թ Ա Ր Թ Ի Ն Ն Ս Ի .**

- 1.) «Արմենիա» լրագիրը եւ մեր աղբիւրները:
  - ա. «...Այդ նոր հրատարակութեան երեւումըն խնդրութեամբ ողջունելու պատրաստանոր յաջողութիւն կը մաղթէ խմբագրութիւնս եւ չը վարանիր քանի մի համառօտ դիտողութիւններ ընել... Հայք նոր հրատարակելի թերթի մը կրօնական դաւանութիւնը չին հարցներ եւ ոչ ինքնայատճշմարտութեանց քարոզը կը խնդրեն... Խմբագրի մը նուիրական պաշտօնն է որոշ միջավայրի մը մէջ գտնուող ժողովրդի մը գոյութեան էական պայմաններն ու ճշմարիտ շահերը պաշտպանել եւ գայն վերացական սկզբանց ու երազային միտումներէ անթունդը գահալիժեւէլ զգուշանալ... Դիւսփաքելի է որ «Արմենիա» թերթն իւր բուն եռանդը փոքրինչ զբսպէ եւ ազգին ի սկական պիտոյքը հասուն քննութեան առնելով ձեռնարկէ:»
  - բ. «Արեւելեան Մամուլ» 1885. № 6 (յուն.)
  - գ. «...Արեւելեան Մամուլ» «Արմենիայի» վերաբերմամբ յայտնած մի քանի մտքերին բոլորովին համակրում ենք...»
  - դ. «Մեղու Հայաստանի» 1886 № 6
  - զ. «...Վանայ Կենտրոնական Վարժարանի բազմաշխատ տեսուչ պ. Պ(Փ)որդուգալեանը... հաստատուել է Մարտէլլ քաղաքի մէջ ուր եւ ձեռնարկում է «Արմենիա» անունով լրագրի հրատարակութեան: Պ. Պ(Փ)որդուգալեանը մեր Տաճկա-Հայաստանի ամենայարգելի գործիչներից մէկը:

քաջ յայտնի է հայ հասարակութեան  
իւր հրապարակախօսական գործունէու-  
թեամբ . . .”

„Արձագանք“ 1885 № 1. էջ 1.

դ. „Արմենիա լրագիրը ժպեց հրատարակ-  
ուել 1885-ի օգոստոսի 1. (20 յուլիս) Մար-  
սէլի մէջ, շարաթն երկու անգամ,  
Համարատուութեամբ՝ Ֆելիք Անֆանտի-  
նի եւ խմբագրութեամբ՝ Մ. Փորթուզալ-  
եանի, Ռուսաստանի Համար քաժանոր-  
դագինը 10 բուրլի.

(<sup>1</sup>)

ե. „ . . . Մարտէլում երկշարաթաթերթ (<sup>2</sup>)  
„Արմենիա“ լրագիրը . . .”

„Հայկակ. Մատենադ.“ ք. էջ 155.

[„ . . . In Morseille die zweimal wächentlich  
erscheinende Zeitung „Armenia“ . . .”

„Arm. Bibliot. II. էջ 155.

2.) Յայտարարութեան մէջ գրուած էր „ազգա-  
յին քաղաքական եւ գրական“



141.

### ԳԻՏԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆ <sup>1.)</sup>

(Ամսաթերթ.)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1886-1889  
Հրատարակուում էր՝ ամսի վերջերին  
Խմբագիր՝ Ն. Տաղաւարեան.



աղաւարեան պ. Ն. Կոս-  
տանդնուպոլսում 1886  
թուից հրատարակել  
սկսեց «Գիտական Շարժու-  
մըն» անունով մի ամսաթերթ,  
որ գիտական ու բանասիրա-  
կան բովանդակութեամբ մի  
հաւաքածու էր:

Յաջողութիւն չունեցաւ պ. Տաղաւարե-  
անի Հանդէսը, երեք տարի միայն հրատա-  
րակուելով գաղարուեցաւ:

### ԹՆՆՑԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) «Գիտական Շարժումն» եւ մեր աղ-  
բիւրները:—

ա. „Տարեգլխէն՝ մեր ամենօրեայ (<sup>2</sup>) հայերէն  
հանդիսից թիւը ուրեմն պիտի բարձրանայ  
վեցի՝ . . . Գիտական Շարժումն խմբ. Ն.  
Տաղաւարեանի . . .”

„Նոր-Դար“ 1886 № 1. էջ 3.

բ. „Գիտական Շարժումն դ. տարի. Կ. Պ.“  
„Հանդ. Ամսօր.“ 1889. էջ 261.

գ. „ . . . Հանդէսներ՝ „Գիտական Շարժումն“  
„Հայկակ. Մատենադար.“ ք. էջ 155.

[„ . . . Die Monatsschriften) „Gitakan Jchar-  
shum“ (Wissenschaftliche Bewegung)...“  
„Arm. Bibl.“ II. էջ 155.



142.

### ՃԱԾԱԿ <sup>1.)</sup>

### ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՊՈՏՐՈՒԿԱՆ, ԳԻՏՆԵՎԱԿԱՆ, ԲՆԵՍՄԻՐԱԿԱՆ.

### ՀԱՆԳԻՄ ԵՐԵՒԱՄՍԵԱՅ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1886-1890

Հրատարակուում էր՝ յունուարին, ապ-  
րիլին, յուլիսին, հոկտեմբերին:

Ընդ խնամով Ա. Մատթիա Գարագա-  
շեանի եւ Յ. Գուրգէնի.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագրինը՝ տարեկան 10 գա-  
հեկան 2.)

Լեզուն, ոճը } „ . . . Գրգուց յարոյց ամ-  
Ուղղագրութ. } րաստանութիւն ի վերայ նո-  
րա . . . յօղուածոյս . . .”

Ծրագրերը՝

ՊԱՏՄԱԿԱՆ—Պատմական յօդուածներ, հայ-

կական եւ ընդհանուր պատմութիւնից, նախնի հայ մատենագրութեանց վերայ, պատմական տեսութիւն հայոց գրականութեան հին եւ նոր գպրութեան վերաբերել:

**ԳԻՏՆԱԿԱՆ**—Յօդուածներ գիտութեանց զանազան ճիւղերից, գեղարուեստ, ուսում, գիտնական գրուածների թարգմանութիւններ:

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**-Քննութիւններ նախնի գրուածների, գրչագիրներ, ոտանաւորներ, հայոց լեզու, մատենախօսութիւն արգի գրական նշանաւոր վաստակներու:

**Յայտարարութիւններ . .**



ենետիկի եւ Վիէննայի Միսիթարեան վարդապետների տնօրէնութեամբ հրատարակուող «Բազմավէպ» եւ «Հանդէս Ամսօրեայ» հանդէսներից ոչ առաւել,

բայց իւր համեստ ծրագրով կարող էր մրցել նորանց հետ Կոստանդնուպոլսում 1886 թուից պ. պ. Ա. Մատաթիա Գարագաշեանի եւ Յ. Գուրգէնի խնամքով հրատարակուող «Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան» գրքային, գիտնական եւ բանասիրական միամսեայ հանդէսը: «Ճաշակի» երկու խնամակալներն էլ քաջ ծանօթ էին հայերէն լեզուին եւ գրականութեանը. Գարագաշեան իւր «Քննական» Հայոց պատմութեամբ» եւ երկրորդը որ հիմնադիր-տնօրէն էր Հայկական Կրթարանի, ծանօթ են հայ գրագէտ հասարակութեան: Յարգելի խմբագիրները ամեն կերպ աշխատում

էին ճոխացնել, հարստացնել իւրեանց հանդէսի նիւթերը եւ հետաքրքիր դարձնել ընթերցողներին: «Ոսկեղէն Դպրութեան» ձաշակըն» աշխատում էր ծանօթացնել հայ կարգացողներին մեր նախնեաց մատենագրութիւնների ճոխ լեզուի եւ գրականութեան հետ:

«Ճաշակի» նպատակն էր՝ «. . . օգտակար ընել հանդէսը նախնի հայուն բուն եւ հարազատ լեզուն լաւ սովորել ուղղորներուն, եւ գրականութեան ու գիտութեանց բազմատեսակ պահանջմանցը նայելով՝ արդի հայերէնին մեծ օգնութիւն մատուցանել . . .»-«լեզուի ազնուութիւնն» ձաշակի մէջ հասել էր փառաւոր գագաթնակետին: Այս կողմով որ նշանաւորն է՝ շատ բարձր Միսիթարեանների ինքնահնար աշխատարարով հրատարակուող հրատարակութիւններից Յ.) ճկուն, սահուն եւ վայելուչ էր «Ճաշակի» լեզուն եւ ի բազմաթիւ տեղեկութիւններով ու ծանօթութիւններով:

Երկու տարի կանոնաւորապէս հրատարակուելուց յետոյ, գ. տարուայ սկզբում փոխուեց եււամսեայ հանդիսի որ շատ ցանկալի չէր: Երկու տարի էլ եււամսեայ մնալով, 1889 թրուականի վերջին դադար առաւ:

**Ժ Ա Ն Յ Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .**

1.) «Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան» եւ մեր ազգիւրները—

ա. «Նորհասկալութեամբ ստացանք ,,Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան» վերնագրով ամսագրի առաջին երկու համարները: Ամսագրերը ներկայ 1886 թուից սկսել է հրատարակուել Կ. Պոլսում ընդ խնամով . . . յիշեալ հրատարակութեան լեզուն գրաբար է . . .»

«Նոր-Դար» 1886. № 34. էջ 2.

բ. «. . . Մեզի կը մնայ դարձեալ բարի յաջողութիւն մաղթել ,,Ճաշակի» խնամակալաց եւ անյողգոյող յարատեւութիւն սկսուած գովելի գործոյն մէջ, որ պատիւ է հայ գրականութեան . . . սակայն ժըտական ապացոյց կը համարենք ամսա-

Թերթին երեքամսեայ ըլլալն . . .  
 ,,Հանդ. Ամսօրեայ“ 1889 էջ 159.  
 2.) Միամսեայ ժամանակ 25 դահեկան.  
 3.) Եւ զարմանալի է որ ,,Հանդէս Ամսօրեայի“ մէջ Հ. Գ. Մ. ,,ըստ խնդրոյ (՞) մեծապ. խնամակալաց“ երկար ու բարակ ճառելով համարձակուում է ,,ձաշակի“ լեզուն քննադատել:

143.

# ՏՆՏԵՍ<sup>1.)</sup>

ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԺՈՂՈՎԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1886-1890  
 Հրատարակուող էր ամսի սկզբներին.  
 Տնօրէն-Խմբագրապետ Եղիա Տէմիր-ճիպաշեան.

Տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան)

Դիւրքը՝ (տետր.) մօտ 1. տպ. թերթ. 24 էջ 17x25 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Լեզուն ոճը } ,,... Իր ժամանակին իր դրամին, իր առողջութեան, Ուղղագրութ. իր սեփականութեան յարգը“.

Բաժանորդագրիւնը տարեկան տասը դահեկան.

Ծրագիրը՝

ԺՈՂՈՎՐԳ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ—Առանին եւ քաղաքական տնտեսութիւն, կար, ձեւ, ժողովրդական նիւթեր, դասեր տնտեսագիտութեան, տան կառավարելու հետ միջոց, չափաւոր ապրելու կանոններ եւ այլն: Բովանդակութիւն 1886. թիւ 1 (Հոկտ.)

Առաջին խօսք— Ե.

Գործակցութիւն— Կարապ. Գարագաշ.

Տան ծախուց կարգադրութիւն— Յակովբ Արշակ.

Տան ելմտոյցին վրայ— Ե.

Թէ օրն քննադատելու է— Յակ. Արշակ.

Տնտեսագիտութեան ժողովրդակ. դասեր-Ե. Տուն փոքրիկ Գէորգին աղօտքն (ոտան.)— Ե. Բարեկարգութիւն Հագուստի— Յակ. Արշ. Պիտանի Հարցումներ.— Յակ. Արշակ.



«...տանդնուպոլսում մի խումբ ուսումնական Հայ անձինք, կամենալով ազգի մէջ տնտեսական օգտակար գիտելիքները հաւաքել եւ ծաւալել, կազմեցին «Արեւելեան Տնտեսական Գիտութիւնը» եւ որ 1886 թուականի հոկտեմբեր ամսից «Միութեան» հրատարակութեամբ լոյս տեսաւ «Տնտես» ամսօրեայ հանդիսի առաջին համարը:

«Տնտեսը» որ իւր մասնագիտութեան մէջ միակն է մեր մամուլի պատմութեան մէջ, եւ որ այժմ էլ չունինք մի այդպիսի ազգօգուտ պարբերական, նսլատակ ունէր «ժողովրդեան ուսուցանել լու տնտեսութիւն եւ զայն առաջնորդել բարեկեցութեան . . .»

Անուան համեմատ գործ կատարեց «Տնտեսը» որ «բարոյն նուիրեալ» էր եւ իւր «ձեռնահաս եւ գիտուն անձանց» հետ կարողացաւ օգտակար լինել Հայ ժողովրդին: «Ինչպէս ամեն գպրոց իր տնտեսն ունի, — գրում էր խմբագիրը — նոյնպէս ամեն տուն պէտք է ունենայ իւր «Տնտեսն» . . .»

1888 թուականին «Տնտեսին» փոքր կարգուեց Ո. Յակովբեան: Երկու տարի էլ նոր խմբագրի ձեռքը մնալով. 1889 թուականի վերջերին գաղար առաւ երեք տարի հրատարակուելով:

ԹՆՆՅՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «Տնտեսի» հետ մեր աղբիւրները:
  - ա. „...Սկսել է հրատարակուել „Տնտես“ ամսագիրը, որ ըստ երեւոյթին նպատակ ունի ժողովրդական լեզուով եւ ժողովրդին մատչելի ձեւով տնտեսագիտութեան հիմքերը տարածել հասարակութեան մէջ...“
  - „Նոր-Դար“ 1887. № 32 էջ 1.
  - բ. „Տնտես“ ամսօրեայ հանդէս Տնօրէն Ո. Յակոբեան. ք. տարի. 4. 9. տպ. Գ. Պաղատաւ. 10 դշ.“
  - „Հանգ. Ամսօրեայ“ 1889 № 263.



144.

# ՄԱՂԻԿ

Ա Ր Ա Գ Ի Ր

## ԱԶԳՈՅԻՆ ԶՈՂՈՔՈՎԱՆ ՆԻ ԳՐՈՎԱՆ

Կոստանդնուպոլիս(Տաճ.)1886-94-եւս  
 Հրատարակուում է շաբաթ օրերը.  
 Տնօրէն-Հրատարակիչ՝ Յովնան Գ. Փալազաշեան.  
 Խմբագրապետ՝ Ա. Ա. Սուրենեան.  
 Արտօնատէր՝ Ա. Սաքայեան 2.)  
 Տպագրութիւն Նշան 4. Պերպերեան.  
 Դիւրքը (տեար.)—8 իջեան, 3-սիւնեան  
 29X41 հ.-մետր.  
 Քուղթը եւ տիպը՝ մաքուր, գեղեցիկ.  
 Լեզուն ոճը { „...Նրանի՛ մէ վեր աղ-  
 Ուղղագրութ. { ջիկները այս ողով դաստի-  
 Բաժանորդագրիւնը՝ 3.) տարեկան—  
 Թիւրքիա—50 դուրուշ.  
 Ռուսիա — 5 ըուբլի.  
 Այլ երկիրներ—12 ֆրանք.  
 Հասցէն՝ Տնօրէն-Հրատարակիչ Յովնան  
 Գ. Փալազաշեան: Պահչէ—Գա-

փու Շէյխ-Իւլ-Իսլամ Խան:  
 Կոստանդնուպոլիս:  
 կամ՝ Hovnan Palacachlan, Directeur du  
 journal arménian „Dzaqhih“ Pah-  
 tché—Gapou, Chéih-ul-Islam Han.  
 Gonstantinople.  
 Ծրագիրը՝  
 ԱԶԳԱՅԻՆ—Առաջնորդող յօդուածներ. Ժա-  
 մանակակից ազգային աւօրեայ նշանաւոր  
 խնդիրների մասին: Յօդուածներ աղգա-  
 յին կեանքից առնուած, թղթակցութիւն-  
 ներ, լուրեր Թիւրքիայի եւ այլ երկիրնե-  
 ռի հայաբնակ քաղաքներից: Պատրիար-  
 քարանի, ազգային ժողովի նոր կարգա-  
 գրութիւններ, նիստեր, տեղեկութիւն-  
 ներ: Ազգային պաշտօնական լուրեր:  
 ՔԱՂԱՔԱԿԱՆ—Տեղեկութիւններ արգի քա-  
 ղաքական դրութիւնից. մանր լուրեր հաս-  
 ու կտոր գրուածներ քաղաքական բը-  
 նաւորութեամբ:  
 Ներքին լուրեր—Բարձր.Դրան նոր կարգա-  
 գրութիւնները. նոր օրէնքներ, բարձրա-  
 գոյն հրաման եւ պաշտօնական տեղեկու-  
 թիւններ. լուրեր, թիւրք պաշտօնական  
 լրագիրներից քաղուած:  
 ԳՐԱԿԱՆ—Գրականական, պատմական բա-  
 նասիրական յօդուածներ, մատենախօսու-  
 թիւն բանաստեղծութիւն, կենսագրու-  
 կան, գիտնական, գեղարուեստական գըր-  
 ուածներ, ճանապարհորդութիւններ, վէ-  
 պէր, պատկերներ, հատուածական նամա-  
 կանի, երգեր, քերթուածք, շարագրու-  
 թիւններ եւ այլն:  
 Յայտարարութիւններ: Զանազան լեզուներ  
 ըով:  
 Բովանդակութիւն 1893. յուլիս 3  
 (թիւ 25.)  
 Հաշուոյն մնացորդը—Ա. Ա. Սուրենեան  
 Պանդուխտներուն—Ե. Տէմիրճիպաշեան.  
 Զմիւռնական գործեր—Ա. Ա. Սուրենեան.  
 Ս. Ներսէսեան Վարժարան—Դր. Մարգար.  
 Խաս գիւղի հայոց վարժարանը.  
 Պակասներ—Սեպուհ.  
 Այլին—Յ. Թ. Արամեան.

Գիւղական տունն ի Կովկաս—(«Հան.Ամս») Թղթադրոշմները—Յ. Մ. Ազնաւորեան. Հանրային կարեկցութիւն—Դալիթա Բարսամեանց.

Որդեկորոյ մայրն... «Հանգանակութիւն». Գիտական փորձեր—Ոսպ.

Մեր հորիզոնէն դուրս—Գր. Չաքարեան.

Ազգային լուրեր—Նոր ընտրութիւն, —Իւսկիւտարու ազգային դերազմանատուներ, —«Նոր-Դար»էն քաղուած մի լուր, —Դուրեանի «Թատրոն» ներկայացումը, —Տէր Խաչատուր, —Ս. Պատրիարքի Հիւանդութիւնը, Ս. Մատթէոս եպ. Իզմիրլիսնցի .ս. Պատարագ մատուցանելը, Ս. Մելքիսեդէկ եպ. Մուրատեանի Գանտիլի եկեղեցոյն մկրտութեան աւագանին օծումը: Պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանի Ալէքսանդրապոլ ուղեւորուիլը: Պատրիարք. փոխանորդը Եգիպտոսի Խտիվի մօտ, —Մեղպուրեան աղջկերանց վարժարանի Հանդէսը, —Գում-Գաբուի մայր եւ Լուսաւորչեան վարժարանաց քննութիւնը, —Գանտիլիի Ս. Աւագբեկոց Նորաշէն եկեղեցոյ ծախքը, -Գում Գաբուի Միրիճանեան Վարժարանի ը. տարուայ մրցանակաբաշխութեան Հանդէսը, Նախագանութեամբ Մատ. եպ. Իզմիրլեանի: Ս. Փրկչի Հիւանդանոցի ելմտոյցը—(«Արեւելք»).

Ներքին լուրեր—Սալիսէի աստիճանների շնորհում, —Մէճիտիէի պատուանշանի շնորհում, —Եգիպտոսի Խտիվի առ Վեհ. Սուլթանն արած այցելութիւնը, —Ամասիայից, —Չմիւռնիայի թուղթը, —Օսմանեան սիկառէթի ընկերութիւնը, —Հընդախտ, —Համազգային անկելանոց Կոստանդնուպոլսում, —Հնդախտ, —Կարնեցի Յարութիւն, —Քարանթինա. Օսմանեան ընկ. Հանրօգուտ շինութեանց, —Բաղէշի կուսակալ Թաւադի փաշան, —Կրթական նախարարութեան նոր տարեցոյց, —Տիվրիկից, —Տիարպէքիր...

Շերքեթի Խայրիէի շոգենաւք.

Յայտարարութիւններ 4).



ամանակիս Կոստանդրնուպոլսում հրատարակուող «Ծաղիկ» շաբաթաթերթը որ Թիւրքիայի մեր նըշանաւոր լրագիրներից մինն է, հրատարակուել սկսեց 1886

թուականի դեկտ. 20-ից շաբաթը երկու անգամ որպէս եւօրեայ հանդէս:

Սկզբում «Ծաղիկ» հանդէս ազգային կիսաշաբաթաթերթ՝ Տէր եւ տնօրէն Անտօն Սաքայեան, խմբագիր Յ. Հաճեան: Նախնական դիրքն էր «թերթ» քառածալ 8-էջ 3-սիւնեան 24X31 հ.-մետր: Ծրագրով աղքատ քան այժմ. մեծ մասամբ տաճկերէն լեզուով: Հատ ու կտոր յօդուածներ, վէպեր, լուրեր, զուարճալիք եւ այլն:

Այսպիսի կազմով «Ծաղիկ» շարունակուեց չորս տարի, այսինքն մինչեւ 1890-ի կիսերին: Յ. Հաճեան հեռացաւ. պ. Սաքայեանի հետ գործի գլուխ կանգնեցին պ. Փալազաշեան որպէս տնօրէն-հրատարակիչ, պ. Սուրենեան խմբագրապետ: 1890 թուականի սեպտեմբերից սկսուեց «Ծաղիկ» ազգային քաղաքական եւ գրական շաբաթաթերթը: «Ծաղիկից» առաջ տաճկահայ գրականութեան մէջ մի անհրաժեշտ կարիք էր զգացուում լուրջ շաբաթաթերթի հրատարակութեան, եւ այդ կարիքը յագեցրեց պ. Փալազաշեանի Հանդէսը, որպէս ուղղամիտ, դեղեցիկ եւ յաջող հրատարակութիւն:

«Նոր շրջանն» սկսուեց ա. Համարով եւ Հանդիսիս ճակատին գրուում էր «...»-ըն «...»: «...Իէպի յառաջագիմութիւն ձգտող

ազգի մը համար, անհրաժեշտ պահանջք է լրագրութիւնն... Ժողովուրդ մը ունի իւր ազգային կրօնն ու եկեղեցին, նախանձախնդիր է ամրապինտ պահելու զայնս, ստոյգ է որ այդ ժողովուրդը չը օտարանար եւ յաւիտեան կը պահէ իւր ինքնութիւն. » — կարդում ենք «Ծաղիկ» առաջին համարի առաջնորդողի մէջ:

«...Գրականութեան մասը կը կազմէ լրագրութիւնը, կամ թէ ըսենք գրականութիւնը զարգացնող մի գործի մը է լրագիրը: Բայց լրագրութիւն ուրիշ գեր եւս ունի, լրագրութիւնը պաշտօն ունի բարոյապէս եւ մտաւորապէս զարգացնելու ժողովուրդը, միշտ դէպի լոյսը, դէպի ճշմարտութիւնը առաջնորդելով զայն:

«Լրագրութեան այս ընթացքն որ վաղուց ի վեր զգալի էր նոր թերթի մը հրատարակութեան անհրաժեշտ պէտքն եւ ահա վերջապէս ծնունդ կուտայ նորոգ կազմակերպեալ «Ծաղիկին» — «Ինչ է մեր նպատակը, ինչ պիտի ընեմք կարճ խօսքով ահա մեր ընելիքը: Մենք պիտի լինիմք կամ թէ ըսենք մեր թերթը պիտի լինի դպրոց ժողովրդեան, քարոզ ճշմարտութեան... մեր թերթը պիտի ջանայ բարոյապէս եւ մտաւորապէս զարգացընել ժողովուրդը միշտ ճշմարտութեան ուղիղ ճանապարհին վրայ առաջնորդելով զայն» 5.)

Որպէս պահպանողական թերթ «Ծաղիկը» վերջերքս ազգային-կրօնական հարցերում իւր սկզբունքով միացած էր ինչպէս հայրենակիցներից «Մասսին», «Արեւելքին», այնպէս էլ Կովկասի լրագիրներից «Նոր-Դարին», «Արձագանքին»: 1892 թուականի յուլիս թէ օգոստոս ամսին մի փոքր հանգիստ առնելուց յետոյ, «Ծաղիկը» հրատարակուում է մինչեւ այժմս:

Յաջողութիւն եւ արեւշատութիւն Կ. Պոլսի «Ծաղիկին»:

**Ի Ը Ն Ս Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե ր .**

Մեր աղբիւրները՝ «Ծաղիկ» շաբաթաթերթը:

ա. «...Այժմս սպանում ենք արդէն նոր կազմակերպուած, նոր խմբագրութեամբ հրատարակուող «Ծաղիկ» շաբաթաթերթի երկրորդ հրատարակութիւնը... Թերթի մէջ երեւացող աշխատակիցները ցոյց են տալիս մեզ որ «Ծաղիկը» կարող է եւ մտադիր է լրացնել այն պակասը որ ըզգացուում է Պոլսում...»

«Նոր-Դար» 1890. № 157. էջ 1.

բ. «Ծաղիկ-շաբաթաթերթ. ազգային եւ քաղաքական սկսեալ 1887 (°) արտօնատէր Ս. (°) Սաքայեան. հրատարակիչ Յովհաննէս (°) Փալաքաշեան»

«Օրացոյց 1893 թ.» Ռոստով էջ 91.

գ. «Ծաղիկ» հանդէս ազգային եւ քաղաքական գ. տարի Կ. Պոլիս. հրատարակիչ Ա. Սաքայեան...»

«Հանդ. Ամսօր.» 1890 թիւ էջ 161.

դ. «Ծաղիկ շաբաթաթերթ. ազգային եւ քաղաքական, սկսեալ 1887 (°) Սաքա(յ)եան արտօնատէր. Հրատարակիչ Յովհան Փալաքաշեան.»

«Օրացոյց 1893» Ժողով-պատկ. էջ 65.

2.) Ա. Սաքայեան ստորագրում է թերթի տակ վերջին երեսում. իսկ պ. պ. Փալաքաշեան եւ Սուրենեան ստորագրում են թերթի ճակատին առաջին երեսում.

3.) Նոօրեայ ժամանակ բաժանորդագինը 100 դր.

4.) Յայտարարութիւնների բաժինը չի որդուում «Ծաղիկ» մէջ:

5.) Տես «Ծաղիկ» 1890 թիւ 1.

~~~~~  
145.



Հ Ա Յ Ո Ց Պ Ա Ր Բ Ե Ր Ը Կ Ը Ն Ե Ի Ը Ր Ո Ւ Ն Ց Ե Ի Ց Ե Կ Ը Ն

Վ ի է ն ն ա (Աւստրիա) 1887-1894-եւս.
Հրատարակուում է՝ ամսի սկիզբներին:

Հրատարակիչ եւ Պատասխանատու
Խմբագիր՝ Հ. Ռափայել վ. Պարոնչ.

Մխիթարեան տպարան.

Դիրքը (տեւոր.) 1 տպ. թերթ 32 էջ
երկսիւնեան 20X30 հ.մետր.

Թուղթը եւ տիպը՝ փառաւոր.

Բաժանորդագինը տարեկան 8 ֆրանք.
Ռուսաստան 4 ռուբլի,

Հասցէն՝ Վիէննա (Աւստրիա) Մխիթարեան
միաբանութեան Վանք.
«Հանդէսի» խմբագրութեան.

կամ A la Redaction de la Revue
„Hantess.“ Au Cauvent des
R.R .P. P. Méchitharistes
à VIENNE (Autriche) VII. | 2.
Mechitaristen gasse, 4.

Լեզուն ոճը { „...Ուժեւտասաներորդ դարուն
սկիզբները, որ մեծա-
նուն՝ սուր ու հեռատես...“
Ծրագիրը՝ 3.)
ԲԱՐՈՅԱԿԱՆ—

Յօդուածներ բարոյական բնաւորութեամբ,
առականեր, վէպիկներ, ոտանաւորներ...
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—

Մատենադրական—Աշխարհագրական, բանասիրական,
բանաստեղծական, հնախօսական,
իրաւագիտական, մատենախօսական,
ազգագրական, բժշկական, բնագիտական,
բնապատմական, թատերական, լեզուաբանական,
պատմական, քաղաքագիտական,
տեղագրական, դպրոցական, ուղեգրական
յօդուածներ, թղթակցութիւններ...
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ—

Արուեստական, տպագրական, գեղարուեստական
յօդուածներ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ—Նորալուրք, մանրալուրք,
առտնին տնտեսութիւն...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Համառօտ
լուրեր, տեղեկութիւններ, քաղաքական
արդի գրութիւնից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Ձանազան լեզուներով.

Բովանդակութիւն 1892 № 5 (մայիս)
Ուսումնական.

Մատենադրական—Պրոկղի Դիատոխոսի շաղկապք
աստուածաբանականք—Յ. Յ. Տ.

Պատմական—Դրանսիլուանիոյ Եղիսաբեթուպոլիս
քաղքին սկզբնաւորութիւնը արտօնութիւններն ու
արքունի կալուածոց վաճառումը.—Յոզ. Անեցի.

Աշխարհագրական—Ուղղեւորութիւն ի Փոքրըր
Ասիա.—Ալպեր Տըվըլէ.

Գրական՝ Քանի մը նոր հրատարակութիւնք.
Սոֆուս Բուզգէի աշխատասիրութիւնք
Յ. Յ. Տ.

Մատենախօսական—Բիւզանդ Մ. Պոզաճեան
տեսական եւ գործնական քերականութիւն.

Արուեստական—

Գեղարուեստական—Շրջակայութիւն նկարչաց
աշխարհին մէջ—Ա. Ֆէթվաճեան:
Տպագրական գիւտը—Տ. Յ. Թուխիկեան:

Այլ եւ ալք.

Նորալուրք—Արուեստական անձրեւ.
Տնտեսական—Կանթեղապակիները ճաթելէ պահպանելու
միջոց:—Մետաքսեայ փողպատ ու թաշկինակ
լուալու օգտակար եղանակը:

Մանրալուրք—Աշխարհիս ամենամեծ ագարակը:

Քաղաքական տեսութիւն.

Յայտարարութիւններ.



Իշտ տասն եւ հինգ տարի լուութիւնից յետոյ Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը ճեւղոպայից յետոյ 1887 թուականին նորից լրագրական ասպարէզ ի-

ջաւ, հրատարակելով «բարոյական ուսումնական արուեստադիտական» ամսօրեայ Հանդէսը, հրատարակիչ՝ եւ պատասխանատու խմբագրութեամբ հ. Ռափայել վ. Պարոնչի:

Բացի «Բազմավէպ»ից եւ «Ճաշակ»ից մի ուրիշ ուսումնական հանդէս չունէինք: Եւրոպացի դիտնական հայագէտների մեր ազգին վերաբերեալ հետազոտութիւնները, նորանոր աղբիւրները, պատմական քննութիւնները ի միասին ամփոփելու, թարգմանելու եւ հայ ընթերցողներին հաղորդելու համար, հարկաւոր էր մի երրորդ ուսումնական-բարոյական հրատարակութիւն՝ Վիէննայի «Հանգէս Ամսօրեայն» լրացրեց այդ հարկաւորութիւնը, եւ իւր առատ եւ բազմատեսակ ընտիր նիւթերով եւ գեղեցկութեամբ գերազանցեց միջեւ իւր ժամանակ լոյս տեսած հայ հանգէսներից:

Վիէննայի պէս մի տեղում դժուար չէր մի հրատարակութիւն օրէցօր ճոխացնել, ինչպէս որ Գովկասում է: «Հանգէս Ամսօրեան» այսօր իւր կազմութեամբ բարձր է իւր ճիւղի հայ հանգէսներից: «Յանձնեցինք ժամանակին պահանջմունքը յարգել... դրում է հայր խմբագիրը իւր յառաջաբանում:—Այո Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնս ալ չէր կրնար ժամանակիս պահանջմանն առջեւ անտարբեր կենալ՝ այնպիսի ատեն մը որ առհասարակ զարգացման փութոյն ընթանալուն հետ ընթերցանութեան ալ սէրն օրստօրէ յաճախածն պէս պէս եւ նորանոր ճարակ կը փնտրէ...»

«Հանգէս Ամսօրեան» իւր ճակատին չէ կրում պատկերազարդանունը, բայց յաճախ տալիս է գեղեցիկ նկարներ պատկերներ արձանագրութիւններ ըստ պատշաճի: Բայց աւելի կարելի է պահանջել մի մայրաքաղաքի եւ հարուստ միաբանութեան տնօրէնութեամբ հրատարակուող պարբերականից:

«Հանգէս» որպէս մասնագիտական մի հրատարակութիւն ոչ մի կուսակցութեան

չի պատկանում. իւր նպատակն է միայն. զուտ ուսումնական-գիտնական յօդուածներ տալով, գոհացնել հայ բանասէրներին: «Հանգէս» աշխատակցում են մեծ մասամբ անգղացի Մխիթարեան հայրերը ինչպիսիք են՝ հ. Ղ. Յ, հ. Գ. Գ, հ. Ս. Տ, հ. Գ. Մ, հ. Յ. Թ, հ. Մ. Թ. եւ ուրիշները, ինչպէս եւ ոչ Մխիթարեաններից՝ Յով. Անեցի, Գր. Խալաթեան, Կ. Տիւրեան, Ո. Անոփեան. եւ օտարազգի հայագէտներից:

«Հանգէս Ամսօրեայի» պէս մի դուրեկան մի վայելչատեսիլ ամսագիրը կարող է պատիւ բերել օտար ազգերի առաջ մեր գրականութեան: Օտար հայագէտ-գիտնականներ հայերի մասին ծանօթանում են «Հանգէս» կամ «Բազմավէպ» միջոցով, ցանկալի էր որ յարգելի հայրերը շատ տեղերում իւրեանց սառնասրտութիւնը, իւրեանց անջատուած լինելը չը ցոյց տային եւ որ գըլխաւորն է շատ հարցեր ըստ իւրեանց կամաց չը վճռէին եւ իբրեւ ճշմարտութիւն հասարակութեան ներկայացնէին: «Բազմավէպը» բոլորովին հեռու է պահում իւրեան. իսկ «Հանգէսը» երբեմն միջամտում է Լուսաւորչական կրօնական խնդիրներին, որ բոլորովին իւր գործը չէ: Եթէ վերապատուելի հայրերը կրօնական խնդիրներով բոլորովին հակառակ են մեզ եւ ճանաչում են «էջմիածնականք» անունով միթէ ներելի է այլ եւս մասնակցել այն խնդիրներին որոնք իւրեանց համար գոյութիւն չունին:

«Հանգէս Ամսօրեայն» իւր էջերում ամեն տարի տեղ է տալիս նախընթաց տարուայ բոլոր հայերէն հրատարակութիւնների համառօտ ցանկին, թէեւ ոչ լիակատար եւ ազատ վրիպակներից, բայց եւ այնպէս պիտանի աշխատութիւն: 4.)

«Հանգէս Ամսօրեայն» իւր սկզբից մինչեւ այսօր ոչ մի ներքին փոփոխութեան չէ ենթարկուել: Վերջերքս գիրքը կրկնապատկուեց, նախ ¹/₂ տպ. թերթից էր բազկացած մի տետրակը: «Հանգէս» արտաքինն էլ 1890 թուականից գեղեցկացաւ, շապիկը

տպագրուում է գեղարուեստական ճաշակով, գոյնզգոյն, եւ որ արտայայտում է՝ ուսում, գրականութիւն, գեղարուեստ, գիտութիւն եւ այլն:

«Հանդէս Ամսօրեայից արտատպուել եւ առանձին գրքերով լոյս են տեսել՝ Հ. Գաբր. Վ. Մէնէվիշեանի «Խաչ ու ծեփիչ» (Թարգմ.) Մարր Ն—Նոր նիւթք. հայկ. արձանագրը. (Թարգմ.) Ոնոփ. Անոփեան եւ այլն:

Թ Ը Ն Յ Թ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր .

1.) «Հանդէս Ամսօրեայն» եւ անդրերը— ա. «...Լեզուն իհարկէ արեւմտեան հայ բարբառով է. որ շատ անգամ բոլորովին անհասկանալի է արեւելեան բարբառը գործածող հայերի ստուար մեծամասնութեան համար. մանաւանդ դժուար հասկանալի է Վենետիկի եւ Վիէնայի Միւթարեան հայերի գործածած աշխարհաբարը—բազմաթիւ գրարար խրթին խօսքերով, դարձուածներով եւ նախդիրներով համեմուած լինելուն համար: Իսկ բովանդակութեան կողմից ամսագիրը նախանձելի դրութեան մէջ չէ, եթէ առաջին համարի նման կազմուին եւ միւս համարները...»

«Նոր-Գար» 1887. № 1.

բ. «...Միւթարութեան արժանի թերթ մ'է սա, եւ տարակոյս չը կայ թէ աւելի շատ համբաւ կը գտնէր, եթէ Վարնայի գիւղերէն միայն մէջ լոյս տեսնէր...Ամսօրեայ Հանդէս անուն թերթն որուն առաջին թիւն ստացանք եւ կարդացինք թէ հաւն ինչպէս կելնէ հաւկիթէն...»

«Իրկար» 1886—87. էջ 167.

գ. «Հանդէս Ամսօրեայ» բարոյական, ուսումնական եւ արուեստագիտական ամսագիր, սկսեալ 1887. հրատարակութիւն Միւթարեան միարանից Վիէնայի:»

«Օրացոյց 1893 թ.» ծոցի Ռոստ էջ.96.

դ. «Աւստրիա. Հանդէս Ամսօրեայ. Ուսումնական եւ քաղաքական» սկսեալ 1887. Հրատարակիչ Միւթ. Միարան. Վիէնայի . . . »

«Օրացոյց 1893» ժողով. պատկ. էջ 67.

2.) Տես ծանօթ. 3.

- 3) Թէեւ ծրագիրն էր «բարոյական ուսումնական եւ արուեստագիտական»: բայց առաջին ընդարձակ տեղը գրաւում է Ուսումնականը»
- 4.) Տես «Հանդէս Ամսօրեայ» 1888 էջ 22, 36, 82, 127 Տես " " 1889 ,, 261.

146.



ԳՐԵԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏՐԱԿԱՆ

(Վեցամսեայ).

Ս. Պետերբուրգ (Ռուս.) 1887-1894-եւս Հրատարակուում է՝ յունիս եւ դեկտեմբեր ամիսների սկիզբներին:

Հրատարակիչ՝ Սիմէոն Գուլամիրեանց. Տպարան Ա. Ի. Լեբերմանի.

Դիւրքը (գիրք) 12 տպ. թերթ 8-աճալ 384 եւ աւելի էջ. 16X24 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ վայելուչ, գրաւիչ. Բաժանորդագիրնը՝ տարեկան 3 ըուրլի.

Հասցէն՝ Ս. Պետերբուրգ.

Սիմէոն Գուլամիրեան:

կամ՝ С. Петербургъ.

Симеону Гуламирянцу.

կամ՝ St. Pétersbourg.

Simeon Goulamiriantz.

Լ Ե Ղ Ո Ը Ն, ո ճ Ը, } ,, . . . Հայուծեան ուրախու-
 Ո Լ Ղ Ղ Վ Պ Գ Ր Ո Ը Թ. } թեան հետ, ,,Արարքը“ գոհ
 Ծ Ր Վ Կ Ա Ն—Հասարակական խնդիրներ, պատ-
 մական, տեղագրական, կենսագրական, մա-
 տենագրական, բանասիրական, մատենա-
 խօսական յօդուածներ: Ազգային լիշատա-
 կարան, ներքին տեսութիւն, բանաստեղ-
 ծութիւն, թղթակցութիւններ:
 Այլ եւ այլք—Նոր լուրեր, Հատուկտոր տե-
 ղեկութիւններ, նոր գրքեր: Պատասխանիք
 խմբագրութեան:
 ՅԱԻԵԼՈՒԱԾ—Եւրոպական յայտնի Հեղի-
 նակների գրուածների թարգմանութիւն-
 ներ:
 ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ—Յօգուածներ գեղար-
 ուեստական աշխարհից, նկարչութիւն, քան-
 դակագործութիւն, ճարտարապետութիւն...
 Բ Ն Ա Գ Ր Ո Ւ Մ—Հանդիսիս յօդուած-
 ներին պատշաճաւոր պատկերներ ու
 նկարներ, կենդանագիրներ երեւելի
 անձանց, վանքեր աւերակներ, եւ այլն:
 Բ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ո Ւ Մ-
 Տեսարաններ Հայաստանից, քաղաք-
 ների, լեռների, լճերի եւ այլն:
 Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե -
 Տ Ո Ւ Թ Ի Ի Ն—Հայկական Հին ճար-
 տարապետութիւն, խաչարձաններ,
 արձանագրութիւններ, քանդակագոր-
 ծութիւն եւ այլն:
 Գ Ե Ղ Ա Ր Ի Ո Ե Ս Ս Ա Կ Ա Ն Բ Ա Ժ-
 Ն Ո Ւ Մ—Հռչակաւոր նկարչիչների նկարն.
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ Զանազան լեզու-
 ներով:
 Բ ո վ ա ն դ ա կ ո լ թ ի լ ն 1892. գիրք Ա.
 Հասարակական խնդիրներ.
 Ամենայն հայց կաթողիկոսի ընտրութիւնը.
 Ամենապատիւ Խրիմեան Հայրիկ.
 Գերապատիւ Մատթէոս եպ. Իզմիրլեան.
 Տաճկահայաստանի բարենորոգութ. ծրա-
 գիրը.
 Տեղեկագրական.
 Ծաղկաձոր եւ Կեչառու վանքերը--Եմիր.

Պ Ա Տ Կ Ի Ր Ն Ե Ր Ի Կ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

Ծաղկաձոր եւ Կեչառիկք (բանաստ.)—
 Ո. Փ. Շ.
 Ս. Մակարայ վանքը.
 Մի հայաբնակ գիւղ Ղազախում—Բ. Թու-
 ման.
 Սեւանու լիճը եւ վանքերը.
 Մենաստան Հռոմոսի.
 Բանասիրական.
 Բաֆֆիի պարսկական նամակները (Ուսում
 եւ գրականութիւն, պարսկական աղանգ-
 ներ, եւ գիրվիշներ):
 Արեւ (բանաստ.)—Աշրգ-Ջիւանի.
 Կենսագրական.
 Սարգիս Սարգսեան.
 Իմ թագաւորութիւնը (բանաստ.)-Հայ-Արմէն.
 Կաղնի (բանաստ.)—Բարկաս.
 Մատենագրական.
 Հայդուգներ—Բաֆֆի
 Վաղեմի կալուածատէր—Գօղոլի—Թարգ.
 Աթանասեան. (Յաւելուած.)
 Երբ այնկոծում է արաք—Լերմոնտովի,
 Թարգմ. Յով. Մայիսեանց.
 Մատենախօսական.
 Մի քանի խօսք Բաֆֆիի նշանակութեան
 մասին—Թանգեանց.
 Voyage en Turquie d'Asie. Armenia, Kurdis-
 tane et Mésopotamie.
 Իրական կեանքի նուագներ.
 Ժողովրդի կրթական գործը մեղանում—
 Գրեն.
 The Place and Importance of Armenian in Com-
 par. Philology.
 Նոր տարու առթիւ (բանաստ.) Գ. ք. Մկրտ.
 Ներքին տեսութիւն.
 Կաթողիկոսական ընտրութիւններ.
 Ազգային լիշատակարան.
 Թղթակցութիւններ.
 Այլ եւ Այլք: Յայտարարութիւններ:
 Մահացուցակ—Ռափայել. Պատկանեան.
 Գեղարուեստական.
 Նկարների մասին—Լ. Մազիրեանց.
 Նկարներ ու պատկերներ.
 Բնագրում.

1. Խրիմեան Հայրիկ.
 2. Մատթէոս եպ. Իզմիրլեան.
 3. Կեչառու վանքերի ընդհանուր տեսարանը
 4. Ս. Գրիգոր Լուսաւորչի տաճարը.
 5. Նոյնը հարաւային կողմից.
 6. Ս. Մակարայ վանքը.
 7. Քարուանսարայ գիւղը.
 8. Սեւանայ լիճը եւ վանքերը.
 9. Ս. Յովհաննէս եկեղեցին.
 10. Ուխտաւորների հիւրատունը ս. Սեւանայ վանքում.
 11. Մենաստան Հոռոմոսի.
 12. Սարգիս Սարգսեան.
 13. Ռափայէլ Պապկանեան.
- Բնութիւնը Հայաստանում.
14. Ղարսի ձորը եւ Ախուրեան գետը.
 15. Մեծ Ղարաքիլիսա աւանը.
 16. Խրամ գետի աւազ կամուրջը Սանահնում.
 17. Զկնորսների նաւահանգիստը ձորախ գետի վերայ.
- Գեղարուեստական բաժնում.
18. Իսրայէլացուց անցնելը Կարմիր ծովից. (նկար Յով. Այուլազովսքու.)
 19. Յիսուս եւ անառակ կինը (Սիմիրադսկու.)
 20. Բոկոտն (Վերեշչակին.)
 21. Նուբիացու գերուհու երգը (Սիմիրադ.)
 22. Զկնորսուհի Փոն-Բոկ.
 23. Հռովմայեցի աղջիկները (Վերեշչակ.)
 24. Գիշերը Սեւանի ծովի վերայ—(Մղգեսեանց.)
 25. Զիւնահալքը Կովկասում (Գ.Բաշինջաղ.)
 26. Զէյրէկի կին-քանդակ. (Ոսկանի.)
 27. Զէյրէկ (նոյն.)
 28. Երեք գիցուհի (Թումանի.)
 29. Գարուն (Ռեստիկ).

Այսօր մեր միակ գրական-գեղարուեստական հանգէսը «Արաքս» 2.) վեցամսեայ պատկերազարդ հանդէսն է, որ 1887 թրուականից սկսեց հրատարակուել Ս. Պե-

տերբուրգում պ. Սիմէոն Գուլամիրեանի հրատարակութեամբ:

«Արաքսը» սիրայիւր ընդունելութիւն գրտաւ հայ հասարակութեան կողմից. յաջողութիւն ցանկացողներին, խրախուսողներին չափ չկար: Ռուսաստանից, Քիւրքիայից եւ այլ հայաբնակ կողմերից նորածին «Արաքսին» ստորագրուողներ եղան: «Արաքսի երեւան գալը յանկարծակի չէ. նա պտուղ է երկարամեայ մտածմունքների—գրում է պ. Գուլամիրեան—«Արաքսը» ոռոգելով հայ աշխարհը՝ անշուշտ գիտէ նա եւ ճանաչում է այդ տեղ բնակուող իր հարազատ ժողովրդին, նրա վիճակն ու կենցաղը, կարիքն ու պահանջը...[սմբագրութիւնս՝ միջոցը ներածին չափ ցանկութիւն ունի «Արաքսի» ծաւալը ընդարձակելու, առաջին կարգի նրկարներ տալու, գլխաւորապէս հայ աշխարհից, հայ կեանքից եւ թէ նորա ծրագիրը, բազմակողմանի դարձնելուց զատ՝ բովանդակութիւնն էլ լաւացնելու, սակայն այս բոլորը կախուած է սոսկ ժողովրդի ուշադրութիւնից թէ արդեօք նա ծախսի համեմատ մեզ միջոց կ'տայ կատարելու մեր խօստմունքը»

«Արաքսի» առաջին գիրքը լոյս տեսաւ 1887 թուականի նոյեմբերին, բ. գիրքը 1888 թ. մայիսին. այսպէս առաջին տարին հրատարակուեց անկանոն, իսկ 1890 թուականից կանոնաւորապէս հրատարակուում է տարեկան երկու գիրք տալով:

«Արաքսի» իւրաքանչիւր գրքում ինչպէս ծրագրից յայտնի է զետեղուում է 20-30 ի չափ երբեմն եւ աւելի մաքուր փորագրուած նկարներ ու պատկերներ. գեղեցիկ հաւաքածու հայկական վանքերի, գիւղերի եւ այլ տեսարանների:

«Արաքս» պատկերազարդ հանգէսը իւր ամեն գրքի հետ տալիս է «յաւելուած»ում եւրոպական ընտիր գրուածների թարգմանութիւններ: Առաջին տարին պ. Գուլամիրեան Եէյքսպիլի «Լիւր թագաւորը» տուեց իւր ընթերցողներին՝ թարգմ. Ստ. Մալխաս-

եանի. երկրորդ-երրորդ տարիները ուրիշ գրուածներ, Ն. Գօգօլի «Վաղեմի կալուածատէրը» Գօստոնեակու «Մեռեալ տանից»:

«Արաքսի» պէս մի ընտիր հրատարակութեան յաջողութիւն պէտք է ցանկալ եւ խրախուսել պ. հրատարակչին չընդհատելու իւր ազնիւ գործը: Յ ըբ. չնչին բաժանորդավճարը չը պէտք է խնայել «Արաքսին» ստորագրուելու՝ որ ամեն մարդու տան սեղանի գեղեցիկ զարդը եւ ընթերցանութեան յարմար հատոր կարող է լինել: Նիւթական ապահովութիւնից է կախուած իհարկէ նորա ստուարանալու, աւելի գեղեցկանալու գործը: Շատ հաւանական է որ յարգելի հրատարակչը յաջողութիւնը տեսնելով վեցամսեալ «Արաքսը» փոխարկէ «ամսագրի» ինչպէս նա այդ ցանկութիւնն յայտնել էր դեռ «Արաքսի» առաջին գրքում՝ թէ «... եթէ բաժանորդագրութիւնը յաջող գնար, յառաջիկայ տարում նրան ամսական կը դարձնէինք...»

Թ Ա Ն Յ Ո Ւ Թ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Արաքս» պատկերազարդ հանդէսը եւ մեր աղբիւրները:

ա. «... Մարդ կատարեալ հոգեկան զուարճութիւն է պզուտ թերթելով «Արաքսի» գեղարուեստական բաժինները: Նկարների եւ պատկերների յարմարաւոր ընտրութիւնը, նուրբ փորագրութիւնը, թուղթն ու տիպը, ամենը միասին մատակարարում են յերաւի այն գեղարուեստական վայելքը, որ պատկերազարդ հրատարակութիւնների նպատակն է...»

«Արձագանք» 1893 № 8. Ն. Գ.

բ. «... «Արաքսի» ամբողջ արտաքինն այնպէս կազմուած է որ տեսնողին համար կարծես թէ ոչ հանդէս կամ լրագիր մըն է, այլ հաւաքածոյ մը, պատկառելի հատոր մը «գիրք» մը, ինչպէս իբօք ալ նոյն հանդիսին սկիզբը կը դրուի... Չը մոռնանք միայն յիշել՝ որ այս մաքուր տպագրութեամբ՝ պատկերազարդ եւ ստուար հատորի եւ յաջորդ հրատարակելի ըստ-

ուարագոյն հատորին գինն 'ի միասին—Յ ըբ. միայն է. որ ստուգիւ գովելի է եւ զարմանալի միանգամայն... «Արաքսի» մէջ խմբագրութիւն կը պակսի, կայ սաստիկ յուզումն ու գրգռութիւն եւ միջնադարեան ոգի...»

«Հանդ. Ամսօրեայ» 1888. էջ 65.

գ. «Ստացանք Պետերբուրգում հրատարակուող «Արաքս» պատկերազարդ հանդիսի ա. գիրքը, որի արտաքին տեսքը լաւ տպագրութիւն է գործում ընթերցողի վերայ. թուղթը տիպը եւ պատկերները մաքուր են: Ինչպէս երեւում է ոչինչ աշխատանք եւ նիւթական միջոց չէ խնայած հանդիսի շքեղութեան համար»

«Նոր-Դար» 1887. № 215.

դ. «... Արաքսի մէջ աչքի ընկնող պակասութիւնն էլ այն է՝ որ չունի յօդուածների դասաւորութիւն, չունի բաժիններ եւ կարծէք մէկը միւսի յետեւից տպուած են այն բոլորը, ինչ որ ձեռք է ընկել, ինչ որ պատահել է...»

«Մշակ» 1887. № 141.

«Հանդէս Ամսօրեայի» եւ «Մշակի» արած նկատողութիւնը՝ որ «Արաքսի» նիւթերը կանոնաւոր դասաւորուած չեն, այժմ պ. Գուլամիրեան ուղղել է իւր այդ պակասութիւնը եւ նիւթերը դասաւորուած են որպէս հարկն է:

2.) «Հանդէս Ամսօրեայի» «Արաքսի» քննադատը մի նկատողութիւն է, արել «Արաքսի» անուան վերայ, որ պէտք է «Նրասի» լինէր եւ ոչ օտար «Արաքս» բառը: Հարկաւոր ենք համարում յիշել որ հրատարակչին, արդէն այդ բանը նախատեսել է եւ պէտք է «Նրասի» կոչէր իւր հանդիսի անունը, բայց նորա ստացած նամակների (Տես «Արաքս» ա. էջ 155). խորհրդով դրեց Արաքսը որ ժողովրդի սրտին աւելի մօտ է քան Նրասիը:

147.

ՔՆՆԱՍԵՐ 1.)

ՀՈՑ ԼԵՂՈՒԻ ԵՒ ԴՐԱՎՆԵՍԻԹԵՆ ԽՆԴՐԱՑ.

Ս տ ա ք հ ո լ ' մ (Շուկեղիա) 1887-1888.

Հրատարակուում էր՝ անկանոն
 Խմբագիր՝ Նորայր Բիւզանդացի.
 Ձեռագիր (վիմատիպ)
 Թուղթը եւ տիպը...
 Լեզուն ոճը { „...Հայկական բառարանու-
 թանս համար 500 ֆր.
 Ուղղագրութ. { վարձադրուածիւ մը ստացայ...



Աստուծոյ իւր գաղ-
 ղիւնէն-Հայերէն ըն-
 դարձակ բառարա-
 նով Հայ գրականու-
 թեան մէջ յայտնի
 գիտնական Նորայր
 Բիւզանդացին կամ
 Թովմաս Թերզեանը

(*) Շուեղիայի մայրաքաղաքում «Քննասէր»
 անունով մի ձեռագիր հանդէս հրատարա-
 կելու ձեռք զարկեց, որ միայն երկու տեա-
 րակ լոյս տեսաւ, կամ լաւ է ասել հրատա-
 րակուեցաւ ա. պրակը 1887 թ. մայիսի
 15-ին, բ. կամ վերջին տետրակը նոյն թը-
 ուականի դեկտ. 3-ին:

«Քննասէր» մի գրական լեզուաբանա-
 կան հանդէս կարելի էր հաշուել... որուն
 միակ նպատակը առաջադրած էր—գրում է
 Նորայր—Հայ մատենագրութեան եւ լեզուին
 վերաբերեալ խնդիրներով զբաղել...»:

ԻՆՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.)—«Քննասէր» եւ մեր աղբիւրները—
 ա. «Եթէ տարի յետքը Ստոքհոլմի մէջ ըս-
 կայ հրատարակել «Քննասէր» անունով
 պատիկ հանդէս մը...»
 «Արձագանք» 1893. № 131. Ն. Բիւզ.
 բ. «Նորայր Բիւզանդացի-Քննասէր Հայ լեզ-

ուի եւ գրականութեան խնդրոց. Քննու-
 թիւնք, ձեռագիր լիտոգրաֆ. տետր. I.
 II. Ստոքոլ. 1887⁴
 «Կենդր. գրավաճ. Հայ. գրքեր. լիակ.
 ցուց.» 1891.

148.

Լ Ե Չ Ո Ւ ^{1.)}

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ ԱՄՍՈՐԵԱՅ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1887-1888
 Հրատարակուում էր ամսի վերջերին.
 Խմբագիր-Տէր՝ Ն. Սերովբէ Տէրվիշեան
 Տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արա-
 մեան)
 Դիրքը՝ (տետր.) 11½ տպ. թերթ. 16 էջ.
 16X25 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
 Բաժանորդագիրներ՝ տարեկան կէս օսմ.
 ոսկի.

Լեզուն, ոճը { ,,...Դարձեալ զգայարանաց
 Ուղղագրութ. { տակ ինկնող նիւթն տեղեաւ
 եւ ժամանակա սահմանաւոր

Ծրագիրը՝
 Կրօնական, Մանկավարժական, Ազգա-
 լին, Պատմական, Ուսումնական, Բնա-
 գիտական, Բանաստեղծական, Լեզուաբա-
 նական յօդուածներ:

Բովանդակութիւն 1887. № 3. (մարտ.)
 Աստուած եւ նիւթապաշտք (շարուն.)
 Մանկավարժութեան հիմնական վարդա-
 պետութիւնք.

Աղքատաց զաւակունք եւ Յակովբեան Վար-
 ժարան:

Հայկականք 2. (շարունակութ.)

Հնդեւրոպական նախաժամանակ. ա. Անաս-
 նաբուծութիւն:

Այրի մօր մը վերջին ամիսներն զոր կը
 պատմէ որք մնացած աղջիկն բ. (շարու-
 նակութիւն).



այլ կաթոլիկ գրագէտ հոգեւորականների մէջ քաջածանօթ լեզուագէտ հայր Սերովբէ Տէրվիշեան որ ծաղիկ հասակում վաղճանուեցաւ անցեալ 1891 թուականին,

Կոստանդնուպոլսում 1887 թուականի սկզբից հրատարակել սկսեց «Լեզու» ուսումնական ամսագիրը որ իւր նմանի մէջ կատարեալ էր եւ անուանի: Հանդուցեալը չէր նմանում իւրեանց այժմեան հոգեւորականներին, որ չը մոռանալով որ իւրեանք հայ են, այնուամենայնիւ ամենաջերմ կերպով պաշտպանում են Հռովմի շահերը, մոռանում են՝ որ իւրեանք են ոչ հեռատեսութեամբ հեռացել Մայրենի Եկեղեցուց, եւ այսօր ատում են Լուսաւորչական Եկեղեցուն ու լուսաւորչականներին: Ապագայի լուրջ պատմագիրը թող քննէ արգարութիւնը:

Հայր Դէրվիշեան իւր զարգացողութեամբ Մխիթարեան հայրերից շատերից մէկը կարելի էր հաշուել: Բացի լիակատար հայերէնից հանդուցեալը ուսումնասիրել էր, Ֆրանսերէն, յունարէն, լատինէրէն, անգլիէրէն, արաբերէն, պարսկերէն, ասորերէն, եւ մասամբ ռուսերէն լեզուները: Չը գիտէր միայն մոլի պաշտպանութիւն ցոյց տալ Լեւոնի դահին: Նա հպատակ էր իւր գիտութեանը, իւր նպատակին. ուսում, գրականութիւն, գիտութիւն տարածել հայ ազգի մէջ, բարոյականութիւն, կատարեալ ասունաճպաշտութիւն էր քարոզում հ. Դէրվիշեան: 2.) Պարզ բան է որ մի այդպիսի ազնիւ գործչի թշնամիները բազմաթիւ կը լինէին: Նախանձ մարդիկ ամեն կերպ աշխատում էին խափանել «Լեզուի» հրատարակու-

թեան գործը: Բոլորեց «Լեզուի» առաջին տարեշրջանը. 1888 թուականին այլ եւս չէր հրատարակուում: Քիչ լետոյ խմբագիրը արկարացաւ եւ այդ հիւանդութիւնը հետըզհետէ տխուր կերպարանք ստանալով, 1891 թուականին մաշուած ու խոնջացած վարդապետ խմբագիրը հանգեաւ 'ի Տէր:

ԺԱՆՍԻՅԱԿԱՆՆԵՐ.

- 1.) «Աղբիւրներ եւ «Լեզու» ամսօրեայ. ա. «Լեզու» ուսումնաթերթ ամսօրեայ խմբ. հ. Ս. Տէրվիշեան, Կ. Պ. 50 դր. բ. «Ամսօրեայ ուսումնաթերթի տարեշրջանը կանխիկ կէս օսման. ոսկի. առանձին կը վաճառուի հինգ դահեկանի . . .» «Արաքս» 1887. ա. էջ 161. գ. «Սոյն ուսումնաթերթը յանձնարարելով ազգային բանասիրաց եւ մի քանի, մի քիչ, ամէն էնչ գրող հեղինակաց ու թարգմանչաց կը հրաւիրենք զանոնք քաջալերել ատոր արժանապատիւ խմբագրերն, որու նպատակն է ազգի մէջ ընդհանրացնել լեզուաքննական գիտութեան ուսումն, որից զուրկ էր ցարդ ազգային երեսասարդութիւն . . .» «Խիկար» 1886-87. էջ 183.
- 2.) «Լեզուի» երեսին, վերնագրի տակ տպագրուում էր հետեւեալ գեղեցիկ տողերը, որ հ. Դէրվիշեան ընտրել էր իւր գործունէութեան վճռարան— «Ճշմարիտը, բարին ու գեղեցիկը խնդրել. միակ վախճանն է մարգու . . .» Բ. Ս. Տ.



149.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

(Շաբաթաթերթ)

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1887-1888
Հրատարակուում էր՝ շաբաթ օրերը:
Խմբագիր՝ Թէոդոր Իսահակ.



ստուածաբան յայտնի
Թորոս Զուղայեցին
(որդի Իսահակ ք. Զու-
ղայեցույ) որ այժմ
Հնդկաստանումն է,
1887 թուականից
Կոստանդնուպոլսում
սկսեց հրատարակել

«Եկեղեցի Հայաստանեայց» անունով շաբա-
թաթերթը: Բառիս ընդարձակ նշանակու-
թեամբ հմուտ էր իւր մասնագիտութեան
մէջ, շաբաթաթերթիս խմբագիր Զուղայեցին.
կրօնական-բարոյական ընտիր յօդուածներով
հայ հասարակութեան հետաքրքիր էր դար-
ձնում իւր հանդէսը, մանաւանդ հոգեւո-
րական դասը սրտանց համակրում էր «Հա-
յաստանեայց Եկեղեցու» ուղղութեան:

«Եկեղեցու» տարին բաժանուած էր չորս
շրջանի: Բաժանորդավճարը երեք ամսեայ
համար, տասը դահեկան էր:

«Եկեղեցի Հայաստանեայց շաբաթաթեր-
թը սեւեց մի տարի: 1888 թուականին այլ
եւս չէր երեւում:

ԺՆՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Եկեղեցի Հայաստանեայց»
ա. «Եկեղեցի Հայաստանեայց շաբաթաթերթ
խմբ. Թորոս Զուղայեցի Կ. Պ. 10 դշ. . . .»
„Հանդ. Ամսօր.“ 1889. № 261.
բ. „ . . . Եւ Թէոդոր Իսահակ նախկին „Հա-
յաստանեայց Եկեղեցի“ ամսագրի խմբա-
գիրն էր որ Նրուսաղէմի ուսուցչութիւնը
Թողնելով գնում էր Հնդկաստան“
„Աբարատ“ (Էջմ.) 1893. № 3. էջ 282.



150.

ԿՐԹԱՐԱՆ^{1.)}

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1888-1889
Հրատարակուում էր՝ ամսի վերջերին
Տնօրէն Պ. Ատրունի.
Տպարան Պերպերեան . . .
Բաժանորդագինը՝ տարեկան 12 դրշ.



ի ամսօրեայ գեղեցիկ
հանդէս «Կրթարան»
անունով սկսեց հը-
րատարակուել Կոս-
տանդնուպոլսում պ.
Ատրունու տնօրէնու-
թեամբ, բայց մի տարու չափ
էլ հազիւ կեանք ունենա-

լով, կրթութեան դործին չը կարողացաւ ծառայել:

- 1.) Աղբիւրներ եւ «Կրթարան» Հանդէսը.
 - „ . . . Իսկ Կ. Պոլսի հայոց գրականութիւնը հարստացաւ մի նոր գիտնական ամսագրով որ կրում է „Կրթարան“ փառաւոր անունը . . . “
 - „Մշակ“ 1888 № 35. էջ 1.

151.

ԽՕՍՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ 1.)

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՄ
(Նաբաթաթերթ)

Կ ո ս տ ա ն գ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1888-1889



ոստանդնուպոլսում 1888 թուի մարտի 20-ին տեղի ունեցած Ազգային ժողովի մի նիստում ժողովականները ցանկութիւն յայտնեցին եւ որոշեցին շուտով հրատարակել մի կրօնական հանգէս, որը ծառայելու էր ազգային-կրօնական հարցերը պաշտպանելու՝ ինչպէս եկեղեցւոյ նոյն եւ պատրիարքարանի շահերը, մարտնչելով բողոքականների եւ նորանց թերթերի հետ:

Նոյն թուականի ապրիլի սկզբին լոյս

տեսաւ Վստանակ Հայաստանեայց Եկեղեցւոյ շաբաթաթերթի առաջին համարը: Ափսոս որ զանազան հանգամանքներ կարճացրին Վստանակի կեանքը, մինչեւ որ տարուայ վերջերը հազիւ կարողացաւ հասնել:

Ժ Ն Յ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Մեր աղբիւրները եւ Վստանակ Հայաստանեայց Եկեղեցւոյ:—
 - ա. „ . . . Ժողովն որոշեց գիր մուղղելով Կրթութեան Նախարարութեան արտօնութիւն խնդրել յառաջիկայ շաբթէն հրատարակելու . . . Ժողովը սոյն հանգիսի տնօրէնութեան համար վարչական խորհուրդ մը կազմեց . . . “
 - „Նոր-Դար“ 1888. № 52. էջ 1.

152.

ՀԱՆԴԻՄ

ԿՐԿՆԵԿԱՆ ԵՒ ՊԵՐՐԵԿԱՆ
(Վեցամսեայ)

Մ ո ս ք ու ա (Ռուսաստան) 1888-1891
Հրատարակուում էր՝ մայիսին եւ դեկտեմբերին:

Հրատարակիչ՝ Մկրտիչ Բարխուդարեանց:

Տպարան՝ Մկրտիչ Բարխուդարեանցի,
Գիրքը (գիրք) 10-12 տպ. թերթ 360-380 էջ 14x22 հ.-մետր.

Թ ու ղ թ ը եւ տ ր ա ղ ը՝ մաքուր.
Բ ա ժ ա ն ո ղ դ ա գ ի ն ը՝ տարեկան երեք ռուբլի.

Մեկ գիրքը երկու ռուբլի.

Լ ե գ ու ն ո ճ ը } „ . . . Այս հանգամանքը ի նկատի ունենալով մենք դժուարանում ենք ժամանակ . . . “

Ծ ը ա գ ի ը ը՝

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ նիւթեր.
Վիպական, բանաստեղծական, կենսագրա-
կան, մատենագրական, ճանապարհորդա-
կան, մատենախօսական, թատերական յօդ-
ուածներ, պատկերներ, զրոյցներ, երգեր,
ժողովրդական նիւթեր եւ այլն:

Այլ եւ այլք. նոր գրքեր, պատասխաններ:
Յայտարարութիւններ:

Բովանդակութիւն 1889 (գիրք Բ.)
Մի կտոր՝ հանած իմ տպելու պատրաստ
աշխատութիւնից—Պ. Պուշեան.

Բանաստեղծութիւններ—Մ. Նալբանդեան.
Ծեր Մարկոսը (պատկեր)—Լէօ:

Վերջին փափաք (բանաստ.)—Ս. Շահազ.
Կաճետայ ծուր (յիշողութ.)—Տ. Փիրում.

Ընկեր իմ (բանաստ.) Նադսոնից—Յ. Յովհ.
Հասօ (պատկեր)—Գ. Զուբար.

Երեք արմաւենի (բանաստ.) Լերմոնտ.-Գամ.
Քաթիպա.

Յիշողութիւն, Սօնէա (բանաստ.) Յով. Յովհ.
Պօետ (բանաստ.) Ա. Ծատուրեան.

Հայի ճուտ (ոտանաւոր)—Աշքղ-Ջիւանի.
Երեք զրոյց Գիւղը-Մոպասանից-Ա. Ծատուր.

Երգ (բանաստ.)—Նժդեհ.

Մեր գաշտն ու հովիտ (բանաստ.) Գ. Բարիս.
Սիրոյ վշտեր-(բանաստ.) Հէյնէից—Ա. Ծատ.

Լաւ բժշկեցին (պատկ.)—Նար-Դոս.
Պօետ եւ աստղեր (բանաստ.) Ս. Թանգեան

Արձագանք Տաճկա-Հայաստանի եւ Հայք (բա-
նաստ.)—Գ. Բարիսուղարեանց.

Ճանապարհորդութիւն դէպի Հայաստան.
Թարգմ. Յովհ. Բարիսուղարեանի.

Թէ ո՞վքեր էին ս. Վարդանաց եւ նոցա ժա-
մանակակիցք հայ սերընդի դաստիարակնե-
րը—Լօրդ.

Երկու խօսք—Մ. Նալբանդեան.
Ազգային նկատողութիւնք—Ստ. Նազարեան.

Անկողդ զլոյս . . . Գ. Այոււզեանց.
Յուցակ ստացեալ աղիւից—Մ. Թաղիաթ.

Մատենախօսութիւն—Նորայր Բիւզանդ.
Քանք ի Պօղոս կրօնաւորէ—Ղ. վ. Փիրմա-

ղէլեան.
Ազգ, այլ եւ այլք.

Վարժապետ—Ախտամերիկեան.

Վարժէվոր—Նոյն.

Սատանայի ոջիլ.—Նոյն

Խօնթլաղ.—Նոյն

Յայտարարութիւններ: Հայերէն եւ
օտար լեզուներով:



ատմական եւ գրական
նական գեղեցիկ գըր-
ուածների մի ժո-
ղովածու էր «Հան-
դէս» կիսամեան, որ
1888 թուականից սկը-
սեց լոյս տեսնել Մոսք-
ուայում պ. Մկրտիչ Բար-

խուղարեանի հրատարակութեամբ եւ տպա-
գրութեամբ: Առաջին գիրքը լոյս տեսաւ
1888 թուականի մայիս-յունիս ամիսներին:
Երկրորդը փոխանակ նոյն թուականի վեր-
ջերին, լոյս տեսաւ հետեւեալ 1889 թուա-
կանի սեպտ.-հոկտ. ամիսներին: Անկանոն
էր հրատարակուում պ. Բարիսուղարեանի
գրքերը. որ չորս հատոր միայն տեսաւ հայ
ընթերցող հասարակութիւնը: Երրորդ գիր-
քը 1890 թ. մայիսին, եւ չորրորդը կամ
վերջինը նոյն թուականի դեկտեմբերին: Հե-
տեւեալ 1891 թուականի բաժանորդագրու-
թիւնը բաց էր, պ. հրատարակիչը միտք չու-
նէր դադարեցնելու իւր հանգէսը: Շատ բա-
ժանորդներ ստորագրուեցին նորից եւ բա-
ժանորդագինը վճարելով մինչեւ այսօր էլ
սպասում են «Հանդէս» ստանալու: Ինչ
բացադրութիւն այս բանին պ. հրատարակ-
չի կողմից:

«Հանդէսի» գոյութիւնը աւելորդ չէր,
մինչեւ անգամ կարող ենք ասել որ պիտա-
նի էր: Միայն այն տրտուները որ «Մշակ»

եւ «Հանդէս Ամսօրեայ» յայտնել էին նիւթերի անկանոն դասաւորութեան համար «Արաքսին», մենք աւելացնում ենք որ միեւնոյն բանը պակաս էր եւ պ. Բարխուդարեանի «Հանդէսի» մէջ: Բայց «նիւթերի պարտու պատշաճ դասաւորութեան» համար հրատարակիչը ներողութիւն է խնդրել վերագրելով այդ «մի քանի հանգամանքների»:

ԳՐԱԿԱՆ մասը հարուստ էր հանդիսիս մէջ. Նալբանդեանի, Պատկանեանի, Յովհաննէսեանի, Ադամեանի, Ծատուրեանի, Բալուղեանի բանաստեղծութիւնները, Բաֆֆու, Պուօշեանի, Չուբարի պատկերները, մատենախօսութիւնները իւրեանց գեղեցկութեամբ զարգարում էին «Հանդէսի» էջերը եւ հարստացնում գրականական բաժինը:

ՊԱՏՄԱԿԱՆ մասը շատ աղքատ էր. «Հանդէս» իւր գոյութեան ամբողջ շրջանում մի քանի պատմական յօդուածներ տրուեց միայն: Այնուամենայնիւ «Հանդէսը» կարող էր բարեփոխութիւն, կարգաւորութիւն ստանալ նիւթերի տեսակի եւ դասաւորութեան մէջ: Առհասարակ ամեն մի նոր սկսած գործ իւր թերութիւնները կունենայ:

Ահա ինչ է գրում այդ մասին «Հանդէսի» հրատարակիչը՝ իւր գրքի առաջին համարում էջ 382. «...Այդպէս ենթադրելով մենք աւելի ուշագրութիւն ենք դարձնում գրականական մասի վերայ գլխաւոր եւ անհրաժեշտ տարր համարելով նորան: Նախ եւ առաջ գեղարուեստական գրուածներն են ազնուացնում մեծամասնութեան սիրտն ու հոգին, զարգացնում եւ կրթում նորա միտքն ու ճաշակը: Այս ուղղութեանն էլ պիտի հետեւենք մեր հետեւեալ հրատարակութիւններում...»

«Հանդէսին» աշխատակցում էին՝ Պուօշեան, Բաֆֆի, Գամառ-Քաթիպայ, Աղայեան, Յովհաննիսեան, Ադամեան, Ծատուրեան, Բալուղեան, Իս. Յարութիւնեան (Լորդ) Յ. Բարխուդարեան, Լէօ, Գ. Բարխուդարեան, Մահազիզեան, Աշրղ-Ջիւանի, Եղեան, Գ. Չուբար եւ այլք: Մասնաւորապէս ապագրը-

ուում էին. Նազարեանցի, Նալբանդեանցի, Գ. եպ. Այուլազովաքու եւ այլոց գրուածները: «Հանդէսի» առաջին երկու գրքերը տրպագրուում էին «Զուլարան եւ ապարան Ս. Օ. Հերբէկի» իսկ միւս գրքերը Մ. Բարխուդարեան սեփական ապարանում:

Ցանկալի էր պ. հրատարակիչը շարունակէր իւր «Հանդէսի» հրատարակութիւնը:

Ժ Ա Ն Յ Ո Ւ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Աղբիւրներ եւ «Հանդէս» կիսամեայ. ա. «... Կը ցանկանայք որ «Հանդէս» հրատարակիչը իւր հրատարակութեան վերաբերութեամբ միմիայն ի նկատի առնէ՝ մեր գրականութեան եւ գեղեցիկ դարութեան զարգացման գործը, որ անշուշտ նրա համար պէտք է որ թանգ լինին... իրքեւ նոր հրատարակութեան. այդ սխալ քայլերն անելով. սպասում ենք որ «Հանդէսը» կը լինի լուրջ երգերի եւ յօդուածների հանդէս»

բ. «Նոր-Գար» 1889 № 211. (Վարսամ.) «... Հանդէսի» առաջին գրքովի մասին իւր ժամանակին խօսելով, մենք ցանկութիւն էինք յայտնել որ այդ համակրելի հրատարակութիւնը յարատեւ լինի... ահա ինչու մենք կրկնակի ուրախութեամբ ողջունում ենք... երկրորդ գրքի լոյս տեսնելը... գուտ գրական ժողովածուն արհամարելով կուսակցական շահերը, պիտի ձգտէ ծառայել մի բարձր նպատակի. զարգացնել իւր ընթերցողների մէջ գեղեցիկ գրականութեան ճաշակը եւ աշխատել նոցա հոգեկան աշխարհը ընդլայնացնել համաշխարհային գաղափարներ ընդունելու համար...»

«Արձագանք» 1889 № 47, 48, (Շիրուանզադէ)

գ. «... Աւ այս գրքին մեծագոյն մասն «գրականական» բաժինը կը գրուէ... «Հանդէս»... իրեն առանձին ճիւղ ընտրելով գեղարուեստն եւ իբր «ժողովածու» այսկարգի գրութեանց կրնայ յանձնուել վիպասիրաց. եւ անշուշտ խմբագիրն ալ կը ջանայ թերթին հետզհետէ աւելի կենդանութիւն տալ...»

«Հանդ. Ամսօր.» 1889 էջ 51.

153.

Ա Ր Ե Գ Ա Կ ^{1.)}

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ԶՈՂԱԶՈՒՆՆԵՐ

Ճ էրզի Սիթի (Միացեալ Նահանգներ)
1888-1888

Հրատարակուում էր շաբաթ օրերը.
Տէր-Սմբագիր՝ Հ. Էկինեան.

Տպարան «Արեգակ» լրագրոյ
Գիրքը՝ (տետր) փոքրածալ 8 էջ
Թուղթը կարմիր եւ տիպը՝ տգեղ:
Բաժանորդագրինը՝ տարեկան 2 1/2 դո-
լար. (12 ֆրանկ.)

Լեզուն ռուս <sup>«...Եւ դորա առջին հա-
մարները ձեռքէ պիտի վա-
ճատին Թիֆլիսի եւ այլ...»</sup>

Մրագիրը՝
Առաջնորդող յօդուածներ զանազան խըն-
դիրների վերաբերեալ. բանասիրական, բա-
նաստեղծական եւ ազգային գրուածներ,
նամակներ, լուբեր, զուարճալիք խառն լու-
րեր, ծանուցումներ...

Քաղաքական յօդուածներ, ժամանակակից
գրութիւնից:

Բովանդակութիւն 1888 № 1.

Նոր տարու գայուստը եւ «Արեգակի» ծը-
նունդը (խմբ.)

Մեր առաջիկայ պատրիարքական ընտրելին.
Թղթակցութիւններ:

Քաղցրենիք՝ խառն լուրեր:

Զուարճալիք, ազգային, խառն եւ քաղաք.
լուբեր եւ այլն:

Անունով գեղեցիկ, բայց ինքը դար-
ձեաղ մի աննշան հետք է թողել մեր լրա-
գրութեան պատմութեան մէջ Ամերիկայի
առաջին հայ լրագիրը:

Պ. Էկինեան ձէրզի Սիթիի մէջ 1888.

Թուականի մայիսի սկզբից սկսեց մի քա-
ղաքական ազգային շաբաթաթերթ հրատա-
րակել, որի իսկական նպատակն էր Ամե-
րիկայի հայ գաղթականութեան առաջն առ-
նել: Գովելի էր «Արեգակի» նպատակը բայց
ինչ ինչ պատճառներով չորս ամիս միայն
կարողացաւ ապրել, նոյն թուականի սեպ-
տեմբեր ամսին «Արեգակը» մայրը մտաւ եւ
յաւիտեան դուրս չէ գալու:

Ժ Ա Ն Յ Թ Ա Ր Թ Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Արեգակ» եւ աղբիւրներ—
- ա. «Արեգակ շաբաթաթերթ ազգային եւ քա-
ղաքական խմբագ. Հ. Էկինեան ձէրզի Սիթի
,,Հանգ. Ամսօր.“ 1889 էջ 261.
- բ. «Արեգակի խմբագրութիւնը պատիւ ունի
ծանուցանել արգոյ հայ հասարակութեան
թէ Ամերիկայի հայ անդրանիկ լրագիրն
յառաջիկայ ապրիլի վերջէն պիտի սկսուի
հրատարակուի...»
,,Մշակ“ 1888 № 6 էջ 4. (յայտար.)
- գ. «Առաջնորդութեան արժանի է այդ թերթի
հրատարակչի «Ամերիկեան հայք եւ մայր
հայրենիք» խորագրով փոքրիկ յօդուածը
(բ. տետր.) ո՛չ թէ նրա մէջ յայտնուած
լաւ կամ նոր մտքերի եւ կամ գրական
արժանաւորութեան համար, այլ որ այդ
յօդուածի մէջ «Արեգակի» հրատարակչը
խօսում է մայր հայրենիքից Ամերիկայ
գաղթելու դէմ եւ... խորհուրդ է տալիս
հայերին մնալ հայրենիքում... (դրա հա-
կառակ խմբագրութիւնը իրան թոյլ է
տալիս) . . . տպելու կալիֆօրնիայից ստա-
ցած մի փոքրիկ թղթակցութիւն . . . որից
Հայաստանի հայը պէտք է տեսնէ . . . որ
Ամերիկա գաղթող հայերը ամեն կերպ
բախտաւոր եւ երջանիկ վիճակի մէջ
են . . .
,,Նոր-Իար“ 1888. № 55. էջ 1.
- դ. «Մենք «Արեգակի» հրատարակման մա-
սին լուր առնելով, անցեալ տարի ցան-
կութիւն յայտնեցինք, որ նոր թերթը իւր
գլխաւոր նպատակը ընտրի՝ բացառել Ա-
մերիկայ գաղթող հայերին գաղթականու-
թեան կորստարեր եւ մահացուցիչ հե-
տեանքները, քարոզել եւ յորդորել, որ

նոքա չը բաժանուին իրանց հայրենիքից: Բայց այժմ թերթի նպատակը այլ է երևում՝ «բարձրացնել Հայ անունն յաչս ամերիկացուց»: Դժուար է ենթադրել, թէ գործնական ամերիկացին կը սովորէ հայերէն եւ կը կարգայ մի հայ լրագիր, որպէս զի իմանայ, թէ ո՞վ է եւ ի՞նչ է հայ ազգը: Սակայն եթէ ամերիկացին հետաքրքրուի էլ իւր երկիրը գաղթած մի բուն հայերի վիճակով, — այդ մի մեծ բան չէ: Յանկային այն է, որ այդ մի բուն հայերը, ինչպէս գաղթել են, նոյնպէս եւ վերադառնան իրանց հայրենիքը: «Արձագանք»: 1888 էջ 67.

154.

ՀԱՅԱՍՏԱՆ



ԲԵՐԸՆ ԸՆԿԼ ԵՒ ՀՈՅՈՎՈՎՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 2.)

(Ամսաթերթ.)

Լոնդոն (Անգղիա) 1888-1892.
 Հրատարակուում էր ամսի վերջերին.
 Խմբագրապետ՝ Մ. Սուազլեան Փաստաբան:
 «Հայաստանի Հայկական Տպարան»
 Դիրքը՝ (տետր.) 6-10 էջ 3-սիւն. 24 X 33
 Հ.-մետր.
 Թուղթը եւ ասիւլը՝ մաքուր, պարզ.
 Բաժանորդագրիւնը՝ տարեկան 1½ անգրդ. ոսկի:
 Օտար երկիրներ 12 ֆր. 50 ս.

Լեզուն ոճը } «... Հուակ ուրեմն ճամբունեցաւ արդարութեան նա- յարարը. ձէվտէս փաշա...»

Ծրագիրը՝ Առաջնորդող յօդուածներ ազգային եւ քաղաքական նշանաւոր հարցերի վերաբերութեամբ: Ներքին եւ արտաքին լուրեր, թղթակցութիւններ, նամակներ խմբագրութեան. բանաստեղծութիւններ, նուիրատուութիւններ: Յօդուածներ ազգային հարցերի վերաբերեալ, կարեւոր ազդարարութիւններ, խմբագրութեան կողմից եւ այլ պիտանի յօդուածներ: Յայտարարութիւններ: Բովանդակութ. 1890 թ. 1-15 յունիս. Խնամակալ յանձնախումբ. Յայտարարութիւն-ձէյմս Պրայս. Մեր բարեկամք. Ե. Տը Բրէտանսէ Իրաւարարութեան եւ խաղաղութեան միջազգային ընկերութեան Յանձնախումբը: Նուիրատուութիւնք. Հայաստանի վիճակը—Մուսայ պէյին դատը—Քուրդ ջորիպան Ալի աղա դատախազին նոր հարց ու փորձը:—Նոր յայտարարութիւնք Մուսայ պէյի ամբաստանեալ—Յուսէփի հարց ու փորձը իբր երդումն:—Սեբաստիա, Կոստանդնուպոլիս, քրդաց խրժութիւնք: Ալաշկերտ: Հայկական խնդիր եւ հասարակաց կարծիք—Էջմիածին, գայթակղութիւն մի եւս, ահարկութիւնք ի պատրիարքարանի:—Լա Լիպերթէ Թուրքական...Ռուսական համակրանք:—Մեծանուն պր. Իլաստօն Տէյլի Նիզը, Իրաւարարութեան եւ խաղաղութեան միջազգային ընկերակցութիւնն, — Կապոյտ մատեան, Յինասիլ. Ստանթարտ, — Երկու գրաքննական յօբելեաններ, — Բարենորոգմունք—Հրապարակախօսութիւնք—Թուրք հայրենասէրը—Ուղղելիք...

Աշխարհի մայրաքաղաք Լոնդոնում էլ մենք ունեցել ենք մի լրագիր «Հայաստան»

տան» անուանով, որը հրատարակուել սկը- սեց 1888 թուականի նոյեմբերի 1-ից.

Խմբագրապետ Մ. Սուազլեան.
Քաղաքակ. տնօրէն՝ Յ. Պրուսալեան.
Քարտուղար խմբ. Յ. Մելքումեան.

Թերթիս նպատակը եղել է «... թարգման կանգնել ընդ մէջ Հայաստանի եւ Եւրոպիոյ. . . եւ լուսաւորել մտքերը հայ ժողովրդին տառապանաց վրայ. . . իսկ մեր քաղաքականութիւն խաղաղարար միջոցներով եւ վայելուչ եւ օրինաւոր եղանակաւ պահանջել յԵւրոպիոյ անմիջական իրականացումն այն վարչական եւ տեղական ինքնօրէնութեան որ խօստացած է Թուրքական Հայաստանի Բեռլինի 1878 թ. դաշնագրին 61-դ յօդուածովն . . . »

«Հայաստանի» գործունէութիւնը գնահատելի էր, դադափարները արժանաւոր, սակայն դորանց մասին անկարող ենք խօսել:

«Հայաստան» նախ հրատարակուում էր ամիսը երկու անգամ, բայց 3-դ համարից փոխուեցաւ ամսաթերթի, միայն դարձեալ իւրաքանչիւր համարի վերայ նշանակուում էր երկու թուահամար՝ օր. № 17-18.

Լրագրիս ուղիղ կէս մասը տպագրուում էր Փրանսերէն լեզուով՝ գրուում էին միեւնոյն հայերէն նիւթերի ճիշտ թարգմանութիւնները: 6 երես էլ աւելանալով օտար «Հայաստանը», կը նշանակէ իւրաքանչիւր համար կազմուած էր 10-12 երեսներից:

Պ. Սուազլեանի լրագիրը իւր գոյութեան ոչ երկար միջոցին փոխադրուել է մի քանի տպարաններ: Տառերը պատկանում էին խմբագրութեան, իսկ տպագրուում էր նախ՝ Gilberv nrd Revingtan յետոյ բ. տարուայ № 9-10ից՝ ի տպարանի Ronken D. Co, այդ ժամանակ արդէն գրուում էր «Հայաստանի Հայկակ. Տպարան»: Լոնդոնի մեր անգրանիկ հրատարակութեան ղեկավարների բարեկամութիւնը երկար չը տեւեց: Պ. Յով. Պրուսալեան եւ Յակ. Մելքումեան, հեռացան «Հայաստանի» խմբագրութիւնից: Թերթի 3-դ տարուայ 11-12-ի մէջ գրուեցաւ ա-

ռաջինի հրատարականը: Լրագրի ճակատին կարդացուում էր միայն «խմբագրապետ Մ. Սուազլեան փաստաբանի» անունը, եւ «Հայաստան» այդ ժամանակից «ամսագիր» բաւը գրեց կիսամսեայի տեղ:

«Հայաստան» ամսագիրը, չորրորդ տարուայ թիւ 3-ի վերայ դադար առաւ (1891-հոկտեմբեր.) եւ առժամանակ մնալով, 1892 թուականի ապրիլ ամսի վերջերին մի թերթ եւս լոյս տեսաւ դ. տարուայ թիւ 4: «Հայաստանի» այդ համարը վերջինն եղաւ, նիւթական սուղ միջոցները թոյլ չը տուին նորան զօրանալու:

Թ Ե Ն Յ Թ Ա Ր Թ Ի Ն Ն Ե Ր .


1.) «Հայաստանի» մասին մեր միակ աղբիւրը եղել է Մանչեստրից հայր Պարոնեանի մեզ ուղղած մի նամակը:

ա. «... իսկ գալով «Հայաստան» թերթին զի եւ զայնմանէ զնոյն օրինակ տեղեկութիւն կը խնդրէք, ահա այսօրէիկ են գիտելիքն . . . դադարման պատճառ դրամական գանձուն նուազութիւնն էր այս բազմաժախտ հրատարակութեան՝ ըստ որում իսկ եւ մանրագիր եւ օտարալեզու, որք կը թանգացունէ տպագրութիւնը Լոնդոնի նման թանգ քաղքի մը մէջ . . . Հրատարակիչք որ օրէնսգիտութեան ուսանողներ էին դաստիարակեալ ի Գաղղիա, պատշաճօրէն գայս ուղղութիւն ընտրած էին իրանց ձեռնարկութեանը եւ ընհանրապէս հաւատարիմ մնացած . . . »

Աղօթարար Ձեր՝
Սուքիաս վրդ. Պարոնեան:

2.) Նախ՝ «Բերան Հայկական Հայրենասիրաց Ընկերութեան»:

155.



ՔՈՂՈՔՈՎԱԾՆ, ՀԱՍՏԱՐԱԿՈՎԱԾՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՄԱԳԻՒՄ

Տփիս (Ռուսաստ.) 1889-1894-եւս.
 Հրատարակուում է պմսի վերջերին.
 Խմբագիր-Հրատարակիչ՝ Աւետիք Արասխանեան.
 Ն. Գ. Ռոտինեանցի տպարան.
 Դիրքը (գիրք) 6 տպ. թերթ. 196 էջ
 18x25 հ.-մետր.
 Թուղթը եւ տիպը՝ լաւագոյն.
 Բաժանորդագրինը՝ տարեկան տասը
 ռուբլի.
 մէկ գիրքը 1 ռ. 50 կոպ.
 Աւտուցիչներին տարեկ. 8 ռուբլի.
 Հասցէն՝ Տփիս (Ռուսաստ.) «Մուրճ»
 Հանդէսի խմբագրութեան:
 կամ Тифлисъ (Рущія) Въ Редакцію
 журнала „Мурчъ“
 կամ Tiflis (Russie) Rédactilon de la Revue
 „Mourteh“,
 Լեզուն ոճը } „... ՀնուՅեան փոշիով
 Ուղղագրութ. } ծածկած մտքերը բացի նո-
 րա աչքերը կատարող...“
 Ծրագիրը՝
 Առաջնորդող—Յօդուածներ մեր կեանքի
 Հիմնական խնդիրների մասին:
 Ներքին տեսութիւն—Ամսուայ ջրոնիկ-յօդ-
 ուածներ Հասարակական կեանքի ընթա-
 ցիկ խնդիրների եւ երեւոյթների մասին:
 Տնտեսական—Հետազօտութիւններ տնտեսա-
 կան:
 Քաղաքական տեսութիւն—Յօդուածներ քա-
 ղաքական անցքերի եւ ընդհանուր քաղա-
 քական դրութեան մասին:

Մատենախօսական—Գրական ընդարձակ քնն-
 նադատութիւններ:
 Գրախօսութիւն—Յօդուածներ ընթացիկ գը-
 րականութեան վերաբերեալ:
 Գիտական—Ընդհանուր յօգուածներ գիտու-
 թիւններից:
 Գիտական քրոնիկ—Յօդուածներ գիտութեան
 ընթացիկ խնդիրների մասին:
 Տեղագրական—Ճանապարհորդական նկատու-
 ղութիւններ:
 Թղթակցութիւններ—Ռուսաց Կայսերութեան
 զանազան տեղերից:
 Արտասահմանեան քրոնիկ:
 Վիպական—Վէպեր, վէպիկներ, պատկերներ:
 Բանաստղծական—Ոտանաւոր բանաստեղծու-
 թիւններ:
 Գեղարուեստական—Երաժշտական քրոնիկ:
 Ձանազան լուրեր:
 Յայտարարութիւններ:
 Բովանդակութիւն 1889 № 1.
 «Մուրճը» որպէս Հասարակական օր-
 զան—Աւետիք Արասխանեան:
 Նաւակ (բանաստ.)—Լ. Մանուէլեան.
 Ծովը (բանաստ.)—Ալիքեան.
 Տեցեր (վէպ)—Պ. Պաօշեան.
 Բարեպաշտ մարդիկ (պօէմ).—Գ. Բարխու-
 զարեան:
 Եղևարդ էֆ. գաղտնիքը (պատկ.) Տ. Փի-
 րումեան:
 Երդչի ուխտը (բանաստ.)—Արծիւեան.
 Հինգ օր (ճանապարհորդութ.)—Լէօ.
 Պ, Պաօշեան եւ նորա վէպերը-Ն. Քարամեան.
 Գ. Սուրբուհեանցի կենսագրութ.—Գ. Չմբշկ-
 եան.
 Գատաստանական վերանորոգութիւն—Կ. Եա-
 ղուբեան.
 Գրախօսութիւն—Ա.
 Ներքին տեսութիւն,
 Նամակ Արտասահմանից—* * *
 Երաժշտութիւն—Կարա-Մուրզա.
 Քաղաքական տեսութիւն—Ե.
 Պատասխաններ—Խմբ.
 Յայտարարութիւններ:



ղաբէկեանի «Վոռնկին»
յաջորդեց «Փորձ»
ամսագիրը. «Փորձի»
դադարելուց յետոյ
Ռուսահայոց մամու-
լի մէջ մի լուրջ ամ-
սագրի կարիքն ան-
հրաժեշտ էր: Այդ

կարիքը պէտք է յագեցնել պ. Աւետիք Արասխանեանի «Մուրճ» ամսագիրը որ հրատարակուել սկսեց Տփլիսիում 1889 թուականի սկզբից:

Ուրախալի տպաւորութիւն ունեցաւ Հայ գրագէտ Հասարակութեան վերայ «Մուրճի» ծնունդը: Ամեն կողմից յոյս էին տածում, որ նոր ամսագիրը կը լինի Հասարակական մի օրգան, նիւթերով առատ, բազմակողմանի: Եւ չը սխալուեցին, ճիշտ որ Հասարակական էր պ. Արասխանեանցի հանգէսը եւ նիւթերով «Փորձի» քիչ թերութիւններով միայն պակաս:

«Ամսագիր Հրատարակելու գաղափարը մեզ համար նոր չէր—գրում է պ. Խմբագիրը—նա ծնուել էր մեր մէջ քանի տարիներէն ի վեր...: Ուրախալի է որ պարոնին վերջապէս յաջողուեց իւր մտադրուած գործը ՚ի կատար անել, բայց ինչպէս մեր մի քանի լրագիրներ, այնպէս էլ «Մուրճ» ենթագրում էր որ իւրանից առաջ գրականութիւնը՝ ոչնչութիւն էր, իւրեան գալը շատ շտապով հարկաւոր էր, կամ եթէ մի տարի էլ ուշանար ո՞վ գիտէ Հայ գրականութիւնն ինչ օրի կրնկնէր: «Մենք գալիս ենք իւր ժամանակին այդ անկասկած է... Բոստովանում ենք, երեքին խոստովանում ենք մեր գրութեան աջողականութիւնը. անկոչ հիւր չենք մենք այլ կոչուած...»

Ո՞ր խմբագիրը կամ լրագիրը կասէ թէ

մենք «անկոչ հիւր» ենք. մենք դորձ չունինք կատարելու կամ թէ մենք աւելորդ ենք:

«Մուրճի» օգտաւէտ գործունէութիւնն ակնբերել է: Նիւթերը թարմ են եւ ընթերցանութեան հետաքրքիր:

«Մուրճ» ազատական ուղղութիւն ունի եւ գաղափարակից է «Մշակի» սկզբունքներին: Վերջին կաթոլիկոսական ընտրութիւններէ ժամանակ միայն կարելի է ասել «Մուրճը» հակուած էր աւելի հակառակ կուսակցութեան: Նա սկզբից միակն եղաւ «Խրիմեան» ձայն տուողը: «Մուրճը» Մշակ նման ուրիշ մի նպատակի համար ձայն չը տուեց ներկայիս Վեհ. Կաթոլիկոսի անունը, այլ իւր միակ եւ ցանկալի թեկնածուն էր «Խրիմեան» ինչպէս եւ պահպանողական կուսակցութեան նպատակն էր կաթոլիկոս ունենալ Թիւրքիայի եպիսկոպոսներից: «Մուրճը» հետեւում է Աղայեան ուղղագրութեան. տպագրուում է «ու»-ի տեղ «ւ» գործածելով: Ինչո՞ւ անպատճառ նորը պէտք է լինէր, քանի որ հին ուղղագրութիւնը ընդունուած ու յարգուած է ամբողջ Հայ գրականութեան կողմից: Հայերէն լեզուի ամենազարգացեալ տեղերն այսօր «ու» տառով են գործածում: Յոռաջագիմութիւնը միթէ այդպիսի փոքր բաների մէջ կարելի որոնել, կամ «ու» գործածելով միթէ յոռաջագիմել չի կարելի:

«Մուրճը» այսօր Հասարակութեան մէջ աւելի յարգանք աւելի համակրանք ու ազդեցութիւն կունենար եթէ այդ Հասարակ, բայց անք ծակող թերութիւնը չունենար:

Մինչեւ 1891 թուականի վերջը, այսինքն երեք տարի պ. Աւետիք Արասխանեան «Մուրճ» ամսագրի թէ խմբագիրը եւ թէ հրատարակիչն էր, 1892 թուականի սկզբից հրատարակութեան իրաւունքն անցաւ պ. Փիլիպպոս Վարդազարեանի ձեռքը:

1893-ի վերջերից պ. Վարդազարեան դուրս եկաւ. խմբագիր եւ հրատարակիչ եղաւ Ա. Արասխանեան, որ եւ տեւում է մինչեւ ասօր:

«Մուրճ» ամսագրին մշտական աշխատակցում են՝ Պ. Պռօշեան, Ա. Քիշմիշեան, Լ. Մանուէլեան, Յ. Տէր-Միրաքեան, Յ. Թումանեան, Ա. Ծատուրեան, Ջ. Բալուղեան, Արշ. Մխիթարեան, Գ. Խաժակեան, Եսեմեան, Ս. Ատրպետեան, Լուսինի, Արծիւեան, Ղ. Աղայեան, Երուանդազէ, Ս. Բալաղեան, Բժ. Վ. Արծրունի, Ա. Նամալեան, Լ. Սարգրսեան, Վրոյր, Կ. Եղղուբեան, Ն. Քարամեան, Տ. Փիրումեան, Լէօ, Գ. Բաշինջաղեան, Գ. Աստուածատրեան, Յով. Բարխուդարեան, եւ այլք:

«Մուրճից» արտատպած առանձին հրատարակութիւններ—

- Պ. Պռօշեան «Ճեցեր» (վէպ.)
- » «Բղղէ» »
- Ս. Ատրպետ. «Խեւ Կարապետ.» (վէպ.)
- Լ. Սարգսեան. «Այց Թիւրքաց Հայաստանին» Վրոյր Ա.—Պ. Հ. Ազամեան (կենսագր.)
- Ա. Քիշմիշեան, «Բոյսերի մեծարանքը»
- Ա. Նամալեան (հինգ մանր գրքոյկներ)
- Գ. Բարխուդարեան—«Բարեպաշտ մարգիկ» Արասխանեան Ա. «Արեւել ազգ. հին պատմ.» Բժ. Վ. Արծրունի.—«Հիպնոտիսմ:»
- Լ. Մանուէլեան «Տիգրանուհի» (թատերգ.)
- Երուանդազէ «Արսէն Դիմաքսեան» (վէպ.) եւ այլն:

Վերջին տեղեկութիւններից երեւում է որ «Մուրճը» ինչքան որ հարկաւոր է այնքան տարածուած, ընդհանրացած չէ: Օրինակ 1892 թուականի «Մուրճի» եկամուտը եղել է ընդամենը 6,500 ռուբլի. ունեցել է 400 բաժանորդ. 100-ը քաղաքում, 300-ը գուրար:

«Մուրճը» իւր տպարանը չէ փոխել եւ մինչեւ այժմ հրատարակուում է միեւնոյն տպարանից:

Թ Ա Ն Յ Թ Ա Ի Թ Ի Ի Ն Ն Ե ր .

1.) «Աղբիւրներ եւ «Մուրճ» հանգէսը— ա. «Մուրճ ամսագրին Տիգրանի»... շատ նը-

շանաւոր երեւոյթ է, որովհետեւ իբրեւ «հասարակական օրգան» կը ներկայանայ Ռուսահայոց... Մուրճ ամսագրերը ինքնուրոյն առաւելութիւն մը չի ցուցներ, Բայց կը բովանդակէ յապագային յառաջագիմելու սերմեր, եւ կը մոռցուի անշուշտ այն ամենայն անխորժ տպաւորութիւնն որ թերթն իբրեւ նախադուռն գրուած յօդուածին սեամբը, կոխելուն պէս կը ըզգացուի—Eigenes Lob. stinkt!«

«Հանգ. Ամսօրեայ» 1889 № 3.

բ. «Մի ամսագիր անուանուում է «Մուրճ» ... ինչ պատճառով,—որովհետեւ ոչինչ տեսողական, պինտ, ամուր եւ արժէք ունեցող բան չէ դարձնուում հասարակութեան համար, այլ իւր ամբողջ ջանքը գործ է դնում միմիայն իր խմբագիր հրատարակչի համար փառքի պսակը դարձնելու. իսկ վերջ ի վերջոյ մուրեցնելով եւ խաւարեցնելով իւր ընթերցողների միտքը՝ կը դարձնի նրանց համար մտաւոր շղթաներ եւ ինքն էլ շղթայակապ կը կորչի... ինչ ասես որ չէ արել «Մուրճը» մի տարուայ ընթացքում. անհամեմատ աւելի քան ուրիշները յետուս տարիներով կարող էին անել... նոր գրողներ ստեղծել ասես, նա է ստեղծել, նոր բանաստեղծական հանձարներ, նա է ստեղծագործել, նոր եւ մինչեւ այժմ հայոց գրականութեան մէջ չեղած ձեւի քաղաքական տեսութիւն նա է մտցրել... եւ այլն... բայց իր բոլոր արժանաւորութիւններն ու վերանորոգելի նորաձեւութիւնները թուելով, այդ նոր բեֆօրմատօրը մոռացել է ամենանըշանաւորը, մենք կօգնենք նրան, բացառելով այդ մեծ վերանորոգութեան մեծ նշանակութիւնը. Այդ պէս է որ «Մուրճի» մէջ միայն խմբագիրն արտօնութիւն ունի իր յօդուածները տակից ստորագրելու, իսկ ամսագրի բոլոր միւս աշխատակիցները իրանց գրուածների վերեւիցն են դնում իրանց ազգանունները... նշանաւոր նորաձեւութիւն, անմահ վերանորոգութիւն...»

«Մշակ» 1890 № 1. (խմբ.)

գ. «Մուրճ» ամսագրի խմբագիր պ. Ա. Արասխանեանցի ուղղին առանձին կերպով գրադեցնում է պ. Գրիգոր Արծրունուն. թողնելով հին սիրալիւր խօսքերը որ վերջինս նուիրել է պ. Արասխանեանին, քիչեմք միայն որ հէնց անցեալ տարի պ.

Արծրունին պ. Արասխանեանցին կլօուել եւ հոգեպէս հիւանդ սնուանեց . . .

„Նոր-Կար“ 1891 № 119.

գ. „...Մենք այսօր կարող ենք տեղ տալ մեր սրտում միմիայն մի զգացմունքի „Մուրճի“ վերաբերմամբ. այն է որ նա ունենայ կատարեալ յիշողութիւն եւ գերծ լինի այն բոլոր թերութիւններից եւ արգելքներից որոնք խանգարում են հայ մամուլի զարգացմանը . . . Մաղթում ենք որ „Մուրճը“ հասնի մեր ցանկացած յաջողութեան կատարելութեան տիպարին, իսկ հայ հասարակութիւնն էլ ըստ արժանոյն զնահատէ նորա զործերը. Մենք հաւատում ենք որ „Մուրճի“ խմբագիրը բարի ցանկութիւններով օժտուած մարդ է, այս պատճառով առ այժմ մեր տպաւորութիւնը ամփոփում ենք մի լատինական առածով՝ ut desint vires tamen est laudanda solintas . . .“

„Արձագանք“ 1889. № 1. էջ 7.

156.

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ 1.)

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՍՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ 2.)

(Բ. շրջան «Բուրաստան Մանկանցի» 3.)

Կ ո ո տ ա ն դ ն ու պ ո լ ի ս (Տաճ.) 1889-1893

Հրատարակուում էր՝ կիրակի օրերը 4.)

Տնօրէն-Խմբագիր՝ Միհրան Ասքանազ.

Տպարան՝ Ն. Պէրպերեան . . .

Բաժանորդագինը՝ տարեկան 12 Փր. 5)

Ծրագիրը՝

Մանկանց կրթութեան եւ դաստիարակութեան յարմար դրուածներ, ինչպէս եւ վէպիկներ, պատկերներ, բարոյական առակներ, ոտանաւոր, խրատներ, աղօթքներ, զիտութեան ճիւղերի մասին ծանօթութիւններ, մանկական խաղեր, բերուս, հանելուկներ, խնդիրներ եւ այլ զուարճալիք:



ատկերազարդ «Բուրաստան Մանկանց» հանդիսի դադարելու հետեւալ տարին, 1889 թուականին, նոյն քաղաքում, նոյն տպարանից հրատարակուել սկսեց «Ծաղիկ Մանկանց» պատկերազարդ կիսամետայ հանդէսը, պ. Սաքայեանի խմբագրութեամբ:

«Բուրաստան Մանկանցի» յաջողութիւնը չունեցաւ «Ծաղիկ Մանկանց», թէեւ չէր շեղուում նորա ծրագրից եւ նորա պէս դեղեցիկ նիւթեր էր տալիս: Երկու տարուց յետոյ «Ծաղիկ» մանկական հանդէսին խմբագիր-տնօրէն դարձաւ պ. Միհրան Ասքանազ, որ եւ ոչինչ սեպելով «Ծաղիկ» երկու տարուայ կեանքը, հանդէսի ճակատին գրում էր առաջին տարի: Հրատարակութեան պայմանն էլ փոխեց՝ դարձրեց «շաբաթական հանդէս»:

Պ. Ասքանազ «Ծաղիկ» նոր շրջանը չը կարողացաւ յարատեւ պահել. ինչ ինչ անյաջողութիւնների հետ միանալով բաժանորդների հետզհետէ նուազումը, երկու տարին դեռ չը լրացրած դադարեցրեց:

ԺՆՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 1.) Աղբիւրներ եւ «Ծաղիկ Մանկանց»— ա. „...Այս թերթին յաջողութիւնն ապահով է. քանի որ „Բուրաստան Մանկանց“—ին ուղղութիւնն ու բովանդակութիւն ունի . . ուրախ ենք որ մանկունք գտան վերստին իրանց Բուրաստանը . . .“ „Հանդ. Ամսօր.“ 1889. էջ 52.
- 2.) Պ. Սաքայեանի օրով գրում էր „Պատկերազարդ հանդէս“:
- 3.) Այս տողը գրուում էր Սաքայեանի օրով.
- 4.) Կիսամետայ ժամանակ հրատարակուում

էր ամսի կիսերին եւ վերջերին.
5.) Սաքայեանի օրով 40 դահեկան.

157.

Ն Ե Ղ Ո Ս^{1.)}

ՇԱՐԱԹՎԱԹԵՐԹ

Աղէքսանդրիա (Եղիպտոս) 1889-1889
Հրատարակուում էր կիրակի օրերը.
Խմբագիր-Տէր՝ Անտոն Ռշտունի.

Տպարան Փ. Միգրահի.
Դիւրքը՝ (Թերթ) միածալ 4 էջ 4 սիւ-
նեան 1 հ.-մետր.

Թուղթը եւ տիպը—բաւարար.
Բաժանորդագինը տարեկան տասը Փր.
Լեզուն ոճը } ,, . . . Նպատակն պիտի լի-
նի ազգային յառաջդիմու- }
Ուղղագրութ. } թեան համար իւրովանն...“

Ծրագիրը—
«Պիտի պարունակէ ազգային կենաց վրայ
տեսութիւն եւ տեղեկութիւն, արտաքին եւ
տեղական լուրեր, նոյնպէս զաւեշտական
բանասիրական եւ այլ օգտակար յօդուած-
ներ եւ գրութիւն . . .»

- Բովանդակութիւն 1889 № 1.
- Լրագրոյս նպատակը (խմբ.)
- Հազար եւ մէկ երազներ (գծի տակ) Փէլիեաօն.
- Ազգային.—Անտեղի սխալ մը.
- Լուրեր (քաղուած այլ լրագիրներից,
«Նեղոսին» նուէր (ոտանաւոր)
- Մահացուցակ.
- Մանր լուրեր.
- Ոճի մը 'ի Քիու (քաղուած այլ լրագրից.)
- Օգին մէջէն նորէն վերագարձանք (պատ-
կեր) շարունակելի.
- Սրախօսութիւններ՝ կատակներ.
- Յայտարարութիւններ:

Քսան, քսան-հինգ տարի անցել էր այն

ժամանակից երբ Եգիպտոսում հրատարակ-
ուում էր «Արմաւենի» լրագիրը: Ահա ութ-
սունական թուականների վերջերին, 1889-ից
Աղէքսանդրիա քաղաքում պ. Անտոն Ռշտ-
տունու տնօրէնութեամբ լոյս տեսաւ Եգիպ-
տոսի երկրորդ հայ լրագիրը՝ «Նեղոս» շա-
բաթաթերթը մեր այժմեան օրաթերթերի
գիրքով:

«Նեղոսը» ոչ ընդհանուրի, այլ միայն
իւր երկրի հայ գաղթականութեան շնորհիւ-
րասիրութեան եւ յարաբերութեան համար
էր հրատարակուում: Ինչպէս գրում է խմ-
բագիրը իւր յառաջաբանի մէջ «. . . նպատա-
կըն պիտի լինի ազգային յառաջդիմութեան
համար իւրովանն ծառայել եւ լինել յօգուտ
եղբայրասիրական եւ յարաբերութեան ընդ
մէջ օտար եւ Եգիպտարնակ հայ գաղթա-
կանութեան»:

Սկզբից ոչ այնքան կատարեալ, բայց «Նե-
ղոս» խօստանում էր բարեկարգ ծրագիր եւ
գոհացուցիչ նիւթեր. յուսալի էր որ Ռշտու-
նին իւր շաբաթաթերթը կը բարելաւէր:
Բայց սրտեղ չը կան դործի արգելք հան-
դիսացող մարդիկ, որոնք բան ու գործ թո-
ղած աշխատում են ուրիշի սկսած գործը
խափանել: Ամեն միջոց չեն խնայում խո-
չնգոտներ լինել դրացու գործի յաջողու-
թեան, թէեւ իւրեանք էլ հաւատացած լի-
նելով որ «Նեղոսի» պէս մի թերթ բացի
օգուտից վնաս չի կարող տալ հասարակու-
թեան: Բայց ինչո՞ւ են նորանք անում այդ
ամարգի արարքները,—որովհետեւ իւրեանք
չեն շուտ մտածել կամ սկսել լրագիր հրո-
տարակելը:

Ահա թէ ինչպէս «Նեղոսի» խմբագիրը
վշտացած, Գահիրէից մի նամակ է դրում
Տփլիսի հայ լրագիրներից մինին, իւր ազ-
գակիցների դէպի իւրեան արած չարիքնե-
րը 'ի գիտութիւն ընդհանրութեան յայտ-
նելու:

. Խմբագիր Տէր:

«Անշնական անյաջող փառասիրութեանց
եւ կրքերու գոհուեցանք թէ մենք եւ թէ

մեր շաբաթաթերթ «Նեղոսն» ար մասին ամեն մանրամասն տեղեկութիւն Հաղորդել յառաջիկային թողնելով, խնդրեմք որ շնորհ ընէք ծանուցանել ներկայիւս «Նեղոսի» ազնիւ ընթերցողաց, որ քիչ ժամանակէն պիտի աշխատեմք շարունակել մեր դադարեալ լրագիրն՝ երբ արգարութեան վրայ վստահացեալ, բառնանք մեր գէմն ելած խոչնդոտներ, իսկ Հակոբակ պարագայի մէջ կանխիկ վճարեալ բաժանորդագիւններ յետս պիտի վերագարձենք, Հետեւաբար մինչ ցնոր տնօրէնութիւն այլ եւս յանուն «Նեղոսի» բաժանորդագիւն ղրկելն աւելորդ է»

մնամ

Ա. Ռշտունի.

15|26 մայիս. Գահիրէ է. 2.)

Այգպէս «Նեղոս» շաբաթաթերթը «անձնական անյագ փառասիրութեանց եւ կրքերու զոհուելով, «կանխիկ վճարեալ բաժանորդագիւններ» յետ վերագարձելով դադարուեց չորս ամիս կեանք ունենալով:

«Նեղոսի» ճակատին նկարուած էր Նեղոս գետը. աջ ափին երեւում են քանի մի Եգիպտական բուրգեր, հնութեան զանազան մնացորդներ . . . իսկ աջ ափին սիւների նման տնկուած են Նեղոս-տառերը. երեւում են մարդիկ, սֆինկսներ եւ արեւադարձային բոյսեր . . .

ԹՆՅՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «Նեղոս» շաբաթաթերթը եւ աղբիւրներ:
 - ա. «Նեղոս շաբաթաթերթն որ տարւոյս բազմին սկսաւ հրատարակուել փարաւոններու երկրին մէջ եւ արդէն 6-րդ թիւն ալ լոյս տեսած է . . . Նեղոսի մինչեւ ցայսօր լոյս տեսած թուերն կրնան գոհացուցել ըսուել եւ ընդհանրապէս տիրող հանդարտ հոգին եւ յառաջադիմական ջանքը լաւ ապագայի յոյս կուտայ . . . իւր տեղական լրերովն աւելի տեղացեաց կարեւոր գրոսուցիչ եւ թէթեւ յօդուածներովն

աւելի ընտանեկան, միով բանիւ համեստ եւ որոշեալ սահմանի մը համար օգտակար թերթ մըն է: Նրկար կեանք եւ յաջողութիւն «Նեղոսի» . . .

- բ. «Նեղոս լրագիրը հիմնուել է երից անձանց ընկերութեամբ եւ շարունակութեան երաշխաւորեալ զանազան պայմաններով . . .»
- գ. «Ինչ մարդիկ են որ հալածում են «Նեղոսին» եւ նրա հրատարակչին . . . այնուամենայնիւ տխուր մտքեր պատում են միւր մէջ երբ տեսնում ենք որ մի հայ թերթ խափանում է հայերի ձեռքով . . . ազնիւ բարձր գործի մէջ միանալու, համերաշխութեամբ գործելու անկարող եւ անընդունակ, որովհետեւ խելք չկայ, ազնուութիւն չկայ, բնաւորութիւն եւ հոգւոյ վէհութիւն չկայ: Այլ կայ կոյր նախանձ, անմիտ եսականութիւն եւ փոքրոգութիւն . . .»
- 2. Տես՝ «Նոր-Գար» 1889. № 88 էջ 1.

158

ՍՈՒՐՅԱՆԴԱԿ ^{1.)}

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

(Ամսաթերթ)

Նիւ-Եորք (Ամերիկա) 1889-1890
 Հրատարակուում էր ամսի վերջերին.
 Խմբագիր՝
 Տպարան Հ. Էկինեան . . .
 Դիրքը՝ (թերթ.) միածալ 4 էջ 3 սիւնեան 20x30 Հ.-մետր.
 Բաժանորդագիւնը՝ տարեկան 25 սենտ.
 1 Ֆր. 60 կ.

Ամերիկայի մէջ «Արեգակ» շաբաթաթերթի դադարելուց չորս ամիս յետոյ, 1889 թ. փետրուար ամսից Նիւ-Եորքում սկսեց հրատարակուել «Սուրհանդակ» անունով մի փոքր թերթ, որ պատիւ ունի ամսաթերթ կոչուելու:

«Արեգակ» իբր թէ աշխատում էր Ամերիկայի հայ գաղթականութեան առաջն առնել: «Սուրհանդակը» բնորոշվին հակառակ քարոզում էր որ Սմերիկա գաղթող հայերը մեծ փառքերի կարող են տիրանալ, հարըստանալ եւ այլն: Պ. Խմբագիրը յոյս ունէր որ Ամերիկայում հայերը բազմանալով ապագայում կը կազմուի «Հայկական Դաշնակցութիւն» որով ապահովուած կը լինի գաղթականութեան սպասող վտանգից:

«Սուրհանդակ» էլ «Արեգակի» օրինակին հետեւեց, մի քանի ամիսներ միայն կարողացաւ ապրել:

ԹՆՆՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- 1.) «Սուրհանդակ» եւ աղբիւրներ:—
 - ա. ,, Սուրհանդակ Նիւ-Յորքի ամսաթերթն այս տարուոյ փետրուարին սկսաւ հրատարակուել... և ու և յաջողութիւն կը մաղթենք նոր թերթին...“
 - ,,Հանդ. Ամսօր.“ 1889 էջ 52.
 - բ. ,,Ամերիկայից ուղարկել են մեզ Նիւ-Յորքում այս տարի նոր յոյս տեսնող հայերէն մի ամսաթերթի մի համարը... ընթերցողը տեսնում է որ ,,լուսաւորուած տիրացուներ“ Ամերիկայումն էլ ունինք...“
 - ,,Նոր-Դար“ 1889 Ն: 48, էջ 1.

159.

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Այս ամսօրեայ հանդէսը՝ 80-ական թուականների գործ է երեւում, որ շատ

աննշան ու կարճ կեանքով, անյայտ է մնացել մեր մամուլի պատմութեան մէջ: Նա ա հաւանական է Կ. Պոլսումեղած լինի:

160.

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ^{1.)}

Լ Ր Ա Պ Ի Ր

ԸԶԿԵՅԻՆ ԵՒ ԸՆԴԸՆԿԵՆ

Նիւ-Եորք (Ամերիկա) 188-188*



մերիկայում «Ազատութիւն» անունով մի «ազգային եւ քաղաքական» լրագիր էլ ենք ունեցել, որ իւր ուղղութեամբ եւ նպատակով

տարբեր էր համարկրացի «Արեգակի»ց եւ «Սուրհանդակի»ց: Ամերիկայի այս լրագրի եւ ուրիշ երկու. լրագիրների մասին մի պատուիրած նամակով տեղեկութիւններ էինք խնդրել մեր բարեկամներից մինից: Բաւարար տեղեկութիւններ ստացանք, բայց դժբախտաբար չը կարողացանք առաջ բերել այստեղ:



ժԱ.

1890-1894.

(ԳՐԱԼԵՄԵԿ)

12 ԼՐԱԳԻՐ.

Ներկայ քառամեայ շրջանում, նախընթաց տասնամեակի հետ համեմատած, հայ լրագրութեան աճումը նուազել է: 1880 թուականից մինչև 1884-ը, նոր լրագիրներ ունեցանք 16-ը, իսկ այժմ մինչև 1894 թուականը, 12-ից չեն անցկացել: Այս բաժնում նշանաւոր լրագիրներ չեն աւելացել, եւ ոչ էլ լրագրական նշանաւոր գործիչներ աւելացան: Մանկավարժական հայ աշխարհում այս շրջանում միակ գործող պ. Յովհաննէս Բարթուղարեանն է:

161.



Աղբիւրէ յաւելում 2.

(Շաբաթաթերթ.)

- Տփիսիս (Ռուսաստան) 1890-1894-եւս.
- Հրատարակուում է կիրակի օրերը. 3)
- ժամանակ. Խմբ. Գ. Սուլթանեան.
- Հրատ. Տիգրան Նազարեանց.
- Տպարան Վրաց Հրատ. Ընկերութ. 4)
- Դիրքը (տետր) 1/2 թերթ տպագր. երկսիւնեան 23 X 32 հ.-մետր. 5)
- Թուղթը եւ տիպը բաւարար.
- Բաժանորդագիրնը տարեկան 6 ռուբ.

- Հասցէն՝ Տփիսիս (Ռուսաստ. Կովկաս)
- «Տարագ» հանդէսի խմբագրատուն:
- կամ՝ Тифлисъ (Руссія Кавказъ) Редакція „Таразъ“.
- Լեզուն ոճը } ,,... Մակար եպիսկոպոսն ուղարկեց Ռուսաստանից իրրև հրովարտակ՝ Մատթէոս ...“
- Ուղղագրութ. }
- Ծրագիրը 6.)
- Պետարուեստ եւ գիտութիւն, պատմական եւ ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրուածներ, բանաստեղծութիւն, քննադատութիւն եւ կենսագրութիւն. կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստներին վերաբերեալ. անային արդիւնաբերութիւն, տնտեսութիւն, ճանապարհորդութիւն եւ արկածք, երաժշտութիւն եւ թատրոն, ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ եւ այլն: Ֆէյլիետօն, ծայր, առած, կատակ, շախմատի եւ այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհուրդներ, այլ եւ այլք, պատասխաններ, Յայտարարութիւններ»:
- Բովանդակութիւն 1891 № 15.
- Մակար կաթողիկոս ամենայն հայոց.
- Հասարակական բարոյականութիւն—Ս. Հախ.
- Վերջին վերքեր (շարունակ)—Լէօ
- Եթէ ես լինէի (ոտանաւոր)—Սրինգ.
- Գաւառական ֆէյլիետօն—(Մոծակ)
- Խմբագրութեան կողմից.
- ժամանակագրութիւն.
- Պետարուեստ, թատրոն, երաժշտութիւն.
- Մամուլի տեսութիւն.

Լիւզվիզ Բէօրնէ (աֆօրիզմներ).
 Խառն լուրեր.
 Սուրհանդակ (պատասխաններ).
 Յայտարարութիւններ:

Մակար կաթ. ամենայն հայոց.
 Թէքիացի երեխաներ.
 Կանա-Պալիլիա քաղաքը.
 Սուրբ Էջմիածին.
 Յիսուս փշեայ պսակով:



«Էրիւր» ամսագրի նախկին խմբագիր պ. Տիգրան Նազարեան 1890 թուականի յունուար ամսից որպէս «Աղբիւրի յաւելուած» սկսեց հրատարակել Տիփսոսում «Տարագր» տնունով մի ամսագիր:

Ամսագիր «Տարագր» կարող էր լաւ համարում ունենալ, եթէ մինչեւ վերջը իւր նախկին դրութեան մէջ մնար: Բաֆֆի, 7.) Ա. Քալանթար եւ ուրիշ անուանի գրագէտներ մասնակցում էին «Տարագրին»: 1891 թուականից խմբագիրը ոչ իւր՝ այլ հանգէսի աշխատակիցների վերայ յոյս դնելով, «Տարագր» դարձրեց շաբաթաթերթ որ տեւում է մինչեւ այսօր, բայց այլ անձանց ձեռքին:

Ահա ինչ է գրում պ. խմբագիրը «Տարագր» ամսագրի առաջին համարում— «Ներկայ համարից սկսում ենք «Տարագրի» հրատարակութիւնը, թէ ինչ պիտի լինի «Տարագր» եւ թէ ինչից դրդուած մենք ձեռնարկեցինք այսպիսի մի հրատարակութեան, մասամբ մենք ասել ենք արդէն (գուցէ «Աղբիւրի» մէջ) նորից կրկնել պարտք չենք համարում, մանաւանդ որ մեր սովորութիւ-

նը խօսելը չէ այլ դործելը եւ ո՛վ կամ ինչը կարող է այնքան պերճախօս լինել, քան նոյն ինքը գործը . . . »

Սկզբում երբ այսպիսի փքուն ընկալման եր էին դրուում պ. Նազարեանի խմբագրութիւնից, միամիտ ընթերցողը հալած իւրի տեղ էր ընդունում եւ հաւատում որպէս հոյ գործչի ազնիւ խօսքեր. բայց շուտով հետաքննութեանց որ Տիգրան Նազարեանի տասը խօստումներից երկուսը հազիւ կատարուում են:

«Անշուշտ ամեն պերճախօսութիւնից վէր է փաստը—գրում է «Տարագր» յաւելուածի խմբագիր Նազարեանը իւր ամսագրի վերջին համարում—«Եթէ՛» ամիսը մի անգամ հրատարակուող «Տարագր» վստահանում ենք հէնց երկրորդ տարուց շաբաթը մի անգամ հրատարակել, պարզ ապացոյց է այն մեծ հոհարարութիւն եւ սիրայի ընդունելութեան որ այս կարճ ժամանակամիջոցում մեր ընթերցողներից «Տարագր»(ն) արժանացաւ . . . »

Շաբաթաթերթ դառնալուց յետոյ կորելի է ասել որ «Տարագրի» վարկն ընկաւ, աշխատակիցների մի մասը հեռացաւ, թերթի աշխատակիցները, ղեկավարներ մնացին մի քանի երիտասարդներ, որոնք ամեն կերպ աշխատելով, մի կերպ քարշ էին տալիս «Տարագրի» գոյութիւնը: Բայց այդ ամենը իզուր ջանք էր. «Եւելուածիս» կլիշները արդէն մաշուել էին ամեն մէկը մի քանի անգամ տպագրուելուց: Բաժանորդները մեծ անբաւականութիւններով հեռանում էին: Նազարեան տեսնելով որ աստղը թէքուում է, զօռ տուեց իւր ընկալման երիւն թէ առաջիկայ տարուայ ընթացքում մեր ընթերցողները ստանալու են մեր խմբագրութիւնից 51, 101, եւ չը գիտենք 1001 ընծաներ:

Խմբագիր Տիգրանի ընկալմաների զօրութիւնը ընթերցող հասարակութիւնն արդէն հասկացել էր: Իզուր ջանք, ապարդիւն խօսքեր՝ պ. Նազարեանի կողմից:

Յիշենք այստեղ որ «Աղբիւրի» եւ «Տա-

րագի» խմբագիր պ. Նազարեան 1892 թրուականից սկսեց «ԱՅՈՒՅՅ» անունով մի ռուսերէն թերթիկ հրատարակել: Երեւի ուղում էր զարմացնել հայ խմբագիր-հրատարակիչներին:

«Աղբիւրի» եւ «Տարագի» եւ «ԱՅՈՒՅՅ» ի խմբագիր Նազարեան անսնելով որ իւր յայտարարութիւնները, իւր խօսքերը այլ եւս կորցրել են իւրեանց նշանակութիւնը, չեն արժանանում այլ եւս Տե՛ծ համարաւորեալ եւ սիրելի ընդունելութեան, զգալով որ առաջիկայ տարին իւր սակաւաթիւ բաժանորդների հազիւ քառորդ մասը կը մնան, լուր տարածեց, թէ ինքը անհրաժեշտ գործով մի քանի տարի ժամանակով գնալու է արտասահման:

Երբ պ. Նազարեան պոչը պրծացրեց. «Աղբիւրի» եւ «Տարագի» խմբագրութեան գործերը յանձնեց բժ. Լիսիցեանին, արտասահման դնալը մոռացաւ:

«Տարագը» կարող էր յառաջագիմութիւն ունենալ որպէս շաբաթաթերթ որ Տիսիսում չկայ. կարող էր լաւ ընթացք ունենալ, եթէ՛ լիներ մի կատարեալ մարդու ձեռքին, եթէ՛ կամ լաւ պատկերներ ու նկարներ տար, կամ բարոյովին. չը տար եթէ՛ խմբագրութեան մատենաները մաքուր պահուէին եւ տեղիք չը արուէր գաւառացի բաժանորդների անգոհութիւններին, որոնք խեղճ խմբագրի գլխին անգազար գանգատներ ու հայհոյանքներ էին թափում: Եւ իրաւացի էին օտար տեղացի ստորագրողների տրտուները: Այնպէս էր լինում, որ բաժանորդներից շատերը թերթի կամ ամսագրի վճարը կանխիկ տալիս, բայց մինչեւ տարուայ կիսին, կամ վերջին ոչ մի համար, կամ ոչ մի ընծայ չէին ստանում:

Աւելի եւս ընկաւ պ. Նազարեանի հրատարակութիւնների ցենզը հասարակութեան աչքից, երբ նա իւր «յաւելուածի» մէջ վրստահանում էր դիպչել այն մեծ թերթերին, լրագիրներին, որոնք հայ հասարակութեան մէջ արդէն փառաւոր անուն են վաստակել: Այդպիսի վարմունքները «յաւելուածի» ըն-

կած, աննախանձելի դրութիւնից, կարելի է նմանեցնել ռուս երգիծաբան հոնգուցեալ Քուիլովի «Փիղը եւ քոթօթը» առակին: 8.)

Մեր մամուլի պատմութեան մէջ «Տարագը» օգտաւէտ հրատարակութիւնների շարքը կը բռնէր եթէ փոխանակ անմիտ ֆէյլիտոնների, մոզանների եւ նորաձեւութիւնների տեղ մատակարարէր հայ ընտանիքներին տնտեսական յօդուածներ եւ տեղեկութիւններ, առողջապահական, դաստիարակչական, եւ այլ պիտանի գրուածներ:

«Տարագի» արժանաւոր եւ ընթերցանութեան յարմար նիւթերը եղել են նորա դոյութեան ընթացքում Պառօշեանի, Հախումեանի վէպերը, (վերջինս թարգման.) Քումանեանի, Իսահակեանի, Կոստանեանի, Ծատուրեանի բանաստեղծութիւնները եւ Ս. Մալխասեանի ու Ս. Թառայեանի գրախօսութիւնները:

Իսկ առօրեայ պատահական լուրերը շաբաթէ շաբաթ լոյս տեսնելով, արդէն հնանում են, եւ մինչեւ «Տարագի» լոյս տեսնելը միւս թերթերի մէջ արդէն սպուած են լինում:

Բաւական չէ վերնագիրը կրել «գեղարուեստական-երգիծաբանական» հանդէս: Պէտք է նիւթեր տալ: «Տարագը» շատ հեռու էր գեղարուեստից այդ արդէն յայտնի է. իսկ «երգիծաբանական» բնաւորութիւն ունեցող գրուածներ պ. Նազարեանի հիմնած թերթը իւր չորս տարուայ ընթացքում հազիւ չորս հատը տուած կը լինի:

«Տարագին» աշխատակցել են մշտական՝ Ղ. Աղայեան, Ս. Հախումեան, Յակ. Ղազարեան, Հ. Առաքելեան, Լէօ, Ե. Պալեան, Ե. Ղազարեան, Ա. Եզեկեան, Ա. Կրասիլնիկեան, Յար. Քումանեան, Ս. Մալխասեան, Տ. Փիրումեան, Սրինգ, Ս. Թառայեանց, Շիրումանգադէ, Ա. Իսահակեան, Ա. Ծատուրեան, Ծանթ. Յ. Կոստանեան, Սամ. Բալաղեան, Սանգալ. Ա. Ահարօնեան, Գ. Միրզոյեան, Ս. Լիսիցեան, եւ այլք:

Հրատարակութիւններ՝ արտասպաճ «Տա-

րազ» Հանդիսից:

Ի՛նչֆի՛ն—«Մինը այսպէս միւսը այնպէս» (վէպ.)

Պռօշեան—«Սկիզբն երկանց» (վէպ.)

Յակ. Ղազարեան—«Գիւլէ» (վէպիկ).

Յար. Թումանեան—«Խօլեր» (վոդեւիլ)

Ս. Հախումեան—Գալիա (թարգ.) վէպիկ.

«Տարազ» շաբաթաթերթը ինչպէս եւ «Աղբիւր» ամսագիրը, 1892 թուականի նոյեմբ. 1-ից անցնում են բժ. Գանիէլ Լիսիցեանի ձեռքը՝ ամշտական աշխատակցութեամբ Գաբրիէլ Միրզոյեանի եւ Ստեփան Լիսիցեանի: Մի տարի դեռ չը լրացած, ժամանակաւոր խմբագիր բժիշկ Լիսիցեանը վաղճանուեց: Հետեւեալ 1893 թուականի հոկտեմբերի վերջերից «Աղբիւրի» եւ «Տարազի» ժամանակաւոր խմբագիր դարձաւ մեզ անձանօթ ոմն պ. Գ. Սուլթանեան. որ մինչեւ այժմ շարունակում է հրատարակել պ. Նազարեանի հիմնած հրատարակութիւնները:

Թ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ն Ե Ր .

1.) «Տարազ» աղբիւրի յաւելուածը, եւ մեր աղբիւրները—

ա. «Կովկասեան հայոց գրականութեան մէջ առաջին անգամն է որ լոյս է տեսնում մի պատկերազարդ հանդէս. այդ պատճառով որքան էլ պակասութիւն ունենար այդ հրատարակութիւնը, մեր կարծիքով պէտք է ներողամիտ լինել դէպի «Տարազը» որպէս դէպի հայերէն պատկերազարդ հանդէս հրատարակելու առաջին փորձ.»

«Մշակ» 1890. № 6.

բ. «Նուշուայ քաղաքացի պ. Տիգրան Նազարեանցը, որ կամենալով խմբագրի աշունը կրել, 1883 թուականից սկսել է Թիֆլիսում հրատարակել «Աղբիւր» անունով մի ամսագիր եւ ապա ներկայ տարուց մոզաներին նուիրուած «Տարազ» անունով մի յաւելուած . . .»

«Արձագանք» 1890. № 18.

2.) Նազարեանցի օրով այս տողը շատ մանր տառերով էր տպագրուում աւելի ան-

նկատելի անելու համար. իսկ սորա տեղ գրուում էր «գեղարուեստական, գրական, երգիծարանական, պատկերազարդ շաբաթաթերթ»:

3.) Ամսաթերթ ժամանակ ամօի վերջերին.

4.) Նախ տպարան «Արօր» Տ. Նազարեանի.

5.) Ամսաթերթ ժամանակ դիբլը (տետր) 16-20 էջ երկսիւնեան 25X34 Հ.-մետր.

6.) «Տարազի» նիւթերը դասաւորուում են շատ անկանոն առանձին բաժիններ չունին, մանաւանդ սկզբի տ սրիներում:

7.) Ինչֆի՛ն վախճանուած էր այդ թուականին. հանգուցեալի երկերը տպագրուում էին հեզինակի այրիի կարգադրութեամբ:

8.) Չանազան անտեղի գրպարտութիւններէ համար, վերջերք օրէնքը դատապարտեց Նազարեանին, որպէս գրպարտիչ ստախօս. (Տես Արձագ. 1893 № 34, 35, 36.)

162.

ՊԱՏԿԵՐ ^{1.)}

ՀԱՆՂԷՍ ԿՈՍՏԱՄՍԵԱՑ

Կոստանդնուպոլիս (Տաճ.) 1890-1894 եւս. Հրատարակուում է ամսի կիսերին եւ վերջերին.

Արտօնատէր Յովսէփ Շէհրեան.

Տպարան ձիվէլէկեան,

Գիբրը (տետր.) 24 էջ 16X24 Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագիրնը՝ տարեկան քառասուն դահեկան.

Հասցէն՝ Խմբագրութիւն «Պատկեր» հանդիսի: Բերա Եշիլ փողոց թիւ 1.

Կոստանդնուպոլիս:

Կամ Pédaction du «Badcuere»
Pèra rue echil № 1.
Konstantinople.

Լեզուն ոճը } «Պատկեր» տաւն է հինգ
Ուղղագրութ. } օր մի անգամ կր հրատարակուի . . . երկրադնոյս . . .»

Ծ ր ա գ ի ր ք —

Կրօնական, բարոյական, պատմական. լեզուագիտական, ծիսական, գիտնական, ճանապարհորդական եւ այլ յօդուածներ: Մատենագրական, բանասիրական, քննական գրուածներ:

Ք ո վ ա ն դ ա կ ու թ. 1890. № 1.

Պատճառ «Պատկեր» Հանդիսիս—(խմբ.)

Սուրբ գիրք եւ երկրախօսութիւն—Աղաս.

Միլանի եկեղեցւոյն մէջ գտած Հին նշմարանք—

Օրէնք.

Մաքրարան. երգ առաջին—Թարգ. Հ. Դ. վ. Նազար.

Արդի Հայերէնն նորոգութեան պէտք ունի—Հ.

Սեր. վ. Դէրվիշեան.

Պօբլիոս Կուսնէլիոս Սկիպիոն.

Երկրագնտոյս շարժումն եւ օրուան տեւողութիւնը:

Հայկական թարգմանութիւն նախնեաց—Պիսիդիայ իմաստասիրի վեցօրեայ:



այ գրականութեան մէջ ներկայիս եղած պատմական-բանասիրական, լեզուագիտական» ծրագրով պարբերական Հանդէսները երեք են՝ եւ բոլորն էլ կա-

թողիկ Հայերի ձեռքումն են. առաջինը «Բազմավէպ» վեճակում, երկրորդը «Հանդէս Ամսօրեայն» վիէննայում, եւ երրորդը «Պատկեր» կիսամսեան Կոստանդնուպոլսում, որ 1890 թուականի ապրիլի 15-ից 2.) սկսուեց պ. Յովսէփ Շէհրեանի տնօրէնութեամբ:

«Պատկեր» երկշաբաթեայ Հանդէսը եթէ չստենք զուտ կաթողիկական, պէտք է ասել

որ կրօնական խնդիրներում զուտ պահպանողական է պապական շահերի:

Բողոքականների հրատարակութիւնները չը հաշուելով, «Պատկերը» միակ Հանդէսն է Կ. Պոլսում, որը հրատարակուում է ամիսը երկու անգամ: Վերջինս էլ ինչպէս յայտնեցինք կաթողիկութիւնն է քարոզում: Կոստանդնուպոլսում այժմ անհրաժեշտ է մի ամսագիր լուսաւորչական Հայերի ձեռքին Հասարակական եւ գլխաւորապէս ազգային լուրջ խնդիրներով պարապելու. ինչպէս Իդմիրի «Արեւելեան Մամուլ» եւ Տփլիսի «Մուրճ» ամսագիրները:

«Պատկերի» երեսին (շապկի վերայ) մի գրքի եւ գրչի պատկեր է երեւում, որի վերայ կարդացուում է՝ «Կրօնք եւ Գիտութիւն» 3.)

Ժ Ա Ն Յ Ո Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե ր .

- 1.) «Պատկեր» եւ մեր աղբիւրները:
 - ա. «Պատկեր—Հանդէս կիսամսեայ, սկսեալ 1890, արտօնատէր Յ. Շէհրեան.» «Օրացոյց» 1893. Ռոստով. էջ 92.
 - բ. «Պատկեր կիսամսեայ կրօնական Հանդէս. պաշտօն. հրատ. կաթողիկ—Հայոց պատրիարքարանի. սկսեալ 1890: Արտօնատէր Յ. Շէհրեան» «Օրացոյց 1893. Ժող-պատկ» Մ. Չ. էջ 66
 - գ. «Պատկեր շաբաթաթերթ (՝) Կ. Պ.» «Հանդ. Ամսօր.» 1889 էջ 263.
- 2.) Սկսուելով տարուայ կիսից, «Պատկերը» իւր տարեշրջանը լրացնում է տարուայ կիսերին.
- 3.) «Կրօնք եւ Գիտութիւն» թէ՛ «Կրօն եւ Գիտութիւնք»:

163.

Ա Ս Պ Ա Ր Է Ջ ^{1.)}

(Կիսամսեայ)

Ա թ է ն ք (Յունաստան) 189⁰-189⁰



Երջերջ Աթէնքում «Ասպարէզ» անունով մի ազգային-քաղաքական երկշաբաթաթերթ էր հրատարակուում մի երիտասարդի խմբագրութեամբ:

Իւր աննշան գործունէութեամբ յայտնի չը կարողացաւ լինել. «Ասպարէզ» մի քանի շաբաթ կեանք ունենալով, գաղար առաւ:

Ժ Ա Ն Օ Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) Ասպարէզ լրագիրը եւ մեր աղբիւրները: Հետաքրքիր բանասէրի սրատես աչքերից չը պէտք է կորչի ոչ մի բան, ինչ որ ինքը որոնում է: «Ասպարէզի» մասին մեր աղբիւրներից եւ ոչ մինը չէ խօսել: Իսկ մի պատուիրած համակիւն որ ուղարկել էինք այն կողմերը, մեր մի բարեկամը պատասխանում է՝ թէ բոլորովին աւելորդ է այդպիսի լրագիրների մասին Ձեր գրութիւնները, «... որոնք հրատարակուել են մի քանի օր կամ շաբաթ, խմբագրի ձեռագիր խմաստութիւնները (որոնք տպագրութեան չեն արժանացել) լոյս աշխարհ հանելու: Նոյն իսկ այսօր դեռ կան Պոլսում—աւելացնում է մեր յարգելի համակագիրը—քմահաճոյքի, պարապ ժամերի արդիւնքներ, որոնց անհետանալու մասին միայն իրանց խմբագիրները ցաւ կը զգային...»: Բոլորովին «անտես առնել» չէինք կարող. ընթերցողը պահանջում է հայ լրագիրների մասին լիակատար ծանօթութիւններ:

Հ Ն Չ Ա Կ

(Ամսագիր)



Ոյն հանդիսի մասին գրութախտապէս չենք կարող գրել: Մեր կարծիքով սա հրատարակուում է Աթէնքում: Փոքրիկ գիրքով ութածալ մի ազատամիտ թերթ է:

«Հնչակի» այժմ հրատարակուելու մասին չենք երաշխաւորում: 2.)

Ժ Ա Ն Օ Թ Ա Ռ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) Աղբիւրներ եւ «Հնչակ»—
ա. «Հնչակ հանդէս տասնօրեայ» (՞) խմբգ. Փափագեան Կ. Պ. 10 զուրուշ. «Հանդ. Ամսօր» 1889 էջ 262.
- 2.) Գուցէ հայ ընթերցող հասարակութիւնը ծանօթ լինի այս լրագրի հետ:

Ա Ր Տ Ա Ս ՈՒ Ք ^{1.)}

Մեր բոլոր աղբիւրները լուռ են «Արտասուէքի» մասին: Մեզ այսքանը միայն յայտնի է որ այս ձեռագիր լրագիրը հրատարակուում է:

տարակուելիս է եղել Ամերիկայում մի վառ-վառն երիտասարդի խմբագրութեամբ: Հինգ-վեց համարներ են միայն հրատարակուել «Արտասուլք» թերթից:



166.

Դ Ա Ն ՈՒ Բ ^{1.)}

(Կիսամսեայ)

Ռ ու շ չ ու կ (Բուլլարիա) 1892-1892.
Հրատարակուում էր ամսի 1-15-ին.
Խմբագիր-Տնօրէն՝ Մ. Ս. Թիւթիւն-
ճիւֆ.
Տպարան
Բաժանորդագինը տարեկան 12 Ֆր.



իակ հայ լրագիրն է Բուլլարիայում «Դա-նուք» կոչուած կի-սամսեայ հանդէսը, որ 1891 թուակա-նից սկսեց հրա-տարակուել Ռուշչուկում պ. Թիւթիւնճեանի տնօրէն-խմբ-ագրութեամբ:

Մեզ չէ պատահած տեսնել «Դանուք» երկշաբաթաթերթը, դորա համար մեզ ան-յայտ է պ. Թիւթիւնճիւֆի նպատակը կամ ուղղութիւնը:

Տարուայ կիսին գեռ չը հասած, «Դա-րը» Բուլլարական Կառավարութեան հրամա-նով անպայման դադարման դատապարտուե-ցաւ, երեք-չորս ամիս միայն կեանք ունե-նալով:

Ժ Ա Ն ՈՒ Թ Ա Ռ Թ Ի Ա Ն Ն Ե Ր .

1.) «Դանուք» եւ մեր աղբիւրները:
ա. «Բուլլարական Կառավարութեան կարգա-դրութեամբ անպայման դադարման է դա-տապարտուած Ռուշչուկ քաղաքում հրա-տարակուող «Դանուք» հայերէն թերթը որ պ. Մ. Ս. Թիւթիւնճիւֆի խմբագրու-թեամբ այս տարի էր սկսել հրատարակ-ուել . . . »
«Նոր-Դար» 1892, № 63.



167.

Ա Ր Ա Ր Ա Ր Ա Տ

ԵՐԿ-ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ՀԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Նիւ-Եորք (Ամերիկա) 1891-1891-ԿԼԱ.
Հրատարակուում էր՝ հինգշաբթի օ-րերը:
Խմբագիր եւ Տէր՝ Փառնակ Մտտթէոս Այվատեան:
Տպագրութիւն Արարատեան.
Դիրքը՝ (թերթ) միածալ 4 էջ 5-սիւնեան 35X52 Հ.-մետր.
Թուղթը եւ տիպը՝ մաքուր.
Բաժանորդագինը՝ տեղում 2 գօլար.
12 շիլինգ.

Հասցէն Նիւ-Եորք (Ամերիկա)
կամ New-York (U. S. Amerika)
The Ararat 72. Univer-
sity Place:

Լեզուն ոճը } «...Վերջապէս շատ չանցաւ
Ուղղագրութ, } Ռուսաց բանակակալ հասաւ
Մատանեան հայազգի . . . »
Ծրագիրը՝ 2.)
ԱԶԳԱՅԻՆ—

Առաջնորդող յօդուածներ, ազգային նշա-նաւոր խնդիրների մասին: Թղթակցութիւն-ներ, լուրեր եւ այլ տեղեկութիւններ ազ-

գային կեանքից. Թիւրքիայի եւ մասամբ Ռուսիայի հայաբնակ տեղերից. քաղուածքներ հայ լրագիրներից:
ՔԱՂԱՔԱԿԱՆ—

Ընդարձակ տեղեկութիւններ քաղաքական ժամանակակից դրութիւնից. նոր լուրեր, տեղեկութիւններ . . .

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—

Աշխարհագրական, բանաստեղծական, գրական, ազգագրական, տեղագրական, պատմական յօդուածներ: Իւրաւագիտութիւն, մատենախօսութիւն, բժշկութիւն:—Խառն լուրեր:

Բովանգակութիւն 1891. 10 լուրիս.

(«Արարատի» բաժանորդագրութեան պայմանք. հասցէն, եւ այլ տեղեկութիւնք)

Այ՛ո այդպէս է (մի քանի խօսք այժմեան լրագիր ընթերցողներին):

Ներկայ դարուս հայոց պատմութեան մէջ մի կարեւոր գէպք:

Հայեր ի Բրովիտէնս—Ականատես մը.

Խառն լուրեր—Տիրան պէյ Տատեանի Փարիզ ուղղելու լուր. Հասանապատ գիւղէն. Մէքքէի մէջ ժանդարտ. Վաշինքթոնէն. Ամերիկայի հայերի շնորհակալութեան ուզերձ առ Շահն Պարսից. Թիւրքիայից Ամերիկայ գաղթողների աճումը:

Ահ եւ սարսափ:

Պաշտօնական վայրագրութիւնք ի Թրքաստան—Հաճի Կեպուր:

Հայերկրագործաց համար պատեհութիւն մը. Նամակ առ Սարգիս Էֆ. Մինասեանց.

Նամակ Պալմսթրենէն առ մեծ. Ս. Մինասեանց.

Հայաստան ինչպէս որ է (շարունակ.)

Լուսութեան պետն (շարունակելի.)

Ի նպաստի կը ծախուին Բաֆֆիի, Յարութիւն Չազրեանի եւ Կէմ Ալմազ Մանուկի պատկերները:

Հայաստանեայց եկեղեցի յուստը—արդիւնք հանգանակութեանց վասն շինութեան Ս. Փրկիչ եկեղեցւոյ. ցուցակ նուիրատուների (շարունակելի):

Ձուարճալիք:

Այլ եւ այլ ծանուցմունք.

Եկեղեցական ծանուցմունք.

Հանդիսարանք:

„Մեր սկզբունքը ազգին սկզբունքն է

„Մեր քաղաքականութիւնը աշխարհէ քաղաքականութիւնը“

Ահա այս էր «Արարատի» սկզբունքը, որ իւրաքանչիւր համարի ճակատին ապագրուում էր:

Գոստանդնուպոլսում 60-ական թուականների վերջերում պ. Մատթէոս Այվատեան հրատարակում էր «Արարատ» անունով մի լրագիր. ինչպէս յիշել ենք իւր աեղում, նա ծրագրով ու նպատակով բոլորովին տարբեր էր Ամերիկայի «Արարատից»: Կարճ ժամանակից Այվատեան դադարեցրեց իւր լրագիրը, եւ վերջերքս 90-ական թըուականների սկզբներին, 1891 թ.-ից նիւ-Եորքում սկսեց յիշեալ պարոնը մի մեծ երկլեզուական (անգլ.-հայ.) «քաղաքական, ազգային եւ ուսումնական» թերթ, դարձեալ «Արարատ» անունով:

Մեր ձեռքում եղած «Արարատի» 1891 թուականի համարների վերայ գրուած է շքան եւ երրորդ տարի: Այս բանը մի հանելուկ է մնում մեզ: Գոստանդնուպոլսում ինչպէս յայտնի է «Արարատը» մի տարի հազիւ կարողացաւ հրատարակուել, դորա համար եւ անյայտ է մնացել մեր աղբիւրներից շատերին: Իսկ Ամերիկայում 1891 թըուականից շուտ չը սկսուեց, որովհետեւ այդ տարուայ համարների վերայ գրուած է «Նոր հատոր—(Ա): Ուրեմն եզրակացութիւնն այս է, որ պ. Փառնակ Մատթէոս Այվատեան «Արարատի» երկար տարիներ չը հրատարակուած տարիներն էլ է հաշուել: (1869-1891 23). (ն. տ. 12. հրտոից 4382.) (յուլիս 30). «Արարատի» «Նոր հատորի» կեանքը երկար չեղաւ:

Թ Ը Ն Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

- 1.) «Արարատ» Այվատեանի՝ եւ. աղբիւրներ:
 - ա. ,,Հետագայ 1869 թուին 4. Պոլսոյ մէջ սկիզբն առաւ Մ. Այվատեանի խմբագրութեամբ ,,Արարատ“
 - ,,Արձագանք“ 1882. № 22. Ա. Եր.
- 2.) ,,Արարատի“ մէջ նիւթերի կարգապահութիւն չկայ. կանոնաւոր բաժանմունքներ չունի:

168.

Հ Ա Յ Ք ^{1.)}

Հ Ա Ն Գ Ե Ս

ԱՋԳԱՅԻՆ, ԲԵՂՈՒԲԵՎԱՆ ԵՒ ԳՐԵՆԵՆ
(Կիսամսեայ)

Նիւ-Եորք (Ամերիկա) 1891-1894-եւս
Հրատարակուում է ամիսն երկու անգամ. 15-ին, 30-ին.
Խմբագիր՝ Տր. Մ. Ս. Գաբրիէլեան.
Տպագրութիւն Մ. Ս. Գաբրիէլեան:
Գիրքը՝ (տետր.) ութածալ 16 էջ 2 սիւնեան 20x29 հ.-մետր.
Թուղթը եւ տիպը մաքուր, գեղեցիկ.
Բաժանորդագիրնը՝ տարեկան 2 տուր (10 ֆրանք.)

Հասցէն՝ Նիւ-Եորք. (Ամերիկա)
Խմբագրութ. «Հայք» Հանդիսի.
Կամ New-York. (U. S. America)
Rédaction de la Bevue ,,Haik“
202 West. 23 nd. St.

Լեզուն ոճը { ,,Արդարեւ մի քանի գործիչներ, քաջուցան ասպարիզէն, և հայրենասիրական“

Ծրագիրը՝
ԱՋԳԱՅԻՆ—

Առաջնորդող յօդուածներ, ազգային խոշոր խնդիրների վերաբերել: Յօդուածներ ազգային կեանքից. թղթակցութիւններ,

լուրեր եւ այլ տեղեկութիւններ:
ՔԱՂԱՔԱԿԱՆ—

Յօդուածներ քաղաքական արդի դրութիւնից, նոր տեղեկութիւններ, լուրեր, անդեկութիւններ:
ԳՐԱԿԱՆ—

Յօդուածներ ազգային գրականութիւնից. մատենախօսութիւն, աշխարհագրութիւն, տեղագրական, վիճակագրական, ճանապարհորդական գրուածներ:

Բովանդակութիւն 1893 թիւ 16:
Հայ դատն եւ Հայ կուսակցութիւնը.
Առաջարկ առ «Հայրենասիրական Միութիւն»
Հրաւէր զինւորական կրթութեան:
Միութիւն գոյացնելու դործնական կերպ մը:
Նամակ Խարբերդէ:
Բալուէն աղաղակ մի.
Նամակ Եգիպտոսէ:
Հայ լրագրութեան հարիւր ամեակն.
Մնալ յօտարութեան թէ վերադառնալ Հայրենիք:
Պատասխան.

Ամերիկայի հայերն ինչպէս առեւտուր կանեն.
Ամերիկայի հայերն եւ օտար անուններ.
Թանկագին արհեստներ Հայոց համար.
Միամեայ հաշուեկշիռ ելեւմտից Ս. Փրկիչ եկեղեցւոյ Ուստրիի.
Նամակ Վանէ.
Յայտարարութիւններ:

Նիւ-Եորքում «Արարատի» գոյութիւնը բաւական չը համարելով, պ. Մ. Ս. Գաբրիէլեան 1891 թուականից հրատարակել սկսեց «Հայք» անունով «ազգային, քաղաքական եւ դրական» երկշաբաթաթերթը որ մինչեւ այժմ հրատարակուում է: Ծրագրից, բովանդակութիւնից մասամբ յայտնի է արդէն թերթիս նպատակը, ուղղութիւնը: Աւելի խօսել չենք կարող:

ԺԱՆՍԿԱՎԱՐԺԱԿԱՆՆԵՐ.

1.) Տպագրուած աղբիւրներ չունինք «Հայքի» մասին որպէս նոր թերթ: Իսկ Եւրոպայից մեր մի բարեկամի մեզ ուղարկած մի նամակից՝ «Հայքի» մասին քաղում ենք հետեւեալը՝

ա. «...Վերջիններս շարքին պատկանում է քեզ երևի անծանօթ մի թերթ, որ տպագրուում է Նիւ-Նորքում... աւելի լաւ համարեցի թերթն ուղարկել...»
(Նամակ)

169.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ^{1.)}

(Կիսամեայ)

Մ ո ս ք ու ա 2.) (Ռուսաստ.) 1892-1894-եւս
Հրատարակուում է յունիսին եւ դեկտեմբերին:

Հրատարակիչ՝ Յովհաննէս Բարխուդարեան.

Տպարան՝ Մկրտիչ Բարխուդարեան.

Գիրքը՝ (գիրք) 10-12 տպ. թերթ. 300-340 էջ 16 X 22 չ. մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագիրն՝ տարեկան երկու ր. մէկ գիրքն մէկ »

Հասցէն՝-Տփլիս

Նաբերեժնայեա փողոց, տուն թիւ 11.

Յովհաննէս Բարխուդարեանց.

Կամ՝

Тифлисъ

Набережная улица дома № 11
Иоаннесъ Бархударіаничъ.

Կամ՝

Tiflis (Russie Cavcasse)

Naberechnaja № st. 11.

Ioannes Barhoudariantz.

Լեզուն ոճը } «...Սեմինարիոնների մէջ
Ուղղագրութ. } ամենակատարելագործուածն
է նա իւր կազմակերպ...»

Ծրագիրը՝

«Դասական մանկավարժականների կենսագրութիւնը եւ ուսմունքը, ինքնուրոյն գիտնական յօդուածներ մանկավարժութեան եւ նորա օժանդակիչ գիտութիւնների բոլոր ճիւղերից, ժողովրդական լուսաւորութիւնը եւ դպրոցական գործը քաղաքակրթուած ազգերի մէջ. զանազան օրինակելի գալրոցների կազմակերպութիւնը եւ ընդհանուր տեսութիւն այն նոր մանկավարժական շարժումների եւ ուղղութիւնների, որ տեղի են ունենում զարգացած երկիրներում.»

Բ ո վ ա ն դ ա կ ու թ իւ ն 1892. գիրք Ա.

Յառաջաբան—Հրատարակիչ.

Յովհաննէս Ամոս Կամենիսոն եւ նորա մանկավարժութիւնը—Յ. Բարխուդարեանց.

Պարիզի միջնակարգ դպրոցները (Լ. Լ. Մարկովից)—Յ. Թ.

Ենայի ճեմարանական մանկավարժական սեմինարիոնը եւ նորա կազմակերպութիւնը—Յ. Բարխուդարեան:

Բարոյական փիլիսոփայութիւն—Ս. ք. Սահակ.

Կովկասեան մանկավարժների արդի գերը իրանց տաճկահայտակ ազգայինների կրթական դործում—Յ. Տէր-Միրաքեանց.

Համառօտ ծրագիր Ներսիսեան Հոգեւոր ուսումնարանի գիշերօթիկ սաների գալրոցական ճանապարհորդութեան—Իսահակ Յարութիւնեան.

Կամքի զարգացումն (Հոգեբանական մանկավարժական խորհրդածութիւններ).

Լինհարդ եւ Գերդուդ. գործ Հայնրիխ Պիտալօցցու—Ի. Յ.

Գրագիտութիւն Ռուսաստանի մէջ (վիճագրական տեղեկութիւններ):

Պրոսլայի ժողովրդական դպրոցների մասին. (վիճագրական տեղեկութիւններ):

Բուլղարիայի դպրոցները (վիճակագրական տեղեկութիւններ.)

Ընդհանուր տեսութիւն մանկավարժական աշխարհից—Մարթօնիկ.

Ընդհանուր մանկավարժութիւն—Տուխկոն Յիլլեր. ներմուծումն ընդհանուր մանկա-

վարժութեան—Ի. Յ.

Մանկական խաղերի նշանակութիւնը, դաստիարակութեան համար.

Գրախօսութիւններ.

I. Արատիանեան Աւետիք—«Արեւելեան ազգերի հին պատմութիւնը»—Բար.

II. Prof. Dr. Lazaris Ideale. Frag.

III. Rembrandtals Erzeher.

Մանկավարժական տեղեկութիւններ.

Մի քանի խօսք—Յ. Բարխուդարեան:

Յայտարարութիւններ:



այոց մի շարք մանկավարժական հրատարակութիւնները յաջողութիւն չունենալով դադարուեցին. ինչպէս յիշեցինք իւրեանց տեղերում: Վերջին թուականներում մի մանկավարժական կատարեալ հրատարակութեան պէտքն զգացուում էր մեր բազմաթիւ ուսուցիչներին կատարելապէս ծանօթացնելու մանկավարժական հիմքերի հետ: Կրթական ազնիւ գործին մի քարոզիչ, մի առաջնորդող ոյժ էր հարկաւոր, որ ընդհանուր հայ գրականութեան մէջ պակասում էր վերջերքս:

Ահա այդ ծանր գործը յանձն առաւ գերմանական բարձրագոյն ուսումնաւարտ երիտասարդ պ. Յովհաննէս Բարխուդարեանը: Սա իւր շրջանում ունենալով իւր պէս քանի մի մասնագէտ անձինք, 1892 թուականի սկզբից սկսեց հրատարակել «Մանկավարժական Գրադարան» անունով կիսամեայ հանդէսը, որ ցաւօք սրտի տակաւին մի գիրք է լոյս տեսել: Փոխանակ ոյժ տալու, օգնելու, խրախուսելու «Գրադարանին», որ

գուցէ եւ ամսադիր դառնար, հայ ընթերցողները, մեծ մասամբ հայ ուսուցիչները, այնքան ստորադրուողներ չը տուին այդ օգտակար վեցամսեակին, որ ահա մէկ տարի էլ անց է կացել, բայց դեռ Բ. Գիրքը լոյս չէ տեսել:

Պատիւ չի բերել մեզ, եթէ «Մանկավարժական Գրադարանը» ստիպուած լինի գադարելու:

«Մանկավարժական Գրադարանի» նպատակն է «ըստ կարելոյն զարկ տալ մեր հայրենիքում կրթական գործին մատակարարող հայ ուսուցչին մանկավարժական բոլոր ճիւղերից նիւթեր, որ նա կարողանայ իւր ասպարէզի համար մանկավարժական տեսութիւն եւ հմտութիւն ձեռք բերել, եւ մանկավարժութեան զէնքով հասնել այն նպատակին, որին նա ձգտում է, քնքոյշ հոգով կրթութիւնը ամենաազնիւ եւ դժուարին գործըն է աշխարհիս երեսին: Առանց մանկավարժութեան սկզբունքների, գուցէ նա ոչ միայն չը հասնէր իւր նպատակին, այլ մինչեւ անգամ կը շեղուէր դէպի նպատակը տանող ճանապարհից եւ բոլորովին հետեւանքի չէր հասնիլ: Ուսուցիչն առանց մանկավարժութեան, նմանում է գինւորի, առանց դիսիպլինայի»

«Այդ դժուարին գործը ինձ վերայ առնելով-աւելացնում է յարգելի հրատարակիչը հրաւիրում եմ բոլոր բանիմաց հայ ուսուցիչներին ձեռք կառկաւել հրատարակութեանս օգնելու. թէ ինքնուրոյն յօդուածներով թէ եւ երկասիրութիւնների թարգմանութիւններով»

«Լիալոյս ենք որ հայ հասարակութիւնը, նա մանաւանդ ուսուցչական շրջանը, կ'աշխատէ ապահովել մեր միակ մանկավարժական ժողովածուն»:

Թ Ը Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

1.) «Մանկավարժական Գրադարան»

ԺԱՆՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1.) Տպագրուած աղբիւրներ չունինք «Հայքի» մասին որպէս նոր թերթ: Իսկ Եւրոպայից մեր մի բարեկամի մեզ ուղարկած մի նամակից՝ «Հայքի» մասին քաղում ենք հետեւեալը՝

ա. «...Վերջիններս շարքին պատկանում է քեզ երևի անծանօթ մի թերթ, որ տպագրուում է Նիւ-Սորքում... աւելի լաւ համարեցի թերթն ուղարկել...»
(Նամակ)

169.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ^{1.)}

(Գիտամեայ)

Մ ո ո ջ ու ա 2.) (Ռուսաստ.) 1892-1894-եւս Հրատարակուում է յունիսին եւ դեկտեմբերին:

Հրատարակիչ՝ Յովհաննէս Բարխուդարեան.

Տպարան՝ Մկրտիչ Բարխուդարեան.

Գիրքը՝ (գիրք) 10-12 տպ. թերթ. 300-340 էջ 16 X 22 չ.-մետր.

Թուղթը եւ տիպը՝ մաքուր.

Բաժանորդագրինը՝ տարեկան երկու ր. մէկ գիրքն՝ մէկ »

Հասցէն՝-Տիֆլիս

Նաբեռեժնայեա փողոց, տուն թիւ 11.

Յովհաննէս Բարխուդարեանց.

կամ՝ Тифлисъ
Набережная улица дома № 11
Иоаннесъ Бархударіаничъ.

կամ՝ Tiflis (Russie Cavcasse)
Naberechnaja № st. 11.
Ioannes Barhoudariantz.

Լեզուն ոճը } «...Սեմինարիոնների մէջ
Ուղղագրութ. } ամենակատարելագործուածն
է նա իւր կազմակերպ...»

Ծրագիրը՝

«Դասական մանկավարժականների կենսագրութիւնը եւ ուսմունքը, ինքնուրոյն գիտնական յօգուածներ մտնկավարժութեան եւ նորա օժանդակիչ գիտութիւնների բարձր ճիւղերից, ժողովրդական լուսաւորութիւնը եւ դպրոցական գործը քաղաքակրթուած ազգերի մէջ. զանազան օրինակելի գայրոցների կազմակերպութիւնը եւ ընդհանուր տեսութիւն այն նոր մանկավարժական շարժումների եւ ուղղութիւնների, որ տեղի են ունենում զարգացած երկիրներում.»

Բ ո ղ ա ն դ ա կ ու թ իւ ն 1892. գիրք Ա.

Յառաջաբան—Հրատարակիչ.

Յովհաննէս Ամոս Կամենիսոն եւ նորա մանկավարժութիւնը—Յ. Բարխուդարեանց.

Պարիզի միջնակարգ դպրոցները (Լ. Լ. Մարկովից)—Յ. Թ.

Ենայի ճեմարանական մանկավարժական սեմինարիոնը եւ նորա կազմակերպութիւնը—Յ. Բարխուդարեան:

Բարոյական փիլիսոփայութիւն—Ս. ք. Սահակ. Կովկասեան մանկավարժների արդի դերը իրանց տաճկահայասակ ազգայինների կրթական դործում—Յ. Տէր-Միրաքեանց.

Համառօտ ծրագիր Ներսիսեան հոգեւոր ուսումնարանի գիշերօթիկ սաների գայրոցական ճանապարհորդութեան—Իսահակ Յարութիւնեան.

Կամքի զարգացումն (հոգեբանական մանկավարժական խորհրդածութիւններ).

Լինհարգ եւ Գերդրուդ. գործ Հայնրիխ Պիտալօցցու—Ի. Յ.

Գրագիտութիւն Ռուսաստանի մէջ (վիճագրական տեղեկութիւններ):

Պրոլսայի ժողովրդական դպրոցների մասին. (վիճագրական տեղեկութիւններ):

Բուլղարիայի դպրոցները (վիճակագրական տեղեկութիւններ.)

Ընդհանուր տեսութիւն մանկավարժական աշխարհից—Մարթօնիկ.

Ընդհանուր մանկավարժութիւն—Տուխուան Յիլլեր. ներմուծումն ընդհանուր մանկա-

վարժապետան—Ի. Յ.

Մանկական խաղերի նշանակութիւնը, դաստիարակութեան համար.

Գրախօսութիւններ.

I. Արատիանեան Աւետիք—«Արեւելեան ազգերի հին պատմութիւնը»—Բար.

II. Prof. Dr. Lazaris Ideale. Frag.

III. Rembrandtals Erzeher.

Մանկավարժական տեղեկութիւններ.

Մի քանի խօսք—Յ. Բարխուդարեան:

Յայտարարութիւններ:



այոց մի շարք մանկավարժական հրատարակութիւնները յաջողութիւն չունենալով գաղարուեցին. ինչպէս յիշեցինք իւրեանց տեղերում: Վերջին թուականներում մի մանկավարժական կատարեալ հրատարակութեան պէտքն զգացուում էր մեր բազմաթիւ ուսուցիչներին կատարելապէս ծանօթացնելու մանկավարժական հիմքերի հետ: Կրթական ազնիւ գործին մի քարոզիչ, մի առաջնորդող ոյժ էր հարկաւոր, որ ընդհանուր հայ գրականութեան մէջ պակասում էր վերջերքս:

Ահա այդ ծանր գործը յանձն առաւ գերմանական բարձրագոյն ուսումնաւարտ երիտասարդ պ. Յովհաննէս Բարխուդարեանը: Սա իւր շրջանում ունենալով իւր պէս քանի մի մասնագէտ անձինք, 1892 թուականի սկզբից սկսեց հրատարակել «Մանկավարժական Գրադարան» անունով կիսամեայ հանդէսը, որ ցաւօք սրտի տակաւին մի գիրք է լոյս տեսել: Փոխանակ ոյժ տալու, օգնելու, խրախուսելու «Գրադարանին», որ

գուցէ եւ ամսադիր դառնար, հայ ընթերցողները, մեծ մասամբ հայ ուսուցիչները, այնքան ստորագրողներ չը տուին այդ օգտակար վեցամսեակին, որ ահա մէկ տարի էլ անց է կացել, բայց դեռ բ. գիրքը լոյս չէ տեսել:

Պատիւ չի բերել մեզ, եթէ «Մանկավարժական Գրադարանը» ստիպուած լինի դադարելու:

«Մանկավարժական Գրադարանի» նպատակն է «ըստ կարելոյն զարկ տալ մեր հայրենիքում կրթական գործին մատակարարող հայ ուսուցչին մանկավարժական բոլոր ճիւղերից նիւթեր, որ նա կարողանայ իւր ասպարէզի համար մանկավարժական տեսութիւն եւ հմտութիւն ձեռք բերել, եւ մանկավարժութեան զէնքով հասնել այն նպատակին, որին նա ձգտում է, քնքոյշ հոգով կրթութիւնը ամենաազնիւ եւ դժուարին գործըն է աշխարհիս երեսին: Առանց մանկավարժութեան սկզբունքների, գուցէ նա ոչ միայն չը հասնէր իւր նպատակին, այլ մինչեւ անգամ կը շեղուէր դէպի նպատակը տանող ճանապարհից եւ բոլորովին հետեւանքի չէր հասնիլ: Ուսուցիչն առանց մանկավարժութեան, նմանում է գինւորի, առանց դիսիպլինայի»

«Այդ դժուարին գործը ինձ վերայ առնելով-աւելացնում է յարգելի հրատարակիչը հրաւիրում եմ բոլոր բանիմաց հայ ուսուցիչներին ձեռք կառկառել հրատարակութեանս օգնելու. թէ ինքնուրոյն յօդուածներով թէ եւ երկասիրութիւնների թարգմանութիւններով . . . »

«Լիայոյս ենք որ հայ հասարակութիւնը, նա մանաւանդ ուսուցչական շրջանը, կ'աշխատէ ապահովել մեր միակ մանկավարժական ժողովածուն»:

ԺԸՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.) «Մանկավարժական Գրադարան»

եւ մեր աղբիւրները—

ա. «Ննդակալութեամբ ստացանք Յովհաննէս Բարխուդարեանցի խմբագրութեամբ այս տարի հրատարակուած «Մանկավարժական Գրադարան» գիրքը . . . պէտք է խոստովանել որ այդ մանկավարժական ժողովածուն լաւ է կազմած: Մեզ հայերի համար նշանակութիւն ունի այդ տեսակ մանկավարժական ժամանակակից հարցեր ամփոփող ժողովածուն, որը կարող է մեր մանկավարժներին ԶԱՇԱՐՈՒՄ պահել մանկավարժական ժամանակակից դրութեան եւ հայացքներին, մանաւանդ այժի առջիւ ունենալով որ այժմ մեր հայոց գրականութիւնը զուրկ է մանկավարժական որեւէ պարբերական հրատարակութիւններից, Յօդուածները լաւ մշակուած են. գրուածների ոճը եւ լեզուն լաւ են:»

«Մշակ» 1892. № 118.

բ. «Խմբագրութիւնս ստացել է մանկավարժ պ. Յովհաննէս Բարխուդարեանի հրատարակութեամբ լոյս տեսնող «Մանկավարժական Գրադարանի», առաջին գիրքը, որ հրատարակուած է Մոսքուայում: . . . Մեզ ոչինչ չէ մնում ասելու, եթէ ոչ կատարեալ յաջողութիւն ցանկալ պ. Բարխուդարեանի այդ համակրելի ձեռնարկութեան, որի կարեւորութիւնը վաղուց է վէր պատշաճում էր մեր մանկավարժական գրականութեան մէջ: Մընում է, որ մեր ուսուցիչներից նրանք, որոնք կարող են, աջակցութիւն ցոյց տան այդ ձեռնարկութեանը: . . .»

Առաջին գիրքը լաւ տպուորութիւն է թողնում:»

«Նոր-Իար» 1892. № 157.

2.) Տպագրուում է Մոսքուայում, բայց խմբագրութիւնը գտնում է Տիֆլիսում: Պէտք է դիմել մեր առաջ բերած հասցէով:

Հրատարակուում էր կիրակի օրերը. Հրատարակի՛չ՝ Ղեւոնդ քահան. Փափազեան . . .

Բաժանորդագիրն ը՛ տարեկան 12 Ֆրանք. (2.)



գրկատեսու՛մ պ. Անտոն Ռշտունի, երբ «Նեղոս» շաբաթաթերթի հրատարակութեան գործում անյաջողութիւնների հանդիպեց, գնաց Ռուսմանիա եւ Գալացում 1892-ին սկսեց հրատարակել «Արօր» ազգային եւ քաղաքական շաբաթաթերթը:

Բայց պէտք է հասկանալ որ պարոն Անտոն Ռշտունի եւ արժ. Ղեւոնդ ք. Փափազեան միեւնոյն անձնաւորութիւնն է. քահանայ ձեռնադրելով Անտոն անունը դարձաւ Ղեւոնդ, իսկ Ռշտունի ազգանունը Բնչ կերպով դարձաւ Փափազեան, այդ մեզ մութն է: Բայց դրական փաստ է այն, որ «Արօրի» խմբագիր տէր Ղեւոնդը, խմբագիրն էր «Նեղոս» շաբաթաթերթի. այդ վկայում է բացի շաբերից հանգուցեալ հայադէտ պրոֆ. Գ. Ա. Շուումֆի խօսքերը՝ թէ «Նեղոսը» դադարեց որովհետեւ խմբագիրը պէտք է գնար Գալաց «Արօրն» հրատարակելու . . .»

170.

Ա Ր Օ Ր ^{1.)}

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂՂՈՅԻՆ ՆԻ ԶԱՂՈՂՈՒՄ

Գ ա լ ա ց (Ռուսմանիա) 1892-1894՝

Ժ Ա Ն Օ Թ Ա Ր Ի Ի Ն Ն Ե Ր.

1.) «Արօր» եւ մեր աղբիւրները—

ա. . . .ի Կալաց (Ռուսմանիա) Արօր շաբաթաթերթ. ազգային եւ քաղաքական, հայերէն ուսմաներէն. Հրատարակիչ Ղե-

ւոնդ քահանայ Փափաղեան, սկսուեց 1892. թ. “

„Օրացոյց“ 1892 Ռոստով. էջ 96.

2.) „Աբորի“ խմբագրուում էր կէս հայկէս ոււմաներէն լեզուներով: Բաժանորդագիրն էր՝ աւանձին 12 Փրանք. միասին 20 Փրանք:

3.) Տես „Մուրճ“ 1892 № 7-8. (Ֆելեքս.) Ռուսիներէ մեր ուղարկած մի պատուիրած նամակը. որով տեղեկութիւններ էինք խընդրել „Աբորի“ մասին, մընաց անպատասխան, դորա համար չը կարողացանք աւելի մանրամասն խօսել:

131.

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՑԱԲԱԹԱԹԵՐԹ ^{1.)}

ՀԱՅ. ՏԱՎ. ԳՐԱԳ. ԵՒ ՅԱՆՆԵՐԻՆ

Լ Ե Ջ Ո Ւ Ն Ե Ր Ո Վ

Կոստանդնուպոլ. (Տաճ.) 1892-1894-եւս Հրատարակուում է կիրակի օրերը. Հրատ.-Արտոնատէր Ս. Պէկեան. Խմբագիր՝ Յ. Եազըճեան: Տպարան Մինասեան եղբարց. 2.).. Բաժանորդագիրն էր՝ տարեկան 27 դր2. Հասցէն՝ Տպարան Մինասեան. Ս. Պէկեանին:

Կոստանդնուպոլիս:

Կամ Tipograf. Minasian. S. Pekian. Constantinople.

Ծրագիրը՝ 3.)

Ցախարարութիւններ ամեն տեսակ. չորս լեզուներով:

Առեւտրական մանր լուրեր: . . .

Կոստանդնուպոլսում 1892 թուականից սկսեց լոյս տեսնել «Ծանուցմանց Շարաթաթերթ» անունով չորս լեզուեան շարա-

թական հրատարակութիւնը, որը պարունակում էր իւր մէջ մայրաքաղաքի մի շարաթուայ յայտարարութիւնները. հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, յունարէն լեզուներով:

«Ծանուցմանց Շարաթաթերթը» շարունակուում է այժմ:

Ծ Ա Ն Օ Ք Ա Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

1.) «Ծանուցմանց Շարաթաթերթ» եւ մեր աղբիւրները:

ա. „Ծանուցմանց Շարաթաթերթ. հայ. տաճկ. գաղղ. եւ յունարէն. Կ. Պոլ. տպ. Գ. Պաղտ. հրատ. Սրապիոն Պէկեան. րժնգ. 25 դր. “

„Հանդէս Ամսօրեայ“ 1893 էջ 302.

բ. „Շարաթաթերթ Ծանուցմանց“ Առեւտրական եւ արհեստական. չորս լեզուա... արտոնատէր Ս. Պէկեան, խմբագիր Յ. Եազըճեան, տարեկան. րժժ. 27 դր2. օտար երկրաց 40. տպ. Մինասեան եղբարց. „Գրացուցակ“ 1893 թիւ. 88. էջ 8

2.) Նախ „տպագր.“ Գ. Պաղտատլեան:

3.) „Ծանուցմանց Շարաթաթերթի“ մէջ երբեմնապէս տպագրուում են „առեւտրական եւ արհեստական“ մանր լուրեր: Որեւէ համարի բովանդակութիւնը աւելորդ համարեցինք առաջ բերել:

172.

ԳՐԱՑՈՒՑԱԿ ^{2.)}

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

(Ամսատետր.)

Կոստանդնուպոլ. (Տաճ.) 1893-1894-եւս

Հրատարակուում է ամսի սկիզբներին:

Հրատարակութիւն Վ. Գ. Զարդարեան Գրատան.

Կազմեց Վահան Գ. Զարդարեան,

Տպագր. Ս. Տամատեան.

Գիրքը՝ (տետր). քառածալ 8 էջ 13X19
Հ.-մետր.

Թուղթը եւ տիպը մաքուր.

Զրի. 2.)

Հասցէն Վ. Գ. Զարդարեան. գրավաճառ-թղ-
թավաճառ. Կոստանդնուպոլիս.

Սուլթան-Համամ փողոց, թիւ 12.

կամ՝ V. K. Zardarian Papeterie-

Librairie. Constantinople.

Rue Sultan- Hamam. № 12.

Ծրագիրը՝ 3.)

«...եւ կը պարունակէ նախորդ ամսոյս բո-
լոր հայերէն հրատարակութեանց ցանկն,
լրագրաց գլխաւոր յօդուածոց շարունակու-
թիւնն եւ այլն:»



«...տանդնուպոլսում գը-
րավաճառ եւ թղթ-
թավաճառ պ. Վա-
հան Գ. Զարդար-
եան 1893 թուա-
կանից, իւր «գրա-
տան» հրատարա-
կութեամբ լոյս է
ընծայում «Գրացուցակ» անունով մի ամ-
սատետր, որ պարունակում է հայերէն
«Նոր հրատարակութեանց ցանկը»: «Կը
խնդրուի հրատարակիչներէ եւ հեղինակ-
ներէ—գրում է իւր տետրի վերջում պ.
Զարդարեան—որ իրենց նոր հրատարակած
երկերէն մէկ մէկ հատ ուղարկեն որպէս
զի յիշատակուի նոյն ամսոյ ցանկին մէջ»: Պ.
հրատարակիչը եւ կազմողը եթէ ուզում
է իւր գործը աւելի պիտանի գարձնէ քան
է, պէտք է լիակատար տեղեկութիւններ
ունենայ հայ ընդհանուր «Նոր հրատարակու-
թանց» մասին:

ԻՆՏԻՄԻՒՆՆԵՐ.

- 1.) «Գրացուցակ» եւ աղբիւրներ—
ա. «...Այժմ Պոլսոյ մէջ կը հրատարակուի
մի պարբերական ամսաթերթ «Գրացու-
ցակ» անուամբ որ կը պարունակէ նոյն
ամսոյ բոլոր հայերէն հրատարակու-
թեանց ցանկն լրագրաց անունք եւ այլն:
Սոյն ցանկն ամեն գրավաճառաց կ'ու-
ղարկուի ձրի. ձեզ եւս կուղարկեմ կանո-
նաւորապէս ամեն ամիս...»
(Նամակ) ձեռագիր. Վ. Գ. Զարդար.
- 2.) «Սոյն ցանկն կ'ուղարկուի բոլոր գրա-
վաճառաց, հրատարակչաց, հեղինակաց
եւ վարժարանաց, ձրի: Այն վարժարանք
կամ հրատարակիչք, որք չեն ստանար
սոյն ցանկն հաճին իմացնել մեզ իրենց
հասցէն... Անհատաց համար հատը 10
փարա. փոստի ծախքով 20 փարա»:
- 3.) Մի որեւէ համարի բովանդակութիւնը
աւելորդ համարեցինք առաջ բերել:

Մեր տեսութեան մէջ այս տասնա-
մեակը վերջանում է «Գրացուցակ»ով: Առա-
ջիկայ 1894 թուականից սկսուող լրագիրնե-
րը կը մնան ապագայում հրատարակելիք
բաժնի մէջ սոյն գրուածի բ. հատորում:
Ուրեմն 100 տարուայ ընթացքում ունեցել
ենք ընդամենը 172 պարբերական հրատա-
րակութիւն: Ներկայիս ընթերցանութեան
ծաւալումը կարծել է տալիս որ հարիւր
տարի յետոյ՝ 1994 թուականին, հայ լրա-
գրութեան թիւը կը կրկնապատկուի: Բայց
ապագայի հաւաքադրողը այնքան դժուա-
րութիւնների չի հանգիպիլ, քան մենք հան-
դիպեցինք:

Հարեւանցի կերպով յիշենք այն լրա-
գիրները, որոնք թէեւ հրատարակուել են
հայ խմբագիրների ձեռքով, հայ ազգային
կեանքով են պարապել, տպագրուել են

Հայերէն նշանագրերով, բայց խմբագրուել են տաճկերէն լեզուով որ Հայ գրականութիւնից գուրս են:

Այդպիսի թերթեր մենք ունեցել ենք 17-ը:

1. Ճերիտեի Հաւատիս.

1840—18 °

Կ. Պոլիս. խմբագիր՝ Խաչատուր Ոսկանեան:

2. Մեծմուսը Հաւատիս.

1852—18 °

Կ. Պոլիս. խմբագիր՝ Յ. Վարդանեան:

3. Ախապիր Գօսրանքիւնի.

1855—18 °

Կ. Պոլիս. խմբագիր՝ Ռ. Քիւրքճեան:

4. Զօհայ.

1855—1857.

Կ. Պոլիս. խմբագիր՝ Յովհ. Տէրոյեանց:

5. Միւնատիի Էրճիսս.

1859—1864.

Կ. Պոլիս. խմբագիր՝ Կարապետ Փանոսեան:

6. Թերճմանը Հագիգար.

186°—18°

Կ. Պոլիս. խմբագիր՝

7. Մանգոււմեի Էֆքեար

1866—1894-ԵՆ

Կ. Պոլիս խմբագիր՝ Կարապ. Փանոսեան.

8. Ծոար.

1867—18 °

Հալէպ. խմբագիր՝

9. Էվրազը Շարգըյի

1867—18°

Կարին. խմբագիր՝

10. Վարազայի Հաւատիս

1868—186°

Կ. Պոլիս խմբագիր՝ Կար. Փանոսեան:

11. Թոչնիկ

1868—186°

Կ. Պոլիս. խմբագիր՝ Իփէքեան.

12. Խիւտավեկտիկեար

1869—187

Բրուսա. խմբագիր՝

13. Սեռալը Հագրգար

1870—187

Կ. Պոլիս խմբագիր՝

14. Թերձմանը Էֆրեսար.

1878—1884

Կ. Պոլիս. խմբագ. Տիգր. Նիւֆէլէկեան.

15. Ճերիտեի Շարգիյի

1885—1894-եւս

Կ. Պոլիս. խմբագիր՝ Տիգրան Նիւֆէլէկեան

16. Մեճմուսը Ախարար

1885—1894-եւս

Կ. Պոլիս. խմբագիր՝ Յովսէփ Թոլայեան.

17. Ֆելիկ.

1885—1887

Կ. Պոլիս. խմբագիր՝ Յովհաննէս Պալզեան.

Ուղիղ պատմութեան մէջ Հրատարակուած լրագիրների հետ չը շփոթելու համար,

այնպիսիները որոնց միայն յայտարարութիւններն են լոյս տեսել, բայց իւրեանք տակաւին ոչ, յիշում ենք դորանց անունները՝ «Լապտեր Հայկազեան», «Ոճ Արեւելեան», «Ամիս», «Էջմիածին», «Թանգարան Հայկազեան», «Յոյս», «Նաւակ», «Արագած», «Ազդարար», «Աստղ Արեւելեան», «Ճշմարտութիւն», «Դպրեմանք», «Բալամաղալ», «Հրեշտակն Հայոց», «Փիւնիկ», «Լուսնայ. «Ծաղկաձոր», «Հայկական Թութակ», «Շաւիղ» . . .

Եղել են եւ մի այլ տեսակ պարբերական Հրատարակութիւններ, բայց անկանոն ժամանակներում Հրատարակուելով, լրագիրների կարգը չեն անցել. այդպիսիներից կարելի է հաշուել Բագուում արժ. Գրիգոր քահանայ Գրիգորեանցի Հրատարակած «Սոխակ» երգարանները, հանգուցեալ Գարբեայ. Այվազովսքու Հրատարակած «Լսարան» տետրակները, Էմին Տէր Գրիգորեանի «Հայկական Թատրոնները». Տփիսում Հրատարակուող «Ժողովրդական Գրադարան» վերնագրով գրքովները Կ. Պոլիս եւ Տփիսի գրավաճառանոցների հայերէն գրքերի ցուցակները եւ այլն:»

Պարբերական Հրատարակութիւններ են նաեւ ամեն տարի Ս. Էջմիածնում, Տփիսում, Կ. Պոլսում, Վենետիկում, Ռոստովում եւ այլն լոյս տեսնող օրացոյցները:

Կան եւ մի այլ տեսակ լրագիրներ որոնք թէեւ Հրատարակուում են հայ խրմբագիրների ձեռքով, հայ ազգութեան վերաբերեալ, բայց օտար լեզուներով. օրինակ հունդարերէն «Արմենիա» թերթը Հունգարիայում. անգլիերէն «L' Armenie» թերթը Լոնդոնում պ. Մինաս Չիրազի խմբագրութեամբ: Հնդկաստանում «Ara» (Արա) թերթը գարձեալ անգլիերէն լիզուով պ. Յ. Մելիք-Բեգլարեանցի խմբագրութեամբ. Բուլղարիայի Վառնայ քաղաքում «Huis» շաբաթաթերթը՝ 1883-ից որը Հրատարակուում էր հայերէն բառերով, լատինական տառերով, որպէս՝ «Organ Evropai hai gahtakanuthiantz»:

Լ ր ա ց ու մ ն .

Հագիւ է պատահում, որ մի մեծ աշխատութիւն իւր վերջում կցուած չունենայ որպէս լրացում մի քանի երեսներ, որոնք «յաւելուած», «ուղղելիք», «վերջաբան» եւ այլ խորագրերի տակ ցոյց են տալիս այն պակասութիւնները, վրիպումները, որոնք կամ մինչեւ գրքի տպագրութեան վերջում են յայտնի եղել կազմողին, կամ անզգուշութիւնից են առաջացել: Մինչեւ մեր գրքի լոյս տեսնելը մեզ հասնող տեղեկութիւններից օգտուելով եւ անտես չանելով նաեւ մինչեւ օրըս պատահած փոփոխութիւնները, որպէս լրացում մեր սոյն գործի, առաջ ենք բերում հետեւեալը:

Էջ 13. լրագիր 4. Յիշատակարանը մի տարի գոյութիւն ունեցաւ:

” 20. ” 6. Հայելի Կալկաթեան. հրատարակուած է 1820-ից:

” 25. ” 7. Շտեմարան սկսուեց 1821-ին խմբագրութեամբ Երազեցի տիրացու Մարտիրոս Մկրտչեանի: Ի տպարանի «Օճանասփռեան ժողովոյն» լրնծաեալ ի պ. Պօղոսէ Յորդանեանց: Դիրքը ութածալ. (տես «Հանդ. Ամս» 1894 էջ 364)

” 42. ” 11. Արշալոյս Արարատեան. Մեզ հասած վերջին տեղեկութիւններին նայելով, ճշտուում պ. Երիցեանի խօսքը՝ թէ Պալտազարեանի որդին յաջորդեց իւր հօրը որպէս արտօնատէր: Իսկ խմբագրութեան պաշտօնները վարել են պ. Սաւալանեան եւ Սուաճեան:

” 90. ” 21. Մասիս լրագրին աշխատակցել են Թիւրքիայի հայ գրագէտներից նաեւ՝ Նիկողայոս Զօրոյեան, Խաչատուր Միսաքեան, Պօղոս Պարնասեան, Տիգրան Իւսուֆեան, Ա. Միհրդատեան, Եղիա Տէմիրճիպաշեան, վերջերքս Տիգրան Կոմսարական: «Մասիս» նորերումս դարձեալ փոփոխութիւնների ենթարկուեց: 1892-ից երեքշաբաթաթերթ: 93-ից շաբաթաթերթ եւ վերջը երկշաբաթաթերթ. 1894-ից «Մասիս» հանդէս նախնական եւ երկրորդական կրթութեան— Վերաանասութեամբ ուսումնական եւ կենտրոնական վարչութեան:

” 127. ” 32. Նոյեան Աղաւնի. խմբագիրների հեռանալուց յետոյ թերթի տակ օտորագրուում էր «Արապեանց տպարան» որպէս տեւեց մինչեւ 1874 թ: Կարծուում է թէ այս շրջանում խմբագրողը եղել է հանգուցեալ գիտնական Նիկ. Մ. Զօրայեան:

” 137. ” 35. Թուրթակ Հայկազեան. իսկապէս տպագրուում էր «Աշխատասիրութեամբ երից աշակերտաց Մեսրոպեան Վարժարանի»:

” 139. ” 36. Արծուի Վասպուրական. Կոստանդնուպօլսում. «Ի տպարանի երից եղբարց Արապեան» 1864-ի դադարումից երկար ժամանակ յետոյ 1873 թուականի յունուարի 12-ից «Արծուի» սկսում է ութներորդ շրջանը, որպէս շաբաթաթերթ «Կոստանդնուպօլսում»: Մինչեւ երբ է շարունակուել այդ, մեզ յայտնի չէ. բայց նոյն թուականի մարտի 10-ի թիւ 9 տեսնուած է:

” 158 ” 39. Արեւելք Փարիզ— հանդէս կրթութեան տեւեց մինչեւ 1856 թ. փետրուարի 1-ը:

” 165. ” 42. Մուսայք Մասեաց Կոստանդնուպօլսում. Հեղինակ եւ Տնօրէն Ա. Հ. Ճիզմէճեան, նոյն է Արմենակ Հայկունի:

” 205. ” 49 Արեւմուտք Արշագանի Եւրոպայի յոստատրութեան: 1864-ին Բ. տարին սկսուել է փետրուարին, եւ կանդ է առել յունիսի 1-ին: 10-դ համարը 1865

Թուականի յունիսի 1-ին լոյս տեսաւ եւ 12-դ Համարով դադարուեց:

Էջ 222. Լրագիր 52. Փ ա Ր ի զ. լրագիր շաբաթական „ի տպարանի ձ. Արամեանի Նիկոմիդացոյ“. գեղեցիկ տպագրութեամբ, նախ կէս թերթ, յետոյ միածալ 30 X 50 Հ.-մետր. 1860 յուլիսի 6-ից կիսամետայ դառնալով շարունակուեց մինչեւ 1863 թ. սեպ. 4. թիւ 98. Շատ կարեւոր տեղեկութիւններ կան սորա մէջ տպագրուած:

„ 222. „ 53. Ս է Ր. նախ քառածալ 8 էջ. տպարան վերջում սեփական՝ 1860 թ. սեպտ. 8-ից: Բ. տարուանից ութնօրեայ Հանդիսի փոխուեց, դիրքը նոյնը թողնելով: Գ. տարին 1863-ի յունուարից տպագրուում էր „Սէր“ հոբելի ժողովրդէն որպէս երեքօրեայ: Իսկ Գ. տարին 1864-ի փետր. „Սէր“ հասօրեայ հանդէս եղաւ՝ տնօրէնութեամբ Պօղոս Պարնասեանցի եւ կարծօք մինչեւ տարուայ վերջը տեւեց:

„ 225. „ 54. Ա Ր Ե Լ Ե Լ Ե ան Դ ա Ր. Կիսամետայ, 1860-ի յուլիսի 15-ից: 1868-ի յունուարից հասօրեայ օրագիր. 1862 յունուարի 12-ից, օրագիր այլաբանական:

„ 227. „ 55. Մ ի ու թ ի ւ ն. առաջին տարին կիսամետայ. Բ. տարին յունուարից-օգոստոս դադարուած էր. սեպտ. վերսկսուեց եւ 1862-ի վերջերին իսպառ դադարուեց:

„ 235. „ 59. Թ ո չ ն ի կ օրագիր հասօրեայ խմբագիր տնօրէն Գրիգոր Պալիեան որ յետոյ քահանայ լինելով անուանած է Տէր Վրթանէս Օրթագիւղի եկեղեցին ի Կոստանդնուպոլիս:

„ 237. „ 61. Կ ի թ ա ու. 1862 օգոստ. 1-ից: Մինչեւ 1863 թուականը Հրատարակուելու ապացոյց չունինք:

„ 239. „ 62. Ծ ա ղ ի կ. 1864 թ. նոյեմբ. կիսամետայ դառնալով շարունակուեց մինչեւ 1867 թուականը:

„ 250. „ 68. Մ ու ս ա յ ք Մ ա ս ե ա յ ի վերայ 1863-ի սկզբից աւելացաւ „Ձայն ընկերային“ որպէս բ. տարի եւ տեւեց 1865 թ. նոյեմբ. 28 թիւ 32 տետրակով:

„ 251. „ 69. Վ ա Ր զ. Հանդէս Մտորդիտն ամսօրեայ. քառածալ թերթ սկըսուած է 1861 թուակ. յունիսին. Բ. շրջան 1862-ի յուլիսին, կիսամետայ դառնալով: Յետոյ միացած է թերթ մինչեւ սեպտ. 1. թիւ 5, և դադարած է:

„ 253. „ 71. Ձ ա յ ն Ը ն կ ե Ր ա ս ի Ր ա կ ան տես թիւ 68 լրագրի լրացումը.

„ 254. „ 72. Զ ե փ ի Լ ու Հ ա յ Ր Ե Ն Ե ա յ: Խմբագիր Մինաս Հայկ Գափամաճեան. սկսուել է 1862-ի օգոստ. 15-ին եւ 6 ամիս կիսամետայ մնալով 1863-ի փետր. 15-ից փոխուում է շաբաթաթերթի: Այդպէս մնում է մինչեւ նոյեմբ. 13ը թիւ 30: 1864 յուլիսի 15-ից 31 Համարից փոխուում է տասնօրեայ. սակայն օգոստոսի 5-ին թիւ 33-ից յետոյ այլ եւս չէ երեւում որ էր «Զեփիւռի» բ. տարուայ գ. շրջանը: Երեւի 1865-ին կամ 66-ին որպէս Գ. տարի մի երկու Համար Հրատարակուել է որովհետեւ 1867 թուականի Համար 1—2-ի վերայ գրուած է Գ. տարի. սկսուած մայիսի 10-ից որպէս տասնօրեայ. տեւողութիւնը յայտնի չէ:

„ 257. „ 74. Վ ա Ր զ Կ Ե ս ա Ր ի ո յ. (Կիւղարը Գայսարիէ) օրագիր երկշաբաթեայ. Հայ-տաճկերէն լեզուներով: Խմբագիր Տնօրէն Տ. Մարտիրոս ք. Նիկողոսեան Կեսարացի: 1863-ի մարտի 1-ից միեւնոյն տարուայ յունիսի 15-ը:

„ 258. „ 75. Ժ ա մ ա ն ա կ. դադարուած է 1868-ին. ուղիղ է Հ. Գ. Զարբանայեան:

„ 270. „ 78. Ե Ր Կ Ր ա գ ու ն տ. Ա. Համարը լոյս տեսաւ 1863 թ. յուլիսի 18 (30)-ին: Բ. Համարը 1864 թ. մարտի 2 (14)-ին: Նախ շաբաթաթերթ. քառածալ 8 էջ: Շարունակուեց մինչեւ 1864 սեպտ. 22 (հոկտ. 4). 30 Համար:

Էջ 275. Լրագիր 80. Արժուիկ Տարոնոյ թուուցեալ թեւոք , Վասպուրական Արժուոյն՝ ի Մամիկոնեան աշխարհէն յԻնականեան Լերանց ի Մշոյ Ս. Կարապետի Հրաշալի ուխտէն: Կիսամսեայ. 1863 թ. ապրիլի 1-ից մինչեւ 1864 թ. օգոստ. 15: Թիւ 1—24 ՚ի տպ. Վ. Արժուոյն ՚ի Տարոն Ս. Կարապետի Հայոց վանքը:

,, 277. ,, 81. Լ ու ս ա փ ա յ լ . , , փիլիսոփայական, բարոյական եւ վիպասանական. Ա. Համարը լոյս տեսաւ 1864, Հոկտ 17-ին:

,, 289. ,, 85. Ծ ի ա ծ ա ն. շաբաթաթերթ: Խմբագիրը Կարապետ վարժապետ Զուխաճեանն է եւ ոչ Տիգրան Զուխաճեան երեւելի գաշնակահարը: 1866 Հոկ. 1-ին թիւ Ա. լոյս տեսաւ եւ կանգ առաւ: Բ. տարին 1869 յունուարի 15-ին սկսուեց Բ. Համարով Հայ-տաճիկ լեզուներով. տպարանատէր Յ. Միւհենտիսեանի գործակցութեամբ: 1869 թ. սեպտ. 27-ից դարձեալ Բ. տարի թիւ 1 ասելով սկսում է հրատարակուել Ա. Աւետիս Սուրենեանցի ձեռքով մինչեւ դեկտեմբեր: Հետեւեալ 1870-71-ին փոքր դիրքով մերթ հայերէն, մերթ տաճիկերէն էր հրատարակուում զանազան խմբագրների միջոցով:

,, 309. 96. Յ ո յ ս ի հրատարակութեան սկիզբը Հիմնուելով մեր մի երկու արժանա հաւատ աղբիւրների. գրել ենք 1870-ին, բայց մեր ստացած վերջին տեղեկութեանց վերայ Հիմնուելով գրում ենք 1864-ին: Ուրեմն ճիշտ է պ. Գափամաճեան:

,, 325 ,, 104. Արեւելեան Մամուլ. այժմ կիսամսեայ.

,, 425 ,, 130. Աղբիւր. այժմ դարձեալ Տ. Նազարեան որպէս խմբագիր-հրատարակիչ:

,, 438 ,, 134. Ն ո Ր-Պ ա Ր. 1894 թ. յունուարի 30-ին Տիլիսում շքեղ Հանդիսով կատարուեց խմբագրապետ պ. Սպանդար Սպանդարեանի գրական գործունէութեան 20 -ամեայ եւ թերթի գոյութեան 10-ն ամեայ յօրելեանը: Հանդիսի Համառօտ նկարագիրը՝ տես «Նոր-Պարի տօնը» կազմեց Ս. Գաբրիէլեան. 1894 թ. Ս. Պետերբուրգ: Յետոյ տպարան Ա. Ի. Պետրովի. այժմ գարձեալ Շահնազարեանի:

,, 504 ,, 152. Հ ա ն գ է ս ը նորից սկսել է հրատարակուել: 5-դ դիրքը լոյս տեսաւ 1894 թ. օգոստոսին: Հասցէն՝ Москва, Мясницкая д. Ермаковыхъ Мертвчу Бархударьявъ.

,, 529 ,, 161. Տ ա Ր ա գ. տես՝ լրագիր թիւ 130-ի լրացումը:

,, 545 ,, 167. Հ ա յ ք. վերջերքս աւելի լաւ ծանօթացանք , ,Հայքի՝ ուղու-թեան եւ նպատակի հետ: Պ. Գաբրիէլեան իւր Հիմնական սկզբունքի հետ պահպանողական է: «Հայքի» մուտքը Ռուսաստանում ազատ է:

,, 547 ,, 169 ,, Մ ա ն կ ա վ ա Ր ժ ա կ ա ն Գ Ր ա դ ա Ր ա ն. սպասում ենք Բ. գրքին:



Թուականի յունիսի 1-ին լոյս տեսաւ եւ 12-դ համարով դադարուեց:

Էջ 222. Լրագիր 52. Փ ա ռ ի զ. լրագիր շաբաթական „ի տպարանի ձ. Արամեանի Նիկոմիդացւոյ“. դեղեցիկ տպագրութեամբ, նախ կէս թերթ, յետոյ միաձալ 30X50 հ.-մետր. 1860 յուլիսի 6-ից կիսամետայ դառնալով շարունակուեց մինչեւ 1863 թ. սեպ. 4. Թիւ 98. Շատ կարեւոր տեղեկութիւններ կան սորա մէջ տպագրուած:

„ 222. „ 53. Ս է Ր. նախ քառաձալ 8 էջ. տպարան վերջում սեփական՝ 1860 թ. սեպտ. 8-ից: Բ. տարուանից ութնօրեայ հանդիսի փոխուեց, դիրքը նոյնը թողնելով: Գ. տարին 1863-ի յունուարից տպագրուում էր „Սէր“ հոբելիտ ժողովրդեան որպէս երեքօրեայ: Իսկ Գ. տարին 1864-ի փետր. „Սէր“ հասնօրեայ հանդէս եղաւ՝ տնօրէնութեամբ Պօղոս Պարնասեանցի եւ կարծօք մինչեւ տարուայ վերջը տեւեց:

„ 225. „ 54. Ա Ր Ե Լ Ե Լ Ե ան Գ ա Ր. Կիսամետայ, 1860-ի յուլիսի 15-ից: 1868-ի յունուարից հասնօրեայ օրագիր. 1862 յունուարի 12-ից, օրագիր այլաբանական:

„ 227. „ 55. Մ ի ու թ ի ւ ն. առաջին տարին կիսամետայ. Բ. տարին յունուարից-օգոստոս դադարուած էր. սեպտ. վերսկսուեց եւ 1862-ի վերջերին իսպառ դադարուեց:

„ 235. „ 59. Թ ո չ ն ի կ օրագիր հասնօրեայ խմբագիր տնօրէն Գրիգոր Պալիեան որ յետոյ քահանայ լինելով անուանած է Տէր Վրթանէս Օրթագիւղի եկեղեցին ի Կոստանդնուպոլիս:

„ 237. „ 61. Կ ի թ ա ու. 1862 օգոստ. 1-ից: Մինչեւ 1863 թուականը հրատարակուելու ապացոյց չունինք:

„ 239. „ 62. Ծ ա ղ ի կ. 1864 թ. նոյեմբ. կիսամետայ դառնալով շարունակուեց մինչեւ 1867 թուականը:

„ 250. „ 68. Մ ու ս ա յ ք Մ ա ս ե տ ց ի վերայ 1863-ի սկզբից աւելացաւ „Ձայն ընկերային“ որպէս բ. տարի եւ տեւեց 1865 թ. նոյեբ. 28 թիւ 32 տետրակով:

„ 251 „ 69. Վ ա Ր զ. Հանդէս Մեթոլեան ամսօրեայ. քառաձալ թերթ սկսուած է 1861 թուակ. յունիսին. Բ. շրջան 1862-ի յուլիսին, կիսամետայ դառնալով: Յետոյ միացած 1 թերթ մինչեւ սեպտ. 1. թիւ 5, և դադարած է:

„ 253 „ 71. Ձ ա յ ն Ը ն կ ե Ր ա ս ի Ր ա կ ա ն տես թիւ 68 լրագրի լրացումը.

„ 254 „ 72. Ձ ե փ ի ւ ու Հ ա յ Ր Ե ն ե ա ց: Խմբագիր Մինաս Հայկ Գափամաճեան. սկսուել է 1862-ի օգոստ. 15-ին եւ 6 ամիս կիսամետայ մնալով 1863-ի փետր. 15-ից փոխուում է շաբաթաթերթի: Այդպէս մնում է մինչեւ նոյեմբ. 13ը թիւ 30: 1864 յուլիսի 15-ից 31 համարից փոխուում է տասնօրեայ. սակայն օգոստոսի 5-ին թիւ 33-ից յետոյ այլ եւս չէ երեւում որ էր «Ձեփիւռի» բ. տարուայ գ. շրջանը: Երեւի 1865-ին կամ 66-ին որպէս Գ. տարի մի երկու համար հրատարակուել է որովհետեւ 1867 թուականի համար 1—2-ի վերայ գրուած է Գ. տարի. սկսուած մայիսի 10-ից որպէս տասնօրեայ. տեւողութիւնը յայտնի չէ:

„ 257. „ 74. Վ ա Ր զ Կ ե ս ա Ր ի ո յ. (Կիւլղարը Գայսարիէ) օրագիր երկշաբաթեայ. հայ-տաճկերէն լեզուներով: Խմբագիր Տնօրէն Տ. Մարտիրոս ք. Նիկողոսեան Կեսարացի: 1863-ի մարտի 1-ից միեւնոյն տարուայ յունիսի 15-ը:

„ 258. „ 75. Ժ ա մ ա ն ա կ. դադարուած է 1868-ին. ուղիղ է հ. Գ. Ջարբանալեան:

„ 270. „ 78. Ե Ր Կ Ր ա գ ու ն տ. Ա. համարը լոյս տեսաւ 1863 թ. յուլիսի 18 (30)-ին: Բ. համարը 1864 թ. մարտի 2 (14)-ին: Նախ շաբաթաթերթ. քառաձալ 8 էջ: Շարունակուեց մինչեւ 1864 սեպտ. 22 (հոկտ. 4). 30 համար:

Եջ 275. Լրագիր 80. Արժուիկ Տարոնոյ թուղցեալ թեւոք ,,Վասպուրական Արժուոյն“ ի Մամիկոնեան աշխարհէն յինականեան Լերանց ի Մշոյ Ս. Կարապետի Հրաշալի ուխտէն: Կիսամսեայ. 1863 թ. ապրիլի 1-ից մինչեւ 1864 թ. օգոստ. 15: Թիւ 1—24 ՚ի տպ. Վ. Արժուոյն ՚ի Տարոն Ս. Կարապետի Հայոց վանքը:

,, 277. ,, 81. Լ ու ս ա փ ա յ լ . . , , փիլիսոփայական, բարոյական եւ վիպասական. Ա. Համարը լոյս տեսաւ 1864, Հոկտ 17-ին:

,, 289. ,, 85. Ծ ի ա ծ ա ն. շաբաթաթերթ: Խմբագիրը Կարապետ վարժապետ Չուխաճեանն է եւ ոչ Տիգրան Չուխաճեան երեւելի դաշնակահարը: 1866 Հոկ. 1-ին թիւ Ա. լոյս տեսաւ եւ կանգ առաւ: Բ. տարին 1869 յունուարի 15-ին սկսուեց Բ. Համարով Հայ-տաճիկ լեզուներով. տպարանատէր Յ. Միւհենտիսեանի գործակցութեամբ: 1869 թ. սեպտ. 27-ից դարձեալ Բ. տարի թիւ 1 ասելով սկսում է Հրատարակուել Ա. Աւետիս Սուրենեանցի ձեռքով մինչեւ դեկտեմբեր: Հետեւեալ 1870-71-ին փոքր գիրքով մերթ հայերէն, մերթ տաճիկերէն էր Հրատարակուում զանազան խմբագրների միջոցով:

,, 309. 96. Յ ո յ ս ի Հրատարակութեան սկիզբը Հիմնուելով մեր մի երկու արժանա Հաւատ աղբիւրների, գրել ենք 1870-ին, բայց մեր ստացած վերջին տեղեկութեանց վերայ Հիմնուելով գրում ենք 1864-ին: Ուրեմն ճիշտ է պ. Գափամաճեան:

,, 325 ,, 104. Արեւելեան Մամուլ. այժմ կիսամսեայ.

,, 425 ,, 130. Աղբիւր. այժմ դարձեալ Տ. Նազարեան որպէս խմբագիր-Հրատարակիչ:

,, 438 ,, 134. Նոր-Պար. 1894 թ. յունուարի 30-ին Տփիսիսում շքեղ Հանդիսով կատարուեց խմբագրապետ պ. Սպանդար Սպանդարեանի գրական գործունէութեան 20-ամեայ եւ թերթի գոյութեան 10-ն ամեայ յօբելեանը: Հանդիսի Համառօտ նկարագիրը տես «Նոր-Պարի տօնը» կազմեց Ս. Գաբրիէլեան. 1894 թ. Ս. Պետերբուրգ: Յետոյ տպարան Ա. Ի. Պետրովի. այժմ դարձեալ Շահնազարեանի:

,, 504 ,, 152. Հանդէսը նորից սկսել է Հրատարակուել: 5-դ գիրքը լոյս տեսաւ 1894 թ. օգոստոսին: Հասցէն՝ Москва, Мясницкая д. Ермаковыхъ Мертвчу Бархударьявѣ.

,, 529 ,, 161. Տարագ. տես՝ լրագիր թիւ 130-ի լրացումը:

,, 545 ,, 167. Հայք. վերջերքս աւելի լաւ ծանօթացանք ,,Հայքի“ ուղղութեան եւ նպատակի հետ: Պ. Գաբրիէլեան իւր Հիմնական սկզբունքի հետ պահպանողական է: «Հայքի» մուտքը Ռուսաստանում ազատ է:

,, 547 ,, 169 ,, Մանկավարժական Գրագարան. սպասում ենք Բ. գրքին:



Սոյն դրուածն արդէն յանձնել էինք գրաքննչական կոմիտէին, երբ 1893 թ. դեկտեմբերին լոյս տեսաւ մի նոր հայ պատկերազարդ-հրատարակութիւն—

173.

Թ Ա Տ Ր Ո Ն

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Հ Ա Ն Գ Ե Ս

(Կիսամեայ)

Տփիսիս (Ռուսաստ.) 1893-1894-եւս.

Հրատարակողու է՝ յունիսին եւ գեղատեմբերին:

Հրատարակիչ՝ Աղէքսանդր Թարխանեան.

Տպարան՝ Մ. Մարտիրոսեանի եւ Ընկ.

Դիրքը՝ (գիրք) մեծագիր ութածայ 6 թերթ տպագր. 180 էջ երկսիւն 21×29 հ.մետր.

Թուղթը եւ տիպը՝ փառաւոր.

Լեզուն ոճը { " . . . Ուտի հասկանալի պիտի լինի, որ մեր գլխաւոր Ուղղագրութ. նպատակը կը լինի . . . " }

Բաժանորդագիւնը՝ տարեկան Տփիսիսում 3 ռ.

Օտար տեղեր 3 ռ. 30 կ.

Արտասահմանում 10 Ֆրանք:

Հասցէն՝ Տփիսիս Աղէքսանդր Թարխանեանց կամ

Тифлисъ Александръ Тарханьянъ.

կամ

Tiflis Alexandr Tarchanian

Ծրագիրը՝

ԳՐԱԿԱՆ—Յօդուածներ ազգային գրականութեան վերաբերեալ, ոտանաւորներ, բանաստեղծութիւններ ինքնուրոյն թէ թարգմանական. կրիտիկա:

ԹԱՏԵՐԱԿԱՆ—Ընդարձակ յօդուածներ, տեսութիւններ, լիշողութիւններ, թատերական ճիւղին վերաբերեալ: Ողբերգութիւն գրամա, կատագերգութիւն, վոզեւելներ, ազգային թէ եւրոպական յայտնի հեղինակների: Հայոց, եւ օտար թատրոնների մասին: Յօդուածներ բեմական աշխարհից:

Ցուցակ պիեսների: Թատրոնական քրոնիկոն:—Նկարներ ու պատկերներ թատերական կեանքից:

Յայտարարութիւններ:

Բովանդակութիւն բ. գրքի. (1894 սեպտեմբեր.):

Ցուցակ պիեսների:

Մարիա Սաիւարտ, ուլբերգ. 5 դործ. հեղ. Երկերի—Գ. Բարխուդարեանց:

Ողբերգութեան էթիքական նշանակութիւնը Յ. Ճաղարէկեան:

Դանդաղ (Լըզուվէից) ոտանաւոր—Ս. Թանգեան:

Վրաց թատրոնի մասին—Վ. Գունիա:

Գիշեր (բանաստ.) Տ. Ի.

Կանոններ դերասանների համար (Վ. Գեօթէից)—Ս. Կանայեան:

Թատրոնական քրոնիկոն արտասահմանից—Վ. Փափաղեան:

Մասկանից եւ Զուգերման (կենդանազրերով) Թատրոնասէր:

Թատրոնական տեսութիւն 1893-94 թատերաշրջանի—Դիլետանդ:

Ընտանեկան փոթորիկ (վոզ) փոխադր.—Աբգար Յովհաննիսեան:

Յայտարարութիւններ:



Եղարուեստական-գրական ընտիր գրքուածների մի շքեղ հաւաքածու է պ. Աղէքսանդր Թարխանեանցի հրատարակութեամբ Տփիսիսում 1893 թուականի դեկտեմբերից լոյս տեսնող «Թատրոն» գրական եւ թատերական վեցամսեայ պատ-

կերպարդ հանդէսը: Ներկայիս մեր միակ թատերական հանդէսը թէ արտաքին շքեղութեամբ թէ ներքին կազմուածքով պակաս չէ Ռուսաց «Артисты» թատերական փառահեղ ամսագրից: Ցանկալի է որ երկար կեանք ունենայ «Թատրոն» որ կարող է պատիւ բերել մեր գեղարուեստական գրականութեան:

«Թատրոն»ին բացի հրատարակիչը, աշխատակցում են պ.պ. Գ. Բարխուդարեան, Պ. Պաօշեան, Ս. Կանայեանց, Փառնակէս. Յ. Նաղարէկեանց, Վրթ. Փափաղեանց. Ս. Թանգեանց, Թատրոնասէր, Դիլետանտ եւ այլք:

Սպասում ենք որ հայկական թատրոնի ջերմ սիրահարներ երկու բարեկամ պատկառելի դրամատուրգ պ. Սունդուկեան եւ յարգելի դերասան պ. Չմշկեան հետու չեն մնալ «Թատրոն»ին մասնակցելու գործից: Ցաւում ենք որ հանդիսիս մասին այժմ չենք կարող երկար խօսել: «Թատրոն» բացել է իւր 1895 թուի բաժանորդագրութիւնը:



Վ Ե Ր Ա Ի Ն Խ Օ Ս Բ

Մեզ յարգելի պատճառներով մեր տեսութիւնից դուրս մնացին Կ. Պոլսում հրատարակուող պ. Փափաղեանի տասնօրեայ «Հնչակը», Կալկաթայի «Նորայրասէր» եւ Կ. Պոլսի «Փող Արեւելեան» լրագիրները եւ Մոսքուայի «Փարոսը»: 1864-ին հրատարակուող: Լեզուն՝ ուղագրութիւնը սկզբում բնագրի մէջ աւելի ընդարձակ էր—մի քանի նախադասութիւններից. արտագրելու ժամանակ կրճատուեց երկու տողի դիմաց տեղաւորելու համար: Նոյն պատճառով աւելի կրճատուեց ապագրութեան միջոցին. ինչպէս ընթերցողը տեսնում է շատ տեղեր բառը կիսատ է թողնուած: Այս բանը նկատել է մեր երկի քննընիչ պ. Իւթիւճեան՝ «... փափաքելի է որ պ. Գ. Ջ. Լեւոնեան լրագրաց իւրաքանչիւրի լեզուն եւ ոճոյն նմուշներն առաւել ընդարձակ դնէ: ... սոյն նկատողութիւն խնդրեմ հաղորդել պ. Գ. Ջ. Լեւոնեանին...»

Կ. Ս. Իւթիւճեան:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

ՍԻՍԼ.	ՈՒԼԻՒ.	ԷՋ.	ՏՈՂ.
Շահմիրեանց	Շահմիրեանց	3	8
Ինճիճեան	Ինճիճեան	7	5
	1.)	12	11
1891	1831	27	14
	1.)	28	15
1740-1741	1840-1841	47	7
1846-1858	1846-1848	74	6
	1.)	85	13
1848-1849	1854-1855	137	25
1828	1868	149	(վերջին)
1853	1855	163	20
1858	1862	199	34
1850	1860	,	37
Գ. Տէյիրմէնճեան	Մ. Գ. Տէյիրմէնճեան	225	33
76	77	262	1
բեղմնաւոր	բեղմնաւոր	342	44
ունենալ	ունենալ	403	27
solintas	voluntas	521	20
ДОМА	ДОМЪ	547	32
131	171	553	14
կատարգորութիւն	կատարգորութիւն	567	35

Ձեռք լիշում աչքի չընկնող մանր վրիպակները, որոնք թուանշանների պէս չեն փոխիլ մաքի կամ ժամանագրական նշանակութիւնը. մեզ մնում է միայն ընթերցողի ներդամութիւնը խնդրել:

8
5
11
4
5
7
6
3
5
(11)
0
4
7
3
1
4
7
)
2
:
1

r
r

113018779*



